Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հատորը հրատարակվում է
«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ հովանավորությամբ

ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

ՀԱՏՈՐ Դ

ԵՐԵՎԱՆ
2012

ՀՏԴ 325.8:941(479.25)
ԳՄԴ 66.5+63.3 (2Հ)
Մ 660

«Մեր հաղթանակները»
քառահատորը նվիրվում է գնդապետ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Հարությունյանի հիշատակին

Մեր հաղթանակները.- Հ.4.
Մ 660 - Եր.: Նորավանք, 2012, 400 էջ

«Մեր հաղթանակները» քառահատորի նպատակն է հանրությանը ներկայացնել հայոց ռազմարվեստի պատմությունը: Այս հատորում ընդգրկված է XVIII-XXդդ. ժամանակաշրջանը: Հատորը սկսվում է 1720-ական թթ. Արցախի և Սյունիքի ազատագրական պայքարի հաղթանակների նկարագրությամբ և ավարտվում Արցախյան պատերազմում արձանագրված փայլուն և համոզիչ հաղթանակներով: Հատուկ տեղ է հատկացվում ինչպես ֆիդայական շարժմանը, այնպես էլ հայ ժողովրդի մասնակցությանը թուրքական և պարսկական տիրապետության դեմ ծավալված պատերազմներին ու երկու աշխարհամարտերին:

Գիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակների համար:

ՀՏԴ 325.8:941(479.25)
ԳՄԴ 66.5+63.3 (2Հ)

ISBN 978-9939-825-17-5

© «ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԿՀ, 2012թ.

ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

«Մեր հաղթանակները» նախագծի իրականացման շարժառիթները պայմանավորված են հիմնականում երկու հանգամանքով.

1. Հայկական հանրության մի մասն ունի այն մտայնությունը, թե մեր պատմությունը պարտությունների շարան է, իսկ եղած հաղթանակներն էլ ավելի շուտ «բարոյական» բնույթ են կրել:

2. Ունենալով բազմադարյա ռազմական պատմություն (սկսած Բելի դեմ Հայկ Նահապետի պատերազմից մինչև Շուշիի ազատագրումը)՝ առայսօր բացակայում են հայկական ռազմարվեստին նվիրված համապարփակ աշխատություններ:

Առաջին խնդիրն ակնհայտորեն առնչվում է տեղեկատվական-հոգեբանական անվտանգության ոլորտին: Այդ համատեքստում «Մեր հաղթանակները» քառահատորի հրատարակումը կոչված է իրազեկելու հանրությանը մեր տարած հաղթական ճակատամարտերի և մարտերի մասին ու այդպիսով նպաստելու անհիմն բարդույթներից ձերբազատվելուն: Թերևս, զարմանալի չէ, որ նախագիծն իրականացվել է «Նորավանք» հիմնադրամի տեղեկատվական անվտանգության խնդիրներին առնչվող ծրագրերի շրջանակում:

Երկրորդ հանգամանքի կապակցությամբ նշենք հետևյալը: Անցյալի պատերազմական գործողությունների վերլուծությունը և դրանցից դասեր քաղելը ցանկացած երկրի ռազմական մշակույթի զարգացման նախապայմանն են[1]: Ավելորդ է մեկնաբանել, թե այդ խնդիրը որքան հրատապ է հայկական երկու հանրապետությունների՝ ՀՀ-ի և ԼՂՀ-ի համար: Նկատենք, որ նման հարցադրումը հրատապ է նաև հայկական քաղաքական մտքի զարգացման տեսանկյունից: Ցավոք, պետք է ընդունել, որ առայսօր սակավ են նաև մեր քաղաքական մշակույթի պատմության վերաբերյալ ուսումնասիրությունները:

Մենք հեռու ենք այն մտքից, թե ընթերցողին ներկայացվող քառահատորում վերոնշյալ խնդիրներին տրվել են համապարփակ լուծումներ: Միևնույն ժամանակ հուսով ենք, որ այս աշխատությունը կարող է հենք ծառայել հետագա ավելի կատարյալ ուսումնասիրությունների համար:

Նախագծի իրականացմանը մասնակցել և աջակցել են մի շարք անձինք և կազմակերպություններ: Օգտվելով առիթից՝ կուզենայի նշել նրանց անունները և հայտնել իմ խորին երախտագիտությունը: Հեղինակային խմբի աշխատանքները ղեկավարել է փոխգնդապետ Սուրեն Մարտիկյանը, որը, չնայած մեծ ծանրաբեռնվածությանը (ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվ. ռազմական ինստիտուտի ռազ-

---

[1] Դեռևս նախորդ դարի 60-80-ական թվականներին պահեստի գնդապետ, պրոֆ. Աշ. Հարությունյանը մեծ ջանքեր էր գործադրում հայկական ռազմարվեստի ուսումնասիրություններով զբաղվող հատուկ գիտական ստորաբաժանում հիմնելու ուղղությամբ:

մարվեստի և ռազմական վարչարարության ցիկլի պետն է), կարողացավ մեկնաբանել մեր ռազմական պատմության դրվագներն արդի ռազմարվեստի համատեքստում և եզրաբանությամբ: Ակնհայտ է նաև, որ պատմական-ռազմական բնույթի աշխատանքներն իմաստ են ստանում միայն գիտականության պահպանման պարագայում, և այդ առումով մեծ է գիտական խմբագիր, պրոֆ. էդ. Դանիելյանի և ռազմական խմբագիր, գնդապետ Վ.Կարապետյանի ավանդը:

Քառահատորի խմբագրական և ձևավորման մեծածավալ աշխատանքներն ապահովել է «Նորավանք» հիմնադրամի Հրատարակչական կենտրոնը (Լ.Բաղրամյան, Խ.Քարաուղլանյան, Ա.Բարիշյան, Ա.Հարությունյան): Բավական է նշել, որ քառահատորում ներկայացված են 118 ռազմական քարտեզ (հեղինակներ՝ Ս. Մարտիկյան և Ա. Մովսիսյան, քարտեզագիր՝ Տ.Վարդանյան), 80 ճակատամարտի սխեմա (Ս.Մարտիկյան) և ավելի քան 30 նկար (նկարազարդող՝ Թ.Հմայակյան):

Նախագծի իրականացմանն առաջին իսկ օրից կազմակերպչական և բարոյական առումով մեծապես աջակցել է ՀՀԿ փոխնախագահ Մուշեղ Լալայանը:

«Մեր հաղթանակների» հրատարակումը և տպագրումը («Գասպրինտ» տպարան, տնօրեն՝ Գ.Սուքիասյան) անհնարին կլիներ պատկերացնել, եթե նախագիծն ամբողջովին չհովանավորեր «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն, որի տարբեր ժամանակահատվածներում Գլխավոր տնօրեններ Կարեն Վ. Կարապետյանը, Վարդան Ռ. Հարությունյանը և փոխտնօրեն Ռուբեն Ա. Սուրենյանը, ի լրումն նյութական աջակցության, տարվող աշխատանքների նկատմամբ մշտապես ուշադրություն և հոգատարություն են ցուցաբերել: Աշխատության երրորդ հատորը տպագրվել է Երևանի քաղաքապետարանի (քաղաքապետ՝ Կարեն Վ. Կարապետյան) և ՀՀ ԱԺ պատգամավոր Վահե Հակոբյանի հովանավորությամբ: Աշխատանքային խմբի անունից հայտնում եմ նրանց մեր խորին շնորհակալությունը:

Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Նախագծի հեղինակ և ղեկավար

ՆԵՐԱԾԱԿԱՆ

18-րդ դարում մեր տարածաշրջանում տեղի են ունենում էական ռազմաքաղաքական փոփոխություններ՝ կապված Ռուսական կայսրության հզորացման հետ: Քրիստոնյա տերության հարևանությունը և նրա վարած կովկասյան ռազմավարությունը նպաստում են Հայաստանում ազատագրական շարժման վերսկսմանը և ընդհանրապես ազգային վերելքին: Ռուսական գործոնը մեծ չափով պայմանավորում է նաև Հայաստանում ընթացող հետագա ռազմաքաղաքական զարգացումները՝ ի վերջո հանգեցնելով Երրորդ (ՀՀ) և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների ձևավորմանը:

Ազատագրական շարժումը սկսվում է Սյունիքում և Արցախում՝ Դավիթ Բեկի և արցախյան զինվորականության առաջնորդների կողմից: Հայաստանի այդ մարզերում, փաստորեն, հաստատվում են ինքնավար իշխանապետություններ, որոնց հետ հաշվի էին նստում հարևան Պարսկաստանը և Թուրքիան: Այդ ժամանակաշրջանի մեր զորավարները ցուցադրում են հարձակողական և պաշտպանական մարտերի վարման հոյակապ օրինակներ, որոնց նկարագրության և վերլուծության հետ կարելի է ծանոթալ գրքի առաջին գլխում:

Հաջորդ երկու մասերում ներկայացված են 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի ռազմական զարգացումները, որոնք գլխավորապես ենթարկվում էին ռուս-թուրքական պատերազմների տրամաբանությանը: Մարտական գործողություններին ակտիվորեն մասնակցում էին հայկական կամավորական ջոկատները: Դրան զուգահեռ՝ ռուսական բանակի հաղթանակներում մեծ դերակատարում ունեցավ հայազգի տաղանդավոր գեներալների մի ամբողջ համաստեղություն. բավական է նշել Մադաթովի, Բեհբութովի, Տեր-Ղուկասովի և վերջապես խոշոր քաղաքական և ռազմական գործիչ Լոռիս-Մելիքովի անունները: Միևնույն ժամանակ, օսմանյան կայսրության դեմ ազատագրական պայքար է ծավալվում նաև Արևմտյան Հայաստանում: Ռազմական այդ գործողություններում առանձնահատուկ տեղ են գրավում Զեյթունի ապստամբների և մեր լեգենդար հայդուկների՝ Անդրանիկի, Նիկոլ Դումանի, Վարդանի, Չաուշի և այլոց հաղթական մարտերը թուրքական բանակի դեմ: Ռուսական կանոնավոր բանակի և հայդուկային խմբերի գործողությունները երբեմն փոխլրացնող էին: Այդ ավանդույթը շարունակվեց նաև Առաջին համաշխարհայինի տարիներին, երբ Կովկասյան ճակատի ռուսական բանակի կազմում (որում ծառայում էին բազմաթիվ հայազգի սպաներ) ընդգրկված էին հայկական կամավորական ջոկատները, իսկ Արևմտյան Հայաստանում ընթանում էին ինքնապաշտպանական մարտեր տեղական ուժերով:

Հայկական ռազմարվեստի պատմությունում նոր, փայլուն էջ է գրվում 1918թ. տեղի ունեցած Սարդարապատի և Բաշ-Ապարանի ռազմավարական նշանակության ճակատամարտերում, երբ հայկական հանրապետության զինված ու-

ժերը՝ գեներալներ Սիլիկյանի և Նազարբեկովի հրամանատարությամբ, ջախջախիչ պարտության են մատնում թուրքական բանակի գերակշռող ուժերին: Հայաստանի հետագա քաղաքական հեռանկարների տեսանկյունից այդ ժամանակահատվածում առանձնահատուկ ուշադրության են արժանի Գարեգին Տեր-Հարությունյանի (Նժդեհ) ղեկավարությամբ Զանգեզուրում բարձր մարտավարական մակարդակով իրականացված մարտական գործողությունները:

Ռազմաքաղաքական առումով միանգամայն այլ իրավիճակում է հայտնվում Երկրորդ հանրապետությունը: Գտնվելով խորհրդային տերության կազմում՝ Հայաստանն ակտիվորեն մասնակցում է Հայրենական մեծ պատերազմին (խորհրդային բանակի կազմում մարտնչում էին հայկական 6 դիվիզիաներ) և այդպիսով աջակցում աշխարհը նացիստական ստրկությունից ազատագրելու համընդհանուր գործին: Միևնույն ժամանակ, հայկական զորամասերը պաշտպանում էին հայ-թուրքական սահմանը դարավոր հակառակորդի հնարավոր ներխուժումից: Պատերազմի տարիներին ձևավորվում է հայազգի բարձրաստիճան զինվորականների մի ստվար խումբ (բավական է նշել մարշալներ Բաղրամյանի, Բաբաջանյանի, Խուդյակովի և ծովակալ Իսակովի անունները), որոնց իրականացրած ռազմավարական բնույթի գործողությունները հարստացրել են համաշխարհային ռազմարվեստի պատմությունը:

Գրքի վերջին գլխում համառոտակի ներկայացված են դրվագներ Արցախյան ազատամարտից: Այդ պատերազմում իրենց փայլուն դրսևորեցին ինչպես կամավորական ջոկատները (հրամանատարներ՝ Լեոնիդ Ազգալդյան, Թաթուլ Կրպեյան, Աշոտ Ղուլյան և շատ-շատ ուրիշներ), այնպես էլ Երրորդ հանրապետության և ԼՂՀ կանոնավոր զինուժը՝ կադրային զինվորականների ղեկավարությամբ (գեներալներ Դալիբալթայան, Տեր-Գրիգորյան, Իվանյան և շատ ուրիշներ): Այս առիթով նկատենք, որ Արցախյան պատերազմին նվիրված բաժնի ավելի քան համառոտ ձևաչափը պայմանավորված է նրանով, որ առայսօր չկան Ազատամարտին և ընդհանրապես այդ տարիների ազգային-քաղաքական շարժմանը նվիրված համալիր և հիմնարար հետազոտություններ:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽՈՒՄ

(XVIII ԴԱՐ)

18-րդ դարի սկզբին Սյունիքում և Արցախում ծավալվում է զինված պայքար անկում ապրող Սեֆյանների պետության դեմ: Այն, ելնելով թուրքական վտանգից պաշտպանվելու անհրաժեշտությունից, կարճ ժամանակում վերաճում է հուժկու շարժման:

Իրանում լարվածությունը գագաթնակետին է հասնում 1722թ., երբ ապստամբած աֆղանները գրավում են Սեֆյանների մայրաքաղաք Սպահանն ու գլխատում Հուսեին շահին: Օսմանյան կայսրությունը, պատեհ առիթն օգտագործելով, ասպատակությունների է հրահրում Դաղստանի լեռնական լեզգիներին: Սկիզբ առնող անիշխանության հետևանքները մեղմելու նպատակով Արևելյան Հայաստանի մի շարք բերդերի շուրջն ու բնական ամրության դեր կատարող լեռնային շրջաններում տարերայնորեն ձևավորվում են ամրացված շրջաններ, որոնք ժամանակակիցները կոչում էին սղնախներ: Դրանք ռուսերեն գրագրությունների մեջ հաճախ իմաստավորվում էին «հայկական հավաքույթ» (армянское собрание) հասկացությամբ: 1720-ական թթ. Արցախում կար մելիքների գլխավորած հինգ իշխանություն. Գյուլիստանի (կենտրոնը՝ Գյուլիստանի բերդը), Ջրաբերդի (Երիցմանկանց վանքը), Խաչենի (Գանձասարի վանքը), Վարանդայի մի մասի (Ծովատեղ-Ավետարանոց), Վարանդայի մյուս մասի (Շոշ կամ Քարագլուխ սղնախ) և Դիզակի (Տող և Քիրս սղնախ): Սղնախներ կային Սյունիքում (Կապանում) և Գուգարքում (Լոռիում), ինչպես նաև Գեղարքունիքում և Քոլանիում: Սղնախների ռազմական ուժը կազմում էին հայ մելիքների զինված ջոկատները:

Ստեղծված իրադրությունում առավել անբարենպաստ վիճակում էր հայտնվել Սյունիքը, և Կապանի հայ մելիքները որոշում են դիմել վիրահայերի օգնությանը: Նրանց խնդրագրով Ստեփանոս Շահումյանը[1] մեկնում է Վրաստան և վրացական բանակում ծառայող հայ զինվորականներից Կապանի ուժերին օգնելու համար զորամաս հավաքագրում: Գումարված 2 հազար հոգանոց զորամասի հրամանատար է նշանակվում Դավիթ Բեկը, որին վիճակված էր փաստացի անկախ պետություն ստեղծել (տե՛ս քարտեզ 1):

Պատմական տեղեկանք. *«Դավիթ Բեկն* ազնվական էր, բարեպաշտ, արդարության պաշտպան, գրագետ, արիասիրտ, լայնախոհ, խոսքով ու գործով ուժեղ և վրեժխնդիր՝ մեր ազգի թշնամիների հանդեպ: Իր նման էին և նրա բոլոր հետևորդները: Երբ նա ելավ Վրաց երկրից, լսելով նրա մասին, շուրջը հավաքվեցին գավառի բոլոր կողմերից զինակիր տղամարդիկ»:

Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկի պատմությունը, էջ 95

---

[1] Ստ. Շահումյանի մասին տե՛ս սույն հատորի չորրորդ ակնարկում:

Քարտեզ 1


ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՍՂՆԱԽՆԵՐԸ
Չարդախլու
Գանձակ
Բարսում
Հացիանգիստ (Չովդառ)
Չոլակ
Գանձակ
Կուրակ
Շանքոր
Ոսկանապատ (Զուրնաբաղ)
Գետաբեկ
Խաչակապակ
Քարհատ
Դաստափոր
Սարով
Գետաշեն
Նորաշեն
Էրքեջ
Թալիշ (Թարինջ)
Բարդա (Պարտավ)
Կուր
Գյուլիստան
Եղիշե առաքյալի վանք
Մեծ Ծիրանավոր լ. 3367
Առավ լ. 3343
Մատաղիս
Գոմշանար լ. 3724
Զրաբերդ
Մոխրաթաղ
Մազրա
Սոդք
Հաթերք
Կուսապատ
Տրտու (Թարթառ)
Ոսկեշեն
Խաչենագետ
Ճանկաթաղ
Քարվաճառ
Թառնագյուղ (Տիգրանակերտ)
Գանձասար
Իշխանաբերդ (Խոխանաբերդ)
Քարագլուխ
Աղդամ
Կարկառ
Բալլուջա
Ասկարան
Ղմբասար լ. 3616
Վարդաշեն
Վարազաբուն
Խնածախ
Սպիտակաշեն
Լիլաբակ
Շոշ
Փչանիկ
Շուշի
Վարանդա
Վաղազին
Ավետարանոց (Չանախչի)
Ճարտար
Ակունք
Ծղուկ լ. 3581
Մննի
Հոչանց
Բերձոր
Մ. Քիրս լ. 2725
Թաղեր
Ամարաս
Որոտան
Հոչանց
Քաղաքաշեն
Իշխանասար լ. 3550
Ծիծեռնավանք
Գտչավանք
Տող
Իշխանագետ
Անգեղակոթ
Խանածախ
Կոռնիձոր
Սպիտակաշեն
Ծակուռի
Սյունիք
Գորիս
Տեղ
Աղուդի
Բռնակոթ
Խնձորեսկ
Հատք
Հադրութ
Գորատուս
Քարաուանջ
Դոլան
Ցոր
Սիսիան
Շինուհայր
Խնձորեկ
Բանազուր
Տոլորս
Դարպաս
Հալիձոր
Խանդակ
Զաբրահիլ
Դաստակերտ
Տաթև
Տանձավետ
Պատար
Հագարու
Վեյսալի
Խոտանան
Թոմաս
Արաքս
Երնջակ
Աջաբաջ
Բաղաբերդ
Հալիձոր
Արծվանիկ
Շահակերտ (Ղազանչի)
Գեղի
Եղվարդ
Ողջի
Ողջի
Կապան
Վերջնավան
Խուդափերինի կամուրջ
Կապուտջուղ լ. 3904
Խուստուփ լ. 3214
Տաշտուն
Միջնավան
Գիլան
Ցղնա
Շիշկերտ
Հանդ
Վինան
Վարդանաձոր
Ագուլիս
Վահրավար
Մթնաձոր
Վանանդ
Մեղրի
Կատարո Բերդ
Արաքս
Որոտան
Հաշտասար լ. 2939

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՈՒՄՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ

Դաղստանցիների առավել ծանր հարվածներին դիմակայող Արցախում սղնախների ինքնակազմակերպումն արագ է ավարտվում: Դրան կարևոր մասնակցություն են ունենում Շամախու խանական զորքերում ծառայող հայ երիտասարդների ջոկատները, որոնք նախորդ տարիներին միացել էին արցախահայության պայքարին: Տեղացիները նրանց սկսում են կոչել «շիրվանցի տղերք»:

Ի տարբերություն տեղացիների, որոնց մեծ մասը զենքը ձեռքն էր առել հայրենի տունը պաշտպանելու անհրաժեշտությունից դրդված, շիրվանցիների մեծ մասը ծառայել էր կանոնավոր զորքերում և արդեն իսկ հասցրել էր լինել լեռնականների դեմ պատերազմում: Այդ պայմաններում նրանց փորձն ու հմտություններն օգտագործելու պահանջ է զգացվում, մանավանդ որ կարճ ժամանակում շիրվանցիների մի մասը հասցրել էր աչքի ընկնել, իսկ Ավան հարյուրապետը ստանձնել էր սղնախների ընդհանուր ղեկավարումը:

Տեղեկանք. Ավանը (Հովհաննեսը) ծնվել է 1670թ. Շաքիում, Նուխի գավառի Ավան կամ Ավանդամ գյուղում: Նա զինվորական ծառայությունը սկսել է Շիրվանի խանության զորքերում և արագ հասել հրամանատարական բարձր պաշտոնների: Նրա կյանքում բեկումնային էր 1717թ., երբ բազմափորձ և անվանի զորականի հռչակ վայելող Ավանը հրաժարվում է շարունակել ծառայությունն ու խանական զորքերում ծառայող մի խումբ հայերի գլուխն անցած՝ տեղափոխվում Վարանդա և հաստատվում Շոշ գյուղում: Ավանին բոլոր ձեռնարկումներում սատարում էր եղբայրը՝ Թարխանը, որը դարձել էր սղնախների զորագնդերի անվանի հրամանատարներից մեկը:

Առաջին փորձությունը

1721թ. ամռանը, 30 հազարանոց խանական զորքերի դիմադրությունը հաղթահարելով, լեզգիները գրավում են Շամախին[1], ապա հաջողություններից ոգևորված՝ անցնում Կուրն ու ներխուժում Մուղանի դաշտավայր (տե՛ս քարտեզ 2): Գիտակցելով, որ անպատժելիությունից սանձարձակված հրոսակները վաղ թե ուշ շարունակելու են առաջխաղացումը, արցախահայությունը սկսում է համախմբվել սղնախներում կենտրոնացած զինական ուժի շուրջը: Ինքնակազմակերպման այդ փուլը համընկնում է հակաթուրքական միասնական ճակատ ձևավորելու համար Ռուսաստանի արտաքին քաղաքականության ակտիվացման հետ:

1722թ. մարտի սկզբին Հաջի Դավուդ բեկի գլխավորությամբ լեզգիները հերթական անգամ անցնում են Կովկասյան լեռներն ու ներխուժում Կուրի ավազան: Նրանց խնդիրն էր՝ ոչնչացնել դիմադրելու ունակ տեղական ուժերը և արշավանքի պատրաստվող թուրքական զորքերի հարձակման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել: Արդեն մարտի կեսերին լեզգիներն արևելքից ներխուժում են Արցախ, որի արևելյան ուղղությունը պաշտպանելու խնդիրը դրված էր իրանական բանակի առաջապահ զորքի հրամանատար, Բարգուշատի և Ղափանի կուսակալ Ֆաթի-Ալի խանի վրա: Լեռնականները հեշտությամբ ջախջախում են Ֆաթի-Ալիի ուժերը, ներխուժում Դիզակի գավառ և ավերում Ճանապարհի հայկական գյուղերը: Ինքնապաշտպանական ջոկատները չեն հասցնում միավորել ուժերն ու պատշաճ դիմադրություն կազմակերպել:

Ռազմավարությունը

Նկատի ունենալով, որ լեռնականների ասպատակությունները մոտենում են սղնախներին, Ավան հարյուրապետի շուրջը համախմբված ուժերը դեռևս 1722թ. գարնանամուտին առավել անմատչելի և անառիկ ամրոցներում զինամթերքի ու սննդի պաշարների կուտակման գործ էին ձեռնարկել: Դրանցում տեղակայվելու էին տևական պաշարման նախապատրաստված կայազորներ, որոնք իրենց վրա դաղստանցիների ուշադրությունը գամելով՝ սղնախների ուժերի զորահավաքի համար անհրաժեշտ ժամանակ էին շահելու:

Մարտական պատրաստականության վիճակում գտնվող մեծաթիվ մշտական զորքեր պահելու հնարավորություն չունեցող սղնախների համար ժամանակ շահելու այս տարբերակն առավել նպատակահարմարն էր: Լեռնականնե-

---

[1] Շամախիում կողոպտված ռուս առևտրականների իրավունքների պաշտպանությունը հարմար պատրվակ էր Պետրոս Ա ցարի 1722թ. Կասպյան արշավանքի համար:

Քարտեզ 2

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1721 Թ. ԵՎ 1722 Թ. ԳԱՐՆԱՆԸ


Թիֆլիս
Սղնախ
Ճար (Զաքաթալա)
Բելական
Ռուսաստան
Նուխի (Շաքի)
Վարդաշեն
Խաղխաղ (Դազախ)
Կուր
Խորանաշտի վանք
Շամքոր
Գանձակ
Կապաղակ (Կաբալա)
Շամախի
Չարդախլու
Գանձակ
Գետաբեկ
Բարսում
Չոլակ
Կուրակ
Բաշաբաղ լ.
Գետաշեն
Բարդա (Պարտավ)
Գեղարքունի լիճ
Մեծ Ծիրանավոր լ.
Գյուլիստան
Գավառ
Գոնշասար (Կամիրճիք) լ.
Մոսավ լ.
Բարգուշատ
Աժդահակ լ.
Սոդք
Տրտու (Թարթառ)
Զրաբերդ
Խաչենագետ
Գանձակաբերդ
Աղջաբադ
Քարվաճառ
Կարկառ
Վարդենիս լ.
Ռմբասար լ.
Իշխանաբերդ (Խոխանաբերդ)
Ասկարան
Վարարակն
Վարանդա
Ղարաբաղ
Ջերմուկ
Ծղուկ լ.
Հոչանց
Ս. Քիրս լ.
Ամարաս
Արփա
Գնդևանք
Սիսիան
Բերծոր
Գտչավանք
Իշխանագետ
Իշխանասար լ.
Գորիս
Հադրութ
Ազատ
Ազատամարտիկներ
Ազատամարտիկներ
Ազատամարտիկներ

որը մեծաթիվ պարսպակործան հրետանի չունեին և ամրոցների դիմադրությունը հաղթահարել չկարողանալով՝ վաղ թե ուշ կանգնելու էին պաշարումը շարունակելու կամ արշավանքը դադարեցնելու որոշում ընդունելու անհրաժեշտության առջև: Այդ պահին էլ արցախահայերի զորագնդերը հասցնելու էին ջախջախիչ հարվածը:

Պետք է կարծել, որ թուրքական զորքերի արցախյան արշավանքի նախօրյակին կազմված այս ծրագիրը ևս մեկ հեռահար նպատակ ուներ: Եթե լեզգիների արշավանքը սկսվեր նախքան թուրքական գլխավոր ուժերի հարձակումը՝ նրանց ասպատակությունների կանխումը հայկական կողմին կազատեր երկու ճակատով պատերազմելու հեռանկարից: Ռուսական զորքերին սպասող սղնախներում ինքնապաշտպանության այս տարբերակը ժամանակավոր միջոցառում էին համարում՝ նախքան ռուսների գալը հնարավորինս քիչ զոհեր տալու համար:

Հաղթանակը

Ֆաթի-Ալիի զորքերի ջախջախումով Արցախում անիշխանության շրջան է սկսվում: Ինքնաբերաբար ամբողջ իշխանությունը փոխանցվում է սղնախներին, որոնք ղեկավարող մելիքները, ռազմականից բացի, սկսում են կատարել նաև քաղաքական ու վարչական գործառույթներ: Սղնախները սկսում են վերածվել արցախահայության վերականգնվող պետականության զինված ուժերի:

Անսպասելի ուղղությունից ասպատակության թիրախ դարձած սղնախների փոքրաթիվ ուժերը չեն կարողանում կասեցնել հակառակորդին, բայց հասցնում են օգնել տեղական բնակչությանը՝ պատսպարվելու դժվարամատչելի լեռներում:

Լեզգիները, որոնք առաջ էին շարժվում նորանոր տարածքների գրավման հույսով, առանձնապես չէին մտահոգվում լեռներում ապաստանածների խնդրով:

Հրետասայլակով թնդանոթները եվրոպական բանակներում
լայն տարածում գտան XVIIդ. կեսերին,
իսկ դարավերջից հաստատուն տեղ գրավեցին
նաև մեր տարածաշրջանի բանակների սպառազինության մեջ:

Չգտելով նախքան թուրքական զորքերի գալը հնարավորինս մեծացնել արշավանքների աշխարհագրությունը՝ նրանք Խաչենի կենտրոնական շրջաններից անցնում են հյուսիս: Այստեղ նրանք հանդիպում են կազմակերպված դիմադրության, և նրանց առաջխաղացումը դադարում է (տե՛ս քարտեզ 2): Պարզվում է, որ մինչ դաղստանցիները զբաղված էին Դիզակի ու Վարանդայի բնակավայրերի թալանով, Ավան հարյուրապետը հասցրել էր համախմբել հարվածի չենթարկված Զրաբերդի սղնախի ուժերը և անհրաժեշտ պաշար կուտակել: Ինչպես միշտ, նրա կողքին էին շիրվանցի զինակիցները՝ Շահինը, Շիրվանը, Սարուխանը և ուրիշներ:

Լեռնականների ներխուժումը հնարավորություն չէր տվել կյանքի կոչել ռազմավարական այն համակարգը, որի հետ մեծ հույսեր էր կապում Ավանը: Փաստորեն, ինքնապաշտպանական ուժերը միայն Զրաբերդում էին հասցրել նախապատրաստվել երկարատև պաշարման, սակայն, ինչպես հետագայում է պարզվում, դա էլ բավարար էր:

Հակառակորդի ուժերը բաղկացած էին անկանոն ավազակախմբերից, որոնք չունեին պարսպակործան միջոցներ: Հետևաբար, նրանք լեռնային ամրությունները կկարողանային գրավել միայն երկարատև պաշարումով՝ բոլոր մատույցները փակելով ու մարտիկներին սովի մատնելով: Մինչդեռ Զրաբերդի պաշտպանների հաստատակամությունը վկայում էր սղնախների նորաստեղծ պաշտպանական համակարգի տակավին անկատար, սակայն անխորտակ ուժը:

Մարտական գործողությունների շարունակմանը զուգընթաց՝ ակնհայտ է դառնում, որ նախաձեռնությունն անցնում է հայկական կողմին: Վտանգ կար, որ անսպասելի հարվածից ուշքի եկած սղնախների զորագնդերը կարող են համախմբվել և լեռնականներն իրենք կհայտնվեին շրջափակման մեջ իրենց համար անծանոթ լեռներում: Գիտակցելով, որ ընդհանուր առմամբ հաջող սկսված արշավանքը շարունակելն աղետալի հետևանքների կարող է հանգեցնել, լեռնականները դադարեցնում են արշավանքը և շտապում հեռանալ դեպի Կուրի ձախ ափը:

Այսպիսով, 1722թ. գարնանը Զրաբերդում լեզգիների արշավանքի ձախողումը կարևոր նշանակություն է ունենում Արցախում սկիզբ առած ազատագրական շարժման և այն անկախության վերականգնման պայքարի վերածելու համար: Շրջակայքի խաների զորքերին հեշտությամբ պարտության մատնած լեզգիներին ցույց տրված դիմադրությունը վկայում է սղնախներում ինքնապաշտպանական ուժերի համախմբման կողմնակիցների իրավացիության մասին: Զրաբերդի հերոսական պաշտպանությունը ցույց է տալիս, որ նախօրոք դիմադրության պատրաստված մի քանի ամրոցների վրա հենվող ռազմավարական պաշտպանությամբ, իսկ ամրությունների բացակայության դեպքում՝ տեղանքը հմտորեն օգտագործելով անմատչելի սարահարթերի մատույցները փակելով, կարելի է կասեցնել մեծաթիվ հրետանի չունեցող ցանկացած զորքի առաջխաղացում:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ԵՎ ԵՌԱԲԼՐԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԵՐԸ

(1722Թ.)

1722 թ. մարտին Դիզակում Բարգուշատի ու Կապանի կուսակալի զորքերի ջախջախումով Սյունիքում հակառակորդի առջև բացվել էին առաջխաղացման բոլոր ճանապարհները: Փաստացի անպաշտպան մնացած սյունեցիների աչքում իրանական իշխանությունները վերջնականապես վարկաբեկվել էին, և օրակարգ է մտնում ինքնապաշտպանության ուժերի ստեղծման ու հայկական իշխանության վերականգնման խնդիրը, որում առավել հրատապը ռազմական կառույցի կայացումն էր: Ընդ որում, Արցախում ծավալված մարտական գործողություններով տարված դաղստանցիներից ոչ պակաս վտանգ էին ներկայացնում նախկին իշխանությունների մնացորդների և թրքախոս ու քրդախոս ցեղերի ասպատակությունները:

Քարտեզ 3

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1722 Թ.



Շիրվանցիների օգնությամբ Արցախի մելիքները սկսել էին համախմբել սղնախների ուժերն ու փոխգործողություններ կազմակերպել: Այս փորձն ուսանելի էր սյունեցիների համար, որոնք համանման իրավիճակում էին հայտնվել և ժամանակի ռազմարվեստի պահանջների գիտակ առաջնորդի կարիք ունեին: Վերը նշվեց, որ Ստեփանոս Շահումյանի պատվիրակության հորդորներով գումարված զորագնդի հրամանատարությունը ստանձնել էր Դավիթ Բեկը, որի գլխավորությամբ այն 1722թ. աշնան սկզբին հասնում է Սիսիանի շրջան (տե՛ս քարտեզ 3):

Առաջին փորձությունը

Վիրահայերի զորամասն էական խոչընդոտների չէր հանդիպել շուրջ 400 կիլոմետրանոց ռազմերթի ընթացքում, սակայն հասնելով Սիսիան՝ հայտնվում է բուռն իրադարձությունների կիզակետում: Այստեղի խաները, տեսնելով զորամասի ժամանելուն սպասող հայության շրջանում սկիզբ առած ոգևորությունը, թշնամաբար են տրամադրվում նրանց նկատմամբ: Բացի այդ, ռազմերթը համընկավ այն տեղեկությունների հետ, որոնք մեծ անհանգստություն պատճառեցին խաներին.

1. Սյունիք էին հասել Պետրոս Ա-ի սկսած Կասպյան արշավանքի ընթացքում ռուսական զորքերի առաջին մեծ հաջողության՝ Դերբենդի գրավման (1722թ. օգոստոս) մասին լուրերը:
2. Դեպի Գանձակ շտապող Արցախի սղնախների 10 հազարանոց և վրացական 30 հազարանոց բանակները (միավորումը տեղի էր ունենալու սեպտեմբերի 22-ին) մտադիր էին միանալ ռուսներին:

Սիսիան հասնելուն պես Դավիթ Բեկը տեղեկանում է, որ 12 հազարանոց զորքով դեպի Սիսիան է արշավում Նախիջևանի խանը: Բարդ իրավիճակում, երբ Դավիթ Բեկի զորամասի մարտիկները ռազմերթից հոգնած էին, իսկ զորահավաքով զենքի տակ դրված 4 հազար տեղացիները նույնիսկ նախնական պատրաստություն չէին անցել, զորավարը որոշում է ընդունել մարտահրավերը: Նա Նախիջևան գետից քիչ հեռու՝ նպաստավոր տեղանքում, նորաստեղծ զորագունդը շարում է մարտակարգով:

Հայկական զորամասերի սպառազինությունը ցածրորակ էր: Մարտիկների մի մասը զինված էր նույնիսկ ոչ թե զենքերով, այլ հարվածելու համար պիտանի կենցաղային գործիքներով: Այդուհանդերձ, մեծաթիվ հակառակորդից նախաձեռնությունը խլելու նպատակով Դավիթ Բեկը որոշում է ակտիվ գործողությունների դիմել: Զորավարի մտահղացումը հետևյալն էր.

1. հարձակումով խախտել հակառակորդի մարտակարգը և պարտության մատնել նրան,

2. եթե չհաջողվի հակառակորդին հաղթել, ապա առավելագույն կորուստներ հասցնել նրան և արագ նահանջելով՝ ուժերը դուրս բերել հարվածի տակից ու նոր ճակատամարտ տալ գետի հակառակ ափի լեռներում:

Սխեմա 1



ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1722Թ.

Հայկական զորագնդի հարձակումը սրընթաց էր: Մարտի սկզբում, մեծաթիվ զոհեր տալով, հակառակորդը հարկադրված հետ է քաշվում (տե՛ս Սխ. 1): Սակայն համալրում չստացող ստորաբաժանումներին չի հաջողվում հասնել հաղթանակի: Հակառակորդը, օգտագործելով քանակական գերազանցությունը, թեև դժվարությամբ, բայց կասեցնում է գրոհը: Մարտի մտահղացման համաձայն՝ Դավիթ Բեկը հետ քաշվելու հրաման է արձակում: Տեղանքն այնպիսին էր, որ անհրաժեշտության դեպքում կարելի էր ամրանալ գետի հակառակ ափին և կասեցնել հակառակորդի գետանցման փորձերը: Սակայն ապստամբ գյուղացիներից բաղկացած զորախմբերը չեն կարողանում կազմակերպված նահանջել, և գետանցման ընթացքում իրարանցում է սկսվում: Նրանց օգնելու համար Դավիթ Բեկը մարտադաշտ է վերադարձնում մարտակարգը չխախտած իր հետ եկած զորամասը՝ վիրահայերին: Վերջիններս կատարել էին գետանցումը, սակայն վերախմբավորվում են, հետ են անցնում գետն ու նետվում հայ-

րենակիցներին օգնելու: Անակնկալ հարվածի տակ հայտնված հակառակորդը հարկադրված դադարեցնում է հետապնդումը և բոլոր ուժերը կենտրոնացնում իր թևը մխրճված հայ զորագնդի դեմ (տե՛ս Սխ. 2): Հակառակորդից ցածր դիրքում հայտնված և գետափին սեղմված հայկական զորախմբերը կասեցնում են գերազանցող ուժերի առաջխաղացումը: Հակառակորդը նույնիսկ մեծաթիվ զոհերի գնով չի կարողանում նախքան սիսիանցիների գետանցման ավարտվելը հաղթել հայկական կանոնավոր զորամասին, որը մինչև նահանջի հրաման ստանալը պահում է գետի մյուս ափի իր հենադաշտը:

Սխեմա 2



Հատկանշական է, որ զորամասի մարտիկներն օրվա ընթացքում չորրորդ գետանցումը ևս իրականացնում են կազմակերպված, թեև կրել էին մեծ կորուստներ (2 հազար հոգանոց զորամասում մնացել էր ընդամենը 412 հոգի): Միայն այս փոքր ստորաբաժանման նահանջից հետո է հակառակորդը կարողանում անցնել գետի մյուս ափը: Այստեղ նրան նոր անակնկալ էր սպասում: Պարզվում է, որ սիսիանցիները գետն անցնելուց հետո հասցրել են վերականգնել խախտված մարտակարգը և ամրանալ գետափից քիչ հետու՝ բարձունքներից մեկի վրա: Համառ դիմադրության հանդիպած և մեծաթիվ զոհեր տված հակառակորդը չի համարձակվում նոր հարձակում ձեռնարկել:

Ռազմարվեստի բարեփոխումը

Առաջին մարտի արդյունքներից Դավիթ Բեկն անհրաժեշտ հետևություններ է անում: Հայկական զորախմբերի հիմնական մասը ծանոթ չէր ժամանակի մարտավարության պահանջներին: Անհրաժեշտ վարժանք չանցած մարտիկները կանոնավոր (գծային) մարտակարգում գործելու և զորաշարժեր իրականացնելու փորձ չունեին: Համապատասխան պատրաստվածություն չունեցող ստորաբաժանումները վատ էին տիրապետում հրազենին և չէին կարողանում համազարկային կրակ վարել:



XVII դարի պարսկական պատրույգավոր հրացան:
1720-ական թթ. այս տիպի հրացանները դեռևս լայն տարածում ունեին
Իրանի հետևակային (հրածգային) զորամասերում:

Տեղեկանք. Գծային մարտավարությունը տիրապետող էր դարձել Եվրոպայում տեղի ունեցած «Երեսնամյա պատերազմում» (1618-1648թթ.), երբ հրազենի մարտավարա-տեխնիկական ցուցանիշները խիտ տողաններով շարված հրաձիգներին հնարավորություն տվեցին համազարկային կրակով գերազանցության հասնել սառը զենքով զինված հետևակի և հեծելազորի նկատմամբ: XVIIդ. վերջին հրազենը եվրոպական բանակներում վերջնականապես փոխարինեց սառը զենքին: Մեր տարածաշրջանում սառը զենքի փոխարինումը հրազենով նույնպես սկսվել էր XVIIդ. սկզբին, և այդ գործընթացը խթանվել է 1680-ական թթ.՝ եվրոպական ճակատներում թուրքական բանակների կրած պարտություններից հետո:

Չգտելով առավելագույնս օգտագործել հրազենի առավելությունները (մուշկետների հեռահարությունը, կայծքարի փակաղակով հրացանների արագաձգությունը և այլն)՝ Դավիթ Բեկն ավելի մեծ տեղ է հատկացնում անսպասելի գործողություններին, երբ լայնորեն կիրառվելու էին.

1. առաջխաղացում իրականացնող կամ հարձակվող հակառակորդի դեմ դարաններն ու ծուղակները,
2. տեղանքում տեղաբաշխված կամ պաշտպանություն վարող հակառակորդի դեմ սրընթաց և գիշերային գրոհները:

Անկանոն ռազմարվեստում[1] դարեր ի վեր տարածում գտած ավանդական հնարքներին հրազենի կիրառումը հավելելով՝ Դավիթ Բեկը հանդես է գալիս որպես հայոց մարտավարության բարեփոխիչ: Միևնույն ժամանակ, Դավիթ Բեկը չի նվազեցնում հեծելազորի քանակը՝ այն օգտագործելով որպես սրընթաց գրոհների և հակառակորդի հետապնդման գլխավոր միջոց: Բացի այդ, հեծյալ ստորաբաժանումները հնարավորություն էին տալիս զորքերի արագ տեղաշարժեր իրականացնել և վերախմբավորվելով՝ փակել վտանգավոր ուղղությունները:



XVIIդ. վերջի հեծյալի հրացան:
Լիցքավորումը հեծյալի համար դյուրին դարձնելու նպատակով
փողի առջևի մասը լայնացված է:

Եռաբլրի հաղթական մարտերը

Հակառակորդը, մեծ կորուստներ տալով, դադարեցնում է արշավանքը և հեռանում Սիսիանից: Առանց ժամանակ կորցնելու Դավիթ Բեկն անցնում է իր նախնական ծրագրի իրականացմանը, որի համար առաջնային էր թուրքական և քրդական ցեղերի կողմից փակված ներքին հաղորդակցության ուղիների բացումը: Առաջինը հարվածի է ենթարկվում Որոտանի ձորը տանող ճանապարհի մոտակա Եռաբլուր սարավանդ ներթափանցած *ղարաչոռլու* թրքախոս ցեղը, որը փակել էր Սիսիանից Կապան տանող ճանապարհը:

Զորահավաքի ենթարկված տեղացի հայերին թողնելով Սիսիանի պաշտպանության համար՝ Դավիթ Բեկն իր հետ եկած հայ մարտիկների չորս հարյուրյակներով հարձակվում է *ղարաչոռլուների* վրանային ավանի վրա: Փոքրաթիվ զորաջոկատից նման հանդուգն քայլի չսպասող խաշնարած ավազակները չեն կարողանում դիմադրել սրընթաց գրոհին և գլխապատառ փախչում են: Հայկական զորախմբերը շարունակում են առաջխաղացումը և հաստատվում Գորիսի Շինուհայր գյուղում: Դավիթ Բեկն սկսում է ամրացնել Շինուհայրը և այն դարձնում իր իշխանանիստը (տե՛ս քարտեզ 3):

[1] Այս մասին տե՛ս «Մեր հաղթանակները», հատ. Բ, էջ 72-73:

Ղարաչոռլուների ջախջախումն իրարանցում է առաջացնում շրջակայքի ասպատակություններով զբաղված քոչվոր ցեղերի շրջանում, որոնք շտապում են միավորել իրենց ուժերը: Ջախջախված հրոսակների մնացորդներին է միանում *օթուզիքի* ցեղը: Նրանք դիմում են մեծաքանակ *ջիվանշիր* ցեղի օգնությանը: Հայկական կողմին առաջիկա ընդհարմանը նախապատրաստվելու ժամանակ չտալու համար թուրքական ցեղախմբերը հարձակում են սկսում և գրավում Եռաբլուրը: Այդ քայլը մարտավարական սխալ էր, քանզի թուրքական ցեղերը մտել էին սակավաբնակ և ռազմավարական առումով կարևորություն չներկայացնող տարածք, որի գրավումով կարևոր ռազմական խնդիրներ չէին լուծվում:

Դավիթ Բեկը չի հապաղում օգտվել հակառակորդի վրիպումից և Շինուհայրի ամրացման աշխատանքները դադարեցնելով՝ շարժվում է նրա դեմ: Սրընթաց հարձակումով հայկական կողմը նախաձեռնություն է ստանում: *Առաջին գրոհով* հնարավոր չի լինում ջախջախել մեծաթիվ հակառակորդին, թեև մարտն ընթանում է հայկական կողմի առավելությամբ և ավարտվում ուշ երեկոյան: Հակառակորդը հասցրել էր մարտակարգ ձևավորել, և Դավիթ Բեկը, մարտը շարունակելն աննպատակահարմար համարելով, նահանջի հրաման է արձակում: Սակայն այս զորաշարժն էապես տարբերվում է Նախիջևան գետի ճակատամարտի երկրորդ փուլի նահանջից: Հայկական զորագունդը հետ է քաշվում՝ նոր հարձակման համար վերախմբավորվելու նպատակով:

Մյուս օրն առավոտյան սկսվում է *երկրորդ հարձակումը*, որը կրկին իրականացվում է արագ ու տեղանքն առավելագույնս օգտագործելով: Հակառակորդն այս անգամ էլ է մեծ դժվարությամբ կարողանում կասեցնել հայկական զորագնդի առաջխաղացումը: Կորուստներից խուսափելու նպատակով Դավիթ Բեկը երկրորդ անգամ է նահանջի հրաման արձակում, և հայկական զորագունդը նույնպիսի արագությամբ հետ է քաշվում դեպի շրջակա բարձունքները: Հայկական կողմի «հապճեպ» նահանջը թյուրիմացության է մատնում հակառակորդին, որն այդ զորաշարժն ընկալում է որպես պարտության դրսևորում: Մոլորության մեջ հայտնված և իրավիճակը ճիշտ չգնահատող հակառակորդին ջախջախելու բացառիկ հնարավորություն է ստեղծվում, և Դավիթ Բեկը երրորդ օրն առավոտյան դարձյալ գրոհում է նրա ճամբարը: Համառ և անզիջում հակամարտությունն ավարտվում է հակառակորդի լիակատար ջախջախմամբ:

Ամփոփում

Նախիջևան գետի մոտ և Եռաբլրում վարվող մարտական գործողությունների ընթացքում Դավիթ Բեկը հանդես եկավ որպես հայոց ռազմարվեստի տաղանդավոր բարեփոխիչ, իսկ ազատագրական շարժման հաղթանակների համբավն արագ տարածվեց ամբողջ Հայաստանում:

Դավիթ Բեկի իշխանապետության հետ հաշվի էին նստում նաև հարևանները: Դրա վկայությունն է դառնում իրանական արքունիքի կողմից Դավիթ Բեկի իշխանության ճանաչումը: Ավելին, Թահմազ Բ շահը նրան առաջարկում է դաշնակցել թուրքական հորդաների դեմ պայքարում: Ձևավորվող հայ-իրանական ռազմաքաղաքական միության ամրապնդման հաջորդ քայլն է դառնում շահի կողմից Դավիթ Բեկին սեփական դրամ հատելու իրավունք շնորհելը: Պատմական այս ժամանակաշրջանում դա նշանակում էր փաստացի ճանաչել Սյունիքի հայկական պետության անկախությունը:

Դավիթ Բեկի արձանը Կապանում

1724-1725ԹԹ. ՊԱՏԵՐԱԶՄԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Ռուս-վրացական հարաբերությունների ջերմացումից դժգոհ շահ Թահմազ Բ-ն (1722-1732թթ.) 1722թ. վերջին գահընկեց է անում վրաց Վախթանգ Զ թագավորին[1] ու նրա փոխարեն գահին նստեցնում Կախեթի թագավոր Կոստանդինին, որը մահմեդականություն էր ընդունել և ավելի հայտնի էր Մուհամեդկուլի խան անունով: Վերջինս, լեզգիների հետ դաշնակցելով, պարտության է մատնում վիրահայերի աջակցությունը վայելող Վախթանգին ու 1723թ. մայիսին գրավում է Թիֆլիսը: Քաղաք մտած լեզգիներն այնպիսի սոսկալի ավեր ու թալան են սփռում, որ հունիսին թուրքական բանակն առանց դիմադրության հանդիպելու գրավում է արյունաքամ եղած քաղաքը: Իշխանության համար պայքարը վերջնականապես խճճելու նպատակով թուրքերը վրաց գահին են նստեցնում Վախթանգ Զ-ի մահմեդականացած որդուն՝ Շահնավազին:

---

[1] Վախթանգը Կուրի ավազանի իրանական բոլոր զորքերի հրամանատարի (բեկլարբեկի) պաշտոնն էլ էր կրում: Այդ պաշտոնում նրան էին ենթարկվում շրջակա խանությունների ուժերը:

Վրաստանում դյուրին հաջողություններից ոգևորված թուրքերը որոշում են շարունակել արշավանքը դեպի արևելք և հարավ (Արցախի և Սյունիքի վրայով՝ Ատրպատական): Ակամա հակաթուրքական ճամբարում են հայտնվում Մուհամեդկուլի խանը, շահին հավատարիմ մնացած խաներն ու թուրքերի դեմ նրանց պայքարին միացած հայկական սղնախների ուժերը:

Հարձակումը սկսվում է հուլիսին՝ Հաջի Դավուդի գլխավորությամբ լեզգիների Կուրն անցնելու փորձերով: Սղնախներն ակտիվ մասնակցություն են ունենում հրոսակների առջև Գանձակ տանող ճանապարհը փակելու իրանական զորքերի պայքարին: Կուրն անցնելու փորձերը շարունակվում են մոտ երկու ամիս և ավարտվում ձախողումով: Դա թուրքերի անհաշվենկատորեն կազմված ռազմավարական պլանի առաջին բացթողումն էր, որով հակաթուրքական ուժերն ազատվում են երկու ճակատով պատերազմելու հեռանկարից:

Առաջին մեծ հաղթանակը

Առաջին հաղթանակով ապացուցվել էր թուրքերի գանձակյան արշավանքի նախօրյակին տեղական բոլոր ուժերը միավորելու անհրաժեշտությունը, բայց ավանդույթի ուժով պարսիկները սղնախների հզորացումն իրենց իշխանության համար սպառնալիք էին համարում: Մասնավորապես, լեզգիներին հետ մղելուց և հայկական զորքի Արցախ վերադառնալուց քիչ անց շրջակա խաների դեմ պայքարում աջակցության խնդրանքով Կապանից սուրհանդակ է ժամանում Ավան հարյուրապետի մոտ:

Լեզգիներին ջախջախելուց ընդամենը մեկ ամիս անց տեղեկություն է ստացվում Թիֆլիսից Իբրահիմ փաշայի թուրքական 50 հազարանոց բանակի առաջխաղացման մասին, ու Գանձակում էլ ծավալվում են 1723թ. պատերազմաշրջանի գլխավոր իրադարձությունները (տե՛ս քարտեզ 4): Երկու կողմերն էլ գիտակցում էին Գանձակի կարևորությունը, և 1723թ. սեպտեմբերի վերջին սկսված մարտական գործողություններն առաջին իսկ օրից համառ և անզիջում էին: Ցույց տրված դիմադրությունն անսպասելի էր թուրքերի համար, որոնք հույս ունեին, թե գործերի բարենպաստ ընթացքի դեպքում նախքան ցրտերն ընկնելը կհասցնեն Երևանն էլ գրավել: Գրոհները շարունակվում են 20 օր, սակայն թուրքերը, մեծաթիվ զոհեր տալով, նահանջում են:

Թեև Սեֆյանների պետությունը հոգեվարք էր ապրում, իսկ լեզգիներն արդեն իսկ տակնուվրա էին արել ռազմական գործողությունների ամբողջ թատերաբեմը, սակայն Գանձակի պաշտպանությունը ձախողում է մի քանի ամսում Կովկասյան լեռներին հասնելու և Ատրպատականը զավթելու թուրքական ծրագրերը: Այդուհանդերձ, հակաթուրքական դաշինքն ամուր չէր: Ամեն րոպե կարելի էր սպասել մեծ ու փոքր սադրանքների:

Քարտեզ 4


ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1724Թ.
Ռուսաստան
Օսմանյան կայսրություն
Ղրիմ
Ղրիմի խան
Ղրիմի խանի զորքեր
Ռուսական զորքեր
Ռուսական նավատորմ
Ռուսական նավեր
Ռուսական ռազմական գործողություններ
Ռուսական զորքերի նահանջ
Ռուսական զորքերի նահանջի ուղիներ
Ռուսական զորքերի նահանջի ուղիներ
Ռուսական զորքերի նահանջի ուղիներ

Այդպիսի մի միջադեպ է լինում 1723թ. հոկտեմբերի 20-ին Դիզակի սղնախի Հադրութ գյուղի մոտ: Տեղի ինքնապաշտպանական ուժերն ընդհարվում են Մուղանի Սեֆի-Կուլի խանի հեծելազորի հետ: Ձինված ընդհարման ընթացքում հադրութցիները պարտության են մատնում Մուղանի խանի զորքերին և քշում են Արցախի սահմաններից: Նման միջադեպերը սղնախների առօրյայի մասն էին դարձել:

Ինչևէ, Գանձակից թուրքերի նահանջից հետո սղնախներ վերադարձած զորամասերն ընթացիկ գործերը շտկելու ժամանակ են ստանում: Այդ ընթացքում էլ Ավան հարյուրապետի գլխավորությամբ արցախցիների զորամասերն օգնության են շտապում կապանցիներին[1]:

[1] Ավելի նշանավոր է արցախցիների 1724թ. գարնան օգնության ռազմերթը Կապան: Երկու ռազմերթերն էլ վկայում են Արցախի սղնախների և Կապանի հայկական իշխանության սերտ համագործակցության մասին:

1724Թ. ԳԱՐՆԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Գանձակի պատերի տակ կրած պարտությունը թուրքական բանակի վրա առաջին հերթին հոգեբանական ազդեցություն էր ունեցել: Հակառակորդը գրեթե վեց ամիս ձեռնպահ է մնում ակտիվ գործողություններից, ապա՝ երկարատև մտորումներից հետո, երկու տարով հետաձգում է Գանձակը գրավելու գործը և, ի վերջո, ընտրում է նոր թիրախ՝ Լոռու բերդը (տե՛ս քարտեզ 5):

Քարտեզ 5


Ռուսական զորքերը 1724թ.
Օսմանյան կայսրություն
Կասպից ծով
Սևանա լիճ
Գանձակ
Գորիս
Ղարաբաղ
Ղազախ
Ղարաքիլիսա
Ալեքսանդրապոլ
Գյումրի
Ջավախք
Թբիլիսի
Ղարսի բերդ
Սուրամ
Դարիալի ամրոց
Դերբենդ
Բաքու
Ռեշտ
Սալիան
Գանձակ
Ղարաբաղ
Ղազախ
Ղարաքիլիսա
Ալեքսանդրապոլ
Գյումրի
Ջավախք
Թբիլիսի
Ղարսի բերդ
Սուրամ
Դարիալի ամրոց
Դերբենդ
Բաքու
Ռեշտ
Սալիան

Հակառակորդի մտահոգությունը պարզ էր. Լոռին չուներ Գանձակի և, առավել ևս, Երևանի կարևորությունը: Մեծաթիվ բանակի համար այս բերդի գրավումն առանձնապես դժվարին խնդիր չէր լինելու, իսկ հաջողության հասնելով՝ նկատելիորեն կբարելավվեր զորքի բարոյահոգեբանական վիճակը: Ձմռան ամիսներին պարապուրդի մատնված ասկյարներին հրամանատարները սկսում են քարոզել, թե հարձակման առաջին թիրախը պետք է Լոռին լիներ և որ միայն Լոռին գրավելուց հետո կարելի է հարձակումը շարունակել մյուս ուղղություններով:

Գարնանը թուրքական բանակը պաշարում է Լոռին, սակայն այստեղ էլ նրանց նոր հիասթափություն էր սպասվում: Բերդի կայազորը և սղնախի ամբողջ բնակչությունը համառ դիմադրություն են ցույց տալիս նվաճողներին:



XVII-XVIIIդդ. թուրքական հրացան՝ հարվածային գործողության կայծքարե կողպեքով:

Բերդի գրավման փորձերը բազմաթիվ զոհերից բացի ոչնչի չէին հանգեցնում: Հակառակորդը հարկադրված հրաժարվում է այն գրավելու մտքից ու նահանջում է: Սակայն թուրքական բանակի անախորժությունները դրանով չեն ավարտվում: Լոռու պատերի տակ կրած պարտությունից գրեթե անմիջապես հետո դեպի Երևան արշավող մեկ այլ թուրքական բանակի առաջխաղացման ճանապարհը փակում են Կարբի ավանի բնակիչները, որոնց հաջողվում է 40 օր շարունակ կասեցնել թուրքական կանոնավոր բանակի առաջխաղացումը:

Կարբեցիների երկարատև պաշտպանությունը տալիս է սպասված արդյունքը: Թուրքական բանակի հրամանատարությունն, ի վերջո, գիտակցում է, որ մի քանի ամսում երկրորդ ուղղությունում կրած պարտության պատճառով թանկարժեք ժամանակ է կորչում, որով 1724թ. պատերազմաշրջանի պլանին լիակատար ձախողում է սպառնում: Փոքրաթիվ հայրենասերների անձնուրաց դիմադրությունը հանկարծ վերածվում է տարածաշրջանային հնչեղություն ստացած կարևոր ռազմավարական իրադարձության և հակառակորդին հարկադրում է բանակցություններ սկսել կարբեցիների հետ:

Իրենց կատարածի իրական արժեքը գիտակցող կարբեցիները բանակցությունների ընթացքում հայտարարում են, թե զենքը վայր կդնեն պայմանով, որ թուրքական բանակի հրամանատարությունն իրենց ավան չմտնելու երաշխիքներ տա: *Հակառակորդը* ***հարկադրված է լինում*** *անվերապահորեն ընդունել կարբեցիների պայմանները:*

Նոր մեծ հաղթանակ

Մեկը մյուսից ստորացուցիչ պարտություններ կրող թուրքական զորքերն իրենց գայրույթը պարպում են հայկական գյուղերի վրա: Սուրմալուի, Շորագյալի և Ապարանի շրջանների մոտ 300 գյուղերի բնակիչներ տեղահան են արվում և գաղթեցվում Փոքր Ասիայի խորքերը՝ ստրկության: Այս վայրագությունների նպատակն էր ահաբեկել ամբողջ տարածաշրջանի բնակչությանը, սակայն ուժերի ճնշող գերազանցության հասած թուրքերին չէր հաջողվում իրականացնել նախանշածը:

Հրացանների լիցքավորումն արագացնելու համար XVIIդ. հրաձիգները վառոդը սկսեցին պահել ահա այսպիսի վառոդամաններում: Լիցքավորման ընթացքում վառոդի կորուստ չունենալու համար փողրակը հրացանի տրամաչափից փոքր էր արվում:

Թուրքական բանակն անընդհատ համալրում ստանալով՝ մեծաթիվ զոհեր տալուց հետո էլ կարողանում էր վերականգնել ուժերը, բայց հայաշատ բնակավայրերի դիմադրությունը չէր թուլանում: Ավելին, Արցախի լեռնային շրջաններ և Կապան հասած զավթիչներին ցույց տրված դիմադրությունն անհամեմատ համառ էր ու աչքի էր ընկնում աննախադեպ կազմակերպվածությամբ: *Պայքարի կազմակերպվածության առումով ուշագրավ է Վարանդայի ծուղակը 1725թ. մարտի 1-ին:*

1725թ. փետրվարի վերջին թուրքական 6 հազարանոց զորագունդը ներխուժում է Վարանդա: Նման հակառակորդի դեմ բացահայտ գործողությունները կարող էր զոհերի հանգեցնել: Այդ պատճառով որոշվում է թշնամուն ոչնչացնել ռազմական խորամանկությամբ: Միջնադարյան հայոց ռազմարվեստի հարուստ զինանոցից ընտրվում է թուրքերին գիշերային ծուղակը գցելու հնարքը[1]:

Վարանդայի հայությունը դիմադրության որևէ նշան ցույց չի տալիս: Արցախում ամեն քայլի դիմադրության հանդիպելու սովոր թուրքերի համար դա անակնկալ էր: Թվացյալ հաջողությունն ինքնավստահ է դարձնում նրանց:

---

[1] Համանման մի հաղթանակի մասին մենք արդեն խոսել ենք: Տե՛ս «Մեր հաղթանակները», հատ. Գ, էջ 36-40:

Չգտելով օգտվել «անդորրից»՝ թուրքական զորամասերը բաժանվում են ինքնուրույն գործող ստորաբաժանումների, որոնցից յուրաքանչյուրն առանձին առաջադրանք է ստանում: Անտեսելով անվտանգության միջոցառումների անհրաժեշտությունը՝ զորագնդի հրամանատարները փետրվարի 28-ի երեկոյան գիշերելու համար չեն միավորում իրենց ուժերը և տեղաբաշխվում են ցրված՝ գավառակի 33 գյուղերում (տե՛ս քարտեզ 5):

Հարձակումը բոլոր գյուղերում պետք է իրականացվեր միաժամանակ: Միջնադարի հաղորդակցության միջոցների պայմաններում դա իրականացնելը դժվարին գործ էր, սակայն ձեռքի տակ եղածով զինված գյուղացիները խիզախում են ու բաց չեն թողնում եզակի հնարավորությունը: Նրանք գիշերը հարձակվում են իրենց տներում տեղավորված թուրք զինվորների վրա և ոչնչացնում նրանց մեծ մասին: Թուրքական զորամասի երեք հրամանատարներից երկուսը սպանվում են, իսկ երրորդը գերվում է:

Այսպիսով, որքան էլ տարբեր լիներ իրադրությունը 1724թ. գարնանը Լոռիում և Կարբիում ու 1725թ. Վարանդայում՝ ականատես ենք լինում հայոց մարտավարությունում դարեր շարունակ լայն տարածում ստացած հնարքների:

ՄԵՂՐՈՒ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ (1725Թ.)

Կապանի հայկական իշխանությունը թուրքական գլխավոր ուժերի ներխուժման նախօրյակին հայտնվել էր հակասական իրավիճակում: 1724թ. մարտի 29-ին Որոտանի բերդի ազատագրումով իշխանության տարածքը բավական չափով ամբողջական էր դարձել և լիովին վերահսկվում էր հայկական զինական ուժի կողմից (տե՛ս քարտեզ 6):

Տեղեկանք. «Ոչնչացված էին Որոտնա և Զևու բերդերի թշնամական կայազորները. Ղափանի սահմաններից դուրս էր արտաքսված, մասամբ էլ՝ բնաջինջ արված «ծմեռանոցների բնույթ կրող» մուսուլմանաբնակ ավանների՝ Քուրդլարի, Քիսի, Լևազի ձորի գյուղերի (Դամալի, Շրդի, Պիրենա, Թաղամեր) կիսանստակյաց բնակչությունը: Քոչվորներին ուժգին հարվածներ էին հասցված Ուչթափալարի սարահարթում, Չավնդուրում և այլուր: Իր անառիկ աշխարհագրական դիրքով, զուտ հայ ազգաբնակչությամբ և ռազմունակ ու փորձառու զինվորականությամբ Ղափանը, կարծես, վերածնում էր Սյունյաց թագավորների ու Օրբելյանների երբեմնի հզոր ազգային իշխանությունը»:

Ա.Այվազյան, Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թվականին, ՊԲՀ, 1991, թիվ 2, էջ 102

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1725Թ.


ՀԱՅԱՍՏԱՆ
ՍԱՖԱՎԻԱՆ ԿԱՅԱՍՏԱՆ
ՍԱՖԱՎԻԱՆ ՊԱՏԱՐԱԳՈՒՄ
ՍԱՖԱՎԻԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՍԱՖԱՎՈՒՅՆ ՀԱՅՔԱՂԱՔ
ՍԱՖԱՎՈՒՅՆ ՉԱՎՆԴՈՒՐ
ՍԱՖԱՎՈՒՅՆ ԲԱՐՁՐԱՎԱՆՔ
ՍԱՖԱՎՈՒՅՆ ԵՐԵՎԱՆ
ՍԱՖԱՎՈՒՅՆ ՄԱՍԻՍ
ՍԱՖԱՎՈՒՅՆ ԹԱՎՇԻ
ՍԱՖԱՎՈՒՅՆ ՇԻՐԱԿ
ՍԱՖԱՎՈՒՅՆ ԱՐԱՐԱՏ
ՍԱՖԱՎՈՒՅՆ ԱՂՎԱՆ
ՍԱՖԱՎՈՒՅՆ ԳԱՆՁԱԿ
ՍԱՖԱՎՈՒՅՆ ՍՅՈՒՆԻՔ
ՍԱՖԱՎՈՒՅՆ ԱՐԱՍ
ՍԱՖԱՎՈՒՅՆ ՎԱՆԱ
ՍԱՖԱՎՈՒՅՆ ԱՂՎԱՆ

Դա ուղղակի մարտահրավեր էր պարսիկ Թահմազ Բ-ին: Գանձակին սպառնացող թուրքական վտանգին դիմակայելու անկարողությունը վերջինիս հարկադրել էր Արցախի *սղնախների* հրամանատարությանը սիրաշահելու քաղաքականություն վարել, սակայն Սյունիքի զինական ուժի հանդեպ նրա վերաբերմունքը բացասական էր: Շահը Դավիթ Բեկի ստեղծած իշխանության գոյությունն ընկալում էր որպես Երևանի խանի զորքի թիկունքի միասնականությունը խախտող գործոն, մինչդեռ պարսկական բանակի գլխավոր հաղորդակցային ուղուց (Թավրիզ-Նախիջևան-Երևան) հեռու գտնվող իշխանությունը չէր կարող անմիջական վտանգ հանդիսանալ Արարատյան դաշտավայրի պաշտպանության համակարգի համար: Կենտրոնական իշխանությունների կողմից խրախուսվող Բարգուշատի, Որդվատի (Օրդուբադ), Նախիջևանի և մյուս խաները չէին դադարեցնում իրենց ոտնձգությունները: Կարճամիտ քաղաքականությունը տալիս է սպասված «արդյունքը». վճռական պահին պարզվում է, որը նրանք ի վիճակի չեն էապես խոչընդոտելու թուրքերի առաջխաղացմանը: 1724թ. օգոստոսին թուրքերը գրավում են նրանց տիրույթների մեծ մասը, այդ թվում Նախիջևանն ու Որդվատը:

Կապանի ու Արցախի հայությունը թուրքական բանակի դեմ պայքարում միայնակ է մնում:

1724թ. աշնանը թուրքական բանակի հրամանատարությունը մարտական գործողությունները տեղափոխում է Գողթնի տարածք: Նախիջևանում և Որդվատում տիրող խուճապը տեսնող թուրքերը վստահ էին, որ մոտ են հաղթանակին: Նրանց առաջխաղացմանը նպաստում էր խաների հակահայկական դիրքորոշումը: Այս առումով աչքի էր ընկնում Լևազի խան Սեֆիկուլին: Չավնդուրցիների հրամանատար Թորոսից[1] 1724թ. ամռանը մի քանի ամոթալի պարտություններ կրած խանը նահանջել էր Որդվատ: 1725թ. Սեֆիկուլիին հաջողվում է ուժերը միավորել Որդվատի ղազու և շեյխ-ուլ-Իսլամի որդիների զորամասերի հետ ու 8 հազարանոց զորքով արշավել դեպի Մեղրի: Ճանապարհին 4 հազարանոց զորագնդով նրանց վրա է գրոհում Դավիթ Բեկը:

Պատմական տեղեկանք. «Այս ամենի մասին լուրը հասավ Դավթին: Եվ նա անմիջապես իր հետ վերցնելով մոտ չորս հազար հոգի, գալիս բանակում է Կալերում: Առավոտյան ավազակ թուրքերի վրա է հարձակվում և նրանց գտնում է Մեղրի գետի մյուս կողմում բանակած: Իսկ նրանք երբ տեսան Դավթի զորքերը, բոլորը վրա հասան բռնեցին գետափը և թույլ չէին տալիս Դավթին գետն անցնել: Ապա սրանք այստեղից և նրանք այնտեղից կռվեցին առավոտից երեկո»:

Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկի պատմությունը, Գլ. Բ. 39

---

[1] Թորոսը Դավիթ Բեկի ամենաօժտված զինակիցներից էր, որը հանկարծակի և սրընթաց գրոհների մեծ վարպետի անուն էր վաստակել: Նրա գործունեությունը երկար չի տևել (զոհվել է նկարագրվող իրադարձություններից քիչ անց), սակայն վառ հետք է թողել ազատագրական շարժման հրամանատարների շարքում:

Հատված Հալիձորի ամրություններից

Ամբողջ օրը տևած ճակատամարտում հակառակորդը մեծաթիվ զոհեր է տալիս ու հետ քաշվում դեպի ելման բնագծերը: Կարծելով, թե նրա առաջխաղացումն այլևս անհնար է, Դավիթ Բեկը զորքը տանում է Հալիձոր:

Հակառակորդն անորոշության էր մատնված և, թերևս, կդադարեցներ արշավանքը, եթե հայկական գլխավոր ուժերի հեռանալուց ընդամենը մեկ օր անց նրա երկար սպասված օգնությունը տեղ չհասներ: Թավրիզից ու Ղարադաղից ժամանած 12 հազարանոց համալրման և տեղ հասնող այլ ուժերի հետ միասին հակառակորդի զորքի քանակը հասնում է 18 հազարի, որը թույլ է տալիս նոր հարձակման անցնել: Բացի այդ, Արաքսի աջ ափին մարտական գործողություններ էին վարում թուրքական մի քանի այլ զորամասեր: Ուժերի պատկառելի գերազանցության հասած Սեֆիկուլին հարկ չի համարում դիմել նրանց օգնությանը: Ճանապարհի հայկական գյուղերն ավերելով՝ հակառակորդը շարժվում է դեպի Մեղրի: Անիմաստ էր կանոնավոր զորքին գյուղացիների ուժերով դիմադրելը, և վայրագությունների մասին տեղեկացած տեղացիներն անցնում են Չավնդուր, իսկ հակառակորդն ուժերը կենտրոնացնում է Մեղրու մոտ և առաջին հերթին փակում պաշարված ավանից մեղրեցիների նահանջի ուղիները:

Մեղրին Սյունիքի իշխանության կարևոր սահմանամերձ ամրություններից էր և ուներ 400 հոգանոց կայազոր: Մեղրեցիների հրամանատարներից հայտնի են Կոստանդինի, Հովհաննեսի, Սարիի և Առաքելի անունները: Գիտակցելով, որ ամրոցը գրավելով հակառակորդը ոչ մեկին չի խնայելու, կայազորի հրամանատարությունը որոշում է զինել բոլոր մեղրեցիներին և ավանում ապաստանած փոք-

ռաթիվ գյուղացիներին: Տարօրինակ ոչինչ չկար, որ այդ օրհասական պահին իրենց եղբայրների, ամուսինների ու որդիների կողքին են կանգնում նաև կանայք:

Գրոհը

Գյուղաքաղաքի պաշտպանները բաժանվում են երեք մասի ու դիրք գրավում երեք թաղամասերում: Ճիշտ ընտրված մարտավարության և Մեղրու պաշտպանների անձնուրացության շնորհիվ առաջին գրոհները հաջողությամբ անդրադարձվում են: Մեղրեցիները պատրաստ էին կենաց-մահու դիմակայությանը, բայց միայնակ երկար չէին կարող դիմադրել և օգնության համար դիմում են Կալերի ու Չավնդուրի հայերին:

> **Պատմական տեղեկանք.** «Մեղրեցիները սուրհանդակ ուղարկեցին Գուրհամի գավառը՝ Կալեր, ասելով՝ ահա թուրքերի զորքերը հասան, գրավեցին մեր փոքրիկ թաղը: Եվ եթե հիմա մեզ օգնության չհասնեք երկու օրում, մենք նրանց բազմությանը դիմադրել չենք կարող: Եվ երբ սուրհանդակը հասավ նրանց, անմիջապես գիշերով ելավ Ստեփաննոս Վարդանյանը, որ Շահումյան տնից էր և Եկդաստյան ավանից (որ և փոխանորդն ու տեղակալն էր Պապ զորապետի), գնաց Չավնդուր գավառը, Պայինտուր (Բայինդուր) զորապետի մոտ, նրան տեղեկացրեց, որ մեղրեցիները անհամբեր են և վտանգի մեջ են»:
>
> ***Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկի պատմությունը, Գլ. Բ. 43***

Չախողումները հակառակորդին հարկադրում են փոխել մարտավարությունը և բոլոր ուժերը ներգրավել վճռական գրոհի համար, որը սկսվում է պաշարման հինգերորդ օրվա առավոտյան: Հակառակորդը նկատելի հաջողություններ է հասնում և օրվա երկրորդ կեսին գրավում է Մեղրու Փոքր թաղը: Գետը կամրջով ու ծանծաղուտներով անցնել փորձող նրա զորամասերը համառ դիմադրության են հանդիպում: Նոր թափով բորբոքված մարտը շարունակվում է մինչև ուշ երեկո: Նորանոր զորամասեր մարտի նետող հակառակորդի գրոհները հետևում էին մեկը մյուսին, սակայն Փոքր թաղի գրավումն առավելագույնն էր, որ նա կարողանում է անել:

Անհրաժեշտ ուժեր կուտակելու նպատակով Մեղրին պաշարածներն ուշացումով դիմում են Երասխի (Արաքս) հակառակ ափին տեղակայված թուրքական զորամասերին, կոչ անում անցնել գետն ու միավորվել իրենց հետ: Վերջիններս համաձայնում են և հայտնում, որ գետանցումն իրականացնելու և բանակատեղի հասնելու համար իրենց անհրաժեշտ է ընդամենը մեկ օր: Այս տեղեկությունը փոխում է հակառակորդի ծրագրերը, որի նոր գրոհը պետք է սկսվեր հաջորդ օրը կեսօրին: Օգնության շտապող զորամասերին սպասելու համար որոշվում է ևս մեկ օրով հարձակումը հետաձգել:

Գիշերային արտագրոհը

Մեղրեցիներին հայտնի չէր իրենց ուղարկած սուրհանդակի ճակատագիրը: Այդ հանգամանքը նրանց հարկադրում է ստեղծված իրավիճակից դուրս գալու համար ինքնուրույն ելք փնտրել: Ծանրագույն մարտից հետո երկու կողմերն էլ հոգնած էին: Թվում էր՝ ավելի ճիշտ կլինի, եթե ամրոցի պաշտպանները հանգստանան և ուժերը վերականգնեն: Ամբողջ օրը տևած մարտում առանց փոխարինման մարտնչած և անօրինակ հերոսություններ գործած մարդիկ այնքան հոգնած էին, որ ի վիճակի չէին լինելու նոր առաջադրանք կատարել: Սակայն վճռական գրոհի կասեցումից գրեթե անմիջապես հետո գիշերային արտագրոհի նախապատրաստում է սկսվում: Միևնույն ժամանակ, ամրոցի պաշտպանները գիտակցում էին, որ արտագրոհը կարող էր սպասված արդյունքը չտալ: Հակառակորդը մեծաթիվ էր, և չէր կարելի բացառել ամրություններից ցած իջած ու նրա ճամբարը ներխուժած մեղրեցիներին ծուղակը գցելու տարբերակը ևս:

> **Պատմական տեղեկանք.** «Քաջ ու արի մեղրեցիների զորքերը այն գիշեր սխրանքներ գործեցին: Անցնելով գետի մյուս ափը՝ անսպասելիորեն թշնամու բանակի մեջ մտան և նրանցից շատերին սուր-սուսերով խորտակեցին, իսկ Շահիսլամի որդին երկու հազարով փախավ Օրդուվար քաղաքը: Բայց որովհետև մեղրեցիները քիչ էին, չկարողացան իսպառ ջնջել և վերացնել նրանց այնտեղից, վերստին դարձան Մեղրի»:
>
> *Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկի պատմությունը, Գլ. Բ. 46*

Գրոհը հասնում է նպատակին: Գետի հակառակ ափն անցած ստորաբաժանումները զգալի կորուստներ են պատճառում ու փախուստի են մատնում հակառակորդին, սակայն չեն համարձակվում երկար հետապնդել նրան (տե՛ս Սխ. 1):

Առաջադրանքը հաջողությամբ ավարտելով՝ մեղրեցիները լուսադեմին վերադառնում են ելման դիրքերը: Գիշերվա ընթացքում ստորաբաժանումների անկանոն նահանջի ու տված մեծաթիվ զոհերի պատճառով հակառակորդը չի կարողանում վերականգնել խախտված մարտակարգը, և կրկնվող անհաջողություններից դժգոհելով՝ միավորված զորքի ճամբարը լքում է շեյխ-ուլ-Իսլամի որդին՝ իր 2 հազարանոց զորամասով հեռանալով դեպի Որդվատ:

Սխեմա 1



ՄԵՂՐԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1725 Թ.

Օգնությունը

Մինչ Մեղրիում թեժ մարտեր էին ծավալվել՝ սուրհանդակի Կալեր հասնելուց անմիջապես հետո օգնելու նպատակով նախապատրաստական բուռն միջոցառումներ են սկսվում: Քանի որ Կալերում ուժերն անբավարար էին, որոշվում է ներգրավել նաև Չավնդուրի ստորաբաժանումներին:

Ի վերջո, ի մի է բերվում 2 հազար հոգանոց զորամաս, որը Բայինդուր զորապետի գլխավորությամբ շարժվում է դեպի Մեղրի: Արագ իրականացված զորահավաքը և ռազմերթի ընթացքում տեղաշարժի համար անհրաժեշտ բոլոր միջոցառումների խստագույն պահպանումը Կապանի նորաստեղծ իշխանության ներքին կազմակերպվածության և զորահավաքային բարձր հնարավորությունների վկայությունն են: Բայինդուրը զորամասը երթի է հանում զորահավաքից անմիջապես հետո, ինչը հնարավորություն է տալիս երեկոյան անցնել Ճանապարհի մեծ մասը, հասնել Մազրան ավանն ու այնտեղ գիշերել: Բայինդուրի մտահոգությունը հիմնավոր էր, քանի որ նրան ևս հայտնի էր դարձել Արաքսի հակառակ ափին գործող թուրքական զորամասերի մասին: Կարճատև

դադարից հետո՝ կեսգիշերն անց, Բայինդուրը ոտքի է հանում զորամասը, շարունակում ռազմերթն ու առավոտյան, երբ գիշերային իրարանցումից հետո հակառակորդի զինվորները խոր քուն էին մտել, հասնում է Մեղրու Մեծ թաղ:

Հաղթանակը

Բայինդուրը մեղրեցիներին հայտնում է Արաքսի մյուս ափին տեղաբաշխված զորամասերի մասին իրեն հայտնի դարձած հետախուզական տեղեկությունը: Հակառակորդի ուժերի միավորումը կանխելու համար որոշվում է նոր արտագրոհ իրականացնել: Ուշագրավ է, որ գիշերային հաղթանակից հետո Մեղրիում տիրող ոգևորությունը տեսնելով՝ զորապետը ներգրավում է նաև նախորդ ամբողջ օրը մարտերի մեջ եղած ու գիշերային արտագրոհին մասնակցած մեղրեցիների բոլոր ուժերը:

Ի պատիվ հայ զորապետի նշենք, որ 2 հազարանոց զորամասի Մեղրի հասնելն իրականացվել էր լիակատար գաղտնիության պայմաններում՝ շրջանցելով հակառակորդի բոլոր դիտակետերը: Այդ պատճառով, թեև հակառակորդն ամրոցի պատերին սկսված իրարանցումը նկատել էր, սակայն կանխարգելիչ միջոցառումներ չի ձեռնարկում: Ավելին, նոր արտագրոհների հնարավորությունը բացառելով՝ առավոտյան զինվորներին թույլատրվում է քնել:

> **Պատմական տեղեկանք.** «Մեղրեցիները շտապ նրանց (օգնության եկածների) համար կերակուր պատրաստեցին: Այնժամ Պայինտուրը, որ իշխան էր և իր հետ եկած զորքի հրամանատարը, չթողեց նրանց, ասելով. «Մենք ոչինչ չենք ուտի, մինչև Աստծու ողորմածությամբ մեր թշնամիներին չվռնդենք»... Որովհետև մեկ օր առաջ այլազգիները գրել էին թուրքերի զորականներին, որոնք Երասխ գետի մյուս կողմում էին, որ գան օգնության հասնեն իրենց, իսկ դրանք պատրաստ էին բազում գնդերով գալու, իրենց օգնության հասնելու»:
>
> ***Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկի պատմությունը, Գլ. Բ. 47-48***

Իրավիճակը նպաստավոր էր: Բայինդուրը որոշում է ուժերը բաժանել երեք հավասար մասի՝ «յուրաքանչյուր գունդը ութ հարյուր վաթսուն սպառազեն մարդով»: Զորապետը զորամասերը գրոհի է ուղարկում *սանդղաձև* մարտակարգով: Նպատակն էր ճակատամարտի ընթացքում մեծաթիվ հակառակորդի կրակային խոցման համար այնպիսի պայմաններ ստեղծել, որոնց արդյունքում հնարավոր լիներ գլխովին ջախջախել նրան: Հատկանշական է, որ փոքրաթիվ ուժերի առաջին հարվածի հզորությունը մեծացնելու համար պահեստազոր չի առանձնացվում: *Ռազմարվեստի տեսանկյունից բացառիկ է, որ գրոհը պետք է սկսեին ոչ թե **առաջ ընկած** թևերը, այլ **հետ մնացող** կենտրոնը* (տե՛ս Սխ. 2): Այդ մտահղացումը հնարավորություն էր տալիս.

Սխեմա 2



ՄԵՂՐԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1725 Թ.

- առաջին իսկ րոպեներից թևանցել հակառակորդի ճամբարը,
- մեծ ճակատով հասցնել առաջին հարվածը,
- գործողությունների առավելագույն ազատություն թողնել հրազենով զինված ստորաբաժանումների նշանառու կրակի համար,
- հնարավորության դեպքում թևերն էլ ավելի առաջ տանել և թևանցումը վերածել շրջանցման:

Պատմական տեղեկանք. «Ապա (Բայանդուրը) մի գունդն ընդառաջ ուղարկեց թուրքերի դեմ ճակատելու և մյուս երկու գնդերը ձայն տալով խրախույս կարդացին և վրա հասան թուրքական զորքերին աջից ու ձախից և օրվա տասնվեցերորդ ժամից մինչև քսաներորդ ժամը շրջապատեցին, իրենց մեջ առան անօրենների զորքերի բազմությունը և այն օրը նրանցից կոտորեցին ավելի քան տասնմեկ հազար մարդ, մյուսներին հալածեցին Օրդուվար, իսկ հաջի Շափիին, որ ամենից աչքի ընկնողն էր, ձերբակալեցին»:

Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկի պատմությունը, Գլ. Բ. 49

Ռուսական բանակի 1720թ. հետևակային հրացան: Կայծքարե կողպեքով (փակաղակով) հրացանները բարձր էին գնահատվում հեռամարտում, իսկ մի քանի տողանով շարված հրաձիգների համազարկային կրակը գծային մարտավարության հիմքն էր կազմում:

Ռուսական բանակի 1720թ. հետևակային հրացանի կենտրոնական մասը:

Հարձակումը սկսվում է կեսօրին, սակայն ասկյարների մեծ մասը դեռևս քնած էր: Առավոտյան քնից նոր արթնացողների մյուս մասն էլ դեռևս չէր զինվել ու պատշաճ կերպով հանդերձավորվել: Մարտը սկսում է կենտրոնի զորամասը, որն իր քանակով գրեթե հավասար էր գիշերը մեղրեցիների արտագրոհին մասնակցած ուժերին: Ամրոցի պաշտպաններին օգնության հասած ուժերի մասին անտեղյակ հակառակորդը չէր կարծում, թե հայկական կողմն այլ ուժեր էլ կարող է ներգրավել մարտին: Կարծելով, թե քաղաքի կայազորը հերթական արտագրոհն է իրականացնում, տագնապով ոտքի հանված զորքը, առանց մարտակարգ ձևավորելու, փորձում է հախուռն հակագրոհ իրականացնել: Այդ ժամանակ էլ մարտադաշտ են հասնում զորաթևերի ստորաբաժանումները և գրոհում կենտրոնի զորաթևի դեմ խռնված հակառակորդի թևերը: Երկրորդ հարվածն էլ ավելի անսպասելի էր տակավին մարտակարգ չձևավորած հակառակորդի համար, որի ստորաբաժանումներն այս անգամ էլ շտապում են շրջվել դեպի աջ ու ձախ: Փաստորեն, մարտի առաջին փուլում հակառակորդի գրեթե ամբողջ զորքն, իր անելիքը չիմանալով, այս ու այն կողմ էր վազում (տե՛ս Սխ. 3): Ուժեղ խաչաձև (թևային) կրակի տակ ընկած հակառակորդն այս անգամ էլ փորձում է նահանջել՝ թևային հարվածների տակից դուրս գալու համար: Թևերում սկսված ջախջախումից անտեղյակ ու նահանջի իմաստը չընմբռնող ասկյարները երկու կողմից խաչաձև կրակի տակով փորձում են դուրս գալ մնացած միջանցքով, որը կրակային պարկի է վերածվում նրանց համար:

Սխեմա 3



ՄԵՂՐԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1725 Թ.

Այսպիսով, հակառակորդի կենտրոնը սկսում է նահանջել դեպի հետ, իսկ թևերը՝ իրենց առջև մարտակարգով շարված հայկական զորամասերի հակառակ ուղղությամբ (փաստորեն՝ դեպի կենտրոն): Թևերի զորամասերը փակում են կենտրոնի ուժերի նահանջի ճանապարհը: Նոր իրարանցում է սկսվում, որը հանգեցնում է խուճապի: Ընդ որում, թևերից նահանջող ստորաբաժանումներն այնքան են հակառակ ուղղությամբ շարժվում, մինչև որ կասեցվում են հակառակ կողմից կրակող հայկական զորամասի կողմից և նույն ձևով հետ շտապում:

Օգտագործելով թևերում սկսված խուճապը և զորամասերի նահանջելու պատճառով առաջացած քաշքշոցը՝ հայկական զորամասերը կենտրոնում սկսում են առաջ շարժվել ու ձեռնամարտի են բռնվում հակառակորդի հետ: Դա փախչող զորամասերին հարկադրում է ակամա շրջվել և ընդունել մարտը: Մարտը վաղուց արդեն միակողմանի կոտորածի էր վերածվել, սակայն հակառակորդը պահպանում էր քանակական գերազանցությունը, և նրան մի պահ հաջողվում է դանդաղեցնել հայկական կենտրոնի առաջխաղացումը: Հակառակորդի թևերի նահանջից հետո համեմատաբար ազատված հայոց թևերն առաջ են անցնում ու սկսում են շրջապատել մարտադաշտում մնացածներին: Վերջիններս նահանջի մի քանի անհաջող փորձերից հետո դադարեցնում են դիմադրության փորձերը և գերի հանձնվում: Գերվում է նաև զորամասի հրամանատարը:

Մարտադաշտից ոչ մեծ հեռավորության վրա՝ Երասխի մյուս ափին կենտրոնացած թուրքական զորամասերը չեն համարձակվում անցնել գետն ու հետ են քաշվում: Դա հայկական զորամասերին ազատում է թևային հարվածի սպառնալիքից, և նրանք եռանդուն հետապնդում են սկսում, որը շարունակվում է գրեթե մինչև Որդվատ: Հետապնդման ընթացքում ևս հակառակորդը մեծաթիվ զոհեր է տալիս:

Մեղրու ճակատամարտը 1720-ական թթ. հայոց ազատագրական շարժման կարևոր հաղթանակներից է: Այն հայոց օպերատիվ արվեստի և բնակավայրում մարտի վարման տպավորիչ օրինակ է, իսկ արտագրոհները մարտավարության փայլուն դրսևորումներ են: Հատկանշական է, որ Մեղրի արշավող ավելի քան 18 հազարանոց զորքը մի քանի օրում գրեթե ամբողջությամբ ոչնչացվում է. բավական է նշել, որ վերջին արտագրոհի ընթացքում հակառակորդը տալիս է 11 հազար զոհ, որը մարտին մասնակցող հայկական զորամասերից գրեթե քառակի ավելի էր:

Այս և համանման այլ հաղթանակների արդյունքում կարող ենք արձանագրել, որ փոխվում էր ուժերի հարաբերակցությունը:

Ամփոփում

Սյունիքում և Արցախում կազմակերպված ազատագրական շարժումը հանգեցրեց հայկական ինքնավար իշխանապետությունների ստեղծմանը: Այդ իրողության հետ հաշվի էին նստում նաև հարևան երկրները: Դրա վկայությունն է պարսկական արքունիքի կողմից Դավիթ Բեկի և նրան հաջորդած Մխիթար Սպարապետի իշխանության ճանաչումը: Հաշվի առնելով թուրքական սպառնալիքը՝ Թահմազ Բ շահն առաջարկում է Դավիթ Բեկին դաշնակցել թուրքական հորդաների դեմ պայքարում: Ձևավորվող հայ-իրանական ռազմաքաղաքական միության ամրապնդման հաջորդ քայլն է դառնում շահի կողմից Դավիթ Բեկին սեփական դրամ հատելու իրավունք շնորհելը: Պատմական այդ ժամանակաշրջանում դա նշանակում էր փաստացի ճանաչել Սյունիքի հայկական իշխանապետության անկախությունը:

ՀԱՅԿԱԿԱՆ «ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ» ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

1799թ. Ա.Սուվորովի գլխավորած ռուսական բանակի հաղթարշավը Եվրոպայում և դրան հաջորդած իրադարձությունները XIXդ. սկզբին մեր տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը փոխեցին հօգուտ Ռուսական կայսրության, որը ձեռնամուխ եղավ Կովկասի լեռներից հարավ ընկած տարածքների նվաճմանը: Այն սկսվեց 1801թ. Ռուսական կայսրությանը Վրաստանի միացումով: 1813թ. Գյուլիստանի պայմանագրով մի շարք տարածքների թվում Ռուսաստանի տիրապետության տակ անցան նաև Հայաստանի հյուսիսարևելյան տարածքները՝ Շիրակը, Արցախը, Լոռին, Ղազախը, Զանգեզուրը:

Պարսից արքունիքն այդպես էլ չհաշտվեց այս կորուստների հետ և Ռուսաստանի դեմ 1826թ. նոր պատերազմ սկսեց, սակայն ոչ միայն հաջողությունների չհասավ, այլև կորցրեց Արաքսի ձախ ափի իր բոլոր տիրույթները՝ ռազմավարական նշանակություն ունեցող Երևանի բերդով (1827թ.):

Երկու պատերազմների ընթացքում (1804-1828թթ.) Հայաստանի արևելյան շրջաններում բավականաչափ ամրացած Ռուսաստանը վճռական ընդհարման դուրս եկավ Օսմանյան կայսրության դեմ: Ռուս-թուրքական հակամարտության այս փուլը տևեց շուրջ կես դար, որի ընթացքում տեղի ունեցան 1828-1829թթ., 1853-55թթ. և 1877-1878թթ. պատերազմները: Ռուսաստանին անցան Բաթումից մինչև Ախուրյանի գետաբերանն ընկած տարածքները:

Ռուսական բանակի հաղթանակների կերտման գործում կարևոր մասնակցություն ունեցան ինչպես հայազգի գեներալները, այնպես էլ հայ կամավորականները:

Տեղեկանք. 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմին մասնակցեցին հայ աշխարհազորային 100 հոգանոց հեծյալ ջոկատը, արցախյան մելիքների հեծյալ ջոկատները, Գրիգոր Մանուչարյանի 500 հոգանոց հեծյալ ջոկատը և Սյունիքի աշխարհազորայինները:

1826-1828թթ. պատերազմում աչքի ընկան պաշարված Շուշիի ավելի քան 1500 հայ պաշտպանները (1826թ.), հակառակորդի հարձակումը մի քանի անգամ հետ մղած Շիրակի Փոքր Ղարաքիլիսա գյուղի մարտիկները, կրկին՝ Մանուչարյանի ջոկատը, Մարտիրոս Վեքիլյանի հեծյալ ջոկատը և այլք: Հայության մեջ մեծ արձագանք գտավ ռուսների երևանյան արշավանքը (1827թ.): Մայիս-օգոստոսին Թիֆլիսում կազմավորվեցին ու արշավանքին մասնակցելու մեկնեցին հայկական 3 գումարտակներ: Դրանց մարտիկների ընդհանուր թիվը սկզբնական 284-ից ճանապարհին աճեց՝ գերազանցելով 1000-ը: Նրանք Օշականի ճակատամարտում, Սարդարապատի և Երևանի ազատագրման ժամանակ և դեպի Ատրպատական կատարված արշավանքներում մշտապես առաջին շարքերում էին:

Կամավորական գումարտակները մասնակցություն ունեցան նաև 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմին: Ընդհանուր առմամբ այս պատերազմին մասնակցեցին արևելահայ 2 հազ. հետևակային (այդ թվում՝ 800 հոգանոց

Հայկական հետևակային գումարտակը) և 800 հեծյալ կամավորներ (ներառյալ 400 հոգանոց Հայկական հեծյալ գունդը): 800 հոգանոց հեծյալ ջոկատ կազմակերպեցին նաև կարսեցիները:

Ռուս-թուրքական հետագա պատերազմներում ևս հայ աշխարհազորայիններն ակտիվ մասնակցություն ունեցան, որոնց մասին կխոսվի համապատասխան ակնարկներում:

Օսմանյան կայսրությունում հայերի և մյուս քրիստոնյա ազգերի նկատմամբ բռնությունների քաղաքականություն էր վարվում: Դրանք աննախադեպ չափերի հասան սուլթան Աբդուլ-Համիդ Բ-ի (1876-1909թթ.) գահակալման առաջին իսկ տարիներից: Ինչպես կայսրության մյուս ծայրամասերում, այնպես էլ Հայաստանում ծավալվեց ֆիդայական (հայդուկային) շարժումը: Ֆիդայական փոքրաթիվ ջոկատներին էր վիճակված պաշտպանել ժողովրդին ինչպես 1894-1896թթ. ջարդերի ժամանակ, այնպես էլ հետագայում: Այդ պայքարի ընթացքում տարած հաղթանակներին են նվիրված այս բաժնի երկրորդ մասի ակնարկները:

Կաթողիկոս Ներսես Աշտարակեցի (1770-1857թթ.)

ՇՈՒՇԻԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(1826Թ. ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)

Եվրոպական խոշոր տերությունների շահերին հակասում էր Ռուսաստանի դիրքերի հետագա ամրապնդումը Կովկասում, իսկ հեռանկարում՝ նաև անխուսափելի առաջխաղացումը դեպի Միջին Արևելք: Արդ, Անգլիայի և Ֆրանսիայի հրահրմամբ նոր զինված առճակատում բռնկվեց Ռուսաստանի և Պարսկաստանի միջև: 1826թ. հուլիսի վերջին գահաժառանգ Աբաս Միրզան, որ նշանակվել էր պարսկական 60 հազարանոց բանակի գլխավոր հրամանատար, խախտելով Գյուլիստանի պայմանագիրը, անցավ սահմանը և ներխուժեց Ռուսական կայսրության տարածք: Սկսվեց 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմը:

Քարտեզ 1


ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1826 Թ. ԱՄՌԱՆԸ
Ռուսական զորքերի տեղաշարժերը
Սևանա լիճ
Գեղարքունիք
Գեղամա լեռներ
Ամասիա
Ղարաբաղ
Նախիջևան
Ալաշկերտ
Բասեն
Սուրմալու
Դարալագյազ
Ղազախ
Ղարաքիլիսա
Ջավախք
Ախալքալաքի գավառ
Ախալցխա
Ախուրյան գետ
Արաքս գետ
Գանձակ
Ելիզավետպոլ
Գանձակ գետ
Ինգիլաղ գետ
Ինգիլաղ
Ինգիլաղ գետի ձախ ափ
Ինգիլաղ գետի աջ ափ

Աբաս Միրզան իր բանակը բաժանեց երկու մասի, որոնցից մեկը՝ Հասան խանի առաջնորդությամբ, շարժվեց Շիրակի ուղղությամբ, իսկ մյուսը՝ գահաժառանգի գլխավորությամբ, ներխուժեց Արցախ և սկսեց առաջանալ դեպի Շուշի (տե՛ս քարտեզ 1): Դեռևս 1826թ. վաղ գարնանը հայ հետախույզներն Արցախում ռուսական զորքերի հրամանատար, գնդապետ Իոսիֆ Ռեուտին պարբերաբար տեղեկացնում էին Պարսկաստանում իրականացվող լայնածավալ զորահավաքի, սահմանամերձ գոտում պարսկական մեծաքանակ զորքերի կուտակման և Արցախի տարածք ներխուժման անթաքույց նախապատրաստությունների մասին: Այդ տեղեկատվությունը Ռեուտն անմիջապես փոխանցում էր Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատար, գեներալ Ն.Մուրավյովին, վերջինս էլ՝ ռուսական բանակի գլխավոր շտաբ: Մինչդեռ այնտեղ այդ տագնապահարույց լուրերն ընդունվում էին թերահավատորեն և պատշաճ արձագանք չէին ստանում: Այս ամենի հետևանքը եղավ այն, որ պատերազմի սկզբին Անդրկովկասում տեղակայված ռուսական ոչ մեծաքանակ զորքերն անպատրաստ էին պարսից բազմահազարանոց բանակին արժանի հակահարված տալու:

Արցախ ներխուժելուց առաջ Աբաս Միրզան քանիցս կոչով դիմեց հայ ազգաբնակչությանը՝ շռայլ խոստումներով հորդորելով առաջիկա պատերազմում աջակցել պարսկական բանակին՝ ընդդեմ ռուսականի: Հակառակ դեպքում սպառնում էր հաշվեհարդար տեսնել նրա հետ: 1826թ. հուլիսի 25-ին Աբաս Միրզան շրջափակեց ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Շուշիի բերդը: Սկսվեց Շուշիի գրեթե հիսնօրյա պաշարումը: Հայ սուրհանդակների տվյալներով՝ Շուշին պաշարած զորքերի ընդհանուր թվաքանակն ավելի քան 50 հազար էր, ինչին, սակայն, գեներալ Երմոլովը խիստ թերահավատորեն էր վերաբերվում՝ համարելով, որ տեղի ազգաբնակչությունն ուռճացնում է հակառակորդի զորքի թվաքանակը:

Մինչդեռ, ինչպես նշում է ռազմական պատմաբան Վ.Պոտտոն, ավելի ուշ պարզվեց, որ հայ սուրհանդակների տեղեկատվությունը լիովին համապատասխանում էր իրականությանը. բացի 40 հազարանոց հետևազորից, պարսկական բանակն ուներ մեծաքանակ անկանոն հեծելազոր, նաև բազմաթիվ առանձին զորաջոկատներ:

Ինչ վերաբերում է ռուսական զորքերին, ապա Արցախում նրանց թիվը պարսից զորքերի համեմատությամբ աննշան էր և անկարող էր պատշաճ դիմադրություն ցույց տալ հակառակորդին:

Տեղեկանք. «Ղարաբաղում այն ժամանակ տեղակայված էր միայն 42-րդ եգերական գունդը, որի մեկ գումարտակը գրեթե ամբողջությամբ գտնվում էր Շիրվանում և Նուխիում: Ընդհանուր առմամբ այն կազմում էր 2700 սվին՝ 6 հրանոթով, հավելյալ՝ 420 կազակները. զորախումբ, որ աննշան էր՝ պարսկական հսկայական բանակի համեմատությամբ»:

Բ.Պոտտո, Կավկազսկայա վոյնա վ օտդելնիխ օչերկախ, էպիզոդախ, լեգենդախ ի բիոգրաֆիյախ, տոմ 3, ս. 68

Վիճակն ավելի ծանրացավ այն բանից հետո, երբ սահմանից դեպի Շուշի նահանջող ռուսական գումարտակներից մեկը՝ շուրջ 1000 զինվոր, ընկավ շրջապատման մեջ և, հավատալով պարսիկների խոստումներին, անձնատուր եղավ ու գլխովին ոչնչացվեց (տե՛ս քարտեզ 1): Ըստ այդմ, բերդի ռուսական կայազորը կազմավորվեց ընդամենը 1700 զինվորներով՝ սպառազինված չորս դաշտային, մեկ բերդային և երկու փոքր հրանոթներով: Ոչ պակաս կարևոր էր նաև այն հանգամանքը, որ բերդը, որպես պաշտպանական կառույց, անմխիթար վիճակում էր:

Հայ ազգաբնակչության մասնակցությունը բերդի պաշտպանությանը

Պաշարելով Շուշին՝ Աբաս Միրզան պահանջեց անհապաղ հանձնել քաղաքը, այլապես սպառնաց գրավել ու հիմնահատակ ավերել այն, իսկ բնակչությանը՝ սրի քաշել: Քաղաքի հայ բնակիչները և փոքրաթիվ ռուսական կայազորը՝ գնդապետ Ռեուտի գլխավորությամբ, չնայած Աբաս Միրզայի սպառնալիքներին, կտրականապես հրաժարվեցին հանձնել քաղաքը՝ վճռելով պաշտպանել այն, մինչև ռուսական բանակի հիմնական ուժերն օգնության կհասնեին: Գրեթե երկու ամիս ռուսական կայազորը հայ ազգաբնակչության օժանդակությամբ արիաբար դիմացավ պաշարմանը՝ բազմիցս հետ մղելով հակառակորդի հուժկու գրոհները:

Հայ բնակիչներից շատերը՝ շրջակա 22 գյուղերի ավելի քան 1500 հայ գյուղացիներ, համալրել էին կայազորի շարքերը և անձնվիրաբար մարտնչում էին ամրոցի պարիսպների վրա:

> **Տեղեկանք.** Գնդապետ Ռեուտի զեկուցագրից գեներալ Երմոլովին. «Բերդը պաշտպանող հայերի վերաբերյալ իմ պարտքն եմ համարում բացատրել, որ նրանց ծառայությունն արժանի է ուշադրության, որովհետև նրանք բոլորն էլ գործում էին գերազանց քաջությամբ, դիմացան հակառակորդի բազմաթիվ գրոհներին և հետ շպրտեցին նրանց՝ խոշոր կորուստներով, արհամարհում էին պարենի պակասը և երբեք չեն խորհել բերդը հանձնելու մասին, նույնիսկ, երբ վրա հասավ կատարյալ սովը»:
>
> ***Վ.Պոտտո, Ղարաբաղի առաջին կամավորները, էջ 48-49***

Պատահական չէ, որ Ռեուտը բերդապարսպի առանձին հատվածների պաշտպանության ղեկավարումը վստահում էր հայերին: Այսպես, Ելիզավետպոլի դարպասների հարակից տեղամասի պաշտպանությունը ղեկավարում էր քաղաքի անվանի հայերից մեկը՝ Աղաբեկ Քալանթարովը՝ Հովհաննես Լազարևի, հետագայում ռուսական բանակի հայազգի փառապանծ գեներալի, 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հերոսի պապը:

Հայ ազգաբնակչությունն ամեն կերպ աջակցում էր քաղաքի պաշտպաններին: Նրանցից մեկը՝ Հարություն Ալթունյանը (Արութին Ալթունովը), գնդապետ Ռեուտի հանձնարարությամբ, հնարամտորեն անցնելով պարսից զորաբանակի շարքերի միջով՝ Կովկասյան կորպուսի հրամանատար, գեներալ Երմոլովին հասցրեց Ռեուտի գրությունները՝ արտաքին աշխարհից իսպառ կտրված բերդում տիրող իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությամբ և անհապաղ օգնության խնդրանքով: Ապա նույն ճանապարհով Ալթունյանը վերադարձավ քաղաք՝ բերելով Երմոլովի հուսադրող պատասխանը: Այս սխրանքի համար Ալթունյանը պարգևատրվեց Սուրբ Գեորգիի շքանշանով:

Կատաղի գրոհներով չկարողանալով ճնշել փոքրաքանակ կայազորի և հայ աշխարհազորայինների դիմադրությունը և գրավել պաշարված բերդը՝ Աբաս Միրզան վճռեց երկարատև պաշարման միջոցով սովամահ անել պաշարվածներին և այդպես հարկադրել անձնատուր լինել: Ծանր իրավիճակը փոքր-ինչ մեղմելու համար հայ ազգաբնակչությունը՝ թե՛ ունևոր և թե՛ հասարակ շինական, բոլորը մեկ մարդու նման իրենց ունեցած ամբողջ հացահատիկը, անասունները, պարենի մյուս պաշարները տրամադրեցին բերդի պաշտպանության սուրբ գործին:

Տեղեկանք. Գեներալ Հ.Լազարևի հուշերից. «Հիշում եմ, թե ինչպես բերդում ապաստանած գյուղացիներն իրենց բոլոր անասունները տվեցին կայազորին... թե ինչպես մեր հարուստները՝ Հախումյանը, Մելիք-Շահնազարյանը, Զոհրապ աղա Թառումյանը և ուրիշներ, ընդհանուր օգտագործման հանձնեցին իրենց հացի բոլոր պաշարները... Հիշում եմ նաև, թե ինչպես մեր հայերը հացահատիկի ծանր պարկերը գիշերներն իրենց ուսերի վրա տանում էին Շուշի գյուղի ջրաղացները, որտեղ յուզբաշի եղբայրներ Սաֆար և Ռոստոմ Թարխանյաններն արագ աղում էին հացահատիկն ու հետ ուղարկում բերդ»:

Վ.Պոտտո, Ղարաբաղի առաջին կամավորները, էջ 50

Բարեբախտաբար, պաշարման ողջ ընթացքում բերդի և Շուշի գյուղի հաղորդակցությունը չընդհատվեց. ջրաղացներն ամեն գիշեր գործում էին անխափան և հաց մատակարարում բերդի պաշտպաններին:

Տեղեկանք. «Աբաս Միրզան բազմիցս փորձեց գրավել գյուղը, սակայն նրա բոլոր ջանքերը փշրվեցին՝ բախվելով հայերի անսասանությանը և լեռների անմատչելիությանը: Բնակիչները Սաֆար և Ռոստոմ Թարխանյանների գլխավորությամբ ոչ միայն դիմադրում էին հակառակորդին, այլև ժամանակ առ ժամանակ իրենք էին իջնում լեռներից և անհանգստացնում պարսկական բանակին՝ իրենց հարձակումներով»:

Բ.Պոտտո, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, том 3, с. 81

Ի դեպ, նույն այդ Թարխանյան եղբայրները, որ պարսկական բանակում հավատարիմ մարդիկ ունեին, Ռեուտին նախապես տեղեկացնում էին պարսիկների հերթական գրոհի ստույգ ժամանակի և ուղղության մասին:

Բացի պարենամթերքից, հայ ազգաբնակչությունը կայազորին տրամադրեց իր ունեցած զինամթերքի պաշարը: Ավելին, Շուշիի հայ արհեստավորները զենք, զինամթերք, անգամ վառոդ էին պատրաստում պաշտպանների համար:

XIX դարի պատերազմներում կիրառվող կայծքարե կողպեքով հրացանների կողպեքների (փակաղակների) հիմնական տեսակները



Անվավոր կողպեքն առավել պարզունակն էր, վերալիցքավորումը պահանջում էր հմտություն, արագաձգությունը ևս փոքր էր, որի պատճառով այս կողպեքներով հրացաններով զինվում էին կայազորային զորամասերը: Սակայն այն առավել հուսալին էր, և հրաձգության ընթացքում խափանումները հազվադեպ էին:



Հարվածային գործողության կողպեքներն անհամեմատ ավելի արագաձիգ էին, սակայն, ինչպես երևում է նկարում, կողպեքը «բաց» էր, և անձրևոտ եղանակին խոնավացող կայծքարն ու վառոդը կրակի հաճախակի խափանումների պատճառ էին դառնում:



Հարվածային գործողության կողպեքների կատարելագործման ուշագրավ փորձ է հրացանների համալրումը պարկուճներով (հրացանի կողքին ցույց են տրված պարկուճներ): Պատրաստի պարկուճների կիրառումն էլ ավելի արագացրեց լիցքավորումը:

Տեղեկանք. Գեներալ Հ.Լազարևի հուշերից. «Ես հիշում եմ, որ բերդում վառոդ չկար, և բարութչի Պողոսը զորքերի համար օրական 20-25 փութ վառոդ էր պատրաստում անվարձահատույց»:

Վ.Պոտտո, Ղարաբաղի առաջին կամավորները, Երևան, 1974, էջ 50-51

Պաշտպանության հաղթական ավարտը

Շուշի բերդի պաշարումը շարունակվեց մինչև սեպտեմբերի սկիզբը, երբ լուր ստացվեց հայազգի գեներալ Մադաթովի կողմից Շամքորում պարսկական զորաջոկատի ջախջախման և ռուսական զորքերի՝ Ելիզավետպոլ ներխուժման մասին:

> **Տեղեկանք.** «Ուշ հասկացավ Աբաս Միրզան, թե Շուշի բերդի առջև կանգնած մնալով՝ ինքը որքան ժամանակ անտեղի վատնեց և վերացնելով պաշարումը՝ ողջ ուժով շարժվեց իշխան Մադաթովի դեմ»:
>
> ***В.Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, том 3, с. 81***

Ռազմավարական տեսակետից Շուշիի պաշտպանությունը կարևոր էր նաև նրանով, որ իր վրա բևեռեց հակառակորդի հարձակվող բանակի գլխավոր ուժերը, ինչը ռուսական հրամանատարությանը հնարավորություն տվեց ժամանակ շահել և լրացուցիչ ուժեր կենտրոնացնել պարսկական բանակի դեմ հարձակողական գործողություններ ծավալելու համար:

ՇԱՄՔՈՐԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ
(1826Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3)

Պարսից բանակի առաջխաղացումը

Թեև ռուսական կայազորի և հայ ազգաբնակչության հերոսական պաշտպանությունը պարսկական բանակի հիմնական մասին գամել էր Շուշիի պարիսպներին, սակայն պարսկական 12 հազարանոց զորախումբը՝ Աբաս Միրզայի որդու՝ Մեհմեդ Միրզայի գլխավորությամբ, առանց խոչընդոտի հանդիպելու շարժվեց առաջ և հեշտությամբ գրավեց Ելիզավետպոլը (Գանձակը) (տե՛ս քարտեզ 1): Դեպի Թիֆլիս ճանապարհը բաց էր… Պարսից բանակի առաջխաղացումը կասեցնելու համար հապշտապ կազմավորվեց առաջապահ զորաջոկատ: Կովկասի կառավարիչ Երմոլովն այդ զորաջոկատի հրամանատար նշանակեց իր վաղեմի զինակցին՝ գեներալ Մադաթովին: Այսպիսով, 19-րդ դարի առաջին կեսի ռուսական բանակի հայազգի ականավոր զորավար Վալերիան (Ռոստոմ) Մադաթովին էր վիճակված պարսից զորքերից ազատագրել իր ծննդավայրը՝ Արցախը (գեներալը ծագումով Արցախի Ավետարանոց գյուղից էր):

Զինվորները մեծ գոհունակությամբ ընդունեցին Մադաթովի նշանակման լուրը, քանզի նա վայելում էր իր զինվորների խորին հարգանքն ու սերը: Բնությունը նրան օժտել էր այն ամենով, ինչն անհրաժեշտ էր մեծ զորավար դառնալու համար. սթափ դատողություն և սառնասրտություն, անսասան կամք, վճռականություն և անգամ ֆիզիկական հզոր ուժ: Բնատուր դիտողականությունը մեծապես օգնում էր Մադաթովին մարտի ընթացքում ճիշտ դիրք ընտրել, հուսալի պաշտպանություն ստեղծել, նաև երբեք չսխալվել ուժերի հարաբերակցությունը կամ հարվածի ուղղությունը որոշելիս: Նա որոշումները կայացնում էր արագ և ոչ պակաս արագությամբ իրականացնում դրանք, գործում սրընթաց ու վճռական: Իսկ նրա աներևակայելի քաջության մասին լեգենդներ էին հյուսվել:

Ճակատամարտը
Գեներալ Մադաթովի զորաջոկատի առաջխաղացումը

Գեներալ Մադաթովը, ռուսական 2000-անոց առաջապահ ջոկատի գլուխ անցած, ուղղվեց դեպի Բորչալու: Նրա զորաջոկատին միացան հայ աշխարհազորային ջոկատները՝ Գալուստ Մանուչարյանի, Ասրի Բահաթրյանի և այլոց գլխավորությամբ: Գլխավոր հրամանատար Մուրավյովը գեներալի առջև խնդիր էր դրել պաշտպանական դիրքեր գրավել Խրամ գետի երկայնքով և ամեն կերպ կասեցնել պարսկական զորքերի առաջխաղացումը դեպի Թիֆլիս: Իսկ ինչ վերաբերում է ռուսական զորքերի հարձակողական գործողություններին, ապա դրանք պետք է սկսվեին հիմնական ուժերի տեղ հասնելուց հետո միայն: Այնինչ հայազգի գեներալը, որին կոմս Դիբիչը «ռուսական Մյուրատ» է անվանել, մարտավարության հարցում միանգամայն այլ մտահղացումներ ուներ:

Արագորեն առաջանալով Ղազախի ուղղությամբ՝ Մադաթովը տեղի հայերից իմացավ, որ հակառակորդի մի խոշոր ջոկատ, որ դարանակալել էր Շամքորի լեռներում, պատրաստվում է անակնկալ հարձակում գործել իր զորաջոկատի վրա: Գեներալն առանց հապաղելու նախահարձակ լինելով՝ ցրիվ տվեց հակառակորդի ջոկատը (տե՛ս Սխ. 1.): Այս առաջին ընդհարումը պարսկական զորքերի հետ վկայում է, որ հայազգի գեներալը վճռականորեն է տրամադրված և

Սխեմա 1



ԴԱՐԱՆԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ ՇԱՄՔՈՐԻ (ՇԱՄԽՈՐ) ՄԱՏՈՒՅՑՆԵՐՈՒՄ 1826Թ.

բնավ մտադրություն չունի սահմանափակվելու պաշտպանական գործողություններով: Ամրացնելով թիկունքը՝ սեպտեմբերի սկզբին նա իր ջոկատով առաջացավ դեպի Շամքոր:

Շամքորի մերձակայքում՝ գետի աջ ափին, թշնամու հնգապատիկ ավելի զորքն Աբաս Միրզայի որդու՝ Մեհմեդ Միրզայի և Ամիրխան Սարդարի գլխավորությամբ, ամուր պաշտպանություն էր ստեղծել և իրեն լիովին ապահով էր զգում՝ սպասելով Շուշիի անկմանը և Աբաս Միրզայի բանակի հիմնական ուժերի առաջխաղացմանը, որպեսզի միասնաբար արշավեն դեպի Թիֆլիս:

Գեներալ-լեյտենանտ Վալերիան (Ռոստոմ) Գրիգորի Մադաթով (1782-1829թթ.)

Տեղեկանք. «Կազմելով երկու վերստ ձգվող ամուր պաշտպանական գիծ՝ ճակատով դեպի գետը, պարսիկները շարվել էին աղեղնաձև՝ կիսալուսնի նման, այնպես, որ կարող էին խաչաձև գնդակոծության ենթարկել այն միակ ճանապարհը, որով պետք է մոտենար ռուսական հետևակը»:

В.Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, том 3, стр. 142

Այսուհանդերձ, հակառակորդի թե՛ թվական գերազանցությունը և թե՛ անխոցելի թվացող պաշտպանական գիծն անկարող էին Մադաթովին հետ պահել իր նախասիրած մարտավարությունը կիրառելուց, այն է՝ նախահարձակ լինելով՝ չեզոքացնել թշնամու քանակական գերակշռությունը և շեշտակի հարված հասցնելով՝ վճռել ճակատամարտի ելքը:

Առաջին փուլ. նախահարձակ գործողություններ

Սեպտեմբերի 3-ի լուսաբացին, իր հետևազորը դասավորելով երեք ոչ մեծ զորասյուներով, գեներալ Մադաթովը գրոհի հրաման արձակեց: Ի պատասխան ռուսական զորքի առաջխաղացման՝ հակառակորդը դիմահար հուժկու կրակ բացեց, ինչը, սակայն, չսասանեց գեներալի նախահարձակ լինելու վճռականությունը: Նա, սովորականի նման անդրդվելի և վճռական, հեծավ իր ղարաբաղյան ոսկեգույն նժույգը և անձամբ զորաջոկատն առաջնորդեց գրոհի (տե՛ս Սխ. 2):

Տեղեկանք. Այս ճակատամարտում էլ նա, արհամարհելով թշնամու դիմահար հուժկու կրակը, նետվեց առաջ: Նրան փորձեցին հետ պահել՝ ասելով. «Ձեզ նկատել են, Ձերդ բարեծնություն, Ձեզ վրա են նշան բռնում», սակայն նա անվրդով պատասխանեց. «Ավելի լավ, որ ինձ տեսնում են. ավելի շուտ կփախչեն»:

Жизнь генерал-лейтенанта князя Мадатова, с. 114

Սխեմա 2



ՇԱՄՔՈՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1826Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3

Թմբուկների խլացուցիչ հարվածների ներքո ռուսական հետևազորը զառիթափով իջավ գետափ, ծանծաղուտով գետանցում կատարեց և արհամարհելով դիմահար մահասփյուռ կրակը՝ սկսեց շարժվել դեպի բարձունքի վրա դիրքավորված հակառակորդը: Եվ այստեղ լսվեց Մադաթովի խրոխտ հրամանը՝ «Առա՜ջ, գրոհի՜»: Միահամուռ «ուռայով» արձագանքելով հրամանատարի մարտակոչին՝ ռուսական հետևազորն անկասելի հարվածով ճեղքեց հակառակորդի պաշտպանական գիծը: Մինչև ճակատամարտի ավարտը Մադաթովը մնաց առաջին գծում և անձնական օրինակով, ազդու խոսքով, իսկ երբեմն՝ կատակներով ոգևորում ու առաջ էր մղում իր զինվորներին:

Երկրորդ փուլ. Մարտավարական հնարք

Մարտը հետզհետե բորբոքվում էր. թվական գերակշռության շնորհիվ հակառակորդին դեռևս հաջողվում էր դիմակայել Մադաթովի ջոկատի գրոհներին: Եվ այստեղ նա որոշեց կիրառել ռազմական խորամանկության հնարքներից մեկը, որը և վերջնականապես վճռեց ճակատամարտի ելքը (տե՛ս Սխ. 3):

> **Տեղեկանք.** «Իր զորքերի նվազ քանակը թաքցնելու և պարսիկներին ներշնչելու համար, որ մարտադաշտում ռուսական գլխավոր ուժերի սոսկ առաջապահ ջոկատն է, Մադաթովը դիմեց հետևյալ խորամանկության. մարտի ժամանակ գրոհող զորասյուների հետևում սկսեց տեղաշարժվել գումակը, որի բարձրացրած փոշին իրոք պարսիկների կողմից ընկալվեց իբրև հզոր պահեստային ուժերի առաջխաղացում»:
>
> ***Военная энциклопедия, т. 15, с. 103***

Սխեմա 3



ՇԱՄՔՈՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1826Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3

Մադաթովի մտահղացումը պսակվեց լիակատար հաջողությամբ. խուճապի մատնված պարսիկները սկսեցին անկանոն նահանջել. ինչը շուտով վերածվեց փախուստի: Առաջինը մարտադաշտից ճողոպրեց Մեհմեդ Միրզան՝ լքելով շահի ընտրյալ ջոկատը՝ գվարդիան, որը գլխովին ջախջախվեց: Իսկ ընդհանուր առմամբ թշնամու կորուստները հասան շուրջ 2000-ի, այդ թվում նաև հրամանատարը՝ Ամիրխան Սարդարը: Ռուսական զորքերը տիրացան նաև ռազմավարի՝ մի քանի հրանոթ, շուրջ 2000 հրացան, մեծ քանակությամբ զինամթերք և պարեն:

Այսպիսով, Շամքորի ճակատամարտում Մադաթովի գլխավորած զորաջոկատը, սրընթաց ճակատային գրոհի շնորհիվ, որն ուղեկցվեց մարտավարական խորամանկ հնարքով, ջախջախեց թվաքանակով իրեն գերազանցող թշնամուն: Այս փայլուն հաղթանակի համար հայազգի զորավարը պարգևատրվեց ադամանդակուռ սրով՝ «Քաջության համար» մակագրությամբ: Շքանշանների և պարգևների արժանացան նաև ճակատամարտում աչքի ընկած բազմաթիվ այլ հայեր:

ԳԱՆՁԱԿԻ (ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼ) ՁԱԿԱՏԱՄԱՐՏԸ

(1826Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13)

Իրավիճակը Շամքորի հաղթանակից հետո

Հաղթական ճակատամարտից հետո Մադաթովի ջոկատն առաջացավ դեպի Ելիզավետպոլ (Գանձակ), որի պարսկական կայազորը (շուրջ 1500 զինվոր), Շամքորի ջախջախիչ պարտությունից ահաբեկված, հրամանատարի՝ Նազար Ալի խանի գլխավորությամբ, իսկույն լքեց քաղաքը և ճողոպրեց Աբաս Միրզայի մոտ: Վերջինիս, ի դեպ, Մադաթովի հաղթական առաջխաղացումը հարկադրեց դադարեցնել Շուշիի պաշարումը և շարժվել ռուսական զորքերի դեմ: Նրան միացան Շամքորի զորաջոկատի մնացորդները, Ալայար խանի զորախումբը և այլ ուժեր (տե՛ս քարտեզ 1):

Սեպտեմբերի 11-ին Ելիզավետպոլ ժամանեց գեներալ Երմոլովի փոխարեն Կովկասում ռուսական զորքերի նոր հրամանատար նշանակված գեներալ-համիարզ Իվան Պասկևիչը: Տեսնելով, որ ընդամենը 8000 ռուս զինվորներին դեմ-հանդիման կանգնած է պարսկական 35 հազարանոց բանակը, Պասկևիչը վճռեց ամեն գնով խուսափել ընդհարումից և նահանջի հրաման տվեց: Այս կարգադրությունը հղի էր ծանր հետևանքներով, քանզի օգտվելով ռուսական զորքերի նահանջից՝ պարսկական բանակը կարող էր անարգել առաջանալ մինչև Թիֆլիս: Սա հրաշալի ըմբռնում էր գեներալ Մադաթովը, որին, բարեբախտաբար, հաջողվեց Պասկևիչին հետ պահել այդ անհեռատես քայլից:

Քարտեզ 1

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1826 Թ. ԱՇՆԱՆԸ

Տեղեկանք. «Գեներալ-համհարզ Պասկևիչը վճռեց ճակատամարտ տալ իշխան Մադաթովի համառ պնդումներից հետո, որը լավ էր ճանաչում այն թշնամուն, որի հետ հարկ էր գործ ունենալ: Հայտնի էր, որ ասիական ժողովուրդների դեմ մարտերում գերազանցությունը ստեղծվում է ոչ թե զորքերի թվաքանակի, այլ վճռական գրոհի և արիության շնորհիվ, որ թշնամուն անգամ մեկ քայլ զիջելով՝ ոգեշնչում և խիզախություն ես հաղորդում նրան, իսկ նրա նաև թվական գերակշռության դեպքում՝ ինքդ քեզ դատապարտում ես պարտության»:

Жизнь генерал-лейтенанта князя Мадатова, с. 119

Գեներալ-ֆելդմարշալ
Իվան Ֆեոդորի Պասկևիչ (1782-1856թթ.)

Առաջին փուլ. հակառակորդի հարձակումը

Ճակատամարտի նախորդ՝ սեպտեմբերի 13-ի գիշերը Մադաթովին ներկայացան երկու հայեր, ովքեր ծառայում էին Աբաս Միրզայի մոտ: Նրանք հայտնեցին, որ հակառակորդի զորամասերը դուրս են եկել Ճամբարից և մթության քողի տակ շարժվում են առաջ՝ լուսադեմին հարձակման անցնելու համար: Առավոտյան պարսկական բանակը, ինչպես Շամքորի ճակատամարտի ժամանակ, դասավորվելով կիսաշրջանաձև, կեսօրին, բոլոր դրոշները պարզած, խլացուցիչ թմբկահարության ներքո սկսեց առաջանալ դեպի ռուսական զորքերը (տե՛ս Սխ. 1): Օգտվելով թվական գերակշռությունից՝ պարսկական զորքերը փորձում էին թևերից շրջանցել և շրջապատել ռուսական զորախումբը: Սակայն կտրտված տեղանքը, ապա և ռուսական հրետանու դիմահար հուժկու կրակը կասեցրեց գրոհը՝ խախտելով հակառակորդի շարքերի դասավորությունը:

Սխեմա 1



ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ 1826Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13

Երկրորդ փուլ. ռուսական զորքերի հակահարձակումը

Գեներալ Մադաթովը, որ գլխավորում էր ռուսական զորքերի առաջապահ ջոկատը, թույլ տվեց, որ հակառակորդն անկանոն շարքերով առաջանա՝ սառնասրտորեն սպասելով վերջինիս մերձենալուն և զսպելով իր զինվորներին. «Թույլ տվեք մոտենան. այդ դեպքում փախչելը կդժվարանա»: Բավականաչափ մոտենալով՝ հակառակորդը կրակ բացեց, սակայն Մադաթովը հրամայեց առայժմ չպատասխանել կրակին: Եվ միայն այն ժամանակ, երբ հակառակորդի հեռավորությունն ընդամենը 100 քայլ էր, նրա առաջապահ ջոկատը սրընթաց մխրճվեց հակառակորդի շարքերի մեջ և հուժկու հարվածով ճեղքեց նրա կենտրոնը: Փոքրաթիվ ջոկատի այս հանդուգն քայլից անակնկալի գալով՝ հակառակորդն ընկրկեց: Թույլ չտալով նրան ուշքի գալ առաջին հարվածից՝ հարձակման անցան նաև ռուսական մյուս զորաջոկատները (տե՛ս Սխ. 1):

Չդիմանալով ռուսական զորքերի հզոր ճնշմանը՝ թշնամին լքեց մարտադաշտը և սկսեց անկանոն նահանջել: Ռուսական զորքերը Մադաթովի գլխավորությամբ սկսեց կրնկակոխ հետապնդել նահանջող պարսից զորքերին:

Տեղեկանք. «Առաջին գծի հրամանատար, քաջարի իշխան Մադաթովը, մերկացնելով սուրը, գոչեց՝ ուռա՜: Սա ազդանշան եղավ ռուսական ողջ կորպուսի հարձակման համար. սրընթաց հարվածով թշնամու կենտրոնը ճեղքվեց, և ողջ պարսկական բանակը խուճապահար նահանջեց դեպի Կուրակչայ գետը, որտեղից մի քանի ժամ առաջ եկել էր կտրոր-կտոր անելու մեր մի բուռ զորքերին»:

Генерал-лейтенант Клюки фон Клугенау,
Очерк военных событий на Кавказе 1818-1850гг., с. 499

Մարտադաշտից հնարավորինս արագ ճողոպրելու համար Աբաս Միրզան հետևազորայիններին հրամայեց նստել հեծյալների ձիերին: Բայց այս հուսահատական քայլն էլ չփրկեց պարսկական բանակը գրեթե լիակատար կործանումից: Բավական է ասել, որ միայն Մադաթովի ջոկատը շրջապատեց և գերի վերցրեց ավելի քան 1000 հոգու:

Տեղեկանք. «Սեպտեմբերի 15-ին ինքը՝ Աբաս Միրզան, իսկ 17-ին իր ջախջախված բանակը գետանցեցին Արաքսը. 18-ին արդեն թշնամու ոչ մի զինվոր չէր մնացել Ղարաբաղում: Աբաս Միրզան մի փոքր խմբով շտապեց Թավրիզ, իսկ պարսկական զորքերը սփռվեցին ռուսական տիրույթներին հարակից տարածքներում...

Жизнь генерал-лейтенанта князя Мадатова, с. 125

Տեղեկանք. «Ելիզավետպոլը Շամխորի (Շամքորի) հետևանքն էր: Շամխորը սասանեց պարսիկների բարոյական ուժը, և կասկած չկա, որ Աբաս Միրզան կորցրեց վստահությունը թե՛ իր և թե՛ իր բանակի նկատմամբ՝ տեսնելով Մադաթովին Ելիզավետպոլի պատերի մոտ»:

В.Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, том 3, с. 172

Այս փայլուն հաղթանակից Պասկևիչն այնքան էր ոգևորվել, որ, չնայած Երմոլովի մերձավորների նկատմամբ ունեցած անբարյացակամ վերաբերմունքին, չկարողացավ թաքցնել հիացմունքը և ողջագուրվելով՝ շնորհակալություն հայտնեց Մադաթովին: Վերջինս իր սխրանքի համար արժանացավ գեներալ-լեյտենանտի կոչման և երկրորդ ադամանդակուռ սրին՝ «Արիության համար» մակագրությամբ:

Շամքորի և Ելիզավետպոլի հաղթանակների արդյունքը

Արցախն ամբողջությամբ ազատագրվեց պարսկական զորքերից, իսկ գեներալ Մադաթովը դեկտեմբերին իր ջոկատով անցավ Արաքսը՝ սահմանամերձ տարածքները պարբերաբար ասպատակող պարսկական հրոսակախմբերը ոչնչացնելու և սահմանի պաշտպանությունն ամրապնդելու համար: Կատարելով առաջադրանքը՝ նա նաև գերությունից ազատեց բազմաթիվ հայ ընտանիքների: Շամքորի և Գանձակի (Ելիզավետպոլ) հաղթանակները հող նախապատրաստեցին ռազմական հետագա հաջողությունների համար (տե՛ս քարտեզ 2):

Քարտեզ 2

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ



1828-1829ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱԽԱԼՑԽԱՅԻ ԱՄՐՈՑԻ ԳՐԱՎՈՒՄԸ

(1828Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 15)

1828թ. ապրիլի 14-ին սկսվեց 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմը: Կովկասյան ճակատում գործող ռուսական զորքերի հրամանատարն էր Կովկասի նոր կառավարչապետը՝ կոմս Իվան Պասկևիչը, որը հայ իրականության մեջ առավել հայտնի է նրանով, որ ստորագրել է Թուրքմենչայի նշանավոր պայմանագիրը, որով վավերացվեց Արևելյան Հայաստանի միացումը Ռուսական կայսրությանը: Ռուսական բանակն առաջիկա պատերազմին նախապատրաստելու ընթացքում Պասկևիչը սպայական կազմը համալրելիս հրավիրեց նաև գեներալ Բարսեղ Բեհբութովին, որը խիզախության, նաև ռազմական ու կազմակերպչական բացառիկ ունակությունների շնորհիվ մեծ հեղինակություն էր վայելում Կովկասում տեղակայված ռուսական զորքերի շրջանում:

Հայոց աշխարհազորը

Այս պատերազմին մասնակցեցին նաև բազմաթիվ հայ կամավորներ Հայաստանի թե՛ արևելյան և թե՛ արևմտյան հատվածներից՝ հուսալով, որ վերջապես իրականություն կդառնա հայության նպատակը՝ պատմական հայրենիքի երկու տարբաժանված հատվածների ազատագրումն ու միավորումը: Հայերի ռազմական, նյութական և բարոյական աջակցությունը մեծապես նպաստեց այս պատերազմում ռուսական զորքերի հաղթանակին: Հայաստանի տարբեր մարզերում կազմավորվեցին հետևակ և հեծյալ կամավորական ջոկատներ:

Գեներալ-լեյտենանտ
Բարսեղ Հովսեփի Բեհբութով
(1791-1858թթ.)

Տեղեկանք. «Երբ 1828թ. սկսվեցավ Օսմանյան պատերազմը, Արարատյան աշխարհի հայք տվին մոտ 2000 հետևակ զորք Սարբազ անունով և մոտ 800 հոգուց բաղկացած հեծելագունդ, որոնք այնուհետև անբաժան էին ռուսաց առաջ ընթացող բանակից… Նոքա ծածկած ունեին կարմիր գլխարկներ, հագած ուլան անվանյալ հեծելազորքի տեսակ կանաչագույն ու կապտագույն մահուդի համազգեստներ, սպիտակ լայն ցծունկն վարտիքներով, դեղնագույն կաշիե կոճկավոր և սրածայր կոշիկներով»:

Ա.Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, էջ 453

Եվրոպական բանակներում հրազենի լայն տարածումից հետո սառը զենքով զինված միակ զորատեսակն ուլաններն էին, որոնք բռնեցին ժամանակի քննությունը: Նրանք ունենում էին մեկ, հազվադեպ՝ երկու ատրճանակ, որոնցով մարտի սկզբում՝ նախքան հակառակորդի մարտակարգի առաջին զինվորներին հասնելը, կրակում էին[1]:

Անվավոր կողպեքով ատրճանակ. XVIIIդ.: Այսպիսի ատրճանակներով զինված ուլանները նախքան մերձամարտի մտնելը շարքից դուրս էին բերում հակառակորդի առջևի գծում կանգնած մարտիկներին, ապա սառը զենքով (երկար նիզակ, հազվադեպ՝ թուր) սկսում «հիմնական» մարտը:

[1] Ատրճանակի լիցքավորումը երկարատև էր, որի պատճառով մարտիկները չէին էլ փորձում ատրճանակները վերալիցքավորել:

ԱԽԱԼՑԽԱՅԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Առաջին փուլ

Կոմս Պասկևիչի գլխավորած ռուսական 25 հազարանոց բանակը, թեև թվաքանակով կրկնակի զիջում էր թուրքական բանակին, այսուհանդերձ, նախահարձակ եղավ և պատերազմի առաջին իսկ ամիսներին, մի քանի հաջող գործողությունների շնորհիվ, զգալիորեն խորացավ Օսմանյան կայսրության տարածքում: Հունիսին ռուսական զորքերը պաշարեցին Կարսի ամրոցը: Երբ ռուսական զորքերը մոտեցան Կարսին, տեղի հայերը կազմավորեցին երկու կամավորական դրուժինա (ջոկատ)՝ հեծյալ և հետևակ, որոնք միացան ռուսական բանակին և մասնակցեցին Կարսի գրոհներին: Հնգօրյա կատաղի կռիվներից հետո, հունիսի 25-ին, ռուսական զորքերը գրավեցին Կարսը: Շուտով գրավվեց նաև հայաբնակ մյուս բերդաքաղաքը՝ Ախալքալաքը (տե՛ս քարտեզ 1):

Գեներալ-մայոր Բարսեղ Բեհբութովը պատերազմի սկզբում ռուսական զորաջոկատներից մեկի հրամանատարն էր, որը գործում էր Ախալցխայի փաշայության տարածք ներխուժած զորախմբի կազմում: Օգոստոսի սկզբին այդ զորախումբն Ախալքալաքից արագ զորաշարժ կատարելով՝ պաշարեց Ախալցխայի ամրոցը: Ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այս ամրոցն իր դիրքով և բնական պայմաններով արդեն իսկ անառիկ էր, այսուհանդերձ, նրա պաշտպանունակությունն առավել ուժեղացվել էր մի շարք համալիր կառույցներով:

> **Տեղեկանք.** «Ամրոցը եռահարկ պաշտպանական կառույց էր. առաջինը քաղաքային ցցապատնեշն էր՝ իր աշտարակներով, երկրորդը՝ բերդապարիսպները և ամենավերևում՝ միջնաբերդը: Գրոհողների համար բնավ դյուրին չէր լինելու բարձրանալ այդ երեք աստիճաններով՝ միջնաբերդի վրայից թուրքական դրոշն իջեցնելու համար: Սա հիանալի հասկանում էին նաև իրենք՝ թուրքերը. «Նախ պետք է լուսինը ցած բերել երկնքից, հետո միայն՝ կիսալուսինը (դրոշը՝ կիսալուսնի նկարով) Ախալցխայի բերդի վրայից»:
>
> ***В.Потто, Кавказская война, т. 4, Турецкая война 1828-1829гг., с. 112***

Ուշագրավ է, որ ամրոցի պաշտպանունակությունն առավել ամրապնդելու համար թուրքերը ստիպողաբար զինել էին նաև քաղաքաբնակ հայերին, որոնցից շատերը, սակայն, լքելով իրենց դիրքերը, միացան ռուսական զորքին և մասնակցեցին քաղաքի գրավմանը:

Քարտեզ 1


ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ
Ռուսական գործողությունները 1828թ.
Սև ծով
Բաթում
Գոնիա գետ
Սարիգամիշ
Բայազետ
Դիադին
Կարս
Սարիգամիշ
Սարիգամիշ
Ալաշկերտ
Բասեն
Մեղրի
Ալաշկերտ
Դարանալագյազ
Դարանալագյազ
Ալաշկերտ
Ալաշկերտ
Ալաշկերտ

Երկրորդ փուլ

Օգոստոսի 9-ին ռուսական զորքերը կարևոր հաղթանակ տարան՝ ջախջախելով ամրոցի կայազորին օգնության եկած թուրքական կորպուսը՝ Քյոսա Մահմեդ փաշայի գլխավորությամբ (տե՛ս քարտեզ 1): Այսպիսով, ուժերի հարաբերակցությունը փոխվեց հօգուտ ռուսական զորքերի, որոնք և պատրաստվեցին վճռական գրոհի: Գրոհը սկսելուց առաջ Պասկևիչն իր բանագնացի՝ շտաբս-կապիտան Ղորղանյանի միջոցով թշնամուն կրկին առաջարկեց զենքը վայր դնել և առանց կռվի հանձնել ամրոցը, սակայն թուրք հրամանատարն ամբարտավան տոնով մերժեց ռուս զորավարի այս առաջարկը:

Օգոստոսի 15-ի առավոտյան սկսվեց ամրոցի ընդհանուր գրոհը: Առաջապահ զորամասերի շարքում իր ջոկատը գրոհի տարավ նաև գեներալ Բեհբութովը: Գրոհի ողջ ընթացքում նա ոչ միայն ղեկավարում էր իր գլխավորած 3-րդ հետևակային բրիգադի գործողությունները, այլև անձամբ նետվում էր առաջ՝ ոգեշնչելով և սխրանքների մղելով իր ռազմիկներին: Բեհբութովը շարունակ տեղաշարժվում էր իր զորախմբի շարքերում, որպեսզի անձամբ ականատես լինի և վերահսկի իր ռազմիկների բոլոր գործողությունները, անհրաժեշտության դեպքում բարոյապես աջակցի և ուղղորդի նրանց քայլերը:

Անընդմեջ, հուժկու գրոհներով ռուսական զորքերին հաջողվեց կոտրել թուրքական կայազորի համառ դիմադրությունը և մտնել արդեն կիսավեր և հրդեհված քաղաք, որտեղ դեռ երկար շարունակվում էր կատաղի պայքարը յուրաքանչյուր թաղամասի, յուրաքանչյուր տան համար: Այստեղ ևս Բեհբութովը գրոհողների առաջին շարքերում էր և անձնական օրինակով ոգևորում էր մարտիկներին: Շուտով ճնշվեց հակառակորդի դիմադրության վերջին օջախը. ամրոցի գլխին փողփողաց ռուսական հաղթական դրոշը:

Բացի Բեհբութովից, Ախալցխայի համար մարտերին մասնակցեցին վերոհիշյալ կապիտան Ղորղանյանը, Մելիք-Բեգլարյանը, Բեժանյանը, որը զոհվեց ամրոցը գրավելիս, հայազգի այլ սպաներ: Այդ մարտերին մասնակցեց նաև հայ կամավորական 70 հոգանոց ջոկատը: Այս փառահեղ հաղթանակում իր ներդրած ջանքերի համար Բեհբութովը պարգևատրվեց ադամանդակուռ ոսկյա թրով՝ «Քաջության համար» մակագրությամբ և նշանակվեց Ախալցխայի մարզի կառավարիչ:

ԱԽԱԼՑԽԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1829թ. փետրվարի 19-ին Ահմեդ փաշայի 20 հազարանոց զորաբանակը պաշարեց Ախալցխայի ամրոցը: Միաժամանակ, փաշայի եղբոր՝ Ավդի բեկի գլխավորած առանձին զորախումբն ուղղվեց Բորժոմի կիրճ՝ կասեցնելու Ախալցխային Թիֆլիսից օգնության շտապող գնդապետ Ի.Բուրցովի զորագնդի առաջխաղացումը (տե՛ս քարտեզ 2):

Ախալցխայի կայազորը բաղկացած էր Շիրվանի գնդի երկու գումարտակից, խերսոնյան գնդի մեկ վաշտից և կազակական հեծելազորի մեկ հարյուրյակից, ընդամենը՝ 1200 զինվոր: Ամրոցի պաշտպաններին միացան տեղի բնակիչները՝ հայերը, վրացիները և հրեաները, որոնք խույս տալով շրջակայքում հակառակորդի սկսած գազանաբարո գործողություններից՝ ապաստան էին գտել ամրոցում: Չնայած կայազորը փոքրաքանակ էր, այսուհանդերձ, նրա հրամանատարը՝ գեներալ Բեհբութովը, վճռել էր ամեն գնով պաշտպանել Ախալցխան, մինչև օգնական ուժերը տեղ կհասնեին:

Քարտեզ 2


ՌՈՍՈՒՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1829Թ.
ՍԵՎ ԾՈՎ
ՍԱՄՍՈՆ
ՍԱՍՈՒՆ
ՍԱՍՈՒՆ
ՍԱՍՈՒ

Տեղեկանք. «Եթե թուրքերին հաջողվեր գրավել Ախալցխան, ապա 1828թ. փառահեղ հաղթանակների բոլոր արդյունքներն իսկույն հօդս կցնդեին, և Պասկևիչն արդեն հարկադրված կլիներ մտածել ոչ թե նոր նվաճումների, այլ սոսկ անցյալ տարվա ձեռքբերումները վերադարձնելու մասին, այսինքն՝ ստիպված կլիներ պատերազմը սկսել նորից»:

В.Потто, Кавказская война, т. 4,
Турецкая война 1828-1829гг., с. 211

Տասներկու օր տևեց կայազորի ծանր ու անհավասար պայքարը: Շրջափակված ամրոցը բազմիցս ենթարկվեց հակառակորդի հուժկու հրետակոծությանը և գրոհներին: Սակայն Բեհբութովը, որ հմտորեն և առանց խուճապի ղեկավարում էր ամրոցի պաշտպանությունը, սառնասրտորեն հետ էր մղում թուրքերի գրոհները՝ մեծ կորուստներ պատճառելով նրանց: Համոզվելով, որ գրոհներով կայազորի դիմադրությունը ճնշել հնարավոր չէ, թուրքերը վճռեցին տևական պաշարման, ամրոցի պաշտպաններին քաղցի և ծարավի մատնելու միջոցով հյուծել նրանց ուժերը և ստիպել անձնատուր լինել: Ամրոցը լիովին կտրվեց արտաքին աշխարհից. փակվեցին ամրոց տանող բոլոր ճանապարհները, անգամ ջուր հայթայթելու համար հնարավոր չէր ելնել ամրոցից, քանի որ հակառակորդը, դարանակալելով դեպի աղբյուրները տանող բոլոր արահետները, անխնա ոչնչացնում էր բոլորին: Պաշարվածները ստիպված էին իրենց ծարավը հագեցնել հալեցրած ձյան միջոցով: Այնուամենայնիվ, այս զրկանքները ևս անկարող էին կոտրել պաշարվածների մարտական ոգին:

«Ժամանակ շահելու» արվեստը

Տեսնելով, որ պաշարումն ու անընդմեջ գրոհները որևէ արդյունքի չեն հանգեցնում, Ահմեդ փաշան փորձում է սպառնալիքներով և խորամանկությամբ հասնել իր նպատակին: Մարտի 1-ին նա բանագնացի միջոցով նամակ է հղում Բեհբութովին: Վերջինս վճռում է օգտագործել բարեպատեհ առիթը և նամակագրության միջոցով հեռակա բանակցություններ վարելով Ահմեդ փաշայի հետ՝ հնարավորին չափ երկար ժամանակ շահել, մինչև որ գնդապետ Բուրցովի զորագունդը կարողանա օգնության հասնել: Սրանով Բեհբութովը մի տեսակ հեռակա «բանավեճ» է սկսում թշնամու զորքերի հրամանատարի հետ՝ հուսալով, որ վերջինս կշարունակի նամակագրությունը: Այդպես էլ եղավ. Բեհբութովի խորամանկ քայլը, որի նպատակը ժամանակ շահելն էր, հասավ իր նպատակին. Ահմեդ փաշան խայծը կուլ տվեց: Հաջորդ օրը իր հղած նամակում նա գրում է.

Տեղեկանք. «Դուք գրում եք, որ չեք հասկացել իմ խոսքերը՝ «ես ձեզ դուրս կբերեմ բարեհաջող և անվնաս»: Այս առումով պատիվ ունեմ Ձեզ հիշեցնելու, որ սուլթանի և ձեր տիրակալի միջև պատերազմների ընթացքում հաճախ է պատահել ամրոցներ գրավել կապիտուլյացիայի միջոցով, ուստի և նույնն էլ ես եմ ձեզ ընձեռում՝ բարեհաջող նահանջ: Այն զորքը, որը ձեզ օգնության էր շտապում Բորժոմի կիրճով, ջախջախվել է իմ եղբոր՝ Ավդի բեկի կողմից: Եթե ցանկանում եք, ես համաձայն եմ կապիտուլյացիայի, բայց կամքը ձերն է»:

В.Потто, Кавказская война, т. 4,
Турецкая война 1828-1829гг., с. 231

Փոխադարձ «սիրալիրություններով» համեմված նամակագրությունը շարունակվում էր: Բեհբութովն, ինչ խոսք, հավատ չընծայեց Ահմեդ փաշայի խոսքերին՝ օգնության եկող ռուսական զորագնդի ջախջախման վերաբերյալ, չնայած ամրոցը լիովին կտրված էր արտաքին աշխարհից և պաշարվածներին դրսից որևէ լուր չէր հասնում: Այնուամենայնիվ, նա բնավ չէր շտապում պատասխանել, և հերթական նամակը հասցեատիրոջը հասավ միայն հաջորդ օրը՝ մարտի 3-ին:

Տեղեկանք. «Ձեր առաջարկն ինձ անչափ զարմացնում է... Իմ հրամանատարության տակ ունենալով քաջարի կայազոր և ամեն բան ամրոցի պաշտպանության համար՝ ես որևէ այլ բանի մասին չեմ խորհում, քան անձնազոհ պաշտպանության, որին ես վաղուց պատրաստ եմ: Ավդի բեկն անկարող է կասեցնել մեր զորքերի առաջխաղացումը. նրանք կհասնեն ամենուր՝ սվիններով ճանապարհ բանալով իրենց համար: Ես զորքերի սպասում եմ բոլոր կողմերից, որոնց կարիքն, ի դեպ, ամենևին չեմ զգում, քանի որ իմ սեփական ուժերը միանգամայն բավարար են ձեր զինվորներին դիմագրավելու համար»:

В.Потто, Кавказская война, т. 4,
Турецкая война 1828-1829гг., с. 231

Հաղթական ավարտ

Բեհբութովի վերջին նամակին Ահմեդ փաշան չհասցրեց պատասխանել. մինչ շարունակվում էր այս դիվանագիտական խաղը հակառակորդ ուժերի հրամանատարների միջև, գնդապետ Բուրցովի զորագունդը Բորժոմի կիրճում գլխովին ջախջախեց Ավդի բեկի 4 հազարանոց զորախումբը և մարտի 4-ին մոտեցավ Ախալցխային: Շուտով ամրոց հասան նաև գեներալ Մուրավյովի զորաջոկատները: Օգնական ուժերի մերձենալուն պես Ահմեդ փաշայի զորքերը սկսեցին խուճապահար նահանջել: Բեհբութովը կայազորին հրամայեց հրետանային կրակ բացել ճողոպրող հակառակորդի վրա, իսկ ինքը՝ մի ջոկատի գլուխ անցած, դուրս եկավ ամրոցից և քաղաքը մաքրեց նրա զորքի մնացորդ-

ներից: Ամրոցի գրեթե երկշաբաթյա պաշարման ընթացքում կայազորը տվեց ընդամենը 24 զոհ և 70 վիրավոր, այն դեպքում, երբ հակառակորդի կորուստներն ահռելի չափերի էին հասնում՝ մոտ 4000 սպանված և վիրավոր:

Ախալցխայի պաշտպանության համար Բարսեղ Բեհբութովն արժանացավ Սուրբ Աննայի առաջին աստիճանի շքանշանի:

Ամփոփում

Փոքրաթիվ կայազորով Ախալցխայի ամրոցի հուսալի պաշտպանության կազմակերպումը, մանավանդ՝ «ժամանակ շահելու» ռազմարվեստի հմուտ կիրառումը հայազգի գեներալի զորավարական անուրանալի տաղանդի վկայությունն են, ինչն առավել ցայտուն դրսևորվեց ռուս-թուրքական հաջորդ՝ Ղրիմի պատերազմում:

ՂՐԻՄԻ ԿԱՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1853-1856ԹԹ.)

Հայ գեներալը՝ ռուսական կորպուսի հրամանատար

Հակառակորդ կողմերը սկսեցին եռանդուն նախապատրաստվել առաջիկա պատերազմին: Կովկասյան ճակատում Թուրքիան կենտրոնացրել էր մոտ 100 հազարանոց բանակ՝ Աբդի փաշայի հրամանատարությամբ, որը ծրագրել էր երեք՝ Ախալցխայի, Ալեքսանդրապոլի ու Երևանի ուղղություններով ներխուժել Անդրկովկաս, գրավել Թիֆլիսը և ապա զավթել ողջ Կովկասը: Հյուսիսից նրան պետք է օժանդակեին ապստամբ լեռնականների ջոկատները՝ Շամիլի գլխավորությամբ:

Թուրքական ստվարաթիվ բանակին պետք է դիմակայեր Կովկասյան ճակատում գործող ռուսական կորպուսը: Վերջինիս հրամանատար նշանակվեց գեներալ-լեյտենանտ Բարսեղ Բեհբութովը: Բնական էր, որ գեներալի առաջնահերթ խնդիրն իր անհամեմատ փոքրաթիվ ուժերի շուտափույթ համալրումն էր: Սևծովյան շրջանից շտապ Կովկասյան ճակատ փոխադրվեց 16 հազարանոց հետևակային մի դիվիզիա, նաև մի քանի այլ զորամասեր, և, ի վերջո, իշխան Բեհբութովի հրամանատարության տակ ձևավորվեց 30 հազարանոց զորաբանակ, որը նա հիմնականում կենտրոնացրեց գլխավոր՝ Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությամբ (տե՛ս քարտեզ 1):

Քարտեզ 1


ՍԵՎ ԾՈՎ
Բաթում
Բորժոմ
Բակուրիանի
Ծաղկա
Բլնիսի
Խաչեն
Ցագերի
Լոռի
Ստեփանավան
Սանահին
Հաղբատ
Դիլիջան
Գոշավանք
Գարնի
Գեղարդ
Ամբերդ
Աղարակ
Ապարան
Աշտարակ
Եղվարդ
Էջմիածին
Իրազդան
Գառնի
Գեղամա լեռներ
Սևան
Սևանա լիճ
Մարտունի
Վարդենիս
Ծաղկաձոր
Գավառ
Ջերմուկ
Սիսիան
Տեղ
Սոթք
Գորիս
Կապան
Մեղրի
Ագարակ
Դարբաս
Ալավերդի
Տաշիր
Վանաձոր
Թալին
Ամասիա
Գյումրի
Մարալիկ
Ախուրյան
Արթիկ
Մաստարա
Ղազախ
Թեղուտ
Ալագյազ
Ոստան
Ամուրի
Ռազդան
Ապարանի ջրամբար
Սևանի ջրամբար
Արփի լիճ
Ջրավազան
Ալագյազ
Ոստան
Ամուրի
Ռազդան
Ապարանի ջրամբար
Սևանի ջրամբար
Արփի լիճ
Ջրավազան
Ամասիա
Գյումրի
Մարալիկ
Ախուրյան
Արթիկ
Մաստարա
Ղազախ
Թեղուտ

Հայ կամավորական ջոկատների կազմավորումը

Պատերազմի նախօրեին և ընթացքում լայն թափ ստացավ տեղի ազգաբնակչությունից, առավելապես հայերից աշխարհազորային ջոկատների կազմավորումը: Հայ կամավորներ էին հավաքագրվում Վաղարշապատում, Սարդարապատում, Ալեքսանդրապոլում: 1853թ. օգոստոսին Շուշիում գնդապետ Աղայանի գլխավորությամբ ձևավորվեց կամավորականների երեք հարյուրյակ, սեպտեմբերին՝ ևս երկու հարյուրյակ: Նույնը՝ նաև Շամախիում և այլուր: Կամավորական ուժերի կազմավորման գործում զգալի ներդրում ունեցավ հայազգի երիտասարդ գնդապետ, ապագա նշանավոր զորավար և պետական խոշոր գործիչ Միքայել Լոռիս-Մելիքովը[1]: Հենց նա ստանձնեց կամավորականների մի խոշոր խմբավորման հրամանատարությունը, որոնք այդպես էլ կոչվում էին՝ «Լոռիս-Մելիքովի կամավորներ»:

Գեներալ-համիարզ
Միքայել Տարիելի Լոռիս-Մելիքով
(1825-1888թթ.)

Լոռիս-Մելիքովի գործունեությունը, սակայն, չէր սահմանափակվում միայն զուտ ռազմական գործողություններին մասնակցելով. նա նաև ղեկավարում էր հետախույզների և թիկունքում գործող գործակալների աշխատանքը, ճշգրիտ տեղեկություններ հայթայթում հակառակորդի թվաքանակի ու սպառազինության, զորքերի տեղակայման և

[1] Սերում է Լոռիից Թիֆլիս տեղափոխված Մելիքյանների ազնվականական ընտանիքից: Կամավորական զորամասի հրամանատարի պաշտոնում աչքի ընկած երիտասարդ զորավարն ընդամենը 29 տարեկանում ստացավ գեներալ-մայորի կոչում:

առաջիկա ծրագրերի մասին: Բացի այդ, նա եռանդուն բանակցություններ էր վարում քրդական ցեղերի առաջնորդների հետ՝ փորձելով նրանց բարյացակամորեն տրամադրել ռուսական զորքի նկատմամբ: Նրա քայլերի շնորհիվ շուրջ 2000 քրդեր միացան ռուսական բանակին: Դրանցից հարյուր հոգի մտան հենց իր՝ Լոռիս-Մելիքովի աշխարհազոր, որում, բացի հայերից, կային նաև ռուսներ, հույներ, պարսիկներ, վրացիներ և այլն:

Ռազմական գործողությունների սկիզբը

1853թ. հոկտեմբերի վերջին թուրքական կենտրոնական՝ 40 հազարանոց զորաբանակը Աբդի փաշայի գլխավորությամբ Կարսից շարժվեց դեպի Ալեքսանդրապոլ՝ ասպատակելով ճանապարհին հանդիպող հայկական բնակավայրերը: Թշնամին անցավ Ախուրյան (Արփաչայ) գետի աջ ափը և բանակեց Ալեքսանդրապոլից 15 կմ հեռու գտնվող Շիրակավան (Շորագյալ) գյուղում՝ պատրաստվելով հարձակվելու Ալեքսանդրապոլի վրա:

Թուրքերի առաջխաղացումը կասեցնելու համար գեներալ Բեհբութովը նոյեմբերի 2-ին նրան ընդառաջ ուղարկեց գեներալ-մայոր, իշխան Օրբելիանու գլխավորած 7 հազարանոց առաջապահ զորախումբը՝ սպառազինված 28 հրանոթով, հրամայելով հնարավորության դեպքում հարձակում գործել, իսկ գերակշռող ուժերի հանդիպելով՝ կանգ առնել և դիմակայել՝ սպասելով օժանդակ ուժերի, սակայն ոչ մի դեպքում չնահանջել և թույլ չտալ հակառակորդին առաջանալ դեպի Ալեքսանդրապոլ: Իշխան Օրբելիանու զորախմբի կազմում էր Լոռիս-Մելիքովը՝ իր աշխարհազորային ջոկատով, նաև Բորչալուի, Ղազախի, Գանձակի (Ելիզավետպոլ) հայ կամավորական ջոկատները՝ շուրջ 800 մարտիկներով:

Բայանդուրի ճակատամարտը

Ռուսական զորախմբի մոտենալուն պես թուրքերի առաջապահ ջոկատը մարտի չբռնվեց, այլ նահանջեց դեպի Բայանդուր: Իշխան Օրբելիանին անզգուշաբար, առանց նախազգուշական միջոցներ ձեռք առնելու, նետվեց հետապնդելու հակառակորդին: Բայանդուրի մերձակայքում ռուսական զորախումբն անսպասելիորեն ընկավ գյուղի շրջակա բարձունքների վրա դիրքավորված հակառակորդի հրետանային ուժգին կրակի տակ, որին հաջորդեց թուրքական մեծաքանակ ուժերի հարձակումը: Սակայն Օրբելիանու զորքերը կարողացան դիմակայել թվաքանակով շուրջ վեց անգամ գերակշռող թշնամու հզոր ճնշմանը և չընկրկեցին, ինչը կնշանակեր բացել դեպի Ալեքսանդրապոլ

տանող ճանապարհը: Հետ մղելով թշնամու անընդմեջ գրոհները՝ իշխան Օրբելիանին միաժամանակ շտապեց տեղեկացնել գեներալ Բեհբութովին իր զորքերի ծանր կացության մասին:

Շուտով օգնական ուժերով Բայանդուր հասավ գեներալ Բեհբութովը և, ծանոթանալով իրավիճակին, անմիջապես մղվեց դեպի թշնամու ձախ թևը, որպեսզի թևանցում կատարի և կտրի թշնամու նահանջի ճանապարհը:

> **Տեղեկանք.** «Իշխան Բեհբութովն իր զորքերին կարճ ճանապարհով առաջնորդեց դեպի թշնամու ձախակողմյան դիրքերը... Հաջողության դեպքում թուրքերը, տարանջատվելով Արփաչայից (Ախուրյան), կհայտնվեին ավելի անելանելի վիճակում, քան այն, որում հայտնվել էին մեր զորքերը Բայանդուրում՝ նախքան պահեստային ուժերի հասնելը»:
>
> ***М.Богданович, Восточная война, т. 1, с. 223***

Բեհբութովի այս վճռական քայլը թշնամուն հարկադրեց անցնել Ախուրյան գետը և նահանջել իր ելման դիրքերը: Մայրամուտին մարտն իսպառ դադարեց, իսկ առավոտյան չվերսկսվեց, քանզի թուրքական զորախումբը, խույս տալով հետագա առճակատումից, գիշերը նահանջել էր դեպի Կարս: Ռուս ռազմական պատմաբան Վ.Պոտտոյի բնորոշմամբ՝ Բայանդուրի ճակատամարտը Բաշքադըկլարի և Քյուրուկդարայի նշանավոր ճակատամարտերի նախերգանքն էր, որով մեծապես պայմանավորված էին հետագա հաղթանակները:

Բաշքադըկլարի ճակատամարտը. 19 նոյեմբերի (1 դեկտեմբերի) 1853թ.

Բայանդուրի ճակատամարտից հետո գեներալ Բեհբութովն իր զորքով միառժամանակ մնաց Շիրակավանում (Շորագյալ)՝ սպասելով թուրքական բանակի հետագա քայլերին: Տեղի հայ ազգաբնակչության հաղորդած լուրերի և հետախուզության միջոցով ստացված տվյալների համաձայն՝ հակառակորդի նահանջը դեպի Կարս շարունակվում էր: Սակայն, սպասվածին հակառակ, Ալի Ահմեդ փաշայի 36 հազարանոց բանակը բանակեց Կարսից 20 կմ հեռավորության վրա գտնվող Բաշքադըկլար բնակավայրի մոտ:

Բեհբութովն իսկույն օգտվեց ընձեռված հնարավորությունից և նոյեմբերի 19-ին, իր ալեքսանդրապոլյան 10 հազարանոց զորախմբով առաջանալով, Բաշքադըկլարի մոտ վերջնականապես կտրեց թուրքական բանակի՝ դեպի Կարս նահանջի ճանապարհը:

Իր տրամադրության տակ քառակի ավելի զինվոր ունեցող թուրքական բանակի հրամանատար Ալի Ահմեդ փաշան արհամարհանքով վերաբերվեց ռու-

Տեսարան Բաշքադըկլարի ճակատամարտից

սական փոքրաթիվ զորախմբի առաջխաղացմանը: Շուտով, սակայն, թուրք փաշան ստիպված եղավ թանկ վճարել հակառակորդին թերագնահատելու համար:

Ճակատամարտի սկիզբը

Ճակատամարտը սկսվեց կեսօրին՝ կողմերի նախապատրաստական հուժկու հրետակոծությամբ: Ռուսական կողմից հրետանային կրակն իրականացվում էր 16 հրանոթներով, մինչդեռ հակառակորդը ներգրավել էր առնվազն 20 հրանոթ: Չնայած թուրքական զորքերը կազմ ու պատրաստ էին, այնուամենայնիվ, Բեհբութովը, հավատարիմ մնալով իր նախընտրած մարտավարությանը, անվարան նախահարձակ եղավ: Նրա հրամանով լավագույն զորամասերը գեներալներ Բագրատիոն-Մուխրանսկու, Բրիմմերի և Օրբելիանու ղեկավարությամբ հանդուգն գրոհ ձեռնարկեցին թշնամու զորաբանակի աջ թևի վրա: Բագրատիոն-Մուխրանսկու գլխավորությամբ գրենադերների և կարաբիներների 4 գումարտակ թևանցում կատարեցին և սվինամարտի նետվեցին հակառակորդի աջ թևի վրա: Վերջինս, չդիմանալով ռուսական զորքերի ճնշմանը, խուճապի մատնվեց և սկսեց անկանոն նահանջել (տե՛ս քարտեզ 2):

Խոշոր ուժեր կուտակելով ձախ թևում՝ Ահմեդ փաշան, օգտագործելով թվական գերակշռությունը, փորձեց հակահարձակման անցնել և այդ թևում նեղելով ռուսական զորքերին՝ վերականգնել կորսված դիրքերը: Ռուսական զորքերը հերոսաբար դիմադրում էին՝ հետ մղելով թուրքական զորքերի և քրդական ջոկատների անընդմեջ գրոհները:

Գեներալ Բեհբութովի հրամանով իշխան Օրբելիանու վրացական գրենադերական գունդը գրոհեց հակառակորդի աջ թևում տեղակայված հրանոթների մարտկոցի վրա, որը և դարձավ ռուսական զորքերի գլխավոր հարվածի նշանակետը: Գրենադերներն իջան ձորակը և բարձրանալով հանդիպակաց թեքությամբ՝ մխրճվեցին մարտկոցի մեջ: Ծանր, անհավասար մարտում շատերն ընկան: Մահացու վիրավորվեց նաև հրամանատարը՝ գեներալ Օրբելիանին:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1853Թ.



Քարտեզ 2

Ճակատամարտի վճռորոշ պահն էր: Հարկավոր էր վերստին տիրել նախաձեռնությանը, ոգեշնչել զորքերին և վերջնական հարված հասցնել հակառակորդին: Եվ ահա գեներալ Բեհբութովը, լքելով իր հրամանատարական դիտակետը, երկու վաշտի գլուխ անցած, շտապեց գրենադերներին օգնության: Այս հանդուգն քայլը, ըստ էության, վճռեց ճակատամարտի ելքը: Մարտիկները, ոգեշնչված իրենց հրամանատարի անձնազոհ արարքով, նրա հետևից խոյացան հակառակորդի վրա: Սկսվեց արյունահեղ սվինամարտը, որում ռուս զինվորը հավասարը չուներ աշխարհում:

Այդ ընթացքում ռուսական հետևազորը, թևանցում կատարելով, գրավեց Ուղուզլիի բարձունքը՝ կտրելով հակառակորդի նահանջի ճանապարհը: Վերջինս, այլևս անզոր լինելով կազմակերպված դիմադրություն ցույց տալու, Մավրակչայ գետի ափին տրոհվեց երեք մասի և գրեթե լիովին շրջապատվեց ռուսական զորքերի կողմից:

1836թ. օրինակի կայծքարե կողպեքով հեծելազորային կարաբին: Այս արագաձիգ հրազենը հայ կամավորականներին հնարավորություն էր տալիս տեխնիկական առումով ևս անվիճելի գերազանցության հասնել թուրքական հեծելազորի դեմ:

Հայտնվելով ռուսական զորքերի օղակում՝ թուրքական բանակը մինչև ժամը 3-ը կատաղի դիմադրում էր, սակայն, չդիմանալով ռուսական զորամասերի հուժկու ճնշմանը, ի վերջո սկսեց նահանջել, ինչը հետզհետե վերածվեց փախուստի: Կատարյալ ջախջախումից թուրքական բանակին փրկեցին հեծելազորը և քրդական մեծաքանակ հեծյալ ջոկատները: Գեներալ Բեհբութովի զորքերը հաղթանակ տարան:

Տեղեկանք. «Չհիշատակելով առանձին զորամասերի բազմաթիվ սխրագործությունների մասին՝ Ձերդ պայծառափայլությանը հայտնեմ միայն, որ 7000 հետևակ և 2800 հեծյալ զինվորներից բաղկացած ռուսական զորախումբը, որ սպառազինված էր 32 հրանոթով, այդ օրը կատարյալ պարտության և խուճապահար փախուստի մատնեց թուրքական կանոնավոր հետևազորի 20 հազարանոց կորպուսին, 4 հազարանոց կանոնավոր հեծելազորին, և ավելի քան 12 հազար քրդերին՝ սպառազինված 46 հրանոթով»,- Բեհբութովի՝ իշխան Վորոնցովին հղած զեկուցագրից:

Е.Тарле, Крымская война, с. 286

Թշնամին մարտադաշտում թողեց ավելի քան 6000 սպանված ու վիրավոր, գրեթե ամբողջ հրետանին ու զինամթերքի պաշարը: Բեհբութովի զորախմբի կորուստներն անհամեմատ սակավաթիվ էին. 317 զոհ և շուրջ 900 վիրավոր: Այս փայլուն հաղթանակի համար Բարսեղ Բեհբութովը պարգևատրվեց Սուրբ Գեորգիի 2-րդ աստիճանի շքանշանով:

Ինչպես Բայանդուր գյուղի մոտ, այնպես էլ այս ճակատամարտում Լոռիս-Մելիքովն իր կամավորներով հույժ կարևոր՝ կապող օղակի դեր էր կատարում հրամանատարի և զորախմբերի միջև, վերջիններիս ժամանակին ու ճշգրիտ հասցնում հրամանատարի հրահանգները՝ ըստ հարկի կատարելով անհրաժեշտ շտկումներ, քանզի մարտի ընթացքում իրավիճակն անկանխատեսելի է և ամեն պահի փոփոխության ենթակա: Պատահական չէ, որ իր խելամիտ ու վճռական գործողությունների համար Լոռիս-Մելիքովը պարգևատրվեց Ոսկե թրով, որը նույնքան պատվաբեր էր, որքան Գեորգիևյան խաչը:

Ամփոփում

Այս ճակատամարտում հայ գեներալի նախասիրած նախահարձակ լինելու մարտավարությունը, զուգորդվելով նրա անձնական խիզախության և վճռական պահին անձնազոհ քայլով ճակատամարտի ընթացքի մեջ բեկում մտցնելու պատրաստակամության հետ, ի վերջո հանգեցրեց փայլուն հաղթանակի: Ուշագրավ է, որ այս ճակատամարտի հետ գրեթե միաժամանակ ռուսական զորքերը մեկ այլ փայլուն հաղթանակ տոնեցին պատերազմական գործողությունների Սևծովյան թատերաբեմում. նոյեմբերի 20-ին Սինոպի ծովամարտում ռուսական նավատորմը՝ փոխծովակալ Պ.Նախիմովի հրամանատարությամբ, ոչնչացրեց թուրքերի Սևծովյան նավատորմը: Ի դեպ, Սինոպի հաղթական ծովամարտում իր ներդրումն ունեցավ հայազգի մեկ այլ նշանավոր զորավար, փոխծովակալ Լազար Սերեբրյակովը (Ղազար Արծաթագործյան), որը Կովկասյան առափնյա գծի պաշտպանության ղեկավարն էր:

ՔՅՈՒՐՈՒԿԴԱՐԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ.

24 ՀՈՒԼԻՍԻ (5 ՀՈՒԼԻՍԻ) 1854Թ.

1854թ. հունիսի սկզբին գեներալ Բեհբութովին հայտնի դարձավ, որ թուրքական 60 հազարանոց զորաբանակը տեղակայված է Կարսի մերձակա Հաջիվալի գյուղում: Հակառակորդի մեծաքանակ զորքերին պետք է դիմակայեր ռուսական 16 հազարանոց զորախումբը, որը դիրքավորվել էր Կարսից 18 կմ հեռու՝ Քյուրուկդարա գյուղի մերձակայքում:

Հետախուզության միջոցով պարզելով, որ թուրքական զորքերի դիրքերն անառիկ են, Բեհբութովը վճռեց իր փոքրաթիվ ուժերով չգրոհել նրանց ամրությունների վրա, առավել ևս, որ հակառակորդն անհրաժեշտության դեպքում կարող էր պատսպարվել Կարսի բերդում: Նա մտադրվեց թուրքերին ամեն գնով դուրս կորզել իրենց ամրություններից և բաց դաշտում վճռական ճակատամարտում ջախջախել նրան:

Շուրջ մեկ ամիս Բեհբութովը համբերատար սպասում էր հակառակորդի տեղաշարժմանն իր ամրացված դիրքերից: Ի վերջո, հուլիսի 23-ի երեկոյան հայ հետախույզները հայտնեցին, որ թուրքերը պատրաստվում են ռազմերթի: Դեռևս պարզ չէր, թե թուրքերը որ ուղղությամբ կտեղաշարժվեն, այսուհանդերձ, Բեհբութովը վճռեց շարժվել հակառակորդին ընդառաջ և ընթացքից գրոհել նրա վրա: Իսկ եթե վերջինս վճռել էր նահանջել դեպի Կարս, ապա հարվածել նրա թիկունքին՝ ամեն դեպքում թույլ չտալով նրան խուսափել բաց մարտադաշտում առճակատումից և ամրանալ Կարսի բերդում: Դեռևս կեսգիշերին ողջ զորախումբը, կազմ և պատրաստ, մարտակարգով շարված, սպասում էր առաջանալու հրամանի:

Ճակատամարտի առաջին փուլը

1854թ. հուլիսի 24-ին տեղի ունեցավ պատերազմի Կովկասյան թատերաբեմի համար վճռորոշ մարտը՝ Քյուրուկդարայի նշանավոր ճակատամարտը, որը գեներալ Բեհբութովի ռազմական կենսագրության ամենափառահեղ էջն էր: Վաղ առավոտյան Բեհբութովի հրամանով զորախմբի առաջապահ ջոկատը, որի մեջ էին և Լոռիս-Մելիքովի կամավորները, սկսեց առաջանալ հակառակորդի դիրքերի ուղղությամբ: Հետևազորը՝ երկու շարասյունով, գեներալ Ֆետիսովի հրամանատարությամբ, հետևում էր առաջապահին: Նրանց աջ և ձախ կողմերում հեծյալ ջոկատներն էին՝ գեներալ Անդրոնիկովի և գնդապետ Կամկովի գլխավորությամբ: Ապա գալիս էր գեներալ Բագգովուտի գլխավորած հեծելազորը:

Ընդհարումը տեղի ունեցավ Կարակալայի սարահարթում: Թուրքական զորքերը մարտի համար դասավորվել էին լայն ճակատով, ինչը դժվարացնում էր Բեհբութովի անհամեմատ փոքրաթիվ ուժերի ազատ գործողությունների հնարավորությունը, ավելին՝ սպառնալիք էր ստեղծում նրանց շրջապատման համար: Այդուհանդերձ, այստեղ էլ նա վճռեց նախաձեռնությունը չզիջել հակառակորդին և նախահարձակ լինել:

Ճակատամարտը սկսվեց երկուստեք հզոր և տևական հրետակոծությամբ: Առաջինը գրոհի նետվեց ռուսական բանակի աջ թևի ամենաշարժունակ ջոկա-

Քյուրուկդարայի ճակատամարտը հայազգի գեներալներ Բ.Բեհբութովի և Մ.Լոռիս-Մելիքովի կենսագրության ամենափառահեղ էջերից է:

տը՝ Լոռիս-Մելիքովի կամավորական հեծելազորը, որի հանդուգն գործողություններից անակնկալի եկած հակառակորդի ձախ թևի ուժերը շուտով ընկրկեցին՝ դրանով հնարավորություն տալով ուժեղացնել ճնշումը կենտրոնի վրա:

Հակառակորդը փորձեց ձախ թևում կրած անհաջողությունը փոխհատուցել աջ թևում հուժկու հարված հասցնելով և շրջանցելով Կարակալան՝ օղակել ռուսական զորաբանակը: Սակայն գեներալ Բեհբութովը ժամանակին կռահեց նրա մտադրությունը և այդ թևում գործող Ռյազանի գնդի հրամանատար, գնդապետ Գանեցկուն հրամայեց իր գումարտակների մեծ մասով և հրետանային մարտկոցով առաջանալ դեպի գրոհող հակառակորդը և ամեն գնով կասեցնել նրա թևանցումը: Հակառակորդները մոտեցան միմյանց և հրետանային կրակ բացեցին:

Երկրորդ փուլ

Տեղեկանք. «Մոտ երկու ժամ կանգնած էին ռյազանցիները թուրքական հետևակի առաջ, որը մահաբեր կրակ էր շաղ տալիս նրանց վրա: Մի քանի անգամ երկու կողմերը փորձեցին սվինամարտ սկսել, բայց այդ փորձերը հաջողություն չունեցան: Ռյազանցիները թուրքերի գերազանցող ուժերի դեմ արդեն սկսում էին թուլանալ, երբ գեներալ Բագգովուտի հայտնվելը՝ դրագունների մի քանի դիվիզիոններով և չորս հրանոթներով, շտկեց իրավիճակը»:

Պ.Рудаков, Два эпизода из войны в Азиатской Турции, с. 537

Բագգովուտի գլխավորած հեծելազորի հարվածը ճիշտ ժամանակին էր հասցվել: Հակառակորդը, չդիմանալով հեծելազորի հուժկու հարվածին, նահանջեց՝ լքելով իր հրետանային մարտկոցը՝ բաղկացած 8 հրանոթից:

Հաղթանակ

Աջ թևում ևս հաջողությամբ հետ մղելով հարձակումը՝ Բեհբութովը սկսեց արդեն ողջ ճակատով ճնշում գործադրել հակառակորդի վրա՝ հարվածի գլխավոր թիրախը դարձնելով հակառակորդի կենտրոնը: Այստեղ էին կենտրոնացած թուրքերի հիմնական ուժերը՝ եռաշարք դասավորությամբ, որոնցից յուրաքանչյուրի կենտրոնում գործում էին հրետանային հզոր մարտկոցները: Այստեղ՝ մարտադաշտի կենտրոնում պետք է վճռվեր ճակատամարտի ելքը: Հայ զորավարը գրոհի հրաման տվեց: Գրեթե երկու ժամ հակառակորդի սաս-

տիկ հրետակոծության ներքո ռուսական զորքերը համառորեն գրոհում էին: Ի վերջո, ռուսական զորքերի համառությունն ու անձնազոհությունը հանգեցրին ցանկալի արդյունքին: Չդիմանալով հզոր ճնշմանը՝ թուրքական բանակը, խոշոր կորուստներ կրելով, մասնատվեց և սկսեց անկանոն նահանջել դեպի Կարս: Ռուսական հեծելազորը, այդ թվում նաև Լոռիս-Մելիքովի կամավորները, կրնկակոխ հետապնդեցին ճողոպրող հակառակորդին՝ ոչնչացնելով գլխակորույս փախչող զինվորներին ու գերելով մի քանի հարյուր հոգու:

Այս ճակատամարտում թուրքերը կորցրին շուրջ 10 հազար զինվոր, իսկ ռուսական զորքերի կորուստն ընդհանուր առմամբ կազմեց մոտ 3000 հոգի: Ռուսական զորքերը գրավեցին խոշոր ռազմավար՝ 15 հրանոթ, մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, դրոշակներ, թմբուկներ և ձիեր:

> **Տեղեկանք.** «Իշխան Բեհբութովն ուզում է ինձ զարմացնել հաղթանակով, իսկ ես նրան կզարմացնեմ պարգևով»,- բացականչել է կայսր Նիկոլայ Առաջինը և Բեհբութովին պարգևատրել բարձրագույն՝ Սուրբ Անդրեյ Նախավկայի (*Святого Андрея Первозванного*) շքանշանով:
>
> ***Военная энциклопедия, т. 4, стр. 434***

Պարգևներից անմասն չմնաց նաև Միքայել Լոռիս-Մելիքովը, որն իր քաջագործության համար ստացավ Սուրբ Վլադիմիրի երրորդ աստիճանի շքանշան: Տարբեր պարգևների արժանացան նաև հայազգի բազում այլ սպաներ ու զինվորներ:

Ամփոփում

Քյուրուկդարայի ճակատամարտը ծանր հետևանքներ ունեցավ թուրքական բանակի համար, որը, կորուստներ կրելով, մինչև պատերազմի ավարտն այլևս հանդես չեկավ իբրև գործուն ռազմական ուժ. բարոյալքված զորքն անզոր էր ակտիվ, առավել ևս հարձակողական որևէ գործողություն իրականացնել: Այս ճակատամարտի շնորհիվ հայ ժողովրդի արևելյան հատվածը փրկվեց անխուսափելի կոտորածների ենթարկվելու սպառնալիքից: Կովկասյան ճակատում ռուսական զորքերի փայլուն հաղթանակներում մեծ ավանդ ունեցան նաև հայ կամավորներն ու աշխարհազորայինները, մեր ողջ ժողովուրդը, որը թե՛ նյութապես և թե՛ բարոյապես զորավիգ էր ռուսական զորքերին և նրանց հետ միասին անձնազոհ պայքար էր մղում դարավոր թշնամու դեմ:



Բայազետի գրավումը ռուսական զորքերի կողմից 1854թ.:

1877-1878ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ռուս-թուրքական հաջորդ պատերազմը սկսվեց 1878թ. ապրիլի 12-ին: Պարսից լծից Արևելյան Հայաստանի ազատագրումից շուրջ հինգ տասնամյակ անց ռազմաքաղաքական բարենպաստ իրավիճակ էր ստեղծվել մեր հայրենիքի նաև արևմտյան հատվածը թուրքական բռնակալությունից ազատագրելու և Արևելյան ու Արևմտյան Հայաստանը վերամիավորելու համար: Նվիրական նպատակը համախմբել էր բոլորին:

Երևանի նահանգի սահմանամերձ գավառների հայ ազգաբնակչությունը նյութական և բարոյական մեծ աջակցություն էր ցուցաբերում ռուսական զորքերին, ապահովում կացարաններով, տրամադրում վառելիք, պարեն, ձիեր, սայլեր և այլ անհրաժեշտ պարագաներ: Ձգալի էր նաև հայերի գործուն աջակցությունը ռուսական զորքերին բուն ռազմական գործողությունների ընթացքում: Այդ նպատակով, նախքան պատերազմը, նաև անմիջապես պատերազմի ընթացքում կազմավորվեցին հայկական կամավորական ջոկատներ կամ, ինչպես այն ժամանակ կոչում էին՝ «ժողով ժամանակավոր զորաց» (միլիցիա): Հազարավոր հայ ռազմիկներ այդ ջոկատների կազմում մասնակցեցին ռուսական զորքերի հարձակողական մարտերին, սահմանի պաշտպանությանը՝ քրդերի և բաշիբոզուկների ներխուժումներից՝ ամենուրեք աչքի ընկնելով քաջությամբ և անձնվիրությամբ:

Իսկ բուն ռուսական բանակում հայ զինվորների թվաքանակը հասնում էր մի քանի տասնյակ հազարի, այդ թվում՝ ավելի քան 500 բարձրաստիճան սպաներ, որոնց թվում այնպիսի նշանավոր զորավարներ, ինչպիսիք էին Մ.Լոռիս-Մելիքովը, Ա.Տեր-Ղուկասովը, Լազարևը, Ալխազովը, Շելկովնիկովը և ուրիշներ: Պատերազմի ընթացքում հազարավոր հայ ռազմիկներ հերոսաբար ընկան ծանր մարտերում, շատերն իրենց սխրագործությունների համար արժանացան շքանշանների և մեդալների:

Պատերազմական գործողությունների սկիզբը

Կովկասյան ճակատում հարձակողական գործողությունները պետք է ընթանային երեք հիմնական ուղղություններով: Գլխավոր հարվածը պետք է հասցներ կորպուսի կենտրոնական զորախումբը՝ Ալեքսանդրապոլ (Գյումրի)-Կարս-Կարին ուղղությամբ՝ հայ զորավարներ Միքայել Լոռիս-Մելիքովի և Հովհաննես Լազարևի գլխավորությամբ: Աջ թևի զորախումբը գեներալ Դևելի գլխավորությամբ պետք է գործեր Ախալցխա-Արդահան-Կարս ուղղությամբ: Ձախ թևում Երևանյան զորախումբը հայազգի մեկ այլ փառապանծ զորավարի՝ Արշակ Տեր-Ղուկասովի գլխավորությամբ պետք է առաջանար Բայազետ-Ալաշկերտ-Կարին ուղղությամբ և ձախ թևից հարվածեր Մուխթար փաշայի գլխավորած թուրքական բանակին (տե՛ս քարտեզ 1):

Հետևազորի գեներալ
Հակոբ Քայխոսրովի Ալխազով
(1826-1896թթ.)

Ռազմական գործողությունները սկսվեցին ռուսական զորքերի վստահ հաղթարշավով: Անցնելով սահմանը և արագ առաջանալով՝ նրանք գրավեցին Արդահանը և ապա պաշարեցին Կարսի բերդը: Փայլուն հաջողությունների հասավ գեներալ Տեր-Ղուկասովի Երևանյան 13 հազարանոց զորախումբը, որն իր կազմում ուներ նաև հայերից կազմված աշխարհազորային հեծյալ խմբեր:

Քարտեզ 1


ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ 1877թ.
ՍԵՎ ԾՈՎ
ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՆ
Բոլուսեթ
Բաթում
Բորժոմ
Ախալցխա
Ախալքալաք
Ծարոկա
Բոլնիս Խաչեն
Դմանք
Լոռի
Միրաք
Ապարան
Ալեքսանդրապոլ
Ղարաքիլիսա
Ղարսի մարզ
Սարիղամիշ
Կարս
Բայազետ
Էրզրում
Ալաշկերտ
Դիադին
Մանազկերտ
Բասեն
Խնուս
Մուշ
Սասուն
Տեկոր
Արծն
Արտանուշ
Օլթի
Բանակ
Ռուսոնիս (Օլթի)
Դարիրեզ
Ղարսի մարզ
Ռիզե
Հաճեն
Դարիանա
Բերդաձոր
Կիկիմ
Իշխան
Ուռուս
Նարիման
Ուռուս
Սարիղամիշ
Մեծրիսի
Ղարսի մարզ
Կոտեցիս
Դարանալ
Սուլակերտ
Դարանալ
Գալանոս
Դարանալիա
Դարանալ
Բասեն
Դարանալ
Ղարսի մարզ
Կարին
Ծիրանցոց
Ալաշկերտ
Սարիղամիշ
Ալաշկերտ
Սարիղամիշ
Ալաշկերտ
Սարիղամիշ

1877թ. ապրիլի 15-ին Տեր-Ղուկասովի զորախումբն արշավեց Բայազետի վրա: Լսելով հարձակման մասին՝ Բայազետի գավառի կառավարիչ Ալի Քեմալ փաշան, չնայած իր տրամադրության տակ եղած զորքերը թվաքանակով չէին զիջում Երևանյան զորաջոկատին, այդուհանդերձ, հապշտապ նահանջեց: Տեր-Ղուկասովի զորաջոկատն անարգել մտավ Բայազետ: Այնտեղ թողնելով շուրջ 1500 զինվորներից կազմված կայազոր՝ գեներալն իր հիմնական ուժերով շարունակեց առաջխաղացումը և շուտով գրավեց Դիադինը, ապա Ղարաքիլիսան (ներկայիս՝ Վանաձոր) ու Վաղարշակերտը (Ալաշկերտ): Հունիսի սկզբին Տեր-Ղուկասովը Դրամդաղի, ապա Դահարի ճակատամարտերում ջախջախեց հակառակորդի՝ թվաքանակով մի քանի անգամ գերազանցող զորքերը: Տեր-Ղուկասովի ջոկատի հաղթական առաջխաղացմանը մեծապես նպաստում էր հայ ազգաբնակչությունը, որն ամենուրեք ցնծությամբ էր ընդունում զորավարի զորքերին, պատսպարում էր նրանց, օգնում պարենամթերքով, ստույգ տեղեկություններ հաղորդում թուրքերի տեղաբաշխման և թվաքանակի մասին:

Տեղեկանք. «Ներկա պատերազմի ընթացքում արևմտահայերն այնքան և այնպիսի օգնություն ցույց տվեցին մեզ՝ կորցնելով իրենց գույքը, մինչև իսկ իրենց կյանքը, որ մենք կատարելապես համոզվեցինք, որ Առաջավոր Ասիայում մեր միակ դաշնակիցները հայերն են»:

С.Кишмишев, Война в Турецкой Армении 1877-1878 гг., стр. 127-128

Տեր-Ղուկասովի զորաջոկատի նշանավոր նահանջը

Զևինի մոտ ռուսական զորքերի անհաջող գործողությունների հետևանքով հունիսի 15-ին Տեր-Ղուկասովը գլխավոր հրամանատարությունից նահանջելու կարգադրություն ստացավ: Նա հարկադրված էր նահանջել՝ շրջապատման օղակում չհայտնվելու համար: Թուրքական բազմահազարանոց բանակի, քրդական ավազակային ջոկատների միջով նահանջը նույնպես սխրանք էր: Տեր-Ղուկասովի առջև ծառացած խնդիրն ավելի էր բարդանում այն պատճառով, որ Ալաշկերտի հովտի տասնյակ հազարավոր հայեր, տեղեկանալով նահանջի մասին, ցանկություն հայտնեցին անցնել սահմանը՝ թուրք ջարդարարների հաշվեհարդարից խուսափելու համար: Գրեթե անհնարին էր թվում մի փոքր զորաջոկատով հազարավոր անզեն մարդկանց, այդ թվում՝ կանանց, երեխաների, ծերերի, ապահով դուրս բերել թշնամու շրջապատումից: Սակայն զորավարը չէր կարող բախտի քմահաճույքին թողնել իր հայրենակիցներին:

Նահանջի համար Տեր-Ղուկասովի ընտրած մարտավարությունը, որն ի վերջո լիովին արդարացրեց իրեն, ըստ էության հանգում էր հետևյալին. նախ՝ նա հեծելազորի միջոցով առավելագույնս տարածում էր իր երկու թևերը և ընդգրկում լայնարձակ տարածություն՝ հակառակորդին արգելելով մոտենալ իր զո-

Գեներալ-լեյտենանտ
Արշակ Հարությունի Տեր-Ղուկասով
(1819-1881թթ.)

ռաջոկատի կենտրոնին, իսկ երբ կենտրոնը թևերի պաշտպանության ներքո նահանջում էր և նոր դիրքեր գրավում, թևերը հմտորեն սեղմվում էին ու հետ քաշվում և ապա վերստին տարածվում էին՝ կենտրոնին հնարավորություն տալով դարձյալ անարգել ու անկորուստ նահանջելու:

Շուրջ 10 օր ու գիշեր ծգվեց Երևանյան ջոկատի ոդիսականը: Տեր-Ղուկասովի զորաջոկատը (այդ թվում՝ 600 հիվանդ ու վիրավոր) հազարավոր հայ ընտանիքների հետ, առանց կորստի անցնելով ավելի քան 200 կմ, հատեց ռուսական սահմանը:

ԴԱՐՈՒՅՆՔ (ԲԱՅԱԶԵՏ)

Բայազետի պաշարումը. 1877թ. հունիսի 6 - 1877թ. հունիսի 28

Գեներալ Տեր-Ղուկասովը, Բայազետում թողնելով մի փոքրիկ կայազոր, շարունակեց ռազմարշավը, և շուտով նրա հետ կապն ընդհատվեց: Նրա հեռանալուն զուգընթաց սկսեցին լուրեր տարածվել, որ Վանի զորամասի հրամանատար Ֆաիկ փաշան պատրաստվում է արշավել Բայազետի վրա:

Տեղեկանք. «Հունիսի 3-ին լուր ստացվեց, որ շեյխ Իբադուլլահի և Ջելալեդդինի հրոսակային խումբը և կանոնավոր զորքերը Վեֆկի փաշայի հրամանի տակ արշավում են դեպի Բայազետ: Հունիսի 4-ին Երևանից եկած թվով 1000 ձիավոր՝ բաղկացած Ղարաբաղի հայ կտրիճներից, գնդապետ Գրիգոր աղա Մելիք-Շահնազարյանցի և Համբարձում աղա Հախումյանցի գլխավորությամբ հասան Բայազետ»:

Գ.Շերենց, Բայազետի հերոս պաշտպանները, «Հովիտ», 1914, թիվ 46

Քաղաքի վրա հակառակորդի հնարավոր հարձակման վերաբերյալ լուրերը ճշտելու համար հունիսի սկզբին ռուս զինվորներից և հայ կամավորներից կազմված մի ոչ մեծ հետախուզական ջոկատ ուղարկվեց Վանի ուղղությամբ: Շուտով ջոկատը հանդիպեց դեպի Բայազետ արշավող Ֆաիկ փաշայի զորախմբին և հապշտապ նահանջեց: Քաղաքում ջոկատը ենթարկվեց քաղաքաբնակ մահմեդականների սկսած սաստիկ գնդակոծությանը, և ծանր կորուստների գնով միայն հասավ միջնաբերդ: Շուտով քաղաք հասան նաև Ֆաիկ փաշայի զորքերը, ինչը հարկադրեց փակել միջնաբերդի դռները: Ռուս զինվորների և հայ կամավորների մի մասը մնաց դրսում և զոհ գնաց քաղաքում մոլեգնող վայրագություններին:



Ա. Հրացանի ընդհանուր տեսքը



Բ. Փակաղակը փակ է

Գ. Փակաղակը բաց է

Այսպիսով, օգտվելով ռուսական զորքերի ժամանակավոր նահանջից՝ Վանի Ֆաիկ փաշայի բազմահազարանոց բանակը և շեյխ Իբադուլլահի և Ջալալեդդինի գլխավորած քուրդ բաշիբոզուկների ստվարաթիվ հրոսակախմբերը հունիսի 6-ին պաշարեցին Բայազետը: Բայազետի փոքրաթիվ կայազորը և հայ կամավորները հայտնվել էին օրհասական վիճակում: Գրեթե մեկ ամիս նրանք, քաղցի ու ծարավի մատնված, կենաց-մահու պայքար էին մղում:

Տեղեկանք. «Բերդը մռնչում էր որպես մի վիթխարի գազան, որին ամեն կողմից հարվածում էին: Նա դեռևս համառությամբ մաքառում էր օրհասի և մահվան դեմ: Նա վճռել էր մեռնել, բայց փառքով մեռնել: Մոտ 1000 ռուս զինվորներ... հայ կամավորների հետ կռվում էին Սմայիլ փաշայի քսան հազարի դեմ»:

Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 4, «Խենթը», էջ 150

Պաշարումն այնքան անսպասելի սկսվեց, որ չհասցրին պարենի և ջրի բավարար պաշար կուտակել: Միջնաբերդի ներսում ջուր չկար: Մոտակա աղբյուրը 300 քայլ հեռավորության վրա էր և գտնվում էր թուրքերի աչալուրջ հսկողության ներքո: Ամեն գիշեր մի քանի տասնյակ խիզախներ պարսպից պարաններով ցած էին իջնում՝ աղբյուրից ջուր բերելու, բայց քչերն էին վերադառնում: Չնայած այս բոլոր զրկանքներին՝ բերդի պաշտպանները մնում էին անընկճելի և հերոսաբար դիմադրում էին բազմահազարանոց թշնամու բոլոր գրոհներին:

Տեղեկանք. «Պաշարման բոլոր օրերը նման էին մեկը մյուսին: Ամբողջ օրը բերդը երեք կողմից շրջապատող բարձունքներից գնդակների տարափ էր տեղում, իսկ հունիսի 8-ից ավելացան նաև օրական 40-80 հրանոթային արկեր, որոնք առաջին չորս օրն արձակվում էին լեռնային հրանոթներից, իսկ հետագայում նաև վեցֆունտանոց հրանոթներից»:

Բայազետ քաղաքի պարետի 1877թ. հուլիսի 4-ի զեկույցը Նորին կայսերական մեծությանը՝ Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարին

Չկարողանալով կոտրել մի բուռ քաջերի համառ դիմադրությունը՝ Ֆաիկ փաշան զայրույթը թափեց Ալաշկերտի հովտի հայության վրա. նրա հրահանգով քրդական հրոսակախմբերը հիմնահատակ ավերեցին 24 հայկական գյուղ: Համոզվելով, որ գրոհների միջոցով բերդը գրավելու բոլոր փորձերն անհաջողության են մատնված, հակառակորդը փոխեց մարտավարությունը՝ փորձելով խաբեության միջոցով տիրանալ բերդին: Սկիզբ առած բանակցությունների ընթացքում բերդի կայազորին անձնատուր լինելու մի շարք առաջարկներ արվեցին:



1839թ. օրինակի ամրոցային այս հրանոթներն արագաձիգ կամ հեռահար չէին, սակայն Բայազետի պաշտպանության ընթացքում լիովին արդարացրին իրենց:

Բայազետի ազատագրումը

Բայազետն անառիկ էր և արիաբար դիմադրում էր, բայց այդպես երկար շարունակվել չէր կարող. բերդի պաշտպանների ուժերն սպառվում էին: Անհրաժեշտ էր միջոց գտնել՝ ռուսական զորքերի հրամանատարությանը տեղեկացնելու բերդի օրհասական վիճակի մասին:

Գեներալ Տեր-Ղուկասովին լուր հասցնելու մի քանի անհաջող փորձերից հետո այդ խնդիրը հանձն առան իրականացնել Խոպերյան գնդի կազակ Կիրիլչուկը և պարետի թարգմանիչը՝ հայ կամավոր Սամսոն Տեր-Պողոսյանը՝ Ռաֆֆու «Խենթը» վեպի նշանավոր հերոս Վարդանի նախատիպը[1]: Քրդական զգեստներով ծպտված՝ նրանք անցան հակառակորդի զորքերի միջով: Ճանապարհին Կիրիլչուկն անհետ կորավ, իսկ խիզախ ու հնարամիտ հայ կամավորը, հաջողությամբ հաղթահարելով բոլոր դժվարությունները, հունիսի 14-ին Ալաշկերտի հովտում հանդիպեց Տեր-Ղուկասովին, երբ վերջինս արդեն պատրաստվում էր նահանջի:

Տեր-Ղուկասովը շտապեց որքան կարելի է շուտ օգնության հասնել պաշարվածներին: Հաջողությամբ ավարտելով իր պատմական նահանջը, ավելի քան քսան հազար գաղթականներին և իր հիվանդ ու վիրավոր զինվորներին անցկացնելով ռուսական սահմանը՝ նա, Իգդիրից ռազմամթերք ու պարեն վերցնելով, հունիսի 26-ին շարժվեց դեպի Բայազետ:



Բերդանի 1870թ. օրինակի կարաբինը:



Բերդանի 1870թ. օրինակի հրացանը: Իր ժամանակի լավագույն հրազենի համբավ վայելող «Բերդանկաների» գլխավոր թերությունը նշանառու կրակի փոքր հեռավորությունն էր (մինչև 600 մ), մինչդեռ մոտավորապես նույն մարտավարատեխնիկական բնութագիրն ունեցող[2] թուրքական հրացանների վրա դրված էր գրեթե կրկնակի ավելի մեծ հեռավորության վրա կրակի վարման նշանոցային համակարգ:

---

[1] «Սամսոն Տեր-Պողոսյանի գործունեությունը դրանով չի սահմանափակվում: 1877-1878թթ. պատերազմի հետագա ամբողջ ընթացքում նա ակտիվ և գործուն մասնակցություն է ունենում բազմաթիվ ռազմական գործողությունների՝ աշխատելով որպես լրաբեր, թարգմանիչ, հետախույզ, դրանով իսկ մեծ օգնություն ցույց տալով ռուսական բանակին» (Ա.Ներսիսյան, Հայերի մասնակցությունը 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմին, էջ 80):

[2] Որոշ ցուցանիշներով՝ զիջող:

Արագ արշավով հասնելով Բայազետի մերձակա Զանգեզուր հայկական գյուղ՝ Տեր-Ղուկասովը թնդանոթները տեղաբաշխեց քաղաքի վրա իշխող բարձունքների վրա: Հունիսի 28-ի լուսաբացին սկսվեց քաղաքը պաշարած թուրքական բազմահազարանոց զորքի դիրքերի ուժգին ռմբակոծությունը: Վարպետորեն կազմակերպված ռմբակոծության պաշտպանության ներքո Տեր-Ղուկասովի զինվորները գրոհեցին հակառակորդի դիրքերի վրա: Հակառակորդը կատաղի դիմադրում էր, բայց ի վերջո, չդիմանալով Տեր-Ղուկասովի ջոկատի ճնշմանը, լքեց դիրքերը և նահանջեց:

Տեր-Ղուկասովի զինվորները, կրնկակոխ հետապնդելով հակառակորդին, ներխուժեցին քաղաք: Թուրքական թնդանոթները սկսեցին բարձունքներից ուժգին կրակ տեղալ քաղաք մտնող ջոկատի վրա: Տեր-Ղուկասովն իսկույն առանձնացրեց երկու գումարտակ՝ կարգադրելով ամեն գնով լռեցնել այդ մահասփյուռ կրակակետերը: Շատ չանցած բոլոր բարձունքները գրավված էին: Խոշոր կորուստներ կրելով և ռուսներին թողնելով իրենց 4 թնդանոթները՝ թուրքերն անկանոն նահանջեցին: Հետապնդելով ճողոպրող հակառակորդին՝ Երևանյան ջոկատը մտավ քաղաք: Բերդում պաշարվածները, ոգի առած, սկսեցին օգնել Տեր-Ղուկասովի զորքերի առաջխաղացմանը՝ իրենց ունեցած վերջին արկերով ռմբահարելով խուճապահար նահանջող հակառակորդին: Թուրքական կորպուսը գլխովին ջախջախվեց և ցրիվ եկավ: Հուլիսի 29-ին Տեր-Ղուկասովն իր ջոկատով մտավ Բայազետ և քսաներեք օրվա պաշարումից ազատեց հերոս պաշտպաններին: Քաղաքի ազատագրության համար գեներալ Տեր-Ղուկասովը պարգևատրվեց Սուրբ Գեորգիի 3-րդ աստիճանի շքանշանով:

Ամփոփում

Հայերն անմիջական մասնակցություն են ունեցել ինչպես 1877-1878թթ., այնպես էլ նախորդ ռուս-թուրքական պատերազմներին՝ Կովկասյան ճակատի բոլոր ռազմական գործողություններին, թուրքական տիրապետությունից բնիկ հայկական տարածքների ազատագրությանը: Ռուսական բանակի հայազգի սպաներն ու զինվորները գիտակցում էին իրենց պարտքն ու պատասխանատվությունը հայրենիքի և հարազատ ժողովրդի հանդեպ և կրկնապատկված եռանդով էին մարտնչում ռազմական գործողությունների ընթացքում:

Այս առումով բացառություն չէ 1877թ. հունիսին Բայազետի պաշտպանությունը, որը պատերազմի առավել դրամատիկ և հերոսական դրվագներից է: Գրեթե մեկ ամիս Բայազետի միջնաբերդը ենթարկվեց պաշարման: Չնայած տառապանքներին՝ պաշարվածները հերոսաբար հետ մղեցին հակառակորդի բոլոր գրոհները և պաշտպանեցին միջնաբերդը: Սամսոն Տեր-Պողոսյանի շնորհիվ գեներալ Տեր-Ղուկասովը տեղեկացավ Բայազետի պաշարման մասին, ժամանակին օգնության հասավ և ազատագրեց քաղաքը:

ԱԼԱՋԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ.
3 (15) ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1877Թ.

Ալաջայի ճակատամարտին նախորդող մարտերը

1877թ. սեպտեմբերի 20-22-ին ծանր մարտեր ընթացան Կարսի մարզում՝ Ալաջա (Ալաճա) գյուղի[1] շրջակայքում, որոնցում ռուսական կողմից հիմնական դերակատարները հայազգի երկու գեներալներն էին՝ Հովհաննես Լազարևը և Բեհբուտ Շելկովնիկովը:

[1] Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Շիրակ գավառի Արջոառիճ գյուղը՝ Հայոց Բագրատունյաց դարաշրջանի Անի մայրաքաղաքից 2 կմ հարավ-արևմուտք:

Գեներալ Լազարևն իր զորամասով մի քանի հանդուգն գրոհներ ձեռնարկեց հակառակորդի աջ թևի վրա՝ Մեծ և Փոքր Յաղնի լեռների ուղղությամբ՝ խոշոր կորուստներ պատճառելով նրան: Իսկ գեներալ Շելկովնիկովը, գիշերային գետանցում կատարելով, աննկատ թափանցեց հակառակորդի թիկունք և անսպասելի հարձակում գործեց Ալաջայի լանջերին բանակած նրա ճամբարի վրա՝ խուճապ առաջացնելով քնած զորքի մեջ (տե՛ս քարտեզ 2):

Սակայն կորպուսի հիմնական ուժերի ճակատային հարձակումը չափազանց թույլ և անարդյունավետ ստացվեց, և հակառակորդը կարողացավ հետ մղել այն: Արդյունքում՝ Շելկովնիկովի զորքերը մնացին թշնամու թիկունքում՝ շրջապատված գրեթե ողջ թուրքական բանակով: Իր փոքրաթիվ ջոկատով նա հարկադրված էր միայնակ ճեղքել և դուրս գալ հակառակորդի օղակից: Հարթավայրում ռուսական ճամբարից աջակցություն ստանալով և կարգավորելով իր զորաշարքերը՝ Շելկովնիկովը պատրաստվեց ընդունել մարտը, սակայն թուրքական զորքերն այդպես էլ չհամարձակվեցին արձակ դաշտ դուրս գալ և մարտի բռնվել ռուսական զորքերի հետ:

Գեներալ-լեյտենանտ Բեհբուտ Մարտիրոսի Շելկովնիկովն (1837-1878թթ.) այս պատերազմին մասնակցած հայազգի գեներալներից ամենաերիտասարդն էր:



Մենրի-Մարտինի 1860թ. օրինակի հրացանները «մրցունակ» էին Բերդանի հրացանների դեմ: Ղեկավարվող լծակով երկայնակի-սահող փակաղակի օգնությամբ կրակված պարկուճը դուրս էր նետվում, իսկ փողատակի պահեստատուփից վերալիցքավորումը կատարվում էր շատ արագ:

Սեպտեմբերի 20-22-ի մարտերն անարդյունք չեղան: Մուխթար փաշան կտրուկ փոխեց հարձակողական մարտավարությունը և որոշեց նահանջել՝ բանակը վերակազմավորելու և զինամթերքի պաշարը լրացնելու նպատակով: Գեներալ Լոռիս-Մելիքովն իսկույն արձագանքեց իրավիճակի այս փոփոխությանը. կորպուսի հրամանատարական կետում գեներալ Օբրուչևի մասնակցությամբ մշակվեց թուրքական բանակը շրջապատելու և ոչնչացնելու ծրագիր: Հաշվի առնելով օրեր առաջ գեներալ Շելկովնիկովի կատարած փայլուն թևանցումը՝ այս անգամ ևս նախատեսվում էր երկկողմանի՝ ճակատից և թիկունքից միաժամանակյա հարված հասցնել հակառակորդին: Այս անգամ վճռորոշ դերը հատկացվել էր հայազգի մյուս գեներալի՝ Լազարևի գլխավորած զորախմբին: Վերջինս պետք է աննկատ թևանցեր թշնամու բանակը և անպաշտպան թիկունքից հարված հասցներ նրան:

Գեներալ-լեյտենանտ Հովհաննես Դավթի Լազարևը (1820-1879թթ.) ծնվել է Շուշիում: Նախքան այս պատերազմը հայազգի զորավարն աչքի էր ընկել Կովկասի լեռնականների դեմ պայքարում. 1859թ. Գունիդում գերել է Շամիլին:

Գեներալ Լազարևի զորախմբի թևանցումը

Սեպտեմբերի 30-ին 20 հազարանոց զորախմբով սկսելով թևանցումը և հասնելով Տեկոր՝ գեներալ Լազարևը, հակառակորդին ապակողմնորոշելու նպատակով, տեղի մոլլային առաջարկեց վարձատրության դիմաց աջակցել ռուսական զորքերին և մատնացույց անել Ալաջա տանող ամենակարճ ճանապարհը: Լազարևը գիտեր, որ մոլլան իր առաջարկության մասին անմիջապես կհայտներ Մուխթար փաշային: Եվ իրոք, հաջորդ առավոտյան Լազարևն ականատես եղավ, թե ինչպես են թուրքերն ամրացնում Տեկորի կողմում գտնվող դիրքերը:

Քարտեզ 2

Լազարևը վերստին կանչեց մոլլային և պահանջեց մեկ այլ ճանապարհ մատնանշել: Մոլլան, սակայն, գովեստի խոսքեր շռայլելով ռուսական զորքերի հասցեին, խորհուրդ տվեց անմիջապես Տեկորից գրոհելով գրավել Ալաջան: Լազարևը ձևացրեց, թե հավանություն է տալիս այդ խորհրդին՝ դրանով իսկ Մուխթար փաշային վստահեցնելով, որ իր նպատակը Տեկորի կողմից Ալաջայի վրա գրոհելն է: Մինչդեռ իրականում գիշերով զորաշարժ կատարելով՝ Լազարևի զորախումբն աննկատ շրջանցեց հակառակորդի բանակը և անսպասելիորեն հայտնվեց նրա անպաշտպան թիկունքում՝ փակելով դեպի Կարս նրա նահանջի գլխավոր ճանապարհը: Թուրքական բանակը հայտնվեց ռուսական զորքերի օղակում: Այս հանդուգն ու անսպասելի զորաշարժից անակնկալի եկած Մուխթար փաշան խոշոր ուժեր կենտրոնացրեց գեներալ Լազարևի զորախմբի դեմ՝ իսպառ թուլացնելով իր ճակատային գիծը:

Թուրքական բանակի ջախջախումը

Իր զորքերի հաջող զորաշարժի մասին գեներալ Լազարևը հեռագրով տեղեկացրեց կորպուսի հրամանատար Լոռիս-Մելիքովին[1]: Հայազգի գեներալները լավագույնս օգտվեցին ստեղծված բարենպաստ իրավիճակից՝ հմտորեն իրականացնելով շրջապատված հակառակորդի բանակի մասնատումը և ջախջախումը:

Երկժամյա հուժկու հրետակոծությունից հետո Լոռիս-Մելիքովի գլխավորած կորպուսի հիմնական ուժերն առաջին իսկ գրոհով գրավեցին Ավլիար լեռան ամրությունները, ինչը թուրքական հրամանատարությանը ստիպեց բանակը բաժանել երկու մասի: Թուրքական զորքերը սկզբում համառորեն դիմադրում էին, սակայն երկար չդիմացան ռուսական զորաբանակի երկկողմանի ճնշմանը և փորձեցին կանոնավոր նահանջ կատարել, ինչը, սակայն, նրանց չհաջողվեց:

Հեռագրական կապի հմուտ օգտագործումը հնարավորություն տվեց համաձայնեցված և միաժամանակյա գրոհ ձեռնարկել Վեզին-քյոյի վրա, որտեղ կենտրոնացել էին հակառակորդի հիմնական ուժերը: Այդ ուժերի մի մասը փորձեց դուրս պրծնել ռուսական զորքերի օղակից և հասնել Կարս, սակայն Լազարևի զորախումբը, հետապնդելով ճողոպրող զորքերին, մասնատեց և ցրիվ տվեց նրանց: Ռուսական զորքերի հաջորդ նպատակակետը Ալաջան էր, որը ևս արագ գրավվեց, քանզի բարոյալքված թուրքական զորքերն այլևս անկարող էին պատշաճ դիմադրություն ցույց տալ հակառակորդի երկկողմանի ճնշմանը:

---

[1] Սա Կովկասյան ճակատում մարտական գործողությունների ժամանակ հեռագրի կիրառման առաջին դեպքն էր:

Տեղեկանք. «Սոսկալի իրարանցում է ընկնում թուրք զորքի մեջ, մանավանդ երբ տեսնում են, որ ամենից առաջ իր թիկնապահներով կռվի դաշտը թողեց զորքերի գլխավոր հրամանատար Մուխթար փաշան իր զորքով: Այս նկատելուն պես թուրք թնդանոթաձիգները թողնում են թնդանոթները, փամփուշտի և ռումբերի արկղերը, զինվորական մեծ պաշարը և շտապում են ժամ առաջ թողնել Ալաջայի ամրությունները՝ ուղղվելով դեպի Վիզինքե՝ այդտեղից Ղարս մտնելու նպատակով»:

Սալ-Ման, Գեներալ Ի.Լազարև, էջ 40

1873թ. օրինակի Վինչեստերի հրացաններն ամենաարագաձիգն էին այս պատերազմում, և բավարար պատրաստված անձնակազմ ունենալու դեպքում թուրքական բանակը կկարողանար դիմադրություն ցույց տալ: Հետևաբար, խնդիրը թուրքական բանակի սպառազինության ցածր որակը չէ:

Ռուսական զորքերը կրնկակոխ հետապնդում էին թուրքերի խուճապահար փախչող զորքերին, շրջապատում նրանց և ոչնչացնում կամ ստիպում անձնատուր լինել: Այս ճակատամարտում հակառակորդի կորուստներն ահռելի էին՝ գրեթե 10 հազար: Շուրջ 9 հազար զինվոր գերի ընկավ, որոնց մեջ՝ երկու գեներալ, բարձրաստիճան 250 սպա: Ռուսական զորքերը տիրացան նաև հարուստ ռազմավարի՝ 35 հրանոթ, 8 հազար հրացան, 2 դրոշ: Ռուսական զորքերի կորուստներն էին՝ 202 սպանված և 1240 վիրավոր, այսինքն՝ ճակատամարտին մասնակցած զորքերի սոսկ 2,7 տոկոսը, այն դեպքում, երբ թուրքերը կորցրին իրենց անձնակազմի երեք քառորդը:

Այս հաղթանակի համար հայազգի գեներալներ Լոռիս-Մելիքովն ու Լազարևը պարգևատրվեցին Սուրբ Գեորգիի շքանշաններով: Ալաջայի ճակատամարտում աչքի ընկան և պարգևների արժանացան հայազգի նաև այլ սպաներ՝ Նովրուզովը, Քիշմիշևը, Աթաբեկյանը, Կարապետյանը, Մանսուրյանը և ուրիշներ: Այս ճակատամարտին մասնակցեցին նաև հայկական զինյալ ջոկատները՝ Ալեքսանդրապոլի հեծյալ գունդը, Ելիզավետպոլի, Բորչալուի և Ախալցխայի հայկական զինյալ հարյուրյակները:

Ամփոփում

Ռուսական զորքերի լիակատար հաղթանակը ձեռք բերվեց առաջին հերթին գեներալ Լազարևի զորախմբի հնարամիտ ու սրընթաց զորաշարժի շնորհիվ: Ռազմական խորամանկության կիրառման՝ կեղծ լուրեր տարածելու միջոցով հակառակորդին ապակողմնորոշելով՝ Լազարևն իր զորախմբով աննկատ թևանցում կատարելով անսպասելիորեն հայտնվեց նրա թիկունքում, ինչը և վճռորոշ եղավ ճակատամարտի ելքի համար: Թուրքերի Անատոլիական (փոքրասիական) բանակը գլխովին ջախջախվեց և մեկընդմիշտ անհետացավ պատերազմի թատերաբեմից:

Ալաջայի ճակատամարտից հետո ռուսական բանակը բաժանվեց երկու մասի. մեկը գեներալ Գեյմանի գլխավորությամբ սկսեց հետապնդել դեպի Կարին նահանջող Մուխթար փաշայի զորքերին, իսկ մյուսը՝ գեներալ Լազարևի գլխավորությամբ, շարժվեց դեպի Կարս: Առջևում Կարսի գրավումն էր…

Գեներալ-համիարզ Միքայել Տարիելի Լոռիս-Մելիքովը զորավարական փառքի գագաթնակետին հասավ 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում: Սակայն նա պետական գործիչ էր և պատերազմից հետո նշանակվեց Աստրախանի, Սարատովի, Սամարայի ու Խարկովի նահանգների գեներալ-նահանգապետ, իսկ 1880թ. փետրվարին Ռուսական կայսրության Գերագույն կառավարիչ հանձնաժողովի նախագահ՝ դիկտատորական լիազորություններով:

ԶԵՅԹՈՒՆԻ 1895Թ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո սուլթանական կառավարությունը ոչ միայն չկատարեց հայկական գավառներում բարենորոգումներ մտցնելու վերաբերյալ եվրոպական պետություններին տված իր խոստումները, այլև սկսեց վարել հայերի զանգվածային կոտորածների քաղաքականություն, որում կարևոր տեղ էր զբաղեցնում *համիդիե* գնդերի ստեղծումը: 1891թ. թուրքական կառավարությունը, զինված զորագնդեր կազմակերպելու նպատակով, Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ.Պոլիս հրավիրեց 70 քուրդ ցեղապետերի, որոնց մեծ շուքով ընդունեց Աբդուլ-Համիդ II սուլթանը: Նախատեսվում էր ռուսական սահմանի երկայնքով տեղաբաշխել նոր կազմավորվող հեծյալ գնդեր, որոնց նպատակն էր Ռուսաստանի հետ ապագա պատերազմի դեպքում թուրքական բանակի հետ դիմադրել ռուսներին, իսկ *հայկական ջարդերի իրականացման ժամանակ օգնել թուրքերին:* Քրդական այդ զորախմբերի կազմակերպման գործը հանձնարարվում է 4-րդ բանակի հրամանատար Զեքի փաշային: Նա ստեղծում է 30 գունդ, յուրաքանչյուրում՝ 550 հեծյալ: Կարճ ժամանակում գնդերի թիվը կրկնապատկվում է:

ԶԵՅԹՈՒՆԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶՈՐԱՆՈՑԻ ԳՐԱՎՈՒՄԸ. 15-17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1895Թ.

ԶԵՅԹՈՒՆՑԻՆԵՐԻ «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ»

Հալածանքների նոր փուլ է սկսվում 1892 թվականից, երբ Զեյթունի կառավարիչ է նշանակվում Թևֆիկ բեյը: Ահավոր կեղեքումները, բռնություններն ու զանգվածային բանտարկությունները ծայրահեղորեն սրում են իրավիճակը:

1895թ. հուլիսին Մարաշի կառավարչի և հարկահավաքի լիազորություններով Զեյթունի Արեգին գյուղ է մտնում Ասլան բեյն իր ջոկատով: Շուտով պարզվում է, որ հարկերից ավելի նրան հետաքրքրում են հայ հեղափոխականները: Հանդիպելով զինված գյուղացիների դիմադրությանը՝ Ասլան բեյը նահանջում է: Նա նույնիսկ չի կարողանում ձերբակալել գյուղապետ (քեհյա) Խաչեր Կարապետյանին՝ Զեյթունի 1862թ. ապստամբության հերոսներից մեկի՝ Կարապետի որդուն: Ասլան բեյի «հարկահավաքությունն» ահազանգ էր զեյթունցիների համար և վկայում էր, որ շուտով ջարդերը կարող են տեղափոխվել նաև այս երկրամաս:

Ժողովրդին պայքարի պատրաստելու համար 1895թ. ամռանը Զեյթուն են անցնում հնչակյան գործիչները, որոնք Աղասիի (Կարապետ Թուր-Սարգիսյան) գլխավորությամբ սկսում են ապստամբության նախապատրաստումը: Ապստամբության ղեկավար մարմնի անունից ստորագրված գրեթե բոլոր փաստաթղթերի տակ դրված է Աղասիի ստորագրությունը («Զեյթունի ապստամբության ընդհանուր ղեկավար», «Զեյթունի անկախ կառավարության նախագահ» և այլն), սակայն ապստամբության ղեկավարման գործում շատ մեծ էր նաև Նազարեթ Չաուշի դերը: Նազարեթ Չաուշն աչքի ընկավ և՛ որպես կազմակերպիչ, և՛ որպես զորավար: Աղասիից բացի Զեյթունում էին գտնվում նաև Ապահը (Պետրոս Գմգմյան), Ջելլաթը (Կարապետ Ղրփանոսյան) և ուրիշներ:

1895թ. հոկտեմբերի 12-ին Արեգին գյուղի մոտ Մութ ձոր կոչվող վայրում հրավիրված ժողովը որոշում է պայքար մղել թուրքական բռնակալության դեմ: Որոշվում է Զեյթունի թուրքական զորանոցը գրոհելու համար ուժեր նախապատրաստել: Տեղեկանալով ժողովի մասին՝ թուրքական իշխանությունները համալրում են զորանոցը, իսկ նոր կանոնավոր զորամասեր դեպի Զեյթուն շարժելու համար ժամանակ շահելու նպատակով՝ առաջարկում բանակցություններ սկսել:

Ապստամբների հետ թուրքական զորամասերի առաջին ընդհարումները սկսվում են հոկտեմբերի 15-ին: Մարաշի կառավարչությունն իր ձեռքի տակ եղած զորքերը շարժում է դեպի Զեյթուն: Պատժիչ զորամասերը կանգ են առնում Զահան գետի ափին: Ապստամբների առաջապահ ուժերը Զահան և Բեր-

դուս (Բերդիս) գետերի միացման շրջանում գրոհում են թուրքերի վրա: Չորս ժամ տևած մարտում փոքրաթիվ ապստամբները կարողանում են անցնել Բերդուսի հակառակ ափը, սակայն Մարաշից ակնկալվող օգնությունը չստանալով՝ նահանջում են: Հետագայում այս մարտը հայտնի է դառնում որպես *Բերդուս գետի ճակատամարտ:* Մարտից հետո տեղի է ունենում մի իրադարձություն, որի ազդեցությունն ապստամբության հետագա ընթացքի վրա դժվար է գերագնահատել. նահանջող ապստամբները Զերմունկի դաշտում կտրում են հեռագրալարը՝ խափանելով զորանոցի և Մարաշի կապը:

Օսմանյան կայսրությունում լայնորեն կիրառվող հրացաններից մեկը՝ 1862թ. օրինակի Պիբոդի-Մարտինը, կայծքարե կողպեքի կատարելագործման առավել հաջող փորձերից է: Նկարում ցույց է տրված հրացանի կենտրոնական մասը:

Բերդուսի ճակատամարտի ընթացքում բախում է տեղի ունենում նաև Զեյթունից հարավ-արևմուտք ընկած Ֆռնուզ գյուղի ապստամբների և թուրքական ոստիկանության զորամասերի միջև: Մարտից հետո ֆռնուզցիները, Բարդուղիմեոս վարդապետի գլխավորությամբ, շարժվում են դեպի Զեյթունի զորանոցը և ճանապարհին իրենց միացած մի քանի ջոկատների հետ հոկտեմբերի 15-ի լույս 16-ի գիշերը պաշարում այն: Պաշարված կայազորի վրա հոգեբանական ազդեցություն գործելու նպատակով ապստամբների յուրաքանչյուր ջոկատ մեկական մարտական դրոշ է պարզում: Այս հնարքը զգալի ազդեցություն է ունենում զորանոցում ամրացած թուրքերին ապակողմնորոշելու գործում: Ահաբեկված թուրքական կայազորի հրամանատար Իֆֆետ բեյը չի կարողանում ճիշտ գնահատել մարտավարական իրավիճակն ու չի համարձակվում հակագրոհով զորանոցն ապաշրջափակել, թեև այդ պահին իր տրամադրության տակ ուներ ավելի քան յոթ հարյուր հոգանոց կանոնավոր զորամաս, որն ապստամբներին քանակով չէր զիջում: Թուրքերը կարևոր ժամեր են կորցնում, և նախաձեռնությունն ամբողջությամբ անցնում է ապստամբների կողմը:

Հոկտեմբերի 15-ին թուրքերը Զեյթունում էլ են անհաջողություն կրում: Հայերի շարքերը պառակտելու նրանց ջանքերն արդյունք չեն տալիս: Նրանց չի հաջողվում ապստամբների դեմ տրամադրել Նազարեթ Չաուշի հորեղբոր որդուն՝ Նշան Նորաշխարհյանին: Ավելին, տեղեկանալով, որ ասպտամբները դեպի Զեյթուն են շարժվում, Նշան իշխանն իր ջոկատով սրընթաց գրոհով գրա-

վում է Զեյթունի կառավարչատունը և գերում բոլոր թուրք պաշտոնյաներին: Զինաթափվում և բանտարկվում են նաև քաղաքապահ զինվորները:

Զորանոցի շուրջ մարտավարական իրավիճակն ընդհանուր առմամբ բարենպաստ էր ապստամբների համար: Հոկտեմբերի 16-ին զորանոցը պաշարած ապստամբների թիվը հասնում է երկու հազարի, և նրանք սկսում են պատրաստվել վճռական գրոհի: Ապստամբները կտրում են զորանոցի ջրի մատակարարումը, որով վերջնականապես խուճապի են մատնում կայազորին: Ապստամբության շտաբը տեղակայվում է Սբ Աստվածածին վանքում, որտեղից կարելի էր կազմակերպել ջոկատների փոխգործողությունները:

Չնայած, ի տարբերություն հապճեպ զինված ապստամբների, թուրքական կայազորը հիմնականում համալրված էր կանոնավոր մարտական ուսուցում անցած զինվորներով և ուներ անհամեմատ ավելի լավորակ սպառազինություն, զորանոցում պաշարվածների հաջողության հասնելու հնարավորությունն իրատեսական չէր: Զեյթունցիները վստահ էին, որ զորանոցը կկարողանան գրավել նախքան Մարաշից օգնության շտապող թուրքական բանակի գավառակ հասնելը, սակայն ստեղծված իրադրությունում զորանոցի գրավումը բավարար չէր:

Ապստամբության ղեկավարները որոշում են իրականացնել խիստ հանդուգն մի գործողություն: Մարտական և տեղեկատվական-հոգեբանական հարվածները հասցվելու էին միասնական ռազմավարական պլանի համաձայն: Նախապատրաստական միջոցառումներն ավարտելով՝ ապստամբները սկսում են զորանոցի գրավման բազմաքայլ գործողությունը, որն իրականացվում էր մի քանի ուղղություններով: Առաջին հարվածը հասցվում է զորանոցի շրջակայքի թուրքական շինություններին: Հոկտեմբերի 16-ին և 17-ին ծավալված մարտերի ընթացքում ապստամբները կարողանում են գրավել զորանոցը շրջապատող բոլոր շինությունները, այդ թվում նաև մզկիթը:

Զորանոցի շրջակա շինություններում տեղակայված թուրքական կրակակետերի լռեցմանը զուգընթաց հասցվում է երկրորդ՝ գլխավոր հարվածը, որը տեղեկատվական-հոգեբանական էր: Պաշարվածներին խուճապի մատնելու նպատակով ապստամբները լուրեր են տարածում, թե մեծ տերությունները պատերազմ են հայտարարել Օսմանյան կայսրությանը: Որոշ ժամանակ անց, շարունակելով ապատեղեկատվության շարքը, «սկսում են լուրեր պտտվել» մեծ տերությունների բանակների իբրև թե արդեն սկսած հարձակման մասին: Հոգեբանական գրոհի առաջին փուլի գագաթնակետն է դառնում Կ.Պոլսի գրավման մասին տեղեկատվության տարածումը: Կարճ ժամանակ անց ապատեղեկատվական ցանցը հարստացվում է թուրքերի համար ծայրահեղ անբարենպաստ ևս մեկ կարևոր նորությունով: «Պարզվում» է, որ անգլիական նավատորմը Մերսինում էքսպեդիցիոն բանակ է ափ հանել. *Նրանք օգնության էին շտապում զեյթունցիներին:* Ապատեղեկատվությունն ավելի հավաստի դարձնելու համար թուրքերին լուրեր են հրամցվում անգլիացների երթուղու «ման-

ռամասների» մասին: Մասնավորապես, թուրքերին հայտնի է դառնում, որ անգլիացիները դեպի Զեյթուն են շարժվում Ադանայով:

Թուրքերը, բնականաբար, հակված չէին լիովին հավատալու հայկական կողմից «տրամադրվող» տեղեկատվությանը, սակայն կայազորի սպայակազմը չէր կարողանում կողմնորոշվել լուրերի արժանահավատությունը ճշտելիս: Իսկ հասարակ զինվորները, եթե չէին հավատում լուրերին, ապա միայն այն պատճառով, որ աշխարհաքաղաքական զարգացումների մասին գրեթե ոչինչ չգիտեին: Հակառակորդի կասկածները հիմնավորելու համար առավել նյութական ապացույցներ էին պետք: Այսպիսի միջոց է դառնում զորանոցի մոտ բարձրացված «ֆրանսիական» դրոշը: Նկատենք, որ *ապստամբները ֆրանսիական դրոշ չէին գտել* և բարձրացրել էին Կիլիկիայի ազգային դրոշը, որը շատ նման էր ֆրանսիական եռագույնին: «Ֆրանսիական» դրոշը տեսնող թուրքերն արտագրոհում են՝ ապստամբներից դրոշը խլելու նպատակով: Սակայն զեյթունցիները կրակի տակ էին պահում այն տեղանքը, որով հակառակորդը փորձում էր մոտենալ դրոշին: Գրոհի անդրադարձումը ոգևորություն է առաջ բերում ապստամբների շրջանում ու վերջնական հուսալքության հասցնում թուրքերին: Բացի այդ, պատրաստվում և ապստամբների դիրքեր է հասցվում Չոլոգյան եղբայրների գլխավորած դարբինների խմբի պատրաստած երկաթյա կիսաբոլոր անվավոր մեքենան, որի հետևից կարող էր զորանոցի պատերին մոտենալ հրդեհելու պարագաներ ունեցող մի քանի մարդ: Ապստամբները որոշում են, որ վճռական գրոհի ժամը հասել է:

Ռազմարվեստի տեսանկյունից ուշագրավ է զորանոցը գրոհող ապստամբների մարտակարգը: Ջոկատների անվտանգությունն ապահովելու նպատակով նախօրոք ստեղծվում են նշանառու հայդուկ-որսորդների խմբեր, որոնք կրակի տակ են պահում զորանոցի մուտքերն ու հրակնատները: Ապստամբների պահանջով՝ գերված կայմակամն ու քաղաքապահ ստորաբաժանման հրամանատարը նամակ են գրում զորանոցի պարետին՝ անձնատուր լինելու պահանջով: Նրանք հայտնում էին, որ առաջարկը մերժելու դեպքում ապստամբները ստիպված են լինելու պայթեցնել զորանոցը:

1871թ. օրինակի Հենրի-Մարտինի հրացանի կենտրոնական մասը: Այն թուրքական բանակում սպառազինության էր վերցվել ռուս-թուրքական 1877-78թթ. պատերազմից առաջ և զեյթունցիների հրացաններին գերազանցում էր կրակային հզորությամբ, արագաձիգ էր և հեշտությամբ էր վերալիցքավորվում:

Զորանոցում գտնվող կայազորի հրամանատար Իֆֆետ բեյը հոկտեմբերի 17-ի երեկոյան՝ 60-ժամյա պաշարումից հետո հրամայում է դադարեցնել դիմադրությունը, և զորանոցն ամբողջությամբ հանձնվում է ապստամբներին: Մոտ 700 ռազմագերիները Զեյթունի բնակչության ներկայությամբ գլխիկոր անցնում են ապստամբների սրի տակով: Ապստամբների ձեռքն անցան 2 թնդանոթ, 170 արկ, 600 Հենրի-Մարտինի տիպի հրացան, 120 հազար փամփուշտ, 2 տակառ վառոդ և մեծաքանակ պարեն: Ռազմավարից բացի՝ առգրավվեցին զեյթունցիներից խաբեությամբ հավաքված շուրջ 2 հազար կայծքարե փակաղակով հրացանները: Չնայած ապստամբներին հայտնի էր հակառակորդի վայրագությունը՝ նրանք մարդասիրություն են ցուցաբերում. թույլատրում են Զեյթունից հեռանալ ոչ միայն մոտ 100 կանանց ու երեխաներին, այլև գերված սպաների մեծ մասին:

Թուրքական կայազորի վնասազերծումը վկայում է ապստամբների ղեկավարության մարտավարական անվիճելի հմտությունների մասին: Նրանց կողմից կազմակերպվեց և վարպետորեն իրականացվեց տեղեկատվական-հոգեբանական հարձակում, որը պատիվ կբերեր այդ ժամանակի ցանկացած կանոնավոր բանակի հրամանատարությանը: Հմուտ գործողությունների շնորհիվ լիովին լուծվեց ապստամբների համար կենսական կարևոր նշանակություն ունեցող երկու խնդիր.

1. կայազորի վնասազերծում, որը նրանց ազատեց քանակապես և սպառազինությամբ ճնշող գերազանցություն ունեցող հակառակորդի դեմ երկու ճակատով պայքարելու հեռանկարից,
2. կայազորի հսկողության տակ գտնվող սպառազինության և սննդամթերքի պաշարների առգրավում, որը նրանց թույլ տվեց զգալիորեն մեղմել մանավանդ զինամթերքի կարիքը:

ՖՈՆՈՒԶԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

1895Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4

Զեյթունի կայազորի պարտությունը Պոլսում իրարանցում է առաջացնում, որը Մարաշում վերաճում է խուճապի: Թուրքերը Զեյթուն անվան փոխարեն սկսում են օգտագործել «Ապստամբ լեռ» արտահայտությունը:

Տեղեկանք. «Զեյթունի 1895-96թթ. ասպտամբությունը բռնկվեց միջազգային լարված իրադրության պայմաններում, երբ եվրոպական տերությունների սեղանին էր դրված Հայկական հարցը: Լեռնականների ըմբոստացումն առաջին իսկ օրերից իր վրա գամեց եվրոպական դիվանագետների ուշադրությունը և միջազգային լայն արձագանք ստացավ: Իր ինքնապաշտպանական կռիվներով, ապստամբություններով և զինված ելույթներով Զեյթունը 19-րդ դարի կեսերից արդեն ձեռք էր բերել եվրոպական ճանաչում»:

Լ.Հ. Մկրտչյան, Մեծ տերությունների դիրքորոշումը Զեյթունի 1895-96թթ. ապստամբության նկատմամբ, ԲԵՀ, 2, 1989, էջ 34

Քարտեզ 1


ԶԵՅԹՈՒՆԻ ԵՎ ՇՐՋԱՆԻ ԳԱՎԱՌՆԵՐԸ 1890-ԱԿԱՆ ԹԹ.
ՍԱԼԻՄԻ
Մալաթիա (Մելիտենե)
Զերմիկ
Տարենտոն
Սրկե
ԱՐՏԱՆ
Ընկուզուտ լ.
3090
Սրիտաման
Դարսամ Մսուր (Դիսմ-Մանսուր, Ադիյաման)
ԳԱՐԴՄԱՆ
Բեհեսնի
Քեսուն
Բազարճիկ
ԳԱՐԴՄԱՆ-ՍՈՂՈՏ
ՌՈՒՍ-ԿԱՆԵ
Հռոմկլա (Ռուս-կալե)
Սրուճ
ԲԻՐԵՋԻԿ
Դիր (Բիրեջիկ)
Եփրատ
Կարգամիս (Կարքեմիշ)
Սայջուր
Սյնթաս
Թլպաշար (Թել Բաշիր)
Գոլ
Կիլիգա (Քիլիս)
Ոգոս
Կուրիս
ԱՍՈՒՐԻՔ
Ամոնիա
Ամոնիա
Ամոնիա

Զորանոցի գրավումը բարձրացրել էր ապստամբների ոգին և հաջողության հույսեր ներշնչել: Նրանք զորանոցի վրա ապստամբների կարմիր դրոշ էին բարձրացրել, որի վրա գրված էր «Զեյթունի անկախ իշխանություն»: Հոկտեմբերի 19-ին ստեղծվում է Զեյթունի հեղափոխական ժամանակավոր կառավարություն, որը կազմված էր ընդհանուր ժողովից (գերագույն մարմնի իրավասություններով) և վարչական մարմնից: Բացի այդ, Զեյթունի ու շրջակա գյուղերի աշխարհազորային խմբերի ներկայացուցիչներից քսան հոգանոց ռազմական խորհուրդ է ստեղծվում:

Նոր հաջողություն էր Կապան բերդի տեղում գտնվող համանուն գյուղի ազատագրումը, որը մարտավարական նախադաշտի է վերածվում Ֆռնուզի պաշտպանների համար: Իրադարձությունների վերլուծությունը վկայում է ապստամբների գործողությունների ակտիվ պաշտպանական բնույթի մասին: Հակագրոհները, մարտավարական առումով կարևոր կետերի զբաղեցումը և դրանց միջոցով հակառակորդի վրա ճնշում գործադրելը զգալի առավելություն են տալիս նրանց:

Զեյթունցիներն օգնության են հասնում նաև հարավից իրենց սահմանակից Անդրուն գավառակի հայերին: Նշան Նորաշխարհյանի հեծյալ ջոկատը և Բարդուղիմեոս վարդապետի աշխարհազորայինները նոյեմբերի 3-ին Անդրունի մերձակայքում՝ Ազտի բերդի մոտ, հանդուգն գրոհով ջախջախում են թուրքերին և քշում քաղաքից: Հակառակորդի մնացորդները ցրվում են մի քանի ուղղություններով: Լեռնցիների շեշտակի գրոհի շնորհիվ փրկվում են մի քանի հարյուրի հասնող հայ պատանդ-բանտարկյալները:

Չնայած մի ամբողջ շարք մարտավարական հաջողություններին՝ իրադրությունը բարդ էր: Ապստամբության ղեկավարները հարկադրված Զեյթունում ու Ֆռնուզ գյուղում են կենտրոնացնում ոչ միայն Զեյթունի շրջակա գյուղերի, այլև Անդրուն և Կոկիսոն գավառակների հայկական բնակչությանը: Միայն Ֆռնուզում տեղավորվել էր 1040 ընտանիք՝ մի քանի անգամ ավելացնելով նրա բնակիչների թիվը:

Հակառակորդն «Ապստամբ լեռան» մատույցներում կենտրոնացրել էր մոտ 60 հազարանոց խմբավորում ու տասնապատիկ առավելություն ստացել ապստամբների նկատմամբ: Քանակական ճնշող գերազանցություն ունենալով՝ թուրքական իշխանությունները հույս ունեին արագ ավարտել ապստամբության ճնշումը: Այդ նպատակով նրանք պատժիչ զորքերը բաժանել էին երկու մասի: Մարաշից Զեյթունի վրա արշավող արևելյան կոչված մոտ 40 հազարանոց բանակը գլխավորում էր ապստամբության ճնշման զորքերի ընդհանուր հրամանատար նշանակված չերքեզ գեներալ Ռեմզի փաշան, իսկ Ադանայից Ֆռնուզի վրա շարժվող արևմտյան 20 հազարանոց բանակը՝ Ալի բեկը:

Նոյեմբերյան մարտերում կրած պարտություններից հետո թուրքական զորամասերում ծանր բարոյահոգեբանական մթնոլորտ էր ձևավորվել: Ապստամբների հանկարծակի ու անսպասելի գործողություններն այն աստիճան էին ահաբեկել պատժիչ զորքերի շարքային անձնակազմին ու բաշիբոզուկնե-

րին, որ «Ապստամբ լեռան» պաշտպաններից թվաքանակով անհամեմատ ավելի շատ ուժեր ունենալով հանդերձ՝ նրանք չէին համարձակվում հարձակման գնալ, իսկ եթե, այնուամենայնիվ, հարձակումը սկսվում էր, գրոհող ստորաբաժանումները շարժվում էին՝ անընդհատ «հետ նայելով»:

Թուրքերի առաջին հարվածն իրենց վրա են ընդունում Կապանում դիրքավորված ապստամբների առաջապահ ջոկատները, որոնք չորսժամյա մարտից հետո նահանջում են ու միանում ֆռնուզցիներին: Լսելով Ֆռնուզի պաշարման և այստեղ ստեղծված դժվարին կացության մասին՝ զեյթունցիներն օգնական ջոկատ են ուղարկում: Ջոկատը կարողանում է ճեղքել պաշարման օղակը, բայց տեղ հասնելուց քիչ անց հայտնի է դառնում, որ ապստամբների ուշադրությունը Ֆռնուզի վրա կենտրոնացնելով՝ Ռեմզի փաշան սկսել է Զեյթունի գրավման գործողությունը:

Գյուղաքաղաքի պաշտպանությունն ապստամբության ռազմավարական կարևորագույն խնդիրն էր: Այդ նպատակով Զեյթուն է կանչվում նաև Ֆռնուզ հասած օգնական ջոկատը: Չնայած ջոկատը գյուղի մատույցներում մարտական ակտիվ գործողությունների չի մասնակցում, սակայն կարողանում է լուծել Ֆռնուզի ապաշրջափակման կարևոր գործը: Թուրքական ահռելի բանակի դեմ միայնակ մնացած ֆռնուզցի մոտ 1500 քաջերը սկսում են գյուղի հերոսական պաշտպանությունը, որը հայոց ռազմարվեստի պատմության ուշագրավ դրվագներից է:

Դեկտեմբերի 2-ին թուրքերը գրավում են գյուղից քիչ հեռու գտնվող Սբ Կարապետ վանքը և հրկիզում են այնտեղի հազվագյուտ մատյանները: Ֆռնուզցիները դեպի գյուղ են նահանջում, որտեղ մարտերն էլ ավելի համառ բնույթ են ստանում: Ժամանակակիցների վկայությամբ՝ մարտադաշտը ծածկված էր հակառակորդի դիակներով: Պաշտպանվողները ևս զգալի թվով զոհեր են տալիս, սակայն, չնայած զինամթերքի պակասին, շարունակում են դիմադրությունը: Երեք օր տևած մարտերից հետո ապստամբները սկսում են նահանջել: Ապահի ու Բարդուղիմեոս վարդապետի առաջնորդությամբ կռվող աշխարհազորայինների հետևից թուրքերի շրջապատման օղակը ճեղքում և Զեյթուն են հասնում ավելի քան 5 հազար գաղթականներ: Ֆռնուզից նահանջող երկրորդ շարասյունը՝ Հրաչյայի գլխավորությամբ, կարողանում է հեռանալ ու թաքնվել Ֆռնուզի մոտակա լեռներում:

ՍԱՆԴՈՒԽԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ.
3 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1895Թ.

Մինչ Ալի բեկն ապարդյուն գրոհում էր ամրոցի վերածված Ֆռնուզը, Ռեմզի փաշայի գլխավոր ուժերը (ավելի քան 40 հազար մարդ՝ Կրուպի 13 թնդանոթներով) շարժվում են դեպի ապստամբության սիրտը՝ Զեյթուն: Թուրքերի առաջխաղացման մասին իմանալով՝ ապստամբներն էլ ավելի են ուժեղացնում գյուղաքաղաքի պաշտպանությունը: Սաղիր կոչված զառիվայրի վրա պատնեշներ են պատրաստվում:

Զեյթունի պաշտպանները ապստամբության այս փուլում թուրքերի հետ առաջին անգամ ընդհարվում են դեկտեմբերի 2-ին Սբ Փրկիչ մենաստանի և Սվագենք ու Գալուստենք գյուղակների մոտ: Ապստամբները թարմ ուժերով հաջողությամբ հետ են մղում հրետանու աջակցությամբ ընթացող թուրքական բանակի գրոհը: Մինչև ուշ երեկո թուրքական բանակի առաջխաղացումը կասեցվում է: Երեկոյան ապստամբները թողնում են Սբ Փրկչի մոտակայքի դիրքերը:

Նույն գիշեր ապստամբության ղեկավարների՝ Զեյթունում հրավիրված խորհրդակցության ժամանակ որոշվում է զինել բոլոր նրանց, ովքեր ընդունակ են զենք կրելու, և մինչև վերջ դիմադրել հակառակորդին: Զորահավաքի ենթակա էին 15-70 տարեկան տղամարդիկ: Հաջորդ օրվա մարտերին պատրաստվելով՝ ապստամբները Զեյթունի շուրջը հզոր պաշտպանական համակարգ են ձևավորում: Պաշտպանության կազմակերպման վարպետության վկայություն է այն փաստը, որ «Ապստամբ լեռան» մոտ ծավալված մարտական գործողությունների շուրջ հիսուն օրերի ընթացքում թուրքերին այդպես էլ ոչ մի տեղամասում չի հաջողվում ապստամբների համար անակնկալ հարձակումներ իրականացնել:

Ապստամբների մոտ վեց հազարի հասնող զինված ուժերը բաժանվում են համապատասխան տեղամասերում: Ընդհանուր հրամանատարությունը ստանձնում են Մերկերյանն ու Ապահը: Դեկտեմբերի 2-ի լույս 3-ի ամբողջ գիշերը երկու կողմերն էլ ամենայն լրջությամբ նախապատրաստվում էին հաջորդ օրվա բախմանը, որը կարող էր վճռական դեր խաղալ ապստամբության հետագա ընթացքի վրա: Առաջապահ ջոկատների հաղորդած տեղեկությունները և ընդհանուր իրավիճակի վերլուծությունն ապստամբներին հուշում էր, որ հակառակորդը ձգտելու է գլխավոր հարվածը հասցնել Սանդուխ լեռան ու կիրճի ուղղությամբ:

Նախորդ օրը բավական հաջող դիրքերի տիրացած հակառակորդը մոտեցնում էր ռեզերվները և, ակնհայտորեն, վճռական հարձակման էր նախապատրաստվում: Հասկանալի էր, որ երկրորդ հարվածի կասեցումը դժվարին խնդիր էր լինելու: Զեյթունցիների համար բնութագրական է, որ այս օրհասական պահին ոչ միայն խուճապային տրամադրություններ չէին նկատվում, այլև մարտական բարձր ոգու անկման նշույլներ չկային:

Թուրքերը դեկտեմբերի 3-ի վաղ առավոտյան երեք հիմնական ուղղություններից սկսում են հարձակումը Զեյթունի ուղղությամբ: Սանդուխի տեղամասում

զեյթունցիները զինված էին հիմնականում Հենրի-Մարտինի տիպի հրացաններով, որ ձեռք էին բերել զինանոցը գրավելու ժամանակ: Մարտիկների մի մասն էլ զինված էր կայծքարե հրացաններով: Հսկայական ուժեր մարտի նետելով՝ հակառակորդը ճակատի կենտրոնական հատվածում հաջողության է հասնում, գրավում իշխող բարձունքներից մեկն ու շրջապատում ապստամբների ջոկատներից մեկը: Սակայն ապստամբները նույնիսկ շրջապատման մեջ ընկնելով՝ խուճապի չեն մատնվում: Դիմադրելով անհամեմատ ավելի մեծաթիվ հակառակորդին՝ նրանք կարողանում են արագ վերախմբավորվել, շատ քիչ զոհերով ճեղքել շրջապատման օղակը և նահանջել դեպի Զեյթունի այգիներն ու զորանոցը: Քարայրների մոտ (ձախ թևում) ապստամբները կարողանում են կասեցնել թուրքերի առաջխաղացումը, բայց երբ թուրքերն այս տեղամասում ևս թարմ ուժեր են մարտի նետում, պաշտպանների շարքերը երերում են:

Ժամանակին հասած համալրումը և մարտակարգերում հայտնված իշխան Կարապետ Բասիլոսյանի ոգևորիչ ճառն ապստամբներին թույլ չեն տալիս վհատվել, և նրանք կրկին մարտի են նետվում: Թուրքերին գրված դիրքերում ամրանալ թույլ չտալու համար ապստամբները հակագրոհ են կազմակերպում նրանց վրա: Թուրքերը, հանկարծակիի գալով, չեն հասցնում պաշտպանական մարտակարգ ձևավորել: Հակագրոհն այնքան անսպասելի էր նրանց համար, որ թնդանոթներից մեկը մարտադաշտում թողնելով՝ նրանք փախչում են:

Սանդուխ լեռան վրա և նրա կիրճերում տեղի ունեցող ճակատամարտը Զեյթունի հերոսամարտի փառավոր դրվագներից է: Ուժերի հսկայական գերազանցություն ունենալով հանդերձ՝ թուրքերը չեն կարողանում մարտն ավարտել հաղթանակով: Նրանց ոչ միայն չի հաջողվում լուծել ընթացքից Զեյթունը գրավելու խնդիրը, այլև բարենպաստ պայմաններ ստեղծել հետագա գործողությունների համար: Սանդուխի ճակատամարտը Զեյթունի ճանապարհին ընկած առաջին խոշոր արգելքն էր, որը Ռեմզի փաշան չէր կարողացել հաղթահարել: Թուրքական բանակում կարգապահությունն այն աստիճան էր ընկել, որ նախքան Ֆռնուզի գրավումը և այնտեղից բոլոր զորամասերի Զեյթունին մոտեցնելը Ռեմզի փաշան չէր համարձակվում նոր մեծ հարձակում սկսել:

Տեղեկանք. «Թուրքիայի ճգնաժամային դրությունը, միջազգային լարված հարաբերությունները, Բալկանյան պրոբլեմի վերաբացումը հրամայաբար ստիպում էին Ռուսաստանին և Ֆրանսիային ամենից առաջ լուծել Զեյթունի հարցը: Եթե ապստամբության առաջին ամիսներին այս տերությունները, բավարարվելով մի քանի հայտարարություններով, հանգիստ սպասում էին, թե սուլթանը երբ արյան մեջ կխեղդի այն, ապա դեկտեմբեր ամսից սկսած՝ նրանք աստիճանաբար սկսեցին հասկանալ, որ դիմադրության երկարաձգումը կարող է իսկապես անկանխատեսելի հետևանքներ առաջ բերել: Ընդ որում, նրանք հաշվի էին նստում և այն փաստի հետ, որ սուլթանը չի կարողանում զենքի ուժով ճնշել զեյթունցիներին»:

Լ.Հ. Մկրտչյան, Մեծ տերությունների դիրքորոշումը Զեյթունի 1895-96թթ. ապստամբության նկատմամբ, ԲԵՀ, 2, 1989, էջ 40

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ. 1897Թ.

Ֆիդայական շարժման ընթացքում հայկական ջոկատների ձեռնարկած ամենամեծ գործողություններից մեկը Խանասորի արշավանքն է: Արշավանքն իրականացվել է 1897թ. հուլիսի 25-ին: Նրա նպատակն էր հարված հասցնել քրդական մազրիկ ցեղին, որն ակտիվորեն մասնակցել էր թուրք-պարսկական սահմանի շրջանում հայ ֆիդայիների սպանությանը (Սբ Բարդուղիմեոսի վանքի և Գարահիսար լեռան մոտ): Խանասորի արշավանքի հաջող իրականացումը հնարավորություն էր տալու նաև վերացնել գործող քրդական ավազակախմբերն ու համեմատաբար անվտանգ դարձնել Վանա լճի շրջակա լեռներում մարտնչող ֆիդայական ջոկատներին զենքի մատակարարումը, որը հիմնականում կատարվում էր Ռուսահայաստանից, Պարսկաստանի տարածքով: Արշավանքի գաղափարը տվել է անվանի ֆիդայի Նիկոլ Դումանը[1]:

[1] Ֆիդայական շարժման աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը: «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» գրքույկում նա փորձել է ընդհանրացնել բնակավայրում պայքարի հիմնական առանձնահատկությունները՝ իր ժամանակի ռազմատեսական մտքի ձեռքբերումները կապելով ֆիդայական պայքարի սկզբունքների հետ:

Նիկոլ Դուման
(Նիկողայոս Տեր-Օվանիսյան,
1876-1914թթ.)

Վարդան
(Սարգիս Մեհրաբյան,
?-1943թթ.)

Հ.Յ. Դաշնակցության անդամ լինելով՝ Դումանն առաջարկությունն առաջին հերթին ներկայացնում է կուսակցության ղեկավարությանը: Արշավանքի գաղափարը կյանքի կոչելու գործում վճռական նշանակություն են ունենում Հ.Յ.Դ. հիմնադիրներից մեկի՝ Ք.Միքայելյանի համաձայնությունը և աջակցությունը:

Հատուկ այդ նպատակով Սալմաստում (Իրան) Վարդանի[1] (Սարգիս Մեհրաբյան) հրամանատարությամբ 270 հոգանոց մարտական ջոկատ է ստեղծվում: Հրամանատարի օգնականն էր Իշխանը (Հովսեփ Արղության), հարյուրյակների հրամանատարները՝ Մոկացի Մանուկն ու Էրզրումցի Արամայիսը, իսկ հեծյալ խմբինը՝ Սևքարեցի Սաքոն (Սարգիս Ծովանյան): Ջոկատում Դումանին է վստահվում հիսնյակի հրամանատարությունը:

Ջոկատը կարճատև ու սրընթաց ռազմերթով անցնում է սահմանն ու գաղտնի դիրքեր գրավում Արաուլ լեռան վրա՝ ստորոտում տեղաբաշխված քրդերից մոտ 150 քայլ հեռավորությամբ: Օգտվելով այն հանգամանքից, որ քրդերի ու թուրքերի մտքով անգամ չէր կարող անցնել նման հանդուգն քայլի հնարավորությունը՝ ջոկատը գրեթե ամբողջ գիշեր հանգիստ նախապատրաստվում է գրոհին: Մարտիկներին առաջիկա բախումից առաջ հանգստանալու հնարավորություն է տրվում:

---

[1] Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Վարդանը հայոց կամավորական շարժման առաջնորդներից էր: Առանձին մարտական գործողությունների ժամանակ նրա հրամանատարության տակ գործող 3-րդ կամավորական գնդին էին ենթարկեցվում այլ հայկական կամավորական գնդեր:

Մի քանի խմբերի բաժանվելով՝ ջոկատը լուսադեմին սկսում է մոտենալ դաշտավայրում տեղաբաշխված քրդական շուրջ 250 վրաններին: Քրդերը ջոկատի առաջխաղացումը նկատում են միայն այն ժամանակ, երբ ֆիդայիների և իրենց միջև մնացել էր ընդամենը 40-50 քայլ: Իր ժամանակի լավագույն հրացանը համարվող «մոսիններով»[1] զինված ֆիդայիների գրոհը շեշտակի էր, և քրդերին միայն մեծ կորուստների գնով է հաջողվում նահանջել:

Մարտում ոչնչացվում է քուրդ զինյալների զգալի մասը, իսկ նրանց վրանային «ավանը» մոխրակույտի է վերածվում: Հայկական կողմը տալիս է ընդամենը 19 զոհ: Հաղթողների ձեռքն է ընկնում ավազակապետ Շարաֆ-բեյի սուրը, սակայն ինքը՝ բեյը, հասցնում է փախչել:

Մոսինի 1891թ. օրինակի հետևակային հրացանը համարվում էր լավագույնն աշխարհում:

[1] Տաղանդավոր զինագործ, ռուսական բանակի գեներալ-մայոր Ս.Մոսինի ստեղծած «1891թ. օրինակի» հրացանը հեղինակի անունով ընդունված է կոչել նաև «մոսին»: Այս հրացանի առավելություններից արժե շեշտել նշանառու կրակի հեռավորությունը (2000 մետր): Այդ պատճառով, չնայած փոքրաթվությանը, ջոկատը կարողանում է մոտ տարածությունից արդյունավետ կրակով հաջողության հասնել:

ԽԱՍՏՈՒՐԻ ԿՌԻՎԸ.
1899Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26

Հայդուկային պայքարի մարտավարությունը

Հայդուկային շարժումը ծնունդ առավ իբրև հայ ազգաբնակչության անվտանգությունն ապահովելուն կոչված, զուտ պաշտպանական բնույթ ունեցող զինյալ պայքարի եղանակ: Սակայն 1890-ական թթ. կեսերից հայդուկային շարժման մեջ նկատվում է որոշակի փոփոխություն՝ անցում պարզ պաշտպանողական գործողություններից հարձակողական, հակառակորդի քայլերի կանխարգելիչ գործողությունների, նախահարձակ լինելու միջոցով հակառակորդի պլանների խափանման:

Հայդուկային պայքարի բովում աստիճանաբար ձևավորվեց յուրահատուկ մարտավարություն, որն անկանոն ռազմարվեստի բնականոն զարգացման արդյունք էր: Նախապատվությունը տրվում էր փոքր դյուրաշարժ զորախմբերով անսպասելի, առավելապես գիշերային ժամերին կատարվող հարձակումներին՝ հրաժարվելով հակառակորդի մեծաքանակ զորամասերի հետ ճակատային բախումներից:

«Վանա Պետո»
(Ալեքսանդր Պետրոսյան, ?-1896թթ.),
ավելի հայտնի էր ծածկանունով

Հովսեփ
(Իշխան) Արղության
(1863-1925թթ.)

Հայդուկային շարժման կարևորագույն բաղադրիչներից էին Արևելյան Հայաստանի և Պարսկաստանի տարածքից զենքի և զինամթերքի տեղափոխման համար իրականացվող ռազմերթերը «էրգիր» (Կենտրոնական և Արևմտյան Հայաստան): Առաջին զինատար խմբերը ղեկավարում էին Վանա Պետոն (Ալ.Պետրոսյան), Հ.Արղությանը, Վարդանը, Ն.Դումանը, Ֆարհատը (Սարգիս Օհանջանյան) և ուրիշներ: Զինատար խմբերի ռազմերթերը, որոնք փոփոխական հաճախականությամբ շարունակվել են հայդուկային շարժման ողջ ընթացքում, ազատագրական պայքարի հերոսական դրվագներից են:

Խաստուրի կռիվը

1899թ. հոկտեմբերի 23-ին Սասուն մեկնող զինատար խումբը, դուրս գալով Կարսից, ուղղվեց դեպի հայկական հողերը բաժանող ռուս-թուրքական սահման: Խումբը բաղկացած էր 83 փորձառու և արդեն հեղինակություն վայելող ֆիդայիներից: Խմբի տասնապետերից հիշատակենք Սեպուհին (Արշակ Ներսիսյան) և Սեբաստացի Մուրադին (Խրիմյան): Խմբապետն էր Խանը (Բարսեղ Թիրաքյան)՝ Պոլսի Գում Գափուի ցույցի, նշանավոր Խանասորի արշավանքի մասնակից, որն ավելի ուշ՝ 1903թ. սեպտեմբերին, «Կայծակ» հեծելախմբով Սասուն անցնելիս, զոհվեց Բասենում բորբոքված թեժ մարտում:

Խան (Բարսեղ Թիրաքյան, 1863-1903թթ.)

Սեբաստացի Մուրադ (1874-1918թթ.)

Երրորդ օրը խումբն անցավ սահմանը և Սուկավետ լեռան վրա հանդիպելով սուրհանդակին՝ Խաստուրցի ֆիդայի Ղուկասին, հոկտեմբերի լույս 26-ի գիշերն իջավ Ալաշկերտի դաշտ: Լուսաբացը մոտ էր, և արձակ դաշտում տեղաշարժվող խումբն անխուսափելիորեն կնկատվեր տեղաբնակ քրդերի կողմից: Ուստի, անհրաժեշտ էր որևէ կացարան գտնել՝ ցերեկը պատսպարվելու և գիշերը վերստին ճանապարհ ընկնելու համար:

Ղուկասի առաջարկով խումբը հանգստանալու համար մտնում է Խաստուր և հյուրընկալվում Խաչիկ վարժապետի տանը: Ֆիդայիները թաքնվում են վարժապետի գոմում, պառկում չոր խոտերի վրա և քուն մտնում: Սակայն նրանց երկար հանգստանալ չի հաջողվում. նրանց տեղեկացնում են, որ գյուղը շրջապատվել է մի քանի հարյուր ասկյարներով, որոնց թիվն աճում էր մոտեցող նորանոր ջոկատների հաշվին: Շուտով նրանց միացավ համիդիեական պահակազորը, նաև տեղ հասավ շրջակա գյուղերի թուրք և քուրդ զինված խառնամբոխը:

Ստույգ գիտենալով ֆիդայիների թաքստոցի վայրը՝ հակառակորդը բոլոր կողմերից զգուշությամբ շարժվեց վարժապետի տան ուղղությամբ: Խմբապետ Խանի հրամանով ֆիդայիներն ասկյարներին թույլ տվեցին ընդհուպ մոտենալ գոմին: Երբ հակառակորդն արդեն խմբվել էր գոմի շուրջը, հայ մարտիկների անսպասելի և փոթորկալից կրակը բառացիորեն հնձեց հարձակվողների առաջին շարքերը: Ասկյարները խուճապահար ընկրկեցին: Գո-

մի շուրջբոլորն ընկած էին ասկյարների տասնյակ դիակներ: Աստիճանաբար ուշքի գալով անակնկալ հարվածից՝ ասկյարները դիրքավորվեցին՝ սեղմ օղակի մեջ առնելով գոմը: Սկսվեց բուռն փոխհրաձգություն, որը շարունակվեց մի քանի ժամ:

Հակառակորդն այլևս չէր համարձակվում գրոհ ձեռնարկել, այլ միայն հեռվից եռանդուն հրաձգության միջոցով փորձում էր ճնշել ֆիդայիների համառ դիմադրությունը: Ասկյարներն արդեն մի քանի տասնյակ զոհ էին տվել, սակայն շարունակում էին սեղմել շրջապատման օղակը ֆիդայիների շուրջը: Կորուստներ ունեին նաև հայ քաջերը. առաջինը հերոսի մահով ընկել էր Խանի եղբայրը՝ Միհրանը, ապա սիփանցի Գրիգորը, ոտքից վիրավորվել էր Ավետիսը:

Հրոսակների մեկ այլ խումբ, որին միացավ մերձակա գյուղերի թուրք և քուրդ խառնամբոխը, հարձակվեց գյուղի խաղաղ բնակչության վրա՝ կոտորելու և նրանց ունեցվածքը կողոպտելու նպատակով: Սակայն քաջարի խաստուրցիները չընկճվեցին: Գյուղի բոլոր տղամարդիկ, նաև նրանց միացած կանայք ու երեխաները սկսեցին հերոսաբար դիմադրել ջարդարարներին ով ինչով կարող էր՝ հրազենով, թրերով, նաև եղաններով ու փայտերով, իսկ ավելի ուշ՝ նաև ասկյարներից խլած զենքերով:

Խաղաղ բնակչությանը սպանդից զերծ պահելու համար Խանը կարգադրեց քանդել գոմի հետևի պատը, խումբ-խումբ դուրս գալ գոմից և շրջանաձև կռիվ մղելով՝ շարժվել դեպի գյուղի գերեզմանոց, այնտեղից էլ՝ մոտակա բլուրը և դիրքավորվել նրա վրա: Հարկ էր արագ գրավել գյուղի վրա իշխող այդ բարձունքը, քանի դեռ հակառակորդը չէր դիրքավորվել այնտեղ և ուղիղ նշանառության տակ չէր վերցրել գյուղից դուրս ելնող բոլոր ուղիները: Այս գործը հանձն են առնում Սեբաստացի Մուրադը և Սեպուհը՝ իրենց տասնյակներով:

Դուրս գալով իրենց դիրքերից և խաչաձև կրակ տեղալով՝ այդ երկու տասնյակ ֆիդայիները ճեղքում են շրջապատման օղակը և շարժվում դեպի գյուղի ծայրը՝ գերեզմանոց, որտեղ հակառակորդը վերստին փորձում է նրանց շրջափակել: Մարտը բորբոքվում է նոր ուժով: Ավելի քան երկու ժամ տևած կատաղի մարտից հետո, հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը, հայ մարտիկներին հաջողվում է ճեղքել պաշարման օղակը, դուրս գալ գյուղից և գրավել մերձակա բարձունքը: Դիրքավորվելով այնտեղ՝ նրանք սկսում են բարձրից գնդակոծել գյուղը շրջապատած հակառակորդին: Հակառակորդը բլրին մերձենալ չէր համարձակվում և միայն հեռվից շարունակում էր գնդակոծել ֆիդայիների դիրքերը: Դեռևս գյուղում կռվող ֆիդայիներին ևս հաջողվեց շրջանաձև կրակ մղելով հասնել գերեզմանոց և բլրի վրա դիրքավորված ընկերների կրակի պաշտպանության ներքո բարձրանալ բլուր:

Հաղթական ավարտ

Փոխհրաձգությունը շարունակվեց մինչև երեկո: Երբ արդեն մթնել էր, հակառակորդը մթության քողի տակ զգուշորեն մոտեցավ ֆիդայիների դիրքերին և անսպասելիորեն նետվեց գրոհի: Ասկյարներն այնքան էին մոտեցել դիրքերին, որ այլևս հնարավոր չէր հրացաններով կռիվ մղել, և ֆիդայիները, ապավինելով իրենց մաուզեր ատրճանակներին, սկսեցին դիմահար գնդակահարել երկու թևերից մոտեցող ասկյարներին: Կռվի թեժ պահին հանկարծ Խանը կարգադրեց՝ պառկել: Ֆիդայիները մեկ մարդու նման պառկեցին գետնին և շարունակեցին կրակել: Նրանք պառկած տեղից կրակում էին բոլոր կանգնածների վրա՝ ստույգ գիտենալով, որ թուրքեր են, մինչդեռ վերջիններս խավարի մեջ չկողմնորոշվելով՝ գնդակահարում էին միմյանց: Մարտավարական այս խորամանկ հնարքի շնորհիվ ֆիդայիները խոշոր կորուստներ պատճառեցին հակառակորդին և փախուստի մատնեցին:

Ականատեսների վկայությամբ՝ Խաստուրի կռվին մասնակցել են թշնամու շուրջ 800 հետևազորայիններ, նաև հեծելազոր ու քրդական հինգ ցեղերի ավազակախմբեր: Հակառակորդի զոհերի քանակը 450-500 հոգի էր, այդ թվում՝ 9 շեյխ և 10-15 նշանավոր քուրդ բեկեր: Այդ կռվում հերոսի մահով ընկան 15 ֆիդայիներ, որոնցից հինգը՝ տասնապետ:

Ամփոփում

Խաստուրի կռվից հետո դեպի Սասուն ռազմերթը շարունակել այլևս հնարավոր չէր, և ֆիդայիների խումբը վերստին անցավ սահմանը և վերադարձավ Կարս՝ իր հետ Արևելյան Հայաստան բերելով նաև խաստուրցի մի քանի տասնյակ երիտասարդների: Եվ այսուհանդերձ, մարտը հայդուկային պայքարի պատմության մեջ մնաց իբրև բնակավայրում հայդուկների խմբերով շրջանաձև մարտ մղելով և արագ տեղաշարժեր կատարելով շրջապատումից դուրս գալու, բարձունքի վրա հմտորեն դիրքավորվելու, ապա նաև գիշերը հակառակորդին մոլորեցնող և նրան զգալի կորուստներ պատճառելու նպատակով իրականացված գործողությունների ուսանելի օրինակ:

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԿՌԻՎԸ.
1901Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-27

Արևմտյան Հայաստանում հայդուկային պայքարը 19-րդ դարավերջի համիդյան կոտորածներից հետո բավական թուլացել էր: Շարժմանը ծանր հարված հասցրեց Աղբյուր Սերոբի և իր զինակիցների դավադիր սպանությունը, որից հետո հայդուկների ընդհանուր համաձայնությամբ նոր առաջնորդ ընտրվեց Անդրանիկ Օզանյանը:

1901թ. հոկտեմբերին Գելիեգուզանում տեղի է ունենում հայդուկային պայքարի առաջնորդների խորհրդակցություն, որտեղ որոշվում է գործողությունն իրականացնելու համար ընտրել ոչ թե սովորական, այլ որևէ նշանավոր վայր: Երկար մտորումներից հետո ընտրվում է Մշո Սուրբ Առաքելոց վանքը: Սուրբ Առաքելոց վանքը վաղ քրիստոնեական շրջանի կառույցներից էր, հոգևոր և կրթական խոշոր կենտրոն, որի կամարների տակ էին հանգչում մեր երախտավորներից շատերը՝ Մովսես Խորենացին, Դավիթ Անհաղթը, Ղազար Փարպեցին, Եզնիկ Կողբացին, Ստեփանոս Ասողիկը և ուրիշներ:

Միևնույն ժամանակ, Առաքելոց վանքը ռազմաստրատեգիական կարևոր դիրք ուներ. նա իշխում էր Սասունի լեռնային գյուղերը տանող ճանապարհների ու կիրճերի վրա: Գելիեգուզանի խորհրդակցությունը խնդիր է դնում ամրանալ վանքում, հսկել ճանապարհներին և պաշտպանել շրջապատի հայկական գյուղերի թուրք և քուրդ հրոսակների հարձակումներից:

Առաջին փուլը

1901թ. նոյեմբերի 3-ին Անդրանիկի ղեկավարած հայդուկների խումբը, որի կազմում էին Գևորգ Չաուշը, Սեյտո Պողոսը, Կայծակ Վաղարշակը, Հակոբ Կոտոյանը և ուրիշներ՝ ընդամենը 37 հոգի, ամրացավ Սուրբ Առաքելոց վանքում: Վանքում շուրջ ութ տասնյակ մարդ կար՝ Հովհաննես վարդապետի գլխավորությամբ, որոնց Անդրանիկն առաջին իսկ օրն ուղարկում է Մուշ՝ պատասխանատվությունից զերծ պահելու համար:

Հայդուկները վանքում կուտակում են մեկ ամսվա սնունդ, ջրով լցնում վանքում եղած բոլոր տակառներն ու ջրամանները, ապա շրջակա բնակչության օգնությամբ ամրացնում են վանքի պարիսպները, պատնեշներ և դիրքեր կառուցում: Հակառակորդին մոլորեցնելու և հայդուկների թվաքանակի մասին ուռճացված պատկերացում ստեղծելու համար հատուկ նախապատրաստական աշխատանք է կատարվում: Հայդուկներից յուրաքանչյուրի համար երեքական դիրք է նախատեսվում, որպեսզի նրանք, անընդհատ տեղափոխություն կատարելով, տարբեր դիրքերից կրակ տեղան թշնամու վրա՝ ստեղծելով այն տպավորությունը, թե վանքում առնվազն մի քանի հարյուր ռազմիկ կա:

Շուտով Առաքելոց վանքը շրջափակվում է թուրք զինվորների հոծ շղթայով՝ Ալի և Ֆերիք փաշաների գլխավորությամբ: Նրանց են միանում քրդական հրոսակախմբերը: Թուրքական զորքերի դիրքերը վանքի պատերից ընդամենը 200-250 քայլի վրա էին: Ցրտաշունչ գիշերներից և ձնախառն բքից պատսպարվելու համար թուրքերը Մուշից բռնի բերված հայ վարպետների ջանքերով մոտ 200 գետնափոր տնակներ են կառուցում:

Երկրորդ փուլը

Թուրքական հրամանատարությունը քանիցս պահանջում է, որ ֆիդայիները լքեն վանքը և հեռանան, սակայն ամեն անգամ կտրական մերժում է ստանում: Սկսվում է վանքի գնդակոծությունը: Անընդմեջ շարունակվող հրաձգությանը զուգընթաց՝ թուրքական զորքերը քանիցս փորձում են նաև գրոհով գրավել վանքը, սակայն ամեն անգամ հանդիպում են վճռական հակահարվածի:

Գրեթե մեկամսյա հերոսամարտից Անդրանիկն առանձնացնում է նոյեմբերի 17-ի կռիվը, որն «ահավոր և անբաղդատելի էր» նախորդ կռիվների հետ: Գազազած հայդուկների տոկունության, կամքի և քաջության դրսևորումից՝ թուրքերն, «իրենց ատելության մեջ մոլեգին», սկսում են անընդմեջ գնդակոծել վանքը: Հայ ռազմիկների դիրքերի վրա չորս կողմից տեղացող կրակե հեղեղը ոչ մի վայրկյան չի դադարում:

Երրորդ փուլը

Անդրանիկ Օզանյան
(1865-1927թթ.)

Տևական պաշարումից հետո, համոզվելով, որ վանքն ուժով գրավել չի հաջողվի, հակառակորդը կտրուկ փոխեց մարտավարությունը: Հաջորդ օրը՝ կեսօրին, մի կին կառավարության անունից նամակ է բերում՝ հայդուկների պահանջների մասին հարցումով: Անդրանիկի պահանջով ժամանում են թուրք պաշտոնյաներ՝ լսելու հայդուկների պահանջները:

Սակայն մինչ նրանց գալը զորավարը, թուրքերին ապակողմնորոշելու և իրենց իրական ուժը քողարկելու համար, վանքի ներսում որոշակի վերադասավորումներ է կատարում:

> **Տեղեկանք.** «Վանքին Առաջնորդարանը մաքրեցինք և մոմերուն դատարկ քառասուն սնդուկները բերինք և Առաջնորդարանի մեջ իրարու վրա շարեցինք՝ վրայի չորսհինգ սնդուկները միայն փամփուշտներով լեցնելով: Փամփուշտի այդ սնդուկներուն քով ցիրուցան ձգեցինք փամփուշտ լեցնող գործիքները, անգլիական և տեղական վառոդներուն տոպրակները և սնդուկները: Մենք զմեզ պատրաստեցինք ընդունելու մեր «բարեկամները», որոնք պիտի գային մեզ մոտ՝ լսելու մեր պահանջները»:
>
> ***Անդրանիկ, Առաքելոց վանքին կռիվը***

Մշո Առաքելոց վանքի հերոս
Կայծակ Վաղարշակը
(1875-1904թթ.)

Հայդուկների ներկայացրած 11 պահանջները հանգում էին հետևյալին. ազատել բոլոր քաղաքական բանտարկյալներին, զինաթափ անել ոճրագործ քրդական ցեղերին, քրդերի գրաված հայկական գյուղերը վերադարձնել իրենց տերերին, պատժել կոտորածներ կատարած անձանց և հատուցում տալ զոհերի ընտանիքներին, վերացնել քրդերի սահմանած անօրինական հարկը՝ «կառավարության մեջ կառավարություն չըլլար», գյուղացին ինքը պետք է հավաքի տասանորդը և այլն:

Ի դեպ, Անդրանիկը հատուկ շեշտում է, որ Աղբյուր Սերոբի դահճին՝ Խալիլին ինքն է սպանել և պահանջում է ազատ արձակել այն 31 հայերին, որոնց անհիմն վերագրում էին այդ սպանությունը: Ի վերջո, զորավարը, մատնացույց անելով փամփուշտի սնդուկները, սպառնում է, որ եթե իրենց պահանջները չբավարարվեն, ապա իրենք պատրաստ են ամիսներ շարունակ պայքարել:

Թուրք պաշտոնյաները ժամանակ են խնդրում հայդուկների պահանջների պատասխանը Ստամբուլից ստանալու և ներկայացնելու համար: Այդ ընթացքում, չնայած իրենց իսկ առաջարկով հրադադար էր սկսվել, սակայն հենց իրենք հաջորդ օրը խախտում են այն և վերսկսում հրաձգությունը և միայն հայ ռազմիկների պատասխանից հետո դադարեցնում կրակը:

Գևորգ Չաուշն (1870-1907թթ.) իր պատվանունը ստացել է որպես շարքային ֆիդայի իր կյանքի առաջին իսկ մարտում թուրք հարյուրապետի (չաուշի) սպանելու համար:

Հաղթական ավարտը

Մինչդեռ հայդուկների ռազմամթերքը և սննդի պաշարն սպառվում էին: Ուստի, զորավարը սկսում է խորհել վանքը լքելու և անկորուստ հեռանալու մասին: Անդրանիկը հնարամիտ ծրագիր է մշակում վանքից աննկատ դուրս գալու և թուրքական զորքերի հոծ շղթան ճեղքելով անվնաս հեռանալու համար: Ըստ նրա մտահղացման՝ ինքը, Գևորգ Չաուշը, Սեյտո Պողոսը, Վարդանը և Հովսեփը՝ ճերմակ շապիկներով և գլուխները ևս ճերմակ կտորով փաթաթած, պետք է գնան առջևից, իսկ 50-60 քայլի վրա Հաճի Հակոբի և Բարսեղի գլխավորությամբ նրանց պետք է հետևեն մյուսները՝ զույգ-զույգ շարված: Խմբի հետնապահներն էին Վաղարշակը և Սարգիսը: Զորավարը նշում է նաև շարժման ուղղությունը՝ դեպի Արաբոյի և Արծվի քարերը, ապա ձորով անցնել դիմացի սարալանջը:

Անդրանիկի ղեկավարությամբ մարտիկները վանքի բակում վարժանքներ են կատարում՝ նախատեսվող գիշերային երթի ընթացքում փոխհամաձայնեցված և անսխալ տեղաշարժվելու և գործելու համար:

Նոյեմբերի 27-ի գիշերը, ժամը 3-ին, 6 հազար թուրք զինվորների դեմ 20-օրյա հերոսամարտից հետո, ֆիդայիները, ճերմակ շապիկներով քողարկված, դուրս են գալիս վանքից և, նախապես մշակված ծրագրի համաձայն, գաղտնա-

բար տեղաշարժվելով ձնակույտերի միջով, մոտենում են թուրքական դիրքերին: Հանկարծ առջևից գնացող հնգյակը դեմ-հանդիման հանդիպում է թուրք առաջապահ զինվորներից մեկին: Իսկույն կողմնորոշվելով՝ Անդրանիկը, թուրք հրամանատար ձևանալով, թուրքերեն դիմում է զինվորին. «Ես հարյուրապետ Մեհմեդ էֆենդին եմ, կես ժամ է, որ հոս կխուզարկեմ, և դուք կքնանաք»: Ապա զորավարը սկսում է հարցուփորձ անել թուրք զինվորին, թե անունն ինչ է, որտեղացի է: Այսպես մոլորեցնելով նրան՝ հայդուկները շարժվում են առաջ, և երբ արդեն բավական հեռացել էին, նոր միայն թուրքերը հասկանում են, որ «ջանֆիդայիները փախան»: Այսպես հմտորեն ճեղքելով հակառակորդի շրջապատման օղակը՝ հայդուկներն անկորուստ հեռացան:

Ամփոփում

Մշո Առաքելոց վանքի կռիվը հայդուկների հմուտ մարտավարության լավագույն դրսևորումներից է. փոքրաթիվ ուժերով թշնամու մեծաքանակ զորքի դեմ ամուր և հուսալի պաշտպանության և նախահարձակ գործողությունների կազմակերպում և իրականացում, թշնամուն ապակողմնորոշող քայլերի մի ամբողջ շարք, տեղաշարժի դասական քողարկում:

Թեև հայդուկների միայն մեկ պահանջը բավարարվեց՝ ազատ արձակվեցին այն 31 հայերը, ովքեր բանտարկված էին Խալիլին սպանելու մեղադրանքով, այսուհանդերձ, այս անօրինակ ձեռնարկը մեծ ոգևորություն առաջացրեց ժողովրդի մեջ, ինքնավստահություն ներշնչեց կոտորածներից և բռնաճնշումներից հուսահատված հայությանը, վերականգնեց ֆիդայիների նկատմամբ սասանված հավատը:

ՍԱՍՈՒՆԻ 1904Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանում ստեղծվել էր ծանրագույն իրավիճակ: Ավելի քան երկու տասնամյակ Եվրոպայի տերությունների խոստացած բարենորոգումների ծրագրերը ոչ մի արդյունք չէին տվել:

Այդ ընթացքում թուրքերը Սասունի մերձակայքում հավելյալ զորք էին կուտակում՝ պատճառաբանելով, որ ծրագրված է զորանոցներ կառուցել Սասնո մի քանի գյուղերում: Իրականում օրեցօր սաստկանում էին հայերի հալածանքն ու հարստահարությունը: Ակնհայտ էր, որ հակառակորդը պատրաստվում էր վճռական հարձակման: Այդ պայմաններում խույս տալ կռվից՝ կնշանակեր ինքնակամ զոհաբերվել:

1904թ. հայդուկապետերի հավաքում որոշվեց գալիք մարտերի ընդհանուր հրամանատար ընտրել Անդրանիկին: Նրան պետք է օգնեին Հրայրը (որին պահանջկոտության և սկզբունքային հարցերում աննահանջ դիրքորոշման համար ֆիդայիները կոչում էին «Հրայր Դժոխք» և «Ուրվական») և Գևորգ Չաուշը: Հավաքում որոշվեցին նաև գավառի պաշտպանական գծի հիմնական կետերը. հարավում՝ Տալվորիկը և Իշխընձորը, հյուսիսում՝ Տափըկը և Շենիքը, իսկ կենտրոնում Գելիեգուզանն էր: Անդրանիկը պետք է պաշտպաներ գավառի արևելյան հատվածը, Հրայրը՝ հյուսիսային, իսկ Գևորգն իր ջոկատով ամրացավ Տալվորիկին հարող շրջանում:

«Հրայր Դժոխք» և «Ուրվական» (Արմենակ Ղազարյան, 1864-1904թթ.)

Ուժերի հարաբերակցությունը

1904թ. սկզբներից թուրքական կանոնավոր զորքերը և քրդական հրոսակախմբերը սկսեցին կենտրոնանալ Մշո դաշտում՝ Սասունի շուրջը: Տարբեր գավառներից անընդմեջ նորանոր զորախմբեր էին ժամանում Մուշ, և արդ՝ մարտի վերջին Սասունն արդեն պաշարված էր թուրքական 10 հազարանոց զորաբանակով, որի հրամանատարը չերքեզ Քեոսե բինբաշին էր: Նրան էին միացել շրջակա աշիրեթների շուրջ 7000 քուրդ զինյալներ: Այս ահռելի ուժի դեմ Սասունն ուներ ընդամենը 200 ֆիդայի և 21 գյուղերի շուրջ 800 զինված գյուղացի:

Ինչպես մեկ տասնամյակ առաջ՝ 1894թ. ինքնապաշտպանական կռիվների ժամանակ, այս անգամ ևս նախահարձակի պարտականությունները ստանձնել էին քրդական աշիրեթները: Սա հեռահար նպատակ էր հետապնդում. թուրքական իշխանությունները եվրոպական տերությունների առջև ցանկանում էին պարտակել իրենց իրական մտադրությունը՝ Սասունի իսպառ հայաթափումը՝ Եվրոպային ի ցույց դնելով իրենց «խաղաղասիրական» նկատառումները. իբր կանոնավոր զորախմբերը հարկադրված միջամտում են՝ հայ-քրդական բախումները դադարեցնելու համար:

ՍԱՍՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ 1904Թ.



Քարտեզ 1

Մարտերի սկիզբը

Քրդական հրոսակները հարձակում սկսեցին Շենիք-Սեմալ ուղղությամբ: Հայ զինյալները՝ Սեբաստացի Մուրադի գլխավորությամբ, վճռական հակահարված տալով՝ փախուստի մատնեցին նրանց՝ հալածելով մինչև Շեն գյուղը: Ապրիլի 2-ին քրդերը հարձակում գործեցին Իշխընձորի և Տալվորիկի վրա, սակայն Գևորգ Չաուշի հայդուկները, համառ դիմադրություն ցույց տալով, կասեցրին հակառակորդի գրոհը: Ապրիլի 6-ին նոր հարձակում եղավ Սեմալ-Շենիք ուղղությամբ: Մուրադը շենիքցիներին շտապ տեղափոխեց Սեմալ: Շուտով այնտեղ եկան նաև Անդրանիկն ու Հրայրը: Այս ուղղությունը դարձել էր ճակատի գլխավոր հատվածը (տե՛ս քարտեզ 1):

Ապրիլի 11-13-ի հաղթական մարտերը

Ապրիլի 11-ին ուժգին բախում եղավ Շենիքում: Վաղ առավոտյան թուրք-քրդական ուժերը մոտեցան գյուղին, սակայն մտնել չկարողացան, քանի որ նախորդ օրն առատ ձյուն էր տեղացել և փակել էր ճանապարհները: Սեմալից Շենիք եկան Սեպուհի և Ավետիսի խմբերը, որոնք, սակայն, նույնպես չմտան գյուղ, այլ դիրքավորվեցին գյուղից վեր գտնվող բարձունքների վրա: Կեսօրին, վստահանալով, որ գյուղն ամայի է, թշնամու շուրջ 700 հոգանոց հեծելազորը «հաղթական» երթով մտավ կիսավեր գյուղ և ընկավ հայդուկների դարանը. հայ զինյալները դիրքավորվել էին գյուղի երկու կողմերում և անսպասելիորեն խաչաձև կրակ բացել թուրքերի վրա (տե՛ս Սխ. 1):

> **Տեղեկանք.** «Սեմալցի քեաթիպ Մանուկը՝ իր համագյուղացի զինվորներուն հետ, շենիքցի Ղազարն ու Մանուկը՝ իրենց տասնյակներով, Սեպուհը իր ֆեդայիներու և ալիանցիներու հետ, շենիքցի Չոլոն իր համագյուղացիներու և կելեկանըմցիներու հետ, լաճկանցի Արթինը, Ավետիսն ու ուրիշ մարտիկներ զանազան կողմերե միահամուռ գրոհ կու տան Շենիքի վրա՝ առնելով զայն խաչաձև կրակին տակ և ջանալով կտրել զայն թշնամու բանակեն»:
>
> *Միք. Վարանդյան, ՀՅ դաշնակցության պատմություն, էջ 229*

Չորս ժամ անընդմեջ կատաղի կռիվ էր գնում: Հակառակորդը համառորեն դիմադրում էր և չէր ցանկանում տեղի տալ, բայց ի վերջո չդիմացավ հայ ռազմիկների կրակին և անկանոն նահանջեց դեպի Գալոյի գյուղը: Հակառակորդի կորուստները մի քանի տասնյակի էին հասնում, մինչդեռ հայդուկներից զոհվել էր միայն մեկը:

Ապրիլի 13-ին հակառակորդը 10-12 հազար զորաբանակով դեպի Գելիեգուզան արշավանք սկսեց երկու ուղղություններով՝ հարավից և արևելքից: Հայդուկները ևս համապատասխանաբար բաժանվեցին 2 մասի՝ Անդրանիկը նորից պետք է պաշտպաներ արևելյան՝ Տափլկի գիծը, իսկ Հրայրն իր խմբով՝ հարավի ուղղությունը: Թուրքական զորքերը մոտենում են Սեմալին: Հրայրի կարգադրությամբ հայդուկները դիրքավորվում են գյուղի վերևի քարաժայռերի մոտ և պատրաստվում հակահարված տալ թշնամուն: Թշնամին նախ գրոհ ձեռնարկեց հարավային ուղղությամբ: Սակայն հայ մարտիկները կատաղի դիմադրությամբ ոչ միայն կասեցրին Բերբերի կիրճով թշնամու առաջխաղացման փորձը, այլև հակահարձակման անցնելով՝ փախուստի մատնեցին նրան:

Սեպուհ (Արշակ Ներսիսյան, 1872-1940թթ.)

Կատաղի կռիվ բորբոքվեց Չայ գետի մոտ, ուր դիրքավորվել էին Մուրադի ֆիդայիները: Կռիվը տևեց մինչև ուշ գիշեր: Երեկոյան այնտեղ հասավ Անդրանիկը, և միացյալ ուժերով հարձակում գործեցին հակառակորդի զորքերի վրա:

Սխեմա 1



Քարտեզ 2


Սամսոնի հանդիպումը 1904թ.
Սամսոն լ.
Կարմրուկի լ.
Ցեղերկ
Գերմանշեն
Ցանգ
Ձուկ գետ
Գերմանիա
Սամսոն
Կիրիկ
Կիրիկանգանց
Սուշամբիկ
Կիրիկանգանց
Սամսոն լ.
Ցեղերկ
Գերմանշեն
Ցանգ
Ձուկ գետ
Գերմանիա

Տեղեկանք. «Խուճապն սկսավ թուրքերու և քրդերու մեջ, ցիր ու ցան փախան: Մաս մը զինվորներ, որ մնացել էին հովիտի մեջ, անխնա կոտորվեցան մերոնց ձեռքով: Ֆեդայիները շարունակեցին հետապնդել փախչող թշնամին՝ նետելով զայն դեպի Չայը և այնտեղեն վար, դեպի Շենիքի ու Սեմալի ավերակները: Գիշերը հասնելով՝ կռիվը դադրեցավ»:

Միք. Վարանդյան, ՀՅ դաշնակցության պատմություն, էջ 231

Թուրքերը զգալի կորուստներ կրեցին՝ հարյուրից ավելի սպանված և վիրավոր: Սակայն հայ մարտիկները ևս կորուստներ ունեին, այդ թվում՝ հայ ազատագրական պայքարի անզուգական դեմքերից մեկը՝ Հրայր Դժոխքը, որը զոհվեց Սեմալի պաշտպանության ժամանակ (տե՛ս քարտեզ 2):

Գլխավոր հավաքատեղին Գելիեգուզանն է

Հակառակորդի հարձակման հիմնական թիրախը Գելիեգուզանն էր: Սակայն այնտեղ հասնելու համար նա պետք է հաղթահարեր Մերկեր գյուղի արգելքը, որի պաշտպանությունը ստանձնել էր Սեբաստացի Մուրադը: Ապրիլի 14-ի առավոտյան հարձակումը հայդուկները հաջողությամբ հետ մղեցին: Օգնական ուժերը ևս հակառակորդին հնարավորություն չտվեցին կոտրել հայերի դիմադրությունը, և երեկոյան նա հարկադրված էր նահանջել:

Հաջորդ օրը Մուրադին օգնության հասավ Գևորգ Չաուշը: Այս անգամ հակառակորդը հարձակումն ուղղեց Իշխընձորի վրա: Տալվորիկից Սմբատն իր ջոկատի մի մասին ուղարկեց օգնության: Հակառակորդը մինչև երեկո չկարողացավ գրավել Իշխընձորը:

Հաջորդ օրերին հակառակորդը նորանոր համալրում էր ստանում և ապրիլի 18-ին իսպառ փակեց Սասուն տանող բոլոր ճանապարհները: Թուրքերին միացել էին քրդական աշիրեթները:

Տալվորիկի և Իշխընձորի բնակիչները ևս տեղափոխվեցին Գելիեգուզան, որտեղ ընդհանուր առմամբ կուտակվել էր շուրջ քսան հազար բնակչություն: Անդրանիկի գլխավորությամբ ճշտվեցին դիրքերը և պաշտպանության համար առավել կարևոր հատվածները:

Բնակչության տեղափոխությունը դաշտավայր

Ապրիլի 19-ի առավոտյան սկսվեց գյուղի հրետակոծությունը, որը տևեց երկու օր: Հակառակորդի սաստկացող գրոհները հաջորդում էին մեկը մյուսին: Հայ մարտիկներն անձնազոհ դիմադրում էին, սակայն դա երկար շարունակվել չէր կարող, առավել ևս, որ զինամթերքը գրեթե լիովին սպառվել էր: Ուստի, Ալուճա-

կում հրավիրված ընդհանուր հավաքում որոշվեց խաղաղ բնակչությանն իջեցնել Մշո դաշտի գյուղերը՝ դրանով փրկելով նրան անխուսափելի կոտորածից: Այդ գործը հանձնարարվեց Սեբաստացի Մուրադին, որն այնուհետև պետք է անցներ Վան և այնտեղից զենք փոխադրեր Սասուն, քանի որ Անդրանիկը, Գևորգ Չաուշը 100 ֆիդայիներով մնալու էին լեռներում՝ շարունակելու կռիվը:

Մուրադը շուրջ հինգ հազար հոգու դուրս բերեց կրակե օղակից և անմատչելի կածաններով տեղափոխեց Մշո դաշտի և Դիարբեքիրի գյուղեր: Սմբատն իր 115 ֆիդայիներով ևս իջավ դաշտ՝ իր հետ տանելով բնակչության մի մասին: Մարդկանց մեկ այլ հատված շարժվեց հյուսիս՝ դեպի Շատախ, սակայն ճանապարհին քանիցս ենթարկվեց քրդերի հարձակումներին և գրեթե ամբողջությամբ բռնության զոհ դարձավ: Եվ միայն այդժամ թշնամին գրոհով մտավ Գելիեգուզան, որտեղ դեռևս շուրջ երեք հազար խաղաղ բնակիչ կար՝ ծերեր, կանայք ու երեխաներ, որոնք, անլուր տանջանքների ենթարկվելով, քշվեցին Մուշ:

Վերջին մարտերը

Ֆիդայիների 3-րդ խումբն Անդրանիկի, Գևորգի, Վահանի գլխավորությամբ անընդմեջ կռիվներով բարձրացավ լեռները: Չնայած հակառակորդը կրնկակոխ հետապնդում էր նրանց, սակայն հայդուկներն անընդհատ շրջվում և հուժկու հարվածներ էին հասցնում ոսոխին: Նրանք ամրացան Անդոկ լեռան վրա և 10 օր՝ մինչև մայիսի 2-ը, հաջողությամբ հետ էին մղում բոլոր գրոհները: Կատաղի կռիվ մղելով մինչև զինամթերքի լիովին սպառվելը՝ նրանք հարկադրված Ծովասարից իջան դաշտ՝ այնտեղ շարունակելու պայքարը:

Այստեղ մղած կռիվներից հիշարժան է Գոմեր գյուղի բախումը. մի բուռ ֆիդայիները, ողջ օրը մարտնչելով գյուղը շրջապատած հակառակորդի դեմ, գիշերն աննկատ հեռացան գյուղից: Տարիներ անց այդ օրն Անդրանիկը համարել է իր կյանքի ամենահաղթական օրը:

Հայդուկների անձնազոհ կռիվը շարունակվեց նաև ամռանը: Հուլիսի կեսերին Վանից վերադարձավ Սեբաստացի Մուրադը՝ իր հետ բերելով մեծ քանակությամբ զինամթերք: Բախումները վերսկսվեցին նոր թափով: Այդ շրջանի մարտերից հիշատակելի են Տերքեվանքի, Գոմսի, Կուրավուի, Շամիրամի կռիվները, որոնցում հակառակորդը խոշոր կորուստներ կրեց:

Ամփոփում

1904թ. Սասնո գոյամարտը հայդուկային պայքարի լավագույն դրսևորումներից է: Ողջ ինքնապաշտպանությունը յուրօրինակ հաղթանակ էր, որը Սասունի ժողովրդին փրկեց, թերևս, լիակատար ոչնչացումից:

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

1912 թ. հոկտեմբերին սկսվեց Բալկանյան պատերազմը. Բուլղարիան, Սերբիան, Հունաստանը և Չեռնոգորիան իրենց ազգային իրավունքների վերականգնման համար պայքարի ելան Թուրքիայի դեմ: Այս պատերազմն առիթ դարձավ Հայկական հարցի վերարծարծման համար: Վերսկսվեցին հայ ազգային գործիչների առաքելությունները եվրոպական խոշոր տերություններ՝ Հայկական հարցի համար հայանպաստ լուծում ապահովելու ակնկալությամբ: Հայ հասարակայնության մեջ գերիշխող մտայնությունն էր՝ ամեն կերպ օժանդակել Բալկանյան երկրներում թուրքական լծի տապալմանը՝ դրանով իսկ հող նախապատրաստելով նաև Արևմտյան Հայաստանի ազատագրման համար: Սկսվեց կամավորական խմբերի կազմավորման շարժումը:

Առաջին համաշխարհային պատերազմի մեջ Օսմանյան կայսրության մտնելուց հետո երիտթուրքական կառավարությունը սկսում է իր տիրապետության ներքո գտնվող հայ բնակչության զանգվածային տեղահանությունները և կոտորածները: Հայոց ցեղասպանության ընթացքում թուրքական կառավարության հանցավոր հրահանգներով ոչնչացվում են նվազագույնը 1,5 միլիոն հայեր: Դա 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր: Արևմտյան Հայաստանում հայերը կազմակերպում են դիմադրություն:

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՎԱՇՏԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Բուլղարահպատակ հայերը հոժարությամբ համալրում էին բուլղարական բանակի շարքերը: Սկիզբ առավ նաև կամավորական խմբերի կազմավորման շարժումը, որին ակտիվորեն մասնակցեցին այլ երկրներից, այդ թվում՝ Հայաստանից ժամանած բազմաթիվ հայեր: Բուլղարիայի իշխանությունները թույլատրեցին հայ կամավորականներին կազմավորել իրենց առանձին ստորաբաժանումը՝ կամավորական վաշտը, հայազգի սպաներով ու հայկական դրոշով:

Հայ կամավորական վաշտը պաշտոնապես համալրեց 12-րդ Լոզենգրադյան դրուժինայի կազմը՝ որպես նրա երկրորդ վաշտ: Հրամանատար նշանակվեց երիտասարդ Գարեգին Նժդեհը, իսկ խմբապետ (վոյեվոդ)՝ այդ տարիներին Բուլղարիայում բնակվող զորավար Անդրանիկը: Սահմանված կարգի համաձայն՝ կամավորական վաշտերը կարող էին ունենալ 150-160 մարդ, սակայն, որպես բացառություն, հայերին թույլատրվեց հավաքագրել 230 հոգի: Բացի հայկական վաշտից, բազմաթիվ հայեր ընդգրկվեցին նաև կամավորական բրիգադի այլ զորամասերում: 1912թ. հոկտեմբերի 8-ին վաշտը ողջ կազմով հայկական Սուրբ Աստվածածին եկեղեցում հանդիսավոր պայմաններում երդում տվեց, իսկ հոկտեմբերի 23-ին Սոֆիայի հայերը կամավորներին ճանապարհեցին դեպի ռազմի դաշտ:

Առաջին մարտերը

Կամավորական վաշտը ռազմական գործողությունների թատերաբեմ հասավ նոյեմբերի սկզբին և իսկույն ներգրավվեց ծանր մարտերի մեջ: Ընդամենը չորս օրվա ընթացքում՝ նոյեմբերի 4-7-ը, վաշտը մասնակցեց երեք մարտերի՝ Մեսթանլիի, Ուզուն Համիդլարի և Բալկան-Թորեսի շրջաններում (տե՛ս քարտեզ 1):

Կամավորական 12-րդ դրուժինան, որի կազմում էր հայկական վաշտը, կարգադրություն ստացավ Մարմարայի ծովափը մաքրել թուրքական զորքերից: Անցնելով Կիրջալի քաղաքը՝ դրուժինան անսպասելիորեն ընկավ Մակազ-Թեփեի շրջանում՝ բարձունքի վրա դիրքավորված հակառակորդի ուժգին հրետակոծության տակ և հարկադրված կանգ առավ: Սկսվեց բուռն փոխհրաձգություն, որին հաջորդեց թուրքական զորքերի գրոհը դրուժինայի վրա: Օգտվելով գերիշխող դիրքից և թվական գերակշռությունից՝ հակառակորդը փորձում էր հզոր ճնշման շնորհիվ մասնատել և հետ շպրտել կամավորական ուժերը:

Հակառակորդն ընդհուպ մոտեցավ կամավորականների դիրքերին, բորբոքվեց անզիջում սվինամարտ: Հայկական վաշտն իր վրա կրեց թուրքական զորքերի գլխավոր հարվածը: Այդ առաջին իսկ մարտում հայ կամավորականներն աչքի ընկան տոկունությամբ և խիզախությամբ: Ուշ երեկոյան վաշտն Անդրանիկի և Նժդեհի գլխավորությամբ հակառակորդից գաղտնի առաջացավ դեպի նրա դիրքերը՝ իսպառ կտրվելով կամավորական մյուս զորամասերից: Թուրքական զորքերը հայ կամավորներին ի հայտ բերեցին միայն այն ժամանակ, երբ վերջիններս իրենց դիրքերից սոսկ մի քանի տասնյակ քայլ հեռավորության վրա էին: Հակառակորդը դիմահար կրակ բացեց: Սակայն արդեն ուշ էր: Հայ կամավորները նետվեցին սվինամարտի և կարճատև գոտեմարտից հետո գրավեցին հակառակորդի դիրքերը: Կամավորական դրուժինայի հրամանատար Գանևն ուղղակի ապշել էր հայ ռազմիկների խիզախ գործողություններից և, չթաքցնելով հիացմունքը, անընդհատ կրկնում էր՝ առյուծներ են, կատարյալ առյուծներ:

Ութ օր տևեց հակառակորդի բանակի կրնկակոխ հետապնդումը: Այդ ընթացքում հայկական վաշտը մասնակցեց մի քանի բնակավայրերի ազատագրման մարտերին: Ասես օրինաչափություն էր հաստատվել՝ բոլոր մարտերում հայ կամավորներն առաջինն էին նետվում գրոհի և, չնայած զգալի կորուստներին, ճեղքում էին հակառակորդի պաշտպանության գիծն ու փախուստի մատնում նրան:

Վճռորոշ ճակատամարտը

Հակառակորդի բանակի հետապնդման վերջին փուլը տեղի ունեցավ նոյեմբերի 15-ին Մերհամլի գյուղի մերձակայքում մղված մարտում: Թուրքական զորքերի հրամանատար Մեհմեդ Յավեր փաշան իր զորքերը դիրքավորել էր գյուղի մերձակայքում՝ Մարիցա գետի ափին, և հրետանային հզոր կրակի պաշտպանության ներքո իրեն լիովին ապահով էր զգում (տե՛ս քարտեզ 1): Թվում էր, թե հակառակորդի դիրքերին առանց խոշոր կորուստների մոտենալ հնարավոր չէր, սակայն Անդրանիկը հայկական վաշտն առաջնորդեց ճակատային գրոհի: Այս քայլը, որ վճռորոշ եղավ ողջ ճակատամարտի համար, լիովին անակնկալ էր ոչ միայն հակառակորդի, այլ նաև կամավորական բրիգադի հրամանատար, փոխգնդապետ Ալ.Պրոտոգերովի համար: Վերջինս փորձեց կանգնեցնել հայ կամավորականների գրոհը, սակայն ապարդյուն:

Ինչպես և սպասվում էր, հակառակորդը հայկական վաշտին դիմավորեց հրետանային կրակով: Սակայն մինչ թուրք հրետանավորները կրակը կուղղորդեին առաջ սուրացող հայկական վաշտի վրա, վերջինս շրջանց կատարելով մտավ գյուղի մերձակա ձորակը և անհետացավ տեսադաշտից: Առանց կանգ առնելու՝ վաշտն անցավ ձորակը, զառիվերով բարձրացավ դեպի հակառակորդի դիրքերը և առանց հապաղելու գրոհի նետվեց հակառակորդի առաջին գծի վրա:

Այս ամենն այնքան արագ և անսպասելի էր թուրքական զորքերի համար, որ նրանք, առանց պատշաճ դիմադրություն ցույց տալու, նահանջեցին Մերհամլի, որտեղ և հայտնվեցին լիակատար շրջապատման օղակում: Հակառակորդի բանակն անելանելի, օրհասական վիճակում էր. առջևում կամավորների հոծ և հետզհետե ավելի ու ավելի սեղմվող շղթան էր, իսկ հետևում՝ Մարիցա գետը. նահանջի ճանապարհ չկար: Խուճապի մատնված թուրքական զորամասերը սկսեցին զանգվածաբար անձնատուր լինել: Գերի հանձնվեց նաև հրամանատարը՝ Մեհմեդ Յավեր փաշան:

> **Տեղեկանք.** «Երկու և կես ժամ կտևե, մինչև որ Եավեր փաշան իր 3 գնդապետներով, 242 սպաներով և 10 հազար զորքով կանցնի հայ-պուլկարական զորքերուն առջևեն... Երբ շատերը զարմացած կհարցնեն իրեն, թե ինչո՞ւ այդքան զորքով ու թնդանոթներով անձնատուր եղած էր Անդրանիկին և իր վաշտ մը կամավորներուն, ան կպատասխանե. «Հետևիցս՝ ծովը, առաջիցս՝ կամավորները, ի՞նչ ընեմ»:
>
> *Ա.Չելեպյան, Զորավար Անդրանիկ, էջ 267*

Քարտեզ 1


ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1912Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ-1913Թ. ՄԱՅԻՍ)
ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱ
ՍԵՐԲԻԱ
ՌՈՒՄԻԱ
ՍԵՎ ԾՈՎ
ՍՍ ԾՈՎ
ՄԱՐՄԱՐԻ ԾՈՎ
ՀՈՒՆԱՍՏԱՆ
ԷԳԵՅԱՆ ԾՈՎ
Գալաց
Բրաիլա
Իզմայիլ
Պլոեշտի
Տուրնու-Սևերին
Բուխարեստ
Դանուբ
Օլթ
Կոստանցա (Կոստենջե)
Վիդին
Ռուսե (Ռուսչուկ)
Սիլիստրա
Նիկոպոլ
Զիմնիչա
Պասարջիկ
Պլևնա
Նիշ
Պիրոտ
Տիրնովո
Շումլա
Վառնա
Գաբրովո
Սոֆիա
Շեյնով
Սլիվեն
Կազանլիկ
Բուրգաս
Մարիցա
Պլովդիվ (Ֆիլիպոպոլ)
Մեսթանլի
Էդրինե (Ադրիանոպոլիս)
Կիրջալի
Դեդեագաչ
Ռոդոսթո
Ստամբուլ (Կոստանդնուպոլիս)
Բոսֆորի նեղ.
Դարդանելի նեղ.

Հաղթական ավարտը

Մեհմեդ Յավեր փաշայի զորաբանակի նկատմամբ հաղթանակից հետո հայ կամավորական վաշտը մասնակցեց մի շարք բնակավայրերի ազատագրման մարտերին: 1912թ. վերջերից մինչև 1913թ. ապրիլ ամիսը վաշտը հուսալիորեն պաշտպանում էր Մարմարայի ծովափնյա շրջանը: Բալկանյան պատերազմում Թուրքիան ծանր պարտություն կրեց և զրկվեց իր եվրոպական տարածքներից: Բալկանյան ժողովուրդներն ազատագրվեցին թուրքական դարավոր լծից: Մայիսի 17-ին Լոնդոնում կնքված հաշտության պայմանագրից հետո հայկական վաշտը կազմալուծվեց:

Ամփոփում

Թուրքական լծից բալկանյան ժողովուրդների ազատագրությունը նոր հեռանկարներ էր բացում նաև Հայկական հարցի դրական լուծման համար: Այս առումով հույժ կարևորվում էր հայ ժողովրդի ռազմական զորակցությունն իրենց ազատագրության համար պայքարող ժողովուրդներին: Բալկանյան պատերազմի մարտերում հայկական վաշտը կամավորական միավորման առաջապահ ջոկատն էր, որն իր վրա էր կրում հակառակորդի հարվածը, ապա և ինքն էր առաջինը հարվածում հակառակորդին: Վաշտի բոլոր ռազմիկները դրսևորեցին անձնական արիություն, տոկունություն և մարտավարական հմտություն, մարտերի համար վճռորոշ պահերին իրենց անձնազոհ քայլերով մարտի հաղթական ելքն ապահովելու վճռականություն:

Ինչ վերաբերում է մարտավարությանը, ապա Անդրանիկի՝ հայդուկային բազում մարտերում թրծված հրամանատարի գլխավորությամբ վաշտը, որն ըստ էության կամավորական միավորման հարվածային ջոկատն էր, աչքի էր ընկնում իր անսպասելի և վճռական գործողություններով, որոնց շնորհիվ անակնկալի էր բերում հակառակորդին, խուճապ առաջացնում նրա շարքերում և հասնում էր հաղթանակի:

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ (1914-1918ԹԹ.) ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

1914թ. օգոստոսի 1-ին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Մարտական գործողություններն ընթանում էին երկու խոշոր ռազմաքաղաքական խմբավորումների՝ Անտանտի (Մեծ Բրիտանիա, Ռուսաստան և Ֆրանսիա) և Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի միջև: Նույն թվականի աշնանը հակաանտանտյան խմբավորմանը միացավ օսմանյան Թուրքիան, իսկ մեկ տարի անց՝ Բուլղարիան:

Պատերազմող երկու խմբավորումներն էլ զգում էին մարդկային ներուժի կարիք, ուստի ձեռնամուխ եղան հպատակ ժողովուրդներից կամավորական ստորաբաժանումների ձևավորմանը: Ռուսական իշխանությունները Կովկասում և Անդրկովկասում տեղաբնիկ հայերից, ինչպես նաև ասորիներից, հույներից և նույնիսկ պարսիկներից կազմեցին աշխարհազորային ջոկատներ: Հայերը, մասնակցելով կամավորական շարժմանը, հույս ունեին, որ ի վերջո կլուծվի Հայկական հարցը և Արևմտյան Հայաստանը կազատագրվի օսմանյան բռնապետությունից: Այդ էր պատճառը, որ ոչ միայն ռուսահպատակ, այլև աշխարհի տարբեր երկրներում բնակվող հայերն արձագանքեցին կամավորական շարժմանն անդամագրվելու կոչին: Ցանկացողների թիվն այնքան մեծ էր, որ Հայ կամավոր խմբերի կարգադրիչ մարմինը ստիպված էր ժամանակավորապես դադարեցնել նոր կամավորների ընդունումը: Սկզբնապես որոշվում է կազմակերպել 4 կամավորական ջոկատներ: Հետագայում նրանց թիվը հասնում է 8-ի, որոնցից մեկը՝ պահեստային: 1914թ. հոկտեմբերի վերջին չորս ջոկատներում կար 2482 հոգի: Ջոկատները կոչվում էին նաև դրուժինա, խումբ կամ գունդ:

Դրաստամատ Կանայան (1883-1956թթ.), ռազմական-քաղաքական ականավոր գործիչ

Կամավորական շարժման կազմակերպիչները: Ձախից աջ՝ Քեռի (Արշակ Գաֆաֆյան), Համազասպ Սրվանձտյան, Խանասորի Վարդան (Սարգիս Մեհրաբյան)

Առաջին ջոկատի հրամանատարն էր հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ Անդրանիկ Օզանյանը: Նրա մարտիկների թվաքանակը 1200 էր: Երկրորդ ջոկատի հրամանատարն էր հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Դրաստամատ (Դրո) Կանայանը՝ 382 հոգի, երրորդինը՝ Համազասպ Սրվանձտյանը՝ 430 հոգի, չորրորդինը՝ Քեռին (Արշակ Գաֆաֆյան)՝ 470 հոգի: 600 մարտիկներ գտնվում էին պահեստազորում:

1914թ. հոկտեմբերի 23-ին առաջինը ռազմաճակատ մեկնեց Անդրանիկի ջոկատը, իսկ վերջինը՝ նոյեմբերի 6-ին, Քեռու ջոկատը: Հայ կամավորներն աչքի ընկան մարտական գործողությունների, հատկապես Սարիղամիշի նշանավոր ճակատամարտում և Օլթիի ու Արդահանի շրջաններում մղված մարտերի ընթացքում (տե՛ս հաջորդ ակնարկի քարտեզ 1):

ԴԻԼՄԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ.

1915Թ. ԱՊՐԻԼԻ 18

Օսմանյան բանակի դիվիզիայի հրամանատար Խալիլ բեյը ցանկանում էր օգտագործելով ուժերի գերակշռությունը՝ Դիլմանի մոտ ջախջախել ռուսներին, ապա շարժվել Ջուղա (Ջուլֆա), որտեղ Խալիլի դիվիզիան կհամալրվեր ի հաշիվ թաթար և քուրդ բնակչության, կներխուժեր Զանգեզուր, Արցախ, Ելիզավետպոլի և Բաքվի նահանգները: Այս ուղղության վրա առավել ծանր մարտեր մղվեցին Դիլման քաղաքի շրջանում: Հարցն այն է, որ թուրքական բանակային հետախուզությանը հաջողվել էր պարզել, որ Դիլմանում և շրջակայքում ռուսները սակավաթիվ ուժեր ունեն: Այդտեղ տեղակայված էր միայն գեներալ Ֆոմա (Թովմաս) Նազարբեկովի Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիան՝ 8 գումարտակ,12 հարյուրյակ և 12 թնդանոթ: Նրանց դեմ կանգնած էին Խալիլ բեյի հրամանատարության ներքո գտնվող դիվիզիան և 5-6 հազար քրդական անկանոն ստորաբաժանումները:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ (1914-1917ԹԹ.)

ՍԵՎ ԾՈՎ
Բաթում
Ռիզե
Համշեն
Տրապիզոն
Արդվին
Արտանուջ (Արդանուչ)
Արտահան
Օլոր
Օկամ
Կիսկիմ
Ուղտիս (Օլթի)
Բանակ
Գյումուշխանե
Սպեր
Թորթում
Դարտեզ
Մարիղամիշ
Բաբերդ
Իշխանձոր
Սատաղ
Թիլ
Երզնկա
Դերջան (Մամախաթուն)
Կարին
Բասեն
Վժան
Թեքման
Խնուս
Գեղի (Քղի)
Տուժիկ
Թունջելի
Մեծկերտ
Խարբերդ
Բալու
Մուշ
Սասուն
Խուբ
Խուբլ
Մուփարդին (Նփրկերտ)
Չերմուկ
Տիգրանակերտ (Սիլվան)
Արծն (Խարզան)
Բիթլիս (Բաղեշ)
Խիզան
Շատախ
Ալաշկերտ
Մանազկերտ
Սիփան լ.
Արճեշ
Խլաթ
Արծկե
Դատվան
Վան
Արտամետ
Խորգոմ
Բերկրի
Բայազետ (Դարոյնք)
Նպատ լ.
Մակու
Թոնդրակ լ.
Նախիջևան
Զուղա (Զուլֆա)
Չորս
Զարավանդ (Զուրաբադ)
Խոյ (Հեր)
Դիլման
Սալմաստ
Գարահիսար լ.
Ուրմիա լիճ
Թավրիզ
Սարանդ
Մեղրի
Որդուար
Կապան
Գորիս
Սիսիան
Իշխանասար լ.
Քարվաճառ
Մազրա
Գոմշասար լ.
Գանձակ (Ելիզավետպոլ)
Գետաբեկ
Քարհատ
Սեւանա լիճ
Գավառ (Նոր-Բայազետ)
Աշտարակ
Թալին
Էջմիածին
Երևան
Սարդարապատ
Իգդիր
Կողբ
Սինակ լ.
Բարդող լ.
Կաղզվան
Ծիրանեաց լ.
Սուկավետ լ.
Այծպտկունք լ.
Մասիս լ.
Սիս լ.
Ծաղկաձոր
Ղարաքիլիսա
Կարս
Անի
Կումայրի (Ալեքսանդրապոլ)
Ամասիա
Ալավերդի
Խաղխաղ (Ղազախ)
Շամքոր
Թիֆլիս
Սղնախ
Ճար (Զաքաթալա)
Բելական
Մարնեուլի
Բոլնիս Խաչեն
Ախալքալաք
Ախալցխա
Ծաղկա
Սրծն լ.
Ռիզե
Համշեն
Տրապիզոն
Կաճկաբար լ.
Կիսկիմ
Օլոր
Օկամ
Արդվին
Արտանուջ
Արտահան
Սարիղամիշ
Կարս
Անի
Թալին
Աշտարակ
Գավառ
Սեւանա լիճ
Մազրա
Գոմշասար լ.
Գանձակ
Գետաբեկ
Քարհատ
Քարվաճառ
Սիսիան
Գորիս
Կապան
Մեղրի
Որդուար
Սարանդ
Թավրիզ
Դիլման
Սալմաստ
Ուրմիա լիճ
Գարահիսար լ.
Խոյ (Հեր)
Զարավանդ (Զուրաբադ)
Զուղա (Զուլֆա)
Չորս
Նախիջևան
Մակու
Թոնդրակ լ.
Բերկրի
Բայազետ (Դարոյնք)
Նպատ լ.
Ալաշկերտ
Մանազկերտ
Սիփան լ.
Արճեշ
Խլաթ
Արծկե
Դատվան
Վան
Արտամետ
Խորգոմ
Գարահիսար լ.
Դիլման
Սալմաստ

1915թ. ապրիլի 15-ի լույս 16-ի գիշերը հակառակորդն անցավ հարձակման: Ռուսական զորամասերը հայտնվեցին բարդ վիճակում և դժվարությամբ էին դիմակայում թուրք-քրդական ուժերի ճնշմանը (տե՛ս քարտեզ 1):

Գեներալ Թովմաս Նազարբեկյան
(1854-1929)

Պատմական տեղեկանք. «Այդ ծանր րոպեին ես նկատեցի առաջացող ոչ մեծ զորամաս: Պարզվեց, որ դա հայկական Առաջին դրուժինայի վաշտն էր Սումբատի (Սմբատ Բորոյան, Մախլուտո) գլխավորությամբ...»:

Գեներալ Թ.Նազարբեկովի անտիպ հուշերից: Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 45

Գեներալի հրամանով հայ կամավորները դիրքեր գրավեցին Մուխանջիկ գյուղից հարավ-արևելք: Թ.Նազարբեկովը, գիտակցելով, որ ճակատամարտի ողջ հաջողությունը կախված է հայ ռազմիկների տոկունությունից, հրամայեց Սմբատին «մեռնել, բայց չնահանջել»: Առավել ծանր մարտեր մղում էին հայ կամավորները, քանի որ նրանց զբաղեցրած դիրքերը Դիլմանի բանալին էին: Դրուժիննիկները մի քանի անգամ ձեռնամարտի բռնվեցին հակառակորդի



Ամերիկացի զինագործ Մաքսիմի գնդացիրը: Այդ և նմանատիպ գնդացիրներն էին կազմում պատերազմող բանակների հրաձգային վաշտերի կրակային հզորության հիմքը:

հետ: Սմբատի անվեհերության շնորհիվ հակառակորդի բոլոր սրընթաց հարձակումներն ապարդյուն անցան, և դրանից հետո հակառակորդը դադարեցրեց հարձակումն ու նահանջեց:

1915թ. ապրիլի 17-ին Մարանդ ժամանեցին լրացուցիչ ռուսական զորամասեր, որոնց թվում՝ Հայկական 1-ին դրուժինայի մնացած վաշտերն Անդրանիկի հրամանատարությամբ: Ապրիլի 18-ի վաղ առավոտյան Խալիլ բեյն իր ուժերը նետում է վճռական հարձակման: Թուրքական գլխավոր հարվածն ուղղված էր Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի պաշտպանության կենտրոնին՝ Մուխանջիկին և աջ թևին: Կենտրոնի պաշտպանության ողջ ծանրությունն ընկած էր հայ կամավորների վրա: Գեներալ Թ.Նազարբեկովը շտապ այնտեղ է ուղարկում մեկ գումարտակ, չորս թնդանոթ և երեք գնդացիր:

Հրետանին տեղակայվեց Անդրանիկի մատնանշած վայրում: Հակառակորդի հերթական հարձակումը հետ մղելուց հետո Թ.Նազարբեկովը հրամայում է դիվիզիային անցնել հակահարձակման: Անդրանիկն իր դրուժինայով թուրքերին դուրս է

Ազատագրական շարժման աչքի ընկնող գործիչ Սմբատ Բորոյան (Մախլուտո, 1881-1956թթ.)

1902թ. օրինակի 76,2 մմ-ոց թնդանոթն ավելի հայտնի է որպես «երեքդյույմանոց»[1]: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ կամավորական գնդերի հարձակողական գործողությունների ուժեղացման հիմնական կրակային միջոցն էր:

[1] Մեկ դյույմը հավասար է 2,54 սմ-ի:

Արշակ Գաֆաֆյան
(Քեռի, 1858-1916թթ.)

Հայկ Բժշկյան
(1887-1937թթ.)

մղում Բարչիշլի գյուղից: Այս բնակավայրի գրավումը վերջնականապես ամրապնդեց հաղթանակը:

Դիլմանի ճակատամարտում թուրքերի կորուստը կազմել է մոտ 2 հազար սպանված: Ռուսներն ունեցել էին 600 սպանված և 800 վիրավոր: Հայ կամավորներից զոհվել էր 21 և վիրավորվել 55 հոգի:

Դիլմանի հաղթանակը կարևոր նշանակություն ունեցավ: Այն ոչ միայն ձախողեց Կովկասը և Անդրկովկասը նվաճելու օսմանյան հրամանատարության ռազմաքաղաքական ծրագրերը, այլև ամրացրեց հերոսական պայքար մղող Վանի հայության ինքնապաշտպանության ոգին:

1916թ. մարտից սկսած՝ հայ կամավորական ջոկատները լուծարվում են: Նրանց հենքի վրա կազմավորվում են վեց հրաձգային գումարտակներ:

Հայ կամավորներն աչքի ընկան Կովկասյան ռազմաճակատի այլ տեղամասերում: Նրանց սխրանքները բազմիցս նշել են ռուս զորահրամանատարները, որոնք մեծագույն գովեստով էին խոսում հայ կամավորների մասին, աշխատում էին, որպեսզի հայերն անպայման ընդգրկվեն իրենց զորամասերում: Այս կարգի վկայությունները բազմաթիվ են:

Պատմական տեղեկանք. «Դրուժիննիկները գերազանց հանդերձավորված էին: Զինված էին ռուսական հրացաններով, շատերի մոտ կային «Մաուզեր» սիստեմի ատրճանակներ... Հայ դրուժիննիկներին շատ ռազմատենչ տեսք էին տալիս կրծքի և գոտու վրայի փամփշտակալները... Դրուժիններին կից կային հեծյալ հետախույզների հարյուրյակներ՝ ուժեղ և ժիր ղարաբաղյան նժույգների վրա...»:

Елисеев Ф.И., Казаки на Кавказском фронте. 1914-1917, стр. 86

Իրենց զորավարական տաղանդով աչքի ընկան Անդրանիկը, Դրոն, Համազասպը, Խանասորի Վարդանը (Սարգիս Մեհրաբյան), Հովսեփ Արղությանը, Հայկ Բժշկյանը[1]: Գրիգոր Ավշարյանը և Քեռին ընկան հերոսի մահով: Մարտական գործողությունների ընթացքում մոտ 800 կամավորներ զոհվեցին մարտադաշտում: Կամավորները պարգևատրվեցին Սբ Գեորգիի մոտ 500 խաչերով և մեդալներով:

[1] Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի տարիներին գլխավորեց լեգենդար «Երկաթե դիվիզիան»:

1915Թ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Կատաղի ինքնապաշտպանական մարտեր են ընթանում Վանի նահանգի Շատախ գավառի Կենտրոն Թաղում: Վերջինս բաժանվում էր երեք թաղամասերի՝ Վերին, Ներքին և Ջրաղացի: Թաղը գտնվում էր Սիվտկնա և Վերին Տիգրիս գետերի միախառնման և երեք խորունկ ձորերի միացման վայրում:

Նահանգում կատարվող բռնություններն ու սպանությունները, շատախցի մի քանի աչքի ընկնող գործիչների ձերբակալությունը հարկադրում են հայերին նախազգուշական միջոցների դիմել: Ստեղծվում է Ձինվորական մարմին, որի ղեկավար է ընտրվում Բաղդիկ (Ազատ) Սիմոնյանը: Թաղը բաժանվում է ութ դիրքերի՝ 114 մարտիկներով: Առանձնացվում է 30 հոգուց բաղկացած պահեստազոր՝ Սահակ Չոլոյանի հրամանատարությամբ: Ինքնապաշտպաններն ունեին բավարար քանակությամբ սև վառոդ, որը հնարավորություն էր տալիս լիցքավորել կայծքարե հրահաններով հրացանները: Սկզբնական շրջանում օսմանյան իշխանությունները հայերի դեմ կենտրոնացրել էին 150 զինվոր և երկու թնդանոթ: Այնուհետև զգալի համալրում ստացվեց՝ ավարի և կողոպուտի ակնկալությամբ հավաքվեցին մոտ երկու հազար քրդեր:

1915թ. ապրիլի 1-ին սկսվեց Թաղի ինքնապաշտպանությունը: Ունենալով ռազմամթերքի մեծ պաշար՝ հակառակորդն անընդհատ գնդակոծում էր հայկական դիրքերը, իսկ հայերը հարկադրված էին լինում պատասխանել հատուկենտ կրակոցներով՝ խնայելով փամփուշտը: Չկարողանալով ճեղքել շատախցիների պաշտպանությունը՝ իշխանությունները ժամանակ շահելու և ուժերը համալրելու նպատակով առերես դիմում են բանակցությունների: Մարտերը ժամանակավորապես դադարում են:

Ապրիլի 5-6-ը համալրում ստանալով՝ հակառակորդը վերսկսում է մարտական գործողությունները:

Վանի նահանգապետ Ջևդեթ բեյին զայրացրել էր Թաղի դիմադրությունը: Նա ճգնում էր շտապ ճնշել շատախցիներին, որպեսզի ազատված ուժերն ուղղի Վանի ինքնապաշտպանների դեմ: Նահանգապետի կարգադրությամբ Շատախ ուղարկվեցին լազերի մեկ գումարտակ և 300 քրդերից բաղկացած զորաջոկատ, որոնք, սակայն, չկարողացան ճեղքել հայերի պաշտպանությունը:

Ապրիլի վերջերին հակառակորդը, օգտվելով թվային և կրակային գերակշռությունից, սկսում է նեղել ինքնապաշտպաններին՝ հարկադրելով թողնել մի քանի դիրքեր: Հատկապես անզիջում մարտեր են ծավալվում ջրաղացի համար, որտեղից հայերը ստանում էին ալյուրի հիմնական պաշարները: Շատախցիներին հաջողվում է հետ մղել թուրք-քրդական գրոհները՝ ոչնչացնելով 15 զինվոր: Չնայած մի շարք մարտական հաջողություններին, իրադրությունն օրեցօր սպառնալից էր դառնում: Զգացվում էր զենքի, զինամթերքի և մարտիկ-

ների պակասը: Շատախցիներից մեկի վկայությամբ. «Թաղի դրությունը շատ հուսահատական էր»:

Միաժամանակ, Թաղից առանձին, դիմադրական մարտեր են ընթանում գավառի մի քանի հայկական գյուղերում: Արմշատ գյուղը պաշտպանող հայ մարտիկները ոչ միայն հետ մղեցին քրդերին, այլև գերեցին 10-12 հոգու: Չնայած ստեղծված ծանր վիճակին, հայերը չէին կորցնում ոգու արիությունը: Նրանք որոշում են նույնիսկ ինքնաշեն թնդանոթներ պատրաստել, որն իրագործում են հայր և որդի Նալբանդյանները: Կանայք և աղջիկները, գործին գիտակ մասնագետի գլխավորությամբ, պատրաստում էին սև վառոդ՝ լրացնելով զինամթերքի պաշարը:

1915թ. մայիսի 2-ին քրդական բազմաքանակ ուժերը նոր հուժկու հարձակում են ձեռնարկում: Ինքնապաշտպաններին հաջողվում է ուժերի գերագույն լարումով հետ մղել հակառակորդին: Մայիսի 8-9-ը Թաղ են շտապում գավառի զանազան մասերից ինքնապաշտպանական խմբեր: Դա հնարավորություն է տալիս լրացնել մարտիկների շարքերը և կասեցնել քրդական անընդմեջ գրոհները:

> **Պատմական տեղեկանք.** «Կռիվը միայն Վանի մեջ չէր, շրջակա գավառները նույնպես կռիվների մեջ էին: Հարկավոր էր շտապ օգնության հասնել գավառներին: Ժամանակ չկորցնելով, հենց մյուս օրը մի դրուժինա Դրոյի ղեկավարությամբ ուղարկեցի Շատախի կողմերը: Վանի և Շատախի կռիվները հերոսական են եղել»:
>
> ***Արարատյան գնդի հրամանատար Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) անտիպ հուշերից, Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 402***

Թաղի պաշտպանները զգում են, որ հակառակորդի հարձակումների թափն աստիճանաբար թուլանում է: Լուրեր են հասնում, որ հայկական կամավորական դրուժինաները և ռուսական զորամասերը մտել են Վան: Հայերի նախաձեռնած հոգեբանական գրոհի արդյունքում հակառակորդը լքում է դիրքերը և փախուստի դիմում: Իսկ մայիսի 14-ին Հայկական 2-րդ դրուժինան Դրոյի հրամանատարությամբ մտնում է Թաղ: Մոտ մեկ և կես ամիս տևած մարտերի ընթացքում հայերի կորուստը կազմում է 150-160, իսկ հակառակորդինը՝ 500-600 հոգի:

ՎԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արմենակ Եկարյան
(1870-1925թթ.)

Վանի հայկական թաղամասերից Այգեստանն ուներ 20 հազար, իսկ Քաղաքամեջը՝ 2500 բնակիչ: Վանի նահանգապետ Զևդեթ բեյի հրամանով օսմանյան բանակն օղակում է հայկական երկու թաղամասերը: Սպառնացող վտանգը հարկադրում է վանեցիներին կազմակերպել թաղամասերի ինքնապաշտպանությունը: 1915թ. ապրիլի 5-ին Այգեստանում կազմվում է «Վանի հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին», կարճ՝ Զինվորական մարմին: Նրա կազմում սկզբնական շրջանում մտնում են Արմենակ Եկարյանը (նախկին արմենական, սահմանադիր-ռամկավար), Կայծակ Առաքելը, Բուլղարացի Գրիգորը, Արամ Մանուկյանը (երեքն էլ՝ ՀՅԴ անդամներ), Փանոս Թերլեմեզյանը (անկուսակցական) և ուրիշներ:

Այգեստանի ռազմական ղեկավար է ընտրվում հայդուկային պայքարի մեծ փորձ ունեցող Ա.Եկարյանը: Քաղաքամեջի Զինվորական մարմնում ընդգրկվում են Լևոն Գալճյանը, Միհրան Թորոմանյանը, Միհրդատ Միրզախանյանը, Սարգիս Շահինյանը, Դավիթ Սարգսյանը, Հայկակ Կոսոյանը (ղեկավար) և Հարություն (Հարո) Ներկարարյանը (բոլորն էլ՝ ՀՅԴ անդամներ):

Վան քաղաքի և նահանգի հայության ոչնչացումը հանձնարարված էր նահանգապետ Զևդեթ բեյին: Նրա մոտ է ուղարկվում գերմանական բանակի կապիտան (հետագայում՝ գեներալ, ծագումով վենեսուելացի) Ռաֆայել դե Նոգալեսը:

Երեք օր շարունակ հայկական թաղամասերը նախապատրաստվում էին ինքնապաշտպանության: Այգեստանը բաժանվեց յոթ պաշտպանական շրջանների՝ 79 դիրքերով, իսկ Քաղաքամեջը՝ չորս շրջանների, 25 դիրքերով: Յուրաքանչյուր դիրք ուներ.

- կապավոր,
- հետախույզ,
- սանիտարական ստորաբաժանում,
- ամրություններ նորոգող ստորաբաժանում:

Յուրօրինակ մոբիլիզացիայի արդյունքում ռազմական գործին ծառայեցվեցին ամենատարբեր մասնագիտությունների տեր մարդիկ: Այսպես, զենքերը վերանորոգելու և փամփուշտները լիցքավորելու նպատակով կազմակերպվում է զինագործական արհեստանոց: Այստեղ ընդգրկված էին 50-ից ավելի ոսկերիչներ, արծաթագործներ և փորագրիչներ: Պրոֆեսոր Միքայել Մինասյանին հաջողվեց պատրաստել անծուխ (պիրոքսիլինային) վառոդ: Կազմվում է «Ամրաշեն խումբ», ուր ընդգրկվում են մոտ 1800 տղամարդիկ: Նրանց կողմից փորվեցին խրամատներ, հակառակորդի հետ անմիջական շփման տեղամասերում գտնվող տներն ամրացվեցին, վերածվեցին հենակետերի և միմյանց հետ կապվեցին ստորգետնյա հաղորդակցության ուղիներով: Ամեն ինչ կառուցվում էր ռազմական գիտության կանոններով:

Այգեստանի ներքին կարգուկանոնը հսկելու նպատակով կազմակերպվում է ոստիկանություն: Ոստիկանապետ է նշանակվում Գրիգոր Ճոնյանը: Նրա ղեկավարության ներքո կար 50 ոստիկան, որոնք կրում էին հատուկ թևկապեր՝ «Ոստիկան» մակագրությամբ:

Թաղամասի կարգ ու կանոնը պահպանելու, ինչպես նաև սանիտարական վիճակի հսկողություն սահմանելու նպատակով կազմակերպվեց քաղաքապետարան:

Վանի պաշարումն իրականացնող թուրք-քրդական ուժերի թվաքանակը հասնում էր 12 հազար հոգու: Նրանք զինված էին մի քանի տասնյակ թնդանոթներով և գնդացիրներով: Մեծաքանակ և սպառազինությամբ գերազանցող հակառակորդին քաղաքի հայությունն ի վիճակի էր հակադրել մոտ տասն անգամ քիչ ուժ: Այգեստանում կար 1053, իսկ Քաղաքամեջում՝ 100-120 մարտիկ:

Մարտական գործողությունները սկսվեցին 1915թ. ապրիլի 7-ին, վաղ առավոտյան, թուրքական ստորաբաժանումների գրոհով: Վանի զանազան մասերում տեղակայված հրետանին սկսեց ռմբակոծել հայկական թաղամասերը: Այգեստանի և Քաղաքամեջի պաշտպանության համար լուրջ արգելք էին հանդիսանում թուրքական մի շարք ամրություններ: Ուստի, երկու քաղաքամասերի Զինվորական մարմինները վճռում են պայթեցնել դրանք և դրանով զրկել հակառակորդին մարտավարական առավելությունից: Ամրությունների թվում էր Այգեստանի հյուսիսարևելյան մասում գտնվող Համուտ աղա կոչվող զորանոցը: Այստեղ ամրացել էին հակառակորդի 650 զինվորներ: Զորանոցը գերիշխող դիրք ուներ ողջ թաղամասի վրա և կրակի տակ էր պահում նրա զգալի մասը: Վանեցիները, գաղտնապահության խստագույն պայմաններում, գիշերները գետնուղի փորեցին մինչև զորանոցի հիմքը և այնտեղ տեղադրեցին պայթուցիկ նյութը: Պայթյունի հետևանքով առաջացած հրդեհը հրո ճարակ դարձրեց զորանոցը:

Հաջորդ վտանգավոր ամրությունը բրիտանական նախկին հյուպատոսարանի շենքն էր: Հակառակորդն այն դարձրել էր ամուր հենակետ: Այստեղ դիրքավորվել էին 30 ժանդարմներ: Հյուպատոսարանի շենքի հրկիզումը կատարվեց վանեցիների պատրաստած ինքնաշեն սարքի միջոցով, որը պարզունակ **հրանետ** էր հիշեցնում:

Պ.Մաուզերի 1896թ. ատրճանակը՝ փայտե պատյանով: Այն XX դարասկզբին ամենահեռահար ատրճանակներից էր, ուներ 100 մ նշանառու կրակ վարելու համար նախատեսված նշանոց, որը մեր օրերում էլ ատրճանակների համար պատկառելի թիվ է: Առաջին հանրապետության տարիներին (1918-1920թթ.) այս ատրճանակներով էին զինվում լավագույն ստորաբաժանումները, որոնց ժողովուրդը կոչում էր «մաուզերիստներ»:

Ինքնապաշտպանների որդեգրած մարտավարությունը տվեց իր դրական արդյունքը: Հայ մարտիկները որոշակի փորձ ձեռք բերեցին, որը թույլ էր տալիս նրանց հաջողությամբ հետ մղել հակառակորդին: Պաշտպանությունը ճեղքելու նպատակով թուրքերն էրզրումից ժամանած մի գերմանական սպայի հրամանատարությամբ գիշերային հարձակում նախաձեռնեցին: Գրոհը վանեցիների կողմից հաղթականորեն հետ մղվեց, իսկ թուրքերը կորցրին 60-70 հոգի:

Թուրքական հրամանատարությունը մեծ հույսեր էր կապում չերքեզական հեծելազորի հետ: Քաղաքային պայմաններում, երբ փողոցները պատված էին խրամատներով և բարիկադներով, հեծելազորն ի վիճակի չէր արդյունավետ գործել: Այն բանից հետո, երբ գրոհն անհաջողությամբ ավարտվեց, հակառակորդը հրաժարվեց հեծելազորի օգտագործումից: Օտարերկրյա ականատեսների կարծիքով՝ թուրքերի անհաջողությունների հիմնական պատճառներից մեկը թուրք զինվորների կրթական անբավարար մակարդակն էր: Դա թույլ չէր տալիս հրետանային հաշվարկին ճշտորեն հաշվարկել արկի լիցքը: Նրանք հաճախ լիցքը թույլատրելի չափից ավելի շատ էին դնում, որի հետևանքով թնդանոթի փողը պայթում էր և սպանում կամ վիրավորում էր հրետանավորներին:

Ականատեսները առանձնացնում են հայերի նշանառու հրաձգությունը, հատկապես երբ նրանք օգտագործում էին գերմանական «Մաուզեր» սիստեմի տասը փամփշտանի ատրճանակները: Հիշատակվում է նաև հատուկ շաղափների մասին, որոնցով հայ մարտիկները կարողանում էին տների պատերի մեջ անցքեր բացել և անսպասելիորեն գնդակոծել հակառակորդին:

Ռուսական Բայազետի ջոկատի և հայ կամավորական Արարատյան դրուժինայի առաջխաղացումը հարկադրում է թուրքական հրամանատարությանը դադարեցնել Վանի պաշարումը: 1915թ. հունիսի 3-ի վաղ առավոտյան սկսվեց

թաղամասերի ուժգին ռմբակոծությունը, իսկ երեկոյան այն սկսեց թուլանալ, ապա դադարեց: Մայիսի 4-ի առավոտյան տեղի ունեցավ Այգեստանի և Քաղաքամեջի հայ բնակչության հանդիպումը: Ապա քաղաք է մտնում Արարատյան դրուժինայի հեծելազորը: Նրանցից հետո քաղաքը դիմավորեց ռուսական զորքերին: Ի պատիվ իրենց ազատարարների՝ վանեցիները թուրքերից խլած թնդանոթներից 50 համազարկ տվեցին: Մոտ մեկ ամիս տևած կռիվների ընթացքում թուրքական կանոնավոր ուժերի կորուստը կազմում է մոտ 1000, իսկ հայերինը՝ 300 սպանված: Հակառակորդի կորուստներում հաշվի չեն առնված քրդական անկանոն ստորաբաժանումները: Հայկական թաղամասերի վրա արձակվել էր 16 հազարից ավելի արկ: Ավերվել էր քաղաքի երկու երրորդը:

Վանի հայության պաշտպանության այս փուլի հաղթական ավարտը պայմանավորված էր հետևյալ պատճառներով.

- ինքնապաշտպանական ղեկավար մարմինների արագ կազմակերպումը Ձինվորական մարմինների կողմից,
- ընտրված ակտիվ պաշտպանական մարտավարությունը,
- թաղամասերի բաժանումը պաշտպանական տեղամասերի,
- կանոնավոր և անխափան կապի ապահովումը,
- պահեստազորի առանձնացումը,
- թիկունքային ստորաբաժանումների կանոնավոր աշխատանքների ապահովումը և այլն:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

1914թ. աշնանը ձերբակալելով և հաշվեհարդար տեսնելով Զեյթունի հասարակական, քաղաքական և կրոնական գործիչների հետ՝ երիտթուրքական իշխանությունները նախապատրաստում են Հայկական Կիլիկիայի հայ բնակչության բռնագաղթը: Թուրքական կառավարությունը հայտարարում է, որ զեյթունցիների դիմադրության դեպքում կտուժի դաշտավայրի հայ բնակչությունը: Բռնություններ են սկսվում: Դա դրդում է Զեյթունի երիտասարդությանը՝ Եղիա Նորաշխարհյանի (Ենիտունյան), Փանոս Չագրյանի, Մեսրոպ Չոլագյանի և Խաչիկ Յաղուպյանի գլխավորությամբ, նախապատրաստվել ինքնապաշտպանության: 1915թ. փետրվարի 17-ին նրանք զենք և զինամթերք հայթայթելու նպատակով հարձակվում են ժանդարմական ստորաբաժանման վրա: Նրանցից զենքը խլելուց հետո զեյթունցիները որոշում են ամրանալ մոտակա վանքում:

Թուրքական իշխանությունները շտապ կարգով լրացուցիչ զորամիավորումներ են տեղափոխում Զեյթուն: Հալեպից Զեյթուն են գալիս Ֆահրի փաշան՝ մոտ 3 հազար զորքով և Մուստաֆա Ահմեդ Մյութմազը՝ 3 հազար զորքով:

Ե.Նորաշխարհյանի խումբը, մի քանի հաջող մարտեր մղելով ոստիկանական ուժերի դեմ, որոշում է ամրանալ Պերզնկա լեռան ստորոտում գտնվող վանքում: Այս բացահայտ մարտահրավերով նրանք ցանկանում էին ի զեն կոչել երիտասարդությանը և կազմակերպել Զեյթունի պաշտպանությունը: 1915թ. մարտի 14-ին օսմանյան ստորաբաժանումները հրետանու աջակցությամբ սկսում են գրոհել վանքը: Թուրքական գերակշիռ ուժերին դիմագրավում են 40 զեյթունցիներ՝ զինված «Մաուզերներով» և կայծքարե հրահաններ ունեցող հրացաններով: Հայերը կարողացել էին ընտրել հաջող դիրքեր, որը հնարավորություն չէր տալիս թուրք զինվորներին առաջանալ: Զեյթունցիները, մի շարք դեպքերում բանեցնելով ռազմական խորամանկություն, զգալի կորուստներ են հասցնում հակառակորդին:

Պատմական տեղեկանք. «Ամեն կողմե տեղատարափ ռումբ կտեղար և գնդակ կտեղար վանքին վրա: Ոչ մեկ պատասխան մերիններուն կողմե: Կես ժամ վերջ, թշնամի հրամանատարությունը զարմացած վանքին անտարբերությունեն, կամ խորհելով, թե բոլորը փախուստ տված են և ներսը մարդ չկա, հրամայեց հարձակողականով մը գրավել վանքը: Թշնամին բավական մոտեցած էր վանքին, երբ մերինները պատասխանեցին և բազմաթիվ դիակներ գետին փռեցին»:

Նորաշխարհյան Լ., Զեյթունը 1914-1921թթ., Հուշեր, 39

Թուրքական հրամանատարությունը, վերախմբավորելով ուժերը, անցնում է նոր հարձակման: Թուրքերին հաջողվում է գրավել վանքի մատույցներում գտնվող այգիները և ընդհուպ մոտենալ վանքի պարիսպներին ու զեյթունցիների գրաված դիրքերին: Անգիջում մարտերից հետո հակառակորդը հետ է շպրտվում: Սպանվում է թշնամու հրամանատարը՝ հազարապետ Սուլեյմանը: Թուրքական հրամանատարությունը բերում է ավելի մեծ տրամաչափի թնդանոթ և շարունակում վանքի հրետակոծությունը: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ զեյթունցիները որոշում են օգտվել մթությունից և հեռանալ լեռները: 12 ժամ տևած մարտերի ընթացքում հայերը տվել էին 1-2 վիրավոր, իսկ հակառակորդը՝ 101 սպանված և 110 վիրավոր: Անգլիական «Թայմս» թերթը, անդրադառնալով այս մարտին, գրել է. «Զեյթունում գտնվող թուրքական զորքերը, որոնց կազմում 5000 զինվոր կար, հարձակման անցան, կորուստներ տալով հետ մղվեցին, իսկ գիշերն ապստամբները թողեցին ճամբարը»:

Զեյթունցիների մի մասը, մնալով լեռներում, պայքար է մղում թուրքական կանոնավոր բանակի ստորաբաժանումների դեմ, տանում մի շարք հաղթանակներ և փրկում բազմաթիվ տարագիր հայերի: Զեյթունի լեռներում ապաստանած հայերը դիմագրավում են օսմանյան ուժերին մինչև 1918թ. զինադադարը:

ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ (1915Թ.)

1915թ. հուլիսի վերջերին Կիլիկիայի հարավում գտնվող Սուետիայի հայությունը ստանում է բռնագաղթի հրամանը: Սուետիան գտնվում է Միջերկրական ծովի առափնյա շրջանում և բաղկացած էր մի քանի հայկական գյուղերից (տե՛ս Սխ. 1): Իշխանությունների հրամանը լուրջ տարաձայնություններ է առաջացնում բնակչության շրջանում: Մի մասը գտնում է, որ պետք է ենթարկվել հրամանին, իսկ մյուսները՝ հակառակը, բարձրանալ մոտակա Մուսա կամ Մովսեսի լեռը և դիմագրավել ջարդարարներին: Բնակչության այն հատվածը, որը հավատ ընծայեց խոստումներին, տարագրվեց և կոտորվեց:

1915թ. օգոստոսի 2-ին Սուետիայի 6311 հայ բնակչության մեծ մասը՝ 4231 հոգի, բարձրանում է Մուսա լեռը: Նրանք երեք տարբեր վայրերում ճամբար են խփում: Նրանցից յուրաքանչյուրն ընտրում է իր առանձին Ձինվորական մարմինը: Փաստորեն, սուետիահայերի ուժերը մասնատված էին, և չկար միասնական, ընդհանուր հրամանատարություն: Այս հանգամանքը լրջորեն վտանգում էր հայերի ինքնապաշտպանությունը:

Հայերի ունեցած զենքն ու զինամթերքը սակավ էին, որի պատճառով 600-800 տղամարդկանցից մարտերին մասնակցում էին 400-500 հոգի: Կային մոտ 600 որսորդական, 95 «Կրա», 11 «Մաուզեր» և այլ սիստեմի հրացաններ: «Կրա» հրացաններից յուրաքանչյուրն ապահովված էր 30-120, իսկ «Մաուզեր»-ը՝ 100-200 փամփուշտներով:



1874թ. արտադրության Գրայի (այստեղից էլ արևմտահայերեն «Կրա» ձևը) հրացանները, որոնք վաղուց արդեն չէին համապատասխանում մարտավարության տարրական պահանջներին (միալիցք էին, օգտագործում էր ծխատու վառոդ և այլն), մուսալեռցիների ձեռքին հզոր կրակային միջոց էին դարձել:

1874թ. արտադրության Գրայի հրացանի կենտրոնական մասը (հարվածաձգանային մեխանիզմը, փակաղակը և նշանոցը):

Օգոստոսի 7-ին լուր է ստացվում, որ 200 թուրք զինվորներ շարժվում են դեպի հայկական ճամբարները: Հակառակորդն առաջանում էր անհոգ և առանց պատշաճ հետախուզության: Նրանց հրամանատարը պարծեցել էր, որ միայն մեկ օրն էլ բավական է հայերի հետ հաշվեհարդար տեսնելու համար: Թուրքերը փորձում են ճակատային գրոհով ճեղքել հայերի պաշտպանությունը: Սուետիահայերը թևային և ճակատային կրակով հակառակորդին հետ մղեցին:

Առաջին բախումը լուրջ խորհրդածությունների տեղիք է տալիս, քանի որ ի հայտ եկան հայկական պաշտպանության խոցելի տեղերը: Որոշվում է կտրատել դիրքերի առջև գտնվող ծառերը 20-25 մետր խորությամբ՝ մարտիկների տեսադաշտը մեծացնելու և հակառակորդին անակնկալ գրոհելու հնարավորությունից զրկելու համար: Երկու օր հայերը զբաղվում են այդ աշխատանքներով:

Օգոստոսի 10-ի վաղ առավոտյան 1500 թվաքանակով թուրքական ստորաբաժանումը, օգտվելով մառախուղից, աննկատ մոտենում է հայկական դիրքերին, ուր այդ ժամանակ կար ընդամենը 12-15 մարտիկ: Նրանք ստիպված են լինում մարտի մեջ մտնել թվով գերազանց հակառակորդի դեմ: Դա հնարավորություն է տալիս ինքնապաշտպանական մյուս տեղամասերից օգնություն ստանալ: Հակառակորդը հարկադրված է լինում դադարեցնել առաջխաղացումը: Միայն թուրքական հրետանին է շարունակում հրետակոծել հայկական դիրքերն ու ճամբարները:

Գերմանացի զինագործ Պ.Մաուզերի 1898թ. օրինակի հրացաններն ավտոմատ հրազենի ստեղծմանը նախորդած ժամանակաշրջանի լավագույն զենքերից էին: Դրանցով էին զինված գերմանական և թուրքական բանակներն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Նկարում ցույց է տրված 1898թ. հրացանի կարճափող տարբերակը՝ կարաբինը, որն անհամեմատ ավելի հեշտ գործածելի էր:

Մաուզերի 1898թ. օրինակի հրացանի հարվածաձգանային մեխանիզմը՝ փակաղակը բաց դիրքում:

Սխեմա 1



Հակառակորդի հետագա հարձակումը ձախողելու գործում բացառիկ էր Պետրոս Գալստյանի քաջությունը: Նրան հաջողվում է աննկատ դիրքավորվել թուրքական թնդանոթի դիմաց գտնվող ժայռի տակ: Պ.Գալստյանը հինգ կրակոցով սպանում է հակառակորդի չորս թնդանոթաձիգներին:

Օգոստոսի 11-ին հրավիրվում է ինքնապաշտպանական ուժերի ղեկավարների խորհրդակցություն: Մասնակիցները, վերլուծելով մարտերի ընթացքում

տեղ գտած թերությունները, որոշում են ստեղծել ռազմական մեկ միասնական կենտրոն և բոլոր ուժերն ու բնակչությունը կենտրոնացնել Տամըլճըգ կոչվող վայրում: Կազմվում է վարչական խորհուրդ, որի անդամներն էին Տիգրան Անդրեասյանը, Հաբեթ Իսկենտերյանը, Հեթում Ֆիլյանը և ուրիշներ՝ 16 հոգի: Ռազմական ղեկավար է դառնում Եսայի Յաղուբյանը:

Չնայած մասնակի հաջողություններին, բոլորին անհանգստացնում էր պարենի պակասը: Այդ խնդիրը լուծելու նպատակով հայերը հակառակորդից աննկատ իջնում էին շրջակա գյուղերը և այնտեղից հայթայթում ուտելիք: Սակայն այն բանից հետո, երբ հակառակորդը երեք կողմից օղակում է լեռը, սուետիահայերը զրկվում են այդ հնարավորությունից ևս:

Ստեղծված իրավիճակում զեյթունցիները փորձում են կապ հաստատել Միջերկրական ծովում նավարկող բրիտանական և ֆրանսիական ռազմանավերի հետ: Օգոստոսի 13-ի գիշերը երեք հմուտ լողորդներ պետք է լողալով հասնեին Ալեքսանդրեթ, կապ հաստատեին Անտանտի կամ չեզոք տերության նավապետի հետ, նրան հանձնեին օգնության խնդրանքով նամակը: Սակայն լողորդները վերադառնում են ձեռնունայն: Սուետիահայերը հույսները չեն կորցնում, լեռան բարձունքներին հերթապահներ են նշանակում՝ հանձնարարելով հետևել ծովին և որևէ նավի հայտնվելու դեպքում խարույկներ վառել՝ նրա անձնակազմի ուշադրությունը գրավելու համար: Կանայք երկու մեծ դրոշակներ են գործում, որոնցից մեկի վրա անգլերեն ասեղնագործվում է «Քրիստոնյաները աղետի մեջ են», իսկ մյուսի վրա պատկերված էր կարմիր խաչ: Երկու դրոշակներն ամրացվում են ամենաբարձր ծառերի գագաթներին, այնպես, որ դրանք տեսանելի լինեն ծովից: Միաժամանակ մի խումբ արհեստավորների հանձնարարվում է լաստեր պատրաստել՝ սպառնալից իրավիճակի դեպքում դրանցով բնակչությանը Կիպրոս տեղափոխելու համար:

Առաջին պարտություններից հետո օսմանյան հրամանատարությունը սուետիահայերի դեմ է ուղղում 3 հազար զինվոր և շրջակա գյուղերից հավաքագրված 4 հազար թալանչի: Առավել ծանր մարտեր են տեղի ունենում 1915թ. օգոստոսի 19-ին (տե՛ս Սխ. 2): Այդ օրը հակառակորդն իր ողջ ուժերով անցնում է լայնածավալ հարձակման: Հրետանու կրակը զգալիորեն նպաստում է թուրքական ուժերի առաջացմանը: Ծանր կորուստների գնով հակառակորդը մոտենում է հայկական դիրքերին, և տեղ-տեղ ձեռնամարտ է սկսվում: Երկարատև մարտերից հոգնած հակառակորդը որոշում է դադարեցնել հարձակումը և վերսկսել այն վաղ առավոտյան: Այդ սխալն օգտագործվեց սուետիահայերի կողմից, որոնք վերախմբավորելով ուժերը՝ գիշերը հարձակվեցին հակառակորդի վրա: Տղամարդկանց միացել էին նաև կանայք: Թուրք զինվորները հանկարծակիի եկան և չկարողանալով դիմադրել՝ փախուստի դիմեցին: Մարտադաշտից հայերը հավաքում են զգալի քանակությամբ զենք և զինամթերք:

Այս պարտությունից հետո թուրքական հրամանատարությունն ավելի է սեղմում պաշարման օղակը: Սուետիահայերի դեմ կենտրոնացվում է 15 հազարից ավելի ուժ:

Սխեմա 2


ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ 1915Թ. ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ
Կոզլուջա
Սովուք Օլուկ
Կուզճրղազ
Ադիլի
Օմարեն
Գիտեյն
Կափլանտուզաղը
Սալեջա
Թաքարալան
Տամլիճրգ
Պաղաջրկ
Բիթիաս
Մուսա լ
1355
Հաջի Հաբիբլի
Շեյխ Յուրդու
Յոլ Աղըզը
Յողունօլուկ
Խըդըր Բեկ
Քեբուսիե
Ազիր
Վակըֆ
Շեյխ Խըդըր
Սուետիա
էլ էքսել
Մուսալեռցիների օգնության կանչին արձագանքած ֆրանսիական ռազմանավերը
Հակառակորդի հարձակման հիմնական ուղղությունները օգոստոսին
Հակառակորդի հարձակման հիմնական ուղղությունները հերոսամարտի վերջին օրերին
Մուսալեռցիների հակահարձակման հիմնական ուղղությունները
Հակառակորդի առաջին հարձակման ուղղությունը
Մուսալեռցիների պաշտպանական դիրքերը հերոսամարտի նախօրյակին
Մուսալեռցիների առավել ամրացված դիրքերը և պաշտպանության հենակետերը
Հակառակորդի նահանջի հիմնական ուղղությունը
Ֆրանսիական ռազմանավերի կրակի ուղղությունը՝ թուրքական դիրքերի հրետակոծման ժամանակ

Օգոստոսի վերջերին հանկարծ մշուշի միջից՝ ծովափից բավական հեռու, երևում է սուետիահայության կողմից այդքան երկար սպասված նավը: Այդ մասին Տիգրան Անդրեասյանը հետևյալն է թողել իր հուշերում. «Մշուշի մեջեն հանկարծ մարտանավ մը երևցեր էր, որ սակայն դժբախտաբար կռնակը դարձուցեր էր արդեն՝ մեզմե նկատվելե առաջ: Հույսն ու հուսահատությունը իրարու խառնվեցան այդ րոպեին: Անմիջապես բլուրներու վրա բազմաթիվ դրոշակներ պարզվեցան, խարույկներ վառվեցան ու բարձրակոչ աղաղակներ բարձրացան, բայց իզուր: Նավը խուլ և անտարբեր շարունակեց ընթացքը դեպի Իսքենտերուն (Ալեքսանդրեթ)՝ իր ետևը թողնելով 4000-ե ավելի հուսախաբ սրտեր, որոնք ակնապիշ կը դիտեին անոր ետևեն տխուր և դառնագին»:

Հակամարտ կողմերի միջև մարտերը շարունակում են ընթանալ, սակայն թուրքերը լայնածավալ գործողությունների չեն դիմում: Դա շարունակվում է մինչև սեպտեմբերի 5-ը: Այդ օրը ֆրանսիական «Գիշեն» հածանավը, նկատելով Մուսա լեռան գագաթին ծածանվող դրոշները, խարիսխ է գցում և կապ հաստատում հայերի հետ: Ռազմանավի նավապետ, 2-րդ կարգի կապիտան Բրիսոնից հայերը խնդրեցին իրենց տեղափոխել Կիպրոս կամ այլ տեղ, իսկ եթե դա հնարավոր չէ, գոնե թող փրկեն միայն կանանց ու երեխաներին, իսկ տղամարդկանց ապահովեն զենքով ու զինամթերքով: Նավապետ Բրիսոնը ժամանակ է խնդրում հրամանատարությանը նշված խնդիրը զեկուցելու և որոշումը հայտնելու համար: Ֆրանսիացիները, տեղեկանալով, որ Քեպուսիե գյուղում զինամթերքի պահեստ և զորք կա, հրետակոծում են դրանք, որից հետո ռազմանավը հեռանում է:

Օսմանյան հրամանատարության համար անսպասելի էր թշնամական տերության ռազմանավի անսպասելի հայտնվելը, որը կարող էր ի չիք դարձնել հայերի հետ հաշվեհարդար տեսնելու իրենց բոլոր ջանքերը, ուստի դիմում է վճռական գործողությունների: Սեպտեմբերի 7-ին ձեռնարկվում է լայնածավալ հարձակում, որը շարունակվում է մինչև երեկո: Հակառակորդը, սակայն, ոչ մի արդյունքի չի հասնում: Այդ մարտի ժամանակ սուետիահայերը «երգելով ու իրար հետ կատակելով էին մարտնչում կատաղած թշնամու դեմ»:

Հայ մարտիկների և օսմանյան ուժերի միջև ծավալված մարտերին ականատես են լինում սեպտեմբերի 9-ին (ըստ այլ տեղեկության՝ սեպտեմբերի 10-ին) վերադարձած «Գիշեն», «Թեսսեքս», «Ժաննա դ'Արկ» և այլ նավերի անձնակազմերը: 2-դ կարգի կապիտան Բրիսոնը ականատես է լինում, թե ինչպես հայ երիտասարդներից մեկն անվախ մարտի է մտնում հակառակորդի հետ՝ սպանելով նրանցից երեքին, այդ թվում հրամանատարին: Աստիճանաբար, սակայն, զգացվում է հակառակորդի թվային և կրակային գերազանցությունը: Նավապետի հրամանով հածանավի հրետանին պատասխան կրակով լռեցնում է թուրքական թնդանոթները և հարկադրում հակառակորդին նահանջել:

«Ժաննա դ'Արկ» հածանավի վրա տեղի է ունենում հայերի վարչական խորհրդի անդամների հանդիպումը ծովակալ Դարտրիժ դյու Ֆուրնեի հետ: Նա

հայերին հավատացնում է, որ ոչ մի դեպքում չի լքի նրանց: Ինչպես պարզվում է հետագայում, բրիտանացիները զանազան արգելքներ էին հարուցել մուսալեռցիներին Կիպրոս տեղափոխելու համար: Երբ ծովակալը դիմում է Կիպրոսի բրիտանական նահանգապետին՝ խնդրելով ընդունել հայերին, նա մերժում է: Անգլիական կառավարությունը նմանապես դեմ էր հայերին Եգիպտոս տեղափոխել: Այնուամենայնիվ, ֆրանսիացի ծովակալն իր անձնական պատասխանատվությամբ վճռում է հայերին տեղափոխել Եգիպտոս:

1915թ. սեպտեմբերի 12-ից սկսվում է հայերի տարհանումը: Այդ աշխատանքները ղեկավարում էր «Դեզե» հածանավի հայազգի սպա Տիգրան Թեքեյանը: Մինչև սեպտեմբերի 14-ը *«Գիշեն», «Թեսսեքս», «Դեզե», «Ֆուդր»* և *«Լ՚ադմիրալ Շարնե»* հածանավերն ընդունում են 4058 հայերի: Սկզբնապես նավերն են բարձրանում կանայք, երեխաները և ծերունիները: Տղամարդիկ այդ ժամանակ շարունակում էին մնալ դիրքերում՝ ապահովելով յուրայինների անվտանգ տեղափոխումը: Ֆրանսիական ռազմանավերը մուսալեռցիներին հասցնում են մինչև Եգիպտոսի Պորտ Սաիդ նավահանգիստ:

Եգիպտոսում հայերը չեն մնում լոկ լուռ դիտորդների դերում: 1916թ. նոյեմբերին ֆրանսիական կառավարությունը որոշում է ընդունում Արևելյան լեգեոնի կազմավորման մասին: Նրա հրամանատարությունն իրականացնելու էին ֆրանսիացի սպաները: Լեգեոնը կազմվելու էր ըստ ազգային և կրոնական պատկանելության՝ հայերից և սիրիացի արաբներից: Մոտ 600 սուետիացիներ, որոնց թվում՝ Եսայի Յաղուբյանը, անդամագրվեցին Արևելյան կամ Հայկական լեգեոնին: Նրանք հաստատվում են Կիպրոսում տեղակայված ռազմաբազայում: Մուսալեռցիներն իրենց ռազմական ուսուցումը սկսել էին ավելի վաղ՝ Պորտ Սաիդում: Նրանց մարզել էր ֆրանսիացի ռազմանավերից մեկի հրամանատար Բենուա դ՚Ազին: Ֆրանսիական զորքերի կազմում հայերն աչքի ընկան բազմաթիվ ճակատամարտերում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԸ

ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԸՆԹԱՑՔԸ

1915-ի հերոսական ինքնապաշտպանությունից հետո մուսալեռցիները տեղավորվեցին Պորտ Սաիդի վրանավանում: Չհամակերպվելով հայրենիքի կորստյան հետ՝ նրանք շարունակ դիմում էին ֆրանսիական ռազմածովային ուժերի սպա, իրենց տարհանման ղեկավարներից Շառլ Տիրան Թեքեյանին՝ ներկայացնելով Դաշնակիցների կազմում թուրքերի դեմ կռվելու ծրագիր: Ի վերջո, կամավորների համար գաղթակայանում զինավարժության պարապմունքներ են կազմակերպվում: Այս մուսալեռցիներն էլ դառնում են Հայկական լեգեոնի միջուկը:

1916-ին իրենց կողմը գրավելով արաբներին՝ դաշնակիցները լուրջ քայլեր ձեռնարկեցին տարածաշրջանի մյուս ազգերին ևս գերմանա-թուրքական դաշինքի դեմ հանելու համար: Այդ քաղաքականության արդյունքներից մեկն էլ Արևելյան լեգեոնի ստեղծումն էր: Ֆրանսիական կառավարության 1916թ. նոյեմբերի 15-ի որոշմամբ սահմանվեցին կամավորագրության սկզբունքները. լեգեոնին կարող էին անդամագրվել միայն հայերն ու արաբները, լեգեոնը տեղակայվելու էր Կիպրոս կղզում, ղեկավարվելու էր ֆրանսիական սպաների կողմից, բայց որպես օժանդակ զորամաս, ֆրանսիական բանակի մաս չէր կազմելու: Լեգեոնի ստեղծման նպատակն էր աջակցել հայերին՝ ազատագրելու Կիլիկիան և հնարավորություն ստեղծել «ազգային ձգտումների իրականացման համար»: Հայ մարտիկները կռվելու էին միայն թուրքերի դեմ և միայն Կիլիկիայի տարածքում, լեգեոնը կազմելու էր ստեղծվելիք Կիլիկյան հայկական պետության բանակի կորիզը: Արևմտահայության բեկորներին չվտանգելու նպատակով լեգեոնն անվանվեց ոչ թե «Հայկական», այլ «Արևելյան»:

Ապա երեք սպաների հետ եկավ գնդապետ Ռոմիեոն, որը Եգիպտոսի Հայ ազգային միության հետ ձեռնամուխ եղավ լեգեոնի կազմավորմանը: Այդ լուրը մեծ խանդավառություն առաջացրեց. նրան անդամագրվեցին նաև Առաջին աշխարհամարտի բովով անցած բազմաթիվ մարտիկներ, թուրքական բանակի հայ դասալիքներ, իսկ մինչ Մեծ եղեռնն ԱՄՆ պանդխտած արևմտահայ երիտասարդության շրջանում կամավորների թիվը հասավ 10 հազարի: Բայց նավերի պակասի պատճառով միայն 1212-ին հաջողվեց հասնել Մոնարկա, ուր 1916-ի վերջին ուղարկվեց լեգեոնի առաջին գումարտակը, իսկ որոշ ստորաբաժանումներ մեկնեցին պաշտպանելու Թուրքիային սահմանամերձ Կաստերելիզո և Ռուաթ կղզիները:

Քարտեզ 1

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԵԱԿԱՏՈՒՄ 1917-1918ԹԹ.
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ
Դամասկոս
Աքքա
Հայֆա
Նազարեթ
Էլ-Աֆուլե
Դերաա
Հադիրա
Մեգիդդո
Բեյզան
Թուլ-Քերեմ
Նաբլուս
Մաֆրաք
Ռաֆաբ
Մեյդել
Յաֆֆա
Բենի-Ֆալլ
Ամման
Ազրաք
Երուսաղեմ
Արքայազն Ֆեյզալի արաբները
Գազա
Հեբրոն
Բիրշեբա
Մեռյալ ծով
Քերաք
Քարմ
Ասլույմ
Էլ-Քուսեյմա
8 Բ
7 Բ
20 Կ
22 Կ
21 Կ
Հեծ. Կ

Արարայի ճակատամարտը

1918-ի գարնանը շուրջ 4000 հայ և 1000 արաբ կամավորներից կազմված լեգեոնի երկու գումարտակները մեկնեցին Պաղեստինյան ճակատ և սեպտեմբերի 14-ի գիշերը տեղաբաշխվեցին առաջին գծում (տե՛ս քարտեզ 1):

Արարայի (Ռաֆաթի) բարձունքներն անվանում էին «Թուրքերի երկրորդ Դարդանել»: Այն ողջ ռազմաճակատի ամենաանառիկ հատվածն էր, որն անգլիական մեծաքանակ զորքերը դեպի հյուսիս առաջանալու համար 1918-ի մարտ-ապրիլ ամիսներին երեք անգամ ապարդյուն փորձել էին գրավել: Առանց Արարայի գրավման անհնար էր սկսել դաշնակիցների ընդհանուր հարձակումը, որի հաջող ելքի դեպքում ազատագրվում էին Լիբանանը, Սիրիան ու Կիլիկիան:

> **Տեղեկանք.** «Արևելյան լեգեոնն աջում ունենալով ալժիրական, իսկ ձախում՝ հնդկական զորամասեր, առաջադրանք ստացավ գրոհել ռազմաճակատի ամենադժվարին ու անմատչելի հատվածը: Ընդհանուր հրամանատարությունը մեծապես կարևորում էր Ռաֆաթ-Արարա բարձունքի գրավումը, որով նպատակ ուներ գերմանա-թուրքական զորքերի ուշադրությունը շեղել այս հատվածի պաշտպանության վրա՝ հեծելազորին թույլ տալով սրընթաց առաջանալ ծովափնյա Սարոնի դաշտավայրով»:
>
> ***Շմավոն Թորոսյան, «Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920թթ.»***

Լեգեոնի կորիզը մուսալեռցիներից և թուրքական բանակում ծառայած զինվորներից կազմված առաջին գումարտակն էր, բայց սեպտեմբերի 15-ին որոշվեց առաջին գծում տեղաբաշխել ԱՄՆ պանդխտած արևմտահայերից կազմված երկրորդ գումարտակը, իսկ թուրքական հրամանատարությունը, գերված ալժիրցի զինվորներից տեղեկանալով, որ իրենց դեմ հայ կամավորներ են, պաշտպանությունն ուժեղացրեց գերմանական 600 հոգանոց ընտիր ստորաբաժանումներով (տե՛ս Սխ. 1):

Սեպտեմբերի 19-ի լուսաբացին Արարայի բարձունքներն ազատագրող ընդամենը 600 մարտիկները շուրջ երկու մղոն ձգվող հատվածում անցան հարձակման՝ գրավելու երեք բարձր բլրաշղթա, որոնց հետևում հակառակորդի 1600 զինվորները բազմաէշելոն պաշտպանություն էին կազմակերպել: Բայց կռիվը շուտով ընթանում էր հակառակորդի խրամատներում: Մարտիկները գրոհում էին Ռաֆաթը, իսկ հարևան ալժիրական և հնդկական գումարտակները՝ Քաֆր-Քասիմի և Արարայի բարձունքները: Առավոտյան ժամը 11-ին Արարայի բարձունքները գրավված էին: Հրամայվեց մնալ դիրքերում, բայց կամավորները շարունակում էին հետապնդել հակառակորդին:

Սխեմա 1



ԱՐԱՐԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1918Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19

Գերմանական մարշալ Լիման ֆոն Սանդերսի հրամանատարության տակ գտնվող «Իլդիրիմ» («Կայծակ») բանակը, չհամակերպվելով պարտության հետ, կեսօրից հետո վերսկսված հրետանային ու գնդացրային կրակի աջակցությամբ դիմեց հարձակման, բայց դրա դիմաց վճարեց երկրորդ պաշտպանական բնագիծը ևս հայ կամավորներին հանձնելով: Իսկ գիշերը հակառակորդը, թողնելով նաև թնդանոթները, առանց կռվի փախավ նաև երրորդ պաշտպանական բնագծից: Հաղթանակը կատարյալ էր:

Լեգեոնը գրոհով ազատագրեց Ռաֆաթը (Արարան ու Ռաֆաթը միևնույն շղթայի երկու գագաթներն էին), որի անկումով ազատագրվեցին Արարան ու մերձակա բարձունքները: Իսկ անգլիական հեծելազորը Սարոնի դաշտավայրով առաջացավ մինչև Հայֆա ու գրավեց Եստրելոնի դաշտը՝ կտրելով թուրքական բանակի հաղորդակցության ուղիները, և Պաղեստինյան ռազմաճակատում մարտական գործողություններն ավարտվեցին: Այս հաղթանակը մահացու հարված էր թուրքական բանակին: Թուրք-գերմանական ուժերը խուճապահար նահանջում էին, անպարտելի համարվող թուրքական «Իլդիրիմ» բանակը քայքայվել ու այլևս գոյություն չուներ, և դաշնակիցներն ուժերի մի մասն սկսեցին փոխադրել արևմտյան ճակատ: Թուրքիայի անձնատվությանը մնացել էր մեկ ամսից քիչ ավելի ժամանակ:

Իսկ լեգեոնականները, Ռաֆաթ գյուղի մոտ հողին հանձնելով Արարայի խելահեղ գրոհում զոհվածներին, շարունակեցին առաջանալ դեպի Կիլիկիա:



Պաղեստինում և Սիրիայում հարձակման անցած դաշնակիցների հետևակի անմիջական աջակցման գլխավոր միջոցը Լյուիսի ձեռքի գնդացիրներն էին, որոնք բարձր գնահատականի էին արժանացել 1917թ. դիրքային մարտերի ընթացքում:

Կիլիկիայի ազատագրումը

Բեյրութին մոտենալիս սկսվեցին հանդիպումները ցեղասպանությունը վերապրած հայ բեկորների հետ: Կմախքացած, ցնցոտիների մեջ, լուռ, արցունքն աչքերին՝ թերահավատ նայում էին ազատարար զորքերի երթին, հետո հայերեն հրամաններ ու խոսակցություն լսելով՝ ապշահար միմյանց ձայն էին տալիս՝ «Հայ են, հայ», և նետվելով զինվորական շարքերի մեջ՝ սկսում ինքնամոռաց համբուրել մարտիկներին, նրանց համազգեստները, զենքերը... Ոմանք կամավորներից որևէ մեկի համերկրացին էին լինում, և մարտիկներն աստիճանաբար իմանում էին իրենց հարազատներին պատուհասած սարսափելի ողբերգության մանրամասները:

Հոկտեմբերի 12-ի երեկոյան լեգեոնն անապատներով 18-օրյա դժվարին երթով հասավ Բեյրութ: Միջագետքի անապատներից վերադարձած հայերից ստեղծվեց ևս մեկ գումարտակ, լեգեոնը վերանվանվեց «Հայկական», իսկ Կիլիկիայում գտնվող թուրքական 2-րդ և 7-րդ բանակները Թուրքիայի անձնատվությունից հետո սկսեցին նահանջել դեպի հյուսիս: Հայ լեգեոնականները շուտով մտան Ալեքսանդրեթ, Չորքմարզվան, ապա Կիլիկիայի սահմանին գտնվող Իսլահիե կայարան, իսկ մի քանի օր անց՝ Տարսոն և Ադանա, ուր հայ կյանքն արդեն վերընձյուղվում էր, և եթե լեգեոնականները փոքր-ինչ ուշ մտնեին Մերսին, Տարսոն ու Ադանա, վերադարձող հայ տարագիրների ջարդ էր լինելու:

Հայերը հուսավառ էին, թուրքերը՝ վախեցած ու ապշած՝ տեսնելով երեք տարի առաջ իրենց կողմից բնաջնջված և բռնի տեղահանված ժողովրդի զորքերի հաղթական երթը: Կիլիկիան ազատագրող բանակը մինչև 1919-ի մայիսի 28-ը կազմված էր միայն Հայկական լեգեոնից, մինչ ալժիրցի զինվորներ եկան: Ֆրանսիացիներն ասես լեգեոնը հնարավորինս թուլացնելու գործելակերպ էին որդեգրել: Իսկ մայիսին մասնակի զորացրում կատարվեց, թեև այդ ամիսներին իրական հնարավորություն կար կամավորների թիվը հասցնելու 20 հազարի: Ապա լեգեոնը հեռացվեց հայաշատ քաղաքներից՝ իրականացնելու Ադանա-Հալեպ երկաթգծի պաշտպանությունը: Բայց 1919-ի աշնանը, երբ անգլիական զորքերը լրիվ հեռացան Կիլիկիայից, լեգեոնի երկու ստորաբաժանումներ տեղակայվեցին Մարաշում և Այնթապում:

1919-ի վերջին Կիլիկիայում հայ կյանքը բավական կանոնավորվել էր, բայց ապագան առավել քան անորոշ էր... Այն որոշակիացավ 1920-ի հունվարի 21-ին, երբ սկսվեց Մարաշի աղետը: Քաղաքում մնացած լեգեոնականները կենտրոնացել էին Սուրբ Աստվածածին և Սուրբ Քառասուն մանկանց եկեղեցիներում, զորանոցում ու հարակից վայրերում: Մարաշահայությունը նրանց մոտ փրկություն որոնեց, ու ստորաբաժանումների պաշտպանության շրջանները վերածվեցին ժողովրդի կուտակման վայրերի՝ դառնալով թուրքական հարձակման հիմնական թիրախները: Արարայի գրոհի ժամանակ ընդամենը 23 զոհ ու-

նեցած լեգեոնը Մարաշի կռիվներում ու մինչև Իսլահիե նահանջում կորցրեց 50 մարտիկների, 100-ը վիրավորվեցին կամ ցրտահարվեցին, շատերը դարձան հաշմանդամ:

Ձինարձակված կամավորներից շատերն անդամագրվեցին տեղի մարտախմբերին, և Հայկական լեգեոնը, անգամ իր կազմակերպական կառույցից դուրս, շարունակեց կիլիկյան հողի պաշտպանությունը. Սիսը, որի մարտիկների շարքերում էին նաև բազմաթիվ լեգեոնականներ, հակահարված տվեց բոլոր ոտնձգություններին, և կաթողիկոսանիստ քաղաքը հանձնվեց ոչ թե պարտության, այլ ֆրանս-քեմալական զինադադարի արդյունքում: Նախկին լեգեոնականներն Ուրֆայի ինքնապաշտպանության ընթացքում ևս մեծ դերակատարություն ունեցան:

Ամփոփում

Սակայն արդեն մեծ առևտուր էր գնում Սիրիան պահպանելու և Թուրքիայում Ֆրանսիայի ունեցած տնտեսական խոշոր առանձնաշնորհումների վերականգնման դիմաց Կիլիկիան հանձնելու համար, և Մարաշում, Այնթապում, Սսում, Իսլահիեում, Դյորթ Յոլում, Օսմանիեում, Հարունիեում, Միսիսում, Բաղչեում, Բոզանթիում, Ամանոսի և Տավրոսի լեռնաշղթաների երկայնքով Արարայի ճակատամարտից ավելի ծանր ու արյունալի մաքառումներ ունեցած Հայկական լեգեոնը, որն ապահովում էր Ֆրանսիայի ներկայությունը Կիլիկիայում, 1920-ի օգոստոսի 19-ին հայտարարվեց լուծարված:

1920-ի վերջին և 1921-ի սկզբին լեգեոնականները հեռացան Կիլիկիայից:

ՌԱԶՄԱՐՎԵՍՏԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Առաջին հանրապետության (կազմավորվեց 1918թ. մայիսի 28-ին) ռազմական պատմությունը, ըստ իր հատկանիշների, կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ փուլերի.

- Պատերազմական գործողություններ թուրքական կանոնավոր բանակի դեմ
- Ռազմական գործողություններ թաթար-ադրբեջանական զինված միավորումների դեմ
- Զանգեզուրի պաշտպանությունը և մարտերը խորհրդային 11-րդ բանակի զորամասերի դեմ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1917թ. Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխություններից հետո կովկասյան թատերաբեմի ճակատային գիծը, որն աշնանը ձգվում էր Տրապիզոնից Երզնկա, ապա Մուշ և Վանա լճի հարավային շրջանով հասնում մինչև Ռևանդուզ, արագ սկսում է կազմալուծվել: Հրատապ խնդիր է դառնում ազգային զորամիավորման շուտափույթ կազմավորումը և նրանով ճակատային գիծը զանգվածաբար լքող զորամասերի փոխարինումը: Տարեվերջին սկսվում է Հայկական բանակային կորպուսի կազմավորումը: Կորպուսի հրամանատար է նշանակվում ռուսական բանակի փորձառու զորահրամանատար, գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանը, զինվորական կոմիսար՝ Դրաստամատ Կանայանը (Դրոն):

Թուրքական բանակի հարձակումը

1918թ. փետրվարի 10-ին թուրքական զորքերը, խախտելով 1917թ. դեկտեմբերի 5-ին կնքված Երզնկայի զինադադարը, անցնում են հարձակման, որի համար «իրավական» հիմք է հանդիսանում մարտի 3-ին ստորագրված Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, ըստ որի՝ Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային էր զիջում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Կարսի մարզը: Անդրկովկասի մահմեդականները հրաժարվում են կռվել իրենց թուրք հավատակիցների դեմ, իսկ Վրացական կորպուսը, որը դիրքավորվել էր Օլթի-Բաթում հատվածում, գրեթե առանց դիմադրության հանձնում է Բաթումը:

Մայիսի սկզբին թուրքական հրամանատարությունը կատարում է ուժերի վերախմբավորում: 6-րդ և 1-ին բանակային կորպուսներից և մի շարք այլ զորամասերից կազմավորվում է «Կարս» խմբավորումը՝ Յաղուբ Շևքի փաշայի հրամանատարությամբ: Խմբավորման գլխավոր նպատակն էր գրավել ամբողջ Արևելյան Հայաստանը, ապա Թիֆլիսը և ապահովել արշավը դեպի Բաքու և Անդրկասպյան երկրներ: Յաղուբ Շևքին իր խմբավորումը բաժանում է չորս զորախմբի[1]:

---

[1] Հակառակորդի գործողությունների բնույթի և նրա մտահղացման մասին հայկական կողմի ունեցած հետախուզական տվյալների, ինչպես նաև իրավիճակի գնահատականի մասին տե՛ս հաջորդ ակնարկը:

Տեղեկանք. «Ալեքսանդրապոլ-Վորոնցովկա, Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ-Ապարան, Ալեքսանդրապոլ-Սարդարապատ չորս ուղղություններն էլ իրարից բաժանված են լեռներով, հետևաբար դիվիզիաները պետք է հարձակվեին մեկը մյուսից անկախ: Այն ժամանակվա կապի միջոցների պայմաններում հիշյալ զորախմբերի գործողությունների կոորդինացիան վերին աստիճանի դժվարին գործ էր: Սա հենց թուրքերի հարձակման թույլ կողմն էր: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ հայկական զորքերի հրամանատարությունը հիմնականում ընդունել էր ճիշտ որոշում և վերախմբավորել իր ուժերը: Հայերը հնարավորություն ունեին թուրքերին ջախջախել առանձին-առանձին: Հենց այդպիսի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին առաջին հերթին Ալեքսանդրապոլ-Սարդարապատ ուղղությամբ և Ղարաքիլիսայում»:

Աշոտ Հարությունյան,
Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս..., էջ 175-176

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԻՆ

Ալեքսանդրապոլի (Գյումրի) գրավումով Թուրքերի առջև բացվել էր դեպի Արևելահայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտավայր տանող ճանապարհը: Այլևս նահանջի տեղ չկար. թիկունքում Երևանն էր: Այստեղ գերիշխում էր քաղաքը թողնելու և դեպի Սևանի ավազան նահանջելու մտայնությունը: Բարեբախտաբար, ոչ բոլորն էին համակված այդպիսի պարտվողական տրամադրություններով: Նահանջի դեմ առաջինն ընդվզեց Գևորգ Ե կաթողիկոսը, որը կտրականապես մերժեց Սևանա կղզի տեղափոխվելու առաջարկը: Երևանի Ազգային խորհրդի նիստում ևս հարց է բարձրացվում Երևանը թողնելու, Սևան նահանջելու և այնտեղից դիմադրություն կազմակերպելու մասին: Սակայն դեռևս 1918թ. մարտին Երևանի դիկտատոր ընտրված Արամ Մանուկյանի և նրա համախոհների ջանքերով Ազգային խորհուրդը որոշում է ճակատամարտ տալ թշնամուն Սարդարապատում և Բաշ-Ապարանում:

Արամ Մանուկյան
(1879-1919թթ.)

Ճակատամարտի նախօրեին գեներալ Մ.Սիլիկյանը և Դրոն այցելում են Ա.Մանուկյանին և իրենց համերաշխությունը հայտնում հակառակորդին վճռական հակահարված տալու հարցում: Այսպես կազմավորվեց այն եռյակը, որը վճռորոշ դեր պետք է խաղար հետագա իրադարձություններում: Կազմավորվում է Հատուկ կոմիտե, որը գլխավորում է Արամ Մանուկյանը: Մայր տաճարի զանգերն այդ օրերին անընդմեջ ղողանջում էին, և այդ ղողանջն իբրև մարտակոչ տարածվում էր Արարատյան դաշտավայրի բոլոր անկյուններում:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄՏԱՀՂԱՑՈՒՄԸ 1918Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՎԵՐԱԽՄԲԱՎՈՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ



Քարտեզ 1

Տեղեկանք. «Ամբողջ հայ ժողովուրդը վճռել է դիմադրել: Դիմում ենք բոլոր հայ սպաներին, որպեսզի նրանք գան և կամավորական խմբերի գլուխն անցած ընդառաջեն թշնամուն: Ովքեր ցանկանում են ղեկավարի, առաջնորդի դեր ստանձնել, թող դիմեն Երևանի Ազգային խորհուրդ հենց այսօրվանից:

Երևանի Հայոց Ազգային խորհուրդ
21 մայիսի, 1918թ., Երևան»:

Գեներալ Մովսես Սիլիկյան
(1862-1937թթ.)

Հասարակության բոլոր գործուն ուժերը մասնակից են դառնում համազգային պայքարին: Արագ համալրվում են կորպուսի զորամասերը: Միաժամանակ սկսվում է աշխարհազորայինների հավաքագրումը: Ձինվորագրվում և Սարդարապատի ճակատամարտին մասնակից են դառնում ապագա մարշալ Հովհ. Բաղրամյանը, Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, ապագա գեներալներ Ա.Վարդանյանը, Գ.Չայլախյանը, գրող Ա.Բակունցը, հայագետներ Ա.Ղարիբյանը, Գր.Ղափանցյանը և այլք: Այսպիսով, ձևավորվում է մի պատկառելի ուժ՝ Երևանյան զորախմբի հրամանատար, գեներալ Մովսես Սիլիկյանի գլխավորությամբ:

Առաջին մարտերն Արարատյան դաշտավայրում

Դեպի Սարդարապատ շարժվող թուրքական զորախմբի կորիզը կազմում էր 36-րդ հետևակային «Գելիբոլու» (Դարդանելյան) դիվիզիան, որը թուրքական բանակի ամենամարտունակ զորամասերից էր: Զորախումբը բաղկացած էր երեք հետևակային, մեկ հրետանային գնդից, հարվածային և սակրավորների գումարտակներից, հեծյալ գնդից, քրդական 1500-անոց հեծելազորից, հրետանային մարտկոցից, որն ուներ 40 հրանոթ:

Հակառակորդին պետք է դիմակայեր գեներալ Մ.Սիլիկյանի գլխավորած Երևանյան զորախումբը, որը կազմված էր 2-րդ հրաձգային դիվիզիայից, 3-րդ հետևակային բրիգադից (Վանի 1-ին և 2-րդ գնդերը և Մակուի հետևակային գումարտակը), 2-րդ հեծյալ բրիգադի 1-ին գնդից և մի քանի առանձին զորամասերից: Հայկական զորքերի ձախ թևը պաշտպանում էին Ձեյթունի հեծյալ գունդը, կամավորական երկու վաշտ և Իգդիրի աշխարհազորայինները:

Տեղեկանք. «Տարբեր տվյալներով 5500-7000 զինվորներ ունեցող հայկական զորքը Սարդարապատում պետք է հաղթահարեր 6000-9000 կանոնավոր զինվորներ և 1500-3000 քուրդ հեծյալներ հաշվվող և լավ սպառազինված հակառակորդի դիմակայությունը: Թուրքերն ունեին ռազմամթերքի պաշարներ, օգնական ուժեր ստանալու հնարավորություններ՝ գումարած թաթարների աջակցությունը: Հայկական զորքը զուրկ էր օգնության որևէ հույսից»:

Ա.Ասրյան, Արամ Մանուկյան..., էջ 193

Գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյան (1863-1922թթ.)

Մայիսի 20-ին, ներխուժելով Արարատյան դաշտավայր, թուրքական զորքերը, առանց լուրջ դիմադրության հանդիպելու, գրավում են Արաքս և Ղարաբուրուն կայարանները: Հաջորդ օրը, առաջանալով ևս 10 կմ, նրանք գրավում են Սարդարապատ կայարանը և համանուն գյուղը, ապա Մրգաշատը: Հակառակորդը սպառնում էր գրավել Էջմիածինը, ապա Երևանը և միավորվելով Բաշ-Ապարան-Աշտարակ ուղղությամբ շարժվող 9-րդ դիվիզիայի հետ՝ առաջանալ Սևան-Դիլիջան-Ղազախ ուղղությամբ: Հայկական զորքերը հետ են քաշվում Արշալույս-Հայի Ձեյվա գծով: Հրամանատարությունը մշակում է հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու և հետ շպրտելու օպերատիվ ծրագիր, որն անհապաղ գործի է դրվում:

Հակահարձակողական գործողությունների անցնելուց առաջ գեներալ Սիլիկյանի հրամանով Սուրմալուի ճակատում մարտնչող Իգդիրի ջոկատը Դրոյի գլխավորությամբ անցնում է Արաքսի ձախ ափը՝ պայթեցնելով Կարակալայի և Մարգարայի կամուրջները: Դրանով չեզոքացվում է Երևանյան զորախմբին հանդիպակաց ափից սպառնացող հարձակման վտանգը: Իսկ Նախիջևանի կողմից հայկական ուժերի թիկունքը պաշտպանում էր հետևակային երրորդ բրիգադը՝ գնդապետ Բաղդասարյանի գլխավորությամբ:

Առաջին հաղթանակը

Մայիսի 22-ի առավոտյան, հրետանային պատրաստությունից հետո թուրքական զորքերը Սարդարապատի արձակ դաշտով հարձակման են անցնում Քյորփալու և Ղուրդուղուլի (այժմ՝ Արմավիր) գյուղերի բնագծում դիրքավորված հայկական ուժերի վրա և հասնում են Ղամըշլու (այժմ՝ Եղեգնուտ): Թուր-

քերն առաջանում էին ամբարտավան ինքնավստահությամբ, սակայն, երբ նրանց հոծ շարքերը գրեթե ամբողջությամբ ծածկել էին դաշտը, միաժամանակ որոտում են հայկական հրետանային մարտկոցները: Հրետանին, որը ղեկավարում էր գնդապետ Քր.Արարատյանը՝ Հայաստանի Հանրապետության ապագա ռազմական նախարարը, դիպուկ կրակ էր վարում հակառակորդի թե՛ գրոհող հետևազորի և թե՛ հրետանային ու գնդացրային կրակակետերի վրա: Հետագայում թուրքերը Սարդարապատում իրենց պարտությունը պատճառաբանում էին հայերի մեծաքանակ հրետանու առկայությամբ: Մինչդեռ իրականում թուրքերի 40 հրանոթի դիմաց հայկական կողմն ուներ ընդամենը 18-ը: Պարզապես Արարատյանի հմուտ մարտավարության շնորհիվ հրանոթները մարտի ընթացքում անընդհատ տեղափոխվում էին մի դիրքից մյուսը և տարբեր կրակակետերից հրետակոծում հակառակորդին՝ այդպիսով ստեղծելով մեծաքանակ հրետանու տպավորություն:

Հրետանու դիպուկ կրակով հակառակորդի շարքերում իրարանցում է սկսվում, նրա մարտակարգը խախտվում է: Խուճապահար ասկյարները փախչում են դեպի ելման դիրքերը: Պահը հասունացել էր, և գնդապետ Դ.Բեկ-Փիրումյանի հրամանով 5-րդ՝ «Մահապարտների» հրաձգային գունդը, Իգդիրի և պարտիզանական հետևակային գնդերը, հատուկ հեծյալ գունդը՝ աշխարհազորային ջոկատների աջակցությամբ, նետվում են հակագրոհի և հուժկու հարվածով փախուստի մատնում հակառակորդին: Ճնշելով թուրքական զորքերի հոծ պաշտպանությունը և արագ առաջանալով՝ հարձակվող հայկական զորամասերը հակառակորդին 15-20 կմ հետ են շպրտում Սարդարապատ գյուղի և կայարանի դիրքերից և ազատագրում են Մրգաշատն ու շրջակա տարածքը, իսկ ճակատի հյուսիսային հատվածում՝ Կոշը և Ուջանը:

Այսուհանդերձ, գնդապետ Դ.Բեկ-Փիրումյանը, զգուշանալով, որ թուրքերը կարող են ուշքի գալ, համալրում ստանալ և հակահարձակման անցնելով ի չիք դարձնել ձեռք բերված հաջողությունը, վճռում է չշարունակել հակառակորդի հետապնդումը և չկտրվել ելման դիրքերից:

Խուճապահար նահանջող թուրքական զորքերը, օգտվելով այն հանգամանքից, որ հայ ռազմիկների սրընթաց գրոհին չէր հետևել կրնկակոխ հետապնդումը, կարողանում են համախմբել իրենց ուժերը և ամրանալ Արաքս կայարանում ու մերձակա բարձունքների շրջանում:

Առաջին իսկ մարտերում հայ զինվորները ծանր կորուստներ (շուրջ 500 սպանված և վիրավոր) են պատճառում հակառակորդին: 36-րդ հետևակային դիվիզիային փոխօգնության հասնելու նպատակով Վեհիբ փաշայի հրամանով թուրքական 5-րդ դիվիզիայի զորամասերը փորձում են Սուրմալուից գետանցել Արաքսը և հարվածել մեր զորքերի թիկունքին, սակայն Արաքսի ափին դիրքավորված հայկական սակավաթիվ ջոկատները հաջողությամբ կասեցնում են թուրքերի բոլոր գրոհները:

Տեղեկանք. «...Կեսօրից հետո 5-րդ գունդն անցավ հարձակման: Թուրքերը չդիմացան և սկսեցին հետ քաշվել: Դա բարձրացրեց զորքի և բնակչության ոգին... Բնակիչները սկսեցին խմբերով ներկայանալ՝ զենքով ու սննդամթերքով ճակատ մեկնելու համար: Համալրում եկավ ամեն տեղից, հատկապես Երևանից և Ղամարլուից»:

Գնդապետ Քր.Արարատյանի 07. 02. 1919 զեկուցագրից

Մայիսի 24-ին թուրքական զորքերն իրենց գրաված նպաստավոր դիրքերից հարձակում են ձեռնարկում, որը, սակայն, կասեցվում է: Կրկին դիպուկ կրակով աչքի են ընկնում հայ հրետանավորները: Այս մարտը ճակատամարտի նախորդ փուլի ավարտը նշանավորող կարևոր իրադարձություն էր, քանի որ հակառակորդի հարձակողական «պոռթկումը» հաղթահարած հայկական կողմը խլում է նախաձեռնությունը: Սկսվում է արմատական բեկումը ճակատամարտում:

Ճակատային գրոհների փուլը

Առաջին հաղթական մարտերից հետո հայկական զորքերը դիրքավորվում են Սարդարապատի մերձակայքում: Աջ կողմից՝ կայարանի մոտ, 5-րդ գնդի վեց վաշտերն էին, էջմիածնի պարեկային վաշտը, Զեյթունի գունդը, հատուկ հեծյալ գնդից մեկ էսկադրոն, Ղարաքիլիսայի գնդից մեկ վաշտ: Երկաթուղագծից հարավ կանգնած էին Իգդիրի ջոկատը, պարտիզանական գունդը, հատուկ հեծյալ գունդը, նաև երկրորդ մարտկոցի չորս հրանոթ: Պահեստային ուժերն էին՝ 5-րդ գնդի երկու վաշտ, Մակուի գումարտակը, Երզնկայի և Խնուսի գնդերը:

Մայիսի 25-ին գեներալ Սիլիկյանի հրամանով վերախմբավորելով իրենց ուժերը՝ հայկական զորամասերը վեց կիլոմետր ձգվող ճակատով դիրքեր են գրավում թուրքական զորամասերից մոտ 700 մետր հեռավորության վրա՝ ճակատով դեպի հյուսիս: Շտաբս-կապիտան Սարգսյանցի գլխավորությամբ ձևավորված զորասյունը հարձակում է գործում Արաքս-Ներքին Թալին-Մաստարա ուղղությամբ: Առաջնահերթ խնդիրը մերձակա լեռան գրավումն էր և այնտեղ ամրացած հակառակորդին հետ շպրտելը: Այս ընթացքում ճակատային գրոհ է սկսվում նաև Արաքս կայարանի շրջանում ամրացած հակառակորդին իր նպաստավոր դիրքերից դուրս մղելու համար: Հայկական ստորաբաժանումների առաջխաղացմանը դիմակայել փորձող հակառակորդը բոլոր ուժերը կենտրոնացնում է գրոհները կասեցնելու համար և վերջնականապես հրաժարվում հարձակողական մարտավարությունից:

Գեներալ Թովմաս Նազարբեկյան

Գնդապետ Քրիստափոր Արարատյան
(1876-1937թթ.)

Հնարամիտ թևանցումը

Թուրքական զորքերի համառ դիմադրությունը կոտրելու համար հայկական ուժերի հրամանատարությունը՝ գեներալ Մ.Սիլիկյանի գլխավորությամբ, մշակում է հնարամիտ ծրագիր, ըստ որի՝ հայկական զորքերի մի մասը պետք է թևանցում կատարեր և թիկունքից հարվածեր հակառակորդին: Այդ նպատակով փոխգնդապետ Հասանփաշայանի գլխավորությամբ ձևավորվում է առանձին հարվածային զորախումբ՝ Խզնաուզի ջոկատը, որը կազմված էր Երզնկայի հետևակային գնդից, Մակուի առանձին գումարտակից, երկու էսկադրոնից, Խնուսի գնդի մեկ վաշտից և չորս հրանոթից:

Մայիսի 27-ի լուսաբացին հարվածային զորախումբը, թևանցում կատարելով Խզնաուզ (այժմ՝ Արագած) և Կոշ գյուղերի կողմից, Շամիրամի ձորով ու լեռներով դուրս է գալիս Արաքս կայարանի մատույցները և թիկունքից անակնկալ գրոհ ձեռնարկում հակառակորդի վրա: Նրա թիկունքին Թալինի կողմից հարված է հասցնում նաև մշեցիների ջոկատը՝ Պանդուխտի (Միքայել Սերյան) գլխավորությամբ:

Տեղեկանք. «Կոշ գյուղի մոտ միավորելով երկու գումարտակ Հասանփաշայանի գլխավորությամբ՝ հրամայեցի շարժվել լեռների փեշերով հյուսիս, իսկ հետո լուսաբացին շրջվել արևմուտք և դուրս գալ թուրքերի թիկունքը: Մայիսի 27-ի լույս 28-ի գիշերը այդ գումարտակները կատարել են իրենց զորաշարժը, և ժամը 1-ին թուրքերը շտապ հետ են քաշվել իրենց դիրքերից»,- Մ.Սիլիկյանի նամակից՝ Թ.Նազարբեկյանին:

Աշոտ Հարությունյան,
Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս..., էջ 183

Առավոտյան Ժամը 9-ին սկսվում է հարձակման հրետանային պատրաստությունը: Ժամը 14-ին տեղեկություն է ստացվում, որ Երզնկայի գունդը շրջանցել է թուրքական զորքերի թևը: Թուրքերի դիմահար կրակի հետևանքով փոքր-ինչ դանդաղում է Մակուի գումարտակի թևանցումը Ներքին Կալակուտ գյուղի մերձակայքում, սակայն իսկույն փոխօգնության ուղարկված Երզնկայի գնդի երկու վաշտերը շտկում են իրավիճակը:

Վերջնական հաղթանակը

Երզնկայի գունդը, կտրուկ թեքվելով հարավ, դուրս է գալիս ամրացված բարձունքների թիկունքը և անմիջապես հարձակման անցնում: Միաժամանակ Սարդարապատի կողմից ճակատային գրոհի են նետվում հայկական մյուս զորախմբերը: Հակառակորդը փորձում է դիմադրել, սակայն երկկողմանի ճնշմանը երկար չդիմանալով և ծանր կորուստներ կրելով՝ լքում է դիրքերն ու խուճապահար նահանջում:

> **Տեղեկանք.** «Թուրքերը խուճապահար փախչում են Կարա-Բուրուն լեռան ուղղությամբ՝ դեն նետելով հանդերձանքը: Մեր փոքրաթիվ հեծելազորը հետապնդում է նրանց: Ձախ զորասյունը հետապնդելով թուրքերին երկաթգծի երկայնքով՝ գրավում է Արաքս կայարանը, իսկ երեկոյան՝ նաև Մաստարա կիսակայարանը: Աջ զորասյունը, որի կազմում էր նաև Երզնկայի գունդը, երեկոյան մոտենում է Մաստարա գյուղին: Պանդուխտի հեծյալները շարունակում են հետապնդել թշնամուն Կրիզլուի և Գյոզլուի վրայով, մայիսի 28-ին հասնում են Սողուլու: Թուրքերը խուճապի մեջ են: Նրանց գումարտակներն անցնում են Արփաչայի արևմտյան ափը»,- Սարդարապատի ջոկատի շտաբի պետ, կապիտան Ա.Շնեուր:
>
> ***Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, էջ 49-50***

Հաջորդ օրը, զարգացնելով հարձակումը, հայկական զորքերն ազատագրում են Արագած կայարանը, Ներքին և Վերին Թալինն ու Մաստարան: Թուրքական 36-րդ դիվիզիան ջախջախվում ու հետ է շպրտվում դեպի Ալեքսանդրապոլ: Ճակատամարտում թուրքական զորքերի կորուստները կազմում էին ավելի քան 3500 զինվոր:

Սարդարապատի ճակատամարտի հաղթական ավարտի ավետիսը համաժողովրդական ցնծության ալիք է բարձրացնում Երևանում: Մայիսի 29-ին գեներալ Սիլիկյանը նոր կոչով է դիմում ժողովրդին:

Քարտեզ 2


1918Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ
Սպիտակ
Կումայրի
(Ալեքսանդրապոլ)
Դարաքիլիսա
Բայանդուր
Ալագյազ
Մելիքգյուղ
Նիգավան
(Դանագիրմազ)
Միրաք
Ապարան
Աղին
Արթիկ
Անի
Արագած լ.
Քուչակ
(Ալիքուչակ)
Թեղենիս լ.
Մաստարա
Թալին
Արագած
Կոշ
Ուջան
Աշտարակ
Երևան
Խզնաուզ
Արշալույս
Արթավիր
Արաքս
Էջմիածին
Սարդարապատ
Արգաշատ
Եղեգնուտ
Բարդող լ.
Կարակալա
Կողբ
Մարգարա
Սինակ լ.
Իգդիր
Մասիս լ.

ԲԱՇ-ԱՊԱՐԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Սարդարապատի ճակատամարտի ընթացքում պարզ է դառնում, որ թուրքական զորքերը Երևանին սպառնում են նաև մեկ այլ՝ Համամլու (Սպիտակ)-Ապարան-Աշտարակ ուղղությամբ: Դեռևս մայիսի 20-ին թուրքական զորքերը գրավել էին Համամլուն և բաժանվելով երկու խոշոր զորախմբերի՝ առաջանում էին դեպի Բաշ-Ապարան և Ղարաքիլիսա (Վանաձոր): Էսադ փաշայի գլխավորած 9-րդ հետևակային դիվիզիայի խնդիրն էր առաջանալ Արագածի փեշերով, թափանցել Սարդարապատի հայկական զորքերի թիկունքը և գրավել Երևանը:

Տեղեկանք. «Արդեն մայիսի 23-ին Բաշ-Ապարանի շրջանին մեջ երևան հանված էր 3-րդ թուրքական զորաբաժինը, որը… կը հառաջանար Համամլու կայարանեն: Այսպեսով, զոր. Սիլիկյանը, սպառնալով Ալեքսանդրապոլի ուղղությամբ թուրքերու կռնակին, իր կարգին կարող էր կտրվել Երևանեն, եթե Դրոյի ջոկատը չկասեցներ թշնամիի առաջխաղացումը»:

Գ.Ղորղանյան, Հայերի մասնակցությունը…, Հայրենիք, 1928, թիվ 5

Թուրքական 3-րդ դիվիզիան, որ լիարժեք համալրված և սպառազինված էր, բաղկացած էր դեռևս Դարդանելի մարտերում հռչակված 106-րդ, 107-րդ և 108-րդ հետևակային գնդերից, հրետանային երկու դիվիզիոնից, հարվածային հետևակի ու սակրավորների գումարտակից, կորպուսային հեծյալ գնդից և այլ ստորաբաժանումներից, որոնց միացել էին քրդական 1500-անոց հեծելազորը և տեղական մահմեդականներից կազմված անկանոն խմբեր:

Առաջին ընդհարումը

Հայկական կորպուսի գլխավոր ուժերը՝ առաջին և երկրորդ դիվիզիաները, ամբողջությամբ կենտրոնացվել էին Սարդարապատի և Ղարաքիլիսայի ուղղություններում, մինչդեռ Համամլու-Բաշ-Ապարան-Աշտարակ ուղղությամբ մինչև մայիսի 23-ը կանոնավոր զորամասեր չկային:

Տեղեկանք. «Հայկական բանակի հրամանատարությունը ռազմաճակատի այդ հատվածում հակառակորդի գործողություններին իրազեկ լինելու, հետախուզություն անցկացնելու, իսկ անհրաժեշտության դեպքում նաև բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով Բաշ-Ապարանի ճակատ է ուղարկում Սեդրակ Ջալալյանի և Արսեն Տեր-Պողոսյանի[1] գլխավորած մարտական խմբերը»:

Հ.Գևորգյան, Դրո, էջ 228

Տեղի աշխարհազորային ուժերը՝ Մելիքգյուղի, Դանագիրմազի (Նիգավան), Ալիքուչակի, Չամռլուի (Քասաղ), Ապարանի և շրջակա մյուս գյուղերի բնակիչներից կազմված ինքնապաշտպանական խմբերը, Սեդրակ Ջալալյանի և Արսեն Տեր-Պողոսյանի ղեկավարությամբ, պաշտպանական դիրքեր են գրավում Դավաբոյինի բարձունքներում, որտեղ և տեղի է ունենում նրանց առաջին բախումը թուրքական զորքերի առաջապահ զորամասերի հետ: Սակայն այդ փոք-

[1] Ռաֆֆու «Խենթը» վեպի հերոս Վարդանի (Խենթի)՝ Սամսոն Տեր-Պողոսյանի որդին է:

ռաթիվ և վատ սպառազինված ուժերն անկարող էին կասեցնել հակառակորդի մեծաքանակ ուժերի առաջխաղացումը:

Սարդարապատի ու Ղարաքիլիսայի ճակատներում ծավալված իրադարձությունների վրա ուշադրությունը կենտրոնացրած հայկական կորպուսի հրամանատարությունը հակառակորդի բաշապարանյան խմբավորման մասին բավարար հետախուզական տվյալներ չուներ: Այդուհանդերձ, նկատի ունենալով նախորդ օրը ծավալված մարտերի՝ հայկական կողմի համար ընդհանուր առմամբ անհաջող ընթացքը, գեներալ Սիլիկյանը վճռում է Սարդարապատի ուժերի մի մասը Դրոյի գլխավորությամբ ուղղել դեպի Բաշ-Ապարան:

Ի դեպ, իր հուշերում Դրոն նշում է, որ ինքը փորձել է տարհամոզել գեներալ Սիլիկյանին, որպեսզի վերջինս չմասնատի Սարդարապատում մարտնչող հայկական զորքերը: Սակայն գեներալ Սիլիկյանը հեռատեսորեն մերժել է Դրոյի ծրագիրը, քանի որ եթե Ապարանի ուղղությամբ չհաջողվեր կասեցնել հակառակորդի առաջխաղացումը, ապա սպառնալիք կստեղծվեր թե՛ Երևանի և թե՛ Սարդարապատի հայկական ուժերի համար:

Դրոյի փոքրաթիվ զորախումբը՝ փոխգնդապետ Կորոլկովի գլխավորած պարտիզանական հեծյալ գունդը, գնդապետ Զալինյանի հայկական 2-րդ գնդից մեկ հարյուրյակ, նաև գնդապետ Դոլուխանյանի 6-րդ հրաձգային գնդից մեկ գումարտակ՝ հրետանային բրիգադի երկու լեռնային հրանոթներով, Աշտարակից դեպի Բաշ-Ապարանի ճակատ է շարժվում մայիսի 23-ին: Նույն օրը երեկոյան առաջապահ ջոկատները բախվում են հակառակորդի անարգել առաջացող զորքերին և անակնկալի բերում նրանց: Արագածի փեշերին սկսված ծանր մարտերին մասնակցում էին նաև տեղի աշխարհազորային ուժերը: Անսպասելի հարվածի հետևանքով զգալի կորուստներ կրելով՝ հակառակորդն ընկրկում է, սակայն մինչև մթնելը կարողանում է վերախմբավորել ուժերը և դիրքավորվել իր զբաղեցրած բնագծերում:

Դրոյի զորախմբի ժամանումը ոգևորության ալիք է բարձրացնում Ապարանի շրջանում: Տեղի բնակիչներից շատերը պատրաստակամ ներկայանում են նրան՝ զինվորագրվելու և առաջիկա մարտերին մասնակցելու համար:

Մայիսի լույս 24-ի գիշերը Դրոն հրամանատարական խորհրդակցություն է անցկացնում, որտեղ որոշվում է մինչև օժանդակ զորամասերի ժամանումը պարբերական հարձակողական գործողություններով ժամանակ շահել: Սակայն նախ հարկ էր զորքերը համալրել տեղի աշխարհազորային ուժերով, քանզի ստորաբաժանումների մի մասի անձնակազմն անգամ կիսով չափ համալրված չէր:

Տեղեկանք. «Երբ Դրոն զորքով եկավ Ապարան, իմ 1200 զինվորներից վերցրեց 700 հոգի, լրացրեց ուրիշների զորամասերը, իսկ 500 զինվորներս և իմ չորս գնդացիրները թողեց իմ հրամանի տակ»,- աշխարհազորի հրամանատար Ս.Զալալյան:

Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, էջ 126

Մարտը

Մայիսի 24-ին Բաշ-Ապարանի ճակատում հայկական ուժերի ձախ թևում՝ Ալեքսանդրապոլի մայրուղուց մինչև Արագածի փեշերը, դիրքավորված էր 6-րդ հրաձգային գունդը, իսկ աջ թևում՝ Ալիքուչակ գյուղից դեպի Վանաձոր (Ղարաքիլիսա) ընկած անտառապատ բարձունքները վերահսկում էին պարտիզանական և 2-րդ հեծյալ գնդերի հեծելազորայինները: Կենտրոնում տեղաբաշխված էին մնացած ուժերը:

Մայիսի 25-ին հայկական ուժերը հարձակման են անցնում և հաջողությամբ առաջանալով՝ ազատագրում են Ապարանը և թուրքական զորքերին հետ շպրտում մինչև Ղոնդաղսազ գյուղ: Սակայն քանակական գերազանցությունը հակառակորդին հնարավորություն է տալիս համալրել զորքերը և կարգավորել մարտակարգը: Հակահարձակման անցնելով՝ նա կարողանում է վերագրավել Ապարանը:

Ըստ հայկական բանակային կորպուսի շտաբի պետ, գեներալ Վիշինսկու՝ «Մայիսի 26-ի վաղ առավոտյան թշնամին գերազանց ուժերով հարձակման դիմեց Բաշ-Ապարանի զորամասի դեմ և ձախ թևից մեր թիկունքն էր անցնում: Որովհետև օժանդակ ուժերը դեռ չէին հասել և չկամենալով շրջապատված լինել՝ մեր զորամասը նահանջեց Ղազնաֆար-Ղարաքիլիսա գյուղի շրջանը, որտեղ միացավ օգնության եկող զորամասին»: Սակայն այստեղ պարզ է դառնում, որ փոքրաթիվ հայ զինվորների դեմ թուրքերը կենտրոնացրել են մի ամբողջ դիվիզիա՝ լիովին համալրված և սպառազինված: «Բաշ-Ապարանում կենտրոնացած էր թշնամու մի զորասյուն՝ 9-10 հազար հոգուց բաղկացած: Նույն թվով թուրքական ուժեր կային նաև Սարդարապատի և Ղարաքիլիսայի ճակատում»,- գրում է խմբապետ Մ.Աբրահամյանը:

Ստեղծված մարտավարական իրավիճակն անսպասելի էր հայկական կողմի համար, սակայն նահանջելով և ամրանալով մերձակա գյուղերի շրջանում՝ Դրոյի զորախմբին հաջողվում է կասեցնել հակառակորդի առաջխաղացումը: Շուտով հայկական ուժերը համալրում են ստանում՝ 6-րդ հրաձգային գնդից երեք գումարտակ, գնդապետ Սակինի գումարտակը, շտաբս-կապիտան Իգիթխանյանի հրետանային մարտկոցը, նաև Ջհանգիր աղայի գլխավորած եզդիների հեծյալ ջոկատը:

Արդ, ժամանակն էր վճռական գործողությունների դիմելու և հակառակորդին հետ շպրտելու դեպի Ալեքսանդրապոլ: Բայց հարձակողական գործողություններ ծավալելու համար հայկական ուժերի զբաղեցրած դիրքերը բարենպաստ չէին. շրջակա բոլոր բարձունքները գրավված էին հակառակորդի կողմից, և զորաշարժերի հնարավորություն չկար: Ուստի, Դրոն վճռում է ողջ ուժերն ուղղորդել դեպի կենտրոն և այստեղ ճեղքել հակառակոր-

դի պաշտպանությունը: Այս հանդուգն մտահղացումը հնարավոր էր իրագործել սոսկ մեկ պայմանով՝ եթե բոլոր զորամասերը գործեին համախմբված և անձնազոհ:

> **Տեղեկանք.** «Ալագյազում ունեի մի բատալիոն, թողեցի 2 վաշտ: Էն 2 վաշտն էլ իջացրի կենտրոն: Ռեզերվնի բատալիոնից էլ 2 վաշտ ուղարկեցի կենտրոն: Ուրեմն կենտրոնում ես ունեմ 6 վաշտ: Մի բատալիոն էլ մնում ա աջ թևի վրա»:
>
> *Դրոյի ձայնագրված հուշերից*

Գիշերը՝ հորդառատ տեղացող անձրևի ներքո ևս մեկ անգամ հետախուզվում են հակառակորդի դիրքերն ու ճշտվում գալիք հարձակման ուղղությունները:

Հաղթանակը

Մայիսի 28-ի առավոտյան սկսվում է վճռական մարտը: Անցնելով հակահարձակման՝ հայկական ուժերը հակառակորդին դուրս են մղում իր դիրքերից և հետ շպրտում դեպի Ապարան:

> **Տեղեկանք.** «Առավոտը անցա հակահարձակման: Թուրքերը տեղի տվին, քաշվան դեպի Բաշ-Ապարան և, բարեբախտաբար, նախազգացմունքս ճիշտ էր եղել: Երբ որ Բաշ-Ապարանի վրա կատաղի կռիվ ենք տալիս, դրանք ուզեցան մանյովր անել, որ իմ թիկունքին զարկեն: Հանդիպեցին Սահակյանի վաշտին՝ տեղացիներից: Ուրեմն աջ թևս ապահով էր: Հիմա Բաշ-Ապարանի ուղղությամբ ես դրանց զարկում եմ, նեղում եմ: Դրանք երբ որ նեղն ընկան, տեսա՝ մանյովր արին՝ զարկեն, կենտրոնը պատռեն: Էս հանգամանքից օգտվեցինք, որ ուժերը քաշենք կենտրոնի վրա»:
>
> *Դրոյի ձայնագրված հուշերից*

Դրոյի մարտավարությունը լիովին արդարանում է. ճակատի թևերում չկարողանալով կոտրել հայ աշխարհազորայինների համառ դիմադրությունը՝ հակառակորդը մղվում է դեպի կենտրոն: Հրամանատարի հնարամտությունն իր գործն արել էր, և այժմ արդեն ճակատամարտի ելքը կախված էր հայ զինվորների քաջությունից և անձնուրացությունից: Համաձայն խմբապետ Մ.Աբրահամյանի հուշերի՝ «Մեր գնդացիրների թևային կրակից թշնամու թևը հավաքվում էր դեպի կենտրոն: Կողմերի միջև եղած տարածությունը հասնում էր 200-220 մետրի: Ճակատը մեկեն «ուռա՜» գոչելով անցավ գրոհի: Թշնամու ուժերի

կեսը դիրքերում քնած լինելով՝ հակառակորդն անակնկալի եկավ և դուրս գալով դիրքերից՝ դիմեց խուճապային փախուստի: Մի կողմից մեր գնդացիրներն սկսեցին հնձել, իսկ Արագածի կողմից էլ մեր գումարտակների գնդացրային կրակն ու համազարկերը նեղը դրին թշնամուն... Թուրքական երեք գունդ իրար խառնված փախուստի էին դիմել, սակայն... ընկնելով համազարկերի տակ, վերադարձան և Բաշ-Ապարանի մոտով ուղղվեցին դեպի Դանագիրմազի բարձունքը»:

Հետագա իրադարձությունները գերազանցում են բոլոր սպասելիքները: Թուրքական զորքերի ճակատի կենտրոնում խմբավորված ուժերը, *կրակային պարկում* հայտնվելով և *խաչաձև կրակի* տակ ընկնելով, խուճապահար փախուստի են դիմում: Այս տեսնելով՝ թևերում դիրքավորված զորքերը, երկյուղելով, որ կենտրոնի ճեղքումից հետո կհայտնվեն շրջապատման օղակում, իրենք ևս գլխապատառ ճողոպրում են Ապարանից դեպի Շիրակի դաշտավայր:

Կրնկակոխ հետապնդելով հակառակորդին՝ երեկոյան հայկական զորքերը գրավում են Դանագիրմազ գյուղը՝ թույլ չտալով, որ թուրքական զորքերն ամրանան շրջակա բարձունքների վրա: Մայիսի 29-ի առավոտյան Դրոն իր զորախմբով վերսկսված առաջխաղացման ընթացքում թուրք բանագնացից տեղեկանում է կնքված զինադադարի մասին, ինչը նշանակում էր, որ նա չէր կարող զարգացնել ձեռք բերած հաջողությունը և պարտավոր էր դադարեցնել իր զորախմբի հաղթական առաջխաղացումը:

> **Տեղեկանք.** «Բաշ-Ապարանի ուղղությամբ հակառակորդը, հետ շպրտվելով Ղազնաֆարի և Ղարաքիլիսայի համար մղված մարտերում, մայիսի 29-ի երեկոյան ջախջախվեց՝ դաշտում թողնելով 200 սպանված, 2 գնդացիր, հարյուրից ավելի հրացան և զինամթերք: Մեր կորուստներն աննշան են: Զորքերի ոգին գերազանց է»,- հատված Գլխավոր շտաբի հաղորդագրությունից:
>
> ***Ս.Աֆանասյան, Սարդարապատի հաղթանակը, էջ 59***

Գեներալ Նազարբեկյանը կարգադրում է դադարեցնել մարտը, ինչը հիասթափություն է առաջացնում հայկական զորքերի մեջ, որոնք, ոգեշնչված Սարդարապատում և Բաշ-Ապարանում ձեռք բերված հաջողություններից, ձգտում էին ավելի առաջանալ և ազատագրել գրավյալ տարածքները, առաջին հերթին՝ Ալեքսանդրապոլն ու Կարսը:

Ամփոփում

Սարդարապատի և Բաշ-Ապարանի փայլուն հաղթանակները և Ղարաքիլիսայի հերոսական առճակատումը կտրուկ փոխեցին պատերազմի ընթացքը. ընդամենը տասն օր առաջ անարգել առաջացող հակառակորդն այժմ նահանջում էր, իսկ հայկական զորքերը պատրաստ էին շարժվել առաջ և ազատագրել Կարսն ու Ալեքսանդրապոլը, և միայն Բաթումում կնքված զինադադարը կանխեց նրանց հետագա առաջխաղացումը: Այսուհանդերձ, հենց այս զինադադարը դարձավ գրեթե 600-ամյա ընդմիջումից հետո հայոց անկախ պետականության վերահաստատման փաստացի հիմքը:

ԳԱՆՁԱԿԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ
(1918Թ. ՄԱՐՏ-ՀՈՒՆԻՍ)

1918-ի մայիսյան հաղթական հերոսամարտերի արդյունքում Արևելյան Հայաստանում թուրքական հարձակումը կանգնեցվեց, և հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը: Բայց թուրքական զորքերն առաջ շարժվելով Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա-Թիֆլիս և Ղարաքիլիսա-Դիլիջան-Աղստաֆա ուղղություններով՝ սկսեցին Բաքվի արշավանքը: Ողջ հունիսին թուրքական հրամանատարությունը զորքեր էր փոխադրում Գանձակ, ուր նրանց առաջապահ զորամասերը Թավրիզ-Ղազախ գծով հասել էին դեռ մայիսի վերջին: Նրանց հետ էլ մայիսի 27-ին Գանձակ ժամանեց ընդհանուր հրամանատարը՝ Էնվեր փաշայի խորթ եղբայր Նուրի փաշան:

Իսկ Բաքվի Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ ու արտաքին գործերի ժողկոմ Ստեփան Շահումյանի և Հայոց Ազգային խորհրդի ջանքերով կազմվեց շուրջ 15.000 հայ զինվորներից բաղկացած ուժ: Համազասպ Սրվանձտյանի հրամանատարությամբ կռվում էր 6000, գնդապետ Հարությունյանի և փոխգնդապետ Բեկ-Զուրաբյանի բրիգադներում՝ համապատասխանաբար 5000 և 4000 զինվոր: Ընդհանուր հրամանատարն էր գնդապետ Ղազարյանը, գլխավոր շտաբի պետը՝ գնդապետ Ավետիսյանը: Ժողկոմխորհի զորքերի գլխավոր շտաբում թարգմանչի հաստիքով ծառայում էր նաև ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը: Շահումյանը որոշել էր ջախջախել Գանձակը զավթած և Բաքվին սպառնացող թուրք-մուսավաթական հրոսակներին:

Համազասպ Սրվանձտյան
(1873-1921թթ.)

Տեղեկանք. Մոսկվան և հատկապես Վ.Լենինն ու Ի.Ստալինը կտրականապես դեմ էին Գանձակի արշավանքին, սակայն հունիսի 7-ին Բաքվի խորհրդի նիստում Շահումյանը հստակ հայտարարեց. «Մենք պետք է հանդիպենք թշնամուն ոչ թե այստեղ, ուր նրանք կցանկանային, այլ այնտեղ, ուր մեզ համար ձեռնտու կլինի», իսկ Լենինին տեղեկացրեց, որ հաջողության դեպքում մտադիր են գրոհել Թիֆլիսը:

Հունիսի 10-ին, շարժվելով Գանձակի ուղղությամբ, հայկական ուժերը հաջորդ օրը գրավեցին Սաղրլի կայարանը, իսկ հունիսի 12-ին՝ Քյուրդամիրը: Տեսնելով իր անզորությունը՝ Նուրի փաշան կարգադրեց քանդել Քյուրդամիր-Գանձակ երկաթգիծը, ապա դիմեց վերջին միջոցին՝ Եվլախ և Լյաքի կայարանների մոտ քանդելով Կուր գետի ամբարտակները և հեղեղելով հարյուրավոր քառակուսի կիլոմետր տարածք:

Ջրային պատնեշն անհաղթահարելի էր, և հայկական ուժերը դիմեցին մոտ 160 կիլոմետրանոց թևանցման. Համազասպի բրիգադն ուղարկվեց միանալու Շամախիից եկող Թադևոս Ամիրյանի զորամասին՝ լեռներով առաջանալու արևմուտք և իջնելու Եվլախ կայարան: Կուրի ձախափնյակում անապատով անցնելով 75 կմ՝ բրիգադը հունիսի 17(30)-ին Կարամարյանի բարձունքներում ջախջախեց թուրք-թաթարական 2000-անոց զորախմբին և օգնության եկած թուրքական ուժերին (հակառակորդն ուներ 500-ից ավելի

սպանված ու վիրավոր), տիրանալով չորս հրանոթի ու տասնյակ գնդացիրների՝ մտավ Գյոկչա: Հունիսի 17-ը հայկական զորքերի փայլուն հաջողությունների բարձրակետն էր:

Սակայն Գյոկչայում չհանդիպելով Ամիրյանին ու տեղեկանալով, որ հակառակորդը համալրում է ստանում, չունենալով կապ գլխավոր շտաբի հետ՝ Համազասպը, զգուշանալով խոր թիկունքում շրջապատման մեջ մնալուց, հետ դարձավ Քյուրդամիր: Հաջորդ օրը հյուսիս-արևելքից Գյոկչա մտավ մարտերով շուրջ 110 կիլոմետրանոց անցում կատարած Ամիրյանի գումարտակը, սակայն իմանալով Համազասպի նահանջի մասին՝ հետ քաշվեց Շամախի: Հետախուզության ու կապի վատ աշխատանքի պատճառով անարդյունք ավարտվեց այս համարձակ ու դժվարին գործողությունը, որի հաջող ելքն էապես կազդեր հետագա դեպքերի վրա:

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԸ

Զորավար Անդրանիկը, որ Կարինի (Էրզրումի) անկումից հետո նշանակվել էր արևմտահայերից կազմված Հայկական առանձին հարվածող զորամասի հրամանատար, հրաժարվելով ճանաչել Բաթումի 1918թ. հունիսի 4-ի պայմանագիրը, զորամասով հեռացավ Դիլիջանից հարավային ուղղությամբ՝ շարունակելու կռիվը Թուրքիայի դեմ:

Դեպի Խոյ

Անդրանիկ Օզանյան (1918թ.)

Զորավարի ծրագիրը տարածվեց ժողովրդի մեջ, ու մի քանի օրում մարտիկների թիվը բավական աճեց: Շուրջ 4000 մարտիկներից ու 20 հազար արևմտահայ գաղթականներից կազմված զորամաս-քարավանը հունիսի 17-ին հասավ Նախիջևանի շրջան: Տեղեկանալով, որ թուրքերը շտապում են երկաթգծով զորքեր ուղարկել Պարսկաստան՝ թիկունքից հարվածելու անգլիական բանակին, զորավարը հրամայեց պայթեցնել երկաթուղային կամուրջը, թունելները և քանդել մի քանի կիլոմետր երկաթգիծ:

Երեք օր անց Զուղայի կամրջով զորամաս-քարավանը մտավ Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Հայաստանի հարավարևելյան գավառները: Այստեղ առաջապահ ստորաբաժանումները հունիսի 22-ին ջախջախեցին թուրքական 4-րդ բանակի 36-րդ զորամասի գումարտակներից մեկը: Զորավարը հույս ուներ, որ Սալմաստում իրեն կմիանան 2000 վանեցի կռվողներ ու շուրջ 8000 զինված ասորիներ և պատկառելի ուժ կազմելով՝ հնարավոր կլինի հասնել Բաղդադ: Բայց պարզվեց, որ թուրքական զորքերը գրավել են Սալմաստը, և Վանի գաղթականությունն ասորի բնակչության հետ չորս օր առաջ հեռացել է դեպի Ուրմիա: Միջագետք տանող ճանապարհը Սալմաստի անկումով փակվել էր, և հունիսի 23-ին անցնելով հարձակման՝ զորամասը գրեթե գրավեց Խոյը: Բայց երբ պարտություն կրած թուրքերին օգնության հասած թուրքական հեծելազորը հրետանու աջակցությամբ փորձեց անցնել զորամասի թիկունքը, գաղթականությունն այնպիսի խուճապի մատնվեց, որ խառնեց նաև մարտակարգերը, որոնք վերստին նահանջեցին Զուղա:

Հետագայում ևս, խոշոր մարտերի ժամանակ գաղթականները, մատնվելով խուճապի, մեծապես դժվարացնում էին զորամասի գործողությունները: Իսկ թուրքերը, գիտենալով, որ Անդրանիկն իր զորամասով ոչ մի կողմից օգնություն չի ստանում, առավել համարձակ էին ու ամեն գնով ձգտում էին ոչնչացնել զորամասն ու նրան ապավինած գաղթականությանը:

Նախիջևանի հայությանը պաշտպանելիս

Հունիսի 24-ին Անդրանիկին միացան Վանի գնդի որոշ ստորաբաժանումներ: Շոգից ու համաճարակներից խուսափելու համար զորամասը, գրավելով թուրքաբնակ Յայջին և հրկիզելով Ջուղայի կամուրջը, շարժվեց դեպի Նախիջևան:

Հուլիսի 7-ին Անդրանիկը տեղեկացավ անգլիական զորքերի, իսկ Բաքվի ուղղությունում՝ Ստեփան Շահումյանի ղեկավարած ուժերի սկսած խոշոր հարձակման և Եվրոպական ճակատում դաշնակիցների հաջողությունների մասին: Թեև այս ուրախալի լուրերին՝ տագնապալի իրավիճակ էր: Բաքվին տիրելու համար թուրքական հրամանատարությունը մեծ ուժեր էր կենտրոնացնում՝ արգելելու համար Անդրանիկի ու Շահումյանի ուժերի միացումը:

Նախիջևանի հայությանը պաշտպանելու համար Անդրանիկի զորամասն անցավ Ապրակունիս: Միաժամանակ, օգնության խնդրանքով նրան դիմեց նաև Արցախի Հայոց ազգային խորհուրդը: Բաքվի ուղղության հայկական զորքերն այդ օրերին առաջանում էին դեպի Եվլախ, իսկ թուրքական զորքերը Գանձակը զավթելուց հետո պատրաստվում էին արշավել Բաքվի վրա, որի պաշտպանների մեծ մասն արցախահայեր էին: Բաքվի կապվելը Արցախին մեծ հարված կլիներ թուրքերին, իսկ հայության համար ամուր թիկունք կդառնար: Բայց զորավարը որոշեց մնալ կոտորածների վտանգի առջև գտնվող Նախիջևանում:

Հուլիսի 13-ին Ապրակունիսում կայացած խորհրդակցությունը որոշեց տեղի մուսավաթական ուժերը զսպելու նպատակով զինաթափել ողջ բնակչությանը: Հայտարարվեց զինվորական դրություն, ողջ իշխանությունը կենտրոնացվեց Անդրանիկի ձեռքում, որը Ստեփան Շահումյանին ուղարկեց իր նշանավոր հեռագիրը՝ հուսալով համատեղ ուժերով պատնեշ կանգնեցնել Արևելահայաստանն ու Արցախն օղակող թուրքական մահաբեր բանակների դեմ:

Զանգեզուրի պաշտպանությունը

Նախիջևանից Անդրանիկի զորամաս-քարավանը բռնեց Արցախի ճանապարհը: Զինվորներից ոմանք արդեն գաղտնի ճանապարհներով անցել էին Շուշի, շատերն էլ ձգտում էին գալ Երևան, իսկ Անդրանիկը հորդորում էր չմոռանալ Արևմտահայ դատն ու գաղթականությանը, հիշեցնում, որ համաձայն Բաթումի պայմանագրի, Հայաստանը կարող է ունենալ միայն մեկ դիվիզիա և արևմտահայ զորամասն իսկույն կզինաթափվի, ինչը կվտանգի գաղթականության ֆիզիկական գոյությունը: Նա հայտարարում էր, թե տարածաշրջանից կհեռանա միայն դաշնակիցներից հաստատուն երաշխիքներ ստանալու դեպքում, ինչի հույսը դեռ ուներ:

Օգոստոսի 3-ին զորամաս-քարավանը մտավ Գորիս: Օգոստոսի 27-ին, ճնշելով Որոտանի հունի երկայնքով գտնվող թաթար քոչվորների դիմադրությունը, զորամասը շարժվեց դեպի Սիսիան, ուր սեպտեմբերի 12-ին Անգեղակոթում կայացած Սիսիանի բոլոր հայկական և ռուսական գյուղերի ներկայացուցիչների ժողովը միաձայն որոշեց քսաներկու գյուղերի ուժերով զորամասն ապահովել ամեն ինչով, ինչպես նաև սկսել 20-25 տարեկանների զորակոչ: Իսկ սեպտեմբերի 23-ին վնասազերծվեցին Սիսիան արշավելու դեպքում թուրքական բանակի համար ընտիր հենակետեր հանդիսացող երեք թաթարական գյուղեր:

Սեպտեմբերի 27-28-ին Գորիսի վրա երեք ուղղություններով թշնամին հարձակում սկսեց, իսկ Խոզնավարն ընկավ: Որպեսզի արևմտահայ գաղթականությունն այլևս նահանջելու տեղ չունենա, թաթարները լրիվ փակեցին Գորիս-Սիսիան ճանապարհը: Հաջորդ օրը, ճնշելով թաթարների գյուղերի դիմադրությունը, Անդրանիկի զորամասը շարժվեց դեպի Գորիս, իսկ առաջացող թուրքական ուժերը, իմանալով զորամասի մոտենալու մասին, արդեն ավելի քան 15 կմ նահանջել էին:

Անորոշ ու սպասողական վիճակ էր. թուրքական ուժերը, զգուշանալով Անդրանիկի զորամասի հետ բախումից, ձեռնպահ էին մնում վճռական գործողություններից, իսկ զորավարը փորձում էր Գորիսում ամուր ինքնապաշտպանություն կազմակերպել, ինչի համար բավական ջանքեր ու ժամանակ էր անհրաժեշտ:

Շուշիի անավարտ մնացած արշավանքը

Երևանից լուր ստացվեց Թուրքիայի ու Գերմանիայի պարտության և Կովկասի ուղղության թուրքական զորքերը Կ.Պոլսի պաշտպանության համար տեղափոխելու մասին: Գորիս-Շուշի-Եվլախ գիծը հայկական ուժերով լրիվ ազատելու հեռանկարն այլևս իրական էր:

Հոկտեմբերի 16-ին Անդրանիկի զորամասը, որը վերադառնում էր Սիսիան, վերստին բռնեց Գորիսի ճանապարհը: Շուտով տեղ հասան նաև Ղափանի ներկայացուցիչները և հայտնելով կռվելու որոշման մասին՝ Անդրանիկից խնդրեցին մնալ Գորիսում: Նրա հրամանով սկսվեց Շուշիի գրոհի նախապատրաստությունը: Նոյեմբերի 29-ին զորամասը գրոհեց Զաբուղ և Հագարու գետերի մերձակայքի (Քաշաթաղի շրջան) լավ ամրացված շուրջ քսան թաթարական հենակետերը, ուր կային նաև թուրքական ուժեր, ու թեև լուրջ դիմադրությանը, գիշերը բավական առաջացավ:

Դեկտեմբերի 1-ին, երբ կատաղի մարտերից հետո ողջ շրջակայքի վրա գերիշխող բարձունքի գրավումով ճանապարհը բացվել էր, Անդրանիկը բոլոր ուղղություններով զարգացնում էր հարձակումը, իսկ թուրքերն անկանոն նահանջում էին և Շուշիի ճանապարհը բաց էր, ստացվեց Բաքվի անգլիական ու-

ժերի հրամանատար, գեներալ Թոմսոնի հեռագիրը, որով պահանջվում էր նկատի առնելով Մուդրոսի զինադադարը՝ անհապաղ դադարեցնել հարձակումը: Անգլիական հրամանատարության հետ երկար ու ապարդյուն բանակցությունների արդյունքում զորամասը վերադարձավ Զանգեզուր:

Արդյունքները

Խոյի մատույցներում, Նախիջևանում ու Զանգեզուրում անընդհատ կռվելով մերթ թուրքական, մերթ թուրք-թաթարական օղակում, զորավար Անդրանիկի ղեկավարած առանձին հարվածային զորամասը կարողացավ ոչ միայն փրկել Վանից տեղահանված իրեն ուղեկցող 20 հազար արևմտահայերին և Նախիջևանի հայերին, այլև դեպի Կովկաս թուրքական բանակի հարձակման պայմաններում հայկական պահել թուրք-թաթարական ուժերի կողմից շրջապատված Նախիջևանը, Զանգեզուրն ու Արցախը և հատկապես ամեն պահի հարվածների ենթակա Գորիսն ու Սիսիանը:

1919Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ ՄԱՐՏԵՐԸ ԳՈՐԻՍՈՒՄ

Մարտավարական հարթությունում տարված ոչ շատ մեծ, սակայն անչափ կարևոր հաղթանակի օրինակ է Գորիսի շրջակա հայկական գյուղերի հայության ինքնապաշտպանությունը 1919թ. նոյեմբերին:

Զանգեզուրը զավթելու նպատակով մուսավաթական իշխանությունները դեռևս 1919թ. հոկտեմբերի սկզբից զորամասեր էին տեղափոխում դեպի «Գորիսի ճակատ»: Հարձակման նախապատրաստման փուլում մուսավաթականներն այդ ուղղության վրա կենտրոնացնում են հարվածային խմբավորումներ (այդ թվում՝ երկու հեծյալ գնդեր), հրետանի և ավելի քան 400 քուրդ հեծյալներ: Թուրք-մուսավաթական հարձակման ղեկավարությունը ստանձնել էր Նուրի փաշան, որը հոկտեմբերի 16-ին հարձակման նախապատրաստման նպատակով մի շարք անհապաղ միջոցառումներ է իրականացնում (այս ճակատի զորքերի հրամանատար է նշանակվում ցարական բանակի փորձառու գեներալ Շիխլինսկին, զորամասերն ապահովվում են զինամթերքով և այլն): Զանգեզուրի սահմանների մոտ ստորաբաժանումներ են կենտրոնացվում, իսկ դրանց մարտական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու գործին ներգրավվում են թուրքական բանակի մոտ երկու տասնյակ սպաներ:

> **Տեղեկանք.** «Այն բանից հետո, երբ բանակը հասավ Զաբուղի ձորեր, այսինքն՝ Զանգեզուրի մատույցներ, նրա կազմում արդեն կար ավելի քան 15 հազար մարդ, որից 7000-ը կանոնավոր բանակի զինվորներ էին, որոնց միացել էին 5000 քուրդ և Նախիջևանյան 3000 խռովարար...»:
>
> ***Ա.Սիմոնյան, 1919թ. նոյեմբերյան կռիվները Գորիսի շրջանում, ԲԵՀ, 2, 2004, էջ 20***

Հակառակորդը նախատեսում էր հիմնական հարվածը հասցնել դեպի Գորիս, գրավել քաղաքն ու *ռազմահենադաշտի* վերածել՝ երկրամասը զավթելու համար: Զանգեզուրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական շրջաններից մեկուսացնելու նպատակով նախատեսվում էր Նախիջևանից Վայոց ձորի ուղղությամբ շեղող հարված հասցնել: Այս հարվածով հակառակորդը փորձում էր առավելագույն օգուտ քաղել հայկական փոքրաթիվ ուժերի արևելյան ճակատում կենտրոնացված լինելու փաստից և թիկունքից հարվածել Զանգեզուրի հյուսիսային և արևմտյան մասի անպաշտպան բնակավայրերին:

Հոկտեմբերի 29-ին մուսավաթականները Հայաստանի դեմ ուղղված գաղտնի պայմանագիր են կնքում քեմալական Թուրքիայի հետ և բազմակողմանի ռազմական աջակցություն ցույց տալու խոստումներ ստանում վերջինից: Բաքվում այդ պայմանագիրն ընկալվում է որպես Գորիսի դեմ ռազմական գործողություններ սկսելու հրաման:

Տեղեկանք. «1919թ. հոկտեմբերի 25-ին Հայաստանի կառավարությունը դիմեց Բաքվում գտնվող բրիտանական գլխավոր կոմիսարին և ֆրանսիական զինվորական միսիայի ղեկավարին, որպեսզի սրանք, օգտագործելով իրենց հնարավորությունները, Բաքվի կառավարությանը ստիպեին դադարեցնել զինված ուժերի շարժումը դեպի Զանգեզուրի սահմանները: Բայց Երևանից ստացված դիմումը չարժանացավ նրանց ուշադրությանը:

Ավելին, դաշնակիցների ներկայացուցիչների աչքերի առջև թուրք-մուսավաթական ջարդարարներն ահաբեկչության ենթարկեցին Գանձակի լեռնային շրջանների Կարաչինար, Գյուլիստան, Ազատ, Խարխապուտ, Պարիս և հայկական ուրիշ բնակավայրեր»:

Ա.Սիմոնյան, 1919թ. նոյեմբերյան կռիվները Գորիսի շրջանում, ԲԵՀ, 2, 2004, էջ 20

Զանգեզուրի հայ բնակչությունն ու այստեղ տեղակայված հայկական զորամասերը՝ հրամանատար, շտաբս-կապիտան Արսեն Շահմազյանի գլխավորությամբ, պատրաստվում են վճռական դիմադրության: Կազմակերպվում է զորակոչ, տեղացիներից վաշտեր են կազմվում: Թուրք-մուսավաթական հարձակումը սկսվում է 1919թ. նոյեմբերի 5-ին: Հակառակորդն առաջխաղացումը սկսում է նախքան լուսաբացը: Անցնելով Զանգեզուրի սահմանային Զաբուղ գետը՝ թշնամու առաջապահ ուժերը երկու թևով սկսում են առաջանալ Գորիսի շրջանի խորքերը: Ձախ կամ արևելյան թևում մուսավաթական «վայրի դիվիզիան» էր, որն ուժերի ճնշող գերազանցություն ունենալով՝ հարձակումն իրականացնում էր Տեղ և Կոռնիձոր գյուղերի միջև լայն ճակատով: Հակառակորդն առաջին հարվածները հասցնում է Տեղ գյուղի ուղղությամբ: Հանկարծակի հարձակումով մուսավաթականները շրջակա բլուրներից մեկի հետևում հարմար դիրքեր են գրավում և այնտեղից ուժգին հրետակոծության ենթարկում գյուղը: Հակառակորդի հրոսակախմբերին հաջողվում է գրավել Կոռնիձորը (տե՛ս քարտեզ 1):

Քարտեզ 1


1919թ. ՀՈՅԵՄԲԵՐԻ ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԳԵՑՈՒՄԸ
Ս. Քիրս լ.
2725
Ծղուկ լ.
3581
Իշխանցմանդ լ.
3550
Սևանա լիճ
Գեղարքունիք
Գավառ
Ամիրանիստ
Ամանոս
Սարիգամիշ
Կարս
Սարիղամիշ
Ալաշկերտ
Բասեն
Դարանաղյաղ
Դիադին
Ալաշկերտ
Մանազկերտ
Բաղեշ
Բիթլիս
Սասուն
Մուշ
Տարոն
Տարոնի դաշտ
Ալաշկերտ
Դարանաղյաղ
Դիադին

Այս տեղամասում հայկական ուժերի հրամանատարը փորձառու զինվորական Խաչատուր Մալինցյանն էր: Հայկական ստորաբաժանումներն ու շրջակա գյուղերի բնակիչներից կազմված ջոկատները չորս օր շարունակ կազմակերպված դիմադրություն էին ցույց տալիս մուսավաթականների զորամասերին: Նրանց հաջողվում է կասեցնել հակառակորդի առաջխաղացումը: Իրենց փայլուն են դրսևորում հայկական միակ՝ 9-րդ լեռնային, մարտկոցի հրետանավորները, որոնք դիպուկ կրակով կարողանում են ոչնչացնել հակառակորդի գրեթե ամբողջ հրետանին:

Ա.Շահմազյանի հրամանով Սիսիանի հայկական զորամասերի և աշխարհազորայինների մի մասը Պողոս Տեր-Դավթյանի (Քաջ Պողոս) գլխավորությամբ փակում է հակառակորդի գլխավոր (շրջանցող) զորախմբի ճանապարհը և նրան ստիպում պաշտպանության անցնել: Սիսիանում տեղակայված մյուս հայկական ուժերն ուղարկվում են արևմուտքից առաջխաղացում սկսած հակառակորդին կանգնեցնելու համար: Միաժամանակ մուսավաթական շրջանցող ուժերին հարավից հարվածում է Նիկոլայ Հովսեփյանի ջոկատը: Փոքրաթիվ ջոկատին զգալի օգնություն է ցույց տալիս կապիտան Սիմոն Մելիք-Հարությունյանի (Թոփչի Սիմոն) թնդանոթային մարտկոցը:

Երկրորդ օրվա վերջին հայկական կողմը ևս մեկ անակնկալ է պատրաստում հակառակորդի համար: Սիսիանի կամավորներից կազմավորված հեծյալ ջոկատը Զաքոյի գլխավորությամբ ուղարկվում է մարտով հետախուզության: Ամբողջ գիշեր ռազմերթ կատարելով՝ ջոկատը լուսադեմին դուրս է գալիս Զաբուղ-Ավդալար գծում տեղակայված մուսավաթական զորամասերի թիկունքը և անսպասելի գրոհում հակառակորդի վրա: Ապշահար հակառակորդը չի կարողանում նույնիսկ կազմակերպված նահանջել և խուճապահար ցրվում է մի քանի ուղղություններով:

Գիշերային հաջողությունից ոգևորված հայկական ուժերը մուսավաթականներին դուրս են մղում նախորդ օրերին նրանց գրաված մի շարք գերիշխող բարձունքներից, որոնք հաջողությունը զարգացնելու համար կարևոր մարտավարական նշանակություն ունեին: Ուշագրավ է, որ նահանջող հակառակորդին նոր դիրքերում ամրանալ թույլ չտալու համար այնքան եռանդուն հետապնդում է սկսվում, որ կարելի է ասել, թե նոր հարձակում էր ձեռնարկվել: Սեպաձև մխրճվելով հակառակորդի դիրքերի մեջ՝ հայկական փոքրաթիվ ուժերը նրանց ստիպում են այս դիրքերը ևս թողնել: Հակառակորդի զորքերի ղեկավարումը խախտված էր: Չիմանալով իրենց անելիքը՝ թուրք-թաթարական զորամասերը նահանջում են դեպի նախօրյակին գրավված Խոզնավար և Բայանդուր գյուղերը, բայց ընկնում տեղ հասած հայկական վաշտերի կրակի տակ: Նոր ջարդ ստանալով՝ նրանք հեռանում են դեպի Զաբուղ:

Տեղ-Կոռնիձոր գծում ևս մուսավաթականները ծանր պարտություն են կրում: Բավական է ասել, որ հայկական ուժերն այս տեղամասում կարողանում են գրեթե ամբողջությամբ ոչնչացնել հակառակորդի գլխավոր հարվածային ուժը

հանդիսացող 2-րդ հեծյալ գունդը: Մուսավաթական բանակը կռվի դաշտում թողեց շուրջ 500 դիակ, վիրավորների թիվը պակաս չէր 2000-ից: Ավելի քան 150 ասկյար գերի ընկավ: Հայերի ձեռքն անցան մեկ թնդանոթ, 20 գնդացիր, հարուստ ռազմավար:

Այսպիսով, մի քանի օր տևած մարտերում հակառակորդը պարտություն է կրում և դուրս շպրտվում Հայաստանից: Իր զավակների հերոսական ջանքերի շնորհիվ Զանգեզուրը ևս մեկ անգամ փրկվում է մահացու վտանգից: Ի դեմս Արսեն Շահմազյանի Զանգեզուրն ուներ ինքնապաշտպանական պայքարի նվիրյալ առաջնորդ, որն Անդրանիկի հեռանալուց հետո գլխավորեց թուրք-մուսավաթական կանոնավոր և անկանոն հրոսակախմբերի դեմ վարվող պայքարը:

ՆԺԴԵՀԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

(1919Թ. ՆՈՅԵՄԲԵՐ-1920Թ. ՀՈՒՆՎԱՐ)

1919թ. նոյեմբերի սկզբին Գորիսում կրած պարտությունն անսպասելի էր թուրք-թաթարական ուժերի համար և հոգեբանական ճնշող ազդեցություն էր թողել նրանց զորքերի ու հրամանատարության վրա: Ձախջախված մուսավաթական զորամասերն ի վիճակի չէին նոր մեծամասշտաբ հարձակում իրականացնել: Ուստի ձեռնարկվող սադրանքներին ներգրավում են Զանգեզուրի Ողջի և Գեղվա ձորերն ու Շուռնուխ ներթափանցած թուրք-թաթար քոչվորներին: Այդ շրջաններն ունեին մեծ նշանակություն, քանզի այդտեղից հնարավոր էր վերահսկել Զանգեզուրի ճանապարհները:

Երկրամասի պաշտպանության գործը հանձնարարվում է տաղանդավոր ռազմական ու պետական գործիչ, Զանգեզուրի հարավային շրջանների (Կապան-Արևիք (Գենվազ, Մեղրի)-Գողթանի կամ կրճատ՝ *Կապարգողթի*[1]) ռազմական ուժերի նորանշանակ հրամանատար Գարեգին Նժդեհին (Գարեգին Տեր-Հարությունյան): Երիտասարդ հրամանատարը եռանդով և ամենայն պատասխանատվությամբ է մոտենում ակտիվ գործողությունների նախապատրաստմանը: Նա իր փոքրաթիվ ուժերը սկսում է նախապատրաստել որակապես նոր պահանջների համապատասխանող գործողությունների համար:

---

[1] Կապարգողթ անվանումը Նժդեհը կազմել էր նշված երեք տեղանունների առաջին վանկերի (ԿԱՊ[ան] + ԱՐ[ևիք] + ԳՈՂԹ[ն]) կցումով:

Դեռևս 1919թ. նոյեմբերի 2-ին մուսավաթական երկու վաշտ ներխուժել էր Ողջի գետի ձորը: Թաթար քոչվորների օգնությամբ նրանք փակել էին Զանգեզուրը Գողթնի հետ կապող միակ ճանապարհը: Հայկական կողմի՝ ճանապարհը բացելու պահանջները մնում են անարձագանք: Նոյեմբերի 15-ի գիշերը Նժդեհի հրամանատարության տակ գործող ուժերը (մոտ 200 հոգի) հանկարծակիի են բերում հակառակորդին և առաջարկում զինաթափվել ու ենթարկվել օրինական իշխանություններին: Մերժում ստանալուց հետո սկսվում են մարտական գործողություններ, որոնց շնորհիվ առաջին իսկ օրը հակառակորդը գրեթե ամբողջությամբ ոչնչացվում է: Վերականգնվում են այդ տարածքի նկատմամբ վերահսկողությունը և խափանված հաղորդակցությունը (տե՛ս քարտեզ 2):

Գարեգին Տեր-Հարությունյան
(Նժդեհ, 1886-1955թթ.)

Պատմական տեղեկանք. «Այստեղ էլ Նժդեհը հիմնում է «Դավիթբեկյան ուխտերը», որոնց նշանաբանն էր «Հանուն հայրենիքի դավիթբեկաբար»: Ուխտի մարտական ուժերը բաժանվում էին «գայլախումբ» կոչվող փոքրաթիվ միավորների, որոնք կազմում էին «գայլավաշտեր»: Սյունեցիների ինքնապաշտպանության ոգին բարձրացնելու նպատակով նա սկսում է կրել Դավիթ Բեկի հագուստը»:

Ռ.Համբարձումեան, Գարեգին Նժդեհ (համառօտ կենսագրական, ասոյթներ եւ կենսագրութիւն), Եր., 2003, էջ 17

Մարտը վկայում է երիտասարդ զորավարի անվիճելի տաղանդի մասին: Հարձակման անսպասելիության, սրընթացության և հանդգնության հետևանքով Նժդեհն ուղղակիորեն կաթվածահար է անում հակառակորդին և հասնում հաղթանակի: Բավական է ասել, որ հարձակման ընթացքում հայկական կողմը զոհ չի տալիս և ընդամենը մեկ վիրավոր է ունենում: Մարտական գործողությունների ընթացքում զոհեր չտալը և ենթակաների նկատմամբ հիրավի հայրական հոգատարությունը դառնում են զորավար Գարեգին Նժդեհի «ձեռագիրը»:

Քարտեզ 2


ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1919Թ. ՆՈՅԵՄԲԵՐ- 1920Թ. ՀՈՒՆՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ
Դատք
Պատար
Թոնա
Խաղդակ
Հաղարծին
Դարանագնա
Սիրիա
Սուրուդի
Դարտամ
Դարտամերտ
Բռնակոթ
Տուրոս
Գոդիս
Քարահունջ
Շինուհայր
Դալիծոր
Տաթև
Սվարանց
Տաճարվեր
Խոտանաց
Խնձորեսկ
Խնձորեկ
Շուռնուխ
Դարանագնա
Դարանագնա
Դարանագնա

Ողջիում հաջողության հասնելով՝ Նժդեհը շտապում է զարգացնել հաջողությունը: Ոչ երկարատև վերախմբավորումներից հետո նա դեկտեմբերի 1-8-ին իրականացնում է Գեղվա ձորի խռովարարների հենակետի ոչնչացման գործողությունը: Չորս կողմից օղակելով հարևան հայկական գյուղերը՝ Գեղվա ձորի թաթար խռովարարները իսկական պատուհաս էին դարձել Սյունիքի Գենվազ, Կապան շրջանների և Գողթն գավառի հայ բնակչության համար:

Ինչպես միշտ, նախապատրաստման ժամանակ հաշվի էին առնված բոլոր հանգամանքները: Բավական է նշել, որ հակառակորդի հետախուզումը տևում է յոթ օր: Նախապատրաստական միջոցառումների մասն էին կազմում նոյեմբերի 25-ի հրամանի համաձայն կազմավորվող «*գայլախմբերը*» (բոլոր վաշտապետերին հրամայվում է անմիջապես Նժդեհի մոտ ուղարկել երկուական առավել աչքի ընկնող մարտիկների): «Գայլախմբերը» զինված էին դինամիտով ու ռումբերով, որոնց պայթեցումով հակառակորդի դիրքերի ամենաթույլ տեղամասերը խոցվում էին և նա ապակողմնորոշվում ու խուճապի էր մատնվում:

Ուժերը համալրելու նպատակով Կապանի շրջանում հայտարարվում է զորահավաք, որի ժամանակ դրսևորվում է Նժդեհի կազմակերպչական ձիրքը: 24 ժամում Կապանի վաշտերն արդեն կազմ ու պատրաստ էին, իսկ զինավարժությունները տևում են ընդամենը երկու օր:

Հարձակումը սկսվում է դեկտեմբերի լույս 1-ի գիշերը: Կեսգիշերին վաշտերը ոտքի են հանվում, ժամը 1-ին սկսում առաջխաղացումը և, տրված մարտագրի համաձայն, սկսում դիրքավորվել Գեղվաձորի բարձունքների գրոհի բնագծերում: *«Գայլախմբերից»* մեկի պայթեցրած տա-

Գարեգին Նժդեհ
(1920թ.)

կառների ազդանշանով հայկական ստորաբաժանումներն անցնում են հարձակման: Հակառակորդը համառ դիմադրություն է ցույց տալիս միայն առաջին երկու օրերին: Իր անսպասելի գործողություններով Նժդեհն ապակողմնորոշում է հակառակորդին և նրան հարկադրում «գործել» իր մտահղացման համաձայն: Առավելագույն արդյունքի հասնելու համար նա անձամբ էր վաշտերը գրոհի տանում:

Դեկտեմբերի 7-ին հայկական ստորաբաժանումները գրավում են Գեղվա ձորի վերջին գյուղերը և փառքով ավարտում արշավանքը: Հարձակման արդյունքում բացվում է կենսական կարևորություն ունեցող Գորիս-Կապան խճուղին (տե՛ս քարտեզ 2):

1920թ. հունվարի 19-20-ին Նժդեհն իրականացնում է Շուռնուխի շրջանի թաթար քոչվորների հնազանդեցումը: Նա միշտ գրոհող վաշտերի կողքին էր, իսկ առանձին դեպքերում անձամբ էր առաջնորդում ստորաբաժանումները: Շուռնուխն ազատագրվում է ընդամենը մեկ օրում, հակառակորդը դուրս է քշվում շուրջ 30 գյուղերից:

Այսպիսով, 1919թ. վերջին-1920թ. սկզբին Զանգեզուրի հերոսական կռիվներն ավարտվում են տեղացիների փայլուն հաղթանակներով: Վերջնական տեսք է ստանում նժդեհյան մարտավարությունը, որը հետագա հաղթանակների գրավականն էր:

ՆԺԴԵՀԻ ԳՈՂԹԱՆԻ ՊԱՏԱՆԱԿՐԱՅ ԱՐՇԱՎԱՆՔԸ
(1920Թ. ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ)

1919թ. նոյեմբեր-1920թ. հունվար ամիսներին կրած պարտություններն ինչ-որ կերպ «փոխհատուցելու» նպատակով Նախիջևան ներխուժած թուրքական ուժերը և մուսավաթական ավազակախմբերը՝ Օրդուբադը զավթած էդիֆ բեյի գլխավորությամբ, հաշվեհարդար են սկսում այստեղի հայության հետ: Բռնությունների ալիքը զսպելու համար տեղացիներից կազմված հայկական ինքնապաշտպանական ուժերն անբավարար էին, իսկ Նժդեհի վաշտերը կենտրոնացել էին Որոտանի աջ ափին ու զբաղված էին Շուռնուխի գործողությամբ: Թուրք-թաթարական ուժերին ավելի սանձարձակ էր դարձրել նաև այն փաստը, որ Կապուտջուղի վրայով անցնող Գողթանի միակ ճանապարհը ձմեռը փակ էր, և նույնիսկ ցանկության դեպքում Զանգեզուրից օգնություն չէր կարող հասնել: Ահագնացող ճնշման պայմաններում Գողթանի հայության հերթական համագումարը որոշում է շարունակել ինքնապաշտպանությունը, եթե Զանգեզուրը ձեռք մեկնի: Հապաղել չէր կարելի...

Տեղանքն ու բնակլիմայական պայմաններն այնպիսին էին, որ արշավանքի նախապատրաստվող ստորաբաժանումները, նույնիսկ առանց հակառակորդի հետ անմիջական շփման, մեծ դժվարություններ էին հաղթահարում ոչ միայն բեռների տեղափոխման, այլև վերախմբավորումների և ռազմերթերի ժամանակ:

Մարտի 8-ին Կապանի ու Գենվազի ուժերը կենտրոնանում են Բաղաբերդում (տե՛ս քարտեզ 3): Նժդեհն արշավանքի նախապատրաստությունն ավարտած վաշտերի շարային ստուգատես է անցկացնում՝ նրանց հանդերձանքն ու սպառազինությունը ստուգելու համար: Զորատեսին առանձնահատուկ խորհուրդ է հաղորդում կապանցիների անունից զինվորներին ուղարկված մարտական դրոշի հանձնման արարողությունը: Դրոշը սպիտակ կտավից էր, որի մի կողմի վրա գրված էր՝ «Ղափանը Գողթանի համար», իսկ մյուսի վրա՝ *«Պատանակրաց արշավանք»:*

Արշավանքի ելնող «զորքը» ո՛չ մեծաթիվ էր, ո՛չ լավ զինված ու հանդերձավորված, սակայն բոլորը գիտակցում էին առաջադրանքի բացառիկ կարևորությունը, նրա համազգային նշանակությունը: Միևնույն ժամանակ, բոլորը վստահ էին, որ հրամանատարը կանի ամեն ինչ՝ արշավանքը ոչ միայն հաղթանակով, այլև նվազագույն կորուստներով ավարտելու համար: Այդ գիտակցումը կրկնապատկում էր նրանց ուժերը և հաստատակամություն հաղորդում:

Գողթանի զորասյուները, փաստորեն, պատրաստ էին սկսելու արշավանքը, երբ մարտի 9-ի երեկոյան Գորիսից ստացվում է գեն. Ղազարյանի՝ արշավանքը հետաձգելու հրամանը: Հարցն այն էր, որ հետախուզության տվյալներով՝ Ջեբրայիլ-Կորյագինի շրջանում մուսավաթականներն ուժեր էին կենտրոնացնում հայկական ուժերի թիկունքին մի քանի ուղղությունից հարվածներ հասց-

նելու համար: Այդ նպատակով այստեղ էին եկել Նուրի փաշան և մուսավաթական գեներալ Մեհմանդարովը: Ակնհայտ էր, որ հակառակորդն այս հարձակմանը մեծ կարևորություն էր տալիս: Հայկական զինված ուժերի հրամանատարությունը գտնում էր, որ Գողթանի արշավանքն իրականացնելու դեպքում Նժդեհը չի հասցնի ժամանակին ավարտել ուժերի վերախմբավորումը: Նկատի ունենալով արշավանքի նախապատրաստվող ուժերի փոքրաթվությունը՝ հրամանատարությունն իրավացիորեն մտահոգված էր: Չէր կարելի բացառել, որ նույնիսկ ոչ մեծաթիվ զոհեր տալով՝ Կապարգողթի ուժերը չեն կարողանա պահպանել իրենց մարտունակությունը և չեն հասցնի ժամանակին վերադառնալ արշավանքից:

Նժդեհի գործն էլ ավելի է բարդանում: Նրան հրամայվում է մի քանի օրում ուժերը հետ քաշել ու պատրաստվել արևելյան ճակատում հարձակմանը դիմագրավելու համար: Սակայն Նժդեհը ևս մեկ անգամ ապացուցում է արտակարգ բարդ իրադրությունում արագ և ճիշտ կողմնորոշվելու իր ունակությունը: Նույն գիշերը ժամը 1-ին նա հետևյալ պատասխանն է ուղարկում Զանգեզուրյան ճակատի հրամանատարությանը. «Ձեր տված տեղեկություններից հետո Գողթանի արշավանքն ինձ համար դառնում է ավելի իմաստալից և անհետաձգելի: Հենց այս գիշեր Քաջարանում հավաքված զորքն իմ ղեկավարությամբ շարժվելու է առաջ»:

Իր վրա վերցնելով ամբողջ պատասխանատվությունը՝ Նժդեհը մարտի 10-ին սկսում է Գողթանի արշավանքը: Հինգ օր անց զորքը կենտրոնանում է Բիստ գյուղում: Մարտի 17-ին արշավանքի ելած ստորաբաժանումները հասնում են Ցղնա և այստեղ կենտրոնացնում պայթուցիկով լի տակառները:

Հարձակումը սկսվում է մարտի 20-ին (տե՛ս քարտեզ 3): Առաջին հարվածի հաջողությունից էր կախված ամբողջ հարձակման ընթացքը, և նախաձեռնություն ստանալու համար Նժդեհը ձգտում էր հակառակորդին ապշեցնել գործողությունների արագությամբ ու հստակ կազմակերպված փոխգործողություններով: Այդ մտահղացումը հաջողվում է իրականացնել: Դեռ լույսը չբացված գրավվում է Խարաբալիգան հինավուրց ամրոցը, իսկ ընդամենը մի քանի ժամում՝ նաև Դոյլու, Քալանթար, Դիսար, Հանան, Վալավեր, Աղրի, Դիզա, Վանանդ և Դռնիս գյուղերը: Երեկոյան կողմ հայկական ուժերը հասնում են հինավուրց հայկական քաղաքի՝ Որդվատի (Օրդուբադ) մատույցներին և ոչնչացնում հակառակորդի այստեղի պահակախումբը:

Մոտակա խնդիրը կատարված էր: Մարտավարական բոլոր կարևոր կետերը հայերի ձեռքն էին անցել, և հաջողությունը զարգացնելու համար անհրաժեշտ պայմաններ էին ստեղծվել: Թուրքերին Նժդեհի անունն այն աստիճան էր շանթահարել, որ նրանք չեն հանդգնում մարտի մեջ մտնել և մարտի 21-ին թնդանոթից մի քանի արկ արձակելով՝ նահանջում են: Հակագրոհի անդրադարձումը հնարավորություն է տալիս օրվա երկրորդ կեսին ազատագրել Գողթանի զգալի մասը:

Քարտեզ 3


ՈՒՐՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920Թ. ԳԱՐՆԱՆԸ
Սևանա լիճ
Գեղարքունիք
Ամուլսարի լեռնանցք
Ամուլսարի լեռնանցքի ճակատամարտ
Ամուլսարի լեռնանցքի ճակատամարտ
Ամուլսարի լեռնանցքի ճակատամարտ

Հարձակումը շարունակվում է նաև մարտի 21-ի լույս 22-ի գիշերը: Գիշերային մարտերում ևս հաջողությունը հայկական ուժերի կողմն էր, և նրանք կարողանում են մարտի 22-ի առավոտյան ավարտել արշավանքի խնդիրը՝ Օրդուբադի շրջապատումը: Հարձակման ընթացքում Նժդեհի զորախումբը տալիս է ընդամենը երեք զոհ և մեկ վիրավոր:

Թվում էր՝ ավազակաբնի վերածված Օրդուբադին այլևս ոչինչ չի կարող փրկել, երբ հերոս պատանակիրների հրամանատարը ստանում է արշավանքը դադարեցնելու և վերադառնալու հրաման: Սուրհանդակները տեղեկացնում են, որ Նուրի փաշայի հրոսակախմբերը միանգամից երեք ուղղություններից ներխուժել են Զանգեզուր: Հապաղելը կործանարար կարող էր լինել: Իրական վտանգ կար, որ Օրդուբադը և շրջակա տարածքի ազատագրումը շարունակելու դեպքում Կապանի վաշտերը չէին հասցնի վերադառնալ ու հակառակորդին կհանձնվեին Զանգեզուրի մի շարք բնակավայրեր:

Մեկ-երկու ժամում ավարտելով բոլոր նախապատրաստական միջոցառումները՝ Նժդեհը սկսում է արտակարգ արագությամբ աչքի ընկնող նոր ռազմերթ: Արդեն մարտի 25-ին Գորիսից եկած պահեստային զորամասի հետ միասին Կապարգողթի վաշտերը մարտի են նետվում: Ապրիլի 1-ին նրանց են միանում Գողթանից վերադարձած զինվորները: Չդիմանալով գրոհներին՝ հակառակորդը սկսում է նահանջել, որով սկսվում է նժդեհյան տաղանդի հերթական դրսևորումը դարձած Բարգուշատի հաղթարշավը: Այս արշավանքով մաքրվում է Արցախի և Սյունիքի հայության միջև սեպի պես խրված տասնյակ քոչվոր մահմեդական գյուղերի արգելքը, և հայության երկու հատվածները կապվում են իրար:

Այսպիսով, թեև Գողթանի արշավանքը չհաջողվեց ավարտել Օրդուբադի ազատագրումով, սակայն այն միանշանակ հաղթական էր: Չէ՞ որ *արշավանքի* նպատակը ոչ միայն հակառակորդի կողմից ավազակաորջերի վերածված բոլոր բնակավայրերի ազատագրումն էր, այլ Գողթանի հայության ֆիզիկական ոչնչացման կանխումը և հայրենի հողում նրանց ապրելու իրավունքի ապահովումը:

ՍՈՒՐՄԱԼՈՒԻ (ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ) ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1920Թ.

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ

1920թ. սեպտեմբերի 23-ին, առանց պատերազմ հայտարարելու, թուրքական 60 հազարանոց բանակը լայնածավալ հարձակման անցավ Հայաստանի Հանրապետության սահմանի ողջ երկայնքով: Սկսվեց հայ-թուրքական պատերազմը:

Քեմալականները Հայաստանի Հանրապետության սահմանի մոտ կենտրոնացրել էին Քյազիմ Կարաբեքիր փաշայի գլխավորած 15-րդ զորաբանակի 3-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ դիվիզիաները, որոնց միացան նաև այլ զորամասեր, ինչպես նաև քրդական բազմահազարանոց հրոսակախմբեր:

Պատերազմի նախօրեին հայկական բանակի զինծառայողների թիվը 25-30 հազար էր: Ընդ որում՝ աշնանային բերքահավաքի եռուն շրջանն էր, և զինվորների գերակշռող մասը հրամանատարության թույլտվությամբ վերադարձել էր տուն՝ գյուղատնտեսական աշխատանքներին աջակցելու: Ըստ Ս.Վրացյանի, «Ամբողջ ճակատի վրա՝ Սուրմալուից մինչև Օլթի, պատերազմը սկսվելուց առաջ հայկական ուժերի թիվը վեց հազարը չէր անցնում, որից շուրջ 2500՝ Սուրմալուում, մնացածը՝ Կարսի ճակատի վրա»:

Ռազմական գործողությունները ծավալվում էին երկու ճակատներում՝ Կարսի և Սուրմալուի: Առաջինի հրամանատարը գեներալ Հովսեփյանցն էր, Կարսի բերդապետը՝ Դ.Բեկ-Փիրումյանը, իսկ ճակատի ընդհանուր հրամանատարը՝ Սարդարապատի հերոսը՝ գեներալ Մ.Սիլիկյանը: Սուրմալուի ճակատի հրամանատար նշանակվեց Դրաստամատ Կանայանը:

Ռազմավարական տեսակետից, ինչ խոսք, ավելի կարևոր էր համարվում Կարսի ճակատը, և այնտեղ էին կենտրոնացվել բանակի գերակշիռ մասն ու առավել մեծ հեղինակություն վայելող սպաները: Ավելին, խոսվում էր նաև Դրոյին այդ ճակատ տեղափոխելու մասին: Սակայն, որքան էլ զարմանալի է, Կարսի ճակատում, որտեղ կենտրոնացած էին հայկական բանակի հիմնական ուժերը, թուրքական զորքերն առաջանում էին գրեթե առանց լուրջ դիմադրության հանդիպելու: Սա պայմանավորված էր ոչ այնքան հակամարտող ուժերի հարաբերակցությամբ, որքան ռազմիկների կամային որակների և մարտական ոգու, նրանց շարքերում համերաշխության ու կարգապահության բացակայությամբ:

Առաջին մարտերը Սուրմալուի ճակատում

Ի հակադրություն Կարսի ճակատի՝ Սուրմալուի ճակատում ընթացող ռազմական գործողությունները միանգամայն այլ պատկեր էին ներկայացնում: Ռազմական նախարար Ռ.Տեր-Մինասյանի տեղեկագրից հետևում է, որ «Սուրմալուի ճակատում (Դրոյի մոտ) կան՝ 9-րդ գունդը - 2000 սվին, 8-րդ գունդը (մի գումարտակ) - 1000 սվին և 7-րդ գունդը (մի գումարտակ) - 700 սվին, Ղարաբաղի առանձին զորամասը (Կ.Թարխանյան) - 800 սվին, ընդամենը՝ 4500 սվին և փոքրիկ եզիդական զորամաս»:

Հոկտեմբերի 1-ին Սուրմալուի ճակատի առանց այն էլ փոքրաքանակ զորախմբի մի մասը՝ գնդապետ Տ.Բաղդասարյանի գլխավորած 8-րդ գունդը, տեղափոխվեց Կարսի ճակատ: Ըստ այդմ, Սուրմալուի ճակատում հակառակորդի 15-րդ բանակային կորպուսի 11-րդ դիվիզիայի և մի շարք այլ զորաջոկատների շուրջ 10 հազար կանոնավոր զորքերին, նաև քրդական հեծելազորին ու շրջակա մահմեդականներից հավաքագրված հրոսակախմբերին պետք է դիմակայեր Դրոյի գլխավորած հայկական անհամեմատ փոքրաթիվ զորախումբը՝ ընդամենը 2000-2500 զինվոր և մոտ 1000 աշխարհազորային:

Այսուհանդերձ, ի հակադրություն Կարսի ճակատում կռվող հայկական զորքերի, Սուրմալուի հայկական զորախումբը, Ս.Վրացյանի վկայությամբ, «շատ լավ կազմակերպված ու պարենավորված էր. բոլոր մասերը կապված էին իրար և կենտրոնի հետ, սերտ հարաբերություն էր ստեղծված զորամասի և ազգաբնակչության, ինչպես և էջմիածնի գավառային ինքնավարության միջև»: Իսկ առավել կարևոր էր այն, որ հրամանատարների և առաջին հերթին ճակատի ընդհանուր հրամանատար Դրոյի ջանքերի շնորհիվ զինվորները կորովի էին և ձգտում էին օր առաջ հակահարված տալ հակառակորդին: Կարելի է ասել, որ հայ զինվորների մարտական ոգու առկայությունն էլ որոշիչ դեր խաղաց այս ճակատում մղված մարտերում:

Դեռևս սեպտեմբերի վերջին Սուրմալուի զորախումբը մի քանի հաջող գործողություններով հետ շպրտեց Կողբում ամրանալ ձգտող հակառակորդին և գրավեց ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այդ հենակետը: Հոկտեմբերի 4-ին թուրքերը, Սուրմալուի ճակատում կենտրոնացնելով նաև Բայազետի զորախումբը, գրավեցին մի քանի հայկական բնակավայրեր՝ Ար-

Մոսինի 1891թ. հրացանը և սվինը:

հաջ, Պիրլ, Խուլբ գյուղերը, և ընդհուպ մոտեցան Կարակալայի կամրջին: Եթե նրանց հաջողվեր ճնշել գնդապետ Խուդաբաշյանի գնդի համառ դիմադրությունը և գրավել կամուրջը, ապա ոչ միայն կշրջապատեին Սուրմալուի ճակատի հայկական զորքերը, այլև կներխուժեին Արարատյան դաշտավայր և անմիջականորեն կսպառնային Երևանին: Ուստի, Դրոն վճռեց անհապաղ հակահարձակման անցնել և հակառակորդին հետ մղել իր ելման դիրքերը:

Կեսօրից հետո հայկական զորքերը Դրոյի գլխավորությամբ հակահարձակման անցան և հակառակորդին հետ շպրտեցին իր գրաված դիրքերից ու մինչև երեկո ազատագրեցին Պիրլը: Հաջորդ առավոտյան, զարգացնելով հարձակումը, մեր զորքերը հակառակորդին դուրս շպրտեցին նախորդ օրը գրաված Արհաջ և մի քանի այլ բնակավայրերից:

Հատկանշական է, որ Դրոն մարտերի ընթացքում հիմնականում կիրառում էր առավելապես հայդուկներին բնորոշ մարտավարությունը. փոքրաթիվ, սակայն խիզախ մարտիկներից բաղկացած, շարժուն ու մարտունակ զորախմբերով արագ տեղաշարժերով անակնկալի բերել հակառակորդին և անկասելի հարված հասցնել: Կարևոր նշանակություն ուներ հայ սպաների՝ գնդապետներ Խուդաբաշյանի ու Լալայանի, փոխգնդապետներ Թարխանյանի, Շահբազյանի, Մամաջանյանի և այլոց մարտավարական հմտությունը:

Հոկտեմբերի 24-26-ի ծանր մարտերը

Ըստ «Հառաջ» թերթի թղթակից Վարդգես Ահարոնյանի վկայության, «Սուրմալուի կռիվների ռազմաճակատը կազմում էր մի «եռանկյունի», որի կատարը գտնվում էր Իգդիրում, երկու կողմերը կազմում էին Իգդիր-Մարգարա և Իգդիր-Կարակալա գծերը, իսկ հիմքը՝ Արաքսը, Կարակալայի և Մարգարայի կամուրջների միջև»:

Հոկտեմբերի 24-ին թուրքական զորքերը հարձակում սկսեցին Մարգարայի և Կարակալայի կամուրջների ուղղությամբ՝ ցանկանալով աքցանի մեջ առնել և ջախջախել Սուրմալուի ճակատի հայկական զորքերը: Մի քանի օր շարունակ կատաղի մարտեր էին ընթանում: Թշնամին նախ փորձեց «եռանկյունու» երկու կողմերից՝ դեպի Կարակալա և Մարգարա կամուրջները, թևանցում կատարելով շրջապատել մեր զորքերը՝ կտրելով նրանց նահանջի ճանապարհը: Սակայն Դրոյի գլխավորած հայկական զորամասերի դիմադրությունը վիժեցրեց հակառակորդի վտանգավոր ծրագիրը:

Ահա մի դիպված, որ խիստ բնորոշ է այդ կենաց-մահու պայքարին և վկայում է հայ ռազմիկների մարտական անընկճելի ոգու մասին. անելանելի վիճակում հայտնված հայկական զորամասերից մեկի հրամանատարը հեռախոսով դիմում է Դրոյին. «Ի՞նչ եք հրամայում անել»: Հետևում է Դրոյի կտրուկ պատաս-

խանը. «Հրամայում եմ բոլորիդ մեռնել, ոչ մի քայլ հետ»: Եվ իրոք, Սուրմալուի ճակատում տևական, թեժ կռիվներում հայկական զորախումբն այդպես էլ չզիջեց իր դիրքերը:

Տեղեկանք. «80 ժամե ի վեր,- գրում է «ճակատամարտ» թերթը,- կատաղի և անընդհատ կռիվ կմղվի այդ ճակատին գիշեր ու ցերեկ: Երկու կողմերն ալ կկռվին կատաղորեն... Գաղափար մը տալու համար ըսեմ, թե այդ շրջաններուն մեջ գյուղեր եղան, որոնք ինն անգամ թշնամիին և մեր ձեռքն անցան հաջորդաբար: Մոտ 4000 թուրք կանոնավոր զորք և 10000 քուրդ և թուրք խուժան կը մասնակցեին հարձակումին՝ իրենց դեմ ունենալով հայկական հերոս բանակը, որուն թիվը կհասնի 4000-ի: Թրքական կորուստները շատ մեծ են և կհասնին 1000-ի, մինչ մեր զոհերը կըլլան 50 հոգի»:

Ս.Պողոսյան, Կ.Պողոսյան,
Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, էջ 114

Հակառակորդի մարտավարության փոփոխությունները

Սուրմալուի ճակատում հաջողության չհասնելով՝ հակառակորդը սկսեց հաճախակի փոփոխել մարտավարությունը: Հաշվի առնելով թվական գերակշռությունը՝ թուրքական զորքերը մարտերից մեկում կիրառում են հոգեբանական գրոհի մարտավարությունը. հայկական զորքերին հոգեբանորեն ճնշելու և բարոյալքելու համար գրոհը կազմակերպվում է կուռ մարտաշարքերով՝ երաժշտության և թմբուկների զարկերի ներքո:

Սակայն այս մարտավարությունը ևս ոչինչ չտվեց հակառակորդին: Հայկական զորքերը ոչ միայն խուճապի չմատնվեցին, այլև իրենց հրամանատարների կարգադրություններով պատշաճ հակահարված տվեցին ամբարտավան հակառակորդին: Գնդացիրների և հրանոթների միաժամանակյա կրակն իսկույն խառնաշփոթ է առաջացնում թուրքական զորքերի կուռ շարքերում: Երաժշտությունն իսկույն դադարում է, գրոհը՝ կասեցվում: «Դա նրանց մեջքը կոտրեց, էլ մուզիկա չկար»,- վերհիշում է Դրոն: Սրան հետևում է հայկական զորքերի հակահարձակումը, և թուրքական զորքերը, զգալի կորուստներ կրելով, նահանջում են:

Հայկական զորքերի շրջապատման գործողության լիակատար ձախողումից հետո թուրքական հրամանատարությունը վճռում է նույն ծրագիրն իրականացնել ավելի փոքր չափերով՝ աքցանի մեջ առնել Իգդիրն իր մերձակա բնակավայրերով և ապա փակել Իգդիր-Մարգարա խճուղին: Սուրմալուի զորքերի համար ստեղծվել էր վտանգավոր կացություն. Իգդիր-Մարգարա խճուղին Երևանի հետ կապող միակ ուղին էր, և նրա փակվելը կնշանակեր ստույգ կործանման դատապարտել թե՛ Սուրմալուի հայկական զորքերին և թե՛ բնակչությանը: Հարկավոր էր

գործել արագ և անվրեպ: Կապվելով Երևանում գտնվող գնդապետ Կ.Թարխանյանի հետ՝ Դրոն վերջինիս կարգադրում է իր ենթակայության տակ եղած ուժերով արագ անցնել կամրջով, վճռական գրոհով ճեղքել հակառակորդի շրջապատման օղակը և օգնության հասնել շրջապատվածներին:

Երբ գնդապետ Թարխանյանը հասնում է Իգդիր-Մարգարա խճուղուն, վերջինս արդեն ամբողջովին թուրքերի վերահսկողության տակ էր: Թարխանյանը վճռում է հանդուգն, միաժամանակ հնարամիտ և անսպասելի գործողությամբ անակնկալի բերել հակառակորդին: Չորս ավտոմեքենաների վրա տեղադրելով իր ունեցած վեց գնդացիրները՝ նա կարգադրում է միմյանցից 40 մ հեռավորությամբ արագ ընթացքով շարժվել խճուղով՝ գնդացրային կրակ տեղալով խճուղու երկու կողմերում դիրքավորված թուրքական զորքերի վրա:

Գնդապետ Թարխանյանի հանդուգն գրոհը բեկումնային եղավ այդ մարտի համար: Զարգացնելով հաջողությունը՝ Դրոյի զորախումբը հոկտեմբերի 26-ին ամբողջ ճակատով անցավ հարձակման և ազատագրեց հակառակորդի մինչ այդ գրաված բնակավայրերը: Թուրքական զորքը խուճապահար նահանջեց իր ելման դիրքերը:

Սակայն Կարսի անկումը կտրուկ փոխեց պատերազմի ողջ ընթացքը: Արդեն լուրջ վտանգ էր սպառնում նաև Սուրմալուի զորախմբին, որը, թեև պաշտպանական ամուր դիրքեր ուներ, սակայն այժմ կարող էր հայտնվել դեպի Ալեքսանդրապոլ առաջացող հակառակորդի օղակում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ

Երկրորդ համաշխարհային պատերազմում Հայաստանը (ի դեմս Երկրորդ Հանրապետության) և մեր հայրենակիցներն ակտիվ մասնակցություն են ունեցել: Մեծ Հայրենականի ճակատներում ծավալված ռազմական գործողություններին ընդհանուր առմամբ մասնակցել են 6 մարտական դիվիզիա, մոտ 550 հազար հայազգի զինվոր, որից 300 հազարը՝ Հայաստանից (բնակչության 20-23%-ը), իսկ մնացածները՝ այլ խորհրդային հանրապետություններից: Մարտական գործողությունների ընթացքում Խորհրդային Միության հերոսի կոչման է արժանացել 103 հայազգի զինծառայող, 27-ը դարձել է Փառքի շքանշանի լրիվ ասպետ, իսկ մեդալներով ու շքանշաններով պարգևատրվել են շուրջ 70 հազարը:

Մեր գեներալներն այդ պատերազմում վարել են ամենաբարձր հրամանատարական պաշտոններ: Ապագա մարշալ Հովի. Բաղրամյանը եղել է ռազմաճակատների հրամանատար (1-ին Մերձբալթյան և 3-րդ Բելոռուսական), ապագա ԽՍՀՄ նավատորմի ծովակալ Հովի. Իսակովը՝ ԽՍՀՄ ՌՕՈ հրամանատարի առաջին տեղակալ, բանակի հրամանատարներ են եղել ապագա ավիացիայի մարշալ Խուդյակովը (1-ին և 12-րդ օդային) և գեներալ Մ.Պարսեղովը (40-րդ), կորպուսներ են ղեկավարել Ս.Մարտիրոսյանը (50-րդ և 73-րդ հրաձգային), Հ.Մարտիրոսյանը (90-րդ հրաձգային), Բ.Առուշանյանը (14-րդ և 11-րդ գվարդիական հրաձգային), Վ.Տամրուչին (Դամուրչյան, 22-րդ մեքենայացված), Հ.Բաբաջանյանը (11-րդ գվարդիական տանկային): Պատերազմին մասնակցել են նաև դիվիզիայի 22 հայազգի հրամանատար և 25 բրիգադի հրամանատար:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարբեր ճակատներում մարտնչել են նաև մոտ 50 հազար մեր հայրենակիցներ Սփյուռքից: Օրինակ, ԱՄՆ բանակի կազմում պատերազմին մասնակցեց 21 հազար հայ (որոնցից Ջորջ Մարտիկյանն ու Հայկ Շեքիրջյանը դարձան գեներալ), իսկ Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի բանակներում (այդ թվում՝ Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից և այլն)՝ մոտ 30 հազար: Սփյուռքահայերի հանգանակած միջոցներով կառուցվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որը 1944թ. փետրվարին մարտի մեջ մտավ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի (հրամանատար՝ Հովի. Բաղրամյան) 119-րդ առանձին տանկային գնդի կազմում: Իրանահայերի հանգանակած միջոցներով կառուցվեց «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյունը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ (1941 - 1945ԹԹ.)

Պատերազմի տարիներին կազմավորվել են հայկական 6 դիվիզիաներ.

76-րդ լեռնահրաձգայինը կազմավորվել է 1922թ. սեպտեմբերին և իր մարտական ուղին սկսել 1941թ. օգոստոսին՝ Անդրկովկասյան ռազմաճակատի 47-րդ բանակի առաջապահ ուժերի կազմում անցնելով Արաքսն ու շարժվելով դեպի Մարանդ-Թավրիզ: 1943-ին վերանվանվել է 51-րդ գվարդիական և ավարտել է պատերազմը 1945թ. մայիսին Կուռլյանդյան թերակղզում:

409-րդ Կիրովոգրադ-Բրատիսլավյան հրաձգային դիվիզիան կազմավորվել է 1941թ. հուլիս-օգոստոսին ՀԽՍՀ-ում: 1942թ. նոյեմբերին մարտական ուղին սկսել է Կովկասի նախալեռներից՝ 1945թ. հասնելով մինչև Չեխոսլովակիա ու Ավստրիա:

408-րդ հրաձգային դիվիզիան կազմավորվել է 1941թ. օգոստոսին: Մինչև 1942թ. սեպտեմբերը պաշտպանել է հայ-թուրքական սահմանը, որտեղից թուրքական զորքերի հարձակում էր սպասվում: Մարտական ուղին սկսել է 1942թ. սեպտեմբերին Նովոռոսիյսկի շրջանում: Նոյեմբերին դիվիզիան վերակազմվել է հետևակային բրիգադի:

89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիան կազմավորվել է 1941թ. դեկտեմբերին, մարտական ուղին սկսել է 1942թ. օգոստոսին Կովկասյան ճակատում և ավարտել պատերազմը 1945թ. Բեռլինում: Պատերազմից հետո տեղակայված է եղել Հայաստանում և լուծարվել է 1959թ.:

390-րդ հրաձգային դիվիզիան կազմավորվել է 1942թ. հունվարին Կերչ թերակղզում, Ղրիմի ռազմաճակատի հայ մարտիկներով և ՀԽՍՀ-ից ժամանած համալրումով: 1942թ. մայիսին դիվիզիան վերակազմվել է: Մարտիկների մի մասը տեղափոխվել է Սևաստոպոլ, որտեղ աչքի է ընկել հունիսյան մարտերի ընթացքում:

261-րդ հայկական հրաձգային դիվիզիան կազմավորվել է 1942թ. հոկտեմբերին ՀԽՍՀ-ում, անմիջական մարտական գործողություններին չի մասնակցել, սակայն փայլուն կատարել է ռազմավարական նշանակության առաջադրանքը՝ պաշտպանել է հայ-թուրքական սահմանը, որտեղ Թուրքիան 26 դիվիզիա էր կենտրոնացրել: Ինչպես հայտնի է, այդ պետությունը ծրագրել էր գերմանացիների ռազմական հաջողության պարագայում (մասնավորապես՝ Ստալինգրադի անկումից հետո) պատերազմ հայտարարել ԽՍՀՄ-ին և ներխուժել Հայաստան:

76-ՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՀՐԱԾԳԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

(1942Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 19 -21)

Վորոշիլովի անվան 76-րդ լեռնահրաձգային (հետագայում՝ 51-րդ գվարդիական) դիվիզիան Հայրենական մեծ պատերազմի ընթացքում անցել է մոտ 7000 կմ մարտական ուղի, ազատագրել ավելի քան 600 բնակավայր, իսկ 21 զինվոր և սպա արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման:

1942թ. նոյեմբերի կեսերին Ստալինգրադ (Վոլգոգրադ) հասած գերմանական խմբավորումն իր բոլոր հիմնական ռեզերվները ծախսելով՝ չէր կատարել իր առջև դրված խնդիրները և հայտնվել էր ոչ ձեռնտու օպերատիվ դրությունում. նրա թևերը թուլացվել էին: Դրան հակառակ, պաշտպանական մարտերի ընթացքում խորհրդային հրամանատարությունը ռեզերվներ էր կուտակել և պատրաստվել էր վճռական հակահարձակման, որի նպատակն էր Հարավարևմտյան և Ստալինգրադյան ռազմաճակատների հարվածներով շրջապատել հակառակորդի հիմնական խմբավորումը:

Մինչ այդ խորհրդային զորքերն իրենց օպերատիվ դիրքը բարելավելու համար իրականացրել էին մի շարք գործողություններ, որոնցից կարևոր էր 1942թ. հոկտեմբերին 76-րդ հայկական լեռնահրաձգային դիվիզիայի (հրամանատար՝ գեներալ-մայոր Ն.Տ. Թավարքիլաձե) կողմից Դոնի աջ ափի Կլետսկայա շրջանի ռազմահենադաշտի գրավումը: Դիվիզիան, որը 1942թ. հուլիսին արդեն իսկ աչքի էր ընկել 21-րդ և 38-րդ բանակների միջև մխրճված գերմանական զորքերի առաջխաղացումը կասեցնելիս, մեկ ամիս շարունակ հերոսաբար անդրադարձում էր հենադաշտն ամեն կերպ վերացնել ձգտող հակառակորդի գրոհները:

Հայկական դիվիզիայի գրաված դիրքերը խիստ կարևոր էին: Գերմանացիները ձգտում էին օր առաջ ազատել հենադաշտի մոտ գամված ուժերը և դրանք տեղափոխել Ստալինգրադ, իսկ խորհրդային կողմի համար Կլետսկայան հակառակորդի ստալինգրադյան խմբավորման թիկունքին սպառնացող առանցքային հանգույց էր: Դոնի առափնյա ոչ մեծ շերտին կառչած հայկական դիվիզիան անմատչելի ամրոցի էր վերածել Կլետսկայան: Մեծաթիվ զոհեր տալով՝ նոյեմբերի սկզբին հակառակորդն, ի վերջո, հրաժարվեց հենադաշտը վերացնելու մտքից: Խորհրդային հրամանատարությունը չհապաղեց օգտագործել ընձեռված հնարավորությունը: Հարավարևմտյան ռազմաճակատի հարվածային խմբավորման՝ 21-րդ բանակի գլխավոր հարվածը որոշվեց հասցնել ձախ թևում՝ հայկական դիվիզիայի, ինչպես նաև նրա աջ հարևանների՝ 293-րդ և 63-րդ հրաձգային դիվիզիաների ուժերով: Դիվիզիայի ձախից հարձակվելու էր Դոնի ռազմաճակատի 65-րդ բանակի 27-րդ հրաձգային դիվիզիան: Գլխավոր ուղղության վրա (76-րդ և 293-րդ դիվիզիաների տեղամասերում) հաջողության զարգացման խնդիրը դրվեց բանակի շարժական խմբի վրա, որը բաղկացած էր 1 տանկային և 1 հեծյալ կորպուսներից:

Որպեսզի պարզ լինի հայկական դիվիզիայի առջև դրված մարտական խնդրի կատարման կարևորությունը՝ նշենք, որ 21-րդ բանակի շտաբի 1942թ. նոյեմբերի 15-ի մարտական հրամանով դիվիզիան ուժեղացվեց մեկ տանկային, վեց հրետանային և ականանետային, մեկ գվարդիական ականանետային («Կատյուշաների») և մեկ զենիթային գնդերով: Ուժեղացման զորամասերի անձնակազմը գրեթե հավասար էր դիվիզիայի անձնակազմին:

Դիվիզիան պետք է ճեղքեր հակառակորդի պաշտպանությունը Կարաժենսկիի հարավի ծորակից մինչև Կլետսկայայի հարավային արվարձանում, մեքենատրակտորային կայան տեղամասում և հարևանների հետ համագործակցելով գրավեր Վլասով, Սելիվանովո բնագիծը: 196,7 և 218,8 նիշով բարձունքների բնագծում դիվիզիայի զորամասերը պետք է իրենց մարտակարգերի միջով թողնեին տանկային և հեծյալ կորպուսների ուժերը, որոնք, հաջողությունը զարգացնելով, պետք է գրավեին Դոն գետի անցումները և թույլ չտային հակառակորդի նահանջը դեպի արևմուտք (տե՛ս Սխ. 1):

Խորհրդային հրամանատարությունը վստահ էր, որ դիվիզիան կկարողանա կատարել իր առջև դրված խնդիրը: Այդ պատճառով 21-րդ բանակի ստորաբաժանումների մի մասին էլ հանձնարարվեց, հայկական դիվիզիայի և շարժական միավորումների հաջողությունն օգտագործելով, շրջապատել ու ոչնչացնել ռումինական 5-րդ բանակային կորպուսը:

Տեղանքը բաց էր: Դոն գետի ափերից բացի, մնացած ամբողջ տարածքն անտառազուրկ էր, որը դժվարացնում էր զորքի կողմնորոշումը: Մեծաթիվ ծորակների և հեղեղատների թեք լանջերը, ինչպես նաև աշնանային ճամփախափանքը դժվարացնում էին զորքի տեղաշարժերը: Լրացուցիչ խոչընդոտ դարձավ հարձակումից մի քանի օր առաջ սկսված Դոնի սառցակալումը: Բոլոր դժվարություններին ավելանում էր և այն, որ բավական երկար միևնույն բնագծում գտնվելով՝ հակառակորդը հնարավորություն էր ունեցել ստեղծել զգալի քանակությամբ դզոտներով, հենակետերով և դիմադրության հանգույցներով հագեցված պաշտպանություն, որի առաջնային եզրն անցնում էր գերիշխող բարձունքներով: 293-րդ և 76-րդ դիվիզիաների հարձակման տեղամասում էին ռումինական 4-րդ բանակային կորպուսի 13-րդ հետևակային դիվիզիան և 5-րդ բանակային կորպուսը: Հակառակորդի ռեզերվը Գրոմկիի շրջանում էր:

Հակառակորդը հիմնական ջանքերը կենտրոնացրել էր առաջին պաշտպանական դիրքի հենակետերի և դրանց առաջին խրամուղու պահպանման վրա: Հետևաբար, պաշտպանության հաջող ճեղքման համար անհրաժեշտ էր հասցնել հզոր սկզբնական հարված: Այդ նպատակով գնդերի մարտակարգը դասավորվել էր մեկ էշելոնով՝ առանձնացնելով համազորային ռեզերվներ (գնդերում՝ ավտոմատավորների վաշտ): Մարտակարգի այսպիսի դասավորությունը հնարավորություն տվեց 20 հրաձգային վաշտ ունենալ դիվիզիայի գրոհող զորքերի առաջին գծում, որով ապահովվում էր հրազենի առավելագույն օգտագործումը: Կանխատեսելով հակագրոհները՝ դիվիզիայում ստեղծվել էր հրետանային-հակատանկային ռեզերվ:

Սխեմա 1



ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ 1942Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Մարտական գործողությունների ընթացքը

Հարձակողական գործողությունների նախերգանքը նոյեմբերի 18-ին գնդերի հետախուզական ջոկատների ուժերով իրականացված մարտով հետախուզությունն էր, որն օգնեց հակառակորդի մասին առավել ամբողջական պատկերացում կազմելուն: Նոյեմբերի 19-ին, ժամը 7^{30}-ին բանակի հրամանատարական կետի ընդհանուր ազդանշանով սկսվեց գրոհի հրետանային պատրաստությունը, որը տևեց 1 ժամ 20 րոպե: 8^{50}-ին հրետանին կրակը տեղափոխեց հակառակորդի պաշտպանության խորքը, և հայկական հետևակային ստորաբաժանումները սլացան գրոհի:

76-րդ դիվիզիան հակառակորդի պաշտպանությունը ճեղքում էր երկու հրաձգային գնդերով՝ գլխավոր հարվածը հասցնելով Կլետսկայա, Սելիվանովո ճանապարհի երկայնքով: Չորս ժամում դիվիզիայի զորամասերն առաջացան 3 կմ ու սկսեցին հակառակորդի երկրորդ դիրքերի ճեղքումը (տե՛ս Սխ. 2):

Սխեմա 2



76-ՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ 1942Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-ԻՆ

Հակառակորդը ժամը 13-ին երկու հակագրոհ իրականացրեց: Հակագրոհների սկզբին խորհրդային հրետանու զգալի մասը հետ էր մնացել հետևակի մարտակարգերից և չկարողացավ մասնակցել հակագրոհի անդրադարձմանը: Սա հատկապես զգալի էր 293-րդ հրաձգային դիվիզիայի տեղամասում, քանի որ նրա հրետանու կրակադիրքերը գտնվում էին Դոնի հյուսիսային ափին: Հայկական դիվիզիայի հարձակման տեղամասում իրավիճակն ավելի բարենպաստ էր, և հաջողությունը զարգացնելու նպատակով մարտի մտցվեց բանակի շարժական խումբը՝ 4-րդ տանկային կորպուսը: Կորպուսի ձախ զորասյան (102-րդ տանկային և 4-րդ մոտոհրաձգային բրիգադները) հետ դիվիզիան անդրադարձրեց հակագրոհը:

Ավելի քան մեկ տասնյակ աջակցող զորամասեր ունեցող դիվիզիայի հարձակումը հսկայական ընդգրկում ունեցող մարտական գործողության վերածվեց, որի հաջողությունից կախված էր երկու ռազմաճակատների ռազմավարական հարձակման հետագա ընթացքը: Պատահական չէր, որ ժամը 16-ին հայկական դիվիզիայի հարձակման հատվածում մարտի մտցվեց նաև 3-րդ գվարդիական հեծյալ կորպուսը:

4-րդ տանկային կորպուսի աջ զորասյան հաջող առաջխաղացման և 3-րդ գվարդիական հեծյալ կորպուսի մարտի մեջ մտնելու պատճառով հայկական դիվիզիայի ճակատում գործող հակառակորդի ստորաբաժանումները շրջապատվելու սպառնալիքի տակ ընկան ու նոյեմբերի 19-ի լույս 20-ի գիշերը սկսեցին շարժվել հարավ: Հայկական դիվիզիան կարողացավ լուծել ոչ միայն հակառակորդի ջախջախման խնդիրը, այլև հասավ գլխավոր նպատակին՝ հակառակորդին հովհարաձև նահանջ հարկադրել ու ցրել նրա ուժերը:

Նոյեմբերի 20-ի առավոտյան հայկական դիվիզիայի զորամասերը դասավորվեցին շարասյուներով և անցան հակառակորդի հետապնդմանը: Դիվիզիան, հաղթահարելով Վլասով և Սելիվանովո բնակավայրերում ռումինական առանձին ստորաբաժանումների դիմադրությունը, գրավեց այս բնակավայրերը և նոյեմբերի 20-ի երեկոյան ամրացավ թիվ 2 ֆերմա, 200,2 նիշով բարձունք, թիվ 1 ֆերմա բնագծում՝ խորանալով մինչև 20 կմ (տե՛ս Սխ. 2):

Հարևանների ձեռքբերումներն ավելի համեստ էին: Ձախից Դոնի ռազմաճակատի 65-րդ բանակի 27-րդ հրաձգային դիվիզիան, հայկական դիվիզիայի հաջողությունն օգտագործելով, նոյեմբերի 20-ի երեկոյան առաջացավ ընդամենը 10 կմ: Հայկական դիվիզիայի հարձակման տեմպին չհասցնելով՝ ի վերջո հետ մնաց նաև ճեղքման տեղամասի կենտրոնում գտնվող 293-րդ դիվիզիան:

Այսպիսով, երկօրյա անընդհատ մարտերի ընթացքում 293-րդ դիվիզիայի հետ համատեղ հայկական դիվիզիայի զորամասերը ճեղքեցին հակառակորդի պաշտպանությունը նրա ամբողջ մարտավարական խորությունում և անդրադարձրին հակառակորդի ռեզերվների հակագրոհները: Ընդհանուր ջանքերի արդյունքում նոյեմբերի 20-ի երեկոյան հակառակորդի խմբավորման աջ թևը շրջանցվեց արևելքից ու հարավ-արևելքից, իսկ 333-րդ հրաձգային դիվիզիայի դեպի Վերին Չերենսկի հարձակումով հակառակորդի նահանջի ուղիները

փակվեցին: Հայկական դիվիզիան 5-7 կմ խորության վրա ապահովեց բանակի շարժական խմբի մարտի մտնելը և նրա հաջողությունն օգտագործելով՝ ավարտեց հակառակորդի պաշտպանության մարտավարական գոտու ճեղքումը: Հարձակման միջին տեմպը կազմեց 9-10 կմ/օր:

Հրետանու հետ մնալու, ինչպես նաև 239-րդ դիվիզիայի աջ թևի բաց լինելու պատճառով հակառակորդի պաշտպանության գլխավոր շերտն ամբողջությամբ մեկ օրում գրավել չհաջողվեց: Առաջին օրը ճեղքվեց հակառակորդի պաշտպանության գլխավոր հատվածի միայն առաջին դիրքը:

Դիվիզիայի հաջողությանը նպաստեց հարձակման համակողմանի նախապատրաստումը: Մարտակարգերը շարվում էին մեկ էշելոնով, որը հնարավորություն տվեց առաջին հզոր հարվածը հասցնելու համար օգտագործել բոլոր ուժերն ու միջոցները: Ճակատի նեղ տեղամասում հետևակի անմիջական աջակցման տանկերի հմուտ կիրառումը թույլ տվեց ընդհանուր միջին 4-5 տանկ/կմ խտության պայմաններում դիվիզիայի գլխավոր հարվածի ուղղությունում ստեղծել 16 տանկ/կմ խտություն:

Հայկական դիվիզիայի հարձակման արդյունքում 21-րդ բանակի հրամանատարությունը հնարավորություն ստացավ Մանոյլին, Մայորովսկի շրջաններ դուրս բերել իր շարժական խմբերը, որոնք 5-րդ տանկային բանակի զորքերի հետ հասան Դոն գետի բնագիծը և Ստալինգրադյան ռազմաճակատի շարժական զորքերի հետ նոյեմբերի 23-ին փակեցին հակառակորդի ստալինգրադյան 330 հազարանոց (22 դիվիզիա) խմբավորման շրջապատման օղակը: Գերմանական զորքերը ջախջախիչ պարտություն կրեցին: Այդ նույն օրը հայկական դիվիզիան արժանացավ գվարդիականի կոչման, իսկ շրջապատված հակառակորդի ոչնչացման գործողության ժամանակ աչքի ընկնելու համար 1943թ. հունիսի 19-ին պարգևատրվեց Լենինի շքանշանով:

1943թ. հուլիս-օգոստոս ամիսներին 51-րդ գվարդիականի վերանվանված դիվիզիան մասնակցեց Կուրսկի աղեղի ճակատամարտին և փայլեց Բելգորոդ-Բոգոդուխովյան գործողության ընթացքում: 1944-45թթ. դիվիզիան 1-ին Բելոռուսական ռազմաճակատի կազմում մասնակցեց Բելոռուսիայի և Մերձբալթիկայի ազատագրմանը:

Դիվիզիան աչքի ընկավ Վիտեբսկի մոտ գերմանական խմբավորման շրջապատման ժամանակ, որի համար արժանացավ «Վիտեբսկյան» պատվանվանը: Դիվիզիայի մարտական ուղին ավարտվեց 1945թ. մայիսին Կուռլյանդյան թերակղզում շրջապատված հակառակորդի խմբավորման ոչնչացումով: Ի դեպ, այդտեղ խորհրդային զորքերի ընդհանուր հրամանատարն էր այս պատերազմի մեր ամենաանվանի հայ զորավարը՝ Հովհաննես Բաղրամյանը:

89-ՐԴ ԵՎ 409-ՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՁԳԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

1943Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

1942թ. նոյեմբերին Ստալինգրադի մատույցներում գերմանական զորքերի շրջապատումով սկսվում է արմատական բեկումը Երկրորդ համաշխարհային պատերազմում, որին հասնելու գործում էական էր Կովկասի պաշտպանության նշանակությունը: Թուրքիան Խորհրդային Միության սահմանին էր մոտեցրել 26 դիվիզիա, ամեն րոպե սպառնում էր ներխուժել Անդրկովկաս: Այդ վտանգը կանխելու գիտակցությամբ էին հայ մարտիկները ֆաշիստական հորդաների դեմ ամենուրեք մարտնչում՝ հատկապես Կովկասում, որը հասկանալի վերապահումներով կարելի է հայոց հողի համար պայքար համարել:

Այս առումով բնութագրական է Կովկասի ճակատամարտին մասնակցած 408-րդ հրաձգային դիվիզիան, որի մասին թեև չենք նշի այս ակնարկում, բայց որը 89-րդ և 409-րդ դիվիզիաներից պակաս ակտիվ մասնակցություն չի ունեցել: Այն կազմավորվել է 1941թ. օգոստոսին Երևանում և 1942թ. մարտ-սեպտեմբեր ամիսներին պաշտպանել հայ-թուրքական սահմանը: 408-րդ դիվիզիան ճակատ է մեկնել 1942թ. սեպտեմբերի 10-ին ու համալրել 47-րդ բանակի Սևծովյան խմբավորումը: Դիվիզիայի մարտիկներն աչքի են ընկել սեպտեմբերի 25-ին Նովոռոսիյսկի շրջանում ձեռնարկված հակահարձակման ժամանակ: Հոկտեմբերին դիվիզիան փոխադրվել է Տուապսե, որտեղ ծանրագույն մարտերում իր անունը փառքով է պսակել՝ հերոսական էջ գրելով հայոց ռազմի տարեգրության մեջ:

Կովկասյան ճակատում 1942թ.

Կովկասի և Անդրկովկասի նավթային ռեսուրսներին տիրանալ ձգտող գերմանական զորքերի ձախողված հարձակումը, որը պատմության մեջ մնացել է որպես Կովկասի Ճակատամարտ (1942թ. հուլիսի 25-1943թ. հոկտեմբերի 9), ընդունված է բաժանել երկու շրջանի.

- *պաշտպանական* (1942թ. հուլիսի 25-ից մինչև 1943թ. հունվարի սկիզբ), որի ընթացքում խորհրդային զորքերը ժամանակավորապես նահանջեցին և պաշտպանական համառ մարտերով արյունաքամ արեցին թշնամուն,
- *հարձակողական* (1943թ. հունվարի սկզբից մինչև 1943թ. հոկտեմբերի 9), որի ընթացքում ավարտվեց գերմանաֆաշիստական խմբավորման ջախջախումը:

Խորհրդային Միությունում ստեղծված նոր զորամիավորումների մեջ առաջիններից էր Հայաստանում կազմավորված 409-րդ դիվիզիան, որը 1942թ. փետրվարին վերակազմվում է հայկականի: Այդ դիվիզիայի կազմավորման գործում մեծ է հայկական ազգային դիվիզիաների ստեղծման ջատագով, հրամանատար, գնդապետ Արտաշես Վասիլյանի ավանդը: Նա, ի դեպ, 1942թ. հոկտեմբերին նշանակվեց 89-րդ դիվիզիայի հրամանատար և երկրորդ հայկական դիվիզիայի լեգենդար մարտական ուղու սկզբնավորողներից մեկը դարձավ:

1942թ. նոյեմբերին գնդապետ Վ.Գլադկովի հրամանատարությամբ դիվիզիան մեկնում է ճակատ և մարտերի մեջ մտնում Անդրկովկասի ռազմաճակատի հյուսիսային խմբավորման 44-րդ բանակի կազմում՝ Մոզդոկի շրջանում: Դրանով սկսվում է հայկական այս դիվիզիաների մարտական ուղին:

Տեղեկանք. 89-րդ դիվիզիայի կազմի մեջ էին մտնում 390-րդ, 400-րդ և 526-րդ հրաձգային գնդերը, 531-րդ հրետանային գունդը, 159-րդ առանձին, 167-րդ առանձին ավիահրետանային և 154-րդ առանձին կործանիչ-հակատանկային դիվիզիոնները, 170-րդ առանձին զենիթահրետանային մարտկոցը, 476-րդ առանձին կապի, 280-րդ առանձին սակրավորային և 197-րդ բժշկասանիտարական գումարտակները, 219-րդ առանձին մոտոհրաձգային և 550-րդ առանձին քիմիական պաշտպանության վաշտերը, 466-րդ հացի դաշտային փուռը և այլ օժանդակ ստորաբաժանումներ:

1941թ. դեկտեմբերին կազմավորվում է հայկական դիվիզիաներից ամենանշանավորը՝ 89-րդ հայկական հրաձգայինը: 1942թ. օգոստոսի 7-ին ռազմական խորհրդի դիրեկտիվի համաձայն՝ դիվիզիան ճակատ է մեկնում 9-րդ բա-

նակի կազմում, պաշտպանության անցնում Գրոզնու մատույցներում: Թերեք գետի բնագծում սեպտեմբերյան մարտերով էլ սկսվում է դիվիզիայի մարտական ուղին: Այս մարտերից հետո դեպի Մալգոբեկ վերախմբավորված դիվիզիան 58-րդ բանակի կազմում գերմանական 50-րդ դիվիզիայի դեմ 75-օրյա համառ մարտեր է վարում:

Թեժ մարտերի ժամանակ հրամանատար նշանակված գնդապետ Ա.Վասիլյանին և նրա տեղակալ, մայոր Երվանդ Կարապետյանին էր վստահվելու գլխավորել դիվիզիայի 1943թ. հունվարյան հարձակումը և կիսել այդ դժվարին գործողության համար պատասխանատվությունն ու պատիվը:

Տեղեկանք. Երեք հայկական դիվիզիաներից բացի, Կովկասյան ճակատում գործող 31-րդ, 61-րդ, 320-րդ, 394-րդ դիվիզիաների և 28-րդ, 38-րդ, 107-րդ և 155-րդ բրիգադների, ինչպես նաև Ստալինգրադում քաղաքային մարտեր վարող 136-րդ և 138-րդ դիվիզիաների անձնակազմի կեսից ավելին հայեր էին:

Հունվարյան հարձակումը

Առաջին «ցատկը»

1943թ. հունվարին խորհրդա-գերմանական ճակատում հակառակորդի համար անբարենպաստ իրադրություն էր ձևավորվել: Ստալինգրադյան խմբավորման շրջապատումը ճեղքելու 1942թ. դեկտեմբերի անհաջող փորձից հետո Կովկասի նախալեռներում ծվարած գերմանական զորքերի վիճակն օր օրի վատանում էր, և տարեվերջին հակառակորդը հակվում է Կովկասից ուժերը հետ քաշելու մտքին: Խորհրդային զորքերի խնդիրն էր նրան թույլ չտալ անարգել նահանջել և ամրանալ ավելի նպաստավոր բնագծերում (տե՛ս քարտեզ 1): Այս հարձակման կիզակետում էին 89-րդ (58-րդ բանակի կազմում) և 409-րդ (44-րդ բանակի կազմում) հրաձգային դիվիզիաները:

Հունվարի 1-ի դիվիզիայի ընդհանուր հարձակման համար նպաստավոր բնագծեր գրավելու խնդրով հարձակողական գործողություններ են սկսում առաջապահ ստորաբաժանումները, որոնք երեկոյան հասցնում են կատարել իրենց առջև դրված խնդիրը և նպաստում են դիվիզիայի գլխավոր ուժերի՝ Մալգոբեկի արևմտյան ծայրամասը հասնելուն: Հունվարի 2-ի երեկոյան Մալգոբեկն ազատագրվում է: Շարունակելով առաջխաղացումը՝ հունվարի 4-ին դիվիզիան ազատագրում է Համիդիե բնակավայրը:

Քարտեզ 1

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ 1943Թ
Ստալինո (Դոնեցկ)
Ռովենսկի
4 ՏԲ
Լոզնոյ
Վերխնյայա Կուրմոյարսկայա
5 Հրվձ. Բ
Նախտի
Ջիմլյանսկայա
Կոտելնիկովսկի
29վ. Բ
4 Օդ. Տղ.
Դոն
Սալ
Դոնի Ռոստով
Մանիչսկայա
51 Բ
Ազով
Բեշտայսկ
Զիմովնիկի
Կրասնի Ծանիչ
Պրոլետարսկայա
Ռեմոնտնոյե
Ելիստա
Եյսկ
Ես
44 Բ
Գոցբլիկսկայա
Մալսկ
Մանիչ-Գուդիլո
Պրիմորսկո-Ախտարսկայա
Չելբաս
Բրիսկոսկայա
Բելայա Գլինա
Տիխորեցկ
Եգորլիկ
Բաշանտա
Դիվնոյե
28 Բ
Ռոի
Բուրոյ
Կալաչա
Կերչ
Տեմրյուկ
Թամանի
Կրասնոդար
Դրիմսկայա
Ադիգեյսկ
Նովոռոսիյսկ
Յուժնայա Օզերեյկա
Գելենջիկ
Գորյաչի Կլյուչ
Նեֆտեգորսկ
Տուապսե
Սոչի
Գագրա
Սուխում
Ա Զ Ո Վ Ի
Ծ Ո Վ
Ս Ե Վ Ծ Ո Վ
Մայկոպ
Լաբինսկայա
Արմավիր
Ստավրոպոլ
Կուգուլտա
Բլագոդարնոյե
Բուդյոննովսկ
Նևինոմիսկ
Կուբան
Լաբա
Կումա
17 Բ
47 Բ
5 Գվ. Հեծ. Կ
1 ՏԲ
Չերկեզսկ
Կաժենոմորսկայա
Պրեգրադնայա
Գեորգիևսկ
Սոզրոկ
Կիսլավոդսկ
Պրոխլադնի
Նալչիկ
Մալգոբեկ
58 Բ
Էլխոտովո
Չինգլա
Ալագիր
Օրջոնիկիձե
40 Բ
37 Բ
46 Բ
49 Լ Հրձ Կ
18 Բ
Ռեմոնտնոյե

Համիդիեի մոտ մի շարք հաջող գործողություններ կանխորոշում են դիվիզիայի հետագա հարձակման հաջողությունը: Մասնավորապես, 400-րդ գունդը շրջապատում և ոչնչացնում է հակառակորդի մեկ ուժեղացված վաշտ, իսկ 531-րդ հրետանային գնդի երրորդ դիվիզիոնը դիպուկ կրակով ոչնչացնում է չորս հրետանային, երկու ականանետային մարտկոց, 10 ծանր գնդացիր, մեկ ավտոհավաքակայան, վեց դիտակետ, երեք տանկ և մի քանի ամրացված կրակակետ:

Ի վերջո, դիվիզիայի հարձակման հատվածում հակառակորդի նահանջն ապահովող վերջապահ ուժերի մեծ մասը ոչնչացվում է: Դա հնարավորություն է տալիս սեպաձև մխրճվել հակառակորդի մարտակարգի մեջ և համեմատաբար հեշտացնում է հարևաններից առաջ անցած դիվիզիայի առաջխաղացումը: Դիվիզիայի զորամասերը զարգացնում են հաջողությունը, կոտրում հակառակորդի դիմադրությունը և մեկ ցատկով Թերեքի աջ ափով հասնում Մայսկի ավան, գետանցում Թերեքն ու հունվարի 9-ին ազատագրում Պրոխլադնի քաղաքը, որտեղից հարձակումը շարունակվում է դեպի Նովոպավլովսկ և հունվարի 13-ին հարձակման այս փուլն ավարտում Պոդգորնայայում:

Ուժեղ ցրտերի պայմաններում իրականացվող հարձակումն այնքան սրընթաց էր, որ դիվիզիայի թիկունքը սկսում է հետ մնալ առաջ սլացող զորամասերից: Այդուհանդերձ, հարձակումը չի դադարեցվում, և անցնելով Գեորգիևսկ, Մինեռալնիե վոդի և Ստավրոպոլ քաղաքներով՝ դիվիզիան ազատագրում է բազմաթիվ բնակավայրեր:

Հունվարյան հարձակման առաջին իսկ օրերից 89-րդ դիվիզիայից աջ՝ Մոզդոկի շրջանի Շեֆետովո, Իսպիրով, Ստարի Խոխլաչով բնակավայրերի մերձակայքի բնագծում հարձակում է սկսում 409-րդ հայկական հրաձգային դիվիզիան, որի զորամասերն առաջին հարվածը հասցնելու էին այդ բնակավայրերի ուղղությամբ: Ի դեպ, մարտավարական նկատառումներով դիվիզիայի զորամասերի ակտիվ գործողությունները սկսվել էին դեռևս դեկտեմբերի 31-ին: Առաջին մարտերում հակառակորդին ջախջախելով՝ դիվիզիան հնարավորություն է ստանում մտնել Մոզդոկ, որը Կովկասյան ճակատում սկսված հարձակման առաջին մեծ հաջողություններից էր:

Սկսվում է հաջողության զարգացումը՝ հակառակորդի կրնկակոխ հետապնդումը: Հարձակման այս փուլում 409-րդ դիվիզիան ազատագրում է տասնյակ բնակավայրեր, այդ թվում՝ Գեորգիևսկ, Մինվոդի, Ստավրոպոլ քաղաքները: Խորհրդանշական է, որ ազատագրվող բնակավայրերի մի մասը ստվար հայ ազգաբնակչություն ուներ: Բնակավայրերի մի մասի ազատագրման ժամանակ 44-րդ բանակի ձախթևյան 409-րդ դիվիզիայի զորամասերը սերտորեն համագործակցել են հարևան 58-րդ բանակի աջթևյան՝ 89-րդ դիվիզիայի հետ, համատեղ ուժերով կամ թևային հարվածներով աջակցել միմյանց (տե՛ս քարտեզ 2):

Մասնավորապես, գերմանացիները Մոզդոկի մոտ մի շարք կարևոր բնագծեր պահպանելու նպատակով հակագրոհի են անցնում 409-րդ դիվիզիայի 677-րդ հրաձգային գնդի (հրամանատար՝ մայոր Միքայել Գրիգոր-

Քարտեզ 2


89-ՐԴ ԵՎ 409-ՐԴ ԴԻՎԻԶԻՈՆԵՐԻ ՀԱՐՁԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՈՒԱՁԱՍՑԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆ
Դ
Ն
Ե
Ս
Տ
Ի
Ր
Ա
Ն
Ա
Ն
Ա
Ն

յան) դեմ: Գնդի մարտիկների համառ դիմադրության պատճառով հակառակորդի հակագրոհը կասեցվում է: Ավելին, ստեղծված իրավիճակից օգտվելով՝ մայոր Մ.Գրիգորյանը 3-րդ գումարտակի ուժերով (հրամանատարի տեղակալ՝ կրտսեր լեյտենանտ Ա.Սիրունյանի գլխավորությամբ) հակառակորդի խմբավորման ձախ թևին հասցված հարվածով կարողանում է ստեղծել շրջապատման սպառնալիք: Հակառակորդն այս գրոհի հետ մեծ հույսեր էր կապում, որի ձախողումը խուճապ է առաջացնում նրա շարքերում, և անկանոն նահանջ է սկսվում: Հայկական դիվիզիան, գրեթե դիմադրության չհանդիպելով, գրավում է տեղանքի մարտավարական առումով կարևոր այն հատվածը, որը պաշտպանելու համար հակառակորդը պատրաստ էր կատաղի հակագրոհների:

Այս հաջողությամբ 677-րդ հրաձգային գունդն իր վրա է սևեռում հակառակորդի Մալգոբեկ-մոզդոկյան խմբավորման ուշադրությունը: Հյուսիսում անհաջողության մատնված և անկանոն նահանջի արդյունքում ծայրահեղ անբարենպաստ իրավիճակում հայտնված հակառակորդը ռեզերվները նետում է դեպի հյուսիս և վճռական պահին չի կարողանում նախատեսած բոլոր ուժերով դիմակայել 400-րդ գնդի իրականացրած շրջապատմանը, որի մասին նշել ենք վերևում: Պակաս կարևոր չէ փաստը, որը 677-րդ գնդի հայրենակիցների օրինակը ոգևորիչ և, միաժամանակ նաև պարտավորեցնող էր 400-րդ գնդի մարտիկների համար[1]: Նախաձեռնությունից զրկված և ուժերի անարդյունավետ վերախմբավորումների վրա մեծ ժամանակ կորցրած հակառակորդը չի համարձակվում շարունակել դիմադրությունն այս շերտում ու հապշտապ նահանջում է:

[1] Շեշտենք, որ 89-րդ դիվիզիայի 400-րդ և 409-րդ դիվիզիայի 677-րդ հրաձգային գնդերը հարևան չէին: Հետևաբար, խոսքն օպերատիվ փոխգործողության մասին է:

Փետրվարյան հարձակումը

Երկրորդ «ցատկը»

1943թ. հունվարի վերջին սկսվում է հարձակման երկրորդ փուլը: Հունվարի 26-ին Նովոալեքսանդրովսկում կենտրոնացած 89-րդ դիվիզիան՝ հակառակորդին օր առաջ ջախջախելու հաստատակամությամբ, շարունակում է առաջխաղացումը: Սկսվում է դիվիզիայի զորամասերի երկրորդ «ցատկը», որը նույնքան տպավորիչ էր, որքան նախորդը: Համաձայն հրամանատարության մտահղացման՝ դեպի Ազովի ծովափ հասցվող հարվածով պետք է երկփեղկվեր հակառակորդի «Ա» բանակախմբի ամբողջ օպերատիվ դասավորությունը: Հակառակորդի ուժերի մասնատումից հետո նրանց մի մասը հարկադրված էր լինելու նահանջել դեպի հյուսիս, մյուսը՝ դեպի արևմուտք և հարավ-արևմուտք:

89-րդ դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Նվեր Սաֆարյան (1905-1982)

58-րդ բանակի կազմում հարձակումը շարունակող 89-րդ դիվիզիան, դեպի արևմուտք-հյուսիս-արևմուտք շարժվելով, ազատագրում է Կրասնոդարի երկրամասի տասնյակ բնակավայրեր: Դժվար չէր կռահել խորհրդային հրամանատարության մտահղացումը, և Կովկասի ռազմավարական

ՊՊՇ-41 ատրճանակ-գնդացիր: Արտադրության համար գրավիչ էր ՊՊՇ-41-ի կառուցվածքային պարզությունը, իսկ զինվորների կողմից սիրվեց առաջին հերթին բարձր արագաձգության համար:

ուղղության վրա գործող իր ուժերի օպերատիվ մասնատում թույլ չտալու համար հակառակորդը սկսում է կատաղի դիմադրություն ցույց տալ: Հատկապես համառ մարտեր են ծավալվում Կանևսկայա ստանիցայի համար, որը կարևոր նշանակություն ուներ:

Հարցն այն է, որ Ազովի ծովի արևելյան ափը ճահճապատ է, և ծովափին մոտ տարածքներում վերախմբավորումներ իրականացնելու և մարտական տեխնիկայի շարժի համար պիտանի ճանապարհներ չկան: Ծովափից շուրջ 25 կմ հեռավորության վրա գտնվող Կանևսկայան երկաթուղային և ավտոճանապարհային կարևոր հանգույց էր, որով կտրվելու էր հակառակորդի երկու մեծ խմբավորումների կապը:

Կանևսկայայի ազատագրումով դիվիզիան ավարտում է երկրորդ «ցատկը» և փետրվարին կենտրոնանում Կանևսկայայի շրջակա Ռուգաչ և Գարբուզովո Բալկա բնակավայրերի բնագծում: Այստեղից սկսվում է հարձակման շարունակումը՝ Պոդի-Նովոջերիլովկա բնագծում ամրանալու համար:

Հայկական դիվիզիայի հարձակումով հակառակորդի օպերատիվ դասավորությունը վերջնականապես մասնատվելու էր: Այդ թույլ չտալու համար հակառակորդը դիմում է կատաղի հակագրոհների: Դիվիզիան հայտնվել էր ռազմավարական առումով կարևոր իրադարձությունների կիզակետում, և Նովոջերիլովկայից հակագրոհող հակառակորդի հաջողության դեպքում վերջինս կարող էր ձախողել 58-րդ բանակի ամբողջ հարձակումը: Հակագրոհի կասեցումը ղեկավարում է դիվիզիայի հրամանատարն անձամբ:

Հակագրոհը կասեցվում է: Ավելին, հայկական զորամասերը հակագրոհի անդրադարձման պահին նկատելիորեն բարելավում են իրենց դիրքերը, սակայն հաջողությունը ձեռք է բերվում թանկ գնով. մարտում զոհվում են գնդապետ Ա.Վասիլյանը, որը շարժվում էր դիվիզիայի առաջապահ 390-րդ հրաձգային գնդի հետ, գրոհն իր վրա ընդունած գնդի հրամանատար, մայոր Գ.Իսախանյանը, նույն գնդին տրված դիվիզիոնի (531-րդ հրետանային գնդի երկրորդ դիվիզիոն) հրամանատար Ի.Դանիլինը և ուրիշներ:

1943թ. փետրվարի կեսից դիվիզիան ավարտում է փառահեղ հարձակումը և ուղարկվում հանգստի ու համալրման՝ միաժամանակ կատարելով Ազովի ափի՝ մինչև Եա գետի լիմանն ընկած հատվածը ծովային դեսանտի իջեցումից պաշտպանելու խնդիրը:

Փետրվարի վերջին դիվիզիայի հրամանատար է նշանակվում գնդապետ[1] Նվեր Սաֆարյանը, որի հմուտ ղեկավարմամբ դիվիզիան նախ աչքի էր ընկնելու Թաման թերակղզու համար մղվող մարտերում և արժանանալու էր «Թամանյան» պատվանվանը, ապա հասնելու էր Բեռլին, որտեղ, ի նշանավորումն փառապանծ հաղթանակի, մեր հաղթանակած զինվորները պարելու էին հայոց քոչարին:

---

[1] Հետագայում՝ գեներալ-մայոր:

409-րդ դիվիզիայի 684-րդ գնդի մարտիկները Դնեպրն անցնելուց հետո (1943թ. նոյեմբեր): Կենտրոնում՝ մայոր Աշոտ Հարությունյանը:

409-րդ դիվիզիան գործում էր հայրենակիցների հիմնադրած և հայոց հինավուրց մայրաքաղաքի անունով կոչված Արմավիր քաղաքի ուղղության վրա: Դիվիզիան հունվարի վերջին տասնօրյակում մասնակցում է Արմավիրի ազատագրմանը, ապա հաջողությունը զարգացնում դեպի Կրասնոդար:

Փետրվարի 14-ին, երբ Ազովի ծովափին հասած 89-րդ դիվիզիան ուղարկվել էր համալրման, 409-րդ դիվիզիայի զորամասերը դժվարին մարտեր էին մղում Ստարո-Վոլչանսկ բնակավայրի համար, որն ազատագրվում է փետրվարի 17-ին: Հաջորդ օրը համարձակ ռազմերթով դիվիզիան գրավում է Ստարո-Նիժնե-Ստեբելևսկայա կայարանը, ապա մարտերի մեջ մտնում Նովոնիկոլաևսկայա և Իվանովսկայա բնակավայրերի համար: Այս մարտերի ժամանակ դիվիզիան առաջնորդում է նոր հրամանատար, գնդապետ Մ.Դոբրովոլսկին:

Հետագայում 409-րդ դիվիզիան փառքով պսակեց իր անունը: Զորամիավորումը 1943թ. նոյեմբերին հաղթահարեց թշնամու կատաղի դիմադրությունը և անցավ Դնեպրը: Այդ մարտերում հատկապես աչքի ընկավ դիվիզիայի 684-րդ գունդը: Դրան հետևեց Կիրովոգրադ քաղաքի ազատագրումը, իսկ հետո ազատագրվեց նաև Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավան: Դիվիզիան դարձավ միակը հայկական դիվիզիաներից, որը երկու պատվանուն ստացավ՝ կոչվելով «Կիրովոգրադ-Բրատիսլավյան» և պարգևատրվեց Բոգդան Խմելնիցկու շքանշանով:

Այսպիսով, 89-րդ և 409-րդ հայկական հրաձգային դիվիզիաները Կովկասի և 409-րդ դիվիզիաները շուրջ երկու ամսում մարտերով անցան ավելի քան 800 կմ և մասնակցեցին ավելի քան երեք տասնյակ քաղաքների ու հարյուրավոր բնակավայրերի ազատագրմանը:

ՀԱՅ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԻ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ

Հայրենական պատերազմին խորհրդային բանակի կազմում մասնակցել է շուրջ 60 հայ գեներալ: Հովհաննես Բաղրամյանը ստացել է բանակի գեներալի կոչում, Հովհաննես Իսակովը՝ նավատորմի ծովակալի, իսկ Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խանփերյանց)՝ ավիացիայի մարշալի: Մեր գեներալները եղել են ռազմաճակատի, բանակների, կորպուսների, դիվիզիաների և այլ խոշոր ստորաբաժանումների հրամանատարներ: Հայ գեներալները պատերազմում ցուցաբերել են իրենց ռազմավարական և մարտավարական տաղանդն ու մեծապես նպաստել վերջնական հաղթանակի կերտմանը:

ՄԵՐՁԲԱԼԹԻԿԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ. ԳԵՆԵՐԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՓԱՅԼՈՒՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՏԱՀՂԱՑՈՒՄԸ

Իրավիճակը պատերազմի Մերձբալթյան ճակատում 1944թ. ամռանը

Բելոռուսիայի ազատագրումից և Լենինգրադի պաշարման օղակը վերացնելուց հետո խորհրդային զորքերը, այդ թվում՝ բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյանի գլխավորած 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի ստորաբաժանումները, Բալթյան նավատորմի աջակցությամբ սկսեցին գերմանական զորքերից Մերձբալթյան հանրապետությունների ազատագրման գործողությունը: Այդ հանրապետությունների տարածքի հիմնական մասը դեռևս հակառակորդի ձեռքում էր, որտեղ խոշոր ուժեր էին տեղակայված: Վերջիններիս առանցքը կազմող «Հյուսիս» խմբավորման մեջ մտնում էին «Նարվա» բանակային խումբը, 16-րդ և 18-րդ բանակները, ինչպես նաև «Կենտրոն» խմբավորումից փոխանցված 3-րդ տանկային բանակը: Այս ուժերին օժանդակում էին 1-ին և 6-րդ օդային նավատորմերը:

Այսպիսով, հակառակորդն ընդհանուր առմամբ կենտրոնացրել էր 56 դիվիզիա և 3 բրիգադ՝ 700 հազարից ավելի մարդ, շուրջ 7 հազար հրանոթ ու ականանետ, ավելի քան 1200 տանկ և ինքնագնաց հրանոթ, 400 մարտական ինքնաթիռ: Ճակատագծից մինչև Բալթիկ ծովի ափը հակառակորդը ստեղծել էր բազմագոտի ամուր պաշտպանություն:

Մերձբալթյան ռազմավարական գործողությունը

Մերձբալթյան հարձակողական գործողությունը (1944թ. սեպտեմբերի14-նոյեմբերի 24) իրականացրին Լենինգրադյան, 1-ին, 2-րդ և 3-րդ Մերձբալթյան և 3-րդ Բելոռուսական ռազմաճակատների զորքերը, նաև Բալթյան նավատորմը: Գլխավոր հրամանատարության և Գլխավոր շտաբի մշակած պլանի համաձայն՝ Մերձբալթյան ռազմաճակատների ուժերը պետք է հարձակվեին Ռիգայի, իսկ Լենինգրադյան ռազմաճակատի զորքերը՝ Տալլինի ուղղությամբ, մասնատեին հակառակորդի «Հյուսիս» բանակախմբի ուժերը և ոչնչացնեին: Այս ռազմավարական գործողության ընդհանուր լայնությունը 1000 կմ էր, իսկ խորությունը՝ 300 կմ:

Հովհ. Բաղրամյանի գլխավորած 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը մասնակցեցին Ռիգայի (սեպտեմբերի 14-հոկտեմբերի 22) և Մեմելի (հոկտեմբերի 5-22) գործողություններին: Ռիգայի հարձակողական գործողությամբ նախատեսվում էր Մերձբալթյան երեք ռազմաճակատների ուժերով Բալթյան նավատորմի օժանդակությամբ հարված հասցնել Լատվիայի մայրաքաղաք Ռիգան պաշտպանող ֆաշիստական զորքերին, ազատագրել քաղաքը և դուրս գալով ծովափ՝ կտրել «Հյուսիս» բանակախմբի նահանջի ուղին դեպի Արևելյան Պրուսիա:

1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը պետք է գործեին Դաուգավայից Շյաուլյայ ձգվող 400 կիլոմետրանոց ճակատագծում:

Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյան (1897-1982թթ.)

Տեղեկանք. «Դաուգավայից սկսած մինչև Բաուսկա, Ելգավա, Դոբելե, Ժագարե, Շյաուլյայ, Ռասեյնյայ 400 կիլոմետրանոց ճակատագծում ծավալված 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը նույնպես պետք է իրենց ներդրումն ունենային այդ ռազմավարական գործողության իրականացման մեջ: Մենք պետք է պաշտպանական մարտերում ուժասպառ անեինք հակառակորդի 3-րդ տանկային բանակի հզոր խմբավորումը և թույլ չտայինք, որ այն ճեղքի-անցնի Ելգավայի և Շյաուլյայի ուղղությունները: Միաժամանակ մեր 43-րդ բանակը պետք է Ելգավայի հարավարևելյան շրջանից հարձակվեր Իեցավայի վրա, իսկ 4-րդ հարվածային բանակի ուժերի մի մասը՝ Բաուսկայի շրջանից դեպի Վեցմույժ: Սկզբում նրանք պետք է գրավեին Վեցմույժ, Իեցավա բնագիծը, իսկ հետո՝ ճեղքեին-հասնեին Դաուգավայի գետաբերանը, 2-րդ ու 3-րդ Մերձբալթյան ռազմաճակատների զորքերի հետ միասին ջախջախեին թշնամու Ռիգայի խմբավորումը և կտրեին «Հյուսիս» բանակախմբի մնացորդներին Արևելյան Պրուսիայից»:

Հովհ. Բաղրամյան, Այսպես մենք հասանք հաղթանակի, էջ 583

Ռիգայի հարձակողական գործողությունը

Սեպտեմբերի 14-ին սկսելով հարձակումը՝ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը առաջին օրն իսկ ճեղքեցին հակառակորդի հոծ պաշտպանությունը և առաջացան 14 կմ, իսկ 3-րդ մեքենայացված կորպուսի զորքերը հասան Արևմտյան Դվինային: Հաջողությամբ զարգացնելով հարձակումը Ռիգայի ուղղությամբ՝ Հովի. Բաղրամյանի գլխավորած զորախմբերը 28 կմ լայնությամբ ճակատով 10 օրում առաջ շարժվեցին ավելի քան 50 կմ՝ հասնելով քաղաքի մատույցներին:

Ցավոք, հարևան՝ Մերձբալթյան 2-րդ և 3-րդ ռազմաճակատների զորքերի առաջխաղացումը կասեցվեց Ռիգայի մերձակայքում. նրանց չհաջողվեց ճեղքել հակառակորդի «Սիգուլդա» պաշտպանական հզոր բնագիծը: Սա «Հյուսիս» բանակային խմբավորման հրամանատար, ֆելդմարշալ Շերներին հնարավորություն տվեց ռազմաճակատի այդ հատվածից խոշոր ուժեր փոխադրելով Ռիգայի հարավային շրջան՝ ստեղծել մի նոր հզոր խմբավորում՝ 12 դիվիզիա, որոնցից երկուսը՝ տանկային: Սեպտեմբերի 22-ին այդ խմբավորումը հակահարձակման անցավ Բաղրամյանի գլխավորած զորախմբերի վրա, որոնք արդեն մտել էին Բալդոնե: Դեպի Ռիգա առաջխաղացումը զգալիորեն դանդաղեց: Մինչև Ռիգա մնացել էր ընդամենը 16 կիլոմետր, որոնք, սակայն, Բաղրամյանի բնորոշմամբ՝ ամենադժվարն էին:

ԲՄ-13 «Կատյուշա»: Կրակային հզորության խորհրդանիշ հանդիսացող ԲՄ-13-ը խորհրդային ռազմական ոլորտի բարձրագույն ցուցանիշներից է: 1941թ. գարնանը հրաձգարաններում առաջին փորձարկումներն անցած համազարկային կրակի այս ռեակտիվ համակարգը մկրտությունն ստացավ 1941թ. հուլիսի 10-ին Սմոլենսկի պաշտպանական օպերացիայի ընթացքում՝ Օրշա քաղաքի մոտ:

Մեմելյան գործողության մտահղացումը

Հովի. Բաղրամյանի առաջարկությամբ Գլխավոր հրամանատարությունը որոշում կայացրեց հակառակորդի «Հյուսիս» բանակախումբն Արևելյան Պրուսիայից արագ կտրելու նպատակով 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի ուժերը հյուսիսային՝ Ռիգայի ուղղությունից տեղափոխել արևմուտք՝ Մեմելի (Կլայպեդայի) ուղղությամբ, որտեղ հակառակորդն իրեն լիովին ապահով էր զգում և ուներ ընդամենը 4 դիվիզիա:

Ըստ էության, Մեմելյան գործողությունը վճռորոշ էր դառնալու ամբողջ Մերձբալթյան ռազմավարական գործողության համար: Հովի. Բաղրամյանի գլխավորած ռազմաճակատի հիմնական ուժերի սրընթաց ճեղքումը դեպի Բալթիկ ծով և Մերձբալթիկայի ու Արևելյան Պրուսիայի միջև ցամաքային հաղորդակցության բոլոր ուղիների խզումը կթուլացնեին հակառակորդի համառ դիմադրությունը Ռիգայի ուղղությամբ, ինչը հնարավորություն կտար Մերձբալթյան երեք ռազմաճակատների զորքերի համատեղ ուժերով մեկուսացնել և ապա ջախջախել գերմանական «Հյուսիս» բանակախումբը՝ լիովին ազատագրելով Մերձբալթիկայի տարածքը:

> **Տեղեկանք.** «Մեր առաջնահերթ խնդիրն էր ճեղքել թշնամու պաշտպանության առաջին և երկրորդ գոտիները և հասնել Տիրկշլյայ, Պլունգե, Շիլալե, Տաուրագե քաղաքների գծին: Այնուհետև պետք էր Պալանգայից սկսած մինչև Նեմայի գետաբերանն ընկած տեղամասում դուրս գալ Բալթիկ ծովի ափ: Ամբողջ գործողությունը պետք է ավարտվեր 10-11 օրում, իսկ դրա նախապատրաստումը՝ 6 օրում: Դա կարճատև ժամկետ էր, քանի որ նոր ուղղության վրա հարձակման անցնելու գործը կապված էր ռազմաճակատի զորքերի հսկայական վերախմբավորման հետ: Բայց հարկավոր էր բավարարվել այդ ժամանակամիջոցով, որպեսզի հակառակորդը չհասցներ վերախմբավորել իր ուժերը»:
>
> *Հովի. Բաղրամյան, Այսպես մենք հասանք հաղթանակի, էջ 592*

Այս հանդուգն գաղափարը հնարավոր էր իրագործել սոսկ մեկ պայմանով, եթե դրա նախապատրաստական փուլը կատարվեր արագ և լիովին գաղտնի: Արդ, առավելագույնս սահմանափակվեց գործողության նախապատրաստման ու զորքերի տեղաշարժի մասին տեղյակ անձանց շրջանակը, այդ մասին ակնարկ անգամ չէր արվում կապի միջոցներով, զորքի և զինտեխնիկայի տեղափոխումը կատարվում էր բացառապես գիշերով: Միաժամանակ, հակառակորդին ապատեղեկացնելու նպատակով տարածվում էին կեղծ լուրեր, ռազմաճակատի երկայնքով շինծու տեղաշարժեր էին կատարվում, կապի միջոցներով անընդմեջ հաղորդվում էին նախապես մշակված հրամաններ ու տեղեկություններ: Նպատակը մեկն էր. հակառակորդին վստահեցնել, որ հարձակումը շարունակվելու է նախկին՝ հյուսիսային ուղղությամբ, այսինքն՝ դեպի Ռիգա:

Իրականացումը

Վեց օրվա ընթացքում 80-240 կմ՝ Ռիգայից մինչև Շյաուլյայի շրջան տեղափոխվեցին ավելի քան կես միլիոն մարդ, 10 հազար հրանոթ ու ականանետ, 1300 տանկ և ինքնագնաց հրանոթ և Շյաուլյայի շրջանում ստեղծվեց հզոր հարվածային ուժ, որը հակառակորդին գերազանցում էր անձնակազմի քանակով՝ 2,5 անգամ, հրետանիով՝ 11 անգամ, տանկերով և ինքնագնաց հրանոթներով՝ ավելի քան 3 անգամ, ինքնաթիռներով՝ 2,6 անգամ:

«Երբ նման զանգվածով զորքը և տեխնիկան հակառակորդի համար լիովին անսպասելի հայտնվեց նոր ուղղության վրա և խոյահարեց Կլայպեդայի ուղղությամբ, ֆաշիստական հրամանատարությունն այն ոչ առանց հիմքի գրեթե հրաշք համարեց»,- վերհիշում է զրահատանկային և մեքենայացված զորքերի ապագա մարշալ Պ.Ռոտմիստրովը:

Հոկտեմբերի 5-ին, ժամը 11 անց 10 րոպեին սկսվեց հարվածային խմբի հարձակումը Մեմելի ուղղությամբ: Առաջին օրը հարվածային խումբն առաջացավ ավելի քան 17 կմ, որից հետո Բաղրամյանը մարտի մեջ նետեց 5-րդ գվարդիական տանկային բանակը՝ ճեղքումն էլ ավելի խորացնելու նպատակով: 5-րդ տանկային և 51-րդ համազորային բանակները ճեղքեցին Սիգուլդայի պաշտպանական հզոր բնագիծը, որն, ի դեպ, չէր հաջողվել 2-րդ և 3-րդ Մերձբալթյան ռազմաճակատների զորքերին: Ռազմաճակատի շարժական ուժերը հոկտեմբերի 10-ին հասան Բալթիկ ծովի ափ՝ Մեմելի շրջանում և շրջափակեցին այդ քաղաք-նավահանգիստը: Իսկ մեկ այլ խմբավորում առաջացավ մինչև Արևելյան Պրուսիայի սահմանը:

Այսպիսով, Հովհ. Բաղրամյանի գլխավորած ուժերը 7 օրում առաջացան 130 կմ, ազատագրեցին 3100 բնակավայր:

> **Տեղեկանք.** «Թեև 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հարձակումը շարունակվեց մինչև հոկտեմբերի 20-ը, բայց մեր առջև դրված գլխավոր նպատակին մենք հասել էինք արդեն հարձակման յոթերորդ օրվա վերջին. ավելի քան կեսմիլիոնանոց ֆաշիստական բանակը կտրված էր Արևելյան Պրուսիայից»:
>
> *Հովհ. Բաղրամյան, Այսպես մենք հասանք հաղթանակի, էջ 604*

Մեմելյան գործողության ընթացքում 1-ին Մերձբալթյան ռազմաճակատը լիովին կատարեց իր առջև դրված խնդիրը՝ «Հյուսիս» բանակախումբն ընդմիշտ կտրվեց Արևելյան Պրուսիայից և ստիպված եղավ Ռիգայից շտապ նահանջել դեպի Կուռլյանդյան թերակղզի: Սա հնարավորություն տվեց 2-րդ և 3-րդ Մերձբալթյան ռազմաճակատի զորքերին վերսկսել հարձակումը Ռիգայի ուղղությամբ և հոկտեմբերի 13-ին ազատագրել Լատվիայի մայրաքաղաքը:

Ի դեպ, Հովհ. Բաղրամյանի գլխավորած 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի կազմում Լատվիայի և Լիտվայի ազատագրման մարտերին մասնակցեց նաև 51-րդ գվարդիական հրաձգային (նախկին Հայկական 76-րդ լեռնահրաձգային) դիվիզիան, որի կազմում գործում էր հանրահայտ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը: Մարտերից հետո դիվիզիան մինչև պատերազմում վերջնական հաղթանակը տեղակայված մնաց Լիտվայում:

Ամփոփում

Հովհ. Բաղրամյանի խնամքով մշակած, մանրակրկիտ նախապատրաստած և փայլուն իրականացրած Մեմելյան հարձակողական գործողությունը վճռորոշ եղավ Մերձբալթիկայում գերմանական զորքերի ջախջախման գործում: Մերձբալթիկան գրեթե ամբողջությամբ ազատագրվեց ֆաշիստական զորքերից: Կուռլյանդիայում շրջափակված գերմանական զորքերը 1944-1945թթ. ձմռան ընթացքում բազմիցս փորձեցին ճեղքել-անցնել Արևելյան Պրուսիա, սակայն ամեն անգամ Բաղրամյանի գլխավորած զորքերից հուժկու հակահարված ստանալով՝ նահանջում էին: Մինչև պատերազմի ավարտը հակառակորդի «Հյուսիս» բանակախմբի 38 դիվիզիաներն այդպես էլ կաշկանդված մնացին Կուռլյանդիայում՝ մեկընդմիշտ դուրս մղվելով խորհրդա-գերմանական ռազմաճակատի վճռական հատվածներում ընթացող հետագա պայքարից:

ՀԱՄԱԶԱՍՊ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ՏԱՆԿԱՅԻՆ ՌԱԶՄԵՐԹԵՐԸ

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱՋԱՏԱԳՐՄԱՆ ՄԱՐՏԵՐԸ

Կուրսկի ճակատամարտում կրած կորուստներից հետո համալրելով ուժերը՝ 1-ին տանկային բանակի զորամասերը, այդ թվում և Հ.Բաբաջանյանի[1] գլխավորած 20-րդ մեքենայացված գվարդիական բրիգադը, մասնակցեցին խորհրդային զորքերի՝ 1943թ. ձմեռային հարձակողական գործողություններին:

Դեկտեմբերի 24-ին 1-ին Ուկրաինական ռազմաճակատի հարվածային խմբավորումը հրետանային ու ավիացիոն նախապատրաստական հրետակոծությունից հետո անցավ հարձակման ու 3-4 կմ խորացավ հակառակորդի պաշտպանական գոտու մեջ: Ճեղքումն արագացնելու համար հաջորդ օրը մարտի մեջ մտան տանկային բանակները: Հ.Բաբաջանյանի գվարդիական բրիգադը, 1-ին տանկային բանակի այլ զորամասերի հետ կոտրելով հակառակորդի դիմադրությունը, անցավ Իպրեն գետը և ազատագրելով Վերբով, Պոպելնյա, Կորնին, Լիպկի բնակավայրերը, մոտ 50 կմ խորացավ հակառակորդի թիկունքում:

Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյան (1906-1977թթ.)

[1] Ծնվել է Չարդախլու գյուղում, որտեղից է նաև մարշալ Բաղրամյանը: Այդ գյուղը տվել է 10 գեներալ, ավելի քան 40 գնդապետ և հարյուրից ավելի այլ բարձրաստիճան սպաներ: Պատահական չէ, որ Չարդախլուն հայտնի է «Մարշալների գյուղ» անունով:

Լուսարձակներով մարտը

Հետապնդելով նահանջող հակառակորդին՝ Բաբաջանյանի բրիգադը դեկտեմբերի 28-ի երեկոյան հասավ Կազատին քաղաքի մատույցներին: Վերջինս երկաթուղային և ավտոճանապարհային խոշոր հանգույց էր, որ կապում էր Ռոստով, Կիև, Դնեպրոպետրովսկ, Վիննիցա և Օդեսա քաղաքները: Հաշվի առնելով Կազատինի ռազմավարական կարևոր նշանակությունը՝ հակառակորդն այն վերածել էր կատարյալ ամրոցի, որն ուներ մեծաքանակ կայազոր ու հզոր սպառազինություն:

Բաբաջանյանը վճռեց չսպասել լուսաբացին և գրոհել անմիջապես, գործել անակնկալ ու սրընթաց, որպեսզի հակառակորդը չհասցնի ուշքի գալ և պատրաստվել հետ մղելու գրոհը: Հարկ էր մի անսպասելի և հնարամիտ քայլով անակնկալի բերել հակառակորդին և խառնաշփոթ առաջացնել նրա շարքերում: Գրոհից առաջ նա արձակեց հետևյալ հրամանը. «Բոլոր տանկերը, զրահամեքենաները, ինքնագնաց հրետանին պետք է հակառակորդի վրա գրոհեն վառվող լապտերներով: Մարտակարգերի թևերում և շարասյուների միջև օգտագործել լուսարձակներ»:

Գիշերային խավարն անսպասելիորեն լուսավորվեց հարյուրավոր լապտերների ու լուսարձակների պայծառ լույսով. կուրացնող ճառագայթների ներքո հակառակորդի վրա սրընթաց գրոհ ձեռնարկեցին Բաբաջանյանի տանկերն ու զրահամեքենաները՝ հուժկու կրակ տեղալով նրա ամրությունների վրա: Բաբաջանյանի հնարամիտ քայլը հասավ նպատակին. անակնկալի եկած և հոգեբանորեն ճնշված հակառակորդը չհասցրեց անգամ պատշաճ դիմադրություն կազմակերպել և խոշոր կորուստներ կրելով՝ խուճապահար նահանջեց:

Հետապնդելով նահանջող հակառակորդին՝ Բաբաջանյանի բրիգադը 1-ին տանկային կորպուսի հետ Չեռնորուզկա գյուղի մոտ հանդիպական թեժ մարտում գլխովին ջախջախեց հակառակորդի 2 մեքենայացված զորագունդ՝ առգրավելով մեծ քանակությամբ զինտեխնիկա, հրանոթներ, ականանետեր:

Տանկային ռազմերթեր

1944թ. գարնանը հարձակողական գործողությունները վերսկսվեցին նոր թափով, այս անգամ՝ Ստանիսլավի ուղղությամբ: Գործողությունում առանձնահատուկ դեր էր հատկացվում տանկային զորամասերին: Վերջիններս պետք է արագ շրջանցեին հակառակորդին, շրջապատեին նրան, սակայն, տևական մարտերի մեջ չմտնելով նրա վերջապահ զորամասերի հետ, արագ առաջ շարժվեին՝ խորանալով հակառակորդի թիկունքում:

Նման մարտավարությունը հոգեհարազատ էր Բաբաջանյանի ռազմական սկզբունքներին: Սրընթաց ճեղքելով հակառակորդի պաշտպանական գիծը՝ այն երբեմն հարյուրավոր կիլոմետրեր խորանում էր նրա թիկունքում, աքցանի մեջ առնում նրա առաջապահ զորքերը: Այս սրընթաց ճեղքումներն ու հակառակորդի խոր թիկունք ներթափանցելն այնքան բնորոշ էին Բաբաջանյանի բրիգադին, որ հենց այդպես էլ կոչվեցին՝ «Բաբաջանյանական ռազմերթեր»:

Տեղեկանք. Նման ռազմերթերի ընթացքում լինում էին անգամ գրեթե զավեշտական դիպվածներ: «Երբ մարտի լույս 22-ի գիշերը 20-րդ գվարդիական մեքենայացված բրիգադի տանկերը հանկարծակի հայտնվեցին Կոպչինցիում, այստեղ դեռ հանգիստ կանգնած էին երթևեկության գերմանացի կարգավորողները և ոչինչ չկասկածելով՝ բծախնդրորեն ճանապարհ էին ցույց տալիս մեր մարտական մեքենաներին»:

Հ.Բաբաջանյան, Հաղթանակի ճանապարհներ, Երևան, 1988, էջ 215

Դնեստրի գետանցումը

Բաբաջանյանի բրիգադը ռազմաճակատի զորամասերից առաջինը հասավ Դնեստրին, և հենց նրան էլ վիճակված էր առաջինը գետանցել այն: Մինչդեռ դա դյուրին գործ չէր. հակառակորդը պայթեցրել էր բոլոր կամուրջները և ամրացել հանդիպակաց ափի զառիթափի բարձունքին: Հակառակորդի հրետակոծության ներքո առաջինը նավակներով ու հապճեպ պատրաստված լաստերով գետանցում կատարեց բրիգադի հետախուզական վաշտը: Նրան հետևեց մոտոհրաձ-

Տ-34 միջին տանկն իր տեսակի մեջ համարվում էր լավագույնը երկրորդ համաշխարհային պատերազմում և իր մեջ խտացրել է խորհրդային տանկաշինության բոլոր ձեռքբերումները: 1943թ. տանկը կատարելագործվեց. հաստացվեց զրահը և 76 մմ թնդանոթը փոխարինվեց 85 մմ-ով:

գային գումարտակը: Ափ ելած մարտիկները, հընթացս կատաղի մարտ վարելով, փորձում էին հենակետ գրավել՝ բրիգադի հիմնական ուժերի գետանցման համար: Հակառակորդը մահաբեր կրակ էր տեղում մի բուռ ռազմիկների վրա:

Տեսնելով իր ռազմիկների անելանելի կացությունը՝ Բաբաջանյանը, լքելով հրամանատարական կետը, հաջորդ գետանցող ջոկատի հետ հայտնվեց հանդիպակաց ափին: Նրա ներկայությունից ոգեշնչված մարտիկները սկսեցին մարտնչել կրկնակի եռանդով՝ ընդլայնելով գրաված հենակետը: Իսկ Բաբաջանյանը ճշտեց այն ծանծաղուտների տեղը, որտեղով պետք է գետանցեր բրիգադի զրահատեխնիկան: Շուտով այդ ճանապարհով Դնեստրի հանդիպակաց ափ անցան նաև տանկային բանակի մյուս ստորաբաժանումները և շարունակեցին առաջխաղացումը:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944թ. ապրիլի 26-ի հրամանագրով Արևմտյան Ուկրաինայի ազատագրման համար մղված մարտերում ցուցաբերած անձնական արիության ու հերոսության, 20-րդ բրիգադի զորամասերը հմտորեն ղեկավարելու համար Հ.Բաբաջանյանին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

Վիսլա-Օդերյան հարձակողական գործողությունը

1944թ. օգոստոսին հակառակորդի Սանդոմիրյան խմբավորման շրջապատման և ոչնչացման գործողության ընթացքում Հ.Բաբաջանյանը ծանր վիրավորվեց: Նա դեռևս չէր ապաքինվել, երբ նրան այցելության եկած 1-ին տանկային բանակի հրամանատար, գեներալ Կատուկովը հայտնեց, որ նա նշանակվել է 11-րդ գվարդիական տանկային կորպուսի հրամանատար:

Դեկտեմբերի սկզբին 1-ին տանկային բանակը 1-ին Բելոռուսական ռազմաճակատի կազմում կենտրոնացավ Լյուբլինի մոտ՝ մասնակցելու Վիսլա-Օդերյան նշանավոր գործողությանը: Առաջիկա գործողության ընթացքում տանկային զորքերի հիմնական խնդիրները պետք է լինեին ճեղքել և մասնատել հակառակորդի պաշտպանությունը, սրընթաց և հնարավորինս ավելի խոր թափանցել հակառակորդի թիկունքը, առաջացնել խուճապ և կազմալուծել զորաշարքերը, հակառակորդին թույլ չտալ ամրանալ նոր բնագծերում և ստեղծել պաշտպանության նոր օջախներ:

Վիսլա-Օդերյան հարձակողական գործողությունը սկսվեց 1945թ. հունվարի 12-ին, իսկ տանկային զորքերին առաջխաղացման հրաման տրվեց 3 օր անց, երբ արդեն իրականացվել էր հակառակորդի պաշտպանական համակարգի առաջին գոտու ճեղքումը: Գետանցելով Պիլիցան՝ Բաբաջանյանի 11-րդ տանկային կորպուսը ճեղքեց հակառակորդի պաշտպանության երկրորդ բնագիծը և շրջանցելով ճանապարհին հանդիպող հակառակորդի հենակետերն ու ամրությունները՝ սրընթաց առաջացավ հյուսիսարևմտյան ուղղու-

թյամբ: Հունվարի 18-ին 11-րդ կորպուսի զորամասերից մեկը՝ Գուսակովսկու տանկային բրիգադը, ազատագրեց Լովիչ, իսկ կորպուսի մյուս ուժերը՝ 40-րդ և 45-րդ բրիգադները՝ Լեչնիցա, Օզորկու քաղաքները և մոտեցան Ռավա-Մազովեցկա քաղաքին:

Մեզերիտցի ամրացված շրջանի գրավումը

1945թ. հունվարի 26-ի երեկոյան տեղի ունեցավ նշանակալից իրադարձություն. խորհրդային զորքերը հասան գերմանա-լեհական սահմանին: Գիշերը կորպուսի հրամանատարական կետում տեղեկատվություն ստացվեց, որ Գուսակովսկու բրիգադի առաջապահը՝ 3-րդ գումարտակը, դեմ է առել հզոր ցցապատնեշի: Պարզվեց, որ այդտեղից սկսվում էր հիտլերյան հրամանատարության վերջին հույսը՝ Մեզերիտցի ամրացված շրջանը, այսպես կոչված Օդերյան եռանկյունին:

Դեռևս պատերազմից շատ առաջ գերմանական հրամանատարությունը կառուցել էր երկու ամրացված շրջան. մեկը՝ Զիգֆրիդի շրջանը, արևմուտքում, իսկ մյուսը՝ Մեզերիտցը, արևելքում: Ստալինգրադյան ճակատամարտից հետո պաշտպանական երկու կառույցներն էլ վերակառուցվել էին, էլ ավելի ամրացվել ու հզորացվել: Մեզերիտցը մեծ քանակությամբ երկաթբետոնե կրակային ամրություններից՝ «պանցերվերկեներից» բաղկացած վիթխարի տարածք էր:

> **Տեղեկանք.** «Պանցերվերկեները եռահարկ կառույցներ էին, որոնց մակերեսին իջնող ու բարձրացող հրանոթագնդացրային զրահապատ կափարիչներ կային: Կրակակետերի պատերի ու ծածկի հաստությունը հասնում էր 2,5 մետրի: «Պանցերվերկեները» միմյանց հետ կապված էին հաղորդակցության ստորգետնյա միջանցքների համակարգով: Հողը, անտառները, բլուրները, գետերը, լճերը՝ ամբողջ տարածքը, կարծես բետոնապատ ու պողպատապատ էին: Համարյա բոլոր անցումներն ականապատված էին: Պաշտպանական բնագիծը բետոնից ու պողպատից կառուցված մի վիթխարի, ստորգետնյա քաղաք էր»:
>
> *Հ.Բաբաջանյան, Հաղթանակի ճանապարհներ, էջ 304-305*

Ահա այս անմատչելի թվացող պաշտպանական գիծը պետք է ճեղքեր տանկային բանակը, մասնավորապես՝ Բաբաջանյանի տանկային կորպուսը, ճանապարհ հարթելով ռազմաճակատի համազորային ուժերի համար: Մինչդեռ, ինչպես նշում է տանկային բանակի հրամանատար Մ.Կատուկովը, «Ռազմական պատմության մեջ դեռևս որևէ այլ դեպք չէր եղել, որ տանկային բանակը ճեղքեր հզոր ամրացված շրջանը: Սովորաբար նման ամրությունները ոչնչացվում էին ավիացիայի և ծանր հրետանու կրակով, և ապա միայն սակրավորներն ու հրաձգային զորամասերն ավարտում էին կրակակետերի ոչնչացումը»:

Գուսակովսկու բրիգադն առաջինն անցավ ցցապատնեշը, ներխուժեց Մեզերիտցի շրջան և խորացավ ամրությունների բավիղում: Հակառակորդի պաշտպանական համակարգում՝ փլուզված կամուրջների և դարանների միջև, կար լիովին անվնաս անցուղի, որը պետք է ծառայեր հզոր հակահարձակում իրականացնելու համար: Հենց այդ ուղով էլ սուրաց Գուսակովսկին՝ շրջանցելով հակառակորդի ամրությունները: Սակայն հակառակորդի գերակշռող ուժերն իսկույն շրջափակեցին Գուսակովսկու բրիգադը: Երկու օր անընդմեջ այն շրջապտույտներ էր գործում հակառակորդի թիկունքում:

Բաբաջանյանը կորպուսի մյուս բրիգադներով ճակատային ճեղքումներով ու շրջանցիկ ուղիներով օգնության շտապեց Գուսակովսկու բրիգադին, որը հնարամիտ տեղաշարժեր էր կատարում ամրացված տարածքում՝ ներսից կազմալուծելով հակառակորդի ուժերը: Վերախմբավորվելով Շվիբուս քաղաքի մերձակայքում՝ կորպուսն արագ դուրս եկավ ամրացված շրջանի թիկունքը և օղակեց այն:

Ծանր, կատաղի մարտեր ծավալվեցին՝ հակառակորդի ամրացված գոտին ոչնչացնելու համար: Մեզերիտցի ամրացված շրջանի վերջնական ջախջախումը թողնելով համազորային ուժերին՝ 11-րդ տանկային կորպուսը շարժվեց առաջ:

Հունվարի վերջին 11-րդ գվարդիական տանկային կորպուսը հասավ Օդեր գետին և հենակետ ստեղծեց Գերիտցի մերձակայքում: Կորպուսի շտաբը տեղավորվեց Կունեռսդորֆում: Մինչև Բեռլին մնում էին հաշված կիլոմետրեր…

Բեռլինի գրավումը

Իր հոգեվարքի պահին գերմանական հրամանատարությունը համախմբել էր վերջին ուժերը և կենտրոնացրել մայրաքաղաքի շուրջ՝ այն վերածելով ամրոցի, որի պաշտպանությունն իրականացնում էին ավելի քան մեկ միլիոն զինվոր ու սպա՝ սպառազինված մեծաքանակ հրետանիով, տանկերով, մարտական ինքնաթիռներով և այլ զինատեսակներով: Օդերից մինչև Բեռլին ընկած 70 կմ տարածքը վերածվել էր պաշտպանական կուռ ու բազմաշերտ համակարգի, որ բաժանված էր երեք հիմնական ու տասնյակ միջանկյալ ամրացված գոտիների: Բեռլինի ամրացված շրջանը ևս, իր հերթին, բաժանված էր երեք պաշտպանական շերտերի:

Ապրիլի 15-ին հրետանային ու ավիացիոն նախապատրաստական հզոր կրակից հետո սկսվեց խորհրդային զորքերի լայնածավալ հարձակումը Բեռլինի ուղղությամբ: 1-ին տանկային բանակը մարտի մեջ մտավ ապրիլի 17-ին՝ հզոր հրետանային և ավիացիոն ռմբահարումից հետո: 11-րդ տանկային կորպուսը, որ գրոհում էր Զելովի հարավարևմտյան ուղղությամբ, կոտրեց հակառակորդի կատաղի դիմադրությունը և, չնայած լուրջ կորուստներին, անընդմեջ

մարտերով առաջ շարժվելով՝ գիշերը Հեռլսդորֆի շրջանում գետանցեց Ֆլիսը և հենակետ գրավեց գետի ձախ ափին:

Հաջորդ օրը, շարունակելով առաջխաղացումը դեպի Մյունխենբերգ-Դիդերսդորֆ պաշտպանական գոտին, Բաբաջանյանի ղեկավարած տանկային կորպուսը ճեղքեց պաշտպանությունը և հարավից շրջանցելով Մյունխենբերգը՝ գրավեց Շենֆելդեն, ապա նաև Կինբաումը: Կորպուսի 44-րդ տանկային և 27-րդ մոտոհրաձգային բրիգադները դուրս եկան Բեռլինն օղակող ավտոմայրուղի:

Ապրիլի 20-ին ռազմաճակատի հրամանատար, մարշալ Գ.Ժուկովը 1-ին տանկային բանակին կարգադրեց ամեն գնով մինչև հաջորդ օրվա ավարտը ճեղքել պաշտպանությունը, հասնել հակառակորդի մայրաքաղաքին: Այդ գիշեր, գրոհը սկսելով Կագելի շրջանում, 11-րդ տանկային կորպուսն առավոտյան Տասդորֆի մերձակայքում արդեն ջանում էր ճեղքել բեռլինյան ամրացված շրջանի արտաքին պաշտպանական շերտը: Այստեղ վերստին վճռորոշ դեր կատարեց կորպուսի առաջապահը՝ գնդապետ Գուսակովսկու տանկային բրիգադը: Հանդուգն գրոհով այն գրավեց Շտինից լճի կամուրջը՝ նախքան հիտլերականները կհասցնեին պայթեցնել այն: Բաբաջանյանը դեպի կամուրջն ուղղեց իր հիմնական ուժերը, որոնք գրավեցին Ֆոգելսդորֆը և հասան քաղաքային երկաթուղագծին: Հաջորդ օրը կորպուսը Կարլսհորստից հարավ-արևմուտք ընկած շրջանում հասավ Շպրեե գետին և հենց այդ գիշեր 27-րդ բրիգադի հապճեպ սարքավորած կամրջով գետանցելով այն՝ մտավ Բեռլինի հարավարևելյան արվարձանը:

Ապրիլի 25-ին սկսվեց բուն քաղաքի գրոհը: Քաղաքում կենտրոնացած հակառակորդի ուժերը թակարդն ընկած վիրավոր գազանի նման կատաղի դիմադրում էին: 11-րդ տանկային կորպուսը փողոցային մարտերում ծանր կորուստներ կրելով՝ քայլ առ քայլ առաջանում էր դեպի քաղաքի կենտրոնական մասը: Տելտով, ապա նաև Լանդվեր ջրանցքները հաղթահարելուց հետո թեժ մարտեր բորբոքվեցին երկաթուղային հանգույցին տիրելու համար:

Հաղթարշավ մետրոյի թունելներով

Ապրիլի 28-ին Բաբաջանյանի կորպուսը գրավեց Անգալտի կայարանը, իսկ հաջորդ օրը գեներալ Կատուկովից ստացավ վերջին մարտական առաջադրանքը՝ գրավել Պոտսդամի կայարանն ու կայսերական գրասենյակը և մայիսի 1-ին միանալ հանդիպակաց կողմից ընդառաջ շարժվող խորհրդային զորքերին:

Գիշերը տանկերը կրակ բացեցին կայսերական գրասենյակի շենքի վրա: Առավոտյան քաղաքի կենտրոնում ամրացած ՍՍ-ի մոտոհրաձգային դիվիզիային և մի քանի այլ զորախմբերի անակնկալի բերելու համար Բաբաջանյանն իր տանկերի մի մասին կարգադրեց գրոհել մետրոյի թունելներով: Ի դեպ, տանկե-

րի նման տեղաշարժն աննախադեպ էր տանկային մարտավարության պատմության մեջ: Մայիսի 1-ի գիշերը սկսվեց խորհրդային զորքերի վճռական գրոհը Բեռլինի կենտրոնական մասի վրա: Առավոտյան արդեն քաղաքը վերջնականապես գրավված էր. հակառակորդի զորքերի մնացորդները զենքը վայր դրեցին և սկսեցին զանգվածաբար գերի հանձնվել:

Բեռլինի ճակատամարտում Բաբաջանյանի գլխավորած կորպուսը ոչնչացրեց ու գերի վերցրեց հակառակորդի 8450 զինվոր ու սպա, 103 տանկ ու ինքնագնաց հրանոթ, ավելի քան 300 հրանոթ ու ականանետ և այլ սպառազինություն: Բեռլինի գրավման համար 11-րդ գվարդիական տանկային կորպուսին շնորհվեց «Բեռլինյան» պատվանունը:

Ամփոփում

Բաբաջանյանի նախասիրած մարտավարությունն էր՝ պահպանել հարձակման արագությունը, խոր զորաշարժեր կատարել ռազմաճակատի երկայնքով՝ համակցված եռանդուն առաջխաղացման հետ: Գործողությունների սրընթացություն, ուժերի ու միջոցների արդյունավետ օգտագործման ունակություն, այդ ուժերի ու միջոցների ժողովման և կործանիչ հարված հասցնելու համար մեկ միասնական բռունցք կազմելու կարողություն: Իսկ նրա զորաշարժերը միշտ հանդուգն էին, սրընթաց և վճռական: Այսպես էին բնորոշվում, մասնավորապես, բաբաջանյանական նշանավոր ռազմերթերը՝ ճեղքումները և խոր ներթափանցումները հակառակորդի թիկունքում:

ՕԴԱՅԻՆ ՄԱՐՏԵՐԻ ՍՏՐԱՏԵԳԸ

Մոսկվայի ճակատամարտի ընթացքում ցուցաբերած բարձր հրամանատարական ունակությունների համար Արևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի (ՌՕՈՒ) շտաբի պետ, գնդապետ Խուդյակովին (Խանփերյանցին) 1941թ. հոկտեմբերի 29-ին շնորհվում է գեներալ-մայորի կոչում: Այդ ճակատամարտի երկրորդ փուլում հայազգի գեներալն արդեն ռազմաճակատի ՌՕՈՒ հրամանատարն էր: Նա հնարավորություն ստացավ ավելի վառ դրսևորել իր ռազմավարական տաղանդն ու հրամանատարական ունակությունները:

Ավիացիայի մարշալ
Ս. Խուդյակով
(Արմենակ Խանփերյանց,
1902-1950թթ.)

Արմատական փոփոխություններ

Խանփերյանցը, կանգնած լինելով խորհրդային ՌՕՈՒ վերազինման և վերակազմավորման ակունքներում, հիանալի տիրապետելով օդուժի ռազմավարությանը և կազմակերպչական առանձնահատկություններին, հստակ գիտակցում էր, որ ավիացիայի ղեկավարման խորհրդային մոդելն իրեն չէր արդարացնում: Խորհրդային ավիացիայի գնդերն ու դիվիզիաները ցրված էին համազորային զորամիավորումներում: Խանփերյանցն առաջիններից մեկն էր, որ առաջարկեց ավիացիան ցամաքային զորքերից (ՑԶ) հանել, կազմել օդային բանակներ (ՕԲ), որոնք կլինեին ավելի հավաքական, կոմպակտ և դրանով ղեկավարումը դարձնել ավելի կենտրոնացված ու արդյունավետ:

Մոսկվայի ճակատամարտի ավարտից հետո անմիջապես սկսվում է խորհրդային ՌՕՈՒ վերափոխումը, և կազմավորվում են ՕԲ-ներ: Այդ բարդ և պատասխանատու գործընթացի ժամանակ գեներալ Ս. Խուդյակովը նշանակվում է Կարմիր բանակի ՌՕՈՒ շտաբի պետ:

Շուտով՝ 1942թ. հունիսին, արևմտյան ռազմաճակատի հրամանատար, գեներալ Գ.Ժուկովի անձնական խնդրանքով 1-ին ՕԲ հրամանատար է նշանակվում գեներալ Ս. Խուդյակովը: 1943թ. գարնանը խորհրդային ռազմաճակատի մարտերի ծանրության կենտրոնը տեղափոխվում է ռազմաճակատի կենտրոնական մաս:

Մարտական խնդիրը

Տեղեկանք. Դիրեկտիվ: ԽՍՀՄ Գերագույն գլխավոր հրամանատարի կենտրոնական, 4 մայիսի 1943թ.:

Արևմտյան, Հարավ-Արևմտյան, Հարավային, Բրյանսկի, Վորոնեժյան և Կենտրոնական ռազմաճակատների հրամանատարներին, ռազմական խորհուրդներին և Կարմիր բանակի ՌՕՈ հրամանատարությանը: Մայիսի 6-16-ը ներառյալ ավիացիայի ակտիվ գործողություններով ամբողջ նշված ռազմաճակատների լայնությամբ ոչնչացնել գերմանական ավիացիան գետնի վրա և օդում: Խափանել երկաթգծի և ավտոտրանսպորտի բեռնափոխադրումները:

Օ. Растренин, Расколотое небо, стр. 20-21

Դիրեկտիվով հստակ նշված էին գործողություններին մասնակցող ՕԲ-ներն ու նպատակները, ոչնչացման ենթակա օդանավակայաններն ու այլ ենթակառուցվածքները: 1-ին ՕԲ-ին հրամայված էր ոչնչացնել Սեշա, Բրյանսկ, Շատալովո, Բորովսկոյե օդանավակայանում կայանված հակառակորդի 4-րդ և 6-րդ օդային նավատորմերի ինքնաթիռները:

Մարտի նախապատրաստումը

Ելնելով առաջադրված խնդրից և ունեցած հնարավորություններից՝ ՕԲ հրամանատար, արդեն գեներալ-լեյտենանտի կոչում ստացած Ս. Խուդյակովը որոշում կայացրեց հակառակորդի նշանակետերին հասցնել կոմբինացված հարվածներ՝ տարբեր ստորաբաժանումների և ինքնաթիռների կազմով: Հաջորդական հարվածները պետք էր կատարել տարբեր ինքնաթիռային խմբերով, ժամանակային սահմանափակ ընդմիջումով, տարբեր բարձրություններից և ուղղություններից: Օդանավակայանների պահպանության ՀՕՊ միջոցների ճնշման և հակառակորդի կործանիչների հետ պայքարի համար համապատասխանաբար գրոհիչներից և կործանիչներից պետք էր հատկացնել առանձին խմբեր: Կործանիչ ինքնաթիռների անձնակազմերին հստակ հրահանգավորված էր այլ ինքնաթիռների հետ համագործակցության կարգը: ՕԲ հարվածները պիտի հասցվեին 204-րդ ռմբակոծիչ, 224-րդ և 233-րդ գրոհիչ, 303-րդ և 309-րդ կործանիչ ավիադիվիզիաների կազմով: Ավիադիվիզիաների կազմի մեջ էին մտնում 2-րդ, 38-րդ, 130-րդ, 204-րդ և 261-րդ ռմբակոծիչային ավիագնդերը (ՌԱԳ), 62-րդ, 198-րդ, 312-րդ, 565-րդ, 571-րդ և 996-րդ գրոհիչ ավիագնդերը (ԳԱԳ), 49-րդ, 122-րդ, 162-րդ, 168-րդ, 172-րդ և 523-րդ կործանիչային ավիագնդերը (ԿԱԳ), ինչպես նաև հանրահայտ «Նորմանդիա» ֆրանսիական կործանիչային ավիաէսկադրիլիան (ԿԱէ):

Առաջին հարվածը, որը պիտի իրականացվեր մայիսի 6-ի առավոտյան՝ ժամը 4.30-5.00-ի սահմաններում, ավելի քան 200 ինքնաթիռների կազմով, նախապատրաստվում է ամենայն մանրամասնությամբ: Հարվածի պլանավորումը և անցկացման ղեկավարությունն իր վրա էր վերցրել անձամբ բանակի հրամանատարը: Նման մեծ ռազմագործողությունների փորձ խորհրդային ավիացիան չուներ, և Խուդյակովն անձամբ էր հրահանգավորում և առաջադրում խնդիրները: Հաջորդ հարվածը պիտի հասցվեր նույն օրվա ժամը 15.00-20.00-ի սահմաններում՝ ավելի քան 150 ինքնաթիռների կազմով:

Փոխգործողությունը լավ կազմակերպելու և օդային հարվածների բարձր արդյունավետությունն ապահովելու համար կործանիչ ավիադիվիզիաները վերաբազավորվեցին գրոհիչ ավիադիվիզիաների հետ, և շտաբները միացվեցին իրար: Բանակի հրամանատարի անձնական ղեկավարությամբ անցկացվեցին ուսումնասիրություններ մանրակերտների, պլանշետների և քարտեզների վրա: Անցկացվեց թռիչքի հետիոտն վերարտադրում, իսկ նախաթռիչքային պատրաստությունն անցկացվեց բոլոր օդաչուների հետ համատեղ: Հատուկ ուշադրություն դարձվեց թռիչքի երթուղուն, համագործակցության պայմանական նշաններին՝ երթուղու ընթացքում, հակառակորդի օդանավակայանի վրա և հետդարձի ճանապարհին:

Մարտը

Մայիսի 6-ին, առավոտյան ժամը 4.00-ին, Պոլոշկովո, Դվոևկա, Վյազովայա, Ժելեզինկի, Խատենկի, Ինյուտինո օդանավակայաններից օդ բարձրացան գրոհիչները, ռմբակոծիչները և, միանալով կործանիչներին, կազմեցին մի քանի համապատասխան կարգով դասավորված խմբեր: Գրոհիչները, որոնք կազմում էին հարվածային խմբերի հիմքը, բարձրություն հավաքեցին մինչև 800-900 մետր: Մինչև ռազմաճակատի գիծը նրանք թռչում էին տվյալ բարձրության վրա: Ուղեկցող կործանիչները թռչում էին ընդամենը 250-300 մետր հեռավորությամբ: Ռազմաճակատի գիծն անցնելուց հետո գրոհիչներն իջան մինչև 50 մետր բարձրություն, իսկ կործանիչները մնացին 600-1000 բարձրության վրա: Կործանիչների համար սա բնական բարձրություն էր, որպեսզի անհրաժեշտության դեպքում հակադարձեն հակառակորդի կործանիչներին: Այդպես ամբողջ հարվածային խումբը, գրեթե առանց նախանշված պլանի խախտման, թռչում էր դեպի հակառակորդի օդանավակայաններ, որոնք գտնվում էին մինչև 25-30 կմ հեռավորության վրա:

Ըստ պլանի, գրոհային առաջին խմբերը հակառակորդի օդանավակայաններին մոտեցան հյուսիսարևելյան կողմից: Հակառակորդի զենիթային կրակն օդանավակայաններում շատ ուժեղ էր, սակայն անձնակազմը կատարեց առաջին գրոհը: Որոշ գրոհիչ խմբեր չկարողացան կատարել մի քանի հարվածներ:

Եղան առաջին կորուստները: Հակառակորդի կործանիչ ավիացիան դեռ լռում էր, ինչը լավ հնարավորություն էր հաջորդող խմբերի համար: Գրոհիչների հետևող խմբերն օդանավակայաններին մոտեցան հարավարևմտյան կողմից և համեմատաբար ավելի հեշտ կատարեցին մի քանի գրոհում: Արդյունքներն արդեն գոհացնող էին:

Սեշա օդանավակայանին 2-3 րոպեից, ժամը 5.42-5.44-ին, ստույգ ընդմիջումով մոտեցան «Պե-2» ռմբակոծիչներն իրենց ուղեկցող կործանիչներով: Ռմբակոծիչների առաջին ինֆյակը ռմբանետումն իրականացրեց հորիզոնական թռիչքից՝ 2750 մետր բարձրությունից, երկրորդ ինֆյակը՝ 3350 մետր բարձրությունից, երրորդ ինֆյակը՝ 3100 մետր բարձրությունից:

Բրյանսկ օդանավակայանին գրոհիչների համեմատաբար հաջող հարվածներից հետո նշված ժամանակին՝ ժամը 5.37-5.40-ին, մոտեցան «Պե-2» ռմբակոծիչների երկու ութնյակ: Ռմբակոծիչները 2750-3500 մետր բարձրությունից բավական հաջող ռմբանետեցին և ուղեկցող կործանիչների պահպանությամբ հեռացան: Հարվածող բոլոր խմբերին ուղեկցող կործանիչներից քչերը կարողացան օգնել ռմբակոծիչներին և գրոհիչներին՝ վերգետնյա նշանակետերի ոչնչացման գործում: Հատկապես առաջին հարվածներից հետո արդեն երևացին հակառակորդի կործանիչները, և խորհրդային կործանիչներն անգործ չէին կարող մնալ:

Հաղթանակը

Հաջորդ հարվածները հակառակորդի նշված և առաջին հարվածի ընթացքում նոր ի հայտ եկած օդանավակայաններին հասցվեցին մի քանի ժամ անց: Իհարկե, հակառակորդը ուշքի էր եկել, և արդեն դժվար էր հասցնել անսպասելի հարվածներ: Ամբողջ հարվածների ընթացքում հրամանատարը ստանում էր տեղեկատվություն և, ըստ իրադրության, օպերատիվորեն կատարում փոփոխություններ և հղկումներ: Երեկոյան իրականացվեց ևս մեկ զանգվածային հարված՝ գրեթե նույն կարգով: Գերմանական էսկադրաները կրել էին բավական մեծ կորուստներ և այլևս պատրաստ չէին իրականացնել մեծ հարձակողական գործողություններ: Օրվա առաջադրված խնդիրը կատարված էր, սակայն ընդհանուր ռազմագործողությունը դեռ պիտի շարունակվեր: Հաջորդ օրերի պլաններում կատարվեցին համապատասխան փոփոխություններ, սակայն ընդհանուր առաջադրանքը մնում էր նույնը, և ամեն ինչ կատարվում էր գրաֆիկով: Պլանների փոփոխությունները պահանջում էին ճկուն միտք, հմուտ ղեկավարում և մեծ հստակություն:

Ամփոփում

Միայն առաջին օրվա հարվածների վերլուծությունը, որը կատարվեց հետախուզական ինքնաթիռների բերած տվյալների հիման վրա, ցույց տվեց, որ Ս. Խուդյակովի ՕԲ-ը միայն գետնի վրա ոչնչացրել է հակառակորդի 104 ինքնաթիռ: Մի քանիսն էլ խոցվել է օդային մարտերի ժամանակ, մեծ վնաս է հասցվել նաև օդանավակայանային տնտեսությանը և պահեստներին: Հարվածներից ամենաարդյունավետն իրականացրել են 1-ին ՕԲ 204-րդ ռմբակոծիչ, 224-րդ գրոհիչ և 303-րդ կործանիչ ավիադիվիզիաների ստորաբաժանումները հակառակորդի Սեշա օդանավակայանին, որտեղ մեծ վնասներ են կրել գերմանական «Գեներալ Վեֆեր» 4-րդ ռմակոծիչային էսկադրայի ստորաբաժանումները:

> **Տեղեկանք.** «Ընդհանուր առմամբ, երեք օրերի ռազմագործողության ընթացքում ՕԲ-ները հակառակորդի 22 օդանավակայաններին հասցրել են հարվածներ՝ կատարելով 1392 մարտական թռիչք: Գետնի վրա և օդում ոչնչացվել է հակառակորդի 501 ինքնաթիռ, ինչը կազմում է տվյալ ուղղությամբ նրա ունեցած ավիացիոն խմբավորման 25%-ը: Սեփական կորուստները կազմել են 122 ինքնաթիռ»:
>
> ***И.В. Тихомиров, Оперативное искусство Советских ВВС в Великой Отечественной войне, стр. 80***

Նշված հարվածները խորհրդային ՌՕՈ-ի կողմից մինչև օրս անցկացված ամենամեծ հարձակողական ռազմագործողություններից են: Այս գործողություններն առայսօր ուսումնասիրվում են ռազմական ակադեմիաներում և համարվում օրինակելի: Հենց այս ռազմավարական նշանակության գործողությունների կազմակերպման համար է, որ գերագույն գլխավոր հրամանատարությունը գեներալ-լեյտենանտ Ս. Խուդյակովին նշանակեց ՌՕՈ շտաբի պետ:

> **Տեղեկանք.** «1-ին ՕԲ գործողությունների հմուտ ղեկավարության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հունիսի 10-ի որոշման համաձայն՝ գեներալ-լեյտենանտ Ս.Խուդյակովին պարգևատրել Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանով»:
>
> ***ЦАМО РФ. Картотека награждения, учетная карточка маршала авиации С.А. Худякова-А.А. Ханферянца N94/10-93/11***

Սուվորովի շքանշանները տրվում էին զորավարական բացառիկ ունակությունների համար:

ՕԴԱՅԻՆ ՄԱՐՏԵՐԻ ՎԱՐՊԵՏԸ

ԳՐՈՀԻՉ ԱՎԻԱԳՆԴԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

Մայոր Նելսոն Ստեփանյանը 1944թ. մայիսի 12-ին նշանակվում է 47-րդ գրոհիչ ավիագնդի (ԳԱԳ) հրամանատար: Այդ գունդը մարտեր էր մղում Ղրիմի ազատագրման համար: Չնայած խորհրդային զորքերն արմատական բեկում էին մտցրել պատերազմում, սակայն ընդհանուր իրադրությունը շարունակում էր մնալ բարդ:

Պայքար Ղրիմի երկնքի համար

Գերմանական 17-րդ բանակի հինգ գերմանական և յոթ ռումինական դիվիզիաները Ղրիմը վերածել էին յուրահատուկ ամրոցի: Սակայն Կերչ-Էլտիգենյան դեսանտային գործողությունից հետո, երբ խորհրդային Առանձին Մերձսևծովային բանակի ուժերն ամրացան Կերչի մոտակայքի հենադաշտում, գերմանական ուժերի ապագան Ղրիմում ավելի քան մշուշոտ էր դարձել: Գերմանական հրամանատարությունը թերակղզին պաշտպանում էր կատաղորեն, սակայն ոչ այնքան թերակղզում երկարաժամկետ ամրանալու, որքան հիմնական ուժերի բարեհաջող տարհանման համար: 4-րդ Ուկրաինական ռազմաճակատի, Առանձին Մերձսևծովային բանակի, Սևծովյան նավատորմի և Ազովյան տորմիղի ուժերի հարվածների տակ հակառակորդը Ղրիմը լքում էր ծովով, հիմնականում Սևաստոպոլ-Կոնստանցա հաղորդակցուղիով:

Խորհրդային բանակը մարտերի ժամանակ լայնորեն կիրառում էր գրոհիչ ավիացիա, որը խորհրդային ռազմածովային ավիացիայի մարտավարական հիմնական հարվածային ուժն էր: Գունդն ընդունած հրամանատարը «շունչ քաշելու» համար ժամանակ չունենալով՝ պետք է ներգրավվեր ակտիվ մարտական գործողություններ վարող զորամասի առջև ծառացած մի շարք խնդիրների լուծմանը: Մասնավորապես, նա պետք է ներդներ օդային-ծովային մարտերի նոր մարտավարություն (տե՛ս Սխ. 1- 4):

Ռմբանետման «ավանդական» մարտավարությամբ գրոհը հակառակորդի նավի վրա



Ուշադրություն դարձրեք, որ ՀՕՊ միջոցների կրակի գոտուց դուրս մնալու դեպքում գրեթե հնարավոր չէր նետված ավիառումբով խոցել նավը: Իսկ եթե, այնուամենայնիվ, հաջողվում էր վնասել նավը, ապա, փաստորեն, հնարավոր չէր լինում խորտակել այն:



Հատկանշական է, որ նավի առաջամասին հասցվող հարվածի դեպքում
ևս ՀՕՊ միջոցների կրակի գոտուց դուրս գործող ինքնաթիռն էական հաջողության
հասնելու հնարավորություն չուներ:

«Սահող» թռիչքով ռմբանետման մարտավարությամբ գրոհը հակառակորդի նավի վրա



Ինքնաթիռը ռմբանետման նոր համակարգի կիրառման դեպքում թռիչքի ընթացքում
(առնվազն՝ մինչև հարվածը հասցնելը) գտնվում էր նավի ՀՕՊ կրակի գոտուց դուրս:
Դա էապես նվազեցնում էր ինքնաթիռի խոցման հավանականությունը:



Խոցվում էր նավի այն հատվածը, որտեղից մեծ քանակությամբ ջուր էր հորդում նավամբարների մեջ: Նավի տեխնիկական անձնակազմը չէր հասցնում փակել ճեղքվածքը և, նույնիսկ այն դեպքերում, երբ չէր խոցվում շարժիչն ու վնասվածքը մեծ չէր լինում, նավն արագ լցվում էր ջրով ու խորտակվում:

47-րդ ԳԱԳ-ը ռազմածովային ուժերի (ՌՕՈ) կազմում առաջին գնդերից մեկն էր, որ Ղրիմի ճակատամարտում պիտի կիրառեր ռմբանետման նոր տեսակ, որը նախկինում չէր կիրառվել: Նոր մարտավարական հնարքի էությունը նետված ռմբին «թռչել ստիպելն» էր: Ռմբանետումից առաջ օդաչուն ինքնաթիռն իջեցնում էր ներքև՝ մինչև նավի կայմի բարձրությունը և վարում առավելագույն արագությամբ: Ալիքների վրա «սահող» ինքնաթիռի արձակած ռումբը մեծ արագության և ցածր բարձրության վրա նետվելիս անդրադառնում էր՝ սահելով ջրից և կողքից հարվածում հակառակորդի նավին: Ռմբանետման նոր հնարքը շատ բարդ էր (ինքնաթիռը կարող էր իր արձակած ռումբի բեկորներից կամ առաջացրած պայթյունից վնասվել), օդաչուներից պահանջում էր մեծ վարպետություն (գրոհից ճիշտ ժամանակին դուրս գալու հմտություն) և ՀՕՊ միջոցներ ունեցող գերմանական նավերի հետ «մերձամարտ» վարելու համարձակություն: Միևնույն ժամանակ, այն աչքի էր ընկնում բարձր արդյունավետությամբ: Հարցն այն է, որ ծանրության պատճառով հնարավոր չէր լինում ռումբին ստիպել ծովի մակարդակից բարձր «ցատկել»: Հետևաբար, նավը խոցվում էր նավակողի ամենախոցելի համարվող մասից, իսկ խոցման մակերեսը մեծ էր լինում: Բացի այդ, խոցվում էր նավակողի ստորին մասը, որով ջուրն ավելի արագ էր լցվում նավը:

Ռմբանետման նոր տեսակն այնքան բարդ էր, որ նույնիսկ ամիսներ անց ամբողջությամբ չէր յուրացվել Ղրիմի արևելյան ուղղությունից գործող երկու գնդերի (Նելսոն Ստեփանյանի հրամանատարությամբ գործող 47-րդ և նրա վաղեմի ընկերոջ՝ Նիկոլայ Չելնոկովի՝ 8-րդ) բոլոր օդաչուների կողմից: Հարցն այն է, որ գնդերում առանձնացվել էին մեկական էսկադրիլիաներ, որոնք մարտական պայմաններում էին փորձարկում դեռևս վերջնականապես չմշակված մարտավարությունը:

Դժվարությունները

Խորհրդային Միության կրկնակի հերոս, փոխգնդապետ Նելսոն Ստեփանյան (1913-1944թթ.)

Ղրիմի ճակատամարտին արևելյան ուղղությունից մասնակցող 47-րդ և 8-րդ ԳԱԳ-երն էլ մարտերի առաջին օրերից սկսած՝ ակտիվորեն մասնակցում էին ռազմական գործողություններին, սակայն ռազմաճակատի համար այդ ուժերն անբավարար էին, և օդաչուները ստիպված օրական մի քանի մարտական թռիչք էին կատարում: Մարտական իրավիճակը պահանջում էր փոքրաթիվ օդուժի կիրառման նոր տարբերակներ մշակել: Մասնավորապես, ուղեկցող կործանիչներն էլ էին մասնակցում ծովային տրանսպորտի և այլ նշանակետերի գրոհներին:

47-րդ ԳԱԳ-ի առջև դրված մարտական առաջադրանքը ևս մեկ լուրջ խնդիր ուներ. գունդը տեղակայված էր Անապա քաղաքի մոտ, Սև ծովի արևելյան ափին: Գրոհիչների թռիչքի հեռավորությունը թույլ էր տալիս հասնել Յալթա, բայց ոչ Սևաստոպոլ, որի նավահանգստում տեղակայված էր գերմանական նավատորմիղը: Քանի դեռ մարտերը մղվում էին Կերչից քիչ արևմուտք ընկնող բնակավայրերի համար, գրոհիչներն իրենց հարվածներով անհրաժեշտ ամբողջ ծավալով օգնում էին հարձակվող զորքերին, ինչպես նաև խորտա-

Իլ-2 գրոհիչ: Գերմանացիները կրակային հզորության համար այս ինքնաթիռը կոչել էին «մսաղաց», իսկ արտասովոր կենսունակության համար՝ «բետոնե ռմբակոծիչ»: Վերջինից էլ առաջացել է ինքնաթիռի հանրահայտ «թռչող տանկ» անվանումը:

կում Թեոդոսիա, Սուդակ և Ալուշտա քաղաքներից հեռացող զորքերի տրանսպորտը: Սակայն ռազմաճակատի դեպի արևմուտք տեղափոխվելով խնդիրներն ավելի էին բարդանում:

Ապրիլի 13-ի մարտը

1944թ. ապրիլի երկրորդ տասնօրյակում խորհրդային զորքերի առաջխաղացման տեմպը Ղրիմում բավական մեծ էր: Հարձակվող զորամասերի առաջխաղացումն ապահովելու համար գրոհիչներից լարված աշխատանք էր ակնկալվում: Բավական է ասել, որ միայն ապրիլի 11-ին երկու ԳԱԳ-երի օդաչուները կործանիչների ուղեկցությամբ յոթ ժամվա ընթացքում Թեոդոսիայի նավահանգստի ուղղությամբ մոտ 100 մարտական թռիչք են կատարել: Հարվածներից խորտակվել և վնասվել էին մի քանի նավեր և ծովային փոխադրամիջոցներ: Ռումբերի և ռեակտիվ արկերի հարվածների արդյունքում ջրի հատակ ուղարկվեցին թշնամու երկու նավ: Հաջորդ օրը նույն գնդերը, կործանիչների ուղեկցությամբ հարձակվող զորքերին աջակցելուց բացի, նավահանգստի վրա 35 թռիչք կատարեցին: Ապրիլի 13-ին ազատագրվեց Թեոդոսիան, և գրոհիչների հարվածներն ուղղվեցին դեպի Սուդակ:

Նելսոնը պետք է անձամբ առաջնորդեր «Իլ-2»-ների յոթնյակը, ընդհանուր մարտական խումբը կազմված էր 13 ինքնաթիռից: Գնդի մնացած վեց ինքնաթիռներն իրենց կրակով պետք է ճնշեին հակառակորդի հակաօդային պաշտպանությունը և միաժամանակ կատարեին հակառակորդին շեղող դեր: Հրամանատարը մանրակրկիտ ուսումնասիրել էր իրավիճակը և համապատասխան պլանավորում կատարել: Ստեփանյանի հրամանով ինքնաթիռներն օդ բարձրացան և ընդունելով **սեպաձև** մարտակարգ՝ սլացան դեպի ծովը: Կես րոպե չանցած՝ նրանց կողքին երևացին ուղեկցող «Յակ»-երը: Կործանիչները գրոհիչների անձնակազմին վստահություն էին ներշնչում: Ինքնաթիռները մինչև Սուդակ քաղաքի նավահանգստին հասնելը պիտի պահպանեին ռադիոլռություն, որպեսզի հակառակորդը նրանց ժամանակից շուտ չհայտնաբերեր: Ստեփանյանի խմբի հարվածին պիտի հաջորդեր Չելնոկովի խմբի հարվածը:

Մարտը

Մոտավորապես քառասուն րոպե թռիչքից հետո գրոհիչների խումբը մոտեցավ Ղրիմի ափերին: Նելսոն Ստեփանյանը խումբը նավահանգստից հատուկ մի փոքր շեղել էր դեպի հարավ: Նրա ինքնաթիռին հետևելով՝ ամբողջ խումբը, թեքվելով դեպի աջ, սկսեց իջնել: Առանձին վեցյակն արդեն անջատվել էր ընդհանուր խմբից, նրանք ավելի սրընթաց իջնելով՝ կամաց-կամաց առաջ էին ընկնում: Կործանիչները մնացին նախկին բարձրության վրա և շուտով տեսադաշտից անհետացան: Ահա երևաց նավահանգիստը, որտեղ մեծ աշխուժություն էր տիրում: Մի քանի նավեր, լաստեր ու այլ ծովային փոխադրամիջոցներ հենց ափին մոտ կանգնած էին իրար բավական մոտիկ, ասես հատուկ շարվել էին գրոհիչների հարվածների համար: Մի քանի նավեր էլ, որոնք համեմատաբար փոքր չափեր ունեին, դանդաղ շարժվում էին ափամերձ ջրերում:

Հարվածող հիմնական յոթնյակը մոտեցավ ափին և գրոհի պատրաստվեց: Ամենուր պայթում էին զենիթային գնդացիրների ու հրանոթների արկերը: Շեղող խումբն իր աշխատանքն արդեն սկսել էր, նավահանգստում իրարանցում էր սկսվել: Նելսոն Ստեփանյանն ինքնաթիռը թեքեց դեպի ներքև: Հրամանատարի քայլը կրկնեցին բոլոր վեց օդաչուները: «Իլ»-երը մեկը մյուսի հետևից արձակեցին մի քանի ռեակտիվ արկեր:

Ինքնաթիռներն արդեն բավական վեր էին բարձրացել և ընդունել նույն՝ աջ թեքված մարտակարգը, Նելսոնի հրամանով նրանք կատարեցին աջ խոր շրջադարձ և հենց արևի կողմից նորից գնացին գրոհի: Ընդհանուր առմամբ Նելսոնի խումբը կատարեց երեք գրոհ: Նավահանգստում կանգնած նավերն այրվում էին, ափին խուճապ էր տիրում:

Այսպես իրականացվեց ապրիլյան այդ օրերի ամենահզոր գրոհներից մեկը: Մի քանի գրոհիչ ստացել էին վնասվածքներ, սակայն ինքնաթիռները կարողացան հասնել օդակայան: Օրվա վերջում հաղորդված տվյալների արդյունքում հայտնի է դառնում, որ խորտակվել է «Ֆ-565» մեծ դեսանտային բեռնանավը, մի քանի այլ նավեր վնասվել են, ոչնչացվել են կրակային միջոցներ և, իհարկե, կենդանի ուժ:

Ապրիլի 14-ից նորից հարվածները շարունակվեցին, այս անգամ թիրախը դարձավ Ալուշտա քաղաքի նավահանգիստը: Խորհրդային բանակը նույն օրն ազատագրեց Սուդակը, և դրանում քիչ չէր նաև գրոհիչների ներդրումը: Մի քանի օրից գունդը վերաբազավորվեց արդեն թերակղզու վրա՝ Սակի քաղաքի մոտակայքում: Գերմանացիների հիմնական հենակայանից հեռացող նավերը 47-րդ ԳԱԳ օդաչուների համար լիովին հասանելի դարձան:

Մինչև ճակատամարտի ավարտը գրոհիչները խորտակեցին բազում լողացող նավակներ իրենց բեռներով ու անձնակազմով, աջակցեցին մայիսի 5-ին սկսված Սևաստոպոլ քաղաքի գլխավոր գրոհին: Պաշտոնական տվյալներով՝ Ստեփանյանի գունդը, լինելով «ճակատամարտի ամենամարտունակ գնդերից

մեկը», Ղրիմի ճակատամարտի ընթացքում խորտակել է 8 ծովային տրանսպորտ, 12 արագընթաց դեսանտային բարժ, 9 պարեկային նավակ: Նելսոն Ստեփանյանն անձամբ կատարել է ավելի քան քսան մարտական թռիչք՝ ամեն անգամ ղեկավարելով իր գնդի օդաչուներին: 1944թ. մայիսի 10-ին երկրի և նավատորմի ղեկավարության կողմից 47-րդ գրոհիչ ավիագնդին տրվեց Թեոդոսյան պատվանունը, իսկ հրամանատար Նելսոն Ստեփանյանին Սևծովյան նավատորմի հրամանատար, փոխծովակալ Ֆ.Ի. Օկտյաբրսկին շնորհակալություն հայտնեց:

Ղրիմի ճակատամարտից անմիջապես հետո Ն.Ստեփանյանի գունդը դիվիզիայի կազմով տեղափոխեցին Բալթիկ ծովի ավազան: Փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը պատերազմի ընթացքում կատարել է 259 մարտական թռիչք: Անձամբ խորտակել է հակառակորդի 13 լողացող միջոց (խմբի կազմով 40), ոչնչացրել է հակառակորդի 80 տանկ, 600 ավտոմեքենա, 27 ինքնաթիռ, որից երկուսը՝ օդում, 105 հրանոթ, 130 գնդացրային կետ և ավելի քան 5000 զինվոր:

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ
(ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿՆԵՐ)
1988-1994ԹԹ.

1988թ. փետրվարին, ենթարկվելով ԽՍՀՄ-ում ընթացող այսպես կոչված վերակառուցման՝ «պերեստրոյկայի» տրամաբանությանը, սկսվում է Արցախի տարածքի զգալի մասն ընդգրկող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը ՀԽՍՀ-ին վերամիավորելու շարժման նոր փուլը: Խորհրդային օրենսդրության առավելագույն պահպանումով իրականացվող այդ գործընթացին ադրբեջանցիները, հարազատ մնալով իրենց հոգեկերտվածքին և ավանդույթներին, փետրվարի 26-29-ին Սումգայիթում, այնուհետև նաև Ադրբեջանի այլ հայաշատ վայրերում իրականացնում են հայերի զանգվածային սպանություններ ու տեղահանություններ: 1988թ. աշնանը հայաթափվում են Շուշիի շրջանը, Դաշտային Արցախը, ինչպես նաև Նախիջևանի տարածքում մնացած վերջին հայկական գյուղը՝ Ձնաբերդը:

1989թ. օգոստոսին փակվում է Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհը, իսկ ինքնաթիռային թռիչքների դադարեցումով մարզն արտաքին աշխարհին կապող միակ ուղին են դառնում Հայաստանից իրականացվող ուղղաթիռային թռիչքները: Դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ Ազգային խորհրդի միացյալ նիստում ընդունվեց «Խորհրդային Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» պատմական որոշումը:

1990թ. հունվարին Բաքուն ևս դատարկվում է հայերից, իսկ Հայաստանից հեռանում են ադրբեջանցիները: Քաղաքական հակամարտությունը վերջնականապես փոխում է իր բնույթը և վերածվում պատերազմի:

Դա արտահայտվում է հետևյալ հատկանիշներով.

1. Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Հանրապետության Սադարակ բնակավայրից ՀԽՍՀ Արարատի շրջանի Երասխավան գյուղի վրա հարձակումով,
2. ԽՍՀՄ ԳԽ նախագահության 1990թ. հունվարի 15-ի հրամանագրով, որով ԼՂԻՄ-ում, նրա հարակից շրջաններում ու Գորիսի շրջանում արտակարգ դրություն է հայտարարվում,
3. Ադրբեջանական միլիցիայի հատուկ ջոկատների (ՕՄՕՆ) կողմից հայկական գյուղերում «անձնագրային ռեժիմի ստուգում» անունը ստացած զանգվածային խուզարկությունների իրականացումով,
4. Դաշտային Արցախի (Գետաշենի ենթաշրջան և այլն) հայկական գյուղերի վրա հարձակումներով, որոնցում օգտագործվում էին նաև խորհրդային բանակի ստորաբաժանումները:

Բացի այդ, 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժից հետո ծայրահեղ ծանր վիճակում գտնվող ՀԽՍՀ-ի նկատմամբ Ադրբեջանը սկսում է կիրառել պատերազմին հատուկ ռազմավարական քայլ՝ շրջափակում:

ԴԱՇՏԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ՈՒ ԲԵՐԴԱՁՈՐԻ ԵՆԹԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՅԱԹԱՓՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ

1990թ. հունվարի 12-14-ին Ազատ, Գետաշեն և Մանաշիդ բնակավայրերի վրա իրականացված հարձակումներով, իսկ փետրվար-մարտ ամիսներին՝ Ազատ և Կամո գյուղերի հայաթափումով սկիզբ է դրվում Հյուսիսային Արցախի հայության բռնի տեղահանմանը: Այս ամենը Հայաստանի ու Արցախի սահմանամերձ շրջանների բնակչությանը ստիպում է դիմել զինված ինքնապաշտպանության: Սկսվում է կամավորական շարժում, որի հիմքի վրա Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների անկախության հռչակումից հետո ստեղծվում է հայկական բանակը: 1991թ. ստեղծվում է ՀՀ Պաշտպանության կոմիտեն (նախագահ՝ Վ.Շիրխանյան), իսկ նույն թվականի ապրիլի 30-ին ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները բանակի և ՆԳՆ զորքերի ուժերով սկսում են իրագործել տխրահռչակ «Օղակ» («Կոլցո») գործողությունը՝ մինչև մայիսի 18-ը հայաթափելով Հյուսիսային Արցախի Գետաշեն ու Մարտունաշեն բնակավայրերը, Հադրութի շրջանի ծայրամասային գյուղերը և Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանը: Հարձակումների են ենթարկվում նաև ՀԽՍՀ մի շարք սահմանամերձ բնակավայրեր: Զոհվում են 76, վիրավորվում 144 մարդ, պատանդառվում են հարյուրավոր խաղաղ բնակիչներ, Արցախում հայաթափվում է 23 հայկական գյուղ:

Գետաշենի ինքնապաշտպանության հրամանատար, ՀՀ ազգային հերոս Թաքուլ Կրպեյան (1965-1991թթ.)



Գետաշենի ինքնապաշտպանության մասնակից Սիմոն Աչիկգյոզյան (1939-1991)

Ռազմական առումով բնութագրական է Գետաշենի վերջին մարտը, որը սկսվում է ապրիլի 30-ին և շարունակվում մի քանի օր: Հարձակումը սկսվում է ռազմարվեստի բոլոր կանոններին համապատասխան՝ ժամը 5^{00}-ին, շրջակա բարձունքներից հասցվող հրետանային հարվածով, որին հետևում է հարձակումը՝ մինչև այդ հակամարտության գոտում չլսված թվով (ավելի քան 100 միավոր) զրահատեխնիկայով և մարտական ուղղաթիռներով: Հատկանշական է, որ այս ռազմական հզորությունը նետվում է ՀՏՊ և ՀՕՊ միջոցներ չունեցող գյուղացիների դեմ[1]: Ռազմական գործողություններն իրականացնում են ԽՍՀՄ զինված ուժերը, ՆԳ նախարարության զորքերն ու Ադրբեջանի միլիցիայի հատուկ ջոկատայինները:

Ոգևորված այս արդյունքներից՝ Ադրբեջանի ղեկավարությունը, խորհրդային բանակի ստորաբաժանումների միջոցով շարունակելով ռազմական գործողությունները Շահումյանի շրջանում, մեծաքանակ կորուստների գնով կարողանում է հայաթափել Էրքեջ, Բուզլուխ և Մանաշիդ գյուղերը (որոնք սեպտեմբերին ազատագրվեցին[2]), սակայն Վերիշենի մատույցներում կամավորական ջոկատների կողմից ծանր հակահարված են ստանում:

---

[1] Գետաշենցիները, 150 որսորդական հրացաններից և ինքնաշեն նռնակներից բացի, ունեին 1 ձեռքի գնդացիր ու 4-5 ավտոմատ, սակայն դրանք չեն կարող համարվել ՀՏ և ՀՕՊ միջոցներ, թեև հանրահայտ է, որ դրանցով կարելի է վնասել զրահատեխնիկայի դիտասարքերը, պայքարել օդուժի դեմ և այլ կարգի ոչ էական վնասներ հասցնել:

[2] Այս մասին տե՛ս սույն բաժնի առաջին ակնարկում:

Օգոստոսի 23-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունում է Հայաստանի անկախության հռչակագիրը, որով ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն:

ՀՀ ազգային հերոս
Ջիվան Աբրահամյան
(1961-1991թթ.)

Տեղեկանք. «Հայաստանի Հանրապետությունն իր անվտանգությունը և սահմանների պաշտպանությունն ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ»:

ՀՀ Անկախության հռչակագրից

Այս իրավական հիմքի վրա սեպտեմբերի 20-ին ստեղծվում է ՀՀ ներքին գործերի նախարարությանը (նախարարի պաշտոնակատար՝ Աշոտ Մանուչարյան, որը միաժամանակ ԼՂ հարցերով օպերատիվ շտաբի ղեկավարն էր) կից Հատուկ գունդը՝ ՀՀ զինված ուժերի առաջնեկը և ապագա կանոնավոր բանակի կորիզը: Քանի որ Խորհրդային Միությունն ուներ միասնական զինված ուժեր, նրանից դուրս ցանկացած զինված կառույց, բնականաբար, համարվում էր անօրինական զինված կազմավորում: Դրա համար էլ Հատուկ գունդը ստեղծվում է ներքին գործերի նախարարության կազմում: Այն ուներ 26 վաշտ, որոնք կռվել են ՀՀ և ԼՂՀ գրեթե բոլոր ճակատներում, իսկ գումարտակի հրամանատար Ջիվան Աբրահամյանին հետմահու շնորհվել է ՀՀ ազգային հերոսի կոչում:

Սեպտեմբերի 2-ին հռչակվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, իսկ սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախությունը:

1991թ. դեկտեմբերի վերջին ԼՂՀ-ում տեղակայված ԽՍՀՄ ներքին զորքերի ստորաբաժանումները, իսկ մարտին՝ նախկին խորհրդային 366-րդ գունդը հեռանում են Արցախից: Դրան զուգահեռ՝ իրավիճակն անմիջապես սրվում է, քանի որ Արցախն ու Ադրբեջանը մնում են դեմ-հանդիման: Թեև Ադրբեջանն ուներ թվական բազմապատիկ գերակշռություն ու իր տարածքում տեղակայված նախկին խորհրդային 4-րդ բանակի աջակցությունը, նախաձեռնությանն իսկույն տիրում են ԼՂՀ ինքնապաշտպանական ջոկատները, որոնք ՀՀ-ից եկած կամավորական ջոկատների հետ միասին սկսում են Արցախի տարածքում գտնվող ադրբեջանական հենակետերի աստիճանական ոչնչացումը: 1992թ. փետրվարի 26-ին ազատագրվում են Խոջալուն և նրա մերձակայքում գտնվող օդանավակայանը (ինչը թույլ է տալիս վերականգնել ինքնաթիռային կապը ՀՀ-ի հետ), իսկ մայիսի 8-ին՝ Շուշի բերդաքաղաքը, Ստեփանակերտի բնակչու-

ՀՀ պաշտպանության առաջին նախարար
Վազգեն Սարգսյան
(1959-1999)

Գեներալ-գնդապետ
Գուրգեն Դալիբալթայան

թյանը փրկելով դանդաղ ոչնչացման սպառնալիքից: Շուշիի ազատագրումով ավարտվում է Արցախյան ազատամարտի կամավորական շրջանը:

1992թ. հունվարի 28-ին ստեղծվում են ՀՀ պաշտպանության նախարարությունը և առաջին երեք զորամասերը: Նրանցից բացի, պաշտպանության նախարարության կազմում ընդգրկվում է նաև Սահմանապահ գնդի վերակազմավորված Հատուկ գունդը: ՀՀ պաշտպանության նախարար է նշանակվում Վազգեն Սարգսյանը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետ՝ գեներալ Գուրգեն Դալիբալթայանը, հետախուզական վարչության պետ՝ Իվան Ղուկասովը:

Ռազմական կառույցներին զուգահեռ՝ ՀՀ նախագահին կից ձևավորվում է Ազգային անվտանգության խորհուրդը, որի աշխատանքները համակարգում էր նախագահի ազգային անվտանգության հարցերով գլխավոր խորհրդական Աշոտ Մանուչարյանը:

Այս վերջին կառույցի առիթով պետք է նշել, որ Արցախյան պատերազմը տեղի էր ունենում մի դարաշրջանում, երբ մասնակից և շահագրգիռ կողմերը նպատակներին հասնելու համար լայնորեն օգտագործում էին ոչ միայն պատերազմների ավանդական միջոցները, այլ նաև դիվանագիտական, տեղեկատվական և տնտեսական պատերազմների զինանոցը:

Ներկայացնենք այդ կառույցի իրականացրած գործողություններից երկուսը. 1992թ. որպես արցախյան խնդրի լուծման տարբերակ քաղաքական-տեղեկատվական տիրույթ ներմուծվեց ամերիկյան փորձագետ Փոլ Գոբլի կողմից մշակված՝ տարածքների փոխանակման միջոցով խնդրի կարգավորման տարբերակը: Առաջարկվում էր Մեղրու տարածքը փոխանակել Արցախը բուն Հայաստանին կապող տարածքի հետ՝ վեց հազար քառակուսի կիլոմետրը վեց

ՀՀ նախագահի ազգային անվտանգության հարցերով գլխավոր խորհրդական Աշոտ Մանուչարյան (1992թ.)

հազար քառակուսու հետ: Հաշվարկի հաջողության երաշխիքը պիտի հիմնված լիներ հայերի կողմից խնդրի մակերեսային ընկալման վրա: Մինչդեռ, եթե փոխանակումն իրականություն դառնար, Հայաստանը հայտնվում էր գոյատևման հետ անհամատեղելի դիրքում՝ թուրքական շրջապատման մեջ, հաշվի առնելով նաև Վրաստանի Մառնեուլի շրջանի՝ ադրբեջանցիներով բնակեցված լինելու հանգամանքը:

Հայաստանը հայտնվեց շահագրգիռ աշխարհաքաղաքական ուժերի լայնածավալ ճնշման ներքո և դրան պետք է հակադրեր հավասարազոր ուժ. որպես այդպիսին ընտրվեց Ռուսաստանը: Իրականացված միջոցառումների արդյունքում Ռուսաստանի ռազմաքաղաքական, տնտեսական, մշակութային էլիտաները փոխանակումն ընկալեցին որպես Ռուսաստանին սպառնացող մեծագույն վտանգ, և վերջինիս խիստ կոշտ դիրքորոշումն էլ ձախողեց Գոբլի ծրագրի իրականացումը:

Երկրորդ խոշոր խնդիրը, որ հարուցված էր Հայաստանի դեմ, շրջափակումն էր Ադրբեջանի և Թուրքիայի կողմից, որը գրեթե բացարձակ էր

Վազգեն Մանուկյան (ձախից երրորդը)՝ 1992-1993թթ. ՀՀ պաշտպանության նախարար

ԼՂՀ Պաշտպանության կոմիտեի նախագահ (1989-1993թթ.) Սերժ Սարգսյան

դառնում քաղաքացիական բախումների հետևանքով տեղայնական, ազգային ռազմականացված և հանցագործ տարբեր խմբավորումների ձեռքով բզկտված, անանցանելի դարձած Վրաստանի և Հյուսիսային Կովկասի կողմից:

Այստեղ էլ, նորովի օգտագործելով միջին դարերում այսպես կոչված «խոջայական կապիտալի» գործադրած հնարքները, ազգային անվտանգության կառույցը ձևավորեց տնտեսական բարդ ցանցային համակարգ: Արդյունքում՝ ապահովվեցին անհրաժեշտ բեռնափոխադրումները Հայաստան, իսկ ղարաբաղյան ճակատի զինվորական տեխնիկան գործում էր ադրբեջանական վառելիքով:

Համապատասխան կազմակերպչական քայլեր են կատարվում նաև Արցախում: Փետրվարի 24-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում է ընդունում ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ) ստեղծման մասին: Ապա ձևավորվում է ընդհանուր հրամանատարություն, որին ենթարկեցվում են ԻՊՈՒ բոլոր կազմավորումները: Ինքնապաշտպանության կոմիտեի (ԻՊԿ) նախագահ է նշանակվում ՀՀ ապագա նախագահ Սերժ Սարգսյանը, ԻՊՈՒ հրամանատար՝ Արկադի Տեր-Թադևոսյանը[1] (Կոմանդոս), իսկ շտաբի պետ՝ Ֆելիքս Գզողյանը: Հետագայում Արկադի Տեր-Թադևոսյանին փոխարինում է Սամվել Բաբայանը:

Միասնական հրամանատարության ձևավորումն ու հաճախ առանձին-առանձին գործող ավելի քան ութ տասնյակ կամավորական ջոկատների միավորումը թույլ են տալիս մշակել ու իրականացնել խոշոր մարտական գործողություններ և հասնել վերը նշված հաղթանակներին: Այս ընթացքում Հայրենիքի կանչով արդեն Հայաստան էին եկել ու ՀԲ-ում ծառա-

[1] Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս) ծնվել է 1939թ. մայիսի 22-ին, Թբիլիսիում: Ավարտել է ռազմական ուսումնարանը, ապա՝ ակադեմիան: Ծառայել է Աֆղանստանում, Գերմանիայում, Չեխոսլովակիայում, Բելառուսում:

ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ (1993-1994թթ.) Ռոբերտ Քոչարյանը (ձախից առաջինը) Մոնթե Մելքոնյանի, Բակո Սահակյանի և Սամվել Բաբայանի հետ

յության էին անցնում նախկին խորհրդային բանակի հայ սպաներ, ովքեր հսկայական ներդրում են ունենում ինչպես մարտական գործողությունների նախապատրաստման ու վարման, այնպես էլ կանոնավոր զինված ուժերի ստեղծման գործում. նրանցից են այսօր գեներալ-գնդապետներ Գուրգեն Դալիբալթայանը, Միքայել Հարությունյանը, Յուրի Խաչատուրովը, Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը, գեներալ-լեյտենանտներ Նորատ Տեր-Գրիգորյանցը, Հրաչ Անդրեասյանը, Անատոլի Զինևիչը, Մկրտիչ Աբրահամյանը, Էնրիկո Ապրիամովը, Միքայել Գրիգորյանը, Մուրազ Սարգսյանը, Ստեփան Միրզոյանը, Վալերի Գրիգորյանը, Հայկազ Բաղմանյանը, Ստեփան Գալստյանը, գեներալ-մայոր Արտուշ Հարությունյանը և ուրիշներ:

Միաժամանակ, սկսվում է զինված ուժերի զորատեսակների և կենտրոնական ենթակայության զորամասերի ձևավորումը, զինվորական ավիացիայի ու ՀՕՊ համակարգի ստեղծումը: Պատկերացնելու համար, թե զորատեսակների ստեղծումը որչափ դժվարին գործընթաց էր, բավական է բերել միայն մեկ օրինակ: Խորհրդային տարիներին Հայաստանում տեղակայված հակաօդային պաշտպանության ողջ համակարգը, բնականաբար, ուղղված էր դեպի արևմուտք՝ Թուրքիա, իսկ այժմ, ամեն ինչ սկսելով զրոյից, անհրաժեշտ էր այն ուղղել դեպի արևելք՝ Ադրբեջան: Ավելորդ չէ նաև նշել, որ օդուժի ռմբակոծություններին առաջին հերթին ենթարկվում էին Ստեփանակերտն ու Արցախի մյուս մեծ բնակավայրերը, իսկ ԼՂՀ-ում ՀՕՊ իրական համակարգ սկզբում ընդհանրապես չկար: Ի դեպ, մինչ մայիսյան հաղթական զինադադարի հաստատումը ոչնչացվեց օդային հարձակողական շուրջ երեք տասնյակ միջոց:

Գեներալ-լեյտենանտ
Նորատ Տեր-Գրիգորյանց

Գեներալ-գնդապետ
Միքայել Հարությունյան

Հայկական բանակը ստեղծվեց խորհրդային ռազմական մշակույթի հիմքի վրա, բայց ոչ թե նրա պատճենմամբ: 1992-ին բոլոր ստորաբաժանումների և զորամասերի համար մշակվում է սովորականից տարբեր կառուցվածք, որը բռնում է պատերազմի և պատմության քննությունն ու հետագայում ենթարկվելով ժամանակի պահանջներով թելադրված փոփոխություններին՝ դառնում ՀՀ զինված ուժերի այժմյան կազմը:

Խոջալուն ու Շուշին կորցնելուց հետո Ադրբեջանում սկսված ներքաղաքական ճգնաժամի արդյունքում Բաքվում իշխանության է գալիս Ադրբեջանի ժողովրդական ճակատը, որի ղեկավար Ա.Էլչիբեյն ընտրվում է պետության նախագահ: Նա կարճ ժամանակում կենտրոնացնում է բոլոր ուժերը, Գյանջայում (Գանձակ) տեղակայված նախկին խորհրդային 23-րդ դիվիզիայի վարձկան ստորաբաժանումների և ավելի քան 100 միավոր զրահատեխնիկայի աջակցությամբ անցնում հզոր հարձակման: Հակառակորդը գրավում է ողջ Շահումյանի շրջանը, ապա Մարտակերտի շրջանի մեծ մասն ու նույնանուն քաղաքը, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ Արծվաշենը:

Ծանր մարտերի ու հերոսական դիմադրության գնով ճակատի գիծն աշնանն ի վերջո կայունանում է Առաջածորի ենթաշրջանում, իսկ ռազմաճակատի մյուս հատվածներում հակառակորդը որևէ լուրջ հաջողության չի հասնում. ընդհակառակը, հատկապես Մարտունու շրջանում կորցնում է ռազմավարական վերջին հենակետերը: ԼՂՀ ԻՊՈ-ին Ասկերանի հատվածում ևս շուտով հաջողվում է վերականգնել ճակատի գիծը: Ամռան-աշնան ամիսներին հակառակորդը զգալի հաջողությունների է հասնում նաև մարդասիրական միջանցքում, սա-

կայն հոկտեմբերին, անցնելով հակահարձակման, հայկական ուժերը վերագրավում են կորցրած դիրքերն ու ապահովում Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի անվտանգությունը:

1993թ. հունվարին հետ մղելով Մարտակերտի ճակատում ադրբեջանական բանակի ձեռնարկած լայնածավալ հարձակումն ու անցնելով հակահարձակման՝ ԼՂՀ ԻՊՈՒ-ն ու հայաստանյան կամավորական ջոկատները մինչև մարտի վերջն ազատագրում են շրջանի տարածքի մեծ մասը, մարտի վերջին ու ապրիլի առաջին օրերին փայլուն իրականացնում Քելբաջարի՝ պատմական Քարվաճառի ազատագրման գործողությունը, հուլիսի 27-ին ազատագրում Մարտակերտ քաղաքը, որից հետո ձեռնամուխ լինում Արցախի շուրջ անվտանգության գոտու ձևավորմանը: Հուլիսի 23-ին ոչնչացվում են Ադրբեջանի մեծությամբ չորրորդ քաղաքի՝ Աղդամի հենակետերը, իսկ օգոստոսից մինչև նոյեմբեր՝ Ֆիզուլու, Ղուբաթլուի ու Զանգելանի հենակետերը՝ ապահովելով Արցախի հարավային հատվածի ու Սյունիքի անվտանգությունը:

1993թ. նոյեմբերին ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերը վերակազմավորվում են ԼՂՀ պաշտպանության բանակի (ՊԲ):

Ադրբեջանում վերստին սկսված ներքաղաքական ճգնաժամի ու լիակատար քաոսի պայմաններում իշխանության է գալիս փորձառու պետական գործիչ, խորհրդային տարիներին Ադրբեջանի ղեկավար Հ.Ալիևը, որը, ունենալով նաև արտաքին ու առանձնապես Թուրքիայի անթաքույց աջակցությունը, կարճ ժամանակում սպառազինության, հատկապես զրահատեխնիկայի մեծաքանակ գնումներ իրականացնելով, ինչպես նաև հավաքագրելով մի քանի հազար վարձկաններ, դեկտեմբերի 18-ից հզոր հարձակում է ձեռնարկում բոլոր ճակատներում և Մարտակերտի, Օմարի լեռնանցքի ու հարավարևելյան ուղղություններում հասնում որոշ ժամանակավոր հաջողությունների: Սակայն հունվարի վերջին այդ հարձակումը, հայկական ուժերի անձնուրաց կռվի շնորհիվ, մատնվեց լիակատար ձախողման, և իրավիճակը բոլոր ռազմաճակատներում կայունացավ:

Անցնելով հակահարձակման՝ հայկական ուժերը փետրվարի 18-ին ազատագրում են Օմարի լեռնանցքն ու գլխովին ջախջախում հակառակորդի քելբաջարյան խմբավորումը, ապա հարավարևելյան ու արևելյան ուղղություններում իրականացնում դիրքերի բարելավմանը միտված մի շարք փայլուն գործողություններ՝ ոչնչացնելով բազմաթիվ հենակետեր: Ապրիլի 12-ին Մարտակերտի ճակատում անցնելով հակահարձակման՝ այսօր պահեստի գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի հրամանատարությամբ գործող 5-րդ կամավորական բրիգադի ստորաբաժանումներն ազատագրում են Մատաղիսը, իսկ երկու օր անց՝ Թալիշը: Մարտակերտի արևելյան հատվածում ու Աղդամի ուղղությունում ծանր մարտերով առաջ էին շարժվում նաև ԼՂՀ ՊԲ ստորաբաժանումները՝ ազատագրելով Մարտակերտի դաշտային հատվածում 1992թ. զավթած վերջին բնակավայրերը:

ԲՈՒԶԼՈՒԽ, ՄԱՆԱՇԻԴ ԵՎ ԷՐՔԵՋ ԳՅՈՒՂԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

(1991Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-18)

Դեռևս 1989թ. Բուզլուխում ինքնապաշտպանական ջոկատ էր կազմավորվել: Նույնպիսի ջոկատներ են ստեղծվում նաև մյուս գյուղերում: Գյուղերի պաշտպաններին միանում են ՀՀ-ում բնակվող շահումյանցիների կազմավորած ջոկատները: Նրանց զինակցել է նաև ռազմական համբավ ձեռք բերած «Մեծն Տիգրան» աշխարհազորային գունդը, որի հրամանատարն էր Արմենակ Արմենակյանը:

Պայքարը գլխավորելու և արդյունավետ իրականացնելու համար ձևավորվում է Ազգային խորհուրդ՝ Վալերի Բաղյանի գլխավորությամբ: Ստեղծվում է ինքնապաշտպանության շտաբ, իսկ ուժերի հրամանատար է նշանակվում Շահեն Մեղրյանը: Նրա ստեղծած ջոկատը դեռևս 1990թ. հունվարին էր Մանաշիդում ընդհարվել գյուղի բնակչությանը տեղահանել փորձող ադրբեջանցիների ուժերի հետ: Հմտորեն կազմակերպված ինքնապաշտպանության շնորհիվ 1989-1991թթ. ընթացքում Շահումյանի շրջանում պաշտպանական գործողությունները բավական հաջող էին:

Մարտերը սաստկանում են «Օղակ» օպերացիայի ընթացքում, իսկ Գետաշենի ու Բերդաձորի հայաթափումից հետո ադրբեջանցիներն իրենց ուշադրությունը Շահումյանի շրջանի վրա կենտրոնացնելու հնարավորություն են ստանում: Շահումյանի շրջանի գյուղերը հայտնվել էին լիակատար շրջափակման մեջ, և նույնիսկ հարևան շրջանների հետ կապը վտանգված էր: Բացի այդ, ինքնապաշտպանական ուժերը փոքրաթիվ էին, իսկ մարտական տեխնիկա չունեին: Ստեղծվել էր ծանր իրավիճակ:

Այս իրադրությունում անգնահատելի էր հայ օդաչուների դերը, որոնք ապահովում էին ուղղաթիռային կապը:



Շահումյանի շրջանի ինքնապաշտպանության ղեկավար Շահեն Մեղրյան (1952-1993թթ.)

Ռազմավարության փոփոխումը

Իրադրության անբարենպաստ զարգացումը հայկական կողմին հարկադրում է ռազմական գործողությունների ընդհանուր ծրագիր մշակել: Առաջին իսկ վերլուծություններից հետևում է, որ հայ գյուղացիների ինքնապաշտպանական մարտերն աչքի էին ընկնում համառությամբ: Ակայն *հերոսական պաշտպանությամբ կարելի է ժամանակ շահել կամ այլ հաջողությունների հասնել, բայց առանց հարձակման հաղթանակ չի լինում:*



Վլադիմիրովի խոշոր տրամաչափի տանկային գնդացիրը (ԿՊՎՏ) ունի նաև հետևակի աջակցության համար նախատեսված տարբերակ՝ հաստոցի վրա: Ինքնապաշտպանական ջոկատների համար այս գնդացիրը հաճախ լրացնում էր հրետանու պակասը:

Ի հայտ է գալիս պաշտպանությունն ակտիվացնելու ռազմավարությանն ընդդիմացողների գլխավոր հակափաստարկին պատասխանելու ժամանակը: Չէ՞ որ հակառակորդն ուներ կենդանի ուժի և սպառազինության առավելություն, բացի այդ, մարտական տեխնիկայի, վառելիքաքսուկային ու նյութական այլ միջոցների ճնշող գերազանցության էր հասել: Ի՞նչ կարելի էր հակադրել դրան:

Պատասխանն իրեն երկար սպասել չի տալիս: Ռազմարվեստի հանրագիտարանից հանվում է անկանոն ռազմարվեստի և կուտակված փորձը մարտավարության ժամանակի պահանջներին համապատասխանեցնելու դրույթը, որի հիման վրա էլ ձևավորվում է նոր ռազմավարությունը: Թեև այն շարունակում էր պաշտպանական մնալ, սակայն որոշվում է շարունակել պայքարի համախմբումը և ակտիվացնել պաշտպանությունը: Հնարավորության դեպքում պետք է հակահարձակողական բնույթի գործողություններ ձեռնարկվեին:

Մարտավարական իրավիճակը և կողմերը մարտի նախօրյակին

Ռազմավարության փոփոխման մեկնակետ է դառնում 1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂ մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների միացյալ նիստում ԼՂՀ ստեղծման հռչակումը: Այդ որոշումն ի ցույց էր դնում իրենց ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու արցախահայության հաստատակամությունը:



ՀՄՄ 1-ի 2Ա28 կիսաավտոմատ «Գրադ» հրանոթը գոյամարտի առաջին փուլում սպառազինության խիստ կարիք զգացող ինքնապաշտպանական ուժերի փոքրաթիվ «հզոր» կրակային միջոցներից էր:

Ռազմական առումով նույնպիսի խորհրդանշական, սակայն նվազ նկատված եղավ Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերի ազատագրման գործողությունը, որն իրականացվում է սեպտեմբերի 14-18-ին: Գործողությանը մասնակցում էին Արցախի Շահումյանի ու Մարտակերտի և ՀԽՍՀ տարբեր շրջանների 120 ազատամարտիկներ՝ Ֆելիքս Գզողյանի, Շահեն Մեղրյանի և Մոնթե Մելքոնյանի ղեկավարությամբ:

Մեր գրոհող ջոկատներն ունեին ՀՄՄ 1-ի «Գրոմ» տիպի 73 մմ տրամաչափի հարթափող հրանոթ և մեկ ԿՊՎՏ գնդացիր (Վլադիմիրովի տանկային՝ 14,5 մմ տրամաչափի):

Մարտավարության տեսանկյունից ուշագրավ էր սեպտեմբերի 14-ին կազմակերպված գիշերային մարտը, որով պայմանավորվում է ամբողջ հարձակման հաղթական ելքը:

Խնդիրն այն էր, որ մարտի նախօրյակին ադրբեջանցիները հասցրել էին ինժեներական առումով լավ ամրապնդել դիրքերը և ամրանալ հայաթափված գյուղերից հարավ և հարավ-արևելք՝ Շամփրապտուկ ու հարևան բարձունքների վրա: Նրանց պաշտպանությունը կազմակերպված էր տեղանքը հնարավորինս օգտագործելով, որն ուղղակի բացառում էր ճակատային հարվածով հաջողության հասնելու հնարավորությունը: Բացի այդ, հակառակորդը մեծաթիվ էր (հայկական կողմի տվյալներով՝ հակառակորդի խմբավորումը նվազագույնը 140 հոգանոց էր), ուներ 1 հետևակի մարտական մեքենա (ՀՄՄ), 1 զրահափոխադրիչ (ԶՓ), 2 խոշոր տրամաչափի և 2 ձեռքի գնդացիրներ (տե՛ս Սխ. 1):

ԱԿ-74 (վերևում) և ՌՊԿ-74 (ներքևում)

Հաղթանակը

Մարտի մտահղացման հիմքում դրվում է հակառակորդին ապակողմնորոշելը: Այդ նպատակով հարձակումը սկսվում է գիշերը և իրականացվում թևերից ու ոչ կենտրոնից, ինչպես ակնկալում էր հակառակորդը: Թևերի վրա միաժամանակյա գրոհով նախատեսվում էր շրջապատման սպառնալիք ստեղծել: Այս նպատակին էր ծառայելու նաև ադրբեջանցիների թիկունք ուղարկված շրջանցող ջոկատը, որին հրամայվում է գրավել Բուզլուխից դեպի ադրբեջանցիների դիրքերը տանող ճանապարհը և կտրել առաջին գծի ստորաբաժանումների մատակարարման հիմնական ուղին:

Հատկապես բարդ էր շրջանցող ջոկատի խնդիրը, որի իրականացման համար ընտրվում են 12 կամավորներ: Այս ջոկատը հարձակման նախորդ օրը հակառակորդի համար աննկատ կարողանում է գրավել ճանապարհի՝ իրեն ցույց տրված հատվածը, իսկ մարտի ընթացքում ոչնչացնում դեպի ադրբեջանական դիրքերը շտապող ՈՒԱԶ տիպի մեկ և զինամթերքով բեռնված բեռնատար երկու ավտոմեքենա (տե՛ս Սխ. 1):

Ադրբեջանցիների գործողությունները շաբլոնային էին, հետևաբար՝ կանխատեսելի: Այդ պատճառով լրացուցիչ պարզաբանման կարիք ունի դիրքե-

Սխեմա 1



ԲՈՒԶԼՈՒԽ, ՄԱՆԱՇԻԴ ԵՎ ԷՐՔԵՋ ԳՅՈՒՂԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ 1991Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-18

րին օգնության եկողների ճանապարհը շրջանցող ջոկատով փակելու հարցը: Խնդիրը հետևյալն էր. զավթված հայկական գյուղերում ամրանալու նպատակով սկզբնական շրջանում հակառակորդն առավելագույն քանակով զինապաշար էր կուտակում դիրքերում՝ դրանք հենակետերի վերածելով: Այդ կրակակետերն էին ազատամարտիկների առաջին ոչ մեծ գրոհների թիրախները: Գիշերային հարձակումներով կրակակետերը լռեցրած ազատամարտիկները հաճախ չէին հասցնում ամրանալ նոր բնագծերում, բայց նույնիսկ նահանջելով՝ նրանք իրենց հետ տանում էին որպես ավար վերցված զինամթերքը:

Ադրբեջանցիները «կռահել» էին, որ զինամթերքի սուր կարիք զգացող հայկական ջոկատների համար այդ պաշարին տիրանալը պակաս կարևոր չէ: Մեծաքանակ սպառազինության կորուստը կանխելու նպատակով նրանք պարզամիտ հնարքի են դիմում. կրակակետերում պահվող զինամթերքի քանակը նվազեցվում է, բայց մոտակա բնակավայրերում ստեղծվում են զինապահեստներ՝ օգնության հասնելու պատրաստ պահվող բարձված հերթապահ ավտոմեքենաներով:

Հակառակորդի պաշտպանության թիկունքում ճանապարհային ցանցի վերլուծությունը վկայում էր, որ այսպիսի բազային բնակավայրի դեր կարող է կատարել Բուզլուխը (տե՛ս Սխ. 1): Գյուղի դպրոցը զորանոցի վերածած ադրբեջանական ստորաբաժանման և կրակակետերի միջև կապը կտրելու խնդիրն էլ դրված էր շրջանցող ջոկատի վրա:

ԻՊ ուժերը թևային գրոհներով հակառակորդին դուրս են շպրտում բարձունքներից: Կենտրոնում հարմար դիրքեր զբաղեցրած և գրոհի պատրաստված ադրբեջանական ամենամեծաթիվ ստորաբաժանումը փաստացի անգործության է մատնվում: Ավելին, թևերում ու թիկունքում սկսված փոխհրաձգության սաստկացումից խուճապի մատնվելով՝ այն առաջինն է թողնում դիրքերն ու նահանջում:

Շուտով խուճապը փոխանցվում է մյուս ստորաբաժանումներին, որոնք թեև հանկարծակիի էին եկել, բայց փորձում էին շարունակել դիմադրությունը: Նահանջի սկզբից ևեթ հակառակորդը հայտնվում է մարտավարական առումով ծայրահեղ իրավիճակում, քանի որ մինչև Բուզլուխի ու Մանաշիդի տներին հասնելը՝ անհնար էր լինելու կասեցնել գագաթներից գրոհող ինքնապաշտպանական ջոկատների առաջխաղացումը: Նախքան լուսաբացը հակառակորդը դուրս է մղվում բոլոր բարձունքներից ու սկսում անկազմակերպ հետ քաշվել Բուզլուխից, իսկ սեպտեմբերի 15-ին ստիպված առանց դիմադրության թողնում է նաև Մանաշիդը: Բարձունքները պաշտպանող ադրբեջանցիների խուճապի մասին է վկայում այն փաստը, որ հայկական կողմն առաջին մարտում տալիս է 3 զոհ, իսկ ադրբեջանցիները՝ 15: Փախչող հակառակորդից առգրավվում է նաև զգալի քանակությամբ ռազմավար:



ԲՏՌ-60 տիպի զրահափոխադրիչները լայնորեն կիրառվել են Արցախյան գոյամարտի տարիներին:

ԲՏՌ-70 տիպի զրահափոխադրիչ

ԲՄՊ-2 տիպի ՀՄՄ: 30 մմ տրամաչափի արագաձիգ ավտոմատ հրանոթ ունեցող այս ՀՄՄ-ների կրակային հզորությունն այնքան մեծ էր, որ զրահատեխնիկայի պակաս զգացող Ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը նույնիսկ տանկերի պակասն էր փոխարինում հակառակորդից խլված ԲՄՊ-2-ներով:

Դժվար է գերագնահատել այս բարձունքների օպերատիվ նշանակությունը, քանի որ դրանով ձախողվում էր հյուսիսում հակառակորդի ռազմական գործողությունների ամբողջ համակարգը, և բնական է, որ հակառակորդը ոչ մի կերպ չէր ցանկանում հաշտվել տարածքների կորստի հետ: Համալրում ստանալով՝ նա կատաղի հակագրոհներ է սկսում: Սեպտեմբերի 15-ի երեկոյան և 16-ին Ինքնապաշտպանական ուժերը երեք գրոհ են կասեցնում:

Զարգացնելով հաջողությունը՝ սեպտեմբերի 18-ին ազատագրվում է նաև Էրքեջը:

Ամբողջ գործողությունն, այսպիսով, ավարտվում է Ինքնապաշտպանական ուժերի հաղթանակով, որի գրավականը եղան հանկարծակիության գործոնը, շրջանցող ջոկատի նպատակասլաց օգտագործումը և մարտի ճիշտ կազմակերպումը: Այդ ամենի շնորհիվ հնարավոր եղավ փոքրաթիվ ուժերով ջախջախել թվապես գերակշռող հակառակորդին:

Սա առաջին ծրագրված ու կազմակերպված մարտական գործողությունն էր, երբ ազատագրվեցին զավթված տարածքներ: Այս հարձակման ընթացքում էր, որ Արցախյան գոյամարտի իր մկրտությունն է ստանում ՀՀ ազգային և ԼՂՀ հերոս, լեգենդար Մոնթե Մելքոնյանը՝ Ավոն:

Մոնթե Մելքոնյան
(Ավո, 25 նոյեմբերի 1957թ. - 12 հունիսի 1993թ.)

ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ
(1992Թ. ՄԱՅԻՍԻ 8-9)

1991-ի նոյեմբերից ի վեր Շուշիից արձակվող հրթիռները (մինչև 1992-ի մայիսի 8-ը՝ շուրջ 15.000 արկ ու հրթիռ) ավերում էին ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտը:

1992թ. փետրվարի 27-ին՝ Խոջալուի ազատագրման հաջորդ օրը, ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի հրամանատար, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանի ղեկավարությամբ կայացավ խորհրդակցություն: Հաշվի առնելով, որ Շուշիի մատույցները երիզող կրակակետերն ունեն շուրջ 35 կիլոմետր ձգվածություն, որոշվեց ստեղծել հարվածային խմբավորումներ և քաղաքը գրոհել չորս ուղղություններով: Արցախի Ինքնապաշտպանության ուժերի հետախուզությունն արդեն ճշտել և արձանագրել էր բոլոր նշանակետերը՝ հակառակորդի շտաբները, հենակետերը, հրետանային կայանքները, ազդականչերը և անցկացրել քարտեզի վրա, կատարել բոլոր հաշվարկները: Ըստ հետախուզության տվյալների, Շուշիում տեղակայված էր 2.800 հոգանոց ադրբեջանական խոշոր զորախումբ, այդ թվում նաև Ադրբեջանում ամենամարտունակը համարվող «777» գումարտակը, որ կազմված էր «աֆղանցիներից»: Զորախմբի հրամանատարը Մեհմեդովն էր, որը 1992թ. հունվարի 26-ին ջախջախիչ պարտություն էր կրել Քարինտակում և հիմա ցանկանում էր իրեն արդարացնել:

Հայ հրետանավորները Շուշին բաժանեցին երեք մասի՝ համազարկային կրակով հատված առ հատված խփելու համար, որպեսզի մեծ տարածք խոցվեր, ապա նշանակետերի վրա աշխատեցին բոլոր կայանքները: Իսկ առաջին գծից երկու կիլոմետր հեռավորության վրա՝ Սղնախի ու Քարինտակի միջև, դաշտային հոսպիտալ տեղակայվեց:

Արցախյան ազատամարտի հերոս Արկադի Տեր-Թադևոսյան (Կոմանդոս)

Գործողության նախապատրաստումը

Շուշիի գրավումը նախատեսվել էր ապրիլին, բայց եղանակային պայմանների ու այլ գործոնների պատճառով մի քանի անգամ հետաձգվեց: Ապրիլին Ստեփանակերտ եկան ՀՀ պաշտպանության նախարարի 1-ին տեղակալ և զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Գուրգեն Դալիբալթայանը, զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ վարչության պետ Լեոնիդ Մարտիրոսովն ու այլ բարձրաստիճան զինվորականներ:

Պատրաստվել էր տեղանքի մակետը, որի վրա ջոկատների հրամանատարների և հրետանավորների հետ պլանավորում և մշակում էին ապագա գործողությունները: ՀՀ զինված ուժերում Շուշիի ազատագրման ժամանակ առաջին անգամ ստեղծվեց հրետանու խմբավորում՝ կազմված երեք «Դ-30» հաուբիցներից, երեք 120 միլիմետրանոց ականանետերից, համազարկային կրակի երկու «Գրադ» (ԲՄ-21) ռեակտիվ կայանքներից և մեկ «ԿՍ-19» 100 միլիմետրանոց հրանոթից: Հետևակի հետ էլ մի քանի 82 միլիմետրանոց ականանետեր կային:

Ապա ընտրեցին հրետանու կրակադիրքերը և որոշեցին, թե կրակելուց հետո որ կայանքն ուր պիտի տեղափոխվի: Շուտով ստացվեցին կապի առաջին քսան «Ալինկո» դյուրակիր գերկարճալիք ռադիոկայանքները, որոնք գրոհի նախօրեին բաժանվեցին ջոկատների հրամանատարներին: Դրանցով կապ էր ապահովվում վերադաս հրամանատարության, իսկ ԼՂՀ պայմաններում իրենց լիովին

Գեներալ-լեյտենանտ Լեոնիդ Մարտիրոսով

արդարացրած խորհրդային «Ռ-159» դյուրակիր ռադիոկայաններով՝ ենթակա ստորաբաժանումների հետ: Շուշիի ազատագրումը ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի համար կապի կազմակերպման առումով առաջին դասական գործողությունն էր: Դրա նախապատրաստությունը տևեց շուրջ մեկ ամիս:

Շուշիի ադրբեջանական զորախմբի ինժեներական-սակրավորական ծառայությունը բավական թույլ էր: Հակառակորդը համոզված էր, որ պետք է գրավի Ստեփանակերտը և ականապատմանը լուրջ ուշադրություն չէր դարձրել: Մեր կողմից Շուշիի գրոհին ավելի քան քսան սակրավորներ մասնակցեցին, իսկ մի խումբը գրոհի նախօրեին շրջանցում կատա-

Սխեմա 1



րելով՝ Ջառիսլուի ուղղությունում բազմաթիվ ականներ էր տեղադրել: Բացի այդ, Շուշիի ազատագրմանը հատկապես Քոսալար-Ջանհասան հատվածում հարձակման ինժեներական ապահովման մեծ աշխատանք նախորդեց:

Հրետանավորները կրակադիրքեր մեկնեցին ապրիլի 24-ին: Մի քանի անգամ «Պատրաստություն համար 1» տվեցին, բայց կրակի հրաման չեղավ: Ապրիլի 28-ին եղանակային պայմանների պատճառով «դադար» տվեցին:

Ռ-159 ռադիոկայանն ազատամարտիկների տրամադրության տակ եղած կապի ամենահարմար միջոցն էր:

Ազատագրման գործողությունը

Մայիսի 8-ի գիշերը, ժամը 2.30-ին տրվեց հարձակման հրամանը, և երկու հազար մարտիկներ չորս ուղղություններով սկսեցին բերդաքաղաքի գրոհը (տե՛ս Սխ. 1): Ստեփանակերտի ուղղությունը ղեկավարում էր գնդապետ Վալերի Չիթչյանը, Շոշ գյուղի ուղղությունը՝ ազատամարտիկ-հրամանատար, այսօր պահեստի գնդապետ Արկադի Կարապետյանը, Լիսագորի ուղղությունը՝ Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարի տեղակալ Սամվել Բաբայանը, իսկ Ջանհասան-Քոսալարի ուղղությունը՝ ՀՀ պաշտպանության ապագա նախարար Սեյրան Օհանյանը: Պահեստազորի հրամանատարն էր փոխգնդապետ Յուրա Հովհաննիսյանը՝ «26-ի Յուրան»[1]:

Մարտիկները համբուրվեցին, հրաժեշտ տվեցին միմյանց ու գնացին Հասանաբադի մոտ գտնվող կրակադիրքեր՝ հավատացած, որ հաղթելու են: Համազարկային կրակի առաջին կայանքը, արձակելով 40 հրթիռները, մեկնեց վերալիցքավորման: Ապա մեկնեցին պահեստային կրակադիրք՝ Խնածախի շրջակայք, և սկսեցին կրակով օգնել գրոհողներին: 40 րոպեանոց նախապատրաստությունը կատարյալ անակնկալ էր թուրքերի համար: Հակառակորդը հիմնականում կրակում էր Շուշիի բանտի մերձակայքից (այնտեղից երեք «Գրադ» կայանք էր «աշխատում»), որին Քարինտակի կողմից պատասխանում էին 100 միլիմետրանոց «ԿՍ-19» հրանոթով: Ապա կարգադրվեց Աղդամի վրա 40 հրթիռ արձակել՝ այնտեղից հնարավոր հարձակումը կանխելու նպատակով:

---

[1] Զոհվել է 1993թ. հունիսին, Մարտակերտ քաղաքի ազատագրման մարտերում:

Վալերի Չիթչյան
(1956-1995թթ.)

Աշոտ Ղուլյան
(Բեկոր, 1959-1992թթ.)

Հակառակորդը բետոնե բլոկներով փակել էր գլխավոր ճանապարհը, և տանկերը շրջանցեցին այդ հատվածը: Հակառակորդը բլոկների շուրջը հող էր լցրել ու ականապատել: Սակրավորները մաքրեցին տեղանքը, և զորքերը շարունակեցին ճանապարհը: Ամեն ինչ հարթ էր ընթանում, սակայն խփվեց ղարաբաղյան ուժերին պատկանող տանկը, և թվաց, թե գործողությունը վտանգվել է: Բայց Արկադի Տեր-Թադևոսյանը հրամայեց դիմանալ ու սպասել: Առավոտյան ժամը 4-ին գրոհը շարունակելու հրաման տրվեց:

Ինքնապաշտպանության ուժերի կապի պետ, հետագայում գեներալ-մայոր Արթուր Փափազյանը թեև վիրավորվել էր, սակայն հարձակողական գործողության ընթացքում կարողացավ անխափան կապ ապահովել հրամանատարության և բոլոր ստորաբաժանումների միջև: Վերջին գրոհի հրամանն Արկադի Տեր-Թադևոսյանը բոլոր զորքերին անձամբ հաղորդեց՝ հորդորելով կատարել վերջին ճիգը Շուշին ազատագրելու համար: Ու ջոկատներն առաջ գնացին:

Հաղթանակը

Առավոտյան ազատագրվեցին Քոսալարի ու Ջանհասանի բարձունքները: Կեսօրին քաղաքի պաշտպանությունը հյուսիսից ու արևելքից ճեղքվեց: Աշոտ Ղուլյանի (Բեկոր) վաշտն առաջիններից էր, որ մտավ քաղաք: Կռիվներն արդեն մղվում էին Շուշիի շուկայում ու քաղաքի կենտրոնական մասում: Իսկ Քիրս լեռան ուղղությամբ գործող կամավորական ջոկատները, գրավելով կարևոր բարձունքները, սկսեցին վերահսկել Շուշի-Լաչին (Բերձոր) ավտոճանապարհը, ինչը

խուճապ առաջացրեց հակառակորդի շարքերում: Երևացին ադրբեջանական ինքնաթիռները և ուղղաթիռները, բայց ապարդյուն... Հակառակորդն արդեն տարբեր ճանապարհներով փախչում էր ազատագրվող բերդաքաղաքից:

Մայիսի 10-ին Ստեփանակերտի երկնքում հայտնվեց ադրբեջանական զինված ուժերի Սու-25-ը, որն ադրբեջանցի օդաչու Վագիֆ Կուրբանովը (ի դեպ, 1992թ. հունիսի 13-ին «Ստրելա-2» և ՁՍՈՒ 23/4 կայանքներով խոցվեց Ասկերանի երկնքում) մեկ ամիս առաջ Սիթալչայի ռազմական օդանավակայանից փախցրել էր Եվլախ, և ԼՂՀ մայրաքաղաքն առաջին անգամ ենթարկվեց օդային հարվածի: Բայց զոհեր չեղան: Այդ ռմբահարումը Ստեփանակերտի օդային ռմբակոծումների նախերգանքն էր:

Նույն օրն ադրբեջանական բանակը մի քանի տասնյակ տանկերի ու զրահամեքենաների աջակցությամբ հզոր հարձակում ձեռնարկեց Ասկերանի հատվածում, անգամ մտավ սահմանամերձ մի քանի բնակավայրեր, բայց հետ շպրտվեց:

Չնայած հակառակորդի տանկերն ու շարժական հրետանին հասցրել էին հեռանալ, բայց Շուշիում թողել էին վեց հրետանային կայանք և հազարավոր արկեր ու հրթիռներ: Իսկ առջևում Բերձորի (Լաչին) ազատագրումն էր...

ՀՕՊ ԿՍ-19 թնդանոթը արտադրությունից հանվել է դեռևս 1955թ., սակայն այսօր էլ գտնվում է մի շարք երկրների բանակների սպառազինությունում:

Ամփոփում

Շուշիի ազատագրումը ռազմաքաղաքական և հոգեբանական առումով շրջադարձային նշանակություն ունեցավ: Այս հաղթանակի շնորհիվ ազատագրվեց նաև Բերձորը, ինչը թույլ տվեց վերականգնել ցամաքային կապը Հայաստանի Հանրապետության հետ և այդպիսով միացնել երկու հայկական պետությունները: Վերացվեցին նաև Ստեփանակերտին, Քարինտակ ու Շոշ գյուղերին ուղղված սպառնալիքները: Շուշիի ազատագրումը կարևոր էր նաև ազգային-հոգևոր առումով, քանի որ բերդաքաղաքն իր ճարտարապետությամբ, Ղազանչեցոց եկեղեցով և այլ մշակութային հաստատություններով հայ մշակութային կենտրոններից մեկն է:

ԶՍՈՒ 23/4 զենիթահրետանային համալիրը փոքր հեռահարության (մինչև 2,5 կմ) ինքնագնաց ՀՕՊ արդյունավետ միջոց է:

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ
(1993Թ. ՓԵՏՐՎԱՐ-ՀՈՒՆԻՍ)

1992թվականի հունիսի 12-ին ադրբեջանական բանակը վարձկան անձնակազմերով, ծանր տանկերի աջակցությամբ լայնածավալ հարձակման անցավ Արցախի հյուսիսում և գրավելով ԼՂՀ Շահումյանի շրջանը, մի քանի ուղղություններով զարգացնելով հարձակումը՝ տիրացավ Մարտակերտի շրջանի մեծ մասին: Վտանգվեց Գանձասարի վանքը, իսկ հակառակորդի զրահատեխնիկան հասավ Ստեփանակերտ տանող ավտոմայրուղու մատույցներին: ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի և ՀՀ կամավորական ջոկատների ուժերի գերլարումով այս հարձակումը կասեցվեց, և փոփոխական հաջողությամբ մարտերից հետո ճակատի գիծը կայունացավ Առաջաձորի ենթաշրջանի մատույցներում:

Պաշտպանությունից անցում հակահարձակման

1993 թվականի փետրվարի 5-ին՝ Մարտակերտ շրջկենտրոնի անկումից յոթ ամիս անց, ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերն ու ՀՀ կամավորական ջոկատները, պաշտպանությունից անցնելով հակահարձակման, սկսեցին Մարտակերտի շրջանի ազատագրումը (տե՛ս քարտեզ 1): Դրան նախորդեց հունվարի 10-ից հակառակորդի ձեռնարկած կատաղի հարձակումը ողջ Մարտակերտից մնացած Առաջածորի ենթաշրջանի ուղղությամբ, որը, սակայն, ձախողվեց:

Հակառակորդի 1992-ի ամառային-աշնանային լայնածավալ հարձակման օրերից հետո շատ բան էր փոխվել: Վարձկանները հեռացել էին՝ թուլացնելով Ադրբեջանի զինված ուժերը, իսկ ԼՂՀ-ում սկսել էին կանոնավոր բանակ ստեղծել, զորատեսակներում մարտական ուսուցում իրականացնել: Փետրվարին պարզվեց, որ անցած ամիսները կողմերը տարբեր կերպ էին օգտագործել:



«2Կ11 Կրուգ» զենիթահրթիռային համալիրի հրթիռը՝ թողարկող կայանով:

Քարտեզ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1993թ.)


Սրամիտ
Ստեփանավան
Գարգար գետ
Դեբեդ գետ
Ալավերդի
Տաշիր
Վանաձոր
Ստեփանավան
Գոգարան
Գարգարի
Գարգարի
Գարգարի

Մասնավորապես, Մարտակերտի պաշտպանության ծանր ամիսներին դեռ գեներալ-մայոր Քրիստափոր Իվանյանը, որ 1992-ի ամռանը Ռուսաստանից գալով պատերազմող Արցախ, նշանակվել էր ԼՂՀ ԻՊՈՒ հրամանատարի խորհրդատու, ապա ԼՂՀ պաշտպանության նախարարի տեղակալ, կազմավորեց հրետանավորների պատրաստման ուսումնական կենտրոն: Ձևավորվեցին նաև կենտրոնական ենթակայության դիվիզիոնները: Այդ և նման այլ քայլերը մեծապես նպաստեցին արդյունավետ կազմակերպելու հակահարձակումը: Մարտակերտի պաշտպանական շրջանի ինժեներական վաշտն աշնան վերջին լրիվ ականապատել էր ճակատի գիծը: Իսկ հակառակորդը հիմնականում ճանապարհներն էր ականապատել:

Հակաօդային պաշտպանության ապահովումն ավելի վաղ էր սկսվել: Միայն հունվարի 15-ին ԼՂՀ ՀՕՊ կայանքների անձնակազմերն այստեղ հակառակորդի երեք ինքնաթիռ ոչնչացրին, իսկ վարձկան օդաչուներ Չիստյակովն ու Բելիչենկոն գերի ընկան: Հունվարի 20-ին «Կրուգ» համալիրի հաշվարկը ոչնչացրեց ևս մեկ Սու-25 ինքնաթիռ:

Արցախի Մարտակերտի շրջանի հյուսիս-արևմուտքում, Սարսանգի ջրամբարի սկզբնամասում գտնվող Գետավան, Չափա բնակավայրերը ազատագրվեցին Լեոնիդ Ազգալդյանի ամենայն մանրամասնությամբ նախապատրաստված ռազմական գործողության փայլուն իրականացման շնորհիվ:

Ազատագրումը

Ըստ ԼՂՀ ԻՊՈՒ հրամանատարության օպերատիվ պլանի, հարձակումը պետք է իրականացվեր Վաղուհաս-Ջագլիկ-Թալիշ, Չլդրան-Դրմբոն-Կուսապատ-Մարտակերտ և Սրխավենդ-Բաշ Գյունեփայա-Մանիքլու-Ջանյաթաղ-Գյուլաթաղ-Մարտակերտ ուղղություններով (տե՛ս քարտեզ 1): Հակահարձակմանը մասնակցում էին Կենտրոնական պաշտպանական շրջանի, 54-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակի և ՀՀ կամավորական ջոկատները: Սակրավորները, ստուգելով ճանապարհը, մեկ օրում հասան Չլդրան, իսկ գիշերը, ճակատի գծից կտրվելով, անցան Դրմբոն և նույն գիշեր վերադարձան Չլդրանի մերձակայք՝ երկրորդ անգամ արդեն զորքերի հետ գնալու առաջ, ապա սկսեցին աշխատել Կճողուտի ուղղությամբ:

Ադրբեջանական օդուժն անկարող եղավ իրական աջակցություն ցուցաբերել իր խուճապահար նահանջող զորքերին: Իսկ հակահարձակման առաջին փուլի ավարտին՝ մարտի 20-ին, «ՕՍԱ-ՕԿ» ՀՕՊ հրթիռային կայանքով Կուսապատի մերձակայքում խոցվեց հակառակորդի ուղղաթիռը:

Սրխավենդ - Բաշ Գյունեփայա - Օրթա Գյունեփայա - Մանիքլու - Ջանյաթաղ ուղղությամբ գործող Ասկերանի, Մարտունու և Կենտրոնական պաշտպանա-

կան շրջանների ու 54-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակի ստորաբաժանումները փոխհամաձայնեցված գործողությունների շնորհիվ փետրվարի 6-ին մտան Սրխավենդ և հետապնդելով խուճապի մեջ նահանջող հակառակորդին՝ ազատագրեցին նաև Բաշ Գյունեփյան:

Փետրվարի վերջին օրերին ճակատի մի երկար հատվածում Ինքնապաշտպանության ուժերի ստորաբաժանումներին փոխարինեց 5-րդ կամավորական բրիգադը, որը դիմակայեց Սարսանգի ջրամբարի ուղղությամբ հակառակորդի հակահարձակմանը և ապա շարժվելով առաջ՝ մասնակցեց Մեհմանա, Մեծշեն, Ջանյաթաղ, Գյուլաթաղ, Մաղավուզ, Ջագլիկ, Ումուդլու, Կուսապատ և Մոխրաթաղ գյուղերի ազատագրմանը:

Այդ մարտերում իրենց լավագույնս դրսևորեցին Ազատագրական բանակի (հրամանատարներ՝ Լեոնիդ Ազգալդյան և Վլադիմիր Բալայան) մարտիկները:

Մարտակերտ քաղաքի ուղղությամբ առաջանալիս մարտիկները պայթեցրին Քարվաճառ (Քելբաջար) տանող ճանապարհը, որպեսզի այս ուղղությունից հակառակորդն օգնական ուժեր չստանար:

Քարվաճառի (Քելբաջար) ազատագրումից հետո պաշտպանության ինժեներական ապահովման մեծ աշխատանք կատարվեց նաև Մարտակերտ քաղաքը հսկող բարձունքների շղթաներում, ուր փոփոխական հաջողությամբ ծանր մարտեր էին, և սակրավորների տեղադրած ականները հակառակորդին մարդկային ուժի ու տեխնիկայի մեծ կորուստներ պատճառեցին:

Հաղթանակը

Փետրվարյան հակահարձակման առաջին իսկ օրն անցնելով Կիչանի թիկունք և ծանր կորուստներ պատճառելով հակառակորդին՝ Ինքնապաշտպանության ուժերը, երեք ուղղություններով զարգացնելով հարձակումը, մեկ շաբաթում ազատագրեցին Չլդրանը, Ղազանչին, Պողոսագոմերը, Դրմբոնը, Վաղուհասը, Չափարը, Ջարդախաչը, Հաթերքը և վերահսկողություն սահմանեցին Մարտակերտ-Քարվաճառ ռազմավարական նշանակության ավտոճանապարհի վրա, փետրվարի երրորդ տասնօրյակում ազատագրեցին Հարությունագոմերը, Կճողուտը, Գյուլաթաղը, Ջանյաթաղը, Մանիքլուն, Չինգյաթաղը, ապա Գետավանը, Հաթերքը, ուր հակառակորդը մեծաքանակ ուժեր ու շուրջ 30 միավոր զրահատեխնիկա էր կենտրոնացրել, Ջագլիկը, Ումուդլուն:

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1993Թ. ՓԵՏՐՎԱՐ-ՀՈՒՆԻՍ)



Քարտեզ 2

Տեղեկանք. «Մարտակերտի ճակատում իրադրությունը փրկելու համար ադրբեջանական հրամանատարությունը կատարեց զորքերի վերախմբավորում: Մարտի սկզբներին հյուսիսային ռազմաճակատի առաջնային գծում հակառակորդը հայկական ուժերի դեմ հանեց 2-րդ բանակային կորպուսի զորամասերը և ուժեղացված ստորաբաժանումների հետևյալ կազմը. 1-ին և 3-րդ մոտոհրաձգային բրիգադները, 3-րդ առանձին տանկային բրիգադը, ներքին զորքերի բրիգադը, Քելբաջարի ինքնապաշտպանական գունդը, հատուկ նշանակության գումարտակը, Ղազախի, Բարդայի և Մինգեչաուրի մոտոհրաձգային գումարտակները, ռազմական ոստիկանության գումարտակը, 2-րդ բանակային կորպուսի հրետանային զորամասերը, ՀՕՊ ուժերը և Ադրբեջանի ռազմաօդային ուժերի մարտական ուղղաթիռների ստորաբաժանումները»:

Ս.Հասրաթյան, «Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում»

Լեոնիդ Ազգալդյան
(1942-1992թթ.)



Հակատանկային ղեկավարվող «Ֆագոտ» հրթիռային կայանք

Սակայն Մարտակերտի ճակատում մեծաքանակ ուժերի կենտրոնացումն անգամ թշնամուն չփրկեց պարտությունից: Մարտի 3-ին Ինքնապաշտպանության ուժերն ազատագրեցին Սարսանգի հիդրոհանգույցը, մարտի վերջին՝ Մեծշենը, Մաղավուզը, Մոխրաթաղը, Հակոբ Կամարին... Իսկ մարտի 21-ին Մարտակերտի ճակատի հրետանու աջակցությամբ 5-րդ կամավորական բրիգադի ստորաբաժանումներն ազատագրեցին ռազմավարական նշանակու-

թյան «Պուշկի յալ» բարձունքը, որը թեև հետո ձեռքից ձեռք անցավ, բայց Մարտակերտի հյուսիսում ռազմաճակատի գծի կայունացումը և ամուր պաշտպանության կազմակերպումը հնարավոր դարձրին Առաջաձորի ենթաշրջանի և ազատագրված գյուղերի բնակչության վերադարձը:

Ամփոփում

Այս հաղթանակի շնորհիվ ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերը գերիշխող դիրքեր գրավեցին Քարվաճառի (Քելբաջար) և Մարտակերտ շրջկենտրոնի ուղղություններում, իսկ Քարվաճառ-Աղդամ մեծ կարևորության ավտոճանապարհի Գետավան-Մարտակերտ շրջկենտրոն հատվածն անցավ հայկական ուժերի լիակատար վերահսկողության ներքո: Դրա շնորհիվ Ինքնապաշտպանության ուժերը ճակատի անմիջական գիծ կազմեցին Քարվաճառի (Քելբաջար) հետ՝ կանխորոշելով վերջինիս անկումը և ազատագրման ժամանակ հնարավորություն ունեցան հարձակումը զարգացնել այնտեղից և հատկապես Գետավան-Չարեքտար ուղղությունից, իսկ Մարտակերտ շրջկենտրոնի ազատագրման ժամանակ վերացավ նույն այդ ավտոմայրուղով Ներքին Հոռաթաղի ուղղությամբ թիկունքից շրջկենտրոնին հարվածելու վտանգը: Նաև ի չիք դարձան Սարսանգի ջրամբարին վերստին տիրելու հակառակորդի հույսերը, և տարածաշրջանի համար կենսական նշանակություն ունեցող ջրային պաշարները շարունակեցին լիովին վերահսկվել Ինքնապաշտպանության ուժերի կողմից:

Այս հաղթանակը վերացրեց նաև Առաջաձորի ենթաշրջանի, ըստ այդմ՝ Գանձասարի վանքի գրավման, ինչպես նաև Կիչանի ուղղությունում պաշտպանական գիծը ճեղքելով թիկունքից Ասկերանին հարվածելու և Ստեփանակերտ-Մարտակերտ ավտոճանապարհի Սեյդիշեն-Ստեփանակերտ հատված դուրս գալու վտանգը:

ՔԱՐՎԱՃԱՌԻ (ՔԵԼԲԱՋԱՐ) ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

1993-ի գարնան սկզբին հայկական ուժերը երեք ուղղություններով գրոհեցին Վարդենիսից դեպի արևելք, Բերձորի (Լաչին) միջանցքի հյուսիսին ու Մարտակերտի արևմուտքին սպառնացող Քարվաճառի դիրքերի համակարգը: Վերջինիս հետ էին հարաբերվում Լաչինի միջանցքում մղվող մարտերը, վտանգվում էր Մարտակերտի շրջանի փետրվարին սկսված ազատագրման գործողության հետագա զարգացումը, և սպառնալիք էր ստեղծվում Վարդենիսին: Արևմտյան ուղղությունում գործողությունը ղեկավարում էին պաշտպանության նախարարի 1-ին տեղակալ և զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Գուրգեն Դալիբալթայանն ու ՀՀ պաշտպանության նախարարի 1-ին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Հրաչ Անդրեասյանը, Մարտակերտի ճակատից՝ Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատար Ավոն՝ Մոնթե Մելքոնյանը, իսկ միջանցքի կողմից՝ ՀՀ սահմանապահ զորքերի հրամանատար Յուրի Խաչատուրովը (ապագա գեներալ-գնդապետ և ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ):

Հետախուզություն և հարձակման նախապատրաստում

Վարդենիսին սպառնացող կրակակետերի հրետանային հետախուզությունն իրականացվեց հունվարին: Իսկ մարտին սկսվեց հրետանու՝ հիմնականում ԲՄ-21, Դ-20, Դ-30 և ինքնագնաց հրետանային կայանքների կրակադիրքերի զբաղեցումն ու նախապատրաստումը երեք՝ Զոդի, Ազիզլուի ու Զարքենդի ուղղություններում:

Արևմտյան ճակատի հրետանու գործողությունները համակարգում էր հրթիռային զորքերի և հրետանու վարչության շտաբի պետ, գնդապետ Լևոն Միքայելյանը: Մարտակերտում տեղաբաշխված 5-րդ կամավորական բրիգադի հետախուզության վաշտը՝ բրիգադի շտաբի պետ, փոխգնդապետ Յուրա Հովհաննիսյանի անմիջական ղեկավարությամբ, իրականացրեց արևելյան ճակատի դժվարին ու մեծածավալ հետախուզությունը, իսկ հարձակման ժամանակ, որպես հարվածային ստորաբաժանում, առաջինը ճեղքեց ճակատի գիծը:

Արևմտյան ուղղությունում հարձակմանը մասնակից զորքերի դասավորության որոշումից անմիջապես հետո, 1993-ի դաժան ձմռանը բարձրադիր այդ հատվածում կապավորների ջանքերով մեկ ամսում ամենուր գծալարային կապ անցկացվեց: Մարտակերտի ճակատում ևս նման համակարգ էր ստեղծվել, ինչի շնորհիվ գործողության նախօրեին ապահովվեց կապի գաղտնիությունը:

Համազարկային կրակի ԲՄ-21 «Գրադ» կայանքն Արցախյան գոյամարտի ընթացքում կիրառված ամենաավերիչ հրետանային համակարգն է:

1992-ի վերջին ադրբեջանական հրամանատարությունը փորձեց Վարդենիսը դարձնել օդային հարվածների թիրախ, բայց հաջողության չհասավ: Ինքնաթիռը գնդիկավոր ավիառումբը նետեց Զոդ-Վարդենիս ամայի միջնատարածքում: Դրանից հետո ձեռնարկվեցին շտապ միջոցներ, և Քարվաճառի սահմանագծում շուտով երկու «ՕՍԱ-ՕԿ» կայանքներ տեղակայվեցին, իսկ 1992թ. դեկտեմբերի 11-ին Վարդենիսի օդային տարածքում ոչնչացվեց հակառակորդի ՄԻԳ-25 ինքնաթիռը:

Մտահղացման առանձնահատկությունները

Մարտակերտ քաղաքը դեռ չէր ազատագրվել, Պուշկի յալի ու հեռուստաաշտարակի բարձունքներում ծանր կռիվներ էին, և հակառակորդը չէր սպասում, թե հայկական ուժերը կգրոհեն Քարվաճառը: Բացի այդ, հակառակորդին անակնկալի բերելու համար Աղդաբանի կողմից շրջանցիկ ճանապարհ կառուցվեց. հակառակորդի համար անսպասելի էր, որ հայկական ուժերը վաղ գարնանը կկարողանան հաղթահարել լեռնային ու ձյունով ծածկված այդ տարածքները: Այնինչ, այդ հատվածում մանրամասն հետախուզություն էր իրականացվել, և ադրբեջանական զորախումբը հարվածն անսպասելի ուղղությունից ստացավ:

122 մմ հաուբիցն Արցախյան գոյամարտի տարիներին հակամարտող կողմերի համազորային ստորաբաժանումների մարտիկների կրակային աջակցման համար առավել մեծ «պահանջարկ» վայելող հրետանային համակարգերից էր:

Միաժամանակ, 5-րդ կամավորական բրիգադի ստորաբաժանումներն ու Ինքնապաշտպանության ուժերի հրետանու մի մասը մնացին պաշտպանելու Մարտակերտի ողջ ճակատն ու հատկապես Դրմբոն և Կուսապատ տանող ճանապարհը, որպեսզի հակառակորդը չկարողանար անցնել Քելբաջարը գրոհող զորքերի թիկունքը:

Լաչին-քելբաջարյան զորախմբին լիակատար գաղտնիության պայմաններում նախապատրաստված համաժամանակյա հարված հասցվեց արևմտյան՝ Վարդենիսի, արևելյան՝ Մարտակերտի և հարավային՝ Բերձորի (Լաչին) մարդասիրական միջանցքի ուղղություններից: Բաց մնաց միայն դեպի Օմարի լեռնանցք տանող փախուստի ճանապարհը:

Ազատագրման գործողությունը

Քարվաճառի շրջանի ազատագրման գործողությունը սկսվեց 1993թ. մարտի 27-ին: Հրետանային նախապատրաստությունը տևեց շուրջ 40 րոպե: Ապա հետևակն առաջ գնաց: Չդիմանալով մի քանի ուղղություններով զարգացող սրընթաց հարձակմանը՝ հակառակորդն սկսեց նահանջել: Միայն մի անգամ անհրաժեշտ եղավ հրետանային հարված հասցնել Օմարի լեռնանցքի ուղղությամբ, երբ օգտվելով այն հանգամանքից, որ խաղաղ բնակչության անվտանգ հեռանալու համար հարձակումը կանգնեցվել էր, հակառակորդը փորձել էր ծանր տեխնիկան դուրս բերել ընկնող շրջանից: Սակայն ճանապարհի վրա ռեակտիվ հրետանու մեկ համազարկի արձակումով այդ փորձը ձախողվեց:

Հարձակումը զարգանում էր նաև Մարտակերտի ուղղությունից, և Ինքնապաշտպանության ուժերի շտաբը նախօրեին տեղափոխվեց Դրմբոն: Մարտի 27-ից մինչև մարտի 30-ը ոչնչացնելով Աղդաբանի, Չարեքտարի, Նարեշտարի, Թազաքենդի, Բաղրլուի, Քեչիլղայայի և Չորմանի հենակետերը՝ ղարաբաղյան ուժերը ճեղքեցին հակառակորդի պաշտպանական բնագիծը և սկսեցին զարգացնել հարձակումը՝ հընթացս ազատագրելով Դադիվանքը: Հակառակորդը խուճապահար փախչում էր (տե՛ս քարտեզ 1):

Գործողության սկզբում ուղղաթիռների օղակը, որի հրամանատարը Բորիս Բաբայանն էր, Չարեքտարի ուղղությունում օդից հրթիռային հարվածներով ոչնչացրեց հակառակորդի հակատանկային զինտեխնիկան, և մեր զորքերը շուտով ճեղքեցին հակառակորդի պաշտպանությունը: Իսկ հետո, երբ ադրբեջանական բանակը բնակչությունից առաջ ընկած՝ փախչում էր, անձնակազմերից մեկը վերստին օդ բարձրացավ՝ հիվանդանոց հասցնելով վիրավոր ադրբեջանուհուն:

Քարտեզ 1


ՔԵԼԲԱՋԱՐԻ ՇՐՋԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1993Թ. ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ)
Մեծ Ծիրանավոր լ.
3367
Օմար լ.
Գոմշասար լ.
3724
Մռավ լ.
3343
Ումուդլու
Հաքերք
Սարսանգի ջրամբար
Զամիլի
Յանշաղ
Սեյիդլյար
Զոդ
Վարդենիս
Չափար
Զարդախաչ
Չայքենդ
Զարեքտար
Վաղուհաս
Կոճողոտ
Գանձասար
Քելբաջար
Ծմակահող
Նարեշտար
Վանք
Տրտու (Թարթառ)
Աղջաքենդ
Գառնաքար
Թազաքենդ
Չորման
Իստիսու
Ռմբասար լ.
3616
Ալյակչի
Փչանիս
Վաղազին
Հոչանց (Ղոչազ)
Լենինքենդ
Ծղուկ լ.
3581
Մինքենդ
Հոչանց
(Ղոչազ)
Բերձոր
(Լաչին)
Որոտան
Անգեղակոթ
Իշխանասար լ.
3550
Խնածախ
Տեղ

Քարվաճառի ազատագրման ժամանակ հակառակորդի օդուժն անկարող եղավ աջակցել իր անկանոն փախչող զորքերին, իսկ ապրիլի 2-ին կորցրեց զորքերի Լաչին-քելբաջարյան խմբավորման հրամանատարությանը տեղափոխող գերբեռնված ուղղաթիռը: Ապրիլի 2-ին գրավվեց կենտրոնական՝ Քարվաճառը Գանձակին (Գյանջա) կապող ճանապարհի խաչմերուկը, իսկ երեք օր անց հայկական ուժերն արդեն դիրքավորվում էին Օմարի լեռնանցքում: Խուճապահար դեպի Գանձակ փախչող բանակը մեծաքանակ ռազմավար թողեց՝ հրթիռահրետանային կայանքներ, հրետանային սարքեր ու սպառազինություն, կապի միջոցներ:

Ամփոփում

Քարվաճառի ազատագրման արդյունքում բացվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետությանը կապող երկրորդ ցամաքային ճանապարհը, վերացավ երկար սահման ունեցող Վարդենիսին սպառնացող վտանգը: Վերացավ նաև հակառակորդի Լաչին-քելբաջարյան, միրբաշիրյան ու աղդամյան զորախմբերի համաձայնեցված գործողությունների հնարավորությունը, ինչի շնորհիվ երեք ուղղություններից համաժամանակյա հարձակման արդյունքում հակառակորդը 1992-ի ամռանը կարողացավ տիրանալ Մարտակերտի տարածքի մեծ մասին և սպառնալ ԼՂՀ մայրաքաղաքին:

Քարվաճառի ազատագրման շնորհիվ ապահով դարձան Արցախի հյուսիսարևմտյան սահմանները՝ ԻՊՈ-ի հրամանատարությանը թույլ տալով այս հատվածում ազատված ուժերը նետել ճակատի մյուս հատվածներ, իսկ ամռանը փայլուն իրականացնել Մարտակերտ քաղաքի ազատագրման ու Աղդամի կրակակետերի ոչնչացման խոշոր գործողությունները:

ՄԱՐՏԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ
(1993Թ. ՀՈՒՆԻՍԻ 27)

Մարտակերտ քաղաքի ազատագրումը Քարվաճառին հաջորդած մյուս խոշոր գործողությունն էր: Դա նաև ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի իրականացրած հրետանային ամենամեծ օպերացիան էր, որին նախորդել էր նախապատրաստական մեծ աշխատանք: Մասնավորապես, հարձակման նախօրեին բոլոր կրակակետերը նշանափորձված էին: Պաշտպանական շրջանն ուժեղացվել էր կենտրոնական ենթակայության խառը հրետանային դիվիզիոններով, «Դ-20»-ի երկու և համազարկային կրակի «ԲՄ-21» («Գրադ») կայանքների մեկ մարտկոցներով:

Իսկ ՀՏ «Ֆագոտ» ռեակտիվ կայանքներն ու Տ-12 հրանոթներն ապահովում էին հարձակման հակատանկային պաշտպանությունը: Հունիսի 13-ին սկսված գործողության ընթացքում Մարտակերտի պաշտպանական շրջանն ուժեղացվել էր Ասկերանի, Մարտունու, Կենտրոնական պաշտպանական շրջանների, Շուշիի գնդի, կենտրոնական ենթակայության ստորաբաժանումներով և հայաստանյան կամավորական ջոկատներով:

100 մմ տրամաչափի հակատանկային S-12 և դրանց կատարելագործումից հետո՝ 1970թ. սպառազինության վերցված ՄՏ-12 թնդանոթները ԽՍՀՄ ԶՈՒ հակատանկային սպառազինության կարևոր մասն էին կազմում:

Ապատեղեկատվական գործողություն

ԼՂՀ ՊԲ հրետանու պետ, հրետանու պաշտոնաթող գեներալ-մայոր Գեորգի Գասպարյանի ղեկավարությամբ բաց տեքստով խոշոր ռադիոխաղ անցկացվեց, իբր թե ողջ հրետանին շտապ տեղափոխվում է Հադրութ: Սկսվելով երեկոյան ժամը 17.00-ին՝ այն ավարտվեց գործողությունից մեկ ժամ առաջ: Իսկ Պաշտպանության բանակի կապավորները մեկ շաբաթում գտել էին հակառակորդի հրետանու ռադիոկապի բոլոր հաճախականությունները, և հարձակման ժամանակ ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի մարտիկներից Գրիգորի Անդրյանը, մտնելով նրանց ռադիոեթեր, մաքուր ադրբեջաներենով հաղորդելով կոորդինատները, հրետանուն կարգադրեց կրակել... յուրայինների վրա, ինչի հետևանքները մեծ շփոթ ու խուճապ առաջացրին:

Իսկ ականանետային դիվիզիոնի հրամանատար, մայոր Սուրեն Անտոնյանն[1] ականանետային երկու մարտկոց գաղտնի դիրքավորեց հեռուստաաշտարակի շրջանում, հետևակից շուրջ երկու կիլոմետր առաջ և լավ քողարկվելով ու հանդես բերելով բացառիկ ինքնատիրապետում, մինչ անհրաժեշտ պահը՝ հաջորդ կեսօր, իր տեղը չմատնեց: Հակառակորդի միրբաշիրյան զորախմբի փոխհամագործակցությունն Աղդամում տեղակայված զորքերի հետ չեզոքացնելու նպատակով պայթեցվեց Քենգեռլի գյուղի մերձակայքում գտնվող կամուրջը, որը մեծ դժվարություններ ստեղծեց այդ ուղղությամբ գործող թշնամական ուժերի հետագա գործողությունների համար:

---

[1] Զոհվել է 1994թ. մարտի 18-ին, Օմարի ճակատում հրետանային հետախուզության ժամանակ:

Քարտեզ 1


ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԳՅՈՒՂԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1993Թ.)
Թալիշ
Տրտու (Թարթառ)
Մատաղիս
Տոնաշեն
Լևոնարխ
Հակոբ Կամարի
Կարմիրավան
Մաղավուզ
Ջրաբերդ
Մինգրելսկ
Յարմջա
Մեծշեն
Մոխրաթաղ
Մարտակերտ
Սարսանգի ջրամբար
Կուսապատ
Ներքին Հոռաթաղ
Գյուլիջա
Գյուլաթաղ
Փափրավենդ
Սալախլի Քենգերլի
Մեհմանա
Ջանյաթաղ
Խաչենագետ
Ջլդրան
Կզլլ Քենգերլի
Գյոյթեփե
Սրխավենդ

Հաղթանակը

Խաչենագետից մինչև Մաղավուզ ձգվող ճակատում և հատկապես քաղաքը երիզող բարձունքներում հակառակորդն ականադաշտերով ու արգելափակոցներով հագեցած բազմաէշելոն պաշտպանություն էր ստեղծել: Սակայն դա չխանգարեց, որպեսզի հայկական ուժերը քայլ առ քայլ նվաճեին նախատեսված բնագծերը և հունիսի 26-ին հասնեին ազատագրված Հակոբ Կամարիից մինչև հեռուստաաշտարակ ձգվող բնագծին:

Իսկ հաջորդ օրը վաղ առավոտյան հետևակը երկու հիմնական ուղղություններով սկսեց հարձակումը, որի հրետանային նախապատրաստությունը տևեց 45 րոպե (տե՛ս քարտեզ 1): Լուսավորող արկեր չկային, ու հրետանավորները կողմնորոշվում էին պայթյունների առկայծումով: Կենտրոնական պաշտպանական շրջանի ստորաբաժանումները գրոհեցին Պուշկի յալն ու Փափրավենդը, Մարտակերտի գունդն առաջացավ Գեղագբուրունի ուղղությամբ, իսկ երբ Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանության կազմակերպիչներից Վլադիմիր Բալայանի[1] ջոկատի մարտիկները հասան շրջկենտրոնի վերին մասը, թաքստոցում դիրքավորված մարտկոցները նրանց աջակցեցին ականանետային կրակով: Գումարտակի զոհված հրամանատար Մերուժան Մոսիյանի մարտիկներն էլ Լեոնարխի ձախ մասում հարձակվողների թիկունքը պաշտպանում էին ճեղքումից: Ավելի ձախ «Եղնիկներն» էին՝ գրավյալ Շահումյանի շրջանում պարտիզանական պայքար ծավալած մարտիկները Սերգեյ Չալյանի հրամանատարությամբ, որոնք հրետանային կրակի աջակցությամբ հասան Մատաղիս: Մինչև կեսօր ազատագրվեց Մաղավուզի քարհանքերի ձախ մասը, ապա «խոսեցին» ականանետները՝ ապահովելով հետագա հարձակումը: Հրետանին կրակի գիծն ընդամենը 100 մետր առաջ պահելով՝ աջակցում էր հարձակվող հետևակին:

ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի հրետանին կրակով ապահովեց երեք գնդի ու մի քանի առանձին գումարտակների հարձակումը մեծ ճակատում, տարբեր ժամանակներում իրականացվող և բավական բարդ գործողության ընթացքում: Դա առաջին նման խոշոր գործողությունն էր, որի ընթացքում փայլուն համագործակցություն իրականացվեց հրետանու, մյուս զորատեսակների և մեծաթիվ հետևակի միջև զանազան ուղղություններում: Քաղաքը երիզող ռազմավարական նշանակության բարձունքները երեկոյան լրիվ ազատագրված էին:

1993 թվականին հակառակորդը Մարտակերտի ճակատում չորս ռազմական ինքնաթիռ ու մեկ ուղղաթիռ էր կորցրել: Հունիսի 27-ին ադրբեջանական օդուժը չկարողացավ լուրջ օդային աջակցություն ցույց տալ իր զորքերին, որոնք, չկարողանալով դիմակայել մի քանի ուղղություններից սրընթաց զարգացող հարձակմանը, նահանջեցին: Մարտակերտ շրջկենտրոնը երիզող բարձունքների՝ Պուշկի յալի ու հեռուստաաշտարակի ազատագրումով քաղաքի մեծ մասը

---

[1] Զոհվել է 1992թ. հունիսի 9-ին, Չայլու գյուղի պաշտպանության մարտերում:

Գեներալ-մայոր Սերգեյ Չալյան

Մարտակերտի ազատագրման մարտերում զոհված հերոսների թվում էր «Խաչակիրներ» ջոկատի հրամանատար Կարո Քեհքեջյանը (1962-1993թթ.)

հայտնվեց արցախյան ուժերի վերահսկողության գոտում, իսկ մյուս մասը մնաց հակառակորդի տնօրինության ներքո: Ադրբեջանցիները Մարտակերտ քաղաքի մատույցներում հսկայական ռազմավար թողեցին, իսկ նրանց պաշտպանական ամրությունների զգալի մասը հողին էր հավասարվել: Հուլիսի 1-ին հարձակման ընդհանուր շրջագծում ազատագրվեց նաև Լեռնարխը:

Ամփոփում

Ադրբեջանցիների հարձակման փորձերը Ներքին Հոռաթաղի ուղղությամբ վերջանում էին նրանց կողմից զրահատեխնիկայի ու կենդանի ուժի մեծ կորուստներով: Ադրբեջանական հրամանատարության ռազմական «տաղանդի փայլատակում» կարելի է համարել քաղաքային այգու ու կարուսելի ականապատումը: Դրանք վնասազերծվեցին մեր սակրավորների կողմից, երբ 1994 թվականի ապրիլին քաղաքի լիակատար ազատագրումից հետո բնակչությունը սկսեց վերադառնալ: Հատկանշական է, որ ԻՊՈ սակրավորները 1992-ի ծանր ամռանը նահանջելիս՝ քաղաքում ականներ չէին տեղադրել, որովհետև հավատում էին Մարտակերտի լիակատար ազատագրմանը:

Մարտակերտ քաղաքի դիրքն այնպիսին էր, որ կա՛մ հակառակորդը պետք է այն վերստին հետ գրավեր, կա՛մ էլ առջևում գտնվող հակառակորդի կրակակետի լռեցմամբ ճակատի գիծը պետք է առաջ գնար: Իրականացավ վերջինը, և շրջկենտրոնի ազատագրումը բացեց Արցախի զինված ուժերի ճանապարհը՝ մարտական գործողություններ իրականացնելու նաև հարթավայրում և լռեցնելու Աղդամի կրակակետերը:

ԱՂԴԱՄԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Շուշիի ազատագրումից հետո Ստեփանակերտն ավերելու դերակատարությունը փոխանցվեց Աղդամին, որտեղից խփում էին 152 մմ հեռահար հրանոթներով՝ միաժամանակ փորձելով ճեղքել Ասկերանի ուղղության պաշտպանությունը և ուղիղ գծով մտնել Ստեփանակերտ: Շուշիից հետո գերխնդիր դարձավ Աղդամը:

Գործողության նախապատրաստումը

Սա համաբանակային գործողություն էր. աշխարհագրորեն, Հադրութից բացի, ԼՂՀ բոլոր շրջանները սահմանակից էին Աղդամին, և բոլոր պաշտպանական շրջաններն էլ մասնակցեցին նրա ազատագրմանը:

1993-ի ամռանը ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերը մի քանի ուղղություններով սկսեցին Աղդամը շրջապատող հենակետերի լռեցման լայնածավալ գործողությունը: Հակառակորդը քաղաքի մատույցները չէր ականապատել՝ մինչև վերջին պահը հուսալով, թե ի՛նքն է անցնելու հարձակման:

Ընդհանուր հարձակմանը դիրքային իրավիճակի բարելավման դժվարին գործողություններ նախորդեցին, որոնցից հիշատակելի են հատկապես Աղդամ-Մարտակերտ սահմանագծում մղված հաջող մարտերը և կարևոր բարձունքների գրավումը: Այդ մարտերում էլ, Մարզիլլու հենակետը ոչնչացնելիս, հունիսի 12-ին զոհվեց Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատար, փոխգնդապետ Մոնթե Մելքոնյանը:

Հուլիսի 20-ին ազատագրվեց Փոլադլուն, որը ճանապարհային կարևոր հանգույց էր: Հակառակորդը չէր հաշտվում Աղդամի կորստի հետ, ինչի վկայությունը Շելլիի մարտերն էին, ուր մեր ականները թշնամուն նաև զրահատեխնիկայի կորուստներ պատճառեցին:

«Ուղտի մեջք» կոչվող բարձունքի հետևից հակառակորդը հրետակոծում էր Ստեփանակերտը: Ինքնապաշտպանության ուժերի հրետանավորները պատասխանում էին, քաղաքին ու զորքերին մեծ վնաս հասցրին, բայց անհնար էր որոշել նրանց կայանքների տեղակայման ճշգրիտ վայրը: Աղդամի գրավման հրետանային ապահովումը դժվարին աշխատանք էր. հրետանավորները շուրջ մեկ ամիս հետախուզություն էին իրականացնում:

Հրետանու զգալի մասը դեռ Մարտակերտում էր, և հրետանավորները կարողացան այդ կայանքները Կիչանում այնպես տեղաբաշխել, որ կարողանային և՛ հարվածել Աղդամին, և՛ դիմագրավել նաև Մարտակերտից հնարավոր հարձակմանը:

Աղդամի ազատագրման ժամանակ մեծաքանակ հրետանի էր կենտրոնացվել, ու պատերազմի ընթացքում հրետանային ամենազանգվածային կրակը վարվեց: Դա բարդագույն գործողություն էր, եղած հրթիռահրետանային կայանքներն առավել քան քիչ էին նման ընդգրկման գործողության համար, ու կենտրոնական ենթակայության ողջ հրետանին հնարավորինս մոտեցվել էր առաջին գծին:

Քանի որ մարտական գործողությունների գոտին մոտ էր Ստեփանակերտին, հրամանատարաշտաբային մեքենաները չմեկնեցին ճակատ ու հարձակումը կապի կենտրոնական հանգույցից ղեկավարվեց: Համագործակցությունը վաղուց մշակված էր, հրամանատարները գիտեին բոլոր հաճախականությունները և անխափան գործող կապ ունեին իրենց զորքերի, կապի կենտրոնական հանգույցի ու մյուս զորամասերի հրամանատարների հետ:

Ազատագրումը

Գեներալ-գնդապետ Սեյրան Օհանյան

Թշնամուն մոլորեցնելու համար սակրավորները սկզբում պայթեցրին Մարաղայի մոտի կամուրջը, իսկ երբ հարձակումը զարգանում էր, անցնելով լրիվ չազատագրված ու կրակի տակ գտնվող տարածքով՝ պայթեցրին Աղդամ-Մարտակերտ կամուրջը, որպեսզի Միր Բաշիրից հասնելիք օգնությունը դանդաղեր և բնակչությունն ու զորքը խուճապի մատնվեին: Իսկ Աղդամն ու Մարտունին միմյանց կապող կամուրջը դիմադրության վերջին պահերին հակառակորդն էր փորձել պայթեցնել, բայց համընդհանուր խուճապի պայմաններում չէր կարողացել:

Տեղեկանք. «Համաձայն ռադիոհետախուզությունից ստացված տվյալների՝ թշնամու առաջնային գծի երկարությամբ պաշտպանություն են իրականացնում շրջանում կենտրոնացած Գյանջայի գնդի ստորաբաժանումները, 836-րդ մոտոհրաձգային գումարտակը, Աղդամի ինքնապաշտպանական գումարտակը, 1-ին բանակային կորպուսը՝ ուժեղացված հրետանային միջոցներով, տանկային վաշտը, հրետանային դիվիզիոնը և հրթիռահրետանային մարտկոցը: Հայտնի էր նաև ուժերի և միջոցների դասավորությունն ըստ տեղակայման վայրի և քանակի»:

Ս.Հասրաթյան, «Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում»

Առաջնահերթ խնդիրն «Ուղտի մեջքի» գրավումն էր. առանց դրա անհնար էր գրավել Աղդամը: Սկզբում ազատագրվեց Շորբուլաղի բարձունքը, ապա աջ կողմում զարգացնելով հարձակումը և դիմելով թևանցման՝ Ինքնապաշտպանության ուժերը սկսեցին շրջապատել հակառակորդին:

Աղդամի ազատագրման ժամանակ կապի ապահովման հետ կապված որևէ խնդիր չեղավ: Կապի կենտրոնական հանգույցում կապավորները երկու օր, առանց գեթ մի պահ հանգստանալու, մի քանի ռադիոկայանքներով աշխատելով և իրավիճակի ամեն մի փոփոխություն դիմացները փռված քարտեզներին փոխանցելով՝ փայլուն կատարեցին իրենց առաջադրանքը: Իսկ Արթուր Փափազյանը, ինչպես միշտ, գրոհի տարբեր ուղղություններում էր: Կապի ռեժիմի

պահպանման և խոսակցական աղյուսակների կիրառման միջոցով հաջողվեց լրիվ ապահովել կապի գաղտնիությունը: Քարտեզների թվային տվյալները նախապես ծածկագրել էին, ինչը թույլ էր տալիս մարտի ժամանակ բաց տեքստով խոսել. միևնույն է, հակառակորդը ոչինչ չէր հասկանում:

Այս գործողությունը նաև վկայեց, որ և՛ պլանավորման ու կրակի կառավարման, և՛ կրակային խոցման ասպարեզներում, կենտրոնական ենթակայության հրետանուց զատ, բարձր մակարդակի է հասել նաև Ինքնապաշտպանության ուժերի ողջ գնդային հրետանին:

Հաղթանակը

152 մմ հրանոթների կրակից քաղաքում մեծ հրդեհ բռնկվեց, որը երեք-չորս օր չէր մարում: Մարտիկները հետո միայն հասկացան, որ վառվում էր Աղդամը սնուցող հիմնական գազամուղը:

Աղդամը փռված է հարթ տարածքում, ու պարզ երևում էր, թե որ արկն ու հրթիռն ուր ընկան և որ ստորաբաժանումն ուր է հասել, ինչը հեշտացնում էր մարտի ղեկավարումը:

Հակառակորդը փորձեց օդից աջակցել քաղաքի պաշտպանությանը, բայց ապարդյուն: Աղդամի ազատագրման գործողության հակաօդային պաշտպանությունն իրականացնում էին երեք «ՕՍԱ-ՕԿ» մարտական մեքենաներ, որոնք այնպես էին տեղակայվել, որ գործողության շրջագծերը՝ «օղակները», միմ-

152 մմ տրամաչափի Դ-20 թնդանոթ-հաուբից:

յանց մեջ էին: Մարտակերտի կողմից հուլիսի 21-ին թռիչք կատարած ինքնաթիռին հայտնաբերեց մի կայանքը, ու նրա «օղակից» դեռ դուրս չեկած՝ մյուս կայանքը խփեց: Իսկ հաջորդ օրը նույն հաշվարկը նույն հատվածում թշնամու ուղղաթիռ ոչնչացրեց:

Աղդամը գրավված էր, և հարձակումից 15 օր անց ավարտվեց պաշտպանական բնագծերի կազմավորումը:

Աղդամում խորհրդային ժամանակներում ինժեներական զորամաս էր տեղակայված, որի պահեստներում եղածը հակառակորդը որքան էլ ծախսել, բայց դեռ բավական սպառազինություն ու զինամթերք մնացել էր: Հակառակորդը նույնիսկ շարժվող ինժեներական տեխնիկան չէր հասցրել տանել: Վերցվեցին նաև տանկի բազայի վրա տեղադրված տրալներ (ականազերծող մեքենաներ), որոնք հաջողությամբ կիրառվեցին Մարտակերտի ճակատում:

«ՕՍԱ-ՕԿ» ինքնագնաց զենիթահրթիռային համալիր (մինչև 10 կմ)

ԱՐՑԱԽԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

(1993Թ.)

Աղդամը կորցնելուց հետո, վերախմբավորելով ուժերը, ադրբեջանցիները ԼՂՀ հարավում փորձեցին դիմել վճռական գործողությունների, սակայն Ինքնապաշտպանության ուժերը նրանց կանխող հարված հասցրին: Արդեն օգոստոսին Լաչինի միջանցքի հարավային թևում և Արցախի հարավում ԼՂՀ Ինքնապաշտպանական ուժերն ու ՀՀ կամավորական ջոկատները գնացին առաջ՝ ոչնչացնելու Լաչինի միջանցքին, Սյունիքին ու ԼՂՀ հարավին սպառնացող թշնամական հենակետերը (տե՛ս քարտեզ 1):

Քարտեզ 1


ՍՐՑԱԽԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1993Թ. ՀՈՒԼԻՍ-ՀՈԿՏԵՄԲԵՐ)
Ս. Քիրս Լ.
2725
Չանգախչի
(Ակեռոտամցոց)
Մեծ Թաղլար
Գոշավանք
Սարիտակաշեն
Դիհ Թաղլար
Դուլաբ
Հաղբատ
Դահ-Թուլաբ
Հագարու
Ողոտան
Սանոյան
Շեխեր
Մազիկաշեն
Ազոխ
Տող
Ֆիզուլի
Քարվենդ
Կարախանբեյլի
Յուխարի Սեյիդահմեդլի
Յուխարի Աբդուռահմանլի
Կարգաբազար
Քյուրդյան
Աշաղի Աբդուռահմանլի
Հորադիզ
Հորադիզ
Նուզգեր
Ոստան
Ղարաբաղ
Ղարաբաղ
Ֆարաջ
Ֆարաջ
Ֆարաջ

Ծավալվեցին ծանր մարտական գործողություններ դժվարհաղթահարելի տեղանքում, ուր հակառակորդը լուրջ դիմադրություն էր ցուցաբերում: Օգոստոսի 15-ին Կենտրոնական և 1-ին պաշտպանական շրջանի ստորաբաժանումներն ազատագրեցին Ցորը, ապա Բանազուրն ու Առաքյուլը, ինչից հետո մարտական գործողությունները տեղափոխվեցին Ֆիզուլի-Ջաբրայիլ-Ղուբաթլու հատված: Քայլ առ քայլ ազատագրելով 1991-ին բռնազավթված գյուղերն ու ոչնչացնելով շրջանին սպառնացող հենակետերը՝ Մանվել Գրիգորյանի ղեկավարած 5-րդ կամավորական բրիգադի ստորաբաժանումները, Ֆիզուլին շրջանցելով հյուսիսից, արևմուտքից և հարավից, հայտնվեցին քաղաքի թիկունքում: Ֆիզուլին օղակի մեջ էր, միայն նահանջի ճանապարհն էր բաց թողնվել:

Գեներալ-լեյտենանտ
Մանվել Գրիգորյան

Ազատագրումը

Ղուբաթլուի ուղղությունում հակառակորդը թեև հզոր պաշտպանական բնագծեր ուներ, սակայն դիմեց նահանջի: Լաչինի միջանցքի ուղղությունից առաջ շարժվող զորքերը, ոչնչացնելով դիմադրության օջախները, շուտով գրավեցին Կուրբանթեփեի լավ ամրացված բնագծերն ու առժամանակ դիրքավորվեցին այստեղ, իսկ մյուս ուղղությունում մեր ուժերը, շարունակելով զարգացնել հարձակումը, մոտեցան հիմնական ավտոճանապարհին ու Բաշարաթին, ուր հակառակորդը լուրջ դիմադրություն ցույց տվեց: Սակայն հրետանային հզոր աջակցության շնորհիվ այս հենակետն ի վերջո նույնպես ազատագրվեց:

Հարավային ռազմաճակատի ողջ երկայնքով խուճապահար նահանջող ադրբեջանական զորքերին օդային աջակցություն ցուցաբերելու հակառակորդի փորձն ավարտվեց անհաջողությամբ. օգոստոսի 16-ին և 17-ին ոչնչացվեցին Ադրբեջանի ռազմաօդային ուժերի երկու ինքնաթիռներ:

Տեղեկանք. «Օգոստոսի 22-ին 1-ին և 2-րդ պաշտպանական շրջանների ստորաբաժանումների ճնշման ներքո ադրբեջանական 160-րդ գնդի, 702-րդ մեխանիզացված բրիգադի և Ադրբեջանի այլ տարածքներից այստեղ տեղափոխված թարմ ստորաբաժանումները հարկադրված էին թողնել Ֆիզուլի քաղաքը և շուրջ 1380 քառակուսի կիլոմետր տարածք ունեցող համանուն շրջանը: Հարձակողական մարտերը հաջողությամբ էին ընթանում նաև Ջաբրայիլի ուղղությամբ... Օգոստոսի 23-ին ղարաբաղյան զորքերը մտան Լենքորանի գումարտակի կողմից պաշտպանվող Ջաբրայիլ շրջկենտրոն, իսկ երկու օր հետո հայկական ուժերի վերահսկողության տակ ընկավ 1050 քառակուսի կիլոմետր մակերես ունեցող համանուն շրջանի տարածքը»:

Ս.Հասրաթյան, «Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում»

Ֆիզուլու և Ջաբրայիլի անկումից հետո 1-ին և 2-րդ պաշտպանական շրջանների ստորաբաժանումները հարձակումը զարգացրին Ղուբաթլուի ուղղությամբ: Շրջկենտրոնը շրջապատված էր, բայց բնակչության նահանջն ապահովելու համար ԻՊՈՒ հրամանատարությունը ստիպված էր երկու օրով կանգնեցնել հարձակումը, և շրջկենտրոնն ազատագրվեց օգոստոսի 31-ին: Ռազմավարական նշանակության հենակետի կորստյան դիմաց հակառակորդն անզորությունից վերստին փորձեց վրեժխնդիր լինել խաղաղ բնակչությունից, սակայն թանկ գին վճարեց. ԻՊՈՒ հակաօդային պաշտպանության ստորաբաժանումները Ստեփանակերտի երկնքում ոչնչացրին թշնամական մեկ ռմբակոծիչ, իսկ Մարտակերտի ճակատում՝ մեկ ուղղաթիռ: Օգոստոսյան հաղթանակների արդյունքում սեպտեմբերի սկզբին հայկական ուժերի դիրքերը որոշ հատվածներում ընդամենը 4-5 կիլոմետր էին հեռու Արաքսից:

Ղուբաթլուի անկումից հետո Ադրբեջանի և ԼՂՀ-ի միջև կնքվեց կրակի դադարեցման մասին համաձայնագիր, և պայմանավորվածություն ձեռք բերվեց մինչև սեպտեմբերի 10-ը երկու ղեկավարների հանդիպման վերաբերյալ: Դրա արդյունքը լոկ կարճատև հրադադարը եղավ:

Փորձելով տիրել նախաձեռնությանը՝ հոկտեմբերի 10-ին Ադրբեջանը հարձակում ձեռնարկեց Հադրութի պաշտպանական շրջանի դիրքերի, մասնավորապես՝ Կույջակ և Սաֆարշա բնակավայրերի ուղղությամբ (տե՛ս քարտեզ 1): Սակայն նույն օրն իսկ նախաձեռնությունն անցավ հայկական ուժերին, որոնք գրավեցին այդ հենակետերը, իսկ երկու օր անց՝ Նուզգյարն ու Շեյբեյը, և շարունակեցին զարգացնել հարձակումը: Հոկտեմբերի 24-ին Ինքնապաշտպանության ուժերը, մի քանի ուղղություններով զարգացնելով առաջխաղացումը, ճնշեցին հակառակորդի ամենախոշոր և կարևոր հենակետերից մեկը՝ Հորադիսի երկաթուղային հանգույցը: Վերջինս հարավային ռազմաճակատում թշնամու բանակը սնուցող հիմնական ուղին էր:

Հաղթանակը

Մեր ուժերի գործողությունների արդյունքում Զանգելանի, Զաբրայիլի և Ղուբաթլուի դեռևս չազատագրված տարածքներում գտնվող ադրբեջանական զորքերը հայտնվեցին շրջափակման օղակի մեջ: Իսկ նոյեմբերի 1-ին ազատագրվեցին Զանգելան շրջկենտրոնն ու հարակից հենակետերը. ադրբեջանական բարոյալքված բանակը Զանգելանում և Մինջևանում այլևս անկարող էր լուրջ դիմադրություն ցուցաբերել: Փախչելով՝ հակառակորդը միայն Մինջևանում 14 վագոն զենք-զինամթերք թողեց: Իսկ նախօրեին ԻՊՈՒ ՀՕՊ ստորաբաժանումները «Իգլա» զենիթահրթիռային դյուրակիր համալիրով Զանգելանի հատվածում ոչնչացրին հակառակորդի ևս մեկ ռազմական ուղղաթիռ:

Արցախի հարավարևելյան սահմաններին սպառնացող հենակետերի ազատագրման ժամանակ զորամասային օղակի կապավորները, համագործակցելով միմյանց հետ, կարողացան փայլուն իրականացնել կապի ապահովումը: Իսկ տարածքների ազատագրումից հետո կապավորները ձեռնամուխ եղան մեկ այլ գործողության. դեռ խորհրդային ժամանակներից Ֆիզուլիից Կապան ձգվող ստորգետնյա խոշոր կապուղի կար, որը հակառակորդը վնասել էր: Այն արագ գտնվեց, նորոգվեց, և այդպիսով ապահովվեց ուղիղ կապ Սյունիքի և ազատագրված տարածքների պաշտպանությունն իրականացնող զորամասերի հետ:

9Կ39 «Իգլա» դյուրակիր զենիթահրթիռային համալիրը մեր օրերում էլ ՑԶ ՀՕՊ արդյունավետ միջոց է համարվում: Մասնավորապես, դրանցով են սպառազինվում ՀՀ ԶՈՒ մոտոհրաձգային ստորաբաժանումները:

Հայկական ուժերի ամառային-աշնանային փայլուն հաղթանակների արդյունքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շուրջ ձևավորվեց անվտանգության գոտին, և մինչև դեկտեմբերի երկրորդ կեսը հաստատվեց հարաբերական խաղաղություն: Այն ընդմիջվեց միայն նոյեմբերի վերջին, երբ Սիսիանի կամավորները ծանր մարտերի արդյունքում ոչնչացրին Խուդաֆերինի կամրջի մերձակա բարձունքներում գտնվող հակառակորդի վերջին հենակետը:

Ամփոփում

Այսպիսով, ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի և ՀՀ Ձինուժի ու կամավորական ջոկատների՝ օգոստոսին սկսած հաղթարշավով ոչ միայն ազատագրվեցին դեռ 1991-ին տխրահռչակ «Օղակ» գործողության ընթացքում հայաթափված գյուղերը, այլև լրիվ ոչնչացվեցին Սյունիքում Գորիսի, Կապանի, Մեղրու, իսկ ԼՂՀ-ում՝ Հադրութի և Մարտունու շրջանների բնակավայրերին սպառնացող թշնամական հենակետերը:

ՕՄԱՐԻ ԼԵՌՆԱՆՑՔԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ
(1994Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18)

1993թվականի վերջին օրերին հակառակորդը ճեղքեց Քելբաջարի պաշտպանական բնագիծը և Օմարի լեռնանցքով իջավ ներքև: Դեկտեմբերի 28-ի ողջ գիշերը թշնամու հրետանին խփում էր լեռնանցքին՝ արգելելու համար օգնական ուժերի մուտքը: Հրթիռային զորքերի և հրետանու պետ Վլադիմիր Հայրապետյանն անձամբ կազմակերպեց զառիվեր ու ձյունածածկ ոլորաններով ծանր հրանոթների տեղափոխումն ու տեղակայումը, նահանջի ժամանակ չեզոք գոտում մնացած կայանքների դուրսբերումը: Արդյունքում՝ ոչ մի հրետանային կայանք չմնաց հակառակորդին:

Ճեղքված ճակատի կայունացումը

Գեներալ-գնդապետ
Յուրի Խաչատուրով

Գեներալ-մայոր
Վիտալի Բալասանյան

Շուտով գերված հետախույզի քարտեզը վկայեց, որ հակառակորդը մտադիր էր հարձակումը զարգացնել Վարդենիսի և Մարտակերտի ուղղություններով: Ձևավորվեց միասնական հրամանատարություն (զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Հրաչ Անդրեասյան, Յուրի Խաչատուրով[1], Ֆելիքս Գզողյան, Ասկերանի պաշտպանական շրջանի հրամանատար Վիտալի Բալասանյան):

Պաշտպանության բանակի հրամանատարությունը հյուսիսային ռազմաճակատի պաշտպանությունն ամրապնդեց Մարտունու, Ասկերանի, Մարտակերտի ու Կենտրոնական պաշտպանական շրջանների, ինչպես նաև 71-րդ ու 54-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակների հարվածային ստորաբաժանումներով: Հստակեցվեցին բոլոր ստորաբաժանումների խնդիրները: Հունվարի 24-ին Քելբաջար-Մարտակերտ-Թարթառ ճանապահի խաչմերուկի մոտ ադրբեջանական զորքերի հարձակումը կանգնեցվեց, և իրավիճակը կայունացավ: Անցնելով ամուր պաշտպանության՝ հայկական ուժերը սկսեցին նախապատրաստվել առաջիկա հակահարձակմանը:

---

[1] Ներկայումս ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ:

Գեներալ-մայոր
Ֆելիքս Գզոյան

Հունվարին հակառակորդի հարձակումն ուղեկցվում էր օդային հոգեբանական գրոհներով. նրանց օդաչուները մի քանի հարյուր մետր բարձրության վրա մեծ արագությամբ թռչելով՝ ցուցադրաբար մոտենում էին խոցման գոտուն, բայց հայկական ՀՕՊ ստորաբաժանումների գրագետ գործողությունների արդյունքում չհամարձակվեցին ռմբահարվածներ հասցնել հայկական դիրքերին:

Իսկ հայկական ուղղաթիռային ավիացիայի օդաչուների համար ամենադժվարն այս ուղղությունն էր: Տեղանքը շատ բարձր էր, բնակլիմայական պայմանները՝ բարդ, թռչում էին ծովի մակերևույթից 2800 մետր բարձրություն ունեցող լեռնագագաթի վրայով, ապա իջնում մինչև 1400-1500 մետր: Սակայն մեր օդաչուներն օրը մի քանի թռիչք էին կատարում, անձնակազմ, զինամթերք ու սնունդ տանում, դուրս բերում վիրավորներին:

Հակահարձակումը

Ռադիոկապով հակառակորդի խոսակցություններից հետևում էր, որ լեռնային՝ գրեթե 30 աստիճան սառնամանիքի պայմաններում ադրբեջանցիները հյուծված, գրեթե բարոյալքված վիճակում էին: ՊԲ հրետանու կապի պետ Ալիկ Ալեքսանյանի նախաձեռնությամբ ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցներով խլացրել էին հակառակորդի բոլոր կայանքները: Ավելին, Ալեքսանյանը ռադիոյով հակառակորդի համար ընթերցեց ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատարության ուղերձը, ուր մանրամասն ներկայացվեց այն ծանր իրադրությունը, որում հայտնվել էր ադրբեջանական կողմը: Այս փայլուն տեղեկատվական-հոգեբանական գործողությունն էապես խորացրեց ադրբեջանական զորքերի բարոյալքումը:

Հակահարձակման համար ձևավորվեցին զորքերի հարավային և արևմտյան խմբավորումներն իրենց հրետանային ստորաբաժանումներով, հստակեցվեցին նրանց խնդիրները, համագործակցություն մշակվեց հետևակային հրամանատարների հետ:

Հակահարձակման նախօրեին հայկական հակաօդային պաշտպանությունը ձախողեց ադրբեջանական օդուժի փորձը՝ ոչնչացնելու զինամթերք ու վառե-

լիք բերող խոշոր շարասյունը: Իսկ փետրվարի 17-ին, երբ լեռնանցքի գրոհը սկսվել էր, Վարդենիսի սահմաններում խոցվեց հակառակորդի «ՄԻԳ-21» ինքնաթիռը: Օմարի գործողության մեկուկես ամիսների ընթացքում ադրբեջանական զինվորական ավիացիան անկարող եղավ օդային աջակցություն ցուցաբերել իր զորքերին:

Հաղթանակը

Ադրբեջանական զորքերը, հասկանալով, որ բարձրլեռնային, ձյունածածկ ու դժվարանցանելի այդ տեղանքում կմնան հայկական զորքերի կողմից փակվող օղակում, դիմեցին անկանոն փախուստի: Երկու ուղղություններով հաջողությամբ զարգացնելով հակահարձակումը, հայկական ուժերը Յանշաղից քիչ վերև հանդիպեցին միմյանց: Փետրվարի լույս 18-ի գիշերն անընդհատ աշխատում էին 152 միլիմետրանոց «Գիացինտ», «Դ-20» հրանոթներն ու համազարկային կրակի ԲՄ-21 «Գրադ» կայանքները: Հետևակի ու հրետանավորների հստակ համագործակցության շնորհիվ հրետանու կրակը դիպուկ էր ու արդյունավետ: Հակառակորդը չէր սպասում, որ նման ուժեղ հարձակումը գիշերով էլ կշարունակվի և այն էլ՝ հրետանային նման աջակցությամբ: Գիշերը մարտիկները հասան լեռնանցք, որտեղից երևում էին ներքևում փռված Գյանջայի լույսերը, դեպի ուր խուճապահար փախչում էին ադրբեջանական ջախջախված զորքերը:

152 մմ տրամաչափի 2Ս5 «Գիացինտ» ինքնագնաց թնդանոթն Արցախյան գոյամարտի ընթացքում կիրառված ամենահեռահար հրետանային միջոցն է եղել:

Լեռնանցքի ազատագրումից հետո մեծաքանակ ռազմավար մնաց, կապի միջոցներ, հրետանային կայանքներ, անգամ լիցքավորված «Գրադ», խորհրդային ու թուրքական ականանետային մարտկոցներ, սանիտարական մեքենաներ, թուրքական արտադրության վրանային ճամբարներ, դեղորայք և երկու ավտովիրահատարաններ:

Պաշտպանության բանակի սակրավորները ճակատի գծի վերականգնումից անմիջապես հետո մեկնեցին Օմար՝ միակ ճանապարհը պայթեցնելով և այդպիսով փակելով թշնամական զրահատեխնիկայի հնարավոր հարձակման ուղին:

Ամփոփում

Օմարի լեռնանցքի և Մռավի լեռնաշղթայի մյուս իշխող բարձունքների գրավումով լեռնաշղթայից հյուսիս՝ հարթավայրում գտնվող ընդարձակ մի տարածք վերստին հայտնվեց Պաշտպանության բանակի հրետանային կրակի վերահսկողության գոտում՝ զսպելով հակառակորդին, անվտանգ դարձավ Արցախի հյուսիսը Հայաստանի Հանրապետությանը կապող ցամաքային ճանապարհը: Իսկ Մարտակերտի ճակատում 5-րդ կամավորական բրիգադի և Շահումյանի պարտիզանների համաձայնեցված գործողությունների, ինչպես նաև Տոնաշենների ու Դաստագիրի ազատագրման արդյունքում Օմարի լեռնանցքից մինչև Մարտակերտի արևելք ստեղծվեց մեկ միասնական ճակատի գիծ: Դա հնարավորություն ստեղծեց ոչնչացնելու Մատաղիսի, Թալիշի, Մարտակերտ քաղաքի մի մասը վերահսկող թշնամական հենակետերը և ազատագրելու շրջանի արևելյան մասում գտնվող մի շարք բնակավայրեր:

ՕԴԱՅԻՆ ԵՎ ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Արցախյան պատերազմի սկզբից Հայկական ավիացիան միայն մարդասիրական թռիչքներ էր կատարում: Ինչպես նշում է Ա.Չիբուխչյանն իր «Հերոսամարտի պողպատե թևերը» գրքում, «Դեպի Արցախ թռիչքներն իրականացնում էին հիմնականում «Էրեբունի» օդանավակայնի չորս-հինգ «Մի-8Տ» ուղղաթիռները, տասը-տասներկու փոքրիկ «Ան-2» և մի քանի «Յակ-40» ինքնաթիռները: 1988թ. մայիսից գյուղատնտեսական «Ան-2» ինքնաթիռները հաճախ թռչում էին նաև Գորիսից ու Սիսիանից: «Մի-8» ուղղաթիռները և «Յակ-40» ինքնաթիռները հասցնում էին օրական մի քանի թռիչք կատարել (ընդհանուր՝ օրական մի քանի տասնյակ թռիչք): Մեկ անգամ չէ, որ քաղաքացիական ուղղաթիռների վրա կրակ է բացվել և՛ գետնից, և՛ մարտական ուղղաթիռներից: Ուղղաթիռների դեմ պայքարելու համար.... Կիրովաբադի (Գանձակ, այժմ՝ Գյանջա) ավիաբազայից հատկացվել էին մի քանի «Մի-24» մարտական ուղղաթիռներ... Հակառակորդի ՀՕՊ միջոցները նրան հայկական խաղաղ ինքնաթիռների վրա կրակելու հնարավորություն էլ էին տալիս»:

Հայ օդաչուներն Արցախ էին տեղափոխում կենսական անհրաժեշտության, սակայն ոչ պատերազմական նյութեր: Արցախից տեղափոխում էին վիրավորներին, կանանց և երեխաներին: Իրավիճակը շատ լարված էր, և հայ օդաչուները հանգիստ չունեին: Միայն 1989թ. Արցախից, կրակի ու ռմբակոծության տակից դուրս են բերվել ավելի քան 5 հազար ծեր, երեխա, կին ու վիրավոր: Ուղղաթիռները բարձում էին սահմանվածից կրկնակի ավելի բեռ: Եղել է դեպք, երբ 25-30 տեղանոց «Յակ-40» ինքնաթիռը Ստեփանակերտի օդանավակայանից վերադարձել է Երևան 86 ուղևորով: Բավական է նշել, որ հայ օդաչուներն ուղղաթիռներով միայն 1990թ. կատարել են 5200 ժամ թռիչք, իսկ քաղաքացիական ավիացիայի օդաչուները տրանսպորտային նպատակներով կատարել են ավելի քան 3700 թռիչք՝ ընդհանուր 11000 թռիչքաժամով, որից 1500-ը՝ գիշերային ժամերին:

Արմատական փոփոխություններ

1992թ. հունվարից ՀՀ Պաշտպանության նախարարության կազմում ստեղծվում է Ավիացիայի և ՀՕՊ զորքերի համատեղ վարչությունը: Ինչպես ցանկացած նոր նախաձեռնություն, այնպես էլ նման նոր կառույց ստեղծելը հանդիպում էր դժվարությունների: Արտերկրից գրեթե հնարավոր չէր հայրենիք տեղափոխել ավիացիոն տեխնիկայի պահեստամասեր: Չկային բավարար և անհրաժեշտ որակավորման մասնագետներ, համապատասխան տեխնիկա և սպառազինություն, սարքավորումներ, օդանավակայաններ և այլն: Ակտիվո-

«ՄիԳ-21» կործանիչը

րեն հավաքագրվում են ավիացիայի հետ որևէ կապ ունեցող բոլոր անձինք: Արտերկրից գալիս են տասնյակ հայրենասերներ:

Երևանում տեղակայված՝ արդեն Ռուսաստանին պատկանող ուղղաթիռային առանձին էսկադրիլիան, համաձայն միջպետական համաձայնագրերի, հունիսից հանձնվում է հայկական կողմին: Հավաքագրված հայ օդաչուների երկու խմբերը, անցնելով արագացված պատրաստություն, հունիսի 17-ին Արզնիում կատարում են առաջին ուսումնական թռիչքները: Նախապատրաստական աշխատանքներում մեծ օգնություն էին ցուցաբերում քաղաքացիական ավիացիայի օդաչուները: Մի քանի օր անց, հունիսի 23-ին կատարվում է հայկական օդուժի առաջին մարտական խնդիրը: Շտապ կազմավորվում են ոչ մեծ ստորաբաժանումներ՝ մարտական և տրանսպորտային ուղղաթիռների համար: Հավաքագրված օդաչուներից ձևավորվում են առանձին անձնակազմեր: Փորձառու օդաչուներն իրենց գիտելիքներն ու փորձն էին փոխանցում երիտասարդներին: 1992թ. սեպտեմբերին հայկական մարտական ուղղաթիռները սկսում են գործել Լաչինի ուղղությամբ:

Մարդասիրական միջանցքի բացումից հետո ռազմավարական նախաձեռնությունը վերականգնելու նպատակով Ադրբեջանի ԶՈՒ հրամանատարությունը հոկտեմբերին ծրագրել էր խոշոր հարձակում միջանցքի հարավային և հյուսիսային հատվածներում: Հակառակորդի դեմ հարավային ռազմաճակատի գծում հակահարձակման անցան Հադրութի հայկական ստորաբաժանումները: Այդ մարտերում ՀՀ ԶՈՒ մարտական և տրանսպորտային-մարտական ուղղաթիռների հարվածներն ուղղվում էին մարդասիրական միջանցքին սպառնացող հակառակորդի՝ Սաֆյան, Սուզուզդագ և այլ կրակակետերին: Մի քանի հայկական ուղղաթիռներ իրենց անձնակազմերով տեղակայված էին Զանգեզուրում և մասնակցում էին նշված շրջաններում ընթացող մարտերին:

«Մի-8Տ» ուղղաթիռը

Ուղղաթիռների հաղթական մարտը

Հոկտեմբերի 8-ին հերթական անգամ հայ օդաչուները պետք է հարվածներ հասցնեին Սուզուզդագի ուղղությամբ տեղակայված հակառակորդի հզոր հենակետերին: Հարվածը նախապես պետք էր պլանավորել, անձնակազմը քիչ ժամանակ ուներ:

Առաջին մարտական ուղղաթիռի անձնակազմն էր՝ լ-տ Ս.Սամսոնյան, օպերատորը՝ լ-տ Ա.Արսենյան: Երկրորդ «Մի-24»-ը պիտի վարեին լ-տ Մ.Ավդալյանը և օպերատոր, կ-ն Ա.Մկրտչյանը: Երրորդ ուղղաթիռը վարում էին լ-տ Ա.Մկրտչյանը և օպերատոր, լ-տ Ս.Բարիկյանը: Վերջինը՝ լ-տ Ա.Մարտիրոսյանը և լ-տ Կ.Ղազարյանը: Հարվածային խմբին ուղեկցում էր «Մի-8» ուղղաթիռը՝ իր անփոխարինելի անձնակազմով՝ հրամանատար, փ-գտ Բ.Խաչատուրովը, երկրորդ օդաչու, կ-ն Ֆ.Մուրադյանը, տեխնիկ, լ-տ Ա.Աղասարյանը և գնդացրորդ, ավ. լ-տ Կ.Ավանեսյանը:

Հարվածը նախապատրաստելու համար չկային հետախուզական և սպասարկման ավանդական միջոցներ: Հայ օդաչուները նախապես օդային հետախուզություն չէին կարող կատարել: Չկային նշանակետի մանրամասն նկարագրությունը, տեղանքի մանրակերտը և այլն: Սակայն, այդ ամենով հանդերձ, պետք էր կատարել մարտական առաջադրանքը, և ոչ մեկը չէր տրտնջում: Նշված օդաչուներից մարտական ուղղաթիռների օդաչուի մասնագիտություն էր ստացել միայն քսանչորսամյա Ա.Մարտիրոսյանը: Օդաչուներից ամենամեծը տարիքով չէր հասնում 30-ի, իսկ Ա.Մկրտչյանի և Ս.Բարիկյանի տարիքը դեռ չէր բոլորել քսանը: Եվ, չնայած այս ամենին, մեր օդաչուները որոշեցին զարմացնել թշնամուն նոր հնարքով: Քանի որ հակառակորդը վարում էր ակտիվ հարձակողական գործողություններ և օգտագործում զրահատեխնիկա, որոշվեց օգտագործել հակատանկային ղեկավարվող «9 Մ 114 Շտուրմ Վ» հրթիռներ:

Վաղ առավոտյան բոլոր հինգ ուղղաթիռներն օդ բարձրացան: Ինչպես կարգն է, չորս հարվածային ուղղաթիռները բաժանվեցին երկու երկյակի: Ս.Սամսոնյանի զույգն էր Ա.Մկրտչյանը, Մ.Ավդալյանի զույգն էր Ա.Մարտիրոսյանը: Օդ բարձրանալով՝ ուղղաթիռների օդաչուներն ընդունեցին համապատասխան մարտական կարգը և ցածր բարձրության վրա, մեծ արագությամբ սուրացին դեպի հակառակորդի դիրքերը: Թռիչքի ամբողջ ընթացքում պահպանվում էր ռադիոլռություն: Նրանք սկզբից ուղղություն վերցրին դեպի հարավ-արևելք: Այդ ուղղությամբ անցան նախ Ողջի գետը, անցնելով ռազմաճակատի գիծը՝ հատեցին Հակարի գետը: Հայ օդաչուները լավ գիտեին, որ օդում հակառակորդն ունի կործանիչներ, իսկ գետնի վրա կան ՀՕՊ միջոցներ՝ սկսած գնդացիրներից մինչև զենիթահրթիռային ամենատարբեր համալիրներ: Գետը հատելիս՝ ուղղաթիռներն ուղղությունը թեքեցին դեպի հյուսիս, իսկ Ավդալյան Մկրտիչը, համաձայն իր մտահղացման, ուղղաթիռով շարունակեց խորանալ դեպի արևելք:

Քիչ անց ուղղաթիռներն առավելագույն ցածր բարձրությամբ մոտեցան նշանակետին: Հակառակորդը դեռ չէր նկատել նրանց: Բավական շատ տեխնիկա և կենդանի ուժ կար գյուղի Դահիուման բարձունքում: Առաջին ուղղաթիռը, պլանի համաձայն, արձակեց ղեկավարվող հրթիռը, իսկ հետևող ուղղաթիռները՝ չղեկավարվող «Ս-8» հրթիռները: Որոտացին առաջին պայթյունները: Հակառակորդը խուճապի է մատնվում. նրա զինվորներն այս ու այն կողմ էին վազում, գետնից անկանոն կրակ էր բացվում: Օդաչուներն անցնում էին գյուղի վրայով և առավել կարևոր նշանակետեր էին որոնում հաջորդ հարվածը հասցնելու համար: Ու հենց այդ պահին դիմացից երևում է միայնակ ուղղաթիռ՝ մոտավորապես նույն բարձրության վրա: Դա Ավդալյանի ուղղաթիռն էր, որի օդաչուն, շփոթությունից խուսափելու համար, անմիջապես ռադիոյով հայտնեց իր ով լինելը: Դրան հետևեց հրթիռների մի մեծ համազարկ գյուղից կրակող զենիթային հրանոթների ուղղությամբ, որոնց կողքին կար կայանված այլ զրահատեխնիկա: Հակառակորդը հայտնվեց կրակային կարուսելի մեջ: Հաղթանակը կատարյալ էր:

Առաջին արձագանքը ստացվեց ազատագրական ուժերի հրամանատարությունից: Բոլորը հիացած էին հայ օդաչուների գործողություններից: Ղեկավարվող հրթիռների հաջող կիրառումը և Ավդալյանի մտահղացումը մեծ ոգևորություն առաջացրին մեր օդային ուժերում:

«Մի-24» կրակային աջակցման ուղղաթիռը

Հակաօդային պաշտպանության գործողությունները

Պատերազմի առաջին իսկ օրվանից ադրբեջանական ավիացիան հնարավոր բոլոր միջոցներով ռմբակոծում էր Արցախի ողջ տարածքը: Կիրառվում էին բոլոր տեսակի հնարավոր միջոցները՝ սկսած քաղաքացիական ուղղաթիռներից մինչև մարտական ինքնաթիռներ: Հիմնականում թռիչքները կատարում էին վարձկանները, որոնք մեծ մասամբ հարվածներ էին հասցնում ոչ թե Ինքնապաշտպանական ուժերին, այլ խաղաղ բնակավայրերին, ունենալով մեկ նպատակ՝ ահաբեկելով հայաթափել տարածքը: 1994թ. ապրիլի 23-ին ադրբեջանական կողմը փորձեց վերստին ռմբակոծել Ստեփանակերտը: Մեծ բարձրության վրա և մեծ արագությամբ միանգամից յոթ ՄԻԳ-25 ինքնաթիռներ «աստղաձև» կոչվող եղանակով գրոհ կազմակերպեցին: ՀՕՊ հրամանատարական կետում բոլորն էլ պատրաստ էին հարձակմանը: Առաջին ինքնաթիռը հայտնաբերվեց համապատասխան ռադիոտեղորոշման կայանի (ՌՏԿ) միջոցով: Տվյալները գրանցվեցին, որից հետո ՊԲ ՀՕՊ հրամանատարական կետի պետ Պյոտր Հակոբյանը հրամանատարական կետ փոխանցեց տեղեկատվությունը: Ընդունող օպերատոր Վ.Բաբայանը ժամանակին ստացված տվյալներով որոշեց անհրաժեշտ կոորդինատներն ու սկսեց «ուղեկցել» ինքնաթիռներից մեկին: Կատարելով բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ Վ.Բաբայանը զեկուցեց ՀՕՊ զորամասի հրամանատար Նիկոլայ Բաբայանին և սպասում էր հրթիռարձակման հրամանին: Այդ պահին «2Կ11 Կրուգ» ԶՀՀ և ինքնաթիռի միջև հեռավորությունը կազմում էր 58 կմ: Պետք էր մի քիչ էլ սպասել, սակայն այնքան չէ, որ ճիշտ պահը կորցնեին: Խնդիրը բարդանում էր նաև նրանով, որ ինքնաթիռը թռչում էր «Կրուգ» ԶՀՀ հնարավորությունների սահմանով, և համալիրի հակազդեցության ժամանակը բավական մեծ էր՝ 60 վայրկյան: Մեր վարպետներից պահանջվում էր սառնասրտություն և ճշգրիտ հաշվարկ: Ամեն ինչ որոշում էր մեկ-երկու վայրկյանը, սակայն նրանք չսխալվեցին, ու հրթիռն արձակվեց ժամանակին:

Հրթիռն անսխալ մղվում էր դեպի վեր, կործանիչը բոլոր ճիգերով փորձում էր ճողոպրել իրեն հետևող հրթիռից, որի արագությունը մի փոքր էր գերազանցում կործանիչի արագությանը: Գորիս-Լաչին հատվածում կործանիչի օդաչուն փորձեց շրջանցել հրթիռը: Նման պայմաններում սովորաբար օդաչուները փորձում են ավելացնել արագությունը, սակայն մեծ արագությունը խանգարում էր կտրուկ շրջադարձ կատարել: Ինքնաթիռը խոցվեց մեր արձակած հրթիռից: Օդաչուն հասցրեց կատապուլտացվել, իսկ մնացած ինքնաթիռները փախուստի դիմեցին:

Ամփոփում

Սա առաջին դեպքն էր, երբ «ՄիԳ-25»-ն էր խոցվում նման բարձրության և արագության պայմաններում, միայն վերգետնյա ԶՀՀ-ի միջոցով: Հաղթանակն առանձնահատուկ էր նաև նրանով, որ «2Կ11 Կրուգ» ԶՀՀ-ն, որը վաղուց արդեն համարվելով հնացած, հանվել էր ԽՍՀՄ սպառազինությունից, մինչև Արցախյան գոյամարտը մարտական պայմաններում չէր կիրառվել: Փաստորեն, մեր ՀՕՊ մարտիկներն այս համալիրի առաջին կիրառողներն էին մարտական պայմաններում: Պատերազմի ընթացքում հայկական կողմը, չունենալով կործանիչ ավիացիա, ոչնչացրեց ադրբեջանական 150 ինքնաթիռներից 30-ը: Հայ հակաօդային-ների հաջողության հիմնական գրավականը եղած միջոցների շարժունակությունն էր, դրանցով արագ խուսավարումը և գրագետ կիրառումը:

1990-1994ԹԹ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԸ

Չհամակերպվելով ծանր պարտության հետ՝ 1994թ. ապրիլի վերջից ադրբեջանական բանակը ճակատի ողջ երկայնքով դիմում է վերջին ու հուսահատ հարձակմանը, սակայն ամեն օր կորցնելով մեծաքանակ կենդանի ուժ ու զրահատեխնիկա՝ չի կարողանում առաջանալ: Իսկ հայկական ուժերը քայլ առ քայլ մոտենում էին հակառակորդի հերթական ճակատամերձ քաղաքին՝ Միր Բաշիրին, որի անկումն անկանխատեսելի հետևանքներ կունենար Ադրբեջանի համար: Եվ տևական տատանումներից ու մինչև վերջին ապարդյուն հարձակումները շարունակելուց հետո, Ռուսաստանի Դաշնության միջնորդական ջանքերի արդյունքում Ադրբեջանը ստիպված ի վերջո համաձայնում է կրակի դադարեցմանը: ՀՀ և ԱՀ պաշտպանության նախարարներն ու ԼՂՀ ՊԲ հրամանատարը ՌԴ պաշտպանության նախարար, բանակի գեներալ Պ.Գրաչովի միջնորդությամբ համաձայնում են մայիսի լույս 12-ի կեսգիշերին դադարեցնել մարտական գործողությունները: Հաստատվում է մայիսյան հաղթական զինադադարը, որը խախտումներով շարունակվում է մինչև այսօր:

Այսպիսով, Արցախյան ազատամարտի ընթացքում լրիվ ոչնչացվում են Արցախի ներսում գտնվող ադրբեջանական հենակետերը, անվտանգության գոտու ստեղծման արդյունքում ճակատի գիծը հեռացվում է հայկական սահմանամերձ բնակավայրերից, ոչնչացվում են նաև Սյունիքի շեներին սպառնացող հենակետերը, վերացվում է արցախահայության ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգը, իսկ 1994թ. մայիսին հաստատված հաղթական զինադադարը հայոց զույգ պետություններին հնարավորություն է տալիս լիարժեք զբաղվել բանակաշինությամբ, ինչի արդյունքում այսօր ունենք տարածաշրջանի ամենամարտունակ զինված ուժերը, որոնք վստահորեն պահպանում են Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանները:

Պայմանական նշաններ



Հետևակի (մի քանի զորատեսակներից բաղկացած բանակների) հարձակում (գրոհ)[1]

Հեծելազորի հարձակում (գրոհ)



Մարտական գործողությունները երկրորդ փուլում (հեծելազորի գրոհը՝ միաթև սլաքով)

Մարտական գործողությունները երրորդ փուլում (հեծելազորի գրոհը՝ միաթև սլաքով)

Հետևակի գրոհի կամ զորաշարժի շարունակման ուղղություն (հեծելազորը՝ միաթև սլաքով)

Հետևակային ուժերի նահանջ (Հայոց բանակի դաշնակից ուժերի և հակառակորդի նահանջի նշանը համապատասխան գույնով, հեծելազորը՝ միաթև սլաքով)

Հարձակումը կասեցվել է (Հայոց բանակի դաշնակից ուժերի և հակառակորդի նշանը համապատասխան գույնով, հեծելազորը՝ միաթև սլաքով)



Հետևակի մարտակարգը մարտադաշտում (Հայոց բանակի դաշնակից ուժերի և հակառակորդի մարտակարգի նշանը համապատասխան գույնով), եթե ճակատամարտի սխեմայի վրա նշված է մարտակարգը ճակատամարտի (փուլի) վերջում, ապա ցույց է տալիս միայն սկզբնական մարտական դասավորությունը

---

[1] Մարտավարական բոլոր նշանները *գունավորված են հետևյալ սկզբունքով*՝ Հայոց բանակ և համատեղ ուժեր՝ կարմիր, Հայոց բանակի դաշնակիցներ՝ նարնջագույն, հակառակորդ՝ կապույտ:

Հեծելազորի մարտակարգը մարտադաշտում (Հայոց բանակի դաշնակից ուժերի և հակառակորդի մարտակարգի նշանը համապատասխան գույնով), եթե ճակատամարտի սխեմայի վրա նշված է մարտակարգը ճակատամարտի (փուլի) վերջում, ապա ցույց է տալիս միայն սկզբնական մարտական դասավորությունը

Հետևակի գրոհի անցման բնագիծն ու գրոհի ուղղությունը (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)

Թեթևազեն հետևակի կամ ծանրազեն հետևակի երկրորդական նշանակություն ունեցող զորամասերի ուժերով հասցվող ոչ մեծ հարվածների ուղղությունը

Հեծելազորի կենտրոնացման տեղամաս



Հարձակում իրականացնող հետևակային զորամասի (մի քանի զորատեսակներից բաղկացած բանակի) ջախջախում (հեծելազորը՝ միաթև սլաքով)

Պայմանագրի կնքման վայր

Ամրոցի կամ այլ տեսակի ամրության պաշարում (միայն քարտեզների վրա): Նշվում է պաշարվողի գույնով

Դիրք կամ մարտական գործողությունների նկարագրության համար կարևոր նշանակություն ունեցող պաշտպանական բնագիծ. գունավորվում է ըստ ընդունված կարգի

Առավել ամրացված, նախօրոք շրջանաձև պաշտպանության համար պատրաստված դիրք, պաշտպանության հանգույց, հենակետ. գունավորվում են ըստ ընդունված կարգի

Լեռներ (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)

Հրամանատարական դիտակետ (զորավարի վրան)

Ամրոց կամ ամրացված բնակավայր (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)

Ճակատամարտի վայր (միայն քարտեզների վրա)

Մայրաքաղաքներ (ներառյալ՝ այդ պատմական ժամանակաշրջանում մայրաքաղաք չհանդիսացող քաղաքներ)



Այլ բնակավայրեր

Բանակի երթակարգը (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում): Կարող են առանձին ցույց տրված լինել մարտավարական առումով կարևոր այլ բաղկացուցիչներ, որոնց առանձնացումը կարևոր է իրավիճակի առավել ամբողջական բացատրության համար

Հետևակի (մի քանի զորատեսակներից բաղկացած բանակի) հարձակման մոտակա խնդիրը (քարտեզների վրա՝ բանակների ռազմավարական մտահղացման առաջին փուլը)

Հետևակի (մի քանի զորատեսակներից բաղկացած բանակի) հարձակման հետագա խնդիր կամ հարձակումը շարունակելու ուղղություն (քարտեզների վրա՝ բանակների ռազմավարական մտահղացման երկրորդ փուլը)

Հետևակի (մի քանի զորատեսակներից բաղկացած բանակի) խմբավորումը կամ անկանոն դասավորությունը գրոհ իրականացնելու նպատակով (հայոց բանակի, դաշնակից ուժերի և հակառակորդի նշանը՝ համապատասխան գույնով, հեծելազորը՝ միաթև սլաքով)

Հորիզոնի կողմերը (միայն այն ճակատամարտերի սխեմաների վրա, որոնցում ընդունված կարգը (հյուսիսը՝ սխեմայի վերևի կողմում) խախտված է)



Հետևակի հարձակումը (գրոհը) մարտական գործողության (ճակատամարտի նշված փուլի) ավարտին (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)



Հրաձգության (նետաձգության կամ հետևակի կողմից հասցվող այլ կարգի խոցման) հիմնական ուղղություն (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)

Հրամանատարական նավ: Անհրաժեշտության դեպքում նշվում է մարտակարգում նավի համարը և այլ կարևոր տեղեկատվություն: Տախտակամածը գունավորվում է ըստ ընդունված կարգի, իսկ հրամանատարական դրոշը՝ պաշտոնական ընդունվածով



Մարտին մասնակցած մյուս նավերը: Անհրաժեշտության դեպքում նշվում է մարտակարգում նավի համարը, կարող են նշվել նաև նավում գտնվող ստորաբաժանման կազմը, ցույց տրվել նավի ցռուկը, հրանոթները և այլն



Գումակ (ներառյալ՝ բեռների անվտանգությունն ապահովող զինված ստորաբաժանումները): Գունավորվում են ըստ ընդունված կարգի: Ռազմերթում գումակը կարող է նշվել շարժման ուղղության նշումով՝ առանց ներքին մասնատման

Գրականություն

Աբրահամյան Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Եր., 1953:

Ադամյան Դ.Մ., Կիլիկյան դրվագներ. Ֆընտըճագի հերոսամարտը, Փարիզ, 1921:

Ազատյան Հ., Բախտորոշ պայմանագրեր, Եր., 2002:

Անդրեասյան Տ., Զեյթունի անձնատվությունը և Սուետիո ինքնապաշտպանությունը, Կահիրե, 1915:

Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Եր., 2009:

Արզումանյան Մ.Վ., Դարավոր գոյամարտ, Եր., 1989:

Գասպարյան Ռ.Հ., Կիլիկիահայությունը 20-րդ դարի սկզբին, Եր., 1999:

Գասպարյան Ռ.Հ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX-րդ դարի 90-ական թթ.-1921թ.), Եր., 2005:

Գարեգին Նժդեհ, Երկեր, հատ. 2, Եր., 2002:

Գարեգին Նժդեհ, Խուստուփյան կանչեր, Եր., 1993:

Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Եր., 1991:

Գրիգորյան Գ.Մ., Հախվերդյան Ս.Գ., Սյունիքի պատմություն, Եր., 2001:

Դալլաքյան Ղ., Մարտական 89, «Հայաստան», Եր., 1968:

Եսայի կաթ. Հասան-Ջալալյան, Պատմություն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոյ յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839թ:

Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին (կազմեց Ա.Սաֆրաստյանը), հատ. Ա, Եր., 1964թ:

Խալեյան Ե., Գիրք հերոսների մասին, Եր., 1964:

Կարապետյան Մ., Հայ կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914-1917թթ.), Եր., 1999:

Կիրակոսյան Ջ.Ս., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916թթ., Եր., 1967:

Կիրակոսյան Ջ.Ս., Երիտթուրքերը պատմության դատաստանի առջև, Եր., 1982:

Հակոբյան Ա.Մ., Կովկասյան նախալեռներից մինչև Բեռլին-Էլբա, Եր., 1991:

Համբարյան Ա.Ս., Արևմտահայերի 1915թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, Եր., 1988:

Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ VI, Եր., 1981:

Հայկական հարց, Հանրագիտարան, Եր., 1996:

Հարությունյան Ա.Հ., Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից, «Հայաստան», Երևան, 1983թ.:

Հարությունյան Աշ.Հ., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984թ.:

Հարությունյան Կ.Ա., 51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին, Եր., 1980:

Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994), Հանրագիտարան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, Երևան, 2004թ.:

Մարտիրոսյան Վ., Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724թ. պաշտպանությունը – ՊԲՀ, 1965, N2:

Մկրտչյան Լ.Հ., Մեծ տերությունների դիրքորոշումը Զեյթունի 1895-96թթ. ապստամբության նկատմամբ, ԲԵՀ, 2, 1989:

Մուրադյան Հ., էջեր հայ ժողովրդի հերոսական անցյալից, Եր., 1983:

Յարութիւնեան Ա.Յ., Կովկասեան ռազմաճակատը 1914-1917 թիւերին, «Ալիք», Թեհրան, 1977թ.:

Նազարյան Ա.Ս., Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918 թվականներին), Եր., 1999:

Նորաշխարհյան Լ., Զեյթունը 1914-1921թթ. (Հուշեր), Եր., 1984:

Չելեպյան Ա., Զորավար Անդրանիկ, փաստագրական ակնարկ, Եր., 1990:

Պողոսյան Հ.Մ., Զեյթունի պատմությունը 1409-1921թթ., Եր., 1969:

Պողոսյան Հ.Մ., Սասունի պատմություն (1750-1918), Եր., 1985:

Պողոսյան Հ., Ազատագրական կռիվները Զեյթունում 1895-1896 թվականներին, ԲԵՀ, 1, 1969:

Պողոսյան Ք., Հայ ժողովրդի մասնակցությունը Կովկասի պաշտպանությանը (1942թ. հուլիս- 1943թ. հոկտեմբեր):

Սահակյան Ռ.Գ., Ցեղասպանության պատմությունից, Եր., 1990:

Սահակյան Ռ., Խուդավերդյան Կ., Հայոց ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո, Եր., 1995:

Սահակյան Ռ.Օ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Եր., 2005:

Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, Եր., 1998, էջ 173:

Սիմոնյան Ա., 1919թ. նոյեմբերյան կռիվները Գորիսի շրջանում, ԲԵՀ, 2, 2004:

Սիմոնյան Ա.Հ., Զանգեզուրի գոյամարտը (1920-1921թթ.), Եր., 2000:

Սիմոնյան Ա.Հ., Գարեգին Նժդեհի՝ Գողթանի արշավանքը, ԲԵՀ, 3, 2004, էջ 17-30:

Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, երկու հատորով, գիրք Ա, Բ, Եր., 1996:

Վան-Վասպուրականի հերոսամարտը (նյութերի ժողովածու), կազմող՝ Հ.Դ. Փափազյան, Եր., 1990:

Վերֆել Ֆ., Մուսա լեռան 40 օրը, Եր., 1964:

Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:

XVI-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը, հոդվածների ժողովածու, Եր., 1989:

Андраник Озанян: документы и материалы, Вестник архивов Армении, 1(89)-2(90), 1991 (составители - Арутюнян А. (руководитель), Арутюнян Г., Эвоян В., Мирзоян С., Сафян, Шатирян Г.), Ер., 1991, N1-2:

Армяно-русские отношения в первой трети 18 в., т. 2, ч. 2, Е., 1967.

Арутюнян А.О., Кавказский фронт 1914-1917, Изд-во “Айастан”, Ереван, 1971.

Арутюнян П., Освободительное движение армянского народа в первой четверти 18 в., М., 1954.

Балаян З., Крылья, Е., 1988.

Боевой путь 409-й стрелковой Кировоградско–Братиславской ордена Богдана Хмельницкого Армянской дивизии (1941-1945гг.), сборник документов, Вестник архивов Армении, 3(58), 1980, (составители- А. Арутюнян, Г. Оганесян).

Воронов В., Морские истребители, М., 1986г., стр. 171.

Воспоминания генерала Ф.И. Назарбекова, Вестник архивов Армении, 1992, N. 3.

Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, под ред. Нерсисяна М.Г., 2-е доп. издание, Е., 1983.

Елисеев Ф.И., Казаки на Кавказском фронте 1914-1917, М., 2001.

Капитанец И., Война на море 1939-1945, М., 2005 г., стр. 211.

Корсун Н.Г., Сарыкамышская операция на Кавказском фронте в первой мировой войне в 1914-1915гг., М., 1937.

Корсун Н.Г., Эрзерумская операция на Кавказском фронте в 1916 году, М., 1938.

Корсун Н.Г., Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны,М.,1940.

Корсун Н.Г., Первая мировая война на Кавказском фронте, М., 1946.

Лобов В.Н., Военная хитрость в истории войн, М., 1988.

Маркова О.П., Россия, Закавказье и международные отношения в 18 веке, М., 1966.

Морозов М., Крылья над морем. Топи их всех?!... История авиации, 4 / 2000г., стр. 8.

Первая мировая война: Пролог XX века, М., 1999.

Саркисян С.М., 408-я армянская стрелковая дивизия в битве за Кавказ, Е., 1985.

Хирзоева З., Исполненный долг, Махачкала, 1986.

Шамбаров В.Е., За веру, царя и Отечество! М., 2003.

Эзов Г., Сношения Петра Великого с армянским народом, СПБ., 1898.

Allen W.E.D., Muratoff P., Caucasian Battelfields: A History of the Wars on the Turco-Caucasian Border, 1828-1921, Cambridge, 1953.

Chaeiland G., Ternon Yves, The Armenians: From Genocide to Resistance, London, 1983.

Morgenthau H., Ambassador Morgenthau’s Story, New York, 1918.

Nansen F., Armenia and the Near East, New York., 1928.

Nogales R.de., Four Years Beneath the Crescent, New York-London, 1926.

Nogales R.de., Memoirs of Soldier of Fortune, New York, 1932.

Ternon Yves, The Armenians: History of Genocide, New York, 1981.

Ussher C.D., Knapp G.H., An American Physician in Tuekey. A Narrative of Adventures in Peace and War, Boston, New York, 1917.

Walker Chr., Armenia: The Survival of a Nation, London, 1980.

http://www.allaces.ru/p/people.php?id=6553

http://www.nevru.com/cnt/cgi-bin/go.cgi?id=1574

http://www.warheroes.ru/advert.asp

Ռազմական տերմինների բառարան

Ա

ԱԳՐԵՍԻԱ, մեկ կամ մի քանի երկրների զինված հարձակում այլ երկրի կամ երկրների վրա նվաճողական նպատակներով:

ԱԳՐԵՍԻԱՅԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ, ագրեսորի կողմից պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջության խախտման մտադրությունների ձախողմանն ուղղված զինված ուժերի գործողությունների համալիր:

ԱԳՐԵՍԻԱՅԻ ԿԱՆԽՈՒՄ, պետության կողմից ոչ ռազմական ներազդման միջոցառումների հետ միասին զինված ուժերի կիրառմամբ ագրեսորի կողմից զինված հարձակման դադարեցում:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ, օտարերկրյա պետության դեմ ճնշված և կախյալ ժողովուրդների ու երկրների զինված պայքարը պետական ինքնիշխանության, ազատ և ինքնուրույն տնտեսական և մշակութային զարգացման համար:

ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ, հրամանատարի (պետի) կողմից հաստատված պայմանական նշաններ՝ ոչ մեծ տարածությունների վրա ենթականերին կարճ կարգադրություններ, հրամաններ և այլ տեղեկություններ հաղորդելու և ստանալու համար:

«ԱԼԱԶԱՆ» ՏԵՍԱԿԻ ՀՐԹԻՌ, կարկտաբեր ամպերը ցրելու համար նախատեսված հրթիռներ: Արցախյան գոյամարտի նախնական փուլում օգտագործվել են բնակավայրերը գնդակոծելու համար: Վերգետնյա նշանակետերը գնդակոծելու համար չնախատեսված «Ալազանների» պատճառած նյութական վնասը մեծ չէր, բայց խաղաղ բնակչության վրա ծանր հոգեբանական ազդեցություն էր թողնում:

ԱԼՊԻԱԿԱՆ (ԼԵՌՆԱՅԻՆ) ՀՐԱՁԻԳՆԵՐ, լեռնային հատուկ հանդերձանքով և սպառազինությամբ զինված և լեռներում մարտ վարելու համար մարզված զինվորներ: Ա(Լ)Հ առաջին ստորաբաժանումներն ի հայտ են եկել XVIIIդ. վերջին՝ Ֆրանսիայում, սակայն տարածում են ստացել XIXդ. կեսից:

ԱԼԵՀԱՎԱՔ, ռադիոալիքներ հաղորդելու և ընդունելու համար նախատեսված սարք:

ԱԿԱՆ, 1. (պատմ.), պարսպի (պատի) տակ փորվող անցք՝ գաղտնի կամ բռնի ներս խուժելու համար: 2. (ռազմ.) ինժեներական զինամթերք, պայթուցիկ լիցքով սարք: Գործողության մեջ է դրվում շփման, ճնշման, ձայնային ալիքների, մագնիսական ուժի շնորհիվ: Նախատեսված է հարվածային ալիքով և իր մասերի կինետիկ էներգիայով շինությունների, տեխնիկայի, կենդանի ուժի ոչնչացման համար: Լայն տարածում ունի: Կիրառվել է վերջին հարյուրամյակի բոլոր պատերազմներում: 3. Չպտտվող փետրավոր արկ՝ ականանետներից հրաձգություն վարելու համար: Ըստ իրանի կառուցվածքի՝ ականները լինում են կաթիլաձև և գլանաձև կամ էլ արկանման: Ըստ իրենց մարտական նշանակության և գործողության՝ ականների դասակարգումը համապատասխանում է հրետանային արկերի նշանակությանն ու գործողությանը: 4. Ջրի հատակը նետված կամ որոշ խորության մեջ լողացող արկ՝ հակառակորդի նավերը պայթեցնելու համար: Լայնորեն կիրառվել է երկու համաշխարհային պատերազմների ընթացքում:

ԱԿԱՆԱԴԱՇՏ, տեղանքի հատված, որտեղ որոշակի օրինաչափությամբ ականներ են տեղադրված: Ըստ նշանակության՝ Ա. լինում են. հակատանկային, հակահետևակային, հակադեսանտային և խառը: Ըստ գործարկման բնույթի լինում են չկառավարվող և կառավարվող:

ԱԿԱՆԱՋԵՐԾՈՒՄ, ականների, լիցքերի, չպայթած զինամթերքների, պայթյունավտանգ սարքերի հետախուզում, կորզում կամ ոչնչացում և դրանցից տեղանքի, շինությունների և այլ օբյեկտների մաքրում: Մարտի ինժեներական ապահովման հիմնական միջոցառումներից է:

ԱԿԱՆԱՆԵՏ, ականներ արձակող կարճ և լայնաբերան հրազեն: Ա. նախատեսված է 45-85° բարձրացման անկյամբ գագաթնահար հետագծով հրաձգություն կատարելու համար: Ա-ն աչքի է ընկնում պարզ կառուցվածքով և փոքր քաշով: Ավանդաբար կիրառվում է բաց տեղակայված և ծածկոցների հետևում պատսպարված կենդանի ուժը խոցելու, դաշտային

ամրաշինական բոլոր տիպի կառույցներն ավերելու համար: Կիրառվել է Արցախյան գոյամարտի տարիներին և այսօր էլ լայն կիառություն ունի:

ԱԿԱՆԱՆԵՏԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑ, 3-4 ականանետ ունեցող 2-3 կրակային դասակներից կազմված ականանետային ստորաբաժանում:

ԱԿԱՆԱՊԱՏՈՒՄ, հակառակորդին կորուստներ պատճառելու, նրա զորաշարժը սահմանափակելու և շինություններն ավելելու նպատակով ականապատ դաշտերի կազմում, խմբային և մեկական ականների (ֆուգասների) տեղադրում:

ԱԿԱՆԱՏ, զանազան տիպի պաշտպանական կառույցների ու զրահավոր աշտարակների պատերի մեջ բացված անցք՝ նետաձգության կամ հակառակորդին այլ կերպ խոցելու համար:

ԱԿԻՆԱԿ (ՆՐԱՆ), հատուկ սահմանափակիչով սկյութական երկար դաշույն (կամ կարճ թուր): Հայտնի է Ք.ա. VIIդ. կեսերից: Հայտնի են երկու տեսակի շեղբերով Ա. եռանկյունաձև մի քանի հատվածներով (բնորոշ է արևմտահիրանական շեղբերի համար) և սահուն միավորվող զուգահեռ սայրերով, կողով կամ շեղանկյունաձև կտրվածքով: Ակինակները լայն տարածում էին գտել մեր տարածաշրջանի ժողովուրդների մոտ, որտեղ, ուղղակի զենք լինելուց բացի, հանդիսանում էին նաև զորականների, զինվորական ազնվականությանը պատկանելու խորհրդանիշ:

ԱԿՈՍԱՎՈՐ ՀՐԱՁԵՆ, հրազեն, որի փողանցքի ուղղորդ մասը արկին (գնդակին) պտտական շարժում հաղորդելու նպատակով պարուրակաձև ակոսներ ունի: Դրա շնորհիվ արկը (գնդակը) հետագծում կայունությունը չի կորցնում, ինչը հնարավորություն է ընձեռում հրաձգության համար բավարար հեռահարություն և խտություն ստանալ:

ԱԿՏԻՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, պատերազմող կողմերից մեկի կողմից պաշտպանական գործողությունների վարում, ոչ միայն տարածքը պահելու, այլև հիմնականում հակառակորդի խոշոր ուժերը հյուծելու և արյունաքամ անելու նպատակով:

ԱՄՐԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ, մարտական տեխնիկայի կիրառման արդյունավետությունը բարձրացնելու, զորքերի հուսալի կառավարումն ապահովելու և զորքերը հակառակորդի խոցման միջոցներից պաշտպանելու համար նախատեսված ինժեներական կառույցներ:

ԱՄՐԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ռազմաճարտարապետական գիտություն տեղանքը ռազմական կառույցներով ամրացնելու մասին:

ԱՄՐԱՑՎԱԾ ՃԱՄԲԱՐ, զորքերը կենտրոնացնելու (տեղաբաշխելու) և հակառակորդի հավանական հարձակումն անդրադարձնելու համար նախատեսված տեղանքի հատված: Տարբեր խնդիրներ կատարելու համար ելակետ է հանդիսանում: Առաջին դաշտային ամրաշինական կառույցներից է:

ԱՄՐՈՑ, արհեստական կերպով ամրացված դիրք կամ ռազմական կառույց թշնամու հարձակումներից պաշտպանվելու համար:

ԱՅՐՈՒՋԻ, Հայոց հեծելազորը հին և միջին դարերում: Պեղածո նյութերն ու սեպագիր արձանագրությունները հավաստում են, որ Ք.ա. I հազարամյակում Հայկական լեռնաշխարհի բնակիչները պատերազմներում օգտագործում էին ինչպես մարտակառքեր, այնպես էլ Ա.: Ըստ Քսենոփոնի, Երվանդունիներն ունեին 8 հազարանոց Ա.: Հայոց Ա. ավելի մեծացվեց և կանոնավորվեց Արտաշեսյանների օրոք:

Հայոց Ա. կորիզը Հին աշխարհում հռչակված *ծանրազեն զրահավոր հեծելազորն* էր, որի համար ընտրվում էին առավել մարմնեղ և ուժեղ ձիեր: Հեծելամարտիկները կրում էին ծանր հանդերձանք, մետաղե թիթեղներով պատած կամ մետաղե զրահներ (սաղավարտ, վզնոց, օղազրահ, ուսակալ, սրունքակալ, լանջապանակ, սռնապան, կրծքակալ ևն): Գլխավոր զենքը երկար նիզակն էր: Զրահավոր Ա. հայկական բանակի գլխավոր հարվածային ուժն էր, որը գրոհում էր սեպաձև խիտ շարքերով:

ԹԵԹԵՎԱՁԵՆ Ա., որի համար ընտրվում էին համեմատաբար փոքրամարմին, արագավազ և դիմացկուն նժույգներ, դյուրաշարժության համար չէր զրահավորվում: Հեծյալի հիմնական զենքը նետ ու աղեղն էր: Թեթևազեն Ա. կատարում էր բանակի մարտակարգի թևերն ու թիկունքը պաշտպանելու, գլխավոր ուժերի ծավալմանը սպասարկելու, ցրված ուժերը

կենտրոնացնելու, հակառակորդին հետապնդելու, հետախուզելու և այլ պարտականություններ: Հարձակվում էր ցրիվ շարքերով:

Հայոց Ա. կարևոր դեր էր կատարում պարթևա-հռոմեական մրցակցությունում. նրա անցումը մեկի կամ մյուսի կողմը հաճախ ունենում էր վճռական նշանակություն: Հռոմը մարտունակ հեծելազոր չուներ: Այդ պատճառով ահեղ հեծելազորատեր Պարթևստանի դեմ մղվող պատերազմներում ձգտում էր շահել Հայաստանի դաշնակցությունը: Արշակունիների ժամանակ Ա., մասնավորապես ծանրազենը, համալրվում էր ազնվատոհմիկներով՝ ազատներով, որոնց դաստիարակության մասն էր կազմում ձիավարժությունը:

Պատերազմի ժամանակ ցածր խավերից նույնպես ստեղծվում էր առանձին հեծելագունդ, որը կոչվում էր *«ռամիկ Ա.»:* Ա. գերագույն հրամանատարը կոչվում էր «ասպետ», որը միաժամանակ «թագադիր» կամ «թագակապ» իշխան էր: Այդ պաշտոնը Բագրատունիների տոհմի մենաշնորհն էր: Ա. զինվորական աստիճանների, հրահանգների, կանոնադրությունների, զինանշանների, դրոշների մասին պահպանվել են կցկտուր տեղեկություններ: Աղբյուրներում հիշատակվում են «բյուրավորք», «հազարավորք», «գումապետք», «հարդարիք մարտի», «աղեղնադրոշք», «ասպարախաղք» կամ «ասպախաղք», «դրոշակակիրք», «վառնունիք», «ճակատամուղք» ստորաբաժանումների անուններ:

ԱՆԿԱՆՈՆ (ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ) ԶՈՐՔԵՐ, միասնական, մշտական կազմ չունեցող կամ կանոնավոր զորքերից համալրման և ծառայությունը տանելու կարգով տարբերվող զորքեր:

ԱՆՀԵՏԱԳԼՈՐ ՀՐԱՆՈԹ, դասական հրանոթներից տարբերվում են նրանով, որ հրածգության ուղղությանը հակառակ ուղղությամբ վառոդի գազերը բաց թողնելու համար փողի լցամասում ծայրափողրակ ունեն: Առաջացող դինամիկական հավասարակշռության հետևանքով կրակոցի դեպքում փողը փաստորեն մնում է անշարժ: Դա թույլ է տալիս հրաժարվել մեծածավալ և ծանր հակագլորքի սարքերից, ինչն էլ իր հերթին ապահովում է հրանոթի փոքր քաշը: Հենց փոքր քաշի շնորհիվ էլ ԱՀ առավելագույնս համապատասխանում են օդադեսանտային և լեռնահրաձգային զորքերի պահանջներին:

ԱՆՎՏԱՆԳ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԻԾ, սեփական արկերի անկման (պայթելու) վայրից նվազագույն հեռավորության վրա գտնվող տեղանքի պայմանական գիծ, որի վրա առաջնային ստորաբաժանումների անձնակազմը չի կարող խոցվել:

ԱՆՑՈՒՄՆԵՐ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՑՆԵՐՈՒՄ, սեփական զորքերը բաց թողնելու համար արգելափակոցներից մաքրված կամ արգելափակոցներից ազատ թողնված տեղանքի գոտիներ:

ԱՇԽԱՐՀԱԶՈՐ, կամավորական հիմունքներով խաղաղ բնակչությունից կազմավորված ռազմական ստորաբաժանում:

ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆ, աշխարհազորային ստորաբաժանումներում կամավոր ծառայող անձ:

ԱՇՏԱՐԱԿ, շրջանաձև՝ քառակողմ կամ բազմակողմ բարձր ու նեղ կառուցվածք ամրոցի պարիսպների վրա՝ հակառակորդին դիտելու և նրա դեմ կռվելու համար:

ԱՊԱՀՈՎԻՉ, ռազմական տեխնիկայի (զենքի) ակամա կամ վտանգավոր գործողությունը բացառող հարմարանք:

ԱՊԱՍՏԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ, իրենց երկրներում քաղաքական, ազգային ազատագրական, կրոնական, գիտական և այլ գործունեության համար հետապնդվող օտարերկրյա քաղաքացիներին իր տարածքում մուտքի և բնակության թույլտվություն տալու պետության իրավունքը:

ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, հակառակորդին մոլորեցնելու նպատակով սեփական զորքերի, նրանց խմբավորման, կազմի, սպառազինության, մարտունակության, ռազմական գործողությունների մասին կանխամտածված կեղծ լուրեր տարածելու քողարկման հնարք:

ԱՋԱԿՑՈՂ ՀԱՐՎԱԾ, գլխավոր հարվածի ուղղությունից մեկ այլ ուղղությամբ ուժերի և միջոցների մի մասով հասցվող հարված: Հիմնականում իրականացվում է հակառակորդի ուշադրությունը գլխավոր հարվածի ուղղությունից շեղելու, նրա ուժերի և միջոցների մի մասը կաշկանդելու և ուժերով ու միջոցներով զորաշարժը բացառելու նպատակով:

ԱՌԱՋԱՊԱՀ, գլխավոր ուժերի առջևից մարտական գործողություններ վարող զորամաս, ավանգարդ:

ԱՌԱՋԱՊԱՀ ՋՈԿԱՏ, մարտի ժամանակ ինքնուրույն առաջադրանքներ կատարող ուժեղացված ստորաբաժանում: Մարտակարգի տարր է: Հարձակման ժամանակ ապահովում է գլխավոր ուժերի կազմակերպված մարտի մեջ մտնելը (մարտակարգի ծավալվելը): Պաշտպանությունում գործում է ապահովման գոտում: ԱՋ կարող է առանձնացվել նաև ռազմերթի ժամանակ՝ մարտի մեջ մտնելու մտադրության դեպքում (հատկապես հանդիպական մարտի դեպքում):

ԱՌԱՋԻՆ ԷՇԵԼՈՆ, զորքերի (ուժերի) օպերատիվ դասավորվածության (մարտակարգի) տարր, որն առաջինն է մտնում մարտի մեջ և նախատեսված է, որպես կանոն, օպերացիայի (մարտի) ժամանակ հիմնական խնդիրներ կատարելու համար:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՐԹԱՅԻՆ ՈՒՂԵԿԱԼ (ՌԱՋՄԵՐԹԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՈՒՂԵԿԱԼ), երթային պահպանության օրգան, որն ուղարկվում է գլխավոր ուժերի անխափան տեղաշարժն ապահովելու, պահպանվող զորքերի մոտ հակառակորդի հետախուզության ներթափանցումը, նրանց վրա հանկարծակի հարձակումը կանխելու և բացազատվելու ու մարտի մեջ մտնելու նպաստավոր պայմաններ ստեղծելու առաջադրանքով:

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՅՈՒՆ, հրածգության այն անկյունը, որի դեպքում գնդակի թռիչքի լրիվ հորիզոնական հեռավորությունը դառնում է առավելագույն: Լրիվ հորիզոնական հեռավորության անկյան առավելագույն մեծությունը տարբեր տեսակի զենքերի գնդակների համար կազմում է մոտ 35°:

ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ, պատմականորեն ձևավորված և սերնդեսերունդ փոխանցվող կանոնների և վարվելակարգի նորմեր:

ԱՎԱՐ (ՌԱՋՄԱՎԱՐ), հակառակորդից զավթած, նրա կողմից մարտադաշտում լքված կամ հանձնվելու դեպքում հանձնած, զենք, ռազմական հանդերձանք, տրանսպորտի միջոցներ (ձիեր, մեքենաներ ևն), ռազմական տեխնիկա և այլ նյութական արժեքներ: Ողջ Ա. համարվում է հաղթող կողմի սեփականությունը և օգտագործվում է ինչպես ռազմական, այնպես էլ այլ նպատակներով (որպես պարգև նվիրել մարտում աչքի ընկած հրամանատարներին և մարտիկներին):

ԱՎԻԱԽՈՒՄԲ, 1. որոշակի մարտական խնդիրներ կատարելու համար ավագ ավիացիոն հրամանատարի կողմից ավիացիայի մի քանի ստորաբաժանումներից, զորամասերից կամ միավորումներից (միասեռ կամ տարատեսակ) հավաքված ժամանակավոր խումբ, 2. ավիացիայի մարտակարգի տարր:

ԱՎԻԱՀՐԹԻՌ, հակառակորդի վերգետնյա, օդային և ծովային նշանակետերը խոցելու նպատակով թռչող սարքերի կիրառվող ավիացիոն ռազմամթերքի տեսակ: Ավիացիոն սպառազինության բաղկացուցիչ մասը: Տարբերակում են չկառավարվող ԱՀ՝ հիմնականում վերգետնյա նշանակետերը խոցելու համար, «օդ-երկիր» տիպի թևավոր և «օդ-օդ» տիպի կառավարվող ԱՀ:

ԱՎԻԱՌՈՒՄԲ, թռչող սարքերից նետվող ավիացիոն ռազմամթերքի տեսակ: Ռմբակոծիչ սպառազինության հիմնական տեսակը: Տարբերակում են հիմնական, հատուկ և աջակցող նշանակության Ա.: Հիմնական նշանակության ավիառումբերը կիրառվում են նշանակետերը ֆուգասային, բեկորային, հարվածային, կումուլյատիվ, հրկիզող, քիմիական և միջուկային գործողությամբ խոցելու համար: Ա. առաջին անգամ 1911-1912թթ. իտալա-թուրքական պատերազմի ժամանակ օգտագործել են իտալացիները: Կիրառվում են ագիտացիոն, բեկորային, բեկորաֆուգասային, բետոնահար, գնդիկավոր, զրահարար, լուսավորող, ծխային, հակատանկային, հակասուզանավային, հրկիզող, կառավարվող, միջուկային, նմանակող, քիմիական, ֆուգասահրկիզող Ա.:

ՀԱՏՈՒԿ Ա., տեղանքը լուսավորելու, ծխաքողարկում դնելու, կողմնորոշման և ազդարարման, քարոզչական գրականություն նետելու համար:

ԱՋԱԿՑՈՂ Ա., զորավարժությունների ժամանակ միջուկային պայթյունը նմանակելու, ռմբանետում ուսուցանելու համար են:

ԱՎԻԱՑԻԱ, 1. մերձերկրային օդային տարածությունում թռչելու համար նախատեսված օդից ծանր թռչող սարքերի ընդհանրական անվանումը: Ինքնաթիռի առաջին հաջող թռիչ-

քը կատարվել է 1903թ. դեկտեմբերին, 2. զինված պայքարի և օդային փոխադրումների միջոց: Տարբերակում են քաղաքացիական և ռազմական Ա.:

ԱՎԻԱՑԻՈՆ ԱՋԱԿՑՈՒՄ ՕՊԵՐԱՑԻԱՅՈՒՄ (ՄԱՐՏՈՒՄ), հակառակորդի կրակային խոցման բաղկացուցիչ մաս: Ցամաքային զորքերի հետ համատեղ ռումբերի, հրթիռների և ավիացիոն սպառազինության այլ տեսակների կիրառմամբ հակառակորդի մարտական տեխնիկայի, կրակային միջոցների և կենդանի ուժի խոցման նպատակով ռազմաօդային ուժերի մարտական գործողություններ:

ԱՎԻԱՑԻՈՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ, հակառակորդի վերգետնյա, օդային և ծովային նշանակետերը խոցելու նպատակով ավիացիոն թռչող սարքերի վրա տեղադրվող սպառազինություն: Տարբերակում են հրետանային, հրթիռային և ռմբակոծչային ԱՍ:

ԱՎՏՈՄԱՏ, ինքնաձիգ հրազեն, որից հրաձգությունը վարում են ատրճանակային և հրացանային փամփուշտների միջև անցումային հանդիսացող փամփուշտներով: «Գրոհային հրացան» անվանումը (*Sturmgewehr*) գերմանացիները շրջանառության մեջ դրեցին 1944 թվականից, սակայն ԽՍՀՄ-ում նախընտրեցին կոչել «Ա.»: Այսպիսով, «Գրոհային հրացան» և «Ա.» տերմինները վերաբերվում են միևնույն զենքին:

Ներկայումս սպառազինությունում գտնվող Ա. մեծ մասը մշակված է փոքր տրամաչափի 5,56 մմ (ՆԱՏՕ-ի) կամ 5,45 մմ (խորհրդային) փամփուշտներով: 7,62 մմ-ից ավելի փոքր տրամաչափի անցումը հնարավորություն տվեց նվազեցնել զենքի չափսերը և զանգվածը, իսկ կրվող զինապաշարն ավելացվեց 2-3 անգամ: Փոքր տրամաչափի գնդակը մինչև 400 մ հեռավորության վրա ունի ավելի բարձր մահաբեր գործունեություն, քանի որ գնդակը, թռիչքի ժամանակ պահպանելով կայունությունը, մարմնի հյուսվածքների մեջ ընկնելով կորցնում է այն՝ ծանր պատառոտված վերքեր հասցնելով մարդուն:

Ա. (գրոհային հրացանների) զարգացման հիմնական ուղղություններն են. զենքի չափսերի նվազեցում «բուլփափ» սխեմայով նոր նմուշներ ստեղծելով, որտեղ փամփշտատուփը և հարվածաձգանային մեխանիզմի որոշ մասը տեղավորված են խզակոթի մեջ, իսկ խզակոթը գտնվում է փողանցքի առանցքի շարունակության վրա:

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ, զինված ուժերի մարտական և ամենօրյա գործունեությունն ապահովելու համար նախատեսված անվավոր և թրթուրավոր տեխնիկա: ԱՏ են համարվում ավտոմեքենաները, անվավոր և թրթուրավոր քարշակները, փոխադրիչները, ավտոկռունկները, վերանորոգման շարժական արհեստանոցները, տարհանման մեքենաները, կցորդիչները, կիսակցորդիչները ևն:

ԱՏՐՃԱՆԱԿ, ձեռքի փոքրիկ, կարճ հրազեն՝ փոքր հեռավորությունների վրա հրաձգության համար: Առաջին ատրճանակներն (կարճեցված պատրույգավոր հրացաններ) առաջացել են XVIդ. և հիմնականում կիրառվում էին հեծելազորի կողմից: Դրա համար էլ Ա. իր միջազգային անվան համար պարտավոր է իտալական «պիստալլո» բառին, որը նշանակում է թամբի առաջամաս, որտեղ ամրացվում էին այդ զենքերի պատյանները:

Ժամանակակից հասկացողությամբ Ա. անհատական ավտոմատ հրազեն է, հիմնականում՝ ինքնաձիգ (ավտոմատ): Դրա շնորհիվ ատրճանակները բոլոր երկրների բանակների սպառազինությունից դուրս են մղել թմբուկավոր ռևոլվերները, որոնց կրակված պարկուճները մնում էին թմբուկի մեջ, իսկ պարկուճների հեռացումը և թմբուկի լիցքավորումը բավական ժամանակ են պահանջում, որն, ի դեպ, մարտադաշտում կարող է և չլինել:

ԱՏՐՃԱՆԱԿ-ԳՆԴԱՑԻՐ, ինքնաձիգ հրազեն, որից կրակում են ատրճանակային փամփուշտներով: Սակավազոր փամփուշտների շնորհիվ ունեն բավական պարզ կառուցվածք, փոքր չափսեր և զանգված, դյուրին են սպասարկվում և շահագործվում: ԱԳ մեծ արդյունավետությամբ կիրառվել են 1930-ական թթ. Լատինական Ամերիկայի պետություններում ծագած բախումների ժամանակ և Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Այնուհետև անցումային փամփուշտների համար ստեղծված գրոհային հրացանները ԱԳ դուրս մղեցին հրաձգային ստորաբաժանումների սպառազինությունից:

ԱՐԳԵԼԱՓԱԿՈՑ, զորքերի առաջխաղացմանը խոչընդոտող կառույց, հարմարանք և ավերածություններ (փլուզումներ): Ստեղծվում են հակառակորդին կորուստներ պատճառելու,

նրա տեղաշարժը և գործողությունները դժվարացնելու, զորաշարժը կաշկանդելու կամ սեփական զորքերի համար առավել նպաստավոր ուղղություններով նրան շարժվել հարկադրելու նպատակով: Ըստ բնույթի Ա. լինում են պայթյունային, ոչ պայթյունային, էլեկտրականացված և կոմբինացված, որի պատճառով մեր օրերում «Ա.» բառն ընդունված է կիրառել հոգնակի թվով:

Ա. ԽՏՈՒԹՅՈՒՆ, Ա. ընդհանուր երկարության հարաբերությունը ծածկվող ուղղության (գոտու, բնագծի, տեղամասի) ճակատի լայնությանը:

Ա. ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ, զորքերի կազմակերպված անցումը արգելափակոցների, ավերածությունների, փլուզումների, բնական և արհեստական արգելքների միջով՝ դրանց շրջանցումը բացառելու դեպքում:

ԱՐԿ, հրետանային ռազմամթերք՝ հրանոթից կրակելու համար: Բաղկացած է իրանից, մարտական լիցքից և պայթուցիչից:

ԱՐՇԱՎԱՆՔ, հարձակողական ռազմական գործողությունների տեսակ: Ներխուժում հակառակորդի կողմից վերահսկվող տարածք՝ առավել նպաստավոր պայմաններում պատերազմ վարելու ակնկալիքով, ինչպես նաև ավարառության կամ ասպատակության նպատակով:

Բ

ԲԱՆԱԳՆԱՑ, հակառակորդի հետ բանակցություններ վարելու լիազորություններով օժտված հակամարտող որևէ կողմ ներկայացնող անձ: Բ. օգտվում է անձեռնմխելիության իրավունքից, տարբերանշանը՝ սպիտակ դրոշ:

ԲԱՆԱԿ, որևէ պետության զինված ուժերի ամբողջությունը:

ԲԱՆԱԿԱԽՈՒՄԲ, ինքնուրույն կամ ճակատի կազմով առանձին (մասնակի) օպերատիվ խնդիրներ լուծելու նպատակով մի քանի զորատեսակների զորամասերից կամ միավորումներից կազմավորված ժամանակավոր զորամիավորում: Տրված առաջադրանքը կատարելուց հետո սովորաբար Բ. կազմալուծվում էր:

ԲԱՆԱԿԱՏԵՂ, զորքերի կայան, կենտրոնացման շրջան:

ԲԱՐԻԿԱԴ, սովորաբար փողոցային մարտերի ժամանակ ձեռքի տակ եղած նյութերից սարքավորվող արգելափակոց: Որոշ աղբյուրներում ներկայացվում է որպես ժողովրդական զանգվածների կողմից օգտագործվող արգելափակոց ինքնապաշտպանական և հեղափոխական պայքարում:

ԲԱՐՈՅԱԼՔՈՒՄ, բարոյական քայքայում, բարոյականության, կարգապահության, ոգու անկում: Բ. զարգացման խթանիչներ կարող են հանդիսանալ այնպիսի գործոններ, ինչպիսիք են պատերազմի անբարենպաստ ընթացքը, անձնակազմի մեծ կորուստները և հոգնածությունը, անբավարար նյութական ապահովվածությունը, հակառակորդի քարոզչական ներգործությունը:

ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ, անհատի, կոլեկտիվի որակական գնահատական, որը կոլեկտիվում բնութագրում է հոգեբանական գործոնների ուղղվածությունը և դինամիկան, միջանձնային հարաբերությունները: Բնութագրում է բանակի հոգեկան և բարոյական ոգու ներուժը:

ԲԵԿՈՐ, զենքերից արձակված կամ ձեռքով նետված խոցող միջոցի (քար, արկ, ական, նռնակ, ավիառումբ ևն) պայթյունի կամ մասնատման արդյունքում կոտրված կարծր առարկա՝ հակառակորդի կենդանի ուժի և կրակային միջոցների ոչնչացման կամ խոցման համար: Պայթած բեկորներով խոցելու համար նախատեսված միջոցները կոչվում են բեկորային:

ԲԵՐԴ, մշտական շրջանաձև պաշտպանության համար կառուցված ամրություն, որը լայն տարածում է ստացել միջնադարում, ամրոց:

ԲԼԻՆԴԱԺ, պաշտպանական կառուցվածք, հրետանային կրակից և ռմբակոծությունից պաշտպանվելու ամուր ծածկով ապաստարան:

ԲՆԱԳԻԾ, պաշտպանական ամրությունների և ելման դիրքերի գիծը:

ԲՌՆԱԿ, շեղբավոր սառը զենքի մաս, կազմված է բռնակից, խաչարդից, երախակալից ևն:
ԲՐԻԳԱԴ, մի քանի գնդերից, գումարտակներից ու մարտկոցներից բաղկացած միավորում:

Գ

ԳԱՂՏՆԻՔ, հրապարակման համար չնախատեսված տեղեկություն:
ԳԱՅԼԱՓՈՍ, երբեմն հատակին սրածայր ցցերով հատած կոնի տեսքով փոս: Հակահետևակային արգելափակոցի տեսակ:
ԳԵՆԵՐԱԼ, բարձրաստիճան սպաների զինվորական կոչում: Առաջին անգամ հայտնվել է Ֆրանսիայում XVIդ.:
ԳԵՆԵՐԱԼ-ՖԵԼԴՄԱՐՇԱԼ, ռուսական, գերմանական և ավստրիական բանակներում բարձրաստիճան սպաների զինվորական կոչում: Մտցվել է Պրուսիայում XVIդ.: Որոշ երկրներում համապատասխանում է մարշալի աստիճանին:
ԳԵՏԱՆՑՈՒՄ, զորքերի կողմից ջրային արգելքի հաղթահարումը:
ԳԵՏԱՆՑՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ, ջրային արգելքը հաղթահարելու տեղամաս:
ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ, գլխավորապես զորքերի (ուժերի) թվաքանակի, նրանց հանդերձանքի և ապահովման, բարոյական վիճակի, մարտական գործողություններ վարելու արվեստով մարտում և օպերացիայի ժամանակ հակառակորդի նկատմամբ ունեցած առավելությունը:
ԳԵՐԻ, պատերազմի ժամանակ թշնամու ձեռքն ընկած և ազատությունից զրկված մարդ:
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐՎԱԾ, դիմադրող հակառակորդին ջախջախիչ հարված հասցնելու և օպերացիայում (մարտում) տրված առաջադրանքը կատարելու նպատակով ընտրված ուղղությամբ (շրջանում) զորքերի (ուժերի) հարձակողական գործողություններ:
ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲ, պետության զորքերը (զինված ուժերը) ղեկավարող օրգան:
ԳԼԽԱՅԻՆ ՁՈԿԱՏ, առաջապահ ուժերի կողմից առանձնացվող երթային պահպանության օրգան, որն ուղարկվում է նրա անխափան տեղաշարժն ապահովելու, նրա վրա հանկարծակի հարձակումը կանխելու և բացազատվելու ու մարտի մեջ մտնելու նպաստավոր պայմաններ ստեղծելու առաջադրանքով: Տեղանքի առանձնահատկություններից ելնելով՝ առաջապահ ուժերի հրամանատարը կարող էր հաճախակի փոխել ԳՁ կազմը, որի պատճառով սխեմաներում (սխեմատիկ պատկերներում) չենք առանձնացրել վերջիններիս կազմից:
ԳԼԽԱՎՈՐ ՈՒԺԵՐ, օպերացիայում (մարտում) գլխավոր խնդիրներ կատարելու համար նախատեսված միավորման (զորամասի) հիմնական ուժերի և միջոցների խմբավորում:
ԳՈՅԱՄԱՐՏ, անհատի, ազգային, մշակութային կամ կրոնական խմբավորման կողմից անբարենպաստ պայմաններում (ագրեսիվ կամ թշնաբար տրամադրված միջավայրում) կյանքի (գոյության) համար մղվող պայքար: Վերջին շրջանի առավել տիպական գոյամարտերից է Արցախյանը (1990-1994թթ.):
ԳՆԴԱԿ, հրաձգային, ինչպես նաև որսորդական և սպորտային զենքի փամփուշտի գլխային (դուրս նետվող) մասը: Հարթափող զենքի համար առաջին Գ-ը (XIV-XVդդ.) կապարից էր, գնդաձև (այստեղից էլ՝ հայերենում ընդունված «Գ.» անվանումը): Խոցող ուժը կախված է Գ. ձևից, խոցման հեռավորությունից և ներքին լրացուցիչ հանդերձանքից: Ամրացվում է փամփուշտի պարկուճի մեջ:
ՍՈՎՈՐԱԿԱՆ Գ., նախատեսված է հակառակորդի կենդանի ուժը խոցելու համար: Սովորական Գ-ը կազմված է պատյանից և միջուկից: Պողպատյա միջուկ ունեցող Գ. պատյանի և միջուկի միջև դրվում է միջնորմը (կապարե շապիկ):
ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ Գ., կենդանի ուժը խոցելուց բացի, ունի նաև այլ նշանակություն: Հատուկ նշանակության Գ. են լուսածրող, հրկիզող, զրահահար, զրահահար հրկիզող, զրահահար հրկիզող լուսածրող, նշանափորձիչ հրկիզող, փոքրացված սկզբնական արագությամբ Գ.:
ԳՆԴԱԿԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ, բնութագրվում է նպատակին հանդիպելու պահին նրա ունեցած էներգիայով:

ԳՆԴԱԿԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ, գնդակի շարժման արագությունը փողաբերանի մոտ: ԳՍԱ զենքի մարտական հնարավորությունների կարևորագույն բնութագրերից է: Մեծացնելով ԳՍԱ մեծանում է գնդակի թռիչքի հեռավորությունը, հարվածող և ծակող ազդեցությունը, փոքրանում է թռիչքի ժամանակ արտաքին պայմանների ազդեցությունը:

ԳՆԴԱԿԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ, կոչվում է գնդակի (նռնակի) անկման կետում ունեցած արագությունը:

ԳՆԴԱՊԵՏ, ավագ սպայական զինվորական կոչում: Համապատասխանում է գնդի հրամանատարի պաշտոնին:

ԳՆԴԱՑԻՐ, ցամաքային և օդային, գլխավորապես, կենդանի նշանակետերը խոցող արագաձիգ ավտոմատ զենք:

ՄԻԱՄՆԱԿԱՆ Գ., գնդացիր, որից հրաձգությունը կարելի է վարել թե՛ հաստոցից և թե՛ հենակներից: ՄԳ-ն սպասարկում է երկու հոգուց կազմված հաշվարկը:

ՀԱՍՏՈՑԱՎՈՐ Գ., հատուկ հաստոցի կամ կայանքի վրայից կրակի համար նախատեսված Գ.: Հաստոցավոր առաջին Գ-ը, որն իրեն լիովի արդարացրեց 1899-1902թթ. անգլո-բուրական պատերազմում և այնուհետև առանց լուրջ փոփոխությունների ընդունվեց գրեթե բոլոր երկրների բանակների սպառազինության մեջ, ամերիկացի գյուտարար Հ.Մաքսիմի Գ. էր:

ՁԵՌՔԻ Գ., ձեռքի հրաձգության ժամանակ հրաձիգի կողմից պահվող Գ.: Հիմնականում մշակվում են ավտոմատների (գրոհային հրացանների) հիմքի վրա և դրանցից տարբերվում են հենակների առկայությամբ, երկարատև հրաձգության համար նախատեսված ծանր փողով և տարողունակ փամփշտատուփով: ՁԳ առաջին նմուշներից առավել արդյունավետը և տարածում գտածը անգլիական «Լյուիսի» ձեռքի Գ. էր (1915թ.):

ՄԵԾ ՏՐԱՄԱՉԱՓԻ Գ., հզոր ավտոմատ զենք է: Նախատեսված է թույլ զրահավորված նպատակների և կրակային միջոցների դեմ պայքարելու համար, ինչպես նաև հակառակորդի կենդանի ուժը ոչնչացնելու և օդային նպատակները խոցելու համար: ՄԳ-ով զինվում են հետևակը և մարտական տեխնիկան:

ԳՐՈՀ, ուժերի գերլարումով վճռական հարձակում հակառակորդի վրա առավելագույն արագությամբ: Այն հարձակման առավել վճռական պահն է և վարվում է բարձր տեմպով՝ գրոհողների ուժերի լրիվ լարմամբ: Գ. հաջողությունը մեծապես ապահովվում է համառությամբ, գրոհողների գործողությունների հանդգնությամբ, հարվածի անսպասելիությամբ, զորաշարժի սրընթացությամբ, կրակի (խոցման) և շարժման անընդհատ զուգակցմամբ: Ըստ գործողությունների ժամանակի Գ. լինում է ցերեկային և գիշերային, իսկ ըստ վարման ուղղությունների՝ ճակատային, թևային, ինչպես նաև թիկունքից: Գ-ն սկսվում է ելման դիրքերից կամ Գ. անցնելու բնագծից՝ կախված Գ. անցնելու եղանակներից:

ԳՐՈՀԱՅԻՆ ԽՈՒՄԲ (ՋՈԿԱՏ), ամրոցների (ամրացված շրջանների) վրա հարձակվելիս, բնակավայրում, լեռներում և այլ պայմաններում մարտ վարելիս՝ լավ ամրացված առանձին հենակետերի, դիմադրության օջախների և կարևոր օբյեկտների ոչնչացման համար կազմավորված ժամանակավոր խմբավորում:

ԳՐՈՀԵԼ, հակառակորդի ամրացված շրջանների, դիրքերի, հզոր պաշտպանական կառույցների (ամրոցների) ուժերի գերլարումով սրընթաց գրավումը:

ԳՐՈՀԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ, պաշտպանվող զորքերի կողմից իրականացվող մարտական գործողություններ, որոնք վարվում են գրոհող հակառակորդին կանգնեցնելու, նրան առավելագույն կորուստներ հասցնելու և պաշտպանության ճեղքումը թույլ չտալու նպատակով:

ԳՐՈՀԻ ԿՐԱԿԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գրոհող զորքերից առաջ, հրետանու կրակով, հրթիռային զորքերի, ավիացիայի և այլ միջոցների հարվածներով հակառակորդին հաջորդաբար կրակով խոցելու փուլերից է: ԳԿԱ կարող է իրականացվել բոլոր խոցող միջոցներով միաժամանակ, լինել միայն հրետանային (հրթիռահրետանային) կամ միայն ավիացիոն:

ԳՐՈՀԻ ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ, ցամաքային զորքերի գրոհից առաջ հակառակորդին կրակով խոցելու փուլը, որը ներառում է հրետանու կրակը, հրթիռային զորքերի, ավիացիայի և այլ միջոցների հարվածները: ԳԿՊ կարող է իրականացվել բոլոր խոցող մի-

ջոցներով միաժամանակ, լինել միայն հրետանային (հրթիռահրետանային), իսկ ավելի հազվադեպ՝ միայն ավիացիոն:

ԳՐՈՀԻՉ ԻՆՔՆԱԹԻՌ, մարտի ժամանակ ցամաքային զորքերին անմիջականորեն օդային աջակցություն ցուցաբերող մարտական ինքնաթիռ՝ նախատեսված վերգետնյա նշանակետերը, հատկապես տանկերը ոչնչացնելու համար: ԳԻ առաջին հաջողված տարբերակը եղել է ռուս ավիակոնստրուկտոր Իլյուշինի ԻԼ-2 գրոհիչը՝ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ:

ԳՈՒՄԱՐՏԱԿ, զորքի ստորաբաժանում, որը բաղկացած է մի քանի վաշտերից:

ԳՈՒՆԴ, (պատմ.) ինքնուրույն մարտական գործողություններ վարող զորական միավոր: Միջնադարյան հայ պատմիչներն ինքնուրույն գործողություններ վարող ցանկացած զորամաս, անկախ մեծությունից, կարող էին կոչել Գ. կամ զորագունդ: Այն հաճախ ընդամենը ցույց էր տալիս, որ մարտին (ռազմերթին կամ այլ կարգի գործողությանը) չի մասնակցում ամբողջ բանակը:

Դ

ԴԱՇԻՆՔ, համատեղ քաղաքական, տնտեսական, ռազմական կամ այլ գործունեություն կատարելու նպատակով ստեղծվող պետությունների ժամանակավոր միություն:

ՌԱԶՄԱԿԱՆ Դ., կոալիցիոն պատերազմ վարելու նպատակով ստեղծվող պետությունների ժամանակավոր ռազմաքաղաքական միություն:

ԴԱՍԱԼՔՈՒԹՅՈՒՆ, զինծառայողի կողմից զորամասի կամ ծառայության վայրի ինքնակամ լքում կամ էլ զինվորական ծառայության չներկայանալը՝ ծառայությունից խույս տալու նպատակով:

ԴԱՍԱԿ, զորական միավոր (ստորաբաժանում) վաշտի կազմում՝ բաղկացած մի քանի ջոկերից:

ԴԱՐԱՆ, թաքնվելու, պահվելու տեղ հակառակորդի վրա հանկարծակի հարձակվելու կամ հեռվից խոցելու համար:

ԴԵՍԱՆՏ, ռազմական գործողություններ վարելու համար հակառակորդի տարածք նետված զորք:

ԴԵՏՈՆԱՑԻԱ, տվյալ պայմաններում հնարավոր առավելագույն արագությամբ ընթացող պայթյուն: Պայթուցիկ նյութերի մեծ մասն ի վիճակի է որոշակի արտաքին պայմաններում դետոնացիա կատարել: Որոշ քանակությամբ պայթուցիկ նյութի դետոնացիա կարող է առաջացնել ուրիշ պայթուցիկ նյութի պայթյուն, նրան անմիջապես հպվող կամ նրանից որոշակի հեռավորության վրա գտնվելու պայմաններում: Դրա վրա են հիմնվում ճայթիչ - դետոնատորի կառուցվածքը և օգտագործումը: Տարածության վրա դետոնացիայի հաղորդումը կապված է պայթուցիկ նյութի՝ շրջակա միջավայրում հարվածային ալիքի տարածմամբ:

ԴԵՏՔ, պաշտպանության ու հետախուզության համար զորքից առաջ ուղարկվող փոքր ջոկատ:

ԴԵՏՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ, ուղարկվում է հետախուզությունը վարող կամ գլխավոր ուժերից կտրված մարտական խնդիրը կատարող մարմիններից՝ հակառակորդին ժամանակին հայտնաբերելու և տեղանքը հետախուզելու համար:

ԴԻԱԿԱՊՏՈՒԹՅՈՒՆ, զինծառայողների կողմից մարտի դաշտում սեփական, դաշնակից կամ հակառակորդի զոհվածների կամ վիրավորների, ինչպես նաև քաղաքացիական անձանց (խաղաղ բնակչության) իրերի բացահայտ կամ գաղտնի հափշտակում: Դ. է համարվում նաև մարտի դաշտից դուր հանվող վիրավորների իրերի հափշտակումը:

ԴԻՆԱՄԻՏ (ՈՒԺԱՆԱԿ), նիտրոգլիցերինի և խտանյութերի հիման վրա ստացված բրիզանտային (փշրող, ջախջախող) պայթուցիկ նյութ: Օգտագործվել է մինչև XXդ. կեսերը, այնուհետև փոխարինվել է ավելի նվազ զգայուն պայթուցիկ նյութերով:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ, պատերազմող կողմերի դիվանագիտական միջոցների օգտագործումը հակամարտությունը վարելիս իրենց համար նպաստավոր միջազգային իրադրություն ստեղծելու նպատակով:

ԴԻՎԵՐՍԻԱ 1. Ռազմական կողմնակի գործողություն՝ հակառակորդի ուշադրությունը գլխավոր հարվածի ռազմաբեմից հեռացնելու նպատակով: 2. Ռազմական և արդյունաբերական կարևոր օբյեկտների շարքից հանում:

ԴԻՎԻԶԻԱ, մի քանի գնդերից կամ բրիգադներից կազմված զորամիավորում:

ԴԻՎԻԶԻՈՆ, հրետանային զորքերի ստորաբաժանում:

ԴԻՏԱԿԵՏ (ԴԿ), մարտակարգի այն տարրն է, որտեղից կատարում են հակառակորդի և տեղանքի հետախուզում, հակառակորդի և մեր զորքերի գործողությունների դիտարկում: ԴԿ-ը կարող է լինել. 1. հրամանատարական (ՀԴԿ). 2. օժանդակ (կողային ԴԿ և առաջնային ԴԿ):

ԴԻՏԱՐԿՈՒՄ, ստորաբաժանումների կողմից հակառակորդի գործողություններին հետևելու միջոցով իրականացվող հետախուզություն վարելու հիմնական միջոց:

ԴԻՏՈՐԴ, նշանակվում է հակառակորդին և տեղանքը հետախուզելու, ինչպես նաև բոլոր մարտատեսակներում, տեղաշարժվելիս և տեղում տեղաբաշխվելիս յուրային ստորաբաժանումների ու հարևանների գործողություններն ու դրությունը դիտարկելու համար:

ԴԻՐՔ, մարտ վարելու համար նախատեսված ամրաշինական կառույց կամ այդ նպատակով նախապատրաստված (կարող է լինել նաև չնախապատրաստված, սակայն զորքով զբաղեցված) տեղանքի հատված: Ժամանակակից մարտում Դ. ունենում են ամենափոքր ստորաբաժանումները կամ կրակային (խոցման) միջոցները, օրինակ՝ ջոկի Դ., կրակային Դ. և այլն:

Ե

ԵԼՄԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ (ԿԵՏ, ԲՆԱԳԻԾ), անհրաժեշտ է, որպեսզի ռազմերթի սկզբում զորամասը (ստորաբաժանումը) վերադասավորվի շարասյան, հավաքի սահմանած արագությունն ու կարգավորի ստորաբաժանումների (մեքենաների) միջտարածությունը:

ԵՆԹԱՍՊԱ, զինվորական կոչում: Զբաղեցնում է սերժանտների և սպաների միջև միջանկյալ տեղ:

ԵՌԱԺԱՆԻ, երեք ատամ՝ սուր ծայր ունեցող մարտական գործիք:

ԵՐԹ (ՌԱԶՄԵՐԹ), զորքերի (զորամիավորումների, զորամասերի, ստորաբաժանումների) կազմակերպված տեղաշարժը ճանապարհներով կամ երթային ուղիներով նշված շրջան, բնագիծ դուրս գալու համար՝ պահպանելով մարտունակությունը:

ԵՐԹԱՅԻՆ ԿԱՐԳ (ԵՐԹԱԿԱՐԳ), զորքերի դասավորվածությունը ռազմերթ կատարելու համար: Ե. կազմված է պահպանության շարասյունից, գլխավոր ուժերից և տեխնիկական ապահովման ու թիկունքի ստորաբաժանումներից:

ԵՐԹԱՐՇԱՎ, զորքերի (զորամիավորումների, զորամասերի, ստորաբաժանումների) կազմակերպված տեղաշարժը ճանապարհներով կամ երթային ուղիներով նշված շրջան, բնագիծ դուրս գալու համար՝ պահպանելով մարտունակությունը:

Զ

ԶԱՎԹԵԼ, զենքի ուժով տիրել, նվաճել:

ԶԵՆԻԹԱՅԻՆ ԶԵՆՔ, օդային նշանակետեր ոչնչացնող զենք: Որպես առանձին զինատեսակ ի հայտ է եկել Առաջին աշխարհամարտի ժամանակ, ռազմական ավիացիայի կիրառմանը զուգահեռ: Տարբերակում են Զ. գնդացրային կայանքները, Զ. հրետանին, Զ. հրթիռային կայանքները, Զ. հրթիռային փոխադրվող համալիրները:

Զ. ԳՆԴԱՅՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՔ, ավտոմատ զենք, բաղկացած է մեկ կամ մի քանի (սովորաբար 2-4) գնդացիրներից (տրամաչափը՝ 12,7-23 մմ, մեկ փողի արագաձգությունը 500-800 կրակոց/րոպ., գնդակոծման ուղղաձիգ անկյունը 90° է, հորիզոնական անկյունը 360°), որոնք մոնտաժված են հատուկ հաստոցի վրա և ունեն զենիթային հրաձգության նշանառման ընդհանուր մեխանիզմներ և նշանոցի հարմարանքներ: Հրաձգությունը կատարվում է հիմնականում զրահահար հրկիզող և զրահահար հրկիզող լուսածրող գնդակներով: Երևան է եկել

1930-ական թթ.: ԶԳԿ-ով զինում են ցամաքային զորքերի զենիթային ստորաբաժանումները, տանկերը, նավերը: Ցամաքային զորքերի ԶԳԿ-ը տեղափոխում են կցովի հրետասայլերով կամ տեղակայում են հատուկ հաստոցների վրա:

Զ. ՀՐԵՏԱՆԻ, օդային նշանակետեր ոչնչացնող հրետանային զենք: Գործածվում են 1914 թվականից:

Զ. ՀՐԹԻՌԱՅԻՆ (ՏԵՂԱՓՈԽՎՈՂ) ՀԱՄԱԼԻՐ, նախատեսված է ցածր թռչող օդային նշանակետերը խոցելու համար: Առաջին ԶՀրՏՀ ընդունվել է ԱՄՆ բանակի և ծովային հետևակի կորպուսի սպառազինության մեջ 1965թ.: Ներկայումս ԶՀրՏՀ-ը փոքր տրամաչափի զենիթային հրետանային կայանքների հետ միասին համարվում է հետևակային և այլ ստորաբաժանումների, ինչպես նաև հրամանատարական կետերի և կարևոր նշանակության փոքր օբյեկտների ՀՕՊ միջոց:

ԶԵՆՔ, հարձակողական կամ պաշտպանողական ռազմական գործիքների ամբողջություն: Լայն հասկացողությամբ կոչվում են զինված պայքարում հակառակորդին հաղթելու և ոչնչացնելու համար օգտագործվող բոլոր հարմարանքներն ու միջոցները:

ԱԿՈՍԱՎՈՐ Զ., զենք, որի փողանցքի ուղղորդ մասը արկին (գնդակին) պտտական շարժում հաղորդելու նպատակով պարուրաձև ակոսներ ունի: Դրա շնորհիվ արկը (գնդակը) հետագծում կայունությունը չի կորցնում, ինչը հնարավորություն է ընձեռում հրաձգության համար բավարար հեռավորություն և խտություն ստանալ:

ԱՆՁՆԱԿԱՆ Զ., կարճ տարածությունների վրա ինքնապաշտպանության և հարձակման համար նախատեսված անհատական զենք: Մեր օրերում ԱԶ թվին են պատկանում ատրճանակները, ռևոլվերները, ինչպես նաև սվին-դանակները (դաշույնները), սրերը ևն:

ԱՎՏՈՄԱՏ Զ., վերալիցքավորումը կատարվում է վառոդի գազերի էներգիայի հաշվին: Վերալիցքավորումը և հերթական կրակոցն իրականացվում են ավտոմատ՝ ի հաշիվ վառոդային գազերի էներգիայի:

ԹՄԲՈՒԿԱՎՈՐ Զ., փամփուշտների սնուցումը կատարվում է թմբուկից: Տարածված է հիմնականում ռևոլվերավոր ատրճանակների տեսքով: Թմբուկավոր զենքերի հիմնական թերությունը վերալիցքավորումն է (ձեռքով պարկուճների հեռացումը և թմբուկի լիցքավորումը բավական ժամանակ է պահանջում):

ԻՆՔՆԱԼԻՑՔԱՎՈՐՎՈՂ Զ., կարելի է հրաձգությունը վարել միայն մենահատ կրակոցներով: Ինքնալիցք զենքն ունի պահեստատուփ, որից հերթական փամփուշտը յուրաքանչյուր կրակոցից հետո ավտոմատ ուղարկվում է փամփշտանոց, և հերթական կրակոցն իրականացնելու համար բավական է թողնել և կրկին սեղմել ձգանը:

ԻՆՔՆԱՁԻԳ Զ., կարելի է հրաձգությունը վարել կրակահերթերով և անընդհատ կրակով: Ինքնաձիգ զենքով կրակոցները հետևում են մեկը մյուսին, քանի դեռ չի թողնվել ձգանը կամ պահեստատուփում (ժապավենում) չեն վերջացել փամփուշտները:

ԻՆՔՆԱՇԵՆ Զ., անհատի կամ մի խումբ անձանց կողմից տնայնագործական եղանակներով (զենք արտադրելու համար չնախատեսված սարքավորումների և նյութերի կիրառմանբ) պատրաստված զենք:

ԽՄԲԱԿԱՅԻՆ Զ., անձնակազմի (հաշվարկի) կողմից սպասարկվող զենք, որոնք նախատեսված են հիմնականում մեծ հեռավորության վրա հակառակորդին խոցելու համար: Հին և միջին դարերում ԽԶ պարսպակործան, քարանետ ու նիզականետ մեքենաներն էին:

ԿԱՅԾՔԱՐԵ ԿՈՂՊԵՔՈՎ Զ., 17,5-21,5 մմ տրամաչափի, 4-6 կգ քաշով և 140-200 մ հրաձգության հեռահարությամբ ձեռքի հրազեն (ատրճանակ, հրացան): Հայտնվել է պատրույգավոր հրացանից հետո: XIXդ. կեսերին փոխարինվել է պատիճավոր Զ-ով:

ՀԱՐԹԱՓՈՂ Զ., զենք, որի փողանցքը հարթ է: Մինչև XIXդ. կեսերը գրեթե ամբողջ հրազենը եղել է հարթափող և փողաբերանից լիցքավորվող, կրակում էր գնդաձև գնդակներով (պատրույգավոր՝ մուշկետ, կայծքարի կողպեքով՝ հրացան կամ ատրճանակ ևն): Փոխարինվել է ակոսավոր զենքով: 1720-ական թթ. Արցախում և Սյունիքում կազմակերպվել է ՀԶ (այդ թվում՝ հրանոթների) արտադրություն, որով զինվում էին ազատագրական պայքարի մարտիկները:

ՀՐԱՁԳԱՅԻՆ Զ., զենք, որում փողից գնդակի (արկի) դուրս նետումը կատարվում է վառոդի գազերի էներգիայի օգտագործմամբ:

ՀՐԿԻԶՈՂ Զ., հակառակորդի վրա անմիջականորեն հրկիզող նյութերով ազդող և դրանցով հրդեհներ առաջացնող զենք: Ներառում է զինամթերքը (հրահեղուկ խառնուրդը) և նշանակետին հասցնելու միջոցը:

ՃԱՆԿՄԱՆ Զ., թիակավոր և առագաստային նավատորմերում ճանկումով հակառակորդի նավը գրավելու ժամանակ օգտագործվող սառը կամ հրաձգային զենք:

ՆԵՏՈՂ Զ., հին և միջին դարերում հակառակորդի կենդանի ուժը ոչնչացնելու և պաշտպանական կառույցներն ավերելու նպատակով կիրառվող ռազմական մեքենաներ: Նետող մեքենաների կառուցվածքը հիմնված է ոլորված և ձգված թելքերի (ջլեր, մազեր ևն) էներգիայի օգտագործման վրա: Նետող մեքենաները հայտնի էին դեռ Հին Արևելքում (Ասորեստանում, Հնդկաստանում ևն), Հին Հունաստանում և, հատկապես, Հին Հռոմում, որտեղ այդ մեքենաները բաժանվում էին բալիստների և կատապուլտների: V դարում Բյուզանդիայում սկսեցին կիրառել նետող մեքենաների նոր տեսակ՝ ֆրանդիբոլը:

ՈՉ ԱՎՏՈՄԱՏ Զ., վերալիցքավորումը կատարվում է հրաձիգի ջանքով: Լինում են միալիցք, տուփով և թմբուկավոր (ռևոլվերներ, սպորտային հրացաններ և այլն):

ՊԱՀԵՍՏԱՏՈՒՓԱՅԻՆ Զ., փամփուշտների սնուցումը կատարվում է փամփշտատուփից: Փամփշտատուփը կարող է լինել ուղղանկյուն, կլոր սկավառակային, շնեկային ևն:

ՌԵԱԿՏԻՎ Զ., զենք, որից հրաձգությունը կատարվում է ռեակտիվ (ինքնաշարժ) արկով:

ՍԱՌԸ Զ., ձեռնամարտի զենք: Պայմանականորեն դասակարգվում է. ըստ կառուցվածքի՝ շեղբավոր (դաշույն, թուր, սուր, սուսեր, դանակ, սվին ևն), կոթավոր (սակր, գեղարդ, նիզակ, տեգ ևն) և հարվածային (գուրզ, տապար ևն): Ըստ խոցման՝ ծակող, հատող, ծակող-հատող, ծակող-կտրող, հարվածող-հատող և հարվածող-փշրող: ՍԶ հայտնի է հնուց, և մինչև այժմ էլ նրա որոշ նմուշներ օգտագործվում են զորքերում (դաշույն, դանակ, սվին, սուսեր):

ՏՈՒՓԱՎՈՐ Զ., փամփուշտների սնուցումը կատարվում է տուփից: Տուփը, որպես կանոն, փամփուշտներով լիցքավորվում է պահունակի օգնությամբ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ Զ., նախատեսված է հրազենի նյութական մասի, հրաձգության եղանակներն ու կանոններն ուսումնասիրելու համար:

ԶԵՆՔԻ ՀԵՏՄՂՈՒՄ, կոչվում է զենքի (փողի) շարժումը դեպի հետ կրակոցի ժամանակ:

ԶԵՆՔԻ ՎԵՐԱԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ, զենքը հաջորդ կրակոցին պատրաստելու գործընթաց:

ԶԻՆԱԴԱԴԱՐ, ռազմական գործողությունները պատերազմող կողմերի միջև ժամանակավորապես դադարեցնելու փոխադարձ համաձայնություն: Լինում է ընդհանուր (կնքում են գլխավոր հրամանատարները) և տեղական (կնքում են տեղական հրամանատարները գլխավոր հրամանատարի լիազորությամբ): Ընդհանուր Զ-ի դեպքում պատերազմական գործողությունները դադարեցվում են պատերազմի ողջ թատերաբեմում (հարցերի լայն շրջանակներ ընդգրկելու հետևանքով հաճախ վեր է ածվում հաշտության պայմանագրի), մասնակի Զ-ի դեպքում՝ որոշակի հատվածում:

ԶԻՆԱՄԹԵՐՔ, սպառազինության բաղկացուցիչ մասը, որը նախատեսված է նշանակետը անմիջապես խոցելու կամ զորքերի գործողություններն ապահովելու համար: Ըստ զինատեսակի Զ. դասակարգվում են. հրթիռների մարտական մասեր, հրետանային Զ. (հրետանային կրակոցներ, ականանետային կրակոցներ, նռնականետային կրակոցներ), հրազենի փամփուշտներ, խոցման ռմբանետման միջոցներ, ինժեներական ականներ, ծովային ականներ, ձեռքի նռնակներ, լուսավորող և ազդանշանային փամփուշտներ ևն:

Ըստ նշանակության Զ. դասակարգվում են հիմնական, հատուկ և օժանդակ Զ.:

ՀԻՄՆԱԿԱՆ Զ., լինում են սովորական և զանգվածային խոցման:

ՍՈՎՈՐԱԿԱՆ Զ., լիցքավորվում են կամ պայթուցիկ նյութով, կամ հրկիզող նյութերով:

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԽՈՑՄԱՆ (ՈՉՆՉԱՑՄԱՆ) Զ., լինում են միջուկային, քիմիական և կենսաբանական Զ.:

ՀԱՏՈՒԿ Զ., լինում են խոտորումներ առաջացնող, լուսավորող, ազդանշանային, ծխային, նշանափորձիչ-նպատականշող, քարոզչական ևն:

ՕԺԱՆԴԱԿ Զ., լինում են ուսումնական, նմանակող ևն:

ԶԻՆԱՆՈՑ (ԱՐՍԵՆԱԼ), զենք և զինամթերք արտադրող, ընդունող, նորոգող, հավաքող, հաշվառող, պահպանող և զորքերին մատակարարող ռազմական ձեռնարկություն: Հայտնվել է XVIդ.: Հայաստանում լիարժեք իմաստով Զ. ունեցող առաջին ամրոցներից մեկը Դավիթ-Բեկի կառուցած Հալիձորն էր:

ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ, օրենքով հաստատագրված քաղաքացիների Հայրենիքը պաշտպանելու սահմանադրական պարտքը և պարտականությունները կատարելու կարգը: Զ. նախատեսում է. զինվորական հաշվառումը, զինվորական ծառայությանը պարտադիր նախապատրաստումը, զորակոչով զորակոչումը և անցումը զինվորական ծառայության, պահեստազորում գտնվելը, պահեստազորում գտնվելու ընթացքում հավաքներին մասնակցումը, ինչպես նաև զորահավաքի (մոբիլիզացում), ռազմական դրության և պատերազմի ժամանակ զորակոչ, զինվորական ծառայության և ռազմական ուսուցման անցումը:

ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ, գործող իշխանությունների դեմ քաղաքական իշխանությունը զավթելու նպատակով զենքը ձեռքին որոշակի սոցիալական խմբերի բացահայտ գործողություններ:

ԶԻՆՎՈՐ, զինված ուժերի շարքային անձնակազմի կրտսեր զինվորական կոչում: Հին Հայաստանում կոչել են զենուվոր, զինավոր, զինակիր:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, օրենքներով, զինվորական կանոնադրություններով և հրամանատարների հրամաններով սահմանված կարգ ու կանոնի ճշգրիտ պահպանումն է բոլոր զինծառայողների կողմից:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏԻՎ, զինվորի ներքին բարոյական հատկությունը, որը բնութագրում է նրա վարքը, վերաբերմունքը կոլեկտիվի, զինվորական պարտքը կատարելու հանդեպ: ԶՊ բարձրագույն ցուցանիշը՝ Հայրենիքը զինված պաշտպանելու ժամանակ մարտի դաշտում ցուցաբերած քաջությունն է:

ԶՈՐԱԲԱՆԱԿ, մի քանի զորքերի միավորում, որը գտնվում է մեկ գլխավոր հրամանատարի հրամանատարության տակ և գործում է ռազմաճակատի մի հատվածում:

ԶՈՐԱԹԵՎ (ԹԵՎ), 1. կռվող զորքի աջ, ձախ թևը, մարտակարգի կենտրոնը կամ առանձնացված պահեստազորը: 2. Զորքերի մարտական դասավորվածության՝ զորասյան կամ շարքի աջակողմյան կամ ձախակողմյան մասը:

ԶՈՐԱԽՈՒՄԲ, զորքի մաս, առանձին զորական խումբ:

ԶՈՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐ, զինված ուժերում բարձր հրամանատարական կամ շտաբային պաշտոն զբաղեցնող զինվորական պետ:

ԶՈՐԱՄԱՍ, հաստատագրված հաստիքներով պահվող զինված ուժերի ինքնուրույն մարտական և վարչատնտեսական միավոր: Ներառում է բոլոր գնդերը, գնդերի կազմի մեջ չմտնող առանձին գումարտակները, գումարտակների և գնդերի կազմի մեջ չմտնող առանձին վաշտերը:

ԶՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄ, մի քանի զորամասերից, սովորաբար տարբեր զորատեսակներից, հատուկ զորքերից (ծառայություններից), ինչպես նաև ապահովման և սպասարկման զորամասերից կազմված զինվորական կազմավորում:

ԶՈՐԱՅԻՆ ԱՄՐԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ, զորքերի մարտական գործողությունների ապահովման կարևոր միջոց են: Բարձրացնում են անձնակազմի կենսունակությունը դիրքերում և տեղակայման շրջաններում, մարտական տեխնիկայի ու զենքի օգտագործման արդյունավետությունը, ապահովում են զորքերի պաշտպանությունը ժամանակակից խոցման միջոցներից:

ԶՈՐԱՆՈՑ, զինվորական ստորաբաժանումները տեղավորելու համար ննջարանային, կենցաղային, ծառայողական և ուսումնական կացարաններով հատուկ պատրաստված կամ ձևափոխված շինություն:

ԶՈՐԱՇԱՐԺ, մարտի կարևորագույն բաղադրիչներից է: Զ. էությունը ուժերի ու միջոցների անհրաժեշտ խմբավորում ստեղծելու նպատակներով մարտի ընթացքում զորքերի կազմակերպված, ծածուկ և արագ տեղաշարժն է, ինչպես նաև հարվածներն ու կրակը տեղափոխե-

լը կամ վերանշանառելը (կենտրոնացնելը, բաշխելը)՝ հակառակորդին առավել արդյունավետ խոցելու համար: Պաշտպանությունում Զ-ը կիրառվում է հակառակորդի հարվածի (կրակի) տակից դուրս գալու և հակագրոհի անցնելու բնագիծ դուրս գալու համար: Ուժերով և միջոցներով Զ. տեսակներից են թևանցումը, շրջանցումը, նահանջը:

Զ. ԿՐԱԿՈՎ, կրակով կատարվող Զ. էությունն այն է, որ կրակը միաժամանակ կամ հաջորդաբար կենտրոնացնում են հակառակորդի կարևորագույն օբյեկտների վրա կամ բաշխում (ապակենտրոնացնում) մի քանի օբյեկտներ խոցելու, ինչպես նաև նոր օբյեկտների վրա վերանշանառելու համար:

ԶՈՐԱՇԱՐԺԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, զորաշարժի բոլոր ձևերի կիրառմամբ մարտական գործողությունների տեսությունն ու գործնական վարումը, շարժական պաշտպանություն: Պաշտպանության տեսակ, որի նպատակն է հակառակորդին վնասներ պատճառել, ժամանակ շահել և տարածքային կորուստների հաշվին պահպանել սեփական ուժերը: Որպես կանոն, կիրառվում է դիրքային պատերազմ մղելու համար բավարար ուժեր և միջոցներ չունենալու դեպքում:

ԶՈՐԱՇԱՐԺԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ, առանց համատարած կայուն ճակատի և արագ փոփոխվող իրադրությամբ ընթացող մեծամասշտաբ զորաշարժերով բնութագրվող պատերազմ: Մեր իրականության մեջ ԶՊ առավել ցայտուն օրինակը Արցախյան գոյամարտի առաջին փուլն է, թեև որոշ գիտնականներ ամբողջ գոյամարտն են ԶՊ համարում:

ԶՈՐԱՇԱՐԺԱՅՆՈՒԹՅՈՒՆ, մարտական գործողություններին պատրաստվելու և մարտի ժամանակ արագ տեղաշարժ, բացազատում իրականացնելու զորքերի ունակությունը: Արցախյան գոյամարտի տարիներին ադրբեջանական կողմի նկատմամբ հայկական ինքնապաշտպանական ջոկատների ունեցած կարևոր առավելություններից մեկը ԶՇ էր:

ԶՈՐԱՎԱՐ, պատերազմի ժամանակ պետության զինված ուժերը կամ խոշոր զինվորական կազմավորումներ ղեկավարող և ռազմական գործողությունների ընթացքում մեծ հաջողությունների հասած ռազմական գործիչ կամ զորահրամանատար: Զ. են համարվում այն անձինք, ովքեր աչքի են ընկնում ռազմական տաղանդով, ստեղծագործական մտածելակերպով, ռազմական գործողությունների զարգացումը կանխատեսելու ունակությամբ, ամուր կամքով և վճռականությամբ, մարտական փորձով, հեղինակությամբ, կազմակերպչական բարձր հատկանիշներով:

ԶՈՐԱՏԵՍ (ՍՏՈՒԳԱՏԵՍ), 1. հրամանատարության կողմից զորքերի պաշտոնական ստուգում՝ շքերթի, զորահանդեսի ժամանակ, 2. ավագ հրամանատարների կողմից զորքերը ստուգելու ձև, նրանց համալրվածությունը, շարային պատրաստականությունը և մարտական ներդաշնակվածությունը, սպառազինության, համազգեստի և հանդերձանքի առկայությունը և վիճակը ևն ստուգելու նպատակով:

ԶՈՐԱՏԵՍԱԿ, զինված ուժերի բաղկացուցիչ մաս՝ նախատեսված որոշակի միջավայրում մարտական գործողություններ վարելու համար:

ԶՈՐՔԵՐ, ըստ պատկանելության կամ նշանակության զորամասերի, միավորումների և այլ մշտական կամ ժամանակավոր ռազմական կազմավորումների ընդհանրական անվանումը:

ԶՈՐՔԵՐԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄ, զորքերի տեղափոխումը թիկունքից մարտական գործողությունների շրջան նոր խմբավորումներ կազմելու կամ գործող խմբավորումները ուժեղացնելու նպատակով:

ԶՈՐՔԵՐԻ ԲԱԶԱՎՈՐՈՒՄ (կենտրոնացում և տեղաբաշխում մարտական գործողություններ չկատարելու դեպքում), զորքերի կողմից այն տարածքի, որտեղ նրանք տեղաբաշխված են, հաղորդակցման ուղիների, շինությունների, մարտական պատրաստվածության, խաղաղ պայմաններում ամենօրյա գործունեության և մարտական գործողություններ վարելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների պահեստների օգտագործումը:

ԶՈՐՔԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, տրված խնդիրները կատարելու համար զորքերի ծավալումը (տեղաբաշխումը):

ԶՈՐՔԵՐԻ (ՈՒԺԵՐԻ) ԴՈՒՐՍ ԳԱԼԸ (ՀԱՆՈՒՄԸ) ՀԱՐՎԱԾԻ ՏԱԿԻՑ, մարտունակությունը պահպանելու նպատակով զորքերի կողմից դիրքերի, շրջանների, տեղաբաշխման վայրերի արագ և ծածուկ փոխումը:

ԶՈՐՔԵՐԻ (ՈՒԺԵՐԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, զինված ուժերի, ռազմական կազմավորումների կառուցվածքը, որն ապահովում է նրանց նպատակահարմար կազմը, զորատեսակների և զինատեսակների առավել նպատակահարմար հարաբերակցությունը, բարձր մարտական պատրաստվածությունը և հաջող մարտական գործողություններ վարելու ունակությունը:

ԶՈՐՔԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ, նշված շրջաններում զորամասերի, զորամիավորումների և միավորումների հավաքը և տեղաբաշխումը:

ԶՈՐՔԵՐԻ (ՈՒԺԵՐԻ) ՂԵԿԱՎԱՐՈՒՄ, հրամանատարության, հրամանատարների և շտաբների գործունեությունը զորքերը մշտական մարտական պատրաստվածության մեջ պահելու, օպերացիաները (մարտական գործողությունները) պատրաստելու և տրված խնդիրները կատարելիս զորքերը կառավարելու համար:

ԶՈՐՔԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ (ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ), խաղաղ ժամանակ զորամասերի տեղավորումը դրանց համար հատկացված վայրերում:

ԶՐԱՀ, պաշտպանական հանդերձանք: Բաղկացած էր զանազան մասերից (լանջապանակ, թիկնապանակ, ուսակալ, դիմակալ, զանգապան, սռնապան, բազկապան ևն): Հրազենի գյուտից հետո զրահը կորցնում է դերը, իսկ XVIIIդ. գործածվում է միայն զրահավորված հեծելազորում՝ կիրասիրների մոտ: Հրազենի կրակի խտության մեծացման պատճառով XXդ. կենդանի ուժի կորուստները կտրուկ աճեցին: Զինվորները պաշտպանական հանդերձանքից ունեին միայն պողպատյա սաղավարտներ, որով պաշտպանում էին միայն գլուխը: Անհատական պաշտպանության միջոցները երևան եկան միայն Երկրորդ աշխարհամարտի ժամանակ:

ԶՐԱՀԱԳՆԱՑՔ, զրահապատված, անվավոր երկաթուղային շարժակազմ՝ հրետանային ու գնդացրային սպառազինումով: Երկրորդ աշխարհամարտից հետո գրեթե չեն գործածվում:

ԶՐԱՀԱՄԵՔԵՆԱ, զրահապատված, անվավոր ավտոմեքենա՝ հրետանային ու գնդացրային սպառազինումով: Երկրորդ աշխարհամարտից հետո գործածվում են սահմանափակ չափերով:

ԶՐԱՀԱԽՈՒՄԲ, մի քանի ՀՄՄ-ներից (զրահափոխադրիչներից) ու տանկերից կազմված համահավաք կազմավորում, որը նախատեսված է վաշտի (գումարտակի) պաշտպանողական մարտում ծագող այն խնդիրները լուծելու համար, որոնք պահանջում են սրընթաց, զորաշարժային գործողություններ և հակառակորդի արդյունավետ կրակային խոցում: Զ. ստեղծվում է զորամասի (ստորաբաժանման) հրամանատարի որոշմամբ և այդ մարտական միավորի մարտակարգի տարրն է: Դրա ստեղծման նպատակներն են պաշտպանության ակտիվությունը բարձրացնելն ու սպառնալից ուղղության վրա կայունությունը ժամանակին ուժեղացնելը:

ԶՐԱՀԱՓՈԽԱԴՐԻՉ (ԶՓ), զրահապատ, թրթուրավոր կամ անվավոր, մեծ անցունակության ռազմամեքենա: Նախատեսված է մոտոհրաձգային զորքերը մարտի դաշտ տեղափոխելու, ինչպես նաև կողային սպառազինության կրակով նրանց աջակցելու համար:

Է

ԷՇԵԼՈՆ, զորամասի կամ շարժվող զորասյան մարտակարգի դասավորումը ճակատով և խորությամբ:

ԷՍԿԱԴՐԱ, ռազմածովային կամ օդային նավատորմի խոշոր միավորում:

ԷՍԿԱԴՐԻԼԻԱ, ռազմաօդային նավատորմի ստորաբաժանում, որն ընդգրկում է թռչող սարքերի (ինքնաթիռ, ուղղաթիռ) մի քանի օղակ:

ԷՍԿԱԴՐՈՆ, հեծելազորի գնդի ստորաբաժանում, որը համապատասխանում է հետևազորի վաշտին:

Թ

ԹԵԹԵՎ ՀՐԵՏԱՆԻ, մարտում հետևակին անմիջական աջակցող դաշտային հրետանու տեսակ:

ԹԻԿՈՒՆՔ, 1. զորքերի (ուժերի) թիկունքային ապահովման համար նախատեսված ուժերի, միջոցների և կառավարման օրգանների համակարգ, 2. մարտական գործողությունների շրջանից բացի պատերազմող պետության ամբողջ տարածքն իր բնակչության և տնտեսական ներուժով հանդերձ, 3. շարքի, մարտական կարգի, զորքերի օպերատիվ դասավորվածության ճակատի հակադիր կողմը:

ԹԻՐԱԽ, իրական նշանակետերի հայտնաբերումը և խոցումն ուսուցանելու, հետախուզության և խոցման արդյունավետությունը գնահատելու, ինչպես նաև խոցման արդյունքները համեմատելու համար նախատեսված նմանակող նշանակետ:

ԹՆԴԱՆՈԹ, հրետանային հեռահար զենք՝ բաց ուղղաձիգ կամ հեռահար նշանակետեր գնդակոծելու համար: Հրետանային այլ զենքերի համեմատ հզոր է, այսինքն՝ մեծ է հեռահարությունը (40 կմ և ավելի), արկի սկզբնական արագությունը (մինչև 1500 մ/վրկ), արագաձգությունը (զենիթային ավտոմատ Թ. միջին չափանիշն է 400-600 կրակոց/րոպ.), ավելի զանգվածեղ է, փողը՝ երկար: Թ. ըստ նշանակության լինում են՝ դաշտային, հակատանկային, զենիթային, նավային և այլն: Եվրոպայում Թ. սկսել են պատրաստել XIVդ.: Մինչև XIXդ. Թ. ձուլում էին թուջից, հարթ փողերով: Պողպատե ակոսավոր Թ. ստեղծվել են XIXդ.:

ԹՐԱԴԱՇՈՒՅՆ, թրի նման, բայց ուղիղ ու լայն երկսայր շեղբով սառը զենք (տե՛ս ակինակ):

ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐ, հակառակորդի կենդանի ուժը խոցելու ունակ բարձր տոքսիկությամբ օժտված քիմիական միացություններ:

ԹՈՒՐ, կտրող զենք: Բաղկացած է գոգավոր ուռուցիկ կողմից սուր, ներճկված կողմից բութ շեղբից, դաստապանից (երախակալ, բռնակ, կոթ) և կռվանից (շեղբը դաստապանից բաժանող խաչաձև մաս), ունի սուր ծայր: Դաստապանը երբեմն ունենում է 1-3 աղեղնակ: Թ. երկարությունը՝ 80-90, լայնությունը 3-3,5 սմ է: Հարմարավետությունը որոշվում է շեղբի այնպիսի կորությամբ և ծանրության կենտրոնով, որի դեպքում փոքրանում է կտրելու անկյունը և մեծանում հարվածի ուժը: Միայն կտրող արևելյան Թ. շեղբի թեքությունը հասնում է 10, իսկ ծակելու համար հարմարեցված եվրոպականինը՝ 1 սմ: Կրում են պատյանի մեջ, որը լինում է փայտե, մետաղե, փղոսկրե, հաճախ՝ կաշեպատ, թավշապատ, զարդարված ոսկյա, արծաթյա (երբեմն՝ թանկագին քարերից) վերադիր զարդերով և փորագիր նախշերով: Ենթադրվում է, որ Թ. միջնադարյան Հայաստանում եղել է հեծելազորի հիմնական զենքը: Պատմիչները երբեմն Թ. նույնացրել են սրի հետ:

ԹԵՎ (ՁՈՐԱԹԵՎ), շարքի աջ (ձախ) կողմը: Ձորքերի մարտակարգի աջ (ձախ) կողմը: Թ. սովորաբար համարվում է մարտակարգի առավել խոցելի տեղը:

ԹԵՎԱՅԻՆ ՀԱՐՎԱԾ, հարված հակառակորդի մարտակարգի թևին, հետագայում նրա գլխավոր խմբավորման թիկունք դուրս գալու նպատակով:

ԹԵՎԱՆՑՈՂ ՁՈԿԱՏ, հակառակորդին թիկունքից հարվածներ հասցնելու, նրա տեղաբաշխման խորքում կարևոր օբյեկտներ զավթելու և պահելու նպատակով նրան թևանցելու համար ստեղծված հատուկ կազմավորում:

ԹԵՎԱՆՑՈՒՄ, հարվածի համար հակառակորդի թև դուրս գալու նպատակով ստորաբաժանումների կողմից կատարվող զորաշարժ:

Ժ

ԺԱՄԱՊԱՀ, հանձնարարված կետը (պահակակետը, օբյեկտը) պահպանող զինված պահակ, զինվորական պահակ:

Ի

ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ, նպատակն է ստորաբաժանումների համար ստեղծել ժամանակին և քողարկված ձևով դրանց առաջխաղացման, ծավալման և զորաշարժի, անձնակազմի, սպառազինության ու տեխնիկայի պաշտպանությունը բարձրացնելու բոլոր խոցամիջոցներից, ինչպես նաև հակառակորդին կորուստներ պատճառելու և նրա գործողությունները դժվարացնելու պայմաններ: Ինժեներական ապահովումը ներառում է ինժեներական հետախուզությունը, ամրաշինական կառույցները, քողարկման ինժեներական միջոցառումները, ինժեներական արգելափակոցների տեղադրումը, արգելափակոցներում և փլվածքներում անցումներ բացելը, արգելքների վրայով անցուղիներ սարքավորելը, անցատեղերի տեղադրումն ու պահպանումը, ջրի հայթայթումն ու մաքրումը և ջրապահովման կետերի սարքավորումը:

ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ, կառուցվում են տեղանքի ինժեներական կառուցապատման ժամանակ: ԻԿ պատկանում են ամրաշինական կառույցները, ռազմական ճանապարհները, կամուրջները և կեղծ շինությունները:

ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, միջոցառումների համալիր, որոնք անցկացվում են տեղանքի ինժեներական կառուցապատման, հակառակորդի ինժեներական զորքերի վիճակի և հնարավորությունների մասին տվյալներ հայթայթելու նպատակով: Հետախուզության տեսակ է:

ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ, մարտի ինժեներական ապահովման համար օգտագործվող միջոցների ամբողջություն: Ներառում է. զինամթերքներն (ինժեներական ականներ, պայթեցնող լիցքեր, ականազերծման լիցքեր) իրենց մարտական կիրառման միջոցներով (ականային արգելափակիչներ, դասավորիչներ և նետիչներ, հեռաականապատման համակարգեր), ինժեներական տեխնիկան և ինժեներական ունեցվածքը (քողարկման միջոցներ, արդյունաբերական արտադրության ամրաշինական կառույցներ, հողափոր գործիքներ, ականազերծման համակարգեր ևն):

ԻՆՔՆԱԹԻՌ, մթնոլորտում թռչելու համար նախատեսված օդից ծանր, քարշ ստեղծող ուժային կայանքով և աերոդինամիկ վերամբարձ ուժ առաջացնող անշարժ թևերով թռչող սարք: Տարբերում են ռազմական և քաղաքացիական Ի.:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՁՈԿԱՏ(ՆԵՐ), օտարերկրյա պետության և գաղութատիրության դեմ ճնշված և կախյալ ժողովուրդների կողմից ազգային, կրոնական կամ լեզվային հատկանիշներով կազմավորված զինված խմբավորումներ՝ ինքնորոշման, պետական ինքնիշխանության, ազատ և ինքնուրույն տնտեսական և մշակութային զարգացման համար:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, մարտական գործողությունների պատրաստման և անցկացման վրա ազդող գործոնների և պայմանների ուսումնասիրում և վերլուծում:

Լ

ԼԵԳԵՈՆ, 1. Հին Հռոմի բանակի հիմնական կազմակերպչական և մարտավարական միավորը: Մինչև Ք.ա. VIդ. ամբողջ հռոմեական բանակի անվանումը: 2. XVI-XXդդ. արևմտաեվրոպական որոշ երկրներում հիմնական կազմ չունեցող ռազմական կազմավորումների անվանում (հիմնականում օտարերկրացիներից համալրված): Այսպիսի Լ. օրինակ էր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ֆրանսիական բանակում ստեղծված Հայկական Լ-ը:

ԼԵՅՏԵՆԱՆՏ, զինված ուժերի կրտսեր սպայական կոչում: Կրտսեր և ավագ Լ. կոչումների միջև միջանկյալ տեղ է զբաղեցնում: Համապատասխանում է դասակի հրամանատարի պաշտոնին: Հայտնվել է XVդ. Ֆրանսիայում:

ԼԵՌՆԱՅԻՆ ՁՈՐՔԵՐ, լեռնային հատուկ հանդերձանքով և սպառազինությամբ զինված և լեռներում մարտ վարելու համար մարզված զինվորներ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՀՐԵՏԱՆԻ, լեռներում մարտական գործողություններ վարելու համար նախատեսված հատուկ հրետանի: Ներառում է թեթև հրանոթները, հաուբիցները, ականանետները և ռեակտիվ համազարկի կայանքները, որոնց կառուցվածքը թույլ է տալիս դրանք արագ քանդել և տեղափոխել գրաստի (բեռնակիր կենդանիներ) օգնությամբ: ԼՀ առաջ է եկել XVIIIդ.:

ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ, զորքերի ուսուցում լեռներում մարտական գործողություններ վարելու համար: ԼՊ հիմնական խնդիրն է անձնակազմին սովորեցնել հաղթահարել լեռնային խոչընդոտները և զենքը կիրառել մարտում:

ԼԻՑՔ, պայթուցիկ նյութի, վառոդի որոշակի քանակություն: Դասակարգվում են նետող, պայթող, դուրս նետող, պայթեցնող և հրթիռային լիցքեր:

ՆԵՏՈՂ Լ., վառոդի որոշակի քանակություն հրաձգային զենքի փողից արկը (ականը, գնդակը, նռնակը) դուրս նետելու համար: Տեղավորվում է պարկուճներում և կարտուզներում:

ՊԱՅԹՈՂ Լ., բրիզանտային պայթուցիկ նյութի որոշակի քանակություն խոցման տարրերն (հրթիռների, հրետանային արկերի և ականների, նռնակների, ռումբերի, ինժեներական ականների ևն) անմիջականորեն լիցքավորելու համար: Ապահովում է նշանակետերի խոցումը հարվածային ալիքով և պայթյունի արգասիքներով:

ԴՈՒՐՍ ՆԵՏՈՂ Լ., վառոդի կամ պիրոտեխնիկական խառնուրդի որոշակի քանակություն՝ առանց հատուկ լիցքի իրանը վնասելու դրանք հրկիզող, ծխային, լուսավորող, կասետային, քարոզչական և այլ տիպի զինամթերքներից դուրս նետելու համար:

ՊԱՅԹԵՑՆՈՂ Լ., պայթուցիկ նյութի որոշակի քանակություն ինքնուրույն պայթյուն իրականացնելու համար:

ՀՐԹԻՌԱՅԻՆ Լ., կազմված է ռեակտիվ շարժիչի այրման խցում տեղավորված բալիստիկ վառոդի կամ խառնուրդային վառելիքի մեկ կամ մի քանի բլոկներից:

ԼՐՏԵՍ, օտար պետությանը կամ կազմակերպությանը (նրանց գործակիցներին) հանձնելու նպատակով պետական կամ ռազմական գաղտնիք հանդիսացող, ինչպես նաև երկրի անվտանգությանն ի վնաս օգտագործվող այլ տվյալներ հափշտակող, գողություն կամ հայթայթում կատարող անձ:

ԼՐՏԵՍՈՒԹՅՈՒՆ, պետական կամ ռազմական գաղտնիք հանդիսացող, ինչպես նաև երկրի անվտանգությանն ի վնաս օգտագործվող այլ տվյալների հափշտակում, գողություն կամ հայթայթում օտար պետությանը կամ կազմակերպությանը (նրանց գործակիցներին) հանձնելու նպատակով:

Խ

ԽԱՂԱՂ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ, պատերազմող կողմերի զինված ուժերին չպատկանող և մարտական գործողություններին անմիջական մասնակցություն չունեցող անձինք:

ԽԱՆԴԱԿ, պարիսպների շուրջը փորված խրամ՝ պաշտպանության համար:

ԽԶԱԿՈԹ, հրազենի ուսին հենվող լայն, հաստ ծայրը:

ԽԻՏ (ԽՏԱՑՎԱԾ) ՇԱՐՔ (ԽԻՏ ՄԱՐՏԱԿԱՐԳ), շարք, որտեղ զինծառայողները տողաններում տեղավորված են ճակատով, կողք կողքի՝ մեկը մյուսի արմունկից ձեռքի թաթի լայնության վրա:

ԽՄԲԱՊԵՏ, զինվորական կամ հայդուկային որոշ միավորման պետ՝ հրամանատար:

ԽՈՅ, 1. հին պաշարողական զենք, որը կիրառվում էր ամրոցների դարպասները ջարդելու և պատերում ու աշտարակներում անցքեր բացելու համար, 2. թիակավոր կամ զրահակիր նավատորմների նավերի ջրագծից ներքև նավի ցռուկի (քթամաս, ֆորշտվեյն) հավելում, նախատեսված հակառակորդի նավերը խոյահարելու համար:

ԽՈՅԱՀԱՐԵԼ, արագընթաց թռչել՝ նպատակակետերին գնդացրային կրակով հարվածելու, ռումբերը ճշգրիտ նպատակակետերի վրա նետելու կամ հակառակորդի թռչող սարքը ինքնաթիռին ամրացված հատուկ հարմարանքով՝ «խոյով» հարվածելու միջոցով խոցելու համար: Ինքնաթիռը (որպես կանոն՝ այրվող կամ վնասված) հակառակորդի երկաթուղային շարժակազմերի, տանկային շարասյուների, մեծ նավերի կամ այլ կարևոր օբյեկտների վրա ուղղելով դրանց հետ միասին պայթեցնելը:

ԽՈՑԵԼ, զենքով կամ ծակող գործիքով վերք հասցնել:

ԽՈՑԵԼԻ ՏԱՐԱԾՔ (ԽՈՑԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ԽՈՐՈՒԹՅՈՒՆ), տեղանքի այն տարածությունը, որի ողջ երկայնքով հետագծի նվազող ճյուղը չի գերազանցում նպատակի բարձրությունը:

ԽՈՑՈՒՄ, զինված պայքարի տարբեր ուժերով և միջոցներով ազդեցություն հակառակորդի վրա, որի արդյունքում նա ամբողջությամբ կամ մասնակի կորցնում է մարտունակությունը:

ԽՐԱՄ, 1. Բնակավայրերի, պարիսպների շուրջը փորված խոր, լայն փոս, որը լցնում էին ջրով հակառակորդի առաջխաղացումն արգելելու համար: 2. Պատվարով պաշտպանված խոր ու նեղ գետնուղի, որը մի ընդհանուր գծով իրար է միացնում պաշտպանական դիրքի բոլոր կրակակետերը:

ԽՐԱՄԱՏ, թմբապատնեշով խրամ՝ հակառակորդի կրակից ու արկերի բեկորներից պաշտպանվելու համար:

ԽՐԱՄՈՒՂԻ, նախատեսված է կրակի վարման, դիտարկման ստորաբաժանումների գաղտնի տեղակայման և մարտի ընթացքում գաղտնի զորաշարժի համար:

ԽՈՒՃԱՊ, առանձին մարդու, մարդկանց խմբի կամ զանգվածների հոգեբանական վիճակ, որն առաջանում է իրական կամ թվացյալ վտանգի դեպքում և բնութագրվում է հույզերի ուժեղ խառնաշփոթով, իրավիճակը սթափ և ճիշտ գնահատելու ունակության կորստով:

Ծ

ԾԱԾԿԱԾ ՏԱՐԱԾՔ, ծածկոցի գագաթից մինչև հանդիպման կետը ծածկոցի հետևում գտնվող գնդակների կողմից չխոցվող տարածք:

ԾԱՆԾԱՂՈՒՏ, գետի սակավաջուր հատված, որտեղից կարելի է գետը հաղթահարել հատակով:

ԾԱՎԱԼՎԱԾ ՇԱՐՔ (ԾԱՎԱԼՎԱԾ (ԲԱՑԱՁԱՏՎԱԾ) ՄԱՐՏԱԿԱՐԳ), զորասյուներով զորքերի (զինծառայողների, ստորաբաժանումների, զորամասերի) դասավորվածությունը համատեղ գործողություններ կամ տեղաշարժ կատարելու համար: ԾՇ կարող է լինել խիտ կամ բացազատված:

ԾԱՎԱԼՄԱՆ ԲՆԱԳԻԾ, տեղանքի պայմանական բնագիծ, որտեղից ստորաբաժանումները, զորամասերը և զորամիավորումները երթային կամ նախամարտական կարգից վերադասավորվում են մարտակարգի:

ԾԱՎԱԼՈՒՄԸ ՄԱՐՏԱԿԱՐԳԻ, ստորաբաժանումների, զորամասերի և զորամիավորումների երթային կամ նախամարտական կարգից վերադասավորումը մարտակարգի:

ԾԱՎԱԼՈՒՄԸ ՆԱԽԱՄԱՐՏԱԿԱՐԳԻ, ստորաբաժանումների, զորամասերի և զորամիավորումների երթային զորասյուների հաջորդաբար տարաբաժանումը զորասյուների՝ արագ մարտակարգի ծավալվելու նպատակով:

ԾԽԱԾԱԾԿՈՒՅԹ, արհեստական կերպով գոյացրած ծխաշերտ՝ որպես քողարկման միջոց:

ԾԽԱՆՈՆԱԿ, ծխարձակ նռնակ, որը մարտի ժամանակ օգտագործում են հետևակի փոքր ստորաբաժանումները՝ ծխածածկույթ ստեղծելու համար:

ԾԽԱՌՈՒՄԲ, պայթելիս ծուխ արձակող ռումբ, որն օգտագործվում է ծխածածկույթ ստեղծելու համար:

Կ

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ (ՄԱՐՏԻԿ), սեփական ցանկությամբ զինվորական ծառայության անցած անձ:

ԿԱՅԱԶՈՐ, քաղաքում, բերդում կամ պաշտպանական շրջանում մշտական կամ ժամանակավորապես տեղավորված զորք:

ԿԱՆԽՈՂ ՀԱՐՎԱԾ, պատերազմի ժամանակ հակառակորդին նախօրոք հասցված հարված, նախքան նրա ակտիվ գործողությունների սկսելը: Հասցվում է հակառակորդին հանկարծակի բերելու, նրան մեծ կորուստներ պատճառելու և նախաձեռնությունը նրա ձեռքից խլելու նպատակով:

ԿԱՊ, զորքերի ղեկավարումն ապահովող հիմնական միջոց: Կ. կարող է լինել էլեկտրական, ազդանշանային և ֆելդեգերային (սուրհանդակների միջոցով): Տվյալները կարող են հաղորդվել ինչպես բաց տեքստով, այնպես էլ ծածկագրված:

ԿԱՍԵՏԱՅԻՆ ԱՎԻԱՌՈՒՄԲ, անջատվող առանձին (ինքնուրույն գործող) տարրերով հանդերձավորված ռումբ:

ԿԱՐԱԲԻՆ, հիմնականում հեծելազորի կողմից օգտագործվող կարճացված և թեթևացված հրացան:

ԿԱՐԳ, որևէ ամբողջություն կազմող մասերի կամ միավորների հաջորդականությունն ու ընդհանուր դասավորությունը (օրինակ՝ զորքերի մարտական (նախամարտական, երթային) Կ.):

ԿԱՐԿՏԱՀԱՐ (ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ) ՀՐԱՆՈԹ, կարկտաբեր ամպերը կրակով ցրելու համար ձևափոխված զենիթային հրանոթ: Արցախյան ազատամարտում օգտագործվել են «Ալազան» տիպի ԿՀ՝ ուղիղ նշանառությամբ հակառակորդին խոցելու համար:

ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆ, տարածք, որի վրա տեղաբաշխվում են զորքերը: ԿՇ-ում զորքերը տեղաբաշխվում են ապակենտրոնացված, այնպես, որպեսզի արագ մարտի մեջ մտնեն կամ էլ դուրս գան զբաղեցրած շրջանից: Միջնադարում ԿՇ-ը հրամանատարական վրանը շրջապատող տարածքն էր:

ԿՈՂԱՅԻՆ ԵՐԹԱՅԻՆ ՈՒՂԵԿԱԼ, երթի ժամանակ զորքերը պաշտպանող խումբ: Մեկ կամ երկու թևերի ուղղությամբ ուղարկվում է առաջնային ջոկատից (առաջապահ ուժերից) կամ էլ անմիջապես գլխավոր ուժերի կողմից: ԿԵՈՒ-ի նպատակն է թույլ չտալ հակառակորդի հանկարծակի հարձակումը գլխավոր ուժերի վրա, ինչպես նաև նրա հետախուզության ներթափանցումը պահպանվող զորասյան մոտ և գլխավոր ուժերի համար արագ բացազատվելու և մարտի մեջ մտնելու պայմաններ ստեղծելը:

ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ, առանձնացող, լավ երևացող և տեղանքում ճանաչվող առարկա կամ տեղանքի ռելիեֆ, որը զորքերի կողմից օգտագործվում է իրենց դիրքը և նշանակետերի տեղաբաշխումը, շարժման ուղղությունը որոշելու, նպատականշման, ստորաբաժանումները մարտում ղեկավարելու համար:

ԿՈՏՈՐԱԿԱՌՈՒՄԲ, պատրաստի խոցող տարրերով (գնդակներ, ձողեր ևն) լցավորված հրետանային արկ: 1803թ. առաջարկվել է անգլիացի սպա Գ.Շրապնելի կողմից: Նախատեսված է հակառակորդի չպատսպարված կենդանի ուժը խոցելու համար:

ԿՈՐՃԱՆԻՉ, հակառակորդի թռչող սարքերն օդում ոչնչացնելու համար նախատեսված մարտական ինքնաթիռ: Օգտագործվում է նաև վերգետնյա նշանակետերը խոցելու և հետախուզություն կատարելու համար:

ԿՈՐՊՈՒՍ, զորաբանակ, զորային խոշոր միավորում, որի մեջ մտնում են մի քանի դիվիզիաներ, բրիգադներ և գնդեր:

ԿՐԱԿ, տարբեր զինատեսակներից հրաձգությամբ հակառակորդին խոցելն է: Կ. վարվում է հակառակորդին ոչնչացնելու, ճնշելու կամ ուժասպառ անելու, ինչպես նաև նրա օբյեկտներն ավերելու համար: Կ-ը տարբերվում է.

ըստ լուծվող մարտավարական խնդիրների՝ ոչնչացման, ճնշման, ուժասպառ անելու, ավերման, ծխապատման (կուրացման), լուսավորման ևն,

ըստ զինատեսակների՝ հրազենից, տանկերից, հետևակի մարտական մեքենաներից (զրահափոխադրիչներից), հրետանային ականանետներից, հակատանկային կառավարվող հրթիռների համալիրներից, զենիթային միջոցներից և այլնից կատարվող Կ.,

ըստ վարման եղանակների՝ ուղիղ նշանառմամբ, փակ կրակային դիրքերից ևն,

ըստ հրաձգության լարվածության՝ մենահատ կրակոցներով, կարճ ու երկար կրակահերթերով ևն,

ըստ ուղղության՝ ճակատային, թևային և խաչաձև,

ըստ հրաձգության եղանակների՝ տեղից, կանգառից, ընթացքից ևն,

ըստ տեսակների՝ առանձին նշանակետի ուղղությամբ վարվող, կենտրոնացված, խափանիչ Կ. (խոցում) ևն:

Կ. մարտում հաջողության հասնելու գլխավոր գործոնն է, քանի որ միայն Կ-ով կարելի է հակառակորդին վնաս պատճառել և նրան զրկել մարտունակությունից:

ԱՆՀԱՆԳՍՏԱՑՆՈՂ Կ., իրականացվում է կրակային միջոցների սահմանափակ ուժերով և զինամթերքով՝ հակառակորդին անհանգստացնելու (հոգնեցնելու, ջլատելու,

նյարդայնացնելու) նպատակով: Կրակոցներն անկանոն պարբերականությամբ հաջորդում են միմյանց:

ԴԱՇՈՒՆԱՅԻՆ Կ., փոքր հեռավորություններից նույն ուղղությամբ հանկարծակի բացվող Կ.:

ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ Կ., հրետանային կրակատեսակ, վարվում է հրետանային միավորման ամբողջ ուժերով կամ դրանց մի մասով՝ նվազագույն ժամանակամիջոցում հակառակորդի օբյեկտը հուսալի խոցելու նպատակով, հրետանային խմբերի, զորամասերի, դիվիզիոնների միջև խոցման տեղամասը բաշխելով կամ բոլորի ջանքերը մի տեղամասի վրա կենտրոնացնելով:

ԹԵՎԱՅԻՆ Կ., հակառակորդի (նպատակակետերի) թևի ուղղությամբ վարվող Կ.:

ԽԱՉԱՁԵՎ Կ., նպատակակետի վրա վարվում է երկու և ավելի ուղղություններից:

ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ Կ., միևնույն նշանակետի վրա մի քանի զինատեսակներից, ինչպես նաև մի քանի ստորաբաժանումների (դասակ, վաշտ) կողմից հրածգային զենքից վարվող Կ.:

ՄԵԹՈԴԱԿԱՆ Կ., մեկ հրամանով յուրաքանչյուր հաջորդող կրակոց կատարվում է հավասար ժամանակամիջոցից հետո:

Կ. ԽՏՈՒԹՅՈՒՆ, ստորաբաժանման կողմից միավոր ժամանակամիջոցում բոլոր զինատեսակներից բաց թողնված փամփուշտների քանակը, որը հավասարաչափ բաշխվում է որոշակի բնագծի մեկ գծամետրի վրա:

ԿՐԱԿԱԴԻՐՔ (ԿՐԱԿԱՅԻՆ ԴԻՐՔ), կրակային (մարտական) խնդիրը կատարելու համար նախատեսված դիրք: Այն կարող է լինել. ըստ նշանակության՝ հիմնական, պահեստային, ժամանակավոր և կեղծ. հուսանելիության տեսանկյունից՝ բաց և փակ:

ԲԱՑ ԿԴ, ուղիղ և կիսաուղիղ ուղղորդմամբ հրածգության համար նախատեսված կրակադիրք, որը երևում է հակառակորդի դիտակետից կրակոցի պահին:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԴ, նախատեսված են ժամանակավոր կրակային խնդիրների կատարման, պաշտպանության առաջին եզրի ստորաբաժանումների կրակային աջակցման, հակառակորդի առանձին խմբերի ոչնչացման համար:

ԿԵՂԾ ԿԴ, ստեղծվում են հակառակորդին մոլորեցնելու նպատակով և նրա կրակը դրանց վրա գրավելու համար: Անհրաժեշտության դեպքում ԿԿԴ-ում կարող են տեղակայվել մի քանի կրակային միջոցներ իսկական դիրքի նմանակման համար:

ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ԿԴ, նախատեսված են մարտի ժամանակ զորաշարժ իրագործելու, ինչպես նաև հիմնական ԿԴ-ից տրված խնդիրը կատարելու անհնարինության դեպքում ԿԴ փոխելու համար:

ՓԱԿ ԿԴ, ոչ ուղիղ ուղղորդմամբ հրածգության համար նախատեսված ԿԴ, որը չի երևում հակառակորդի դիտակետից նույնիսկ կրակ վարելիս:

ԿՐԱԿԱԿԵՏ, մարտական գործողություններ վարելու համար հենակետում (պաշտպանության շրջանում) կամ նրանց միջտարածքում, թաքստոցում կամ տեղանքի պաշտպանիչ հատկությունների օգտագործումով բաց տեղավորված կրակային միջոցի (գնդացիր, կրականետ, հրանոթ ևն) տեղի պայմանական անվանումը:

ԵՐԿԱՐԱՏԵՎ ԿՐԱԿԱԿԵՏ (ԴՈՏ), գնդացրից կամ հրանոթից կրակ վարելու համար նախատեսված երկաթբետոնից կամ զրահասալերից պատրաստված ամրաշինական կառույց:

ՓԱՅՏԱՀՈՂԱՅԻՆ ԿՐԱԿԱԿԵՏ (ԴՁՈՏ), հրետանա-գնդացրային կրակ վարելու համար նախատեսված փայտից, հողից, քարից և այլ նյութերից պատրաստված դաշտային ամրաշինական կառույց:

ԿՐԱԿԱՅԻՆ ԱՁԱԿՑՈՒՄ, հրետանու, ականանետների, օդուժի հարվածներով հակառակորդի վերգետնյա նշանակետերի ոչնչացում միավորումների, զորամասերի և ստորաբաժանումների մարտական գործողությունների հաջողությունն ապահովելու նպատակով:

ԿՐԱԿԱՅԻՆ ԲՆԱԳԻԾ, տեղանքի հատված (պայմանական գիծ), որի վրա բացազատվում են ստորաբաժանումները՝ հակառակորդի գրոհը կրակով անդրադարձնելու նպատակով:

ԿՐԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԿ, մարտկոցի կազմի մեջ մտնող կրակային (մարտական) ստորաբաժանում:

ԿՐԱԿԱՅԻՆ ԴԱՐԱՆ, հանկարծակի բացվող ուղիղ նշանառության և դաշունային կրակով կամ զենքի այլ տեսակներով հարձակվող հակառակորդին առավելագույն չափով խոցելու նպատակով նրա ճակատի դիմաց կամ թևում ուժերը նախօրոք և գաղտնի տեղաբաշխելն է: ԿԴ սովորաբար կազմակերպվում է բնական արգելքներ ու անհարթություններ ունեցող տեղանքում, որոնք դժվարացնում են հակառակորդի արագ ծավալումն ու հանկարծակի կրակի տակից դուրս գալու նպատակով զորաշարժը: Միևնույն ժամանակ, դարան կազմակերպելու տեղը պետք է ապահովի ստորաբաժանման գաղտնի տեղաբաշխումը և ունենա դիտարկման, կրակ (խոցում) վարելու լավ պայմաններ ու նահանջի ուղիներ: Չշփոթել դարանի հետ:

ԿՐԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ (ԱՌԱՋԱԴՐԱՆՔ), հրետանային ստորաբաժանումների կամ պաշտոնատար անձանց կողմից որոշակի ճշտությամբ կատարվող հրետանու հրաձգության խնդիրներն են (նշանակետերի խոցում և հրաձգության լրացուցիչ խնդիրներ):

ԿՐԱԿԱՅԻՆ ՏԱՐԱՓ (ԿՐԱԿԱՅԻՆ ՎՐԱ ՏԱԼ), սահմանափակ տևողությամբ կրակ, որը բնութագրվում է հանկարծակի բացմամբ և մեծ խտությամբ: Կարող է վարվել հապճեպ կրակով կամ սկսվել հապճեպ և շարունակվել մեթոդական կրակով:

ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՐԿ, պաշտպանության առաջնային գծի առջև կամ խորքում գտնվող տեղանքի հատված, որի վրա ստորաբաժանման թևերից և ճակատից պատրաստված է բարձր խտությամբ կրակ՝ հարձակվող հակառակորդին առավելագույն վնաս պատճառելու նպատակով:

ԿՐԱԿԱՊԱՏՆԵՇ, հոծ կրակածածկույթի ստեղծումն է հարձակվող ստորաբաժանումների առջև և զորքերի հարձակմանը զուգընթաց տեղափոխումը հաջորդ բնագիծ: Կարող է լինել միակի, կրկնակի, եռակի:

ԿՐԱԿԻ ՁՈՐԱՇԱՐԺ (ՁՈՐԱՇԱՐԺ ԿՐԱԿՈՎ), կրակի ղեկավարման կարևորագույն բաղկացուցիչ մաս է, որն ունի երեք ձև՝ կենտրոնացում, բաշխում և տեղափոխում:

ԿՐԱԿՈՑ, գնդակի դուրս նետումը զենքի փողից վառոդային գազերի էներգիայի շնորհիվ:

ԿՑԱՏԵՂԵՐԻ (ԱՐԱՆՔՆԵՐԻ, ԹԵՎԵՐԻ) ԱՊԱՀՈՎՈՒՄ, օպերատիվ մարտավարական միջոցառումներ և զորքերի գործողություններ՝ ուղղված զորամասերի, զորամիավորումների և միավորումների թևերը և դրանց միջև կցատեղիները (միջտարածքները) հակառակորդի գրոհներից և հարվածներից պաշտպանելուն, ինչպես նաև մարտական խնդիրները կատարելու ժամանակ այդ գրոհները և հարվածներն անդրադարձնելուն:

Հ

ՀԱՁԱՐԱՊԵՏ, հազար զինվորից բաղկացած զորական միավորի պետ՝ հրամանատար:

ՀԱԿԱԳԱԶ, պաշտպանական դիմակ՝ թունավոր նյութերի, գազերի, ծխի և այլնի ազդեցությունը չեզոքացնելու համար:

ՀԱԿԱԳՐՈՀ, պաշտպանվող կողմի հանդիպական գրոհը հակառակորդի հարձակումը հետ մղելու կամ հակահարձակման անցնելու համար, գրոհի դեմ ձեռնարկվող գրոհ: Հ-ն անցկացվում է բարենպաստ պայմաններում՝ պաշտպանության մեջ սեպված հակառակորդին ոչնչացնելու կամ պաշտպանության համար բնագծեր նվաճելու նպատակով:

ՀԱԿԱԳՐՈՀԻ (ՀԱԿԱՀԱՐՎԱԾԻ) ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ, հարձակվող զորքերի կողմից իրականացվող մարտական գործողություններ, որոնք վարվում են հակագրոհող (հակահարվածող) հակառակորդի խմբավորումներին ջախջախելու և հարձակվող զորքերի օպերատիվ դասավորվածության (մարտակարգի) մեջ նրա ճեղքումը թույլ չտալու, հարձակումը շարունակելու համար պայմաններ ստեղծելու նպատակով:

ՀԱԿԱՀԱՐՁԱԿՈՒՄ, հակառակորդի հարձակողական գործողություններին պատասխան հարձակում:

ՀԱԿԱՌԱԿՈՐԴ, 1) ախոյան, 2) պատերազմում պետությանն (պետությունների դաշինքին) ընդդիմադիր կռվող պետության (պետությունների դաշինքի) զորքերի ընդհանուր անվանումը:

ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԵՏ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՇՓՈՒՄ, իրավիճակ, երբ զորքերի առջևի ստորաբաժանումները կամ առաջին էշելոնի գլխավոր ուժերն ի վիճակի են անզեն աչքով դիտարկել հակառակորդին և հաստիքային զենքով նրա հետ մարտ վարել:

ՀԱԿԱՏԱՆԿԱՅԻՆ ՂԵԿԱՎԱՐՎՈՂ ՀՐԹԻՌԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ (ՀՏՂՀ), մինչև 6000 մ հեռավորության վրա տանկերի և այլ զրահավորված նշանակետերի դեմ պայքարելու համար ամենաարդյունավետ միջոցն է: Մյուս հակատանկային միջոցների համեմատ հիմնական առավելություններն են՝ հրածգության ողջ հեռավորության վրա առաջին կրակոցից նշանակետը խոցելու բարձր հավանականությունը (70-90%), բարձր զրահախոցելիությունը, համեմատաբար փոքր քաշն ու չափսերը, բարձր շարժունակությունը:

ՀԱՂԹԱՀԱՆԴԵՍ, հաղթանակին նվիրված հանդես, հաղթանակի տոնակատարություն:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻ, անձնակազմի ծածուկ տեղաշարժի համար նախատեսված բաց տիպի ամրաշինական կառույց: ՀՈՒ որոշ տեղամասերում կարող են հրածգային բջիջներ սարքավորվել:

ՀԱՄԱՁԱՐԿ, 1. մի քանի հրանոթների, հրթիռային համազարկի կայանքների, հրազենի և այլ զենքի միաժամանակյա կրակոց, հրթիռների արձակում: Հ. կիրառվում է արգելափակիչ կրակ, կրակային ալիք և կրակի հաջորդաբար կենտրոնացում իրականացնելու համար: Հ. հնարավորություն է տալիս մի քանի զինատեսակների հանկարծակի հարվածով հակառակորդին խոշոր վնասներ հասցնել, 2. առաջադրանքը կատարելու (նշանակետը խոցելու) համար արկերի, հրթիռների ծախսը հաշվարկելու միավոր, 3. միավորման, զորամասի ամբողջ սպառազինության կրակային հզորությունը հաշվարկելու միավոր (մեկ կրակոցով ծախսվող զինամթերքի գումարային քանակությունը):

ՀԱՄԱՁՈՐԱՅԻՆ ՄԱՐՏ, մարտ, որին մասնակցում են ցամաքային զորքերի և զինված ուժերի զորատեսակների տարբեր ստորաբաժանումներ, զորամասեր և միավորումներ, որոնց ջանքերը միավորված են ընդհանուր մտահղացմամբ և պլանով և համաձայնեցված են ըստ նպատակի, ժամանակի և տեղի: ՀՄ վարումը մեր օրերում մարտավարության տիրապետող հրամայական է: Առաջին անգամ կիրառվել է 1917թ. նոյեմբերին, Կամբրեի մոտ անգլիացիների հարձակման ժամանակ:

ՀԱՄԱԼՐՈՒՄ, զորքերն ուժեղացնելու նպատակով ստացվող ուժեր և միջոցներ:

ՀԱՅԴՈՒԿՆԵՐ, XV-XIXդդ. թուրք զավթիչների դեմ զինված պայքարի մասնակիցներ (առավելապես գյուղացիներ):

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ, պատերազմի պատճառով հայրենիքի սահմաններից դուրս գտնվող ռազմագերիների և քաղաքացիական անձանց, ինչպես նաև գաղթականների վերադարձը հայրենիք: Մեր օրերում Հ. աշխարհասփյուռ հայության առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է:

ՀԱՆԴԻՊԱԿԱՆ ՄԱՐՏ, հարձակողական մարտի տարատեսակներից է: Դա հարձակում է այն հակառակորդի վրա, որը նույնպես ձգտում է իր խնդիրները լուծել հարձակմամբ: Նպատակն է կարճ ժամկետներում հարձակվող հակառակորդի ջախջախումը, նախաձեռնության խլումը և հետագա գործողությունների համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՀԱՐՁԱԿՈՒՄ, հակառակորդի՝ ավելի վաղ ընտրված օբյեկտի վրա հանկարծակի հարձակումն է: Կատարվում է հետախուզական կամ մարտական ապահովման նպատակով առանձնացված ստորաբաժանումների ուժերով՝ գերիներ վերցնելու, հակառակորդի վրա հոգեբանական ազդեցություն գործելու նպատակով, ինչպես նաև կարևոր օբյեկտ ոչնչացնելու համար: Ի տարբերություն որոնման, որը կատարվում է հնարավորության սահմաններում անաղմուկ, հետախույզների գործողությունների հիմքում ընկած է կրակի, հանկարծակիության և սրընթաց հարվածի խելացի զուգակցումը, իսկ սրընթաց հարվածն ավարտվում է, որպես կանոն, կարճ ձեռնամարտով:

ՀԱՆԿԱՐԾԱԿԻՈՒԹՅՈՒՆ, ռազմարվեստի սկզբունքներից մեկը, հակառակորդի համար անակնկալ գործողություններ, որոնք հնարավորություն են տալիս նրան անակնկալի բերել և հաջողության հասնել մարտում, օպերացիայում, իսկ որոշ դեպքերում նաև պատերազմում:

ՀԱՐԹԱՓՈՂ ԶԵՆՔ, հրազեն, որի փողանցքը հարթ է: Մինչև XIXդ. կեսերը գրեթե ամբողջ հրազենը եղել է հարթափող և փողաբերանից լիցքավորվող: ՀԶ կրակում էր գնդաձև գնդակներով: Փոխարինվել է ակոսավոր զենքով:

ՀԱՐՁԱԿՄԱՆ ԽԱՓԱՆՈՒՄ, հակառակորդի վրա գործողությունների ամբողջություն, որոնց արդյունքում նա հարկադրված է լինում դադարեցնել հարձակողական գործողությունները կամ էլ հրաժարվել տվյալ ուղղությամբ նախատեսված նպատակներին ձգտելուց:

ՀԱՐՁԱԿՈՒՄ, համազորային մարտի հիմնական տեսակներից է: Հ. նպատակն է՝ արագընթաց առաջխաղացումով ներթափանցել հակառակորդի մարտակարգի խորքը, ոչնչացնել և գերի վերցնել նրա կենդանի ուժը, գրավել տեղանքի նախատեսված շրջանները (բնագծերը): Հ. կարելի է վարել պաշտպանվող, հարձակվող, նահանջող հակառակորդի վրա: Հարձակվող հակառակորդի վրա հարձակվում են *հանդիպական մարտով*, նահանջող հակառակորդի վրա՝ *հետապնդմամբ:* Պաշտպանվող հակառակորդի վրա կարելի է հարձակվել նրա հետ անմիջական շփման պայմաններից կամ ընթացքից:

ՀԱՐՁԱԿՈՒՄ ԱԼԻՔԱՁԵՎ ԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄՆԵՐՈՎ, ճառագայթաձև հարձակման տարատեսակ է: Միաժամանակ մի քանի ուղղություններով ռազմավարական հարձակում ծավալելու համար բավարար ուժեր չունեցող հարձակվող (նախաձեռնությանը տիրող) կողմը ճառագայթաձև հարձակումն իրականացնում է մի քանի փուլերով՝ համեմատաբար փոքր «ցատկերով», որոնք կոչվում են ալիքներ:

ՀԱՐՅՈՒՐՅԱԿ, սովորաբար 100 մարդուց կազմված զինվորական ստորաբաժանում, կազմակերպչական և մարտական միավոր:

ՀԱՐՅՈՒՐԱՊԵՏ, հարյուր զինվորից բաղկացած ստորաբաժանման պետ, հրամանատար:

ՀԱՐՎԱԾ, մարտի բաղադրամաս է: Հակառակորդի խմբավորումների և օբյեկտների միաժամանակ խոցումն է եղած բոլոր միջոցների և ուժերի հզոր ներգործությամբ: Հ. կարող է լինել.

ԱՋԱԿՑՈՂ, գլխավոր հարվածի ուղղությունից մեկ այլ ուղղությամբ ուժերի և միջոցների մի մասով հասցվող հարված: Հիմնականում իրականացվում է հակառակորդի ուշադրությունը գլխավոր հարվածի ուղղությունից շեղելու, նրա ուժերի և միջոցների մի մասը կաշկանդելու և ուժերով ու միջոցներով զորաշարժը բացառելու նպատակով:

ԳԼԽԱՎՈՐ, դիմադրող հակառակորդին ջախջախիչ հարված հասցնելու և օպերացիայում (մարտում) տրված առաջադրանքը կատարելու նպատակով ընտրված ուղղությամբ (շրջանում) զորքերի (ուժերի) հարձակողական գործողություններ:

ԹԵՎԱՅԻՆ, հարված հակառակորդի մարտակարգի (օպերատիվ դասավորվածության) թևին, հետագայուն նրա գլխավոր խմբավորման թիկունք դուրս գալու նպատակով:

ԿԱՆԽՈՂ, պատերազմի ժամանակ հակառակորդին նախօրոք հասցված հարված, նախքան նրա ակտիվ գործողությունների սկսելը: Հասցվում է հակառակորդին հանկարծակիի բերելու, նրան մեծ կորուստներ պատճառելու և նախաձեռնությունը նրա ձեռքից խլելու նպատակով:

ՀԱՏՈՂ Հ, հարձակվող զորքերի գործողությունների ձև, որը սովորաբար օգտագործվում է հակառակորդի խմբավորումը մասնատելու և հետագայում առանձին-առանձին նրանց ջախջախելու նպատակով:

ՀԱՐՎԱԾԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, զորքերի գլխավոր խմբավորման հարվածի ուղղության փոփոխություն: Իրականացվում է, որպես կանոն, վերախմբավորում կամ զորաշարժ կատարելով:

ՀԱՈՒԲԻՑ, հրետանային զենքի տեսակ՝ նախատեսված թաքնված օբյեկտը գագաթնահար հետագծով հրաձգությամբ խոցելու համար: Առաջին հաուբիցները ստեղծվել են XVդ. Եվրոպայում (Իտալիա, Գերմանիա): Հաուբիցի փողն ակոսավոր է և ավելի կարճ, քան թնդանոթինը, արկի սկզբնական արագությունը նույնպես փոքր է:

ՀԵԾԵԼԱԶՈՐ, զորատեսակ: Եգիպտոսի, Հնդկաստանի, Չինաստանի, Միջագետքի երկրների բանակներում, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհում մինչև Հ. երևան գալը կիրառվել են ձի լծած մարտակառքեր: Հ. որպես զորատեսակ երևան է եկել Ք.ա. II հազարամյակի վերջին: Ք.ա. VIդ. Պարսկաստանում այն հիմնական զորատեսակ էր (ծանր և թեթև): Կանոնավոր Հ. Հին Հունաստանում առաջին անգամ օգտագործվել է Ք.ա. IVդ. և ավելի կատարելագործվել Ալեքսանդր Մակեդոնացու բանակում (ծանր, միջին և թեթև Հ.):

Իր մարտունակությամբ և հզորությամբ հռչակված էր հայկական Հ.: Հին հռոմեական բանակում Հ. օժանդակ զորատեսակ էր լեգեոնի կազմում: Եվրոպայում ֆեոդալական զորքերի գլխավոր ռազմական ուժը կազմել է ասպետական Հ. (ծանրազեն, զրահակիր): Իր բարձր մարտունակությամբ XIII-XIVդդ. աչքի է ընկել մոնղոլական թեթև Հ.: XIVդ. հրազենի երևան գալով և հետևազորի դերի ուժեղացմամբ ասպետական ծանր Հ. կորցրել է իր նշանակությունը:

ԹԵԹԵՎԱՋԵՆ Հ., թեթև զինված զինվորներից կազմված հեծելազորի տեսակ: Հին աշխարհի բանակներում ի հայտ է եկել անկանոն հեծելազորի տեսքով:

ԾԱՆՐԱՋԵՆ Հ., ծանր զինված զինվորներից կազմված հեծելազորի տեսակ: Որպես առանձին տեսակ լայն կիրառում է գտել Հին Մակեդոնիայի բանակում (Ք.ա. IVդ.): Հրազենի տարածմանը զուգահեռ Ծ.Հ. կորցրել է իր նշանակությունը:

ՀԵՆԱԴԱՇՏ (ՌԱԶՄԱՀԵՆԱԴԱՇՏ), մարտական գործողությունների ընթացքում զորքերի կողմից զավթված և պահվող տեղանքի հատված, հետագա մարտական խնդիրների կատարումն ապահովելու նպատակով: Հայոց ռազմարվեստում Հ. ստեղծումը հազարամյակների պատմություն ունի, սակայն առավել լայնորեն կիրառվել է XII-XIIIդդ.: Հ. ստեղծումով հաջողության զարգացման ռազմավարությամբ հայոց ռազմարվեստում աչքի են ընկել Վահան Մամիկոնյանը, Աբաս Բագրատունին, Վահրամ Պահլավունին և Զաքարիա Զաքարյանը:

ՀԵՆԱԿԵՏ, 1. Ռազմական պաշտպանական գործողությունների ծավալման համար նպաստավոր տեղ, դիրք, ամրություն: 2. Ժամանակակից պաշտպանական մարտում դասակի և վաշտի կողմից զբաղեցվող տարածքը: *Դասակի Հ-ն* ներառում է ջոկերի դիրքերը, ՀՄՄ-ների (զրահափոխադրիչների), ինչպես նաև Հ-ում տեղաբաշխված ու ավագ հրամանատարի պլանով խնդիրները կատարող այլ կրակային միջոցների կրակային դիրքերը: *Վաշտի Հ-ը* ներառում է նաև դասակների Հ-երը:

ՀԵՌԱԴԻՏԱԿ, հոդակապով միմյանց միացված զուգահեռ դիտափողերից կազմված օպտիկական սարք: Ռազմական գործում կիրառվում է մարտի դաշտը դիտարկելու, նշանակետերը հետախուզելու, անկյունները չափելու և հեռավորությունները որոշելու համար:

ՀԵՏ ՔԱՇՎԵԼԸ (ՆԱՀԱՆՋ ՆԱԽՕՐՈՔ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԲՆԱԳԻԾ), գերակշռող հակառակորդի հարվածի տակից զորքերի կողմից զբաղեցված բնագծերի (շրջանների) հարկադրյալ կամ կանխամտածված լքումը և նրանց հետբերումը ավելի նպաստավոր դիրք հետագա գործողությունների համար:

ՀԵՏԱԳԻԾ, թռիչքի ընթացքում գնդակի (նետի կամ այլ նետվող գործիքի) ծանրության կենտրոնի կազմած կոր գիծը: Վերազանցման անկյան մեծության հետ մեծանում են Հ. բարձրությունը և հորիզոնական հեռավորությունը, սակայն դա կատարվում է մինչև որոշակի սահման: Այս սահմանից հետո Հ. շարունակում է մեծանալ, իսկ հեռավորությունը՝ փոքրանում է:

ԳԵՏՆԱՄԵՐՁ Հ., առավելագույն հեռավորության անկյունից փոքր վերազանցման անկյուն ունեցող Հ.: Հ. գետնամերձությունն ազդում է ուղիղ կրակոցի, խոցվող ծածկված և մեռյալ տարածքների հեռավորության մեծության վրա:

ԳԱԳԱԹԱՀԱՐ Հ., առավելագույն հեռավորության անկյունից մեծ վերազանցման անկյուն ունեցող Հ.:

ԼՕՐՐԴՎԱԾ Հ., տարբեր վերազանցման անկյունների դեպքում նույն հորիզոնական հեռավորությունն ունեցող Հ.:

ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԴԱՐԱՆ, հետախուզության ձև: Կատարում է հետախուզական դետքը՝ գերիներ, հակառակորդի փաստաթղթեր, սպառազինության ու տեխնիկայի նմուշներ վերցնելու նպատակով: Դրա էությունն այն է, որ խմբի ստորաբաժանումը նախօրոք ու թաքուն տեղաբաշխվում է հակառակորդի շարժման սպասվող կամ հավանական ուղիներում՝ նրա վրա հանկարծակի հարձակվելու համար:

ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԽՈՒՄԲ (ՋՈԿԱՏ), ստեղծվում է զորային հետախուզության ստորաբաժանման հատուկ նախապատրաստված անձնակազմից: Նախատեսված է հակառակորդի թիկունքում օբյեկտներ բացահայտելու համար:

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, զորքերի գործողությունների մարտական ապահովման կարևորագույն տեսակ: Կազմակերպվում է հակառակորդի և տեղանքի մասին տեղեկություններ հավաքելու համար:

Հ. դերի բարձրացմանը զուգընթաց բարձրանում են նաև դրան ներկայացվող պահանջները, որոնցից հիմնականներն են. նպատակասլացությունը, անընդհատությունը, ակտիվությունը, ճիշտ ժամանակին լինելն ու օպերատիվությունը, գաղտնիությունը, կոորդինատները որոշելու ճշգրտությունը: Տվյալները հայթայթվում են տարբեր ձևերով: Դրանցից հիմնականներն են դիտարկումը, գաղտնալսումը, հետախուզական դարաններն ու հարձակումները, տեղացի բնակիչների հարցումներն ու գերի փախստականների հարցաքննությունները, հակառակորդից բռնագրավված փաստաթղթերի ուսումնասիրությունը:

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՏՈՎ, 1. հետախուզության ձև, 2. հատուկ առանձնացված ստորաբաժանումների կողմից հակառակորդի մասին տվյալների հայթայթում: Մարտով հետախուզությունը կատարվում է այն դեպքում, երբ հետախուզության մյուս եղանակները չեն կարող հրամանատարությանն ապահովել հակառակորդի մասին անհրաժեշտ տվյալներով, կամ երբ չկա դրանք այլ եղանակներով ձեռք բերելու հնարավորություն: Երկրորդ աշխարհամարտի ընթացքում մարտով կատարվող հետախուզությունը լայն կիրառություն է գտել և, որպես կանոն, տվել է դրական արդյունքներ:

ՀԵՏԱԽՈՒՅԶ, գործող և հավանական հակառակորդի մասին տվյալներ հայթայթող, ուսումնասիրող և ընդհանրացնող անձ:

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ, հարձակողական մարտի տարատեսակներից է: Իրականացվում է հակառակորդի պաշտպանության խորքում՝ նահանջող հակառակորդի վրա հարձակվելիս:

ՀԵՏՄՂՈՒՄ, կրակոցի ժամանակ զենքի (փողի) շարժումը դեպի հետ:

ՀԵՏԵՎԱԿ (ՀԵՏԵՎԱԶՈՐ), ցամաքային զորքերի տեսակ: Նախատեսված է մարտում հակառակորդին ջախջախելու և նրա տարածքը գրավելու համար: Մարտ է մղում օրվա բոլոր ժամերին, տարվա բոլոր եղանակներին, ամենատարբեր տեղանքում: Ամենահին զորատեսակն է, որը հասարակության զարգացմանը զուգընթաց զգալի փոփոխություններ է կրել: Հին աշխարհում (Եգիպտոս, Հունաստան, Հռոմ ևն) Հ. եղել է գլխավոր զորատեսակ: Միջին դարերում Հ. նշանակությունը նվազել է: Տարբերվում էր ծանր և թեթև Հ:

ԹԵԹԵՎԱԶԵՆ Հ., թեթև զինված զինվորներից կազմված հետևակի տեսակ: Նախատեսված էր մարտը սկսելու, մարտի ընթացքում հիմնական ուժերի թևերը և թիկունքը պաշտպանելու, հետախուզություն վարելու և այլ խնդիրներ կատարելու համար: Հին աշխարհում կազմված էր նետաձիգներից, պարսատիկավորներից ևն: XVIII-XIXդդ. ԹՀ համարվում էին եգերները:

ԾԱՆՐԱԶԵՆ Հ., հետևակի տարատեսակ: Նախատեսված է մարտում (ճակատամարտում) հակառակորդին վճռական հարված հասցնելու համար: Գոյություն է ունեցել Հին աշխարհի երկրներում: Ի տարբերություն թեթև հետևակի՝ այն գործել է խիտ սեղմված շարքերով:

ՀԵՏԵՎԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԵՔԵՆԱ (ՀՄՄ), հետևակը տեղափոխելու և մարտի դաշտում իր սպառազինությամբ աջակցելու համար նախատեսված հզոր սպառազինությամբ, թրթուրավոր (անվավոր), զրահավորված, բարձր շարժունակությամբ օժտված, լողացող մարտական մեքենա: Այն հնարավորություն է տալիս հիմնականում գետնի վրա կռվող հետևակը մեքենայից կռվողի ձևափոխելու համար: Առաջին ՀՄՄ-ն սպառազինության մեջ ընդունվել է 1966թ. ԽՍՀՄ-ում:

ՀԵՔՍՈԳԵՆ, բրիզանտային պայթուցիկ նյութ: Անգույն բյուրեղանման փոշի: Կիրառվում է զինամթերքները հանդերձավորելու, դետոնատորներ պատրաստելու և պայթեցման գործում: Առաջին անգամ ստացվել է 1838թ.:

ՀՈՂԱԹՈՒՄԲ (ՀՈՂԱՊԱՏՆԵՇ, ԲՐՈՒՍՏՎԵՐ), հողային լիցք խրամատի կամ խրամուղու առջև, որը ծառայում է հրազենից կրակելու հարմարավետությունը, հրաձիգներին հրաձգային զենքերի գնդակներից, բեկորներից պաշտպանելու և հակառակորդի դիտարկումն ապահովելու համար:

ՀՐԱԶԵՆ (ՀՐԱԶԳԱՅԻՆ ԶԵՆՔ), զենք, որում փողից գնդակի (արկի) դուրս նետումը կատարվում է վառոդի գազերի էներգիայի օգտագործմամբ:

ՓՈՔՐ (ՆՈՐՄԱԼ, ԽՈՇՈՐ) ՏՐԱՄԱՉԱՓԻ Հ., փողի տրամաչափը կազմում է համապատասխանաբար՝ մինչև 6,5 մմ, 6,5-9 մմ և 9-15 մմ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ Հ., նախատեսված է հրազենի նյութական մասի, հրաձգության եղանակներն ու կանոններն ուսումնասիրելու համար:

ԱՆՀԱՏԱԿԱՆ Հ., հրաձգության ժամանակ պահվում են անմիջականորեն հրաձիգի կողմից, նախատեսված են մոտ հեռավորության վրա հակառակորդին խոցելու համար:

ԱՆՁՆԱԿԱՆ Հ., ատրճանակներ, որոնք նախատեսված են մերձամարտի և ինքնապաշտպանության համար:

ԱՎՏՈՄԱՏ (ԻՆՔՆԱՁԻԳ) Հ., վերալիցքավորումը և հերթական կրակոցն իրականացվում է ավտոմատ՝ ի հաշիվ վառոդային գազերի էներգիայի:

ՀԵՏՄՂՄԱՆ ՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ԳՈՐԾՈՂ Հ., ավտոմատիկան աշխատում է կրակոցի ժամանակ փողի կարճ ընթացքով կամ ազատ փակաղակի հետմղման էներգիայի օգտագործման սկզբունքով:

ԽՄԲԱԿԱՅԻՆ Հ., անձնակազմի (հաշվարկի) կողմից սպասարկվող Հ.: Նախատեսված են հիմնականում մեծ հեռավորության վրա հակառակորդին խոցելու համար:

ՈՉ ԱՎՏՈՄԱՏ Հ., վերալիցքավորումը կատարվում է հրաձիգի ջանքով: Լինում են միալիցք, պահեստատուփով և թմբուկավոր (ռևոլվերներ, սպորտային հրացաններ և այլն):

Հ. ՄԱՐՏԱԿԱՆ ԱՐԱԳԱՁԳՈՒԹՅՈՒՆ, կրակ, որը կատարվում է մեկ րոպեում՝ հստակ պահպանելով կրակի վարման օրենքները և հիմունքները, հաշվի առնելով զենքի վերալիցքավորման ժամանակը, կրակի կարգավորումը և կրակի տեղափոխումը մեկ նպատակից մյուսի վրա:

Հ. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՐԱԳԱՁԳՈՒԹՅՈՒՆ (ԿՐԱԿԻ ՏԵՄՊ), ավտոմատ հրազենից արձակված անընդմեջ կրակ, որը նշած զինատեսակը կարող է տալ միավոր ժամանակում:

ՀՐԱԿՆԱՏ, բաց (երբեմն կափարիչով ծածկվող) նեղ ճեղք պաշտպանական կառույցներում, խրամուղու հողաթմբի, զրահամեքենաների, զրահավահանի, ամրոցի պատի վրա կրակի վարման և դիտարկման համար:

ՀՐԱՁԳԱՅԻՆ ՇՂԹԱ, ջոկի, հրաձգային (մոտոհրաձգային) դասակի և վաշտի մարտակարգ, որտեղ զինծառայողները տեղավորված են ըստ ճակատի մեկ գծով (Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ մոտ 1 մ, մեր օրերում՝ 6-8 մ միջտարածությամբ):

ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԻՂ ՆՇԱՆԱՌՈՒԹՅԱՄԲ, վարվում է բաց կրակային դիրքերից, երբ հրանոթը (զենքը) անմիջականորեն ուղղվում է նշանակետի վրա:

ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԿՐԱԿԱԴԻՐՔԻՑ, հրետանու հրաձգություն կրակային դիրքից չդիտարկվող նշանակետերի վրա, որի դեպքում հրանոթը նշանակետի վրա ուղղվում է. հորիզոնական հարթությունում՝ ուղղորդման կետի օգնությամբ, ուղղաձիգ հարթությունում՝ կողային մակարդակի օգնությամբ:

ՀՐԱՄԱՆ, ենթականերին ուղղված հրամանատարի գրավոր կամ բանավոր կարգադրություն, որը պահանջում է կոնկրետ գործողությունների, այս կամ այն կանոնի կատարում կամ հրամանատարի կողմից հաստատագրված կարգ, դրություն:

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԵՏ (ՎՐԱՆ), մարտադաշտին (տեղաբաշխման ժամանակ՝ սեփական զորքին) հետևելու համար հարմար վայր, որտեղ գտնվելով՝ հրամանատարն արդյունավետորեն կազմակերպում է զորքի կենսագործունեությունը:

ՀՐԱՆԵՏ, զենք, որը նախատեսված է հակառակորդին այրվող հրախառնուրդով խոցելու համար: Հրանետը լինում է ձեռքի, ինքնագնաց և տանկային:

ՀՐԱՆՈԹ, հրետանային հրազենի ընդհանուր անվանումը:

ՀՐԱՑԱՆ, մենահատ կրակով հակառակորդին ոչնչացնելու համար նախատեսված հրազեն, որը մեր օրերում գրեթե ամբողջությամբ փոխարինվել է ավտոմատներով:

ԲԵՐԴԱՆԻ Հ., ռուսական բանակում XIXդ. վերջին սպառազինության մեջ գտնված ամերիկացի Խ.Բերդանի հրացանի ժողովրդական անունը: Լայնորեն կիրառվել է XIXդ. հայդուկային ջոկատների կողմից:

ՄԱՈՒԶԵՐԻ Հ., գերմանացի տաղանդավոր զինագործ Պ.Մաուզերի հրացանների (նույն կերպ՝ ատրճանակների) ժողովրդական անունը: XXդ. սկզբին ՄՀ-ներով էին սպառազինված

շուրջ երկու տասնյակ պետությունների բանակներ: ՄՀ-ով էին զինվում համիդիե գնդերը դեռևս 1894-96թթ. հայկական ջարդերի ժամանակ: Այն Առաջին համաշխարհային պատերազմում թուրքական բանակի ասկյարների հիմնական հրազենն էր: Նրանցից խլած ՄՀ-ով զինվում էին նաև հայկական ինքնապաշտպանական ջոկատները:

ՄՈՍԻՆԻ Հ., պաշտոնական գրագրություններում «1891թ. օրինակի հետևակային հրացան»: Ռուսական և մի շարք այլ պետությունների բանակներում սպառազինության վերցված հրացանների ժողովրդական անունը: Լայնորեն կիրառվել է XIXդ. վերջին և XXդ. սկզբին հայդուկային ջոկատների կողմից:

ՀՐԵՏԱԿՈՇՈՒԹՅՈՒՆ, հրետանային կրակի ենթարկում:

ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ԶԵՆՔ (ՀՐԵՏԱՆԻ), հրազենի տեսակ, զանազան կառուցվածք ու տրամաչափ ունեցող հրանոթների ընդհանուր անվանումը: ՀԶ նախատեսված է հակառակորդի հրետանու, զրահապատ և թռչող մարտական միջոցների դեմ պայքարի, կենդանի ուժի և կրակային միջոցների ոչնչացման ու ճնշման, մարտական այլ խնդիրներ կատարելու համար: Հրետանային զենքը լինում է վերգետնյա, ավիացիոն, առափնյա և նավային: Ըստ արկին արագության հաղորդման եղանակի տարբերում են փողային և ռեակտիվ, իսկ ըստ փողանցքի կառուցվածքի՝ ակոսավոր և հարթափող հրետանային զենքեր: Ըստ տեղաշարժման եղանակի լինում են բուքսիրային, ինքնաշարժ (շարժիչով սարքավորված), ինքնագնաց (թրթուրավոր կամ անվավոր անվաշրջանակով), տանկային և այլ ՀԶ: Դրանց տեսակներից են թնդանոթը, հաուբիցը, ականանետը, անհետգլորք հրանոթը, ռեակտիվ համակարգերը:

ՓՈՔՐ (ՄԻՋԻՆ, ԽՈՇՈՐ) ՏՐԱՄԱՉԱՓԻ ՀԶ, հրանոթ, որի փողի տրամաչափը կազմում է համապատասխանաբար՝ 20 մմ-ից մինչև 76 մմ, 76 մմ-ից մինչև 152 մմ և ավելի քան 152 մմ:

ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ԽՈՒՄԲ, մի քանի հրետանային ստորաբաժանումներից (զորամասերից, միավորումներից) կազմված միասնական հրամանատարությամբ ժամանակավոր կազմավորում, որը հատկացվում է մարտի ժամանակ համազորային զորամասի (զորամիավորման, միավորման) շահերից ելնելով առաջադրանք կատարելու համար:

ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ԿՐԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐ, հրետանու կրակի դասակարգումն ըստ ներգրավվող հրետանային միջոցների քանակի:

Ըստ լուծվող մարտավարական խնդիրների՝ ոչնչացման, ճնշման, ուժասպառ անելու, ավերման, ծխապատման (կուրացման), լուսավորման և այլն:

Ըստ վարման եղանակների՝ ուղիղ նշանառմամբ, փակ կրակային դիրքերից և այլն:

Ըստ կրակի տեսակների՝ առանձին նշանակետի ուղղությամբ վարվող կրակ, անհանգստացնող կրակ, անշարժ արգելափակիչ կրակ, շարժական արգելափակիչ կրակ, զանգվածային կրակ, կենտրոնացված կրակ, կրակի հաջորդական կենտրոնացում, կրակային տարափ, կրակային վրա տալ, խափանիչ կրակ, վազող կրակ:

ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ, նշանակետերը հրետանային արկերով խոցելու համար նախատեսված սպառազինության համակարգի տեսակ: ՀՀ սպառազինությունը և զինամթերքը միավորում է կրակի ղեկավարման, հրաձգության և հետախուզության ապահովման միջոցներին:

ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶԵՆՔ, համակարգ, որտեղ ոչնչացման միջոցները նշանակետին են հասցվում կառավարվող կամ չկառավարվող հրթիռներով. ներառում է միջուկային կամ սովորական լիցքով հրթիռ, արձակման կայանք, ստուգման-արձակման սարքավորումներ, նշանառության, հրթիռի թռիչքի կառավարման, տրանսպորտային և այլ միջոցներ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԶ, նախատեսված է հակառակորդի կարևոր ռազմավարական օբյեկտներ (միջուկային հարձակման միջոցներ, վարչաքաղաքական և ռազմարդյունաբերական կենտրոններ, զորքերի խոշոր խմբավորումներ) ոչնչացնելու համար:

ՕՊԵՐԱՏԻՎ-ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԶ, նախատեսված է հակառակորդի օդանավակայաններ, երկաթուղային հանգույցներ, մարտավարման կայաններ և օպերատիվ-մարտավարական գոտում գտնվող այլ օբյեկտներ ոչնչացնելու համար:

ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԶ, ներառում է արձակման ինքնագնաց տեղակայանքներ, հակատանկային կառավարվող և չկառավարվող հրթիռներ: Ցամաքային զորքերի ՄՀԶ նախատեսված է հակառակորդի մարտավարական գոտում գտնվող օբյեկտները ոչնչացնելու համար:

ՀՐԿԻԶՈՂ ԶԵՆՔ, հակառակորդի վրա անմիջականորեն հրկիզող նյութերով ազդող և դրանցով հրդեհներ առաջացնող զենք: Ներառում է զինամթերքը (հրահեղուկ խառնուրդը) և նշանակետին հասցնելու միջոցը:

Չ

ՉԱԳԱՐ, ռումբի կամ արկի պայթելուց գետնի մեջ բացված կոնաձև փոս:

ՉԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ԲԱԼԻՍՏԻԿԱ), նետված մարմնի (գնդակ, արկ, ական ևն) շարժումն ուսումնասիրող գիտություն:

ՉԵՌՆԱՄԱՐՏ, ձեռնակռիվ, սվինամարտ:

ՉԵՌՔԻ ԳՆԴԱՑԻՐ, հրաձգության ժամանակ հրաձիգի կողմից պահվող Գ.: Հիմնականում մշակվում են ավտոմատների հիմքի վրա և ավտոմատներից տարբերվում են հենակների առկայությամբ, երկարատև հրաձգության համար նախատեսված ծանր փողով և տարողունակ փամփշտատուփով: Առաջին նմուշներից առավել արդյունավետն ու տարածվածը անգլիական «Լյուիսի» ՉԳ-ն էր (1915թ.):

ՉԵՌՔԻ ՆՌՆԱԿ, նախատեսված են մերձամարտ վարելու համար: ՉՆ լինում են՝ մարտական (բեկորային կամ հակատանկային) և աջակցող:

ԲԵԿՈՐԱՅԻՆ ՉՆ, նախատեսված են մերձամարտում պայթած նռնակի բեկորներով հակառակորդի կենդանի ուժը և կրակամիջոցները ոչնչացնելու համար:

ՀԱԿԱՏԱՆԿԱՅԻՆ ՉՆ, նախատեսված են մերձամարտում պայթած նռնակի էներգիայի շնորհիվ հակառակորդի զրահատեխնիկան և ամրաշինական կառույցներում գտնվող կենդանի ուժը ոչնչացնելու համար:

ԾԽԱՏՈՒ ՉՆ, նախատեսված են ծխաքողարկում ստեղծելու, ավիացիային ու հրետանուն ազդանշաններ հաղորդելու համար:

ՀՐԿԻԶՈՂ ՉՆ, նախատեսված են հրդեհի օջախներ առաջացնելու համար:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՉՆ, նախատեսված են առանց մարտական նռնակները ծախսելու անձնակազմին նռնականետում ուսուցանելու համար:

ՉԵՌՔԻ ՆՌՆԱԿԱՆԵՏ, հրաձիգի ուսից, ձեռքից կամ հենակից նռնակ նետող զենք:

Ճ

ՃԱԿԱՏ, ռազմական միավորի դասավորվածության առջևի գիծը, տարածությունը:

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ, ռազմական գործողություն, կռիվ:

ՎՃՌԱԿԱՆ Ճ., պատերազմող կողմերի գլխավոր ուժերի վճռական ընդհարումը տեղանքի սահմանափակ շրջանում, որտեղ հակառակորդներից մեկի բանակի ջախջախումով կարող է որոշվել ողջ պատերազմի ելքը:

ՃԱՄԲԱՐ, զորքերի մշտական տեղակայման վայրից դուրս գտնվող ժամանակավոր կայան:

ՃԱՌԱԳԱՅԹԱՉԵՎ (ՀՈՎՀԱՐԱՉԵՎ) ՀԱՐՁԱԿՈՒՄ, մեկ կենտրոնից (ռազմավարական բազայից) միաժամանակ մի քանի ուղղություններով իրականացվող հարձակում՝ հակառակորդին ապակողմնորոշելու և նրա ռեզերվները գլխավոր հարվածների ուղղությամբ կենտրոնացնելու հնարավորություն չտալու նպատակով: Հեռահաղորդակցության միջոցների անկատարության պատճառով զորավարները դժվարանում էին փոխգործողություններ կազմակերպել տարբեր ուղղություններում գործող զորքերի (զորամասերի) միջև, որի պատճառով հին և միջին դարերում հազվադեպ է կիրառվել:

ՃԵՂՔՈՒՄ (ՄԱՐՏԱԿԱՐԳԻ, ՋՈՐՔԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՄ ԵՐԹԱՅԻՆ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ), ճակատի նեղ տեղամասում հակառակորդի պաշտպանության երկփեղկումն է:

Մ

ՄԱՐՏ, զորքերի, ինչպես նաև օդուժի, նավատորմի ուժերի մարտավարական գործողությունների հիմնական ձևն է: Զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների կազմակերպված և նպատակով, տեղով ու ժամանակով համաձայնեցված հարվածներն է, կրակը (խոցումը) և զորաշարժը՝ հակառակորդին ոչնչացնելու (ջախջախելու), նրա հարվածները հետ մղելու և սահմանափակ շրջանում կարճ ժամանակի ընթացքում այլ խնդիրներ կատարելու նպատակներով: Ժամանակակից Մ. կարող է լինել համազորային, հակաօդային, օդային և ծովային: Մ. երկկողմանի երևույթ է, որտեղ հակամարտում են ուժերի և միջոցների երկու խմբավորումներ միևնույն նպատակով՝ հաղթել հակառակորդին: Մ-ում հաղթանակի հասնելու միջոցներն են զենքը, տեխնիկան ու մարդիկ: Այդ դեպքում զենքի ու տեխնիկայի արդյունավետությունը կախված է մարդու կողմից դրանք գրագետ ձևով կիրառելուց (իրավիճակի բոլոր առանձնահատկությունների հաշվառմամբ):

ՄԱՐՏԱԴԱՇՏ, տարածք, որի սահմաններում անց են կացվում (վարվել են) մարտական գործողություններ:

ՄԱՐՏԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (ԽՆԴԻՐ), մարտում նշված ժամկետում որոշակի նպատակի հասնելու համար զորքերին կամ առանձին զինծառայողին տրված առաջադրանք:

ՄԱՐՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ, զորքերի մարտական գործողությունների համակողմանի ապահովումն անհրաժեշտ միջոցներով և տվյալներով: Մարտական ապահովման տեսակներն են՝ *հետախուզություն, պահպանություն, քիմիական ապահովում, պաշտպանություն զանգվածային խոցման զենքից, ռադիոէլեկտրոնային պաշտպանություն, մարտավարական քողարկում, ինժեներական ապահովում*:

ՄԱՐՏԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ, մարտական առաջադրանքների, զինվորական ծառայության հետ կապված՝ բանակում պատմականորեն ձևավորված և սերնդեսերունդ փոխանցվող կանոնների, ավանդույթների և զինծառայողների վարվելակարգի նորմեր:

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ստորաբաժանումների, զորամասերի, միավորումների, զինված ուժերի բոլոր զորատեսակների միավորման կազմակերպված գործողությունները՝ մարտական առաջադրանքները կատարելու համար: Մարտական գործողությունների հիմնական ձևերն են պաշտպանությունը և հարձակումը: Դրանք վարվում են օպերացիաների, ճակատամարտերի և մարտերի տեսքով:

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ, մարտական գործողությունները կանգնեցնելու ձևերից մեկը: Առավելապես օգտագործվում է տեղական զինադադարի պայմաններն ապահովելու համար և սահմանափակվում է ըստ ժամանակի, տարածքի և նպատակների: Օգտագործվում է մասնակի խնդիրներ լուծելու՝ վիրավորներին հավաքելու և նրանց փոխանակելու, բանագնացներ ուղարկելու և այլ նպատակների համար: Առանձին անձանց կողմից դադարեցման պայմանների խախտումը դիտարկվում է որպես պատերազմի օրենքների և ավանդույթների խախտում:

ՄԱՐՏԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ, գործոնների և պայմանների ամբողջություն, որոնցում իրականացվում են մարտի նախապատրաստումը և վարումը:

ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, բարձր մարտական պատրաստականության մեջ գտնվող պլանավորված կամ հանկարծակի ծագող խնդիրները և մարտական գործողությունները վարելու համար հատուկ առանձնացված ուժերի և միջոցների հերթապահության հատուկ ձև: Իրականացվում է հակառակորդի հարձակման սկիզբը ժամանակին բացահայտելու, առավել կարևոր օբյեկտներն անհապաղ խոցելու, պետական սահմանի խախտումը կանխելու նպատակով:

ՄԱՐՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ, զորքերի (ուժերի) անձնակազմի գիտելիքների, կարողությունների և հմտությունների համալիր, նրա բարոյահոգեբանական և ֆիզիկական հատկությունները, ստորաբաժանումների, զորամասերի, միավորումների, կառավարման օրգանների պատրաստվածությունը և ներդաշնակությունը, ինչպես նաև տարբեր իրավիճակներում մարտական գործողություններ վարելու կամ առաջադրված այլ խնդիրներ կատարելու նրանց կարողությունը:

ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ, մարտի (օպերացիայի) նախապատրաստման ժամանակ զորքերին (ուժերին) առաջադրվող մարտական խնդիրների ձև: ՄՀ բոլոր ձևակերպումներն արտահայտվում են հակիրճ և միանշանակ: ՄՀ կարող է տրվել բանավոր և գրավոր, տեղանքի վրա կամ էլ քարտեզով:

ՄԱՐՏԱԿԱՆ ՇՓՈՒՄ (ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԵՏ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՇՓՈՒՄ), կռվող կողմերի զորքերի փոխադարձ տեղաբաշխումը, որի դեպքում նրանք խոցման միջոցներով կարող են ազդել միմյանց վրա:

ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, մարտում զորքերը պահպանելու համար հատկացվող ուժեր և միջոցներ, մարտական և նախամարտական կարգերի տարածք հակառակորդի հետախուզության մուտքը թույլ չտալու, պահպանվող զորքերի վրա հակառակորդի հանկարծակի հարձակումը կանխելու համար:

ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, զորքերի (ուժերի) վիճակը, որը թույլ է տալիս նշված ժամկետներում մարտական գործողություններ սկսել, և դրանց ընթացքում հաջողությամբ կատարել մարտական առաջադրանքները: Զինված ուժերում նախատեսված է ՄՊ մի քանի աստիճան: Որքան բարձր է զորքերի ՄՊ, այնքան քիչ ժամանակ է նրանց պետք մարտական առաջադրանքները կատարելուն նախապատրաստվելու համար: ՄՊ բարձրագույն աստիճանը որոշվում է զորքերի (ուժերի) կողմից անհապաղ մարտական առաջադրանքները կատարելու կարողությամբ:

ՄԱՐՏԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ, զորամասի անհապաղ բերումը մարտական խնդիրներ կատարելու պատրաստվածության:

ՄԱՐՏԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ, մարտ վարելու համար նախատեսված կամ հարմարեցված տեխնիկական միջոցներ:

ՄԱՐՏԱԿԱՐԳ, զորքերի դասավորվածությունը մարտ վարելու համար: Այն պետք է համապատասխանի իրավիճակի պայմաններին և նպաստի մարտի նպատակին հասնելուն:

ՍԱՆԴՂԱՋԵՎ Մ., առաջին գծում անհարթ (կենտրոնը կամ թևերից մեկն առաջ կամ հետ ընկած) դասավորություն:

ՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ, մարտական գործողությունների հետևանք, որի արդյունքում ամբողջությամբ և ժամանակին կատարվել են ստորաբաժանումներին, զորամասերին և միավորումներին մարտում տրված մարտավարական առաջադրանքները:

ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄ, նպատակն է հասնել ստորաբաժանումների գործողությունների անսպասելիության և դրանց մարտունակության պահպանման: Քողարկման խնդիրները սեփական ստորաբաժանումների գաղտնիությունն ապահովելն ու հակառակորդին մոլորության մեջ գցելն է դրանց կազմի, դրության և մարտի մտահղացման վերաբերյալ:

ՄԱՐՏԱՎԱՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ, մարտական տեխնիկայի մարտական և շահագործման հնարավորությունները որոշող նրա քանակական և որակական ցուցանիշների ամբողջություն:

ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ռազմարվեստի բաղկացուցիչ մասերից է, որն ուսումնասիրում է զորքերի դիրքը, զորաշարժն ու գործողությունները տարբեր մարտատեսակներում: Այլ կերպ ասած՝ մարտավարությունն ուսումնասիրում է մարտի բնույթն ու դրան զինված ուժերի մասնակցությունը: Ընդգրկում է բոլոր տեսակի մարտական գործողությունների (հարձակում, պաշտպանություն, հանդիպական մարտ, մարտավարական վերախմբավորում և այլն) ուսումնասիրումը, մշակումը, նախապատրաստումը և վարումը: Մարտավարությունը բաժանվում է ընդհանուր մարտավարության և զորատեսակների ու հատուկ զորքերի մարտավարության:

ՄԱՐՏԻԿ (ԿՈՄԲԱՏԱՆՏ), պատերազմող կողմերի զինված ուժերի կազմի մեջ մտնող և մարտական գործողություններում անմիջականորեն մասնակցություն ունեցող, այսինքն՝ կռվող անձ: Մ. են նաև աշխարհազորի և կամավորական ջոկատների անդամները: Մ. պարտավոր է պահպանել պատերազմի օրենքները և ավանդույթները: Մ. են համարվում նաև ռազմաբժշկական, ռազմաիրավաբանական, թիկունքի անձնակազմը, զինվորական հոգևորականները և ռազմական լրագրողները:

ՄԱՐՏԻ ՄՏՑՎԵԼՈՒ ԲՆԱԳԻԾ, տեղանքի պայմանական գիծ (տեղանքի գոտի), որից երկրորդ էշելոնը կամ համազորային ռեզերվը սկսում են մարտական գործողությունները:

ՄԱՐՏԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ, զորքերի մարտական գործողություններ, նրանց հետքաշումը կամ այլ ուղղությամբ զորաշարժն ապահովող հեռավորության վրա հակառակորդից պոկվելու նպատակով: ՄԴԳ իրականացվում է ծածուկ և հանկարծակի, սովորաբար գիշերը կամ սահմանափակ տեսանելիության այլ պայմաններում:

ՄԱՐՏԿՈՑ, մի քանի թնդանոթների խումբ, որոնք կազմում են մեկ հրետանային միավոր և գտնվում են մեկի հրամանատարության տակ:

ՄԱՐՏՈՎ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, հետախուզության ձև: Հատուկ առանձնացված (հին և միջին դարերում՝ թեթևազեն կամ միջին հեծելազորի) ստորաբաժանումների կողմից հակառակորդի մասին տվյալների հայթայթումը: ՄՀ կատարվում է այն դեպքում, երբ հետախուզության մյուս եղանակները չեն կարող հրամանատարությանն ապահովել հակառակորդի մասին անհրաժեշտ տվյալներով կամ երբ չկա դրանք այլ եղանակներով ձեռք բերելու հնարավորություն:

ՄԵՌՅԱԼ ՏԱՐԱԾՔ, ծածկված տարածքի այն մասը, որտեղ տվյալ հետագծի դեպքում նպատակը չի կարող խոցվել:

ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԶՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄ), մի քանի զորամասերից, սովորաբար տարբեր զորատեսակներից (ուժերից), հատուկ զորքերից (ծառայություններից), ինչպես նաև ապահովման և սպասարկման զորամասերից կազմված զինվորական կազմավորում:

ՄԻԼԻՑԻԱ, XVդ. կեսերից եվրոպական որոշ երկրներում պատերազմի ժամանակ հավաքվող աշխարհազորի անվանումը: Ռուսաստանում XIXդ. սկզբներից տեղային զորքերի՝ Կովկասի ժողովուրդներից կազմավորվող անկանոն հեծելազորի անվանումը:

ՄԻԼԻՑԻԱՅԻ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՋՈԿԱՏՆԵՐ (ՄՀՆՋ), ահաբեկչության և ավազակության դեմ պայքարի, հասարակական կարգի պահպանման նպատակով կազմավորված՝ ոստիկանության լավ պատրաստված և բանակային հանդերձանքով ու զենքով զինված մարտական ջոկատներ (խմբեր): 1988-1991թթ. հայկական բնակավայրերի վրա ավազակային հարձակումներ գործելու և դրանց բնակիչներին բռնի ուժով տեղահանելու նպատակով ադրբեջանական իշխանությունների կողմից օգտագործվող հիմնական ուժերն էին:

ՄՇՏԱԿԱՆ ԲԱՆԱԿ, մշտապես պահվող բանակ (խաղաղության և պատերազմի ժամանակ), ի տարբերություն աշխարհազորի և միլիցիոն բանակի, որոնք կազմավորվում են միայն պատերազմի ժամանակ:

ՄՈԲԻԼԻԶԱՑՈՒՄ, ռազմական ուժերը խաղաղ իրադրությունից պատերազմականի բերելը, պատերազմի համար զորահավաքի կատարումը:

ՄՈՏՈՐԱՁԳԱՅԻՆ ԶՈՐՔԵՐ, մոտորացված հետևակի անվանումը:

ՄՈՒՇԿԵՏ, փողաբերանից լիցքավորվող մեծատրամաչափ ծանր պատրույգավոր հրացան: Ստեղծվել է 1521թ. Իսպանիայում: Առավել տարածված Մ. ունեին 25 մմ տրամաչափ, 7-10 կգ քաշ, կրակում էին մոտ 50 գ գնդակներով, հրածգության հեռավորությունը՝ մինչև 250 մ: XVIIդ. վերջերին փոխարինվեցին առավել թեթև կայծքարե կողպեքով հրացաններով:

ՄՈՒՇԿԵՏԱԿԻՐ, մուշկետով զինված մարտիկ, հրազենով զինված հետևազորի առաջին անվանումներից:

ՄՏԱՀՂԱՑՈՒՄ (ՄԱՐՏԻ), զորքերի (ուժերի) խմբավորման կողմից տրված մարտական առաջադրանքի կատարման գլխավոր մտահղացումը: Մարտի որոշման հիմքը: ՄՄ որոշվում են. հիմնական ջանքերի կենտրոնացման շրջանները (գլխավոր և այլ հարվածների ուղղությունները), հակառակորդին ջախջախելու ձևերը (որ խմբավորումները, որտեղ, ինչ հաջորդականությամբ և ինչպես ջախջախել, հակառակորդին խոցելու և խաբելու (մոլորեցնելու) կարգը), զորքերի (ուժերի) խմբավորումը և նրանց մարտակարգը:

Յ

ՅԱԹԱՂԱՆ, հատող-ծակող սառը զենք: Սայրը գտնվում է շեղբի ծռված մասում: Առանց խաչարդի բռնակը գլխի մասում ձեռքի դաստակի հենման համար լայնացված է: Ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 80 սմ, շեղբի երկարությունը՝ 60, քաշն առանց պատյանի՝ 0,8 կգ: Յ. թուրքական ենիչերիների զենքերից է, որը կիրառվել է նաև Մերձավոր Արևելքի, Բալկանների և Հարավային Կովկասի բանակներում:

Ն

ՆԱԽԱՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԳ, ստորաբաժանումների, զորամասերի, զորամիավորումների դասավորվածությունն է մարտակարգի ծավալվելու համար: Ն-ը պետք է ապահովի հարձակվող ստորաբաժանումների, զորամասերի, զորամիավորումների միաժամանակյա դուրս գալը գրոհի անցման բնագիծ և մարտակարգի ծավալումը հարձակման ողջ ճակատում:

ՆԱՀԱՆՁ, հակառակորդի գերակշռող ուժերի հարվածների տակից սեփական ստորաբաժանումները հետ քաշելու, ժամանակ շահելու և ավելի նպաստավոր դիրք (բնագիծ, շրջան) զբաղեցնելու նպատակով կատարվող զորաշարժ:

ՆԵՏՈՂ ԶԵՆՔԵՐ (ՄԵՔԵՆԱՆԵՐ), հին և միջին դարերում հակառակորդի կենդանի ուժը ոչնչացնելու և պաշտպանական կառույցներն ավերելու նպատակով կիրառվող ռազմական մեքենաներ: Նետող մեքենաների կառուցվածքը հիմնված է ոլորված և ձգված թելքերի (ջլեր, մազեր ևն) էներգիայի օգտագործման վրա: Նետող մեքենաները հայտնի էին դեռ Հին Արևելքում (Ասորեստանում, Հնդկաստանում ևն), Հին Հունաստանում և Հին Հռոմում: Այդ մեքենաները բաժանվում էին բալիստների և կատապուլտների: IV դարում սկսեցին կիրառել նետող մեքենաների նոր տեսակ՝ ֆրանդիբոլը:

ՆԵՐԽՈՒԺՈՒՄ, մեկ կամ մի քանի պետությունների զինված ուժերի մուտքը մի այլ պետության տարածք՝ առանց նրա կառավարության հետ համաձայնության: Ն. համարվում է ագրեսիայի ակտ և, որպես կանոն, իրականացվում է հանկարծակի:

ՆՇԱՆԱԿԵՏ, օբյեկտ, որն ընտրվել կամ պետք է ընտրվի խոցելու համար:

ՈՉՆՉԱՑՆԵԼ Ն., ամբողջությամբ զրկել մարտունակությունից:

ՃՆՇԵԼ Ն., այնպիսի կորուստներ հասցնել նրան, որոնց դեպքում այն ժամանակավորապես կորցնում է մարտունակությունը, սահմանափակվում է զորաշարժը կամ խախտվում է կառավարումը:

ԿՈՐՇԱՆԵԼ Ն., շարքից հանել Ն-ը:

ՆՇԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐ (ՆՇԱՆՈՑՆԵՐ), հրազենը կամ հրթիռային զենքը նշանակետին ուղղելու համար նախատեսված սարքեր և մեխանիզմներ: ՆՀ օգնությամբ հրազենին տրվում է անհրաժեշտ դիրքը: ՆՀ լինում են մեխանիկական, օպտիկական, էլեկտրոնաօպտիկական, ռադիոլոկացիոն, ավտոմատ և ոչ ավտոմատ:

ՆՇԱՆԱՌՈՒՄ, տարածության մեջ զենքին ուղղություն հաղորդելը: Լինում է՝ ուղիղ Ն., ոչ ուղիղ Ն., կիսաուղիղ Ն.:

ՆՈՆԱԿ, նախատեսված են մերձամարտ վարելու համար: Մարտական Ն. լինում են բեկորային և հակատանկային: Հակատանկային Ն. ներկայումս կորցրել են իրենց նշանակությունը, քանի որ նրանք ի վիճակի չեն խոցելու ժամանակակից տանկերի զրահը և կարող են օգտագործվել միայն թեթև զրահավորված նշանակետերը խոցելու համար: Աջակցող Ն. լինում են ծխատու, հրկիզող և ուսումնական:

ՆՈՆԱԿԱՆԵՏ, մերձամարտում հակառակորդին նռնակով խոցելու համար նախատեսված զենք: Ն. դասակարգվում են ակտիվ, ակտիվ ռեակտիվ և ռեակտիվ, հակատանկային և հակահետևակային, միալիցք, ինքնալիցք և ավտոմատ, ձեռքի, հաստոցավոր և հրացանային:

ՀԱՍՏՈՑԱՎՈՐ Ն., ունեն հետևակային հաստոց, որոշ նռնականետներ կարող են տեղակայվել մարտական մեքենաների, ուղղաթիռների և նավերի վրա:

ՀՐԱՑԱՆԱՅԻՆ Ն., կարող են անմիջապես հագցվել հրացանի (ավտոմատի) փողի մեջ կամ ամրացվել փողի վրա (տակը): Հրաձգության համար օգտագործում են անգնդակ կամ մարտական փամփուշտներ:

Շ

ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ, անձնակազմին շարային կեցվածքի, ձգվածության, ճարպկության և դիմացկունության, հրամանների և զենքով ու առանց զենքի շարային վարժաձևերի ճիշտ և հստակ կատարման, ինչպես նաև ստորաբաժանումների, զորամասերի ներդաշնակ գործողությունների ուսուցանում: ՇՊ զգալիորեն ներազդում է զորքերի առօրյա և ընդհանուր գործունեության բոլոր կողմերի վրա՝ կոփում է զինծառայողների կամքը, կատարելագործում մարմնին տիրապետելու ունակությունը, շարային կեցվածքը, զարգացնում ուշադրությունը, դիտողականությունը, կոլեկտիվիզմի զգացողությունը, համառությունը: Վարժաձևերի հստակ, համաձայնեցված և միաժամանակյա կատարումը ոգեշնչում է զինծառայողներին, վստահություն ներշնչում սեփական գործողությունների նկատմամբ, ամրապնդում կատարողական կարգապահությունը: Ստորաբաժանումների անձնակազմին համատեղ գործողությունների նախապատրաստելու հիմքը եղել և մնում է շարքը: Ուսուցման ոչ մի այլ ձև պետի կարգադրությունն ու հրամանն այնքան արագ, հստակ ու միասնաբար կատարելու հնարավորություն չի ընձեռում, որքան շարքը:

ՇԱՐԱՍՅՈՒՆ (ՋՈՐԱՍՅՈՒՆ), շարք, որտեղ զինծառայողները տեղավորված են մեկը մյուսի թիկունքում՝ ծոծրակի ուղղությամբ, իսկ ստորաբաժանումներն իրար հետև՝ կանոնադրությամբ կամ հրամանատարի կողմից սահմանված հեռավորության վրա: Շ. կարող են լինել միաշարասյուն, երկշարասյուն, եռաշարասյուն և ավելի: Շ. կիրառվում են ստորաբաժանումներն ու զորամասերը երթային կամ ծավալուն շարքով շարելու համար:

ՇԱՐՔ, զինծառայողների, ստորաբաժանումների ու զորամասերի՝ կանոնադրությամբ սահմանված դասավորությունը հետիոտն ու մեքենաներով՝ համատեղ գործողությունների համար:

ՇԵՂԲ, կտրող, հատող և ծակող շեղբավոր զենքի մարտական մասը: Շ. կարող է լինել ուղիղ և ծռված, մեկ և երկսայրանի, տափակ, օվալաձև, եռանիստ ևն:

ՇՏԱԲ, զորքերի կառավարման հիմնական օրգան՝ նրանց մարտական և ամենօրյա գործունեությունը ղեկավարելու համար:

ՇՐՋԱՆՑՈՒՄ, զորաշարժի տեսակ, որի ժամանակ ստորաբաժանումը դուրս է գալիս հակառակորդի թիկունք:

ՇՐՋԱՊԱՏՈՒՄ, հիմնական զորքերից (ուժերից) հակառակորդի խմբավորման մեկուսացումը՝ ոչնչացնելու կամ գերեվարելու նպատակով:

ՇՐՋԱՊԱՏՈՒՄԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ, շրջապատման ճակատը ճեղքելու և շրջապատված զորքերը դուրս բերելու նպատակով իրականացվող մարտական գործողություններ: Իրականացվում է ինքնուրույն կամ շրջապատումից դուրս գտնվող զորքերի աջակցմամբ:

ՇՐՋԱՓԱԿՈՒՄ, օբյեկտը՝ նրա արտաքին կապերը խզելու միջոցով, մեկուսացնելուն ուղղված մարտական գործողություններ: Շ. օբյեկտ կարող են հանդիսանալ առանձին պետություններ, քաղաքներ, զորքերի խոշոր խմբավորումներ, տնտեսական շրջաններ, կղզիներ ևն: Շ. նպատակ կարող են լինել. պետության ռազմատնտեսական հզորության քայքայումը, հակառակորդի զինված ուժերի շրջափակված խմբավորման ուժերի և միջոցների հյուծումը, նրա հետագա ջախջախման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, հակառակորդին կապիտուլացվելու (հանձնվելու) հարկադրումը, ինչպես նաև մի այլ ուղղությամբ զորքերի (ուժերի) տեղափոխում թույլ չտալը: Շ. կարող է լինել լրիվ կամ մասնակի: Ռազմավարական մասշտաբների շրջափակմանը սովորաբար նախորդում է (կամ իրականացվում է միաժամանակ) տնտեսական շրջափակումը:

ՇՔԵՐԹ, պաշտոնական տոնակատարությունների, պետական և ռազմական նշանակության կարևոր միջոցառումներին նվիրված տոնակատարությունների և այլ միջոցառումների

ժամանակ, ինչպես նաև զորավարժությունների ավարտից հետո զորքերի հանդիսավոր ստուգատես:

Ո

ՈՐՈՆՈՒՄ, հետախուզության ձև: Կազմակերպվում է գերիներ վերցնելու նպատակով և անցկացվում է, որպես կանոն, հարձակումից առաջ, առավելապես գիշերն ու սահմանափակ տեսանելիության այլ պայմաններում: Խումբը (ստորաբաժանումը) գաղտնի մոտենում է օբյեկտին, հանկարծակի հարձակվում է դրա վրա՝ գերիներ, փաստաթղթեր, սպառազինության ու հանդերձանքի նմուշներ վերցնելու նպատակով և արագորեն նահանջում է դեպի յուրային զորքերի դիրքերը:

ՈՐՈՇՈՒՄ (ՄԱՐՏԻ), հրամանատարի կողմից որոշված մարտական առաջադրանքների կատարման կարգը և ձևերը: Ներառում է մարտի մտահղացումը, զորքերի (ուժերի) խնդիրները, փոխգործողության հիմնական հարցերը, ղեկավարման կազմակերպման հիմունքները և ապահովման հիմնական տեսակների խնդիրները: ՄՈ հանդիսանում է զորքերի (ուժերի) ղեկավարման հիմքը:

Պ

ՊԱՀԱԿԱԽՈՒՄԲ, պահակություն անող զինվորների խումբ:

ՊԱՀԱԿԱԿԵՏ, պահակային հսկողության տալ գտնվող կետ, օբյեկտ:

ՊԱՀԵՍՏԱԶՈՐ (ՌԵԶԵՐՎ), տարբեր զորատեսակների կազմավորումներ, մարդկային ռեսուրսներ, սպառազինություն և այլ նյութական միջոցներ, որոնք նախատեսված են նոր զորախմբեր ստեղծելու և գործող զորախմբերն ուժեղացնելու (համալրելու), պատերազմի (պատերազմաշրջանի), օպերացիայի և մարտի ժամանակ ծագող նոր խնդիրներ կատարելու, գործող բանակը համալրելու համար:

ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, նպատակն է թույլ չտալ հակառակորդի հետախուզության, նրա օդային դեսանտի (աերոմոբիլային խմբերի) թափանցումը սեփական ստորաբաժանումների գործողությունների (տեղաբաշխման) շրջան, պահպանվող ստորաբաժանումներին ապահովել ծավալման (մարտական պատրաստության բերելու) և մարտի մեջ մտնելու ժամանակով ու ձեռնտու պայմաններով: Կախված կատարելիք խնդիրների բնույթից՝ ստորաբաժանումները պահպանվում են. մարտում՝ *մարտական*, երթում՝ *երթային*, տեղում տեղաբաշխվելիս՝ *պահակային* պահպանությամբ: Բացի դրանից, բոլոր դեպքերում կազմակերպվում է *անմիջական* պահպանություն:

ԱՆՄԻՋԱԿԱՆ Պ., կազմակերպվում և իրականացվում է բոլոր պայմաններում, մշտապես՝ անկախ գործողությունների բնույթից, հակառակորդի հեռացումից, տարվա եղանակից և օրվա ժամանակից:

ԵՐԹԱՅԻՆ Պ., կազմակերպվում է ճակատից, թևերից և թիկունքից: Ճակատից ստորաբաժանումները պահպանվում են *դետքային ջոկերի* (*տանկերի*), *գլխամասային դետքերի* և *գլխամասային երթային ուղեկալների* կողմից: Գլխավոր ուժերը պահպանելու համար սպառնալից թևերից ուղարկվում են *կողային երթային ուղեկալներ*, ստորաբաժանումների պահպանությունը թիկունքից իրագործվում *է թիկունքային երթային ուղեկալների* կողմից:

ՄԱՐՏԱԿԱՆ Պ., որպես կանոն, ուղարկվում է հակառակորդի հետ շփման բացակայության պայմաններում, երբ պաշտպանվող զորքերի դիմաց չեն ստեղծվում ապահովման ու առաջավոր դիրքի գոտիներ:

ՊԱՀԱԿԱՅԻՆ Պ., նախատեսված է տեղում տեղաբաշխվելիս ստորաբաժանումները պահպանելու համար:

ՊԱՅԹՅՈՒՆ, 1. պայթուցիկ նյութի պինդ (հեղուկ) վիճակից արագ վերածումը գազային վիճակի, որն ուղեկցվում է պոտենցիալ էներգիան մեխանիկականի վերածմամբ: Որպես կանոն, պայթյունի ժամանակ տեղի է ունենում թթվածնի և պայթուցիկ նյութի այրվող տարրե-

րի (ջրածին, ածխածին, ծծումբ և այլն) միացման ռեակցիա, 2. վայրկյանում մի քանի հարյուր (հազար) մետր արագությամբ ընթացող և գազերի ճնշման կտրուկ մեծացմամբ ուղեկցվող նյութի ձևափոխման պրոցես, որը շրջակա առարկաների վրա խիստ ավերիչ ազդեցություն է ունենում:

ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐ, քիմիական միացություններ ու խառնուրդներ, որոնց կիրառումն ուղեկցվում է ջերմության անջատումով և մեծ քանակությամբ խիստ տաքացած գազերի առաջացմամբ: Ըստ կիրառման՝ ՊՆ բաժանվում են չորս խմբի՝ հրահրող, փշրող (բրեզենտային), նետող, պիրոտեխնիկական խառնուրդներ:

ՊԱՅԹՈՒՑԻՉ, հատուկ սարք, որը նախատեսված է որոշակի արտաքին ներգործություններով (սեղմում, էլեկտրամագնիսական դաշտ ևն) հրետանային արկը, ավիառումբը, ականը պայթեցնելու համար: Ըստ օգտագործվող մեխանիզմների լինում են հպումային (ժամացուցային, պնևմատիկ) և ոչ հպումային (էլեկտրամագնիսական):

ՊԱՅԹԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, տարվում են ինժեներական արգելափակոցների պատրաստման ժամանակ, օբյեկտների արագ փլուզման (պայթեցման), ինժեներական արգելափակոցներում, ինչպես նաև փլուզումներում անցումներ բացելու, չպայթած զինամթերքի պայթեցման համար, հանքարդյունաբերությունում, սառցաբացազատման համար՝ ձմեռային պայմաններում գետանցումներ պատրաստելիս, կամուրջները սառցահոսքից պաշտպանելու նպատակով և այլն:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, պաշտպանվող զորքերի անընդհատ ներազդեցությունը հարձակվող հակառակորդի վրա: Պաշտպանությունը կազմակերպելու և վարելու հիմնական պահանջներից է: ՊԱ-ն մարտի (ճակատամարտի) ընթացքում հակառակորդի հարձակմանը պատրաստվելու և գրոհի, ինչպես նաև առավել վտանգավոր տեղամասերում պահեստազորով զորաշարժի ժամանակ նրան հարվածներ հասցնելն է:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵԶՐ, հակառակորդին մոտիկ առաջին էշելոնի ուժերի դիրքերը միավորող պայմանական գիծը:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԵՂՔՈՒՄ, հարձակողական գործողություններ վարելու ձև: Իրականացվում է հակառակորդի կողմից զբաղեցված ամրացված բնագծերը (գոտիները, դիրքերը) երկփեղկելու համար, հետագայում պաշտպանության խորքում հարձակումը զարգացնելու և թևերի ուղղությամբ զորաշարժ կատարելու նպատակով:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ, պաշտպանությունում հրամանատարի որոշմանը համապատասխան որոշակի չափերով, ինժեներական տեսանկյունից նախապատրաստված, շրջանային պաշտպանությանը հարմարեցված ու գումարտակի զբաղեցրած տեղանքի շրջան: Գումարտակային ՊՇ լայնությունն ու խորությունը, խրամուղիների, ստորաբաժանումների և կրակամիջոցների միջև ընկած հեռավորությունները հաստատուն մեծություններ չեն:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԽՈՑՄԱՆ ԶԵՆՔԻՑ, կազմակերպվում և իրականացվում է հակառակորդի միջուկային, քիմիական և կենսաբանական (մանրէաբանական) զենքի ազդեցությունը, ատոմային և քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների ավերումների արդյունքներն առավելագույնս նվազեցնելու, ինչպես նաև ստորաբաժանումների մարտունակությունը պահպանելու և դրանց մարտական խնդիրների հաջող կատարումն ապահովելու նպատակով:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ, զորքերը, մարտական տեխնիկան և նյութական միջոցները հակառակորդի խոցման միջոցներից պաշտպանելու համար նախատեսված ամրաշինական կառույցներ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, մարտի հիմնական տեսակներից է: Նպատակ ունի կասեցնել հակառակորդի գերազանցող ուժերի հարձակումը, առավելագույն կորուստներ պատճառելով նրան՝ պահել տեղանքի կարևոր շրջաններն ու դրանով իսկ ստեղծել պայմաններ վճռական հարձակման անցնելու համար: Կարող է կազմակերպվել՝ կանխամտածված կամ ստիպողաբար, հակառակորդի հետ անմիջական շփման բացակայության կամ նրա հետ անմիջական շփման պայմաններում: Պ. կարող է լինել դիրքային և զորաշարժային:

ԱԿՏԻՎ Պ., պատերազմող կողմերից մեկի կողմից պաշտպանական գործողությունների վարում ոչ միայն տարածքը պահելու, այլև հիմնականում հակառակորդի խոշոր ուժերը հյուծելու և արյունաքամ անելու նպատակով:

ԴԻՐՔԱՅԻՆ Պ., հիմնական տեսակն է: Հիմնվում է զբաղեցրած շրջանների սահմաններում ստորաբաժանումների ստեղծած մի շարք պաշտպանական դիրքերը պահելու, ստորաբաժանումների խոցող հնարավորություններն առավելագույնս օգտագործելու և տեղանքի ավելի ամբողջական ինժեներական սարքավորման վրա:

ԶՈՐԱՇԱՐԺԱՅԻՆ Պ., վարվում է հակառակորդին կորուստներ հասցնելու, ժամանակ շահելու և սեփական ուժերը պահպանելու նպատակներով, նախօրոք նշված ու դեպի խորքը էշելոնացված բնագծերում հետևողական պաշտպանական մարտերի միջոցով՝ զուգակցված կարճատև հակահարձակումների հետ:

ՊԱՏԱՆԴ, հակառակորդի կողմից բռնությամբ կալանված և պահվող քաղաքացի, որի ազատագրումն ուղղակի կամ անուղղակի կերպով կախված է պատերազմող կողմին պարտադրվող պայմանների ընդունումից:

ՊԱՏԵՐԱԶՄ, զինված ընդհարում երկու կամ ավելի պետությունների միջև:

ԶՈՐԱՇԱՐԺԱՅԻՆ Պ., լայնամասշտաբ զորաշարժային գործողություններով առանց կայուն ռազմաճակատի և արագ փոփոխվող իրադրությամբ բնութագրվող պատերազմ: Կարող է կիրառվել ամբողջ պատերազմի կամ էլ նրա որոշ էտապներում:

ՏԵՂԱՅՆԱԿԱՆ Պ., սահմանափակ քաղաքական նպատակներով, ռազմական գործողությունների ծավալման տարածքով, կիրառվող զինված ուժերի և միջոցների քանակով և որակով բնութագրվող պատերազմ:

ՊԱՏԵՐԱԶՄԱՇՐՋԱՆ, ընդհանուր մտահղացմամբ միավորված և պատերազմի կարևոր քաղաքական ու ռազմավարական նպատակներին նպատակաուղղված ռազմական գործողությունների թատերաբեմում տարակազմ զորախմբերի օպերացիաների, մարտերի, հարվածների և մարտական գործողությունների ամբողջություն: Որպես կանոն, ընդգրկում էր համեմատաբար ակտիվ մարտական գործողությունների (վաղ գարնանից մինչև ուշ աշուն) մեկ կամ մի քանի շրջափուլ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ, որևէ կողմի հայտարարությունը պետության կամ պետությունների դաշինքի հետ խաղաղ հարաբերությունները դադարեցնելու և պատերազմական վիճակի անցնելու մասին:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, պատերազմող կողմերի և չեզոք պետությունների իրավունքները և պարտականությունները կանոնակարգող միջազգային իրավական նորմերի և բարոյական սկզբունքների ամբողջություն:

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ԿՈՂՄ, միջազգային իրավունքում՝ պատերազմի կամ զինված ընդհարման մասնակից, որը հետևում է պատերազմի սահմանված օրենքներին և ավանդույթներին:

ՊԱՐԵԿ, զինծառայողների խումբ՝ նշանակված հակառակորդին հետևելու, որոշակի շրջան (գոտի, տեղամաս) պահպանելու և ծածկելու համար:

Ջ

ՋԱՆՔԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, օպերացիայի (մարտի) ժամանակ զորքերի գլխավոր խմբավորման գործողությունների ուղղության զգալի փոփոխություն: Իրականացվում է, որպես կանոն, վերախմբավորում կամ զորաշարժ կատարելով:

ՋԱՐԴ, հակամարտող կողմերի մեծաքանակ զորքերի ճակատամարտ, որն աչքի է ընկնում զանգվածային կորուստներով և ավարտվում կողմերից մեկի լիակատար հաղթանակով:

ՋՈԿԱՏ, զորքերից առանձնացված հատուկ զինված խումբ, զորախումբ, ինքնուրույն զինված խումբ:

ԱՌԱՋԱՊԱՀ Ջ., մարտի ժամանակ ինքնուրույն առաջադրանքներ կատարող ուժեղացված ստորաբաժանում: Մարտակարգի տարր է: Հարձակման ժամանակ ապահովում է գլ-

խավոր ուժերի կազմակերպված մարտի մեջ մտնելը (մարտակարգի ծավալվելը): Պաշտպանությունում գործում է ապահովման գոտում: Առաջապահ ջոկատ կարող է առանձնացվել նաև ռազմերթի ժամանակ՝ մարտի մեջ մտնելու մտադրության դեպքում:

ԳՐՈՀԱՅԻՆ Ջ., ամրացված շրջանների վրա հարձակվելիս, քաղաքում (բնակավայրում), լեռներում և այլ պայմաններում մարտ վարելիս լավ ամրացված առանձին հենակետերի և կարևոր օբյեկտների բռնագրավման և ոչնչացման համար կազմավորված ժամանակավոր խմբավորում:

ԹԵՎԱՆՑՈՂ (ՇՐՋԱՆՑՈՂ) Ջ., հակառակորդին թևից (թիկունքից) հարվածներ հասցնելու, նրա տեղաբաշխման խորքում կարևոր օբյեկտներ զավթելու և պահելու նպատակով ստեղծված հատուկ կազմավորում:

Ռ

ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ, նպատակներով, խնդիրներով, տեղով ու ժամանակով փոխկապակցված միջոցառումների և հակառակորդի ռադիոէլեկտրոնային միջոցների հայտնաբերմանը, ռադիոէլեկտրոնային ճնշմանն ու հետագա ոչնչացմանն ուղղված ստորաբաժանումների գործողությունների համալիր:

ՌԱԶՄԱԳԵՐԻ (ԳԵՐԻ), պատերազմի ժամանակ թշնամու ձեռքն ընկած զինված ուժերի մեջ մտնող անձինք (այդ թվում՝ պարտիզաններ, Դիմադրության շարժման մասնակիցներ և այլ մարտիկներ): ՌԳ շարքին են դասվում նաև որոշ ոչ մարտիկներ՝ զինվորական թղթակիցներ, առևտրական նավատորմի և քաղաքացիական ավիացիայի անձնակազմի անդամներ ևն:

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, կյանքի ներքին և միջազգային պայմանների իրավիճակ, որոնք չեզոքացնում կամ բացառում են անհատին, հասարակությանը, պետությանը ռազմական բռնության միջոցներով վնասումը:

ՌԱԶՄԱՐՎԵՍՏ, ցամաքում, ծովում և օդում ռազմական գործողություններ նախապատրաստելու և իրականացնելու տեսություն և պրակտիկա: Ռ. տեսությունը ռազմագիտության կարևոր ճյուղն է: Ռ. բաղկացուցիչ մասերն են ռազմավարությունը, օպերատիվ արվեստը և մարտավարությունը:

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԶԱ (ՀԵՆԱԿԵՏ), զինված ուժերի միավորումների և զորամասերի (ուժերի և միջոցների) տեղաբաշխումը, մարտական և ամենօրյա գործունեությունն ապահովող, ռազմական տեսանկյունից հարմար տեղավորված և հատուկ կահավորված շրջան (տեղանքի հատված):

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ, պետության ռազմական կազմակերպության նկատելի ձևափոխությունների ամբողջություն՝ ուղղված փոփոխված արտաքին պայմաններին նրա համապատասխանելիությանը: ՌԲ պայմանավորվում է օբյեկտիվ պայմաններով, որպես կանոն՝ պատերազմում կրած պարտությամբ կամ էլ հաղթանակով, պետության հասարակական-քաղաքական կառուցվածքի ձևափոխմամբ և միջազգային իրադրության փոփոխություններով, սպառազինության նոր տեսակների հայտնվելով, տնտեսական դրդապատճառներով, զինված պայքարի միջոցների և ձևերի, դրանց արտադրության մակարդակի փոփոխմամբ ևն:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ, հրապարակման համար չնախատեսված ռազմական բնույթի տեղեկություն: ՌԳ բացահայտումը, ձեռքբերումը և տարածումը համարվում են պետական հանցագործություն և քրեորեն պատժելի են:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտելիքների համակարգ պետությունների, պետությունների խմբավորումների պատերազմների բնույթի, օրենքների, վարման եղանակների մասին: ՌԳ տվյալներն օգտագործվում են ռազմական տեսություններ մշակելու ժամանակ: ՌԳ կառուցվածքն ու բովանդակությունը կապված են պետության ազգային գաղափարախոսության և ռազմական հայեցակարգի (դոկտրինի) հետ: Ռազմական պատմության և տեսության առաջին ուսումնասիրությունները երևան են եկել Ք.ա. Vդ.: Ռազմական գիտելիքների զարգացման գործում կարևոր նշանակություն է ունեցել Հին Հռոմի մղած պատերազմների փորձի

ընդհանրացումը: Միջին դարերում պատերազմներն իրենց նպատակներով և մասշտաբներով սահմանափակ էին, և ռազմատեսական միտքը մեծ զարգացում չի ստացել:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, 1. կողմերի հակամարտությունը պատերազմում, 2. քաղաքական և ռազմական նպատակներին հասնելու համար զինված ուժերի, ռազմավարական և օպերատիվ խմբավորումների կազմակերպված կիրառումը: ՌԳ վարվում են օպերացիաների, ճակատամարտերի, մարտական գործողությունների, այդ թվում՝ մարտերի և հարվածների ձևով, կարող են լինել պաշտպանողական և հարձակողական:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ, պատերազմող կողմերի միջև ամբողջ ճակատով կամ նրա որևէ մասում ռազմական գործողությունների (օպերացիաների) դադարեցում: Դադարեցվում են մարտական գործողությունները, բայց կողմերը մնում են պատերազմական դրության մեջ: ՌԳԴ հիմնական ձևերն են համընդհանուր կամ տեղային մարտական գործողությունների դադարեցումը (հրադադարը) և հաշտության կամ խաղաղության կնքումը (կապիտուլացումը):

ՌԱԶՄԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գործոնների և պայմանների ամբողջություն, որոնցում իրականացվում են մարտի նախապատրաստումը և վարումը:

ՌԱԶՄԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, պետության իրավական համակարգի մի մասը, որը կարգավորում է ռազմական համակարգի և զինված ուժերի գործունեության հասարակական հարաբերությունները:

ՌԱԶՄԱԿԱՆ ՇՐՋԱՓԱԿՈՒՄ, օբյեկտը՝ նրա արտաքին կապերը խզելու միջոցով մեկուսացնելուն ուղղված մարտական գործողություններ: ՌՇ օբյեկտ կարող են հանդիսանալ առանձին պետություններ, քաղաքներ, զորքերի խոշոր խմբավորումներ, տնտեսական շրջաններ, կղզիներ ևն: ՌՇ նպատակ կարող են լինել. պետության ռազմատնտեսական հզորության քայքայումը, հակառակորդի զինված ուժերի շրջափակված խմբավորման ուժերի և միջոցների հյուծումը, նրա հետագա ջախջախման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, հակառակորդին կապիտուլացվելու (հանձնվելու) հարկադրումը, ինչպես նաև մի այլ ուղղությամբ զորքերի (ուժերի) տեղափոխում թույլ չտալը: ՌՇ կարող է լինել լրիվ կամ մասնակի: Ռազմավարական մասշտաբների շրջափակմանը սովորաբար նախորդում է (կամ իրականացվում է միաժամանակ) տնտեսական շրջափակումը:

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, 1. ռազմական գործի զարգացման ընթացքը հին ժամանակներից ցայսօր, 2. գիտություն, որն ուսումնասիրում է անցյալի պատերազմները և զինված ուժերը, ռազմարվեստի և ռազմական մտքի զարգացումը, ընդհանրացնում է անցած պատերազմների վարման և նախապատրաստման փորձը: Այս տեսակետից ՌՊ ռազմական գիտության, ինչպես նաև պատմական գիտության մի մասն է: ՌՊ կարևորագույն բնագավառներն են պատերազմների պատմությունը, զինված ուժերի շինարարության պատմությունը, ռազմարվեստի պատմությունը, ռազմական մտքի պատմությունը:

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, երկրի քաղաքացիների մեջ Հայրենիքի հանդեպ սիրո, նրա զինված պաշտպանության պատրաստականության նպատակաուղղված ձևավորում: Իրականացվում է պետության սահմանադրության, «Պաշտպանության մասին» օրենքի և երկրի պաշտպանության հարցերը կանոնակարգող այլ օրենսդրական ակտերի համաձայն: ՌԴ հիմնական խնդիրներն են քաղաքացիների հայրենասիրական ինքնագիտակցության ձևավորումը, բանակի մարտական և հերոսական ավանդույթների հանդեպ վստահության դաստիարակությունը: Այն իրականացվում է ընտանիքի, դպրոցի, աշխատանքային կոլեկտիվի, պետական իշխանության մարմինների, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, ստեղծագործական միությունների համատեղ ջանքերով: Երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության, նրանց առաջիկա զինվորական ծառայությանը նախապատրաստելու գործին զգալի աջակցություն են ցուցաբերում զորամասերի հրամանատարությունը և ամբողջ անձնակազմը:

ՌԱԶՄԱՎԱՐ (ԱՎԱՐ), հակառակորդից զավթած, նրա կողմից մարտադաշտում լքված կամ հանձնվելու (կապիտուլացման) դեպքում հանձնած, զենք, ռազմական հանդերձանք, տրանսպորտի միջոցներ (ձիեր, մեքենաներ ևն), ռազմական տեխնիկա և այլ նյութական ար-

ժեքներ: Ողջ Ռ-ը համարվում է հաղթող կողմի սեփականությունը և օգտագործվում է ինչպես ռազմական, այնպես էլ այլ նպատակներով (որպես պարգև նվիրել մարտում աչքի ընկած հրամանատարներին և մարտիկներին):

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ (ԱՌԱՋԱԴՐԱՆՔ), պատերազմի ժամանակ որոշվող խոշոր առաջադրանք, որի կատարումը կարող է վճռել պատերազմի ելքը կամ կտրուկ փոփոխություններ մտցնել ռազմական գործողությունների թատերաբեմում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՇՏ, պաշտպանության գլխավոր շերտի (երկրի կենտրոնական կամ տնտեսական ու քաղաքական առումով առավել կարևոր նահանգների), ամրացված շրջանի և սահմանային ամրությունների առջևում հակառակորդին ընդհարման մեջ ներքաշելու համար նախապատրաստված տարածք՝ նրա առաջխաղացումը դանդաղեցնելու, ուժերը վաղօրոք հյուծելու և պաշտպանական գլխավոր շերտում (ռազմավարական առումով կարևոր շրջանում) վճռական ընդհարման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ռազմարվեստի բարձրագույն ոլորտն է, որն ընդգրկում է երկրի և նրա զինված ուժերի՝ պատերազմին նախապատրաստվելու տեսական և գործնական սկզբունքները, պատերազմի և ռազմավարական օպերացիաների կազմակերպումն ու վարումը:

ՌԱԶՄԵՐԹ, շարժունակ հեծյալ զորախմբերի թափանցումը հակառակորդի թիկունք նրա կարևոր օբյեկտները (կամուրջներ, անցումներ ևն) ոչնչացնելու, մատակարարումը խափանելու, հակառակորդի ուժերը շեղելու նպատակով: Տե՛ս նաև՝ ԵՐԹ:

ՌԵԱԿՏԻՎ ԱՐԿ, հրետանային ռազմամթերք, որի շարժումը հիմնված է նրա մեջ տեղավորված վառելիքի այրման գազերի ռեակտիվ գործողության վրա: Բաղկացած է գլխամասից և պոչամասից: Գլխամասը կարող է լինել բեկորաֆուգասային, կումուլյատիվ կամ այլ տիպի լիցքով: Պոչամասն ունի անծուխ վառոդով լցված խցիկ, փողրակ և կայունարար, որով ապահովվում է ռեակտիվ արկի ճշգրիտ թռիչքը:

ՌՄԲԱԿՈՃԵԼ, օդային հարձակման միջոցներով ռումբեր նետել, ռումբերով հարվածել:

Ս

ՍԱԴՐԱՆՔ (ՌԱԶՄԱԿԱՆ), պետության կամ քաղաքականության այլ սուբյեկտի կողմից սահմանափակ քանակությամբ զինված ուժերի կանխամտածված կիրառումը ռազմաքաղաքական իրադրությունը սրելու, հակառակորդի զինված ուժերի մարտունակությունը ստուգելու, այլ պետության ներքին գործերին իր միջամտությունն արդարացնելու, պատերազմ սկսելու համար ռազմական միջադեպ ստեղծելու և այլ նպատակների համար:

ՍԱԿՐ, կացնատիպ կտրող սառը զենք: Ունի փայտե կարճ կոթ և կիսալուսնի ձևի 0,2-0,3 մ երկարությամբ սայր:

ՍԱՂԱՎԱՐՏ, 1. մետաղյա գլխաման սառը զենքի հարվածներից պաշտպանվելու համար, 2. հատուկ ձևի մետաղյա գլխարկ, որը պատում է զինվորի գլուխն ու ծոծրակը:

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ, պատերազմ վարելու միջոցների կամ որոշակի նշանակության տարրերի (պաշտպանական Ս. ևն) ամբողջություն:

ՍԱՌԸ ԶԵՆՔ, ձեռնամարտի զենք: Պայմանականորեն դասակարգվում է.

Ըստ կառուցվածքի՝ շեղբավոր (դաշույն, թուր, սուր, սուսեր, դանակ, սվին ևն), *կոթավոր* (ալեբարդ, սակր, գեղարդ, նիզակ, տեգ ևն) և հարվածային (գուրզ, մարտական կացին ևն):

Ըստ խոցման՝ ծակող, հատող, ծակող-հատող, ծակող-կտրող, հարվածող-հատող և հարվածող-փշրող:

ՍԶ հայտնի է հնուց, և մինչև այժմ էլ որոշ նմուշներ օգտագործվում են զորքերում (դաշույն, դանակ, սվին, սուսեր):

ՍՊԱՐԱՊԵՏ, սպահապետ, սպայապետ, ասպահապետ, ասպարապետ, սպարապետության գործակալի՝ զինված ուժերի գլխավոր հրամանատարի անվանումը հին և միջնադարյան Հայաստանում: Անմիջապես ենթարկվել է թագավորին և գործել է նրա հրամանով: Ղեկավարել է ինչպես արքունի զորաբանակը, այնպես էլ իշխանական (նախարարական) զորամասերը:

ՍՎԻՆ, (պատմ.) նիզակի ծայրին ագուցվող սլաքաձև խոցող ծայրակալ:

ՍՎԻՆԱՄԱՐՏ, հրացաններին ամրացված սվիններով միմյանց հարվածելով մարտ:

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ, որպես կանոն, մշտական և միատարր կազմ ունեցող զինվորական կազմավորում: Մտնում է ավելի խոշոր Ս. կամ զորամասի կազմի մեջ:

ՍՈՒԼԹԱՆ, գերագույն կառավարչի տիտղոս մահմեդական երկրներում: X-XIIIդդ. Ս. տիտղոսը սովորաբար կրում էին կայսերական իշխանություն ունեցող կամ տրոհված սուլթանության տիտղոսակիր տոհմի կրտսեր ներկայացուցիչների կողմից ստեղծված պետությունների տիրակալները:

Վ

ՎԱՌՈՂ, պինդ վիճակում գտնվող պայթուցիկ միացությունների կամ խառնուրդների հավաքական անվանում: Վ. պայթունային քայքայումն ընթանում է հիմնականում շերտավոր այրման միջոցով և ջերմությունից բացի անջատում են մեծ քանակությամբ գազային նյութեր: Ի տարբերություն այլ պայթուցիկ նյութերի, Վ. այրումը ճնշումների մեծ միջակայքում (0,1-1000 մպա) կայուն ընթացող պրոցես է: Վ. այրման արագությունը կախված է նրա բաղադրությունից, սկզբնական ջերմաստիճանից և ճնշումից: Տարբերում են պլաստիֆիկացված, անծուխ և տարասեռ կամ խառնուրդային Վ.:

ՍԵՎ Վ., ներկայացնում էր սելիտրայի, ծծումբի և փայտածուխի մեխանիկական խառնուրդ: Եվրոպայում սկսել են օգտագործել XIII դարից (Ռ.Բեկոնը 1442թ. գտավ ՍՎ պատրաստելու եղանակը): Մինչև անծուխ վառոդի հայտնաբերումը ՍՎ հրազեններում և լեռնային գործում օգտագործվող միակ պայթուցիկ նյութն էր: ՍՎ ներկայումս օգտագործվում է նռնակների պայթուցիչների, հեռապայթող խողովակների, պայթուցիչների լցավորման և բիքֆորդյան լարերի պատրաստման համար:

ԱՆԾՈՒԽ Վ., պիրոքսիլինի և նիտրոգլիցերինի հիմքի վրա սինթեզված վառոդ: Պիրոքսիլինային ԱՎ ստացել է Պ.Վյելը 1884թ. Ֆրանսիայում, իսկ նիտրոգլիցերինայինը՝ Ա.Նոբելը 1888թ. Նորվեգիայում: Մեր օրերում ԱՎ օգտագործվում են հրաձգային զենքերի, նռնակների, արկերի, ականների լիցքերը պատրաստելու համար:

ՎԱՐՁԿԱՆ ԲԱՆԱԿ, զինվորական ծառայություն կատարելու համար արհեստավարժ զինվորներից հավաքագրվող բանակ: Ծագել է Ք.ա. III հազարամյակում Եգիպտոսում: Հիմնականում համալրվում էր օտարերկրացի վարձկաններով:

ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄ, զորաշարժի տեսակ, զորքերի կողմից իրականացվում է կարգը (երթային և մարտական), որում նրանք մինչ այդ գտնվում էին, փոխելու նպատակով:

ՎԵՐՁԱՊԱՀ, երթային պահպանության օրգան: Գլխավոր ուժերի հետքաշումն ապահովելու նպատակով հիմնական ուժերից առանձնացվող ստորաբաժանում: Վ. կազմը և գլխավոր ուժերից նրա հեռավորությունը որոշում է գլխավոր հրամանատարը՝ ելնելով պահպանվող զորքերի կազմից, տեղանքի պայմաններից, հակառակորդի դիրքից և գործողությունների բնույթից: Վ. խնդիրն է՝ դիմակայել հարձակվող հակառակորդին՝ ապահովելով նրանից գլխավոր ուժերի պոկվելը և նրանց կազմակերպված հետքաշումը:

ՎԻՐԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, մարդու մկանային համակարգի, կմախքի և ներքին օրգանների վնասվածություն (ամբողջության խախտում), որը կարող է խախտել դրանց ձևն ու գործունեությունը:

ՎՐԱՆ, դաշտային պայմաններում արագ հավաքվող կտորե շինություն, անձնակազմը, պահեստները, մարտական տեխնիկան, բուժհաստատությունները, արհեստանոցները ևն տեղավորելու համար:

Տ

ՏԱՆԿ, հզոր զենքով, ամբողջովին զրահապատ, բարձր անցունակության մարտական թրթուրավոր մեքենա, որը կարող է հաղթահարել արգելքներ և արգելափակոցներ: Հիմնական

մասերն են. պտտվող աշտարակով զրահավորված իրանը, զենքի համալիրը, դիտման, նշանառման և այլ հարմարանքներ, ուժային տեղակայանքը, ուժային փոխանցումը՝ կառավարման հաղորդակներով, ընթացքային մասը, էլեկտրասարքավորումը, կապի միջոցները, հակահրդեհային և հակաատոմային պաշտպանության համակարգերը ևն: Ժամանակակից Տ. սարքավորված է ստորջրյա վարման համար նախատեսված հարմարանքով: Տ. իրանը և աշտարակը պատրաստվում են լեգիրված զրահային պողպատից: Հիմնական զենքը թնդանոթն է, օժանդակը՝ գնդացիրները: Տարբերվում են թեթև, միջին, ծանր և լողացող Տ.: Առաջին անգամ Տ. կիրառվել է անգլիական բանակում, 1916թ. սեպտեմբերի 15-ին Սոմա գետի մոտ հարձակման ժամանակ: 1960-ական թթ. տարբեր երկրներում սկսել են թողարկել մեկ հիմնական տիպի Տ., որը նախատեսված է զանազան մարտական խնդիրների լուծման համար: Նոր մշակումների շնորհիվ, ժամանակակից բազմաշերտ զրահով կառուցված տանկերը, պահպանելով միջին տանկերի քաշը, ձեռք են բերել ծանր տանկերի պաշտպանվածություն և սպառազինություն (մարտական քաշը՝ 40-50 տ, անձնակազմը՝ 3-4 մարդ, թնդանոթի տրամաչափը՝ 105-152 մմ, արագությունը՝ 50-70 կմ/ժ):

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ, ռազմավարական շրջանի մաս, որի սահմաններում տեղավորված է պետության (պետությունների) ռազմատնտեսական ներուժը և ռազմական գործողությունները (ագրեսիայի) սկսելու դեպքում կարող են մեծամասշտաբ մարտական օպերացիաներ վարվել և ստացվել պատերազմի որոշ կամ բոլոր ռազմավարական նպատակները:

ՏԵՂԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ, հրամանատարի կողմից հակառակորդի և տեղանքի տեսողական ուսումնասիրումը որոշում կայացնելու կամ այն ճշտելու համար անհրաժեշտ տվյալներ ստանալու նպատակով: Մարտը կազմակերպելու հրամանատարի աշխատանքի բաղկացուցիչ մասերից է:

ՏԵՂԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ռելիեֆի, բուսականության և տեղի առարկաների առանձնահատկությունները, որոնք թույլ են տալիս նվազեցնել խոցման միջոցների ազդեցությունը: Առավել լավ պաշտպանական հատկություններով օժտված է ձորակներով ու իջվածքներով կտրտված լեռնային տեղանքը:

ՏՈՂԱՆ, շարք, որում զինծառայողները տեղավորված են կողք կողքի մեկ գծի վրա, միմյանցից կանոնադրությամբ որոշված կամ հրամանատարի կողմից նշված հեռավորության վրա:

ՏՐԱՄԱՉԱՓ, 1. հրաձգային զենքերի փողանցքի ուղղորդող մասի տրամագիծը: Ակոսավոր Զ-ի մոտ այն չափվում է ակոսների դաշտերով (օրինակ՝ ՌԴ) կամ դրանց առվակներով (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա ևն): Տ. հիմնականում արտահայտվում է միլիմետրերով: Բացառություն է ԱՄՆ-ը, որտեղ Տ. ավանդաբար ընդունված է արտահայտել դյույմի հարյուրերորդական մասերով, իսկ Մեծ Բրիտանիայում այն արտահայտվում է դյույմի հազարերորդական մասերով: Որսորդական Տ. արտահայտվում է 1 անգլիական ֆունտ (453.6 գ) կապարից ձուլված գնդակների քանակով: 2. Ավիացիոն ռումբերի Տ. որոշվում է նրանց կշռով (կիլոգրամներով կամ ֆունտերով):

Ց

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԶՈՐՔԵՐ, զինված ուժերի տեսակ, որոնք կոչված են լուծելու ռազմավարական և օպերատիվ մարտավարական խնդիրներ գործողությունների ցամաքային թատերաբեմում: Իրենց մարտական հնարավորություններով ՑԶ կարող են ինքնուրույն կամ զինված ուժերի այլ տեսակների հետ համագործակցելով հետ մղել հակառակորդի ներխուժումը, ճեղքել հակառակորդի պաշտպանությունը և իրականացնել ռազմավարական հարձակում՝: Հին աշխարհում ՑԶ կազմված էին հետևակից և հեծելազորից կամ մեկ զորատեսակից, առավել զարգացած երկրների ՑԶ ունեին նաև պաշարողական և նետող տեխնիկա: Միջնադարյան Եվրոպայում (IX-XIVդդ.), ՑԶ գլխավոր զորատեսակը ասպետական ծանր հեծելազորն էր, հետևակը կատարում էր օժանդակ դեր:

ՑՐՎԱԾ ՇԱՐՔ (ՆՈՍՐ ՄԱՐՏԱԿԱՐԳ), ճակատով կտրտված (տարաբաժանված) մարտակարգ: Սովորաբար այն կիրառել են գլխավոր ուժերի առջևում գործող հետևակի ջոկատնե-

որը (ստորաբաժանումները, զորամասերը): Նրանց մարտական նշանակությունը սահմանափակվում էր հակառակորդի հետ մարտի (ճակատամարտի) մեջ մտնելը և գլխավոր ուժերի գրոհի նախապատրաստումը: ՑՇ հայտնի է հին ժամանակներից (նետաձիգները, պարսատիկավորները, նիզակներ նետողները գործել են ՑՇ կազմում):

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մարտական և այլ գործողություններ, հակառակորդին մոլորեցնելու, սպասվող մարտական գործողությունների բնույթի, գլխավոր հարվածի ուղղության (հիմնական ջանքերի կենտրոնացման շրջանի) մասին նրան ապատեղեկացնելու և նրա ուժերը կեղծ ուղղությամբ շեղելու նպատակով:

ՈՒ

ՈՒԺԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ, նշված շրջաններում ուժերի (զորամասերի, զորամիավորումների և միավորումների) հավաքը և տեղաբաշխումը:

ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ, իրականացվում է հրամանատարի կողմից մարտի որոշման ժամանակ: Ընդ որում, որոշվում են գլխավոր և այլ ուղղություններում գործող զորախմբերը (ուժերի խմբավորումները), առաջին և երկրորդ էշելոնների, ռեզերվի կազմը և մարտակարգի այլ տարրեր:

ՈՒԺԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ, մարտական գործողությունների շրջանի (ուղղության, տեղամասի) զորքերով (մարտական տեխնիկայով) հագեցվածության աստիճանը, գնահատվում է ճակատի մեկ կիլոմետրին ընկնող ուժերի և միջոցների միջին քանակով:

ՈՒՂԻՂ ԿՐԱԿՈՑ, կրակոց, որի դեպքում հետագծի բարձրությունը չի գերազանցում նպատակի բարձրությունը: ՈՒԿ հեռավորությունը կախված է նպատակի բարձրությունից և հետագծի գետնամերձությունից:

Փ

ՓԱԿԱՂԱԿ, զենքի հիմնական մասը հանդիսացող դետալներից է: Փ. նախատեսված է փամփուշտը փամփշտանոց մղելու, փողանցքը փակելու, կրակոցի իրագործման և պարկուճն արտանետելու համար: Այդ պատճառով Փ. ունի համապատասխան տարրեր՝ մղիչ, մարտական ելուստներ, նետիչ: Փ. երկայնական առանցքի անցքում տեղադրված է հարվածիչը, որի զարկանը ջարդում է հրապատիճը:

ՓԱՄՓՈՒՇՏ, հրաձգային զենքի և որոշ թնդանոթների ռազմամթերք, որի պարկուճի մեջ զետեղված են գնդակը (արկը), վառոդալիցքը և բոցավառիչը: XVIIդ. ի հայտ եկած առաջին Փ. ունեին թղթե պարկուճ, որի մեջ տեղադրում էին վառոդալիցքը և գնդակը: 1960-ական թթ. երևան եկան թղթե Փ., որոնց պարկուճում զետեղված էին վառոդալիցքը, գնդակը և պատիճը: Շուտով դրանք փոխարինվեցին մետաղական Փ.: Կախված զենքի տեսակից՝ տարբերում են ատրճանակի, հրացանի, հրանոթի և որսորդական հրացանի Փ.: Լինում են մարտական, օժանդակ և ուսումնական Փ.:

ՓԱՅՏԱՀՈՂԱՅԻՆ ԿՐԱԿԱԿԵՏ (ԴԶՈՏ), հրետանա-գնդացրային կրակ վարելու համար նախատեսված փայտից, հողից, քարից և այլ նյութերից պատրաստված դաշտային ամրաշինական կառույց:

ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ), մարտի նպատակներին հասնելու համար ստորաբաժանումների, զորամասերի, միավորումների և զորատեսակների, մարտակարգի տարրերի և տարբեր զինատեսակների համաձայնեցված համատեղ գործողություններն են ըստ խնդիրների (օբյեկտների), ուղղությունների, բնագծերի (շրջանների), տեղի և տրված առաջադրանքները կատարելու ձևերի: Կախված մարտական գործողությունների մասշտաբից՝ տարբերում են ռազմավարական Փ., օպերատիվ Փ. և մարտավարական Փ.:

Ք

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ, կազմակերպում և իրականացնում են ռադիոակտիվ, քիմիական և կենսաբանական (մանրէաբանական) վարակումից կորուստներն առավելապես նվազեցնելու կամ բացառելու, օդակախույթներով (ծխերով) քողարկման և հակառակորդին հրկիզիչ զենքով կորուստներ պատճառելու նպատակով:

ՔՈՂԱՐԿՈՒՄ, մարտական ապահովման տեսակ: Միջոցառումների համալիր՝ ուղղված զորքերը և օբյեկտները հակառակորդից թաքցնելու և նրան զորքերի (ուժերի) առկայության, տեղաբաշխման, կազմի, վիճակի, գործողությունների և մտադրությունների, ինչպես նաև հրամանատարության պլանների մեջ մոլորեցնելու համար:

Օ

ՕՂԱՁՐԱՀ, տարբեր երկարությամբ թևերով կամ էլ առանց թևերի շապիկի տեսքով օղակներից հյուսված պաշտպանական սպառազինություն: Հայտնվել է Հին Արևելքի երկրներում Ք.ա. I հազարամյակում:

ՕՊԵՐԱՏԻՎ ԱՐՎԵՍՏ, ընդգրկում է զինված ուժերի միավորումներով համատեղ և առանձին օպերացիաների (առանձին ուղղություններում խոշոր մարտական գործողությունների) մշակելու և վարելու տեսական ու գործնական հարցերը: ՕԱ սահմանում է մարտավարության խնդիրներն ու զարգացման ուղիները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ.....3

ՆԵՐԱԾԱԿԱՆ.....5

ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽՈՒՄ (XVIII ԴԱՐ)

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՃՈՒՄՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ.....10

ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ
ԵՎ ԵՌԱԲԼՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԵՐԸ (1722Թ.).....15

1724-1725ԹԹ. ՊԱՏԵՐԱԶՄԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ.....24

1724Թ. ԳԱՐՆԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ.....28

ՄԵՂՐՈՒ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (1725Թ.).....33

**ՀԱՅԿԱԿԱՆ «ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ»
ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ
ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ**

ՇՈՒՇԻԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1826Թ. ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ).....48

ՇԱՄՔՈՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (1826Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3).....55

ԳԱՆՁԱԿԻ (ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼ) ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (1826Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13).....61

1828-1829ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ
ԵՎ ԱԽԱԼՑԽԱՅԻ ԱՄՐՈՑԻ ԳՐԱՎՈՒՄԸ (1828Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 15).....68

ԱԽԱԼՑԽԱՅԻ ԳՐԱՎՈՒՄԸ.....71

ԱԽԱԼՑԽԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....74

ՂՐԻՄԻ ԿԱՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1853-1856ԹԹ.).....79

ՔՅՈՒՐՈՒԿԴԱՐԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ. 24 ՀՈՒԼԻՍԻ (5 ՀՈՒԼԻՍԻ) 1854Թ.....89

1877-1878ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ.....94

ԴԱՐՈՒՅՆՔ (ԲԱՅԱԶԵՏ).....99

ԱԼԱՋԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ. 3 (15) ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1877Թ. 104

ՋԵՅԹՈՒՆԻ 1895Թ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ.....111

ՋԵՅԹՈՒՆԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՋՈՐԱՆՈՑԻ ԳՐԱՎՈՒՄԸ.
15-17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1895Թ. 112

ՖՌՆՈՒՋԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.
1895Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4 117

ՍԱՆԴՈՒԽԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ. 3 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1895Թ. 121

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ. 1897Թ. 123

ԽԱՍՏՈՒՐԻ ԿՌԻՎԸ. 1899Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26....126

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԿՌԻՎԸ. 1901Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-27....131

ՍԱՍՈՒՆԻ 1904Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ....136

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՎԱՇՏԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ....146

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՋՈՐԱՄԱՍԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ (1914-1918ԹԹ.)
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ....151

ԴԻԼՄԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ. 1915Թ. ԱՊՐԻԼԻ 18....153

1915Թ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ՄԱՐՏԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ....159

ՎԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ....161

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ....165

ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ (1915Թ.)....167

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԸ....174

ՌԱԶՄԱՐՎԵՍՏԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 183

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ....185

ԲԱՇ-ԱՊԱՐԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ....194

ԳԱՆՁԱԿԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ (1918Թ. ՄԱՐՏ-ՀՈՒՆԻՍ)....201

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՋՈՐԱՄԱՍԸ....204

1919Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ ՄԱՐՏԵՐԸ ԳՈՐԻՍՈՒՄ....209

ՆԺԴԵՀԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ՋԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ
(1919Թ. ՆՈՅԵՄԲԵՐ-1920Թ. ՀՈՒՆՎԱՐ)....214

ՆԺԴԵՀԻ ԳՈՂԹԱՆԻ ՊԱՏԱՆԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔԸ (1920Թ. ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ)....219

ՍՈՒՐՄԱԼՈՒԻ (ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ) ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1920Թ. 223

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ (1941 - 1945ԹԹ.) 230

76-ՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՀՐԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ (1942Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 19 -21)....231

89-ՐԴ ԵՎ 409-ՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ 1943Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ....237

ՀԱՅ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԻ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ....247

ՄԵՐՁԲԱԼԹԻԿԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ. ԳԵՆԵՐԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՓԱՅԼՈՒՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՏԱՀՂԱՑՈՒՄԸ....248

ՀԱՄԱԶԱՍՊ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ՏԱՆԿԱՅԻՆ ՌԱԶՄԵՐԹԵՐԸ....254

ՕԴԱՅԻՆ ՄԱՐՏԵՐԻ ՍՏՐԱՏԵԳԸ....262

ՕԴԱՅԻՆ ՄԱՐՏԵՐԻ ՎԱՐՊԵՏԸ....267

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿՆԵՐ) 1988-1994ԹԹ.

ԴԱՇՏԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ՈՒ ԲԵՐԴԱՁՈՐԻ ԵՆԹԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՅԱԹԱՓՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԸ....277

ԲՈՒՋԼՈՒԽ, ՄԱՆԱՇԻԴ ԵՎ ԷՐՔԵՋ ԳՅՈՒՂԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1991Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-18)....286

ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1992Թ. ՄԱՅԻՍԻ 8-9)....294

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1993Թ. ՓԵՏՐՎԱՐ-ՀՈՒՆԻՍ)....301

ՔԱՐՎԱՃԱՌԻ (ՔԵԼԲԱՋԱՐ) ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ....309

ՄԱՐՏԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1993Թ. ՀՈՒՆԻՍԻ 27)....315

ԱՂԴԱՄԻ ԳՐԱՎՈՒՄԸ....320

ԱՐՑԱԽԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1993Թ.)....325

ՕՄԱՐԻ ԼԵՌՆԱՆՑՔԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1994Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18)....331

ՕԴԱՅԻՆ ԵՎ ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ....336

1990-1994ԹԹ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԸ....343

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ....344

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ....348

ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ....352

Նշումների համար

ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ
ՀԱՏՈՐ Դ

ԵՐԵՎԱՆ-2012

«Մեր հաղթանակները» նախագծի ղեկավար և հեղինակ՝
Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հատորի հեղինակային խումբ՝
Սուրեն Մարտիկյան
Վահան Մկրտչյան
Ռուբեն Սահակյան (պ.գ.թ.)
Տիգրան Դևրիկյան
Արծրուն Հովհաննիսյան

Գիտական խմբագիր՝
Էդուարդ Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
պատմ. գիտ. դոկտոր

Ռազմական խմբագիր՝
Վահան ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Բառարանի հեղինակային խումբ՝
Սամվել ՊԵՏՐՈՍՅԱՆ
Հրաչյա ՊԵՏՐՈՍՅԱՆՑ
Գագիկ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Արեգ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Աբել ՆԱԶԱՐՅԱՆ

Հատորի ռազմական քարտեզների, սխեմաների
և սխեմատիկ պատկերների հեղինակ՝
Սուրեն ՄԱՐՏԻԿՅԱՆ

Քարտեզագիր՝
Տիգրան ՎԱՐԴԱՆՅԱՆ

Քարտեզագրական հիմք՝
Վազգեն ՂԱԶԱՐՅԱՆ

Ձենքերի գծանկարիչ՝
Թագուհի ՀՄԱՅԱԿՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

Ձևավորում և էջադրում՝
Արմեն ԲԱՐԻՇՅԱՆ

Տպագրված է «ԳԱՍՊՐԻՆՏ» ՍՊԸ: Տպաքանակը՝ 500 օրինակ:
Ծավալը՝ 25 տպ. մամուլ: